ՊԱՂՈՒՏԸՐԹՔԱՅ

ՔԵՐՈՎՆԱՅՈՑ

ԶՈՒԳԱԿՑՈՒԹ

ՀԱՏՈՐ Ա·

ՊԱՂՈՒՏԱՐԿՈՒԹԻՒՆ

9(37)
Պ 70

ՔԵՐՈՎՆԱՑԻՈՑ

ՀՈԳԱԿՀԻՒՔ


ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԲՆԱԳԻՐԷՆ
· ԵՂԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՄԱՃԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԱՐԴԵԱՄԲՔ ՔԱՀԱՆԱՅԱԼ ԱՊԵՏԻ
ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՓԱՅԷԼԻ
ՀԱՐԱՄԵԱՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

ՌՄԶԱՆ 15· ՕԳՈՍՏ·



ԱՒ

ՔԱՀԱՓԱՅԼ ԱՊԵՏ

ՊԱՐՈՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՈՒԱՖԱՅԵԼ

ՂԱՐԱՄԵԱՆ

ՈՒՂԵՐՁ

Ի ԲՐԵՒ որ անդաստին յականէն առատաբուղխ աղբիւր՝ հանդարտել յիւրում ծոցին ոչ ունիցի, այլ սուրբ և յատակ վտակօքն յառաջ ևս խաղայցէ՝ զպաշտեալն արբուցանել զերկիր, օրինակ լըզնոյն և զքաջութիւն խորհրդոցդ գիտեմ, որ յիմաստութիւն անհատ ցանկութեամբ՝ ի պաշտեալն խնդրեսցէ աղբերանալ Ոգին, և զծարաւն արբուցանել։

Վհանդի և ծարաւ է սորա, քանզի ըստ՝ բաւականութեան հոսանուտիցն, առաւել ևս ծարաւ լսելոյ զբան՝ որ ի գեղեցիկ դպրութեանցն և յիմաստու-

թեան մատենիցն։ Այսպէս որոյ
և լնուլ զայս իմաստ ազնուա-
կան վարդի պարտ համա-
րեցայ ուրուք Յանասիրաց
ԱՂԵՔՍԱՆԴՐԻ։ Մանաւանդ որ
յառաջոյ կայ մատեան, զոր յետ
երկնաւորին իմաստութեան, ի
ձշմարտութենէ ուչ վրիպեմ, ա-
ռաջին զսա ասել բանաւորիս
զարդ, այլ և առաքինութիւն և
վարժս մինչև. յաւելոյթ ծերու-
թեանն։ որ բիւրս իմն արդա-
սեաց տոհմականօք հանդերձ
լինքն բարձեալ բերիցէ առա-
ւելքան զայլսն ի մատենից։ իբ-
րև որ ոչ բանիւք չափ միայն է,
այլ բանիւք միանգամայն և ար-
դեամբք և օրինակացն ձշգըր-
տութեամբ վարժապետ է գե-
րագոյն հրահանգաց՝ շայեկա-
նութեամբ լի։

Այլ առ ինչ ոյս ուր ի՞նչ,
յանարգասաւոր ձեռաց, կամ
թէ քնաւ իսկ յանարուեստ, քա-
ջաբերութիւն զայս հրամայե-

ցեր՝ իբրև յարդասաւորէ. քա-
ջագունիցն քան զնա՝ որպէս գի-
տեմ՝ պէտք էցեն սորա բազմա-
բեղուն մշակութեանն։ Ամայն
և այնպէս հեշտաբար ընկալեալ
պարտ անհրաժեշտ համարեցայ
ընդ զսեր վայելոյ հրամանիդ.
իբրև գեղեցիկ յոյժ էր ինդիրն,
և կարևոր հրամանն, զի և ի-
մոյս իսկ ախորժակաց առաւել
ցանկալի էր կատարումն. ոչ գի-
տեմ՝ ըստ արժանին՞ն արդեօք՝
լաւագունին՝ որպէս ինձ թուի՝
յարձանագրութիւնս այսպի-
սեաց մատեանից. սակայն և՝ ի
մէնջ՝ ըստ չափու փոքրկութեան
անձին՝ տաժանելի կրնաք յա-
ռաջ եկեալ։ Օ՜ի և ոչ գոյին
ինչ էր մատեանն, և ոչ գուշ-
նաքեայ ոք մատենագրողն. որ-
պէս զի և քան զ՝ ինգինոսկն,
առաւել վասն վ՝լուտարքեայ
Ճշգրիտ և աստուածես, եթէ ՝՝ա-
պենապարան անչնաւոր է, և ընդգա-
րան հ՝ենդանի։

Վասնզի՝ ի Թանգարանի աստ
և՝ ի տան գանձու այսորիկ հա-
րըստութիւն գտցես առաւ և
մեծս շատ. ո՛չ զցանկալեացն
անմտաց, զի և ոչ ինչ առաւել
զգծնասցին կամ առաքինասցին,
որք ունիցին զնոսա, քան եթէ
որք չունիցին. այլ զնմաստու-
թեան մտաց, և զառաքինու-
թեան հոգւոյն, և զբարեկեն-
դանութեան կենաց, և զբազ-
մադէմ հանդիսից սորա: Այս
սիրելի էցէ ինձ թուել զայն ինչ՝
որ միանգամ՝ ի քաջարուեստ կե-
նացս մերոց վայելչասցին վարժք,
և որ՝ ի մեծապէս շահ յաւիտե-
նիս այսորիկ. զոր՝ ի մատենէ ա-
տի, որ զարդիս առաջին՝ ի հե՛լլե-
նացւոյն հայեցի խոսեցաւ, պըտ
զաբերեսցէ Հայորեարն Վոյ-
ին Թևարկուեամբ:

ՎԱՐՔ
ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ
ՔԵՐՈՎՆԱՑՒՈՑ

Նախ քան զի սկսայ առաւել ճշմարտիցն աստուածին ասել պարտ իցէ, արձանագրութեան Պլուտարքեայ վարուցն՝ այլուսմ ուսմեք Պլուտարքեայ պէտք են։ Ջծննունդ զառնն, և զժամանակ կենացն, զհայրենի քաղաքէն, և զծննողացն, զքաղաքին գործոցն նորա, զիշխանական աւագութենէն, զվարժիցն նորա, և զվարժապետէն, և զարձանագրութեանցն նորա, և որ այլ ևս բիւրապատիկ նորա հանդէսք, պատմաբար բան ձառել, զինչ մեծ իցէ։ Այլ թէ՝ ո՞ք եկաց Պլուտարք՝ անձին առանձին առաքինի քաղաքավարութիւն ըստ չափու հեթանոսական կարգացն. դարձեալ

և առ տնին՝ տանուտէրական խոհեմութեամբն, և քանիծն նա ՚ի քաղաքականին գիտութեան հանճարեղ գտաւ և վարժապետ և դործօն. զիաՀրդ նա հրաշալի էցէ և յանօսր զննութեան վարուց և բարուց աւագորեցոյն՝ զորոց միանգամ բուռն հայրեալ պատմէ, և մանր զամենայնն խոբագիտութեամբ ՚ի վեր բերէ, զիաՀրդ նոցա և անաչառ նստի դատաւոր խակութեան գործոցն կամ չարութեանն և առաքինութեանն. և քան պատմել՝ առաւել հրահանդել խնդրէ զընթերցանելիսն՝ միանգամայն իսկ յամենայն ՚ի կարգս և ՚ի չափս հասակի. նա քանի՛ իմաստասիրութիւն, քանի՛ և ճարտարախօսութիւն, քանիծն և զբերթողաց զախորժակ առեալ ՚ի դէպ խառնէ ՚ի պատմութեանն. քանիծն նորա գիտութիւն դիմակ դիմակ՝ ժողովրդոց և ազգաց, և նոցուն օրինաց և սովորութեանց, և նոցուն մատենից և մատենադրաց, զորս անուամբ չափ և եթէ գիտեմք այժմ ՚ի Պլուտարքեայ. և չափ ո՛ր էցէ ծովուն հմտութեանց և ծանօթութեանց առնն, զոր ՚ի միում յայն ՚ի միոսն իւր այնպէս առեալ ամփոփեաց, և անդրժելի յուշին կապեաց, և յարձա-

նագրութեան մատենիս, (և արտաքոյ այսորիկ՝ այլոց ևս ամբաւից) ճշգրտիւ ՚ի դէմս էած: Զայս ամենայն՝ և որ այլ ևս ըստ սոցանէն՝ ոճով և իմաստ նախահնութեամբ կենդանագրել, զի այս է հոգին Պղուտարքեայ, այլում ասեմ Պղուտարքոսի պէտք լցեն: Եւ ոչ որ այլ գտցուք զնա, բայց ՚ի նմա: Ապա զտիպ պատկերի հոգւոյն իւրոյ, նմին իսկ թողցուք՝ ինքնին յիւրոյ անտի արձանագրութեանցն ընթերցանելեաց ծայրալիր ՚ի դէմս բերել, և մեզ՝ որ ինչ զՊղուտարքեաւ՝ ծայրագաղ առնել:

՚Ի Քերոնէիա քաղաք փոքրիկ Բիով տիոյ գաւառին Ելլադայ ծնաւ Պղուտարքոս՝ որպէս ՚ի նորա բանիցն ՚ի վեր բերեմք՝ առ Կղոդիոսիւ կայսեր յառաջին դարու, իբրև ՚ի 50 ամի փրկութեան մերոյ. որով և Բիով տիա՝ թէպէտ և ոչինչ նշանաւոր գաւառ՝ յոյժ ականաւոր գտաւ, երիս ունելով ծնունդս զաւագ արանցն և զյոյժ փառաւորաց. այս է՝ Պինդարոս, քնարերգակ քերթողութեամբն. և Եպամինոնդաս մեծ, իմաստութեամբն և ճարտարախօսութեամբն և զօրավարութեամբն. և երրորդ՝ այս Պղուտարքոս՝ նոցուն վեհագոյն: Եւ

էին նորա ծնողք ՚ի պարկեշտից ան-
տի և յականաւորաց քաղաքին։ Ասէ
իսկ ինքն ՚ի մատեանս ինչ իւր վասն
հօրն իւրոյ, եթէ այր էր զարդարեալ
առաքինութեամբ և ցածութեամբ,
վարժ յիմաստասիրականին և յաս-
տուածաբանութեան դենին, և այր
յոյժ քերթողասէր։ Յիշատակէ նա
յանուանէ և զ Ամպրիաս զհաւ իւր՝
իբրև յոյժ ճարտարաբան այր և յաշ-
խոյժս երևելութեան կարի բեղմ-
նաւոր՝ մանաւանդ ՚ի խնճոյսն ընդ
բարեկամաց։ Յիշէ յանուանէ և զնա
խահաւ իւր զՆիկարկոս, և ՚ի նմանէ
իսկ լուեալ ՚ի տիս պատանեկութեան
իւրոյ զպատմութիւն անցից Քերով-
նիոյ՝ որ առ ժամանակօքն Անտոնի-
նոսի։

Վարժեցաւ Պլուտարքոս յամե-
նայն իսկ ՚ի հրահանգս՝ ՚ի վարժարա-
նին Ամմոնիոսի ականաւոր իմաստա-
սիրի. որպէս և կոչէ իսկ ինքն զնա
իւր վարժապետ։ Եւ մինչեւ մեկնեալ
Պլուտարք ՚ի Քերոնիայէ գնալ ՚ի
Հռոմ, փառաւոր գտաւ իւրով հան-
ճարովն և գեղեցիկ քաղաքավարու-
թեամբն՝ ՚ի քաղաքին իւրում. քան-
զի այն ինչ պատանի՝ դեսպանու-
թեամբ առաքեցաւ յիւրոց անտի առ

փոխանակ բղեշխին վասն մեծաց գործառնութեանց. յորմէ և՝ ի բնէ ժամանակացն այնոցիկ զհամբաւի հաբաւ նա. որպէս և Եւսեբի յիւրում ժամանակագրին ասէ, եթէ՝ ի չորեքտասաներորդի աւրին Ներոնի՝ Մուսոնիոս և Պլուտարքոս զհամբաւի հարեալ էին:

Ընդ այն ձիգա՝ որպէս և ինքն ասէ վասն իւր՝ պաշտեաց նա և զմեծափառ աւագութիւն դենին, զպսակազարդ քրմութեանն զԱպողոնի և զպատգամախօսութեանն:

Մասնաւոր իմն՝ յօրինակ բարի տարաշխարհիկ թափառելոցն՝ մեծապէս սիրեաց նա զհայրենի քաղաք իւր. կայր և հանապազորդեր՝ ի նմա զաւուրս կենաց իւրոց, և ոչ մեկնէր՝ ի նմանէ՝ բայց առ մեծի հարկի. և ձգնէր նկրտէր զանաւադ քաղաք իւր՝ անդանօր արձանագրութեամբ շատ ինչ՝ ի մատենիցն՝ աւագացուցանել և փառաւոր առնել. որպէս ասէ իսկ ինքն պարզաբար՝ ի յառաջաբանին վարուցն Դեմոսթենեայ. և յաջողեցաւ այս նմա, զի յանուն նորա աւադիկ ցայսօր նշանաւոր է քերով նիա:

Կին ածեալ Պլուտարքեայ՝ ի դըս-

տերաց անտի Ջերուսղեմոյ զԹիմոթեոս նա՝ օրիորդ պարկեշտ և հանճարեղ և առաքինութեամբ զարդարեալ, որպէս պատմէ իսկ ինքն ուրեք ՚ի մատեանս զվարս նորա: Եղեն նմա ուստերք չորք և դուստր մի. մեռան նորա երկուք յուստերացն ՚ի տղայութեան տիս. զհետ նոցա չոքաւ և դուստրն երկամեայ՝ սիրով սիրելին նոցա. և սքանչելի էր տեսանել յայնժամ զտուն Պլուտարքոսին և զԹիմոթեոսեայ՝ յոյժ պարկեշտացեալ յաուրս սգոյն ընդ մահ զաւակացն. ոչ կոծ լսելի եղև անդ, և ոչ ջայլել աշխարանաց, և ոչ բախիւն կրծոյ և ոչ հանդերձին փոփոխութիւն. և որք միանգամ յայց ելին ՚ի տուն նոցա ՚ի միխիթարել, այնչափ իմն անդորրաւէտ և լի խաղաղութեամբ գտին զտունն, զի և կարծեցին եթէ ՚ի սուտ համբաւոյ դոյժ հարեալ էին մահուան զաւակաց նոցա. այնչափ իմն առաքինացեալ էր մայրն որդեսէր և դորովագութ՝ ՚ի միասին ընդ խնամատեսէր առնն: Մեծապէս էր միաբանութիւն և սէր և խաղաղութիւն նոցա ընդ միմեանս յօրինակ վարուց քաջութեան ողջոյն քաղաքին:

Եւ ինքնին Պլուտարք՝ առաւել

քան զամենայն ինչ՝ ի սէր և ի համաշնչութիւն հրահանգէր և յորդորէր զաղաքացիս իւր: Կապ և կուիւ զամենայն՝ թէպէտ և փանաքի՝ արգելոյր և խափանէր. հաշտեցուցանէր զայր ընդ կնոջ. և զկին՝ ընդ առն, զազգական՝ ընդ ազգականի, և զբարեկամ՝ ընդ բարեկամի, և զեղբայր՝ ընդ եղբօր: Եւ ասէր իսկ ինքն զայս՝ իբրև առաջին պատուիրան և առաջին վարժս ի քաղաքագիտութեան. զի ի դոյզն կայծից, ասէր, հրդեհք բորբոքին և անտառք վառին, և ի դոյզն կապից տանց՝ քաղաքք աւերին. և զբան իւր հաստատէր ի հաւաստեաց անտի օրինակաց բազում քաղաքաց և ի պատմութեանց անցից աշխարհի:

2b Եւ կալաւ Պլուտարքոս յիւրում քաղաքին աւագութիւն մեծ և բարձերէց ամենեցուն. քանզի կարդեցաւ իշխանաց իշխան. և դեղեցիկ հանճարով առաջնորդեաց ժողովրդեան: Իսկ և յառաջ քան զայս՝ թէպէտ և ի խոնարհագոյն պաշտամունս եղեալ քաղաքին իւրոյ, խնամ մեծապէս տանէր պաշտամանն, և իբրու այն թէ յանձն իւր զուարճացեալ պանծայր ընդ խոնարհութիւն գործոցն՝ ըստ օրինակին Եպամինոնդեայ. և ասէր՝

ամենայն որ զինչ և իցէ պաշտօն, որչափ և խոնարհագոյն իցէ, մեծ է ինձ և փառաւոր. զի ոչ վասն իմինչ գործեմ, այլ վասն հայրենեացս: Այս կնիք իմաստութեան և առաքինութեան ոգւոյն Պլուտարքեայ:

Այսորիկ աղաղաւ խրատէր և զքաղաքացիս իւր՝ առաւել ևս զմեծատունսն և զճոխսն, շուք և պատիւ հարկանել պաշտօնատեարց քաղաքին՝ թէպէտ և խոնարհագունիցն. իբրև քան վասն անձանց իւրեանց՝ առաւել ևս վասն ոգւոց նոցա տքնին նոքա և վասն բարգաւաճութեան քաղաքին նոցա: Զամենայն անկարգութիւնս քաղաքին ուղղէր և կարճէր բանիւք ճարտարութեան և հանճարեղ խելամտութեամբ, միանգամայն և օրինակաւ վարուցն. և դուն գործէր զանայր փառաւոր և առաքինի գործել զհայրենիս իւր:

Իսկ ապա յաղագս ճանապարհորդութեանց Պլուտարքեայ, ասեն՝ եթէ ուղևորեցաւ 'ի Լակեդեմոն. և ծովագնաց տարաշխարհս հարկանէր և մինչև Եգիպտոս. բայց չունիմք զայս 'ի նորայն մատենիցն՝ որչափ ինչ առ մեզ: Սակայն ճանապարհորդեաց նա Իտալիա. և ժամանակս

ձիգս եկաց բնակեցաւ ՚ի Հռովմ քա-
ղաքի, որպէս պատմէ իսկ ինքն հե-
տաքնին իմն ՚ի սկիզբն վարուցն Դե-
մոսթենեայ. և էր ժամանակն ՚ի վախ-
ճան ինքնակալութեան Վեսպասիա-
նոսի:

Էր Պլուտարքոս մեծապէս մտերմութեամբ ընդ Սոսսիոսի Սէնէկիով նի աւագ առն հռոմայեցւոյ և իմաստասիրի՝ որ քառից եկաց Հիւպատոս ՚ի ժամանակին. յորոյ և ՚ի հրաւիրանացն ուղևորեցաւ նա ՚ի Հռոմ և վաստաւորեցաւ ՚ի նմա. յորում և շատ ինչ ժողովեաց յանդանօր մտենիցն յարձանագրութիւն զուգակշիռ վարուցն, զորս և բազմագոյն մասամբ գրեալ և կատարեալ ՚ի Քերովնիա, նուիրեաց մտերմին իւրում Սէնէկիոնիի: Ըստ որում և յանուանէ յիշէ զնա ՚ի սկիզբն վարուց Թէսէոսի, և այլուր ևս: Ժողովեաց և արձանագրեաց նա և զառածս և զասացուածս հանճարեղս՝ զվաղնջուց արբայից և զիշխանաց և զզօրավարաց, և ընծայեաց ՚ի նուէր Տրայիանոսի կայսեր: Եւ պատմէ մեզ Սուիտաս, եթէ աւագամեծար պատուեցաւ Պլուտարք ՚ի Տրայիանոսէ հիւպատեան աւագութեամբ, և լինել

բարձերէց ամենայն իշխանաց Լիւբիկեցւոց աշխարհին. բայց և զայս չունիմք ՚ի մատենիցն նորա:

Մինչդեռ բնակեալ էր Պլուտարքոս ՚ի Հռոմ, էր տեսանել զյարկ բնակութեան նորա՝ պէս պէս էր յարանց հռոմայեցւոց՝ նաև յաւագ որերոյն նոցա, որ համախուռն ընթանային առ նա լսել զճառս իմաստասիրութեան նորա: Քանզի և ՚ի ժամանակի յայնմիկ աւագք և ճոխք քաղաքին և ինքնակալք ինքնին գլխովին մեծապէս փառօք հեշտանային ՚ի լուր բանից արդոյ իմաստասիրացն և հռետորաց: Մի էր յաւագ որերոյ անտի Հռովմայ յայնժամ որ յունկնդրութեան հպատակ կային նմա, յոյժ ականաւորն այր և հոյակապ ՚ի Հռոմ՝ Ապուլէոս Հռուստիկոս, որպէս պատմէ իսկ ինքն Պլուտարքոս: Եւ էր, ասէ, երբեմն ՚ի բարբառել իմում ՚ի ճառից իմոց ՚ի Հռոմ քաղաքի, անդուստ նամակ մի յինքնակալէն վեսպասիանոսէ բերեալ ՚ի ձեռս տային Ապուլէոսի. իբրև ես, ասէ, դադարեցուցի զճառն ժամ տալ աւագ առնն ընթեռնուլ զնամակն, նա թոյլ չետ ինձ լռել. մինչև աւարտեցի բովանդակ զճառն, և արձակեցաւ ժո-

ղոմէն, և ցայն վայր հեշտաբար ժու-
ժեաց Աբուլէոս. և ապա բացեալ
ընթեռնոյր զնամակ ինքնակալին։

Եւ բարբառէր Պլուտարքոս զձառս
իւր ՚ի Հռոմ ՚ի լեզու յոյն. զի և
չէր իսկ քաջ տեղեակ և հմուտ հռո-
մայեցւոց բարբառոյն. որպէս վկայէ
իսկ ինքն ՚ի նոյն վարսն Դեմոսթե-
նեայ։ Բայց յոյն լեզու մեծապէս էր
՚ի ժամանակին յայնմիկ ՚ի Հռոմ. որ-
պէս և Մարկոս ինքնին Աւրելիոս
կայսր զգեղեցիկ հրահանգան իւր ՚ի
նոյն լեզու արձանագրեաց։

Եւ հոչակ հարաւ յայնժամ յոյժ ՚ի
Հռոմ համբաւոյն Պլուտարքեայ առ
կայսերութեամբն Ադրեանոսի։
Իսկ ապա քնաւ իսկ ծայր և պսակ
դեղեցիկ համբաւոյն նորա հանդի-
պեցաւ առ կայսերութեամբն Տրայ-
ղիանոսի, յորժամ՝ իլոյս ընծայեաց նա
զքննաչխարհիկ ղայս մատեան զգու-
գակշիռ վարուց զքաջազանցն հռով-
մայեցւոց և զյունաց։

Բայց ընդ բան մի՝ և ես ընդ այլոց՝
յոյժ եմ զարմացեալ, եթէ որ ժա-
մանակակիցք Պլուտարքեայ բազում
յայնժամ կացեալք յիտալիա մա-
տենագիրք անուանիք հռոմայեցւոց,
Ակոնիոս Պեդիանոս, և Պերսիոս,

և Լուկանոս, և Սենեկա, և Վաղերիոս Փղակկոս, և Պլինիոս կրսեր, և Մարտիաղէս, և Կուինտիլիանոս, և Յուվենաղիս, և բազումք ևս այլ, և մի ոք ՚ի սոցանէն չիշատակ ՚ըզ արար Պլուտարքեայ: Արդեօք խանդատացան ինչ՝ որպէս ասեն, զի յոյն ոք այր այնպիսի անաւագ քաղաքին քաղաքացի ՚ի Բիւոլտիա, յայնչափ շուք համբաւոյն ՚ի վեր եղեալ համբարձաւ:

Եղեն Պլուտարքեայ և երկու եղբարք՝ Լամպրիաս անուն և Տիմոնէն: Եւ էր նա յոյժ եղբայրասէր և պատուադիր եղբարց իւրոց: Եւ ՚ի մեծնաւոր շուք Լամպրիասայ՝ ուրեք յանդանձին մատենի իւրում տայ նմին իսկ եղբօր իւրոյ խօսել և բացայայտել զգժուարալոյծ զայն խնդիր, եթէ զինչ արդեօք նշանակեացէ բառդ այդ յն. EI, էէ, որ քանդակեալ կայր ՚ի վերայ դրան տաճարին Ապողոնի ՚ի Դեղփիս, ղորմէ տեսցես ստորև: Նոյնպէս և եղբօր իւրում Տիմոնի յայլում մատենի տայ բարբառել և խնաստնաբանել: Սիրեաց միշտ զնոսա դորովագութ և հաւասար սիրով. և նոքա զնոյն սէր և զնոյն շուք ՚ի դարձ փոխարինին հարկանէին նմա:

Պատուէրս և վարդապետութիւնս հանճարեղս դրեաց Պլուտարք վասն եղբայրական սիրոյ. և դանդաղի մեծապէս, զիարդ առ իւրովքն ժամանակօք դժուարագիւտ էցէ համաշնչութիւն եղբարց. յորժամ էր երբեմն, ասէ, դիւ դժուարագիւտ էր հերձուածն ի մէջ եղբարց. և երանի՛ էր ժամանակին այնմիկ, յորում, ասէ, էր տեսանել յայնժամ հիացմամբ և բերկրալից ուրախութեամբ երկուս եղբարս այնչափ իմն միացեալս ընդ միմեանս, որպէս յորժամ բնաւթիւնն է դիւ հրէշս իմն յերևան բերցէ՝ մարմինս երկու զգաւակացն միասնականս անդամին ի ծննդենէ: Որ աղաղաւ և առ մեծի եղբայրսիրութեան նորա խաղաղարար և հաշտարար ընտրէին զՊլուտարք ի մէջ եղբարց կացելոց: Որպէս և ի դեգերել անդ իւրում ի Հռոմ՝ պատմէ իսկ ինքն՝ եթէ իրաւախոհ դատաւոր երբեմն կարգեցին զնա ի մէջ երկուց եղբարց հերձելոց, զոր և յոյժ բանաւոր փաստիւք հրահանգեալ խելամտեցուցանէր զնոսա:

Եղև Պլուտարքեայ և եղբօրորդի մի կամ քեռորդի՝ Սեքստոս անուն. սա այս Սեքստոս յոյժ իմաստնախոհ

այր և քաջահմուտ՝ այնչափ իմն ղհաս-
բաւի հարաւ . ղև և վարժապետ յու-
նականին հրաւիրեցաւ լինել դպրու-
թեանց մեծի կայսերն Մարկոսի Ան-
տոնինոսի: Եւ ապա այս ինքնակալ
ոսկեղենիկ իմն արձանագրեաց ղմեծ
հաւաստիս վարժից ղվարժապետին
իւրոյ Սեքստոսի յառաջին դիրս ի-
մաստից իւրոց՝ օրինակ ղայս, անմահ
յիշատակաց արժանի: " Սեքստոս
այս, ասէ, իւրով իսկ նախագիծ օրի-
նակաւն ուսոյց ինձ հեղ լինել: Ի-
մում տան, իբրև հայր քաջախոհ դեր-
դաստանի, առաջնորդ լինել: Պեր-
ճութիւն անպաճոյճ առանց ամբար-
տաւանութեան ՚ի դէմս բերել: Կեանս ըստ բնութեան կարդին քա-
ղաքավարել: Ըղձից և կարեաց ի-
մոցն բարեկամաց՝ հետախոյզ դու-
շակ և նախազգած լինել: Տգէտ որե-
րոյն և անդուռն բերանոց՝ համբերա-
տար ժուժալ բերել: Եւ չափու առ-
հասարակ մարդկանն՝ զանձն իմ յար-
մարել . և զայլն ևս ,, : Ա՛յս աւա-
դիկ հրահանգ դերագոյն Սեքստոսին՝
որ օրինակ զայն հրահանգեցաւ ՚ի
հօրեղբօրէն իւրմէ ՚ի Պլուտարքեայ:

Եւ էր Պլուտարք յոյժ բարեհամ-
բոյր և մարդասէր . և ձգէր տարա-

ձէր զդուէթ խնամոցն ոչ միայն ՚ի վե-
բայ ամենայն մարդկան, այլ և ՚ի վե-
բայ խմբի ծառայիցն իւրոց. նաև
իբրև այր բնաւ իսկ գորովագուէթ ո-
ղորմէր և անասնոյ իւրում: Եւ քա-
ջիկ ղայս հանդէս զառնն տեսցես ՚ի
վարն անդ Կատոնի մեծի. յորում
և եպերէ Պլուտարքէ զխստուէթիւն
բարուցն նորա առ իւրն ծառայս:

Համայն և այնպէս ոչինչ անփոյթ
լինէր Պլուտարքոս յուղղուէթիւն յան
ցանաց և խակուէթեանց ծառայիցն.
այլ յորժամ և պատուհասի պէտք
էին, պատուհասէր. բայց առանց
սրտմտուէթեան կրէին. և ՚ի պատու-
հասին՝ միայն ուղղուէթեան նոցուն և
քաջալաւուէթեանն պատկառ կայր:
Իսկ որ աքանչելի ևս օրինակ բարեաց
ամենայն իշխանաց և տանուտեարց,
ժամ տայր արժանահաս պատուհա-
սին և յամեցուցանէր, մինչև ՚ի շի-
ջանել եռանդան սրտին և բոցոյ բար-
կուէթեանն. և զնոյն հրահանգ քա-
ղաքավարուէթեան առհասարակ պա-
տուիրէր ինքն և քարոզէր:

Իսկ յաղագս վարժից իմաստասի-
րուէթեանն նորա և աղանդոյն, թէ-
պէտ և ինքնին Պլուտարքէ մեկին բա-
նիւք ոչ յայտնեաց, սակայն և քա-

ջայայտ իսկ ՚ի նորուն իմաստասիրե-
լոյն և ՚ի մեծազօր զօրութենէ բա-
նիցն յոյժ ակներև կայ, զի բուն իսկ
ակադեմեան էր այրն, և հարազատ
աշակերտ վարժարանին Սոկրատայ,
զոր ՚ի մէջ այլոց աղանդոցն Ան և
աղբիւր ⁑ալախոհութեան՝ ասացք Ովր-
տիոս յիւրում քերթողական արուես-
տին: Եւ արդեօք ընդ բանսն Պլու-
տարքեայ հրաշասցի և այր քրիստո-
նեայ աստուածաբան. այնչափ իմն
լուսաւոր խօսի նա վասն Աստուծոյ և
յաղագս կրօնի. և յաղագս անմա-
հութեան հոգւոյն: Քանզի խօսի ճըշ-
գրտագոյնս և հրաշալիս յաղագս
միութեանն Աստուծոյ, և անչափու-
թեան նորա, և բարութեան նորա,
և պարզութեաննն նորա. "Իւրիւնն
ասէ՝ Աստուծոյ, է նոյն ինքն մեծու-
թիւն և մեծվայելչութիւն և բարու-
թիւն և սէր: Եւ է նա ամենայն ու-
րեք: Եւ է նա բուն իսկ երանութիւն
անփոփոխելի և անապական: Եւ է
նորա ճշգրիտ անունն Է. քանզի այլքն
ամենայն չափին ընդ ժամանակի. բայց
նա անժամանակ է. և ամբարշտու-
թիւն է ասել ընմանէ՝ եղև կամ եղի-
ցի. այլ պարտ է ասել՝ Է. քանզի ՚ի
յաւիտենից է, և անշարժելի է, և

անժամանակ է, և անյեղլի է, յո-
րում ոչ առաջինն է՝ և ոչ վերջինն, ոչ
գալոց լինէ, և ոչ անցեալ, այլ վաղըն-
ջուց լինէ և ոչ նոր: Զի որ ասի թէ
է, ձշմարտապէս է: Ոչ եղանի, ոչ
անցանէ, այլ միտնջենաւոր է»:

Զայս ամենայն՝ ոճով և ճոխաբար
լսօսի Պլուտարք ուրեք՝ ի ճառի իւ-
րում. քանզի է իսկ նորա մասնաւոր
ճառ հետաքնին՝ ի մեկնութիւն յու-
նական բառիդ, EI. որ քանդակեալ
կայր՝ որպէս վերագոյնդ յիշեցաք՝ ի
վերայ դրան տաճարին Ապողոնի դիցն
՝ի Դեղփիս. և մեկնէ զայն բառ՝ ա-
ռեալ՝ի վարժապետէն իւրմէ Ամմո-
նիոսէ՝ իբրև երկրորդ դէմ յն. էա-
կան բայիս ԵՄ, և ասէ՝ եթէ յոյժ աս-
տուածավայելչագոյն ձայնիւ ողջու-
նեմք մեք միշտ զդիան՝ ի մուտս տաճա-
րին նորա, ասելով առ նա, Ե»: Ապա
զվերոյգրեալ բանսդ յաղագս էու-
թեանն Աստուծոյ, ըստ նմանէն կար-
գէ. եթէ Աստուած միայն է ձշմար-
տապէս՝ էն, այլովքն հանդերձ:

Բայց անշուշտ և Պլուտարք՝ այրն
բազմահմուտ, ունելով զՊղատոնինն՝
հետաքնին զննութեամբն անցեալ էր
և ընդ դիրսն Մովսէսի նախամարգա-
րէին և այլոց մարգարէիցն:

Դարձեալ և վասն Աստուծոյ գե-
ղեցիկս ասէ նա զայս. "Իբրև հայր
բազմադուէթ սիրէ Աստուած զմար-
դիկ, և զօրհանապազ բարերարէ առ
նոսա: Եւ գիտութիւնն Աստուծոյ
ակն լուսալիր և յստակատես է հո-
գւոյն մերոյ. իսկ վերջին հիդուէթիւն՝
ասէ՝ հոգւոյն այն է, յորժամ անբաժ
է նա՝ի գիտուէթենէ նորա: Եւ զգէ-
տուէթիւն զայս Աստուած ինքնին տայ
հոգւոյն. ուստի և մեզ պարտ է զօր-
հանապազ՝ի նմանէ իսկ խնդրել զայն
աղօթիւք," և զայլն ևս:

Լուսաւորագոյնս դարձեալ խօսի
Պլուտարքէ և յաղագս անմահուէթեան
հոգւոյն: "Է՛ իսկ, ասէ, այս անմա-
հուէթիւն հոգւոյն բղխուն՝ի բարօ-
էթենէն և յարդարուէթենէն Աստու-
ծոյ. քանզի դոյ իսկ Նախախնամու-
էթիւն կառավար տիեզերաց. և հո-
գիք, ասէ, կան ինան յետ մահուանն,
և առնուն իւրաքանչիւր Աստուծոյ
զմրցանակ բարեացն գործոց, և զպա-
տուհաս՝ զչարեացն":

Անշուշտ Պլուտարքէ և ընդ Առա-
քելոցն սրբոց՝ որպէս բանիս կարդ
է ասել, քանզի և ժամանակակից իսկ
եղև նոցա, ոչ միայն կենակից խո-
սեալ լեալ՝ որպէս հաւանեալս եմ՝ այլ

և զդիրսն ընթերցեալ զնոցա, հետա-
քնին յոյժ գոլով այրն և բանասէր
անչափ և առաքինասէր այնպիսի ՚ի
կարգի բնութեան: Ա՛ւաղ բախտին.
զի թէ երբէք էր նորա ՚ի միտսն լոյս
ծագեալ Աստուածեղէն, էր իսկ Պլու-
տարքոս անշուշտ մեզ այսօր մի յա-
ռաքելական Հարց անտի, ՚ի գերա-
գունից նոցա, սրբութեամբն և մա-
տենիւքն: Եւ նա աւանիկ վարանեալ
իսկ է Պլուտարքոս և ՚ի տագնապի է
վասն լուսաւորեան պատգամաց դիցն
՚ի ժամանակին իւրում, և ինքնին նա
՚ի ներքս բերէ (Թէպէտ և չիմանայ)
պատմութիւն ճշդիւտ զժամանակի
կենագործ մահու փրկչին՝ որ խափա-
նեաց զնոսա, որպէս տեսցուք ստորև:

Բայց ՚ի գիրս Պլուտարքեայ՝ Թէ-
պէտ և է տեսանել ստէպ բազմաւո-
րակի ձայնիւ՝ Աստուածք, որպէս և
վարժապետին իւրոյ Պղատոնի. այլ
քանզի բազում այլ ուրեք կինքէ յայտ-
նի՝ եթէ մի միայն է Աստուած, և
ինքն է միակ սկիզբն ամ իրաց. ապա
յայտ է եթէ "Գիտութիւն Աստու-
ծոյ յայտնի էր ՚ի նոսա. քանզի Աս-
տուած իսկ յայտնեաց նոցա. այլ
ծանեան զԱստուած, և ոչ իբրև զԱս-
տուած փառաւորեցին":

Իսկ ՚ի բարոյականին Պլուտարքոս՝ առաւել քան զԵպիկտետոս՝ ոխերիմ թշնամի ընդդէմ կքրեցաւ գետնանա-խանձ վարդապետութեանցն Եպի-կուրայ. և ինքն ողջախոհ իմաստա-սիրութեամբ և կորովի փաստիւք հիմն ՚ի վեր տապալէ զաղանդն նորա: Եւ է Պլուտարքեայ մասնաւոր ճառ, և մակագրի. եթէ "Ձի՛ք հնար կեանս գեղեցիկ վարել ըստ կարծեաց աղան-դոյն Եպիկուրոսի": Դարձեալ և յայլում ճառի մեծապէս աղարտէ զառածն զայս Եպիկուրեայ. Կեա՛ց ղանխուլ յամենեցուն: Եւ ասէ զնոյն ա-ռած արժանի մարդոյ, որ մարմնով չափ ևեթ անասնաբար կեցցէ յաշ-խարհի: Մոլեացն, ասէ, անկ է զան-խուլ զկեանսն ունել և ՚ի խաւարի ծածկել: Կեա՛ց դու ուրեմն, ասէ, ո՛վ Եպիկուրէ ՚ի խաւարի, զի մի յան-դիմանեսցին գործք քո. բայց առաքէ-նի՛ք խնդրեն, ասէ, լոյս. և յերևան գան ՚ի լուսաւորել և զայլս ՚ի մարդ-կանէ: Եւ զբան զայս հաւատարիմ գործէ Պլուտարք ՚ի բազմադէմ ան-ցից պատմութեանց օրինադրաց աշ-խարհի և իմաստասիրաց և զօրավա-րաց:

Ա՛յլ Պլուտարք անարատ ՚ի մա-

սին յայսմիկ, հեթանոսաբար հրէշից պատկառ կայր և աւելորդապաշտու-թեանց և երազոց. թէպէտ և զաւե-լին ինքն աղարտէ, որպէս տեսցես 'ի վարս քաջազանցն: Բայց վկայէ իսկ ինքն վասն իւր ուրեք, եթէ՝ է զի ե-րազ մի տեսեալ (զոր մեզ 'ի վեր չհա-նէ, թերևս յոյժ ծիծաղելի իր), ընդ երկար ժամանակ ժուժկալեաց նա յուտելոյ զձու:

Բայց սէր ճշմարտութեան՝ մի 'ի կարևորագունից հանգամանաց առն պատմագրի՝ քաջ իսկ երևի 'ի նմա. և 'ի մատեանս վարուց քաջազանցն իւրոց՝ զոր արձանագրեաց, երբէք չը-գտցես ուրեք զմոլութիւնն գունագե-ղեալ առաքինութեամբ, կամ զա-ռաքինութիւնն՝ մոլութեամբ: Ա յլ քանզի գոյ քուն և իմաստնոց, և ըստ նորուն իսկ Պլուտարքեայ ուրեք 'ի ջրմեղս հանելով զնաւակագործ մար-դիկն, "բնութիւնն, ասէ, այր ամբիծ գլխովին և ամենակատար 'ի վեր բե-րել ոչ ունի,,. նոյնպէս և մեք ներողա-բար գոցուք առ նա, եթէ ուրեք նա ներհակաբար իմաստասիրութեանն իւրոյ' ('ի սիրոյ ձգեալ հայրենեացն) ոխերիմ ընդդէմ յարձակեցաւ մեծի պատմագրին Հերոդոտոսի. և ձառ

և մանաւանդ առեալ արձանագրեաց
ընդդէմ, և մակագրեաց այսպէս. Յա-
ղագս չարաբանութեանն Հերոդոտեայ: Եւ
ծայրայեղ անդանօր դրդուի ընդդէմ
առնն՝ որ նախահայր եկաց արտաք-
նոցն Պատմութեանց. ոչ լինչ շատա-
նայ իբրև ստաբան և առասպելաբան
ամբաստանել զնա, այլ և իբրև չար և
չարաւիտ: Իակ թէ զպատճառն հար-
ցանես, իբրև զի չար խօսեցաւ Հերո-
դոտոս զԲիւզանտիոյ և զկորնթացւոց:
Բայց զնաիրդ չհամաստնանայ Պլու-
տարք, եթէ Հերոդոտոս զնրս գրեալ
զնւրոյ ժամանակին կամ որ սակաւ
մի յառաջ, և յանդիման աշխարհա-
ժողով ատենին Հելլենացւոց ընթեր-
ցեալ զպատմագիրս իւր Յողմպիա-
կան՝ ի խաղսն, առհասարակ Հելլադա
ընկալաւ գովութեամբ, և մեծապէս
փառաք անուանս ևս զՄուսայից կար-
դացին իւրաքանչիւր գրոցն նորա. և
զնաիրդ՝ ի քաղաքաց և ո՛չ ոք բողոք
կալաւ, եթէ արդարև ստութեամբ
և զրպարտութեամբ աղարտեալ էր
նորա զյոյնս: Իակ Պլուտարք հինգ
հարիւր ամաք յետոյ քան զՀերոդո-
տոս՝ իբրև ստախօս առակէ զնա: Բայց
որպէս ասացի՝ սէր ծայրայեղ հայրե-
նի դաւառին յաղթեաց բանին: Ա-

մայն և այնպէս առ սէր Ճշմարտու-
թեանն ոչինչ հրաժարի Պլուտարք
մեծապէս պանծանօք գովել և զՀե-
րոդոտոս ինքնին զկարծեալ չարախօս
հայրենեացն: Վասեմութիւն է, ասէ,
՚ի նմա ոճոյն և կորովութիւն և
քաղցրութիւն և անհամեմատ դեղ,
և վեհագոյն արուեստ պատմագրու-
թեան:

Ինձ թուի՝ ՚ի նմին սիրոյ Ճշմար-
տութեան և յակնածութենէն յա-
ռաջ եկեալ և մեծապէս զգուշաւո-
րութիւն առնն և զարմանալի. զի
ժամանակակից նա առաքելոցն սրբոց
գոլով և աշակերտացն, և ՚ի բուն իսկ
՚ի տարածել հաւատոյս մերոյ և ՚ի դի-
ցապաշտութեանն տապալել, երբէք
նա յիշատակ յայտնի բանիւք ընդ-
դէմ չարար ՚ի գիրս իւր՝ կրօնիցս մե-
րոց. և երբէք նա թշնամի չարախօս
ընդդէմ ոչ կքրեցաւ, իբրև զան-
դուռն բերանն՝ որ զայնու ժամանա-
կօք ՚ի հեթանոս մատենագրացն.
իբրու Սուետոնիոս, և Տակիտոս, և
Լուկիանոս, և այլք ևս: Միայն ու-
րեք զծէս ինչ զմեր՝ բայց առանց
անուան՝ ակնարկի արարեալ, դատա-
պարտէ. զորոց ոչ զսրբութիւնն գի-
տէ և ոչ զկարևորութիւնն, անբաժ

՝ի Ճշմարիտ դիտութենէն և զերի հեթանոսական դենին:

Ոմանք՝ (որպէս Տասիէ ասէ զաղղիացի պատմագիրը վարուցն Պլուտարքեայ) շուք և դովութիւն ետուն իմաստասիրիս, զի ուրեք՝ ի դիրս իւր ասէ, եթէ պատգամախօսութիւն դիցն՝ գործ Ապոլոնի էր կամ քահանայից, զորս յոյնք կոչեն Δαίμων: Ապա բառիւդ Տէմոն չիմանայ, ասէ, անդ Պլուտարքը զԱպոլոն չարս կամ զդեւս. այլ զոդիս բարիս և զէակս՝ որ ընդ Աստուած և ընդ մարդիկ. այն են՝ Հրեշտակք պատգամախօսք առաքեալ ՝ի նմին իսկ յԱստուծոյ: Քանզի և ասէ իսկ ուրեք Պլուտարքը. Ձիք պատգամ՝ որ առանց աստուածութեանն էր: Եւ որք միանգամ ընդ դիրսն Պղատոնի անցեալ էին, գիտեն իսկ քաջ զոր ինչ միանգամ ասաց նա վասն Տէմոնիցն:

Արդ որպէս Պղատոն, նոյնպէս և աշակերտեալն նմա Պլուտարքը, և որք իւրեւ զնա՝ հեթանոսաց ջոկ, արդարեւ իւրեւ պատգամն յաստուծոյ հաւատային զպատգամախօսութիւնս դիցն, առ որս և անձկանօք ընթանային ՝ի վարանս իւրեանց. քանզի և էին իսկ նոքա ՝ի խաւար անգիտու-

թեան յաղագս իշխանութեան իշխանին խաւարի, որ պարանեալ անդրուրթեամբ ունէր զնոսա ի սնապաշտութեան դևնին, ի ձեռն պատդամաց քրմացն և քրմանուշից, ազգ խաբուսիկ և շաղաւաշուրթն. է զի պատդամ հոմաձայն ի դուրս տալով, և է զի սուտ. է զի գուշակութիւն ապագայիցն՝ յանօսր ընկնութենէ այսոցն չարաց, այլ ոչ գիտութիւն հաստատ՝ որ Աստուծոյ միայն է. և է զի կանխահաս զեկուցումն եղելոց երին՝ յանհնարին արագութենէ տեսութեան ոգւոցն չարաց:

Եւ զխաւար զայս անդիտութեան՝ և զիմաստասիրացն անդամ զհեթանոսաց, ոչ այլ ուրեք քաջիկ ևս տեսցէ ոք՝ քան եթէ ի ձառի անդ Պլուտարքեայ յաղագս Պատդամացն: Քանզի և է իսկ նորա մասնաւոր ձառ երկայնաձիգ վասն լռութեան պատդամախօսութեանց Դիւցն. անդանօր ի ձառին այրն բազմաքննին նատեալ յուզէ քննէ, և տառապի և տադնապի. զի է զի պատդամախօսութիւնք, ասէ, տաճարաց մերոց լռեալ կան այժմ ի ժամանակի աստ մեռուսմ. և զժամանակ իւր ասէ՝ առ լինքնակալութեամբն Վեսպասիանո-

սէ և Տրայեանոսի և Ադրիանոսի. Իսկ զսկիզբն ժամանակի զբռուքեան պատմացն (որպէս ՚ի յետագայ պատմութենէ իւրմէ յայտ է) ՚ի վեր տանի նա մինչև յամս ինքնակալու- թեանն Տիբերեայ կայսեր, առ որով յերուսաղէմ կենադործ մահն Տեառն մերոյ, որով և ՚ի բնէ ժամանակացն այնոցիկ իշխանութիւն լուծաւ խա- ւարին: Արդ Պլուտարքոս ՚ի նմին ձա- ռի ՚ի վեր ՚ի վայր խիլ արկեալ յուզէ և վարանի, յինչ պատճառս արդեօք զոդցես առհասարակ պատգամախօ- սութիւնք մեհենից լռեցին. և տայ ՚ի նմին ձառի խօսել իմաստասիրաց ժամանակին իւրոյ վասն լռութեան դիցն՝ անոնց ինն կակազելով և իբրև արդարև զրդիչնս պառաւաց: Եւ ապա յայլ ինչ դէմս, և պատմու- թիւն մի ևս արժանահաւատ ՚ի ներքս բերէ հետաքնին այրն՝ հանդիպեալ յամս կայսերութեանն Տիբերեայ. ինքն չիմանայ զմեծապէս հաւաստիս զպատճառին համրութեան դիցն՝ զոր յուզէ, սակայն և պատմէ. և եթէ էր ծանուցեալ՝ յընչաց այնուհետև քե- րեալ էր զամենայն զկարկատուն ըզ- բանսն ձառին, և համօրէն ՚ի վերայ կացեալ պատճառի խնդրոյն: Ա-

կայսերուհեամբն, ասէ, Տիբերեայ Եպիթերսէս ականաւոր այր՝ հայր Եմիլիանոսի մեծի հռետորին՝ եմուտ ի նաւ յԵլեադայ հանդերձ բազմամբ բոխ ուղեկցօք անցանել գնալ Իտալիա: Իբրև յուղղոջ հանդարտու- թիւն լինէր յաջողակ հողմոցն մերձ ի կղզիսն Էքինեան, ստիպեցան նոքա զկայ առնուլ յանդիման կղզւոյն Պաքսոսի. և իբրև ընդ երեկս նստան հաց առնուլ ամենայն նաւաստք, և վախճան եղև ընթրեացն, անդուստ աւադիկ ի Պաքսոսէ յեղակարծումն ձայն ինն յստակաձայն լսելի լինէր. դոչէր կարդայր յանուանէ զԹամոս: Եւ էր այս Թամոս ղեկավար նաւուն այր եգիպտացի. իբրև երկիցս այնպէս կոչեաց զնա յանուանէ ձայնն, և պատասխանի չարար Թամոս, երեքկնեաց նոյն ձայն և կարդայր զայրն. իսկ իբրև յերրորդումն ետ պատասխանի, ապա նոյն ձայն՝ դոչեաց առ նա բարձր և ասէ. Յորժամ հասեալ ժամանեսցես ի վայրն՝ անուանեալ Պալովդէ, այդ արասցես, ὅτι Πὰν ὁ μέγας τέθνηκε. այս է՝ էրէ Պան մեծն հոտաւ: Եւ պատմէր Եպիթերսէս, եթէ առհասարակ ամենեքեան ի նաւուն լուան զձայնն, և

յոյժ հիացեալ զարմացեալ կայինն. և սկսան այր ընդ ընկեր հարցանել և՝ի վէդ ևս գալ, արդեօք լինուլ զհրամանն ձայնինն զայնորիկ արժանի էցէ, եթէ հետաքնին չեղեալ՝ խաղալ զառաջակայ ուղին: Բայց Թամոս ղեկավար՝ որ զհրամանն էառ՝ զայս ասաց. եթէ խաղալ մեզ յառաջադէմ և չասել ինչ արժանն է, եթէ հողմուընքդ յաջողեացին մեզ. ապա եթէ դուլ լինիցի հողմոցդ, հարկ է զհրամանն լնուլ զձայնինն: Իբրև՝ի վայր անդր՝ի Պալովդէ հասին նոքա, հանդարտութիւն մեծապէս դրոտանէին՝ի ծովուն և ուստեք ամենևին սիւդ ոչ շնչէր: Ապա յայնժամ Թամոս ըստ հրամանին յարուցեալ կացեալ՝ի խելս նաւուն, ձայն արձակեալ՝ի ցամաք կոյս անդր, դոչեաց այսպէս. Պան Ջծն Ջոաա: Ա՛յն ինչ նորա բանքն՝ի բերան էին, և անդուստ՝ի ցամաքէն վայ և կոծ և աշխար մեծապէս և խառնադոչ հնչիւն արհաւրաց լի՛ հիացմամբ, ոչ միոյ ուրուք, այլ բիւրուց բազմաց լսելի լինէր. որպէս ղի և արհաւրօք լի՛ եղեն առհասարակ՝ որ՝ի նաւին: Այսորիկ այսպէս եղելոյ, և նաւուն հասեալ Իտալիա, և քանզի ոչ նուա-

զունք էին նաւադնացքն, այլ բազմութիւն մեծ, հնչեալ առհասարակ զհամբաւն հարաւ բանն ի Հռովմ քաղաքն. հասեալ և յականջս կայսեր Տիբերեայ, ոչինչ անփոյթ լինէր. անդէն հրաման տայր ածել զառաջեաւ միանգամայն զթամոս և զնպիթերսէս. իբրև զհաւատս պատմութեանն ստուգեաց ի նոցանէն, խնամով ի քնին առեալ հարցանէր Տիբեր զգիտունն, ո՞ ոք այն Ռեձ Պան էցէ, որ մեռաւ: Ժողովեալ նոքա ի միասին որ շատ իսկ էին՝ ասէ Պլուտարքէ՝ յարքունիս նորա, առհասարակ վարանեցան. և գուշակաբար զայս ասացին, եթէ այն Ռեձն Պան որդի ուրեմն էցէ Հերմէսի և Պենելոպեայ. քանզի և այլ ինչ բաց ի դիցաբանութենէ չունէին արդեօք ասել նոքա:

Այս ինչ է վաւերական պատմութիւնն Պլուտարքեայ ի նմին տրամախօս ճառի իւրում Յաղագս լռութեան պաճուճախօսութեանցն. և վաւերական՝ զի ոչ յանկեան ուրեք առ սոսկականս առնու ձգէ միայն զպատմութիւնն, այլև մինչև յարքունիս անդր և մինչև ի դիւանսն Տիբերեայ կայսեր ի ներքս տանի:

Արդ՝ թէ ո՞ր էր Զայնն, և ուստի,

ելիք՝ ասէ Տասիէ Գաղղիացի՝ ասել ճշդրտիւ։ Բայց թէ ոք, ասէ, որպէս ՚ի ծննդեան Տեառն, նոյնպէս և ՚ի մահուն, աղաղարար զՀրեշտակսն ա֊սասցէ. և զՀիւն և զկոծիւն և զլա֊լիւն անշուշտ ղղիւացն, որոց լու֊ծաւ իշխանութիւն համաշխարհա֊կան լուսթեամբ պատգամախօսու֊թեանցն (ըստ նոցուն իսկ հեթանո֊սացն առ Տիբերեաւ) ՚ի ժամանակէ անտի մահուանն Տեառն, որ ՚ի դէպ արդեօք լսելեացն նոցա՝ ծանուցաւ ՚ի Ձայնէ անտի՝ ընդ անուամբն. Πὰν ὁ μέγας. ՑՅն Պան. որ պաշտէր առ նոսա իբրև աստուած բնութեան. և նշանակէ Πὰν, Ամենայն. անուն ճշմարտին Աստուծոյ միայն սեպհա֊կան։ Որով և Պլուտարքեայ (որ միայն ՚ի հեթանոս մատենադրացն՝ հետա֊քննին յոյժ գոլով այրն՝ պահեաց մեզ և զայս մեծ հաւաստիս ճշմարտու֊թեանն,) մեծապէս շնորհս ունիմք. թէպէտ և ըստ չափու շնորհին՝ և մե֊ծապէս է մեզ զարմանս, եթէ զիարդ նա որ քաջայայտագոյն ևս քան զամե֊նայն հեթանոսս (կարծեմ և միայ֊նակ ՚ի նոսա) խօսեցաւ և վարանե֊ցաւ այնչափ ՚ի նմին ճառի վասն լուսթեան դիցն, ոչ համօրէն հետա֊

քինին եղև ձշմարտութեան. այն՝ որ և վաթսուն և աւելի ևս ամօք յետոյ քանզդէպն Թամոսին առ Տիբերեաւ՝ արձանագրեաց մեզ զձառն զայն և զպատմութիւն, յորում ժամանակի ընդ ամենայն երկիր ելեալ իսկ էր բարբառ հաւատոյս մերոյ. և վոխանակ նա նստեալ ողբս իմն և սառնու յայտնի և ձշդրիտ՝ այսպէս 'ի նմին ձառի. Արդարև իբրև աղբիւրք անջրդիք, ասէ, ցամաքեալ կան այժմ ամենայն պատգամք: Նուաղեցա՛ն գլխովին գուշակութիւնք ամենայն: Եւ մերն, ասէ, այն Բիւոտիա, այն որ իւրովք պատգամախօսութեամբքն յոյժ քաջահնչակ էր յԵլլադա և մեծաբարբառ, այժմ աւադիկ և նա համրացեալ կայ: Այսպէս նա աւաղէ զնուրն: Բայց և ես կրկնեցից առ ցաւ սրտի. Աւաղ բախտին Պլուտարքեայ. զնաքդ վրիպեցաւ ձշմարտախնդիր այրն. և այնչափ մերձ լուսոյն և 'ի ծագման նորա և 'ի ծաւալել նորա՝ 'ի լոյսն չվայելեաց:

Եւ եկեաց Պլուտարքոս որպէս Վոսսիոս ասէ՝ մինչև յամս քննքնակալութեան Անտոնինոսի Պիոսի. և հաշուեացի ըստ այսմ ամ կենաց նորա մինչև 'ի ծերութիւն պարարտու-

թեան՝ իբրև ամաց ինսնից։ Սակայն ըստ հաւանական կարծեաց՝ մեռաւ Պլուտարքոս առ ինքնակալութեամբն Ադրիանոսի՝ իբրև ամաց եօթանասուն և հնգից։

Եւ ի Աւթանագրութիւն մի յունական՝ Ագաթիոսի Սքոլաստիկոսի՝ ի պատկերն Պլուտարքեայ՝ զոր կանգնեցին նմա Հռովմայեցիք, այսպիսի։

ՓԵԶ
Ի ՇՈՒՔ ՅԱԻԷԻ
ՓԵՐՈՎՆԱՑԻՊ ՊԼՈՒՏԱՐՔԷ
ԶՊԱՏԿԵՐ ԶԱՅՍ ԿԱՆԳՆԵՑԻՆ
ԱԻՍՈՆԱՑԻՔ
ՓԱՆԶԻ ԶՄՐՑԱՆՍ
ԶՅՈՒՆԱՑ ԵՒ ԶՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ
ԶՈՒԳԱԿՇԻՒՍ ՄԻՄԵԱՆՑ
ԱՐՁԱՆԱԳՐԵՑԵՐ
ԲԱՅՑ ԵՒ ՈՉ ԴՈՒ ԻՆՔՆ
ԲԱՒԵՍՑԵՍ ԳՏԱՆԵԼ ԶԱՅՐ
ՈՐ ՓԵԶ Ի ԿՇԻՒ ԳԱՑՑԷ
ԵՒ ՈՐ ՓԵԶ ՀԱՆԳՈՒՆԱՏՊ
ԱՐՁԱՆԱԳՐԵՍՑԷ

ՅԱՒԱՁԱԲԱՆ

ՕՐ անդամին ՚ի բնէ ըստ գերե֊ցիկ ախորժակացն ցանգ բնաւորե֊ցաւ սիրել մարդ բանաւոր, զկրա֊հանգելն ասեմ հանդերձ զուարճու֊թեամբ, անշուշտ ՚ի Պլուտարքեան մատենէ աստի լրումն տացէ ազնուա֊կան ըղձին։

Քանզի յակն արկեալ զսա միան֊գամ ուշիմ ընթերցանութեամբ, այ֊նուհետեւ և ինքն ընդ անձին ոգորես֊ցի ՚ի պայքարելն՝ եթէ արդեօք առա֊ւել զուարճացաւ, եթէ առաւել հրա֊հանգեցաւ։ Այնչափ լիճն զհարստու֊թիւն զայս կրկնակի զոգւոյ և զմտաց՝հաւասարաչափ մթերեաց հան֊ճարեղս այս Պատմագիր ՚ի գանձու զրոցս այսոցիկ։

Պանծասցի՛ արդեօք Յունաստան ՚ի քերթողական աշխոյժս անզուգա֊կանս՝ յիւրն Հոմերոս. ՚ի ճարտա֊

բախօս բեմբասացութիւնս աննը-
մանս՝ ի Դեմոսթենէս. ի հնախօս
պատմագրութիւնս քաղցրաբանս և
դեղեցկահիւս՝ յիւրն Հերոդոտոս և
ի Թուկիդիտէս. ի հրահանգիչ պատ-
մութեան՝ ի Քսենոփոնտ. բայց սա-
կայն ի հանճարեղ և յիմաստնախոհ
պատմագրութեան՝ միանգամայն և
ի քաջահրահանգ՝ պատշաճեալ դոդ-
ցես ամենայն չափու հասակի մարդ-
կան, պանծացի միայն յիւրն Պլու-
տարքոս:

Քանզի և սա միայն գիտաց քա-
ջապէս ընդ ախորժակաց պատմու-
թեանն կենդանի նկարագրութեամբ
ի զբօսանս լսելեաց, հիւսել միանգա-
մայն և զգուարթութիւն հրահան-
գութեան մտաց՝ ի խելամուտ լինել
ճշդրտիւ պատճառաց անցից պատ-
մութեանն, և որ ընդ նոսին զուգա-
հետ կարևոր հանգամանացն, և որ
ըստ նոցանէն յառաջ եկեալ վախ-
ճանի իրացն. և ի գիտել միանգա-
մայն քաջութեամբ խորհրդոց դա-
տել և սահմանել զառն առն՝ զորոց
արձանագրէ՝ զգեղեցիկ արդիւնս վաս-
տակոցն և զանշուշտ իմաստութիւնն
յառաջնորդութեան նոցա, կամ թէ
զթերակատար խակութիւն խորհրդ-

դոց նոցա, և որ ըստ նմանէն՝ զանդոսնելն գործոցն նոցա: Նո՛ր և չքնաղ օրինակաւ զուգակշռելով դատողականին ընտրութեամբ զնոսա ընդ միմեանս՝ ի հրահանգութիւն ընթերցանելեաց իւրոց. միւսմն հետազօտ նախանձաւորութեամբ պատկառ կալ, և՝ ի միւսմէն՝ քաջախոհ զգուշաւորութեամբ հրաժարել:

Որով և նորա այս Ա՛ատեան պատմագրութեան՝ ո՛չ միայն՝ ի մէջ բազմադէմ այլոց մատենագրութեանց նորուն Պլուտարքեայ իբրև մարգարիտ լուսափայլ ծագեալ՝ այնոցիկ ամենեցուն պսակ ականակապ՝ ի գլուխ անցեալ կայ, այլ և գոգցես ամենայն մատենագրութեանց Արտաքնոցն՝ որ՝ ի դարս իւրաքանչիւր՝ սա իբրև վեհագոյն հրահանգիչ պսակեցաւ՝ ի դատաստանէ իմաստնոցն:

Այլ զո՛ր օրինակ արեգակնդ, քան յօտարին գովութենէ, յիւրոյ անտի ճառագայթիցն և՝ ի կենագործ զօրութենէն հաւաստիս իւր՝ ի ներքս բերէ, սա՛պէս և արձանագրութիւն մատենիս. թէպէտ և բիծք ևս՝ որպէս՝ ի մարմնի լուսաւորիդ՝ զսովաւշողայցեն, ՝ի մեծազօր նշուլիցն խափանեսցին: Ա՛ռ այս դարձեալ՝ եթէ

և յօտարաց խնդրեսցես զհաւատիս սորա, ամբաւք են. և ողջ մատենի պէտք են՝ ի լնուլ զթիւ գովութեանց զառնն, և զմատենաւորսն հանդիսից նորա:

Շատ էջէ իմաստասիրի առն՝ հանդուգնատիպ թէոդորի՝ ի միջոյ ամբաւից մատենից՝ իբրև՝ ի խանձողաց հրոյ՝ փրկել միայն զՊլուտարքոս: Քանզի այս թէոդորոս գազա՝ այր հոյակապ դպրութեամբք՝ կ՚ըլլի հարցեալ, "Զինչ այն մատեանքն էցեն, զոր նա ողջ մաղապուր ձողոպրեցէ՝ ի միջոյ բիւրաւորաց մատենից, յորժամ նոքա՝ ի հուր դատել առհասարակ հանդերձեալ էցեն", ետ պատասխանի. պլուտարքոս: Ա՛յնչափ ուրեմն վեհադոյն բնաւէցն զսա դատեցաւ այրն:

Եւ արդեօք առ մեօք դարձեալ հաւաստիսղնոյն ասեն բազմադէմ թարգմանութիւնք սորա՝ ի լեզուս լեզուս՝ զմիմեամբք ելեալ. և կուռ անդուլ ցաւուրս մեր արձանագրութիւնք՝ ի տիպ՝ մատենիս այսորիկ Եւրոպա. մինչև հուսկ ապա յետ բազմահոլով դարուց՝ ետես զսա և Հայոց աշխարհորում և՝ ի վայնջուց իսկ էին ցանկացեալ բանասէրք Աղգիս:

Արդ՝ ի դուշնաքեայ աշխատասիրութենանս ի մատեանս յայս, օրինակ Հելլեն բնագրին Պլուտարքեայ ի թարգմանութեան մերում, էր հռչակաւորն այն ի լոյս ընծայեալ ի Փարիզ միաձերի տպագրութեամբ յամին 1624. երկլեզուեան յն. և լտ, թարգմանութեամբ Կրուսերեայ և Քսիւլանդրեայ: Ա յլ ոչինչ դանդաղեալ վերջացաք և այլոց ևս թարգմանչացն պատկառ կալ. և առաւել ի նոսա՝ առն քաջի յունադիտի՝ Հերոնիմոսի Ռոսպէի վերոնացւոյ. այն՝ որ ի վերջնում ըստ ճշդիւտ կանոնաց թարգմանութեան՝ ի լոյս ընծայեաց զՊլուտարքն ի յունական լեզուէն իտալական լեզուաւ, պահեալ անվթար զհարազատութիւն բնագրին՝ որպէս անցի ընդ դիրս նորա, պահեալ անվթար և զոճ ընտիր իտալական բարբառոյն:

Յաւելաք և ծանօթութիւնս ուրեք, բայց ի կարևորս միայն. որ յայլոց ոմանց, և որ ի մէնջ առանձինն:

Իսկ կարգ և դասաւորութիւն ձանապրութեանց վարուցս է ըստ կարգին Քսիւլանդրեան տպագրութեանն, որ ընկալեալ է առհասարակ: Ապա թէ ոչ ըստ նորուն իսկ

Պլուտարքեայ վարք Լուկուրգոսի և Նումայի երէց է ժամանակաւ քան զԹեմիստոսի և զՀռոմուլոսի։

Բայց թէ ուրեք՝ ի մատենագրու-թեանս, մանաւանդ՝ ի Լուկուղղոսն և՝ ի Պոմպէոսն, պատմութիւնս զըտ-ցես զմերազնեայց, է՛ զի ոչինչ համա-ձայնս մերոց պատմագրաց, մի՛ արագ խռովեսցիս կամ դատեսցես։ Թէ են այդոքիկ՝ մանրամասնութք պատմու-թեան անցիցն՝ զանց՝ ի մերոցն ա-րարեալ (որպէս ստէպ սովորութիւն է մերոցն), առ և ընկալ զհաւա-նականն։ Թէ են այդոքիկ՝ ընդդի-մակք և՝ ի մանրամասնութենն մերոցն, լեր յայնժամ անաչառ դատող և ընտրօղ պատմագրացն. և ապա ըն-կալ կամ մերժեա։ Իսկ զո՞ր ար-դեօք՝ ի մերոց աստի զտցես երբէք զուգակշիռ՝ այնպէս բազմագէտ, այն-պէս բազմահմուտ, ուստի և բազմա-վէպ, որ զամենայն քար՝ ըստ ասացե-լուածն՝ շարժէ և յուզէ յարձանագրել իւրում՝, իբրու զՊլուտարք. բայց թէ արդեօք զաննմանն զայն և զհա-րուստն հմտութեամբ և զբազմավէպն մեր ասիցես զԽորենեան պատմագիրն, պակաւ՝ ի գլուխ պատմութեանց Հայ-ոց. որ որչափ պանծացոյց զազգն՝

նախատիպ և յոյժ վաղնջուց պատմութեամբն, այնչափ և յոգւոց մերոց հանել տայ՝ խուճապ և հակիրճ դէպուին գոլով ՚ի պատմութեան: Ո՞տայր եթէ ընդ բազմավիպութեան՝ և մանրավէպ հանդիպեալ էր նորա. գո՛նեա զոր միանգամ ինքն առանձին՝ առանց ինչ նորոց հետազօտութեանց ՚ի մատենից Յունաց և Պարսից՝ ամբաւութեամբ յիւրում ծոցի ամբարեալ իսկ ունէր:

Իսկ ՚ի Հայ թարգմանութեանս Պլուտարքեայ՝ տքնեցայ ըստ կարի հայերէնասօս գործել զհելլենացին, պահեալ անդրժելի զհաւատարմութիւն և զհարազատութիւն. սակայն նկրտեալ՝ եթէ չխաբիմ՝ ո՛չ դրժել և ոճոյ հայրենի բարբառոյս՝ ըստ բիւրապատիկ հայեցուածոցն, զոր արդարացուսցեն՝ որք ընդ թարգմանութիւնս ընտրելագոյնս մերոց նախնեաց և այլոց ազգաց ուշով անցեալ իցեն. և որք ինքնին ՚ի թարգմանութիւնս թարթափեալ իցեն. ո՛չ սոսկ և նիւթապէս, այլ որք ընդ ձշդրտութեան իմաստից հիւսեացեն և զբանաշաւնութիւն յատկութեանց լեզուին ըստ բազմադէմ հանգամանացն ուխտմասանց բանի, և առաւել ևս՝ կար-

դի և դասաւորութեան բանի: Վերջինդ ընկալեալ է յամենայն վարժապետաց արուեստի թարգմանութեան: Իսկ առաջինդ՝ արդէն իսկ անբաժ 'ի վայելչութենէն, անբաժ է գլխովին և 'ի հարազատութենէ. թէպէտ և առ երեսս հարազատ թուեցի:

Զի թէպէտ և հայերէն լցեն բառքն և բայքն, սակայն Հայ մարդ (թող զի չքաղցրանայ), չիմանայ ևս, զի հայեցի չէ յատկութիւն լեզուին: Եւ որ ծիծաղելին է, իմանայ երբեմն և իմաստ մի, բայց գլխովին այլ և օտար 'ի մտաց Բնագրին:

Արձանագրութիւնք Պլուտարքեայ՝ որ յառաջոյ կան՝ կոչին յունական ձայնիւ ΠΑΡΑΛΛΗΛΑ. ըստ բանին՝ Ա՛ռ դէպառնա, այս է ընդ դէպառնա կշռեալք, որ լաւ ևս ըստ մեզ, Զոյգ գահլէ՛ք: Քանզի զվարս պատմէ Պլուտարքոս զաւագ արանցն զհնոց հրահանգիչ խորհրդածութեամբքն: Զի որ առնու 'ի Հելլենաց, և զիւս այլ հանդուգնատիպ 'ի Հռոմայեցւոց. և ընդ միմեանս կշռեալ ճշդիւ զամենայն իսկ զվարս նոցա, նստեալ հանճարով դատի և դատակնքէ: Եւ աքանչելի է մեզ Պլուտարքոս որպէս յանաչառութեան 'ի դատաստանի

իւրում ընդ այր հռոմայեցի և ընդ յոյն, (իսկ եթէ ուրեք յունանայ կամ յունասիրէ այրն ՚ի Զուգակշռութիւնս իւր, մի՛ զանց արասցուք և մեք անաչառել առ նա ՚ի ծանօթութիւնն.) նոյնպէս և ՚ի գիւտն և ՚ի գեղեցիկ ընտրութեան իւրում՝ յայր հելլենացի ընդ առն հռոմայեցւոյ. զիարդ նա հնարիմաց ուշիմութեամբ նմանատիպս ՚ի ներքս բերէ զամոլն իւր. և՛ զի և նոյնատիպս ամենևին։

Իսկ ամոլք Զուգակշիռ վարուցն նորա, որչափ ինչ հասին առ մեզ, են թուով քսան և մի։ Կան նորա և չորք ևս վարք մեկինք, այս է Աբդաշէս. Արտոս. Գալէս. Որոճ։ Բայց զերկուց վերջնոցս տեսցես ՚ի ծանօթութիւնս անդր։

Բայց արտաքոյ սոցա են և այլք զոր գրեաց նա, որպէս գիտեմք ՚ի նորայն իսկ մատենից և յայլոցն, և կորեան և չեն այժմ ՚ի միջի։ Եւ են այսոքիկ. Հերակլէս. Հեսիոդոս. Պինդարոս. Կրատէր և Դայիէոս. Լէոնիդաս. Արիսոտենէս. Սիմոն Աթենացոս. Մեսեղեղոս. Տիբերիոս. կղեդէոս. Ներոն. Կալիգուղաս. Բիսեկլէոս. Եպաինոնդաս և Սիմոն երէց. Աֆոսոփոս. վարք փառաւոր հռետորաց Եւտրոպ։ Բաց ՚ի կորու-

սելոց աստի չերևին այժմ ՚ի միջի և ինչ ինչ Զուգակշռութիւնք վաբուցն զոր ունիմք ՚ի ձեռին. որպէս տեսցես յընթացս մատենիս:

Իսկ ժամանակագրութիւն վաբուցս, և զցանկ մասնաւոր՝ զնոց հեղինակացն զոր յիշատակէ նա, և զցանկ ընդհանուր՝ զբոլորին, զայս ամենայն տեսցես ՚ի հատորն վերջին:

Բայց զոր ՚ի վերջ պահեցաք ասել աստանօր, թէպէտ և առաջին զօրութեամբ, այս է յաղագս բազմադէմ շայեկանութեանց մատենիս, հատուցուք այժմ ողադունիւք ըստ յառաջադոյն խոստմանն:

Քանզի բազմադիմի են արգասիք ամբարեալք ՚ի մատենիս: Առաջին, որ ըստ անձին առանձին գեղեցիկ քաղաքավարութիւն յաշխարհի՝ հանդերձ առաքինութեամբ. այս է անձնականն բարոյական: Երկրորդ անգամ՝ որ առ տնին գերդաստանին վարչութիւն՝ հանդերձ խոհականութեամբ. այն է բարոյականն տնտեսական: Երրորդ անգամ՝ զոր ծայր ասացին իմաստութեան, հանճարեղ առաջնորդութիւն ժողովրդոց հանդերձ զգօնութեամբ. այս է քաղաքականն բարոյական:

Եւ ապա՝ որ ըստ սոյնմէն օրէնադիտութիւն ճշդիւտ. և օրինադրացն՝ ընտրել զլաւն և մերժել զյոռին. և ի նոսին խելամտութիւն հանճարել և տքնութեամբ վարժքն. և բոլորապըտուղ հնազանդել օրինացն. և զօրէնսն առնուլ արբայացուցանել միանդամայն ի ժողովրդոց վերայ և յարքայից։

Ա՛ւ այսոսիկ՝ և զինուորականին հրահանգ քաջութեան. զօրավարութեան հանդէսն բազմադիմի՝ ողջախոհ մոլութեամբ. է՛ ուրեք դիմադրաւ նահատակութիւն. և է՛ ուրեք հնարիմաց փախուստ, և յաղթական դարան. և որ այլ ևս քաջութիւնք խորհրդոց։ Եւ որ մեծ ևս՝ զօրականին հլութիւն մահու չափ. է՛ զի ճակատամարտ, և է՛ զի ասպատակին կապել. և մրցանակ առաքինեացն, և պատուհաս վատացն։

Դարձեալ և ի վարժս դուռնակ դուռնակ։ Բազմավէպ հմտութիւն և՛ մատենից և՛ մատենադրաց։ Եւ՝ զիաւրդ ի հետևակ և ի սին պատմութենէն խուսել, և զիաւրդ խմաստնախոհութեամբ և լսելեացն հրահանդիւ պատմագրել պարտ էցէ. և զիաւրդ պատմագրին միանդամայն և բազ-

մահմուտ և քաղաքադէտ և ձարտասան և իմաստասէր և առաքինի և խոհական լինել պարտ էցէ:

Առ այս՝ և ձարտարախօսն բեռնբասացութիւն և յանկուցիչն, դեղեցիկ խառնութեամբ քերթողական ախորժակացն:

Դարձեալ և պատասխանիք հապձեպ և իմաստուն: Թողում ասել՝ և ղբնաղննութիւն սորա ըստ բաւականի ժամանակին այնորիկ. և զհետախոյզ քննութիւն զպղտից և զնոցուն կարդաց և զբարուց և զսովորութեանց. և զդիրս աշխարհաց, և զնիստս գաւառաց: Եւ որ բիւրապատիկ ևս ըստ սոցանէն հանդէս մարդկութեանս. որովք բնաւորեցաւ սա ՚ի վիճակին իւրում վայելուչ կալ:

Եւ քաջաբերութիւն զայս ամենայն՝ զոր թուեցի, արդիւնացուսցեն մերազնեայք. սակայն և՛չ՝ որ յաւիտենիւս այսուիկ միայն չափեսցին:

Քանզի են իսկ ամբարեալք ՚ի մատենիս՝ և՛ ՚ի բարոյական կարգի բազմադէմ խրատք ՚ի կանոնս վարուց. որով և ըստ Հոգւոյն իմաստութեանս ոյժ տացուք մեք և՛ի դրոց Աստուածոյն, որպէս և յառաջակայ մատենէս:

Բայց և ՚ի նոցայն զինուց՝ նախ զնո-
սին գոռումբեան բանիւք վանեալ,
զի և զմեծարոյ կարիսն զձեռացուք
զհեթանոսացն իմաստասիրաց. իբրև
որ ոչ յամենայն ժամ և յամենայն
կանոնս վարուց յստակք, այլ բիժ և
աղտ և մխաբս խառնեցին յիմաս-
տութեանն. և իբրև որ առաւել ու-
սուցին նոքա, քան եթէ դործեցին:
Երկրորդ անդամ՝ և զառաքինեացն
նոցա լսելով աստանօր զքաջութիւն
և զպատկն, և դյետս կացելոցն ըղ-
վատթարութիւն և զպատուհասն որ
Աստուծոյ, որ ՚ի մարդկանէ, սաս-
տիկ ևս վառ և բորբոք ՚ի մեզ յոր-
դեսցեն իղձք նախանձաւորք առաքի-
նութեան և վարուցն քաջութեան.
իբրև որ անդստին յառաջին կրթա-
նացն կատարելագունին հրաւիրե-
ցաք լինել նմանօք:

Նա զի և յորժամ Պլուտարքոս նրս-
տեալ կենդանագիր գրչաւն ձգնի
զնանրութիւն փառացն մեզ ՚ի դէմս
բերել՝ զիւրոյ քաջազանցն, նախ մին-
չև յամբս բարձրաթռիչ առնելով, և
անդուստ ոճով մինչև ՚ի շունչ վեր-
ջին վախճանի նոցա և մինչև յաճիւն
ցնդելն ոսկերաց նոցա՝ արտասուելի
պատմութեամբ զծաղկընկէց կեանն

նկարէ։ Եւ յորժամ նա զմոլեացն ի նոսա եւ զմարմնամոլից եւ զընչաքաղցից եւ զփառամոլից ճշգրիտ պատմութեամբ խորագիտադոյնս ի վեր բերցէ զանգոնելի ղկիրան դիմակ դիմակ, ապա եւ զանհնարին աղէտսն ըղվախճանին նոցա, այնուհետեւ այս Մատեան՝ առհասարակ եւ իշխանաց եւ իշխեցելոց եւ բնաւ իսկ ամենայն չափու հասակի, եթէ կամին եւ ուշով քննեն, իցէ նոցա իրրեւ դաստիարակութիւն բարեաց. ճանաչել զառաքինութիւն եւ սիրել եւ պահել. եւ ատել զմոլութիւն, եւ ի պատուհասէն խուսել։

Այս ամենայն հանդէս է արձանագրութեանցն Պլուտարքեայ. եւ այս ահա մերաղնեայց դուքնաքեայ նուէր ի փոքրիմաց տեսութենէս։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ՋՈՒԳԱԿՑՈՒԹՔ

ԹԷՍԷՈՍԻ

ԵՒ

ՀՌՈՄՈՒԼՈՍԻ

1

ԹԷՍԷՈՍ

ՈՐՔ միանգամ յարձանագրութիւնս աշխարհաց դէպքերն պատմաբանք, ոմ[ն] Սոսիէ Սէնէկիոնէն 1, զայն ինչ՝ որ անծա[ն] նօթ առ՝ ի նոցանէն կացեալ էր, ՝ի ծայրս ուրեք պնակացն ամփոփեալք՝ ուրոյն նշա[ն]նակեն, եթէ՝ Որ ասոն անդր սահմանք՝ քնաւ իսկ կամ աւազախնդիք են անջրդիք, և դաշտանուտք, կամ մերատք խաւարտղեք, կամ Սկիւթեան սառամանիք, կամ Թէ ծով ձուլեալ: Սակս և ինձ որ ՝ի մատե[ն]նագրութեան այսց ղուգակշիռ վարուցս՝ բուռն հարեալ եմ զժամանակէ հատանա[ն]կան բանիցն և զարժանապատում անցից, դէղեցիկս արդեօք յաղագս ծերունեացն արժան էր ինձ ասել. իսկ ապա որ ինչ միանգամ արտաքոյ այնոցիկ՝ հրաշալիս[ք] ոմանք և քերթողականք, Թո՛ղ քերթողքն Ճարակեսցեն և առասպելարկուքն, յորս չիք և ո՛չ ի ինչ հաւատ և ո՛չ սուտգուշիւն երբեք:

Ա՛յլ քանզի յաղագս Լիկուրգոսի օ. րէնսդրի, և Նումայի արքայի բան ձառեալ պատմեցաք, ո՛չ ինչ տարագէպ լեր՛ի Հռոմուլոս անդր՛ի վեր ելանել. որպէս զի և մերձաւորք ժամանակացն նորա եղեալ պատմութեանցն:

Ա՛յլ իբրև մտախորհ յանձն իմ լինէի, եթէ արդեօք՝ ըստ Եպիւղոսի առասացութեան,

Ա՛յս Դիւցազնին ո՞՛ր քաջաց,
Լեցի քայլերն զուգընթաց.
Զո՞ ընդ նմա չափեմ՛ ի լար,
Եւ զո՞ դընեմ ես՛ ի նրժար.

քանզի իսկ Թուեցաւ ինձ՝ զի որ զդեղեցկին զայն Աթէնս և զականաւորն՝ բազմաժողով կարգեաց եդ այրն, զնա ինքն ես՛ ի կշիռս համեմատութեան առեալ ձգեցից ընդ առն՝ որ նախահայր անուանելին և մեծափառն եկաց Հռովմայ:

Արդ՝ լցեալ եթէ յառաջաբանեցաց անտի սրբեալ, եղիցի մեզ հեշտընկալ բանս և առցէ զդէմս պատմութեան. իսկ ուր ուրեք ընդվզեալ՝ ապստամբ յարժանահաւատն գոցի բանից և անբաժ՛ի հաւանականէն, անդանօր առա մեզ քաջախոհ ունկնդրաց սէրք լցեն, որք հեզաբար յանձին կալցեն զննոցն զսոյցս:

Եւ արդ՝ քանզի իսկ Թեսէոս ըստ բազմադէմ նմանութեանցն հանդուներաւիպ գտանիցի Հռոմուլոսի. քանզի երկոքին միանգամայն յանօրէն և՛ ի գաղտաստեաս

զուգութենէն յառաջ եկեալք, իբրև աստուածոց ձեռ զհամբաւի հարան։

Դարձեալ առ այս՝

Մարտիկք երկոքին, և զայդ քաջ գիտեմք մեք ամենեքին 2։

Մի ինանգամայն ընդ կորուսութեան մասին հանձարեալ ևս գոան երկոքին սոքա։ Իսկ յերկուց անտի քաղաքացն հոյակապից, մին կանգնեաց զԷռովմ. և միւսն՝ բազմաժողով բնակեցոյց զԱթէնս։ Երկոքին դարձեալ առևանկեցին կանայս։ Ար այս՝ և ոչ մի ոք ՚ի նոցանէն անմասն գոաւ յարկածից ընտանեացն և ՚ի հեռից մերձաւորացն։ Հանդերձ այսու՝ և ՚ի վախճանի կենաց իւրեանց երկոքին միանգամայն՝ որպէս ասեն՝ ընդ հարան ՚ի քաղաքակիցս իւրեանց. եթէ երբեք լինէ մի շահ առ ձշմարտութիւն անդր բերցի մեզ ՚ի բանից անտի, որ ոչն լցեն արդեօք քերթողականք ոմանք։

ԹԷՍԷՈՍ ըստ հայրենի զարմին էր յԵրեքթէոսէ և ՚ի նախնի բնակաց աշխարհին. իսկ մայրենեօք ՚ի Պեղոպեայ։ Քանզի Պելոպս քան զանձուցն յոլովութեամբ՝ առաւել ևս զաւակացն, մեծապէս յօրացաւ ՚ի վեր քան զամենայն Թագաւորս որ ՚ի Պելոպոննիսոս. գաւերս բազումս առեալ հարանացոյց հոյակապ որերոյն, և բազում որդիս առեալ սիւռեաց իշխանս. քաղաքաց քաղաքաց։ Մի ՚ի նոցանէ էր և Պիտթէոս հաւն Թէսեայ. այն՝ որ զՏրիզինացւոց քա-

զաքն բնակեցոյց ոչ ինչ մեծ: Եւ էր Պիտ-
Թէոս ՚ի համբաւի իւրում զամենեքումբք՝
որ զայնու ժամանակաւքն գերազանցեալ,
բանաւոր այր և լիահանճար: Եւ արդեօք
հանճարոյն նորա սիպ և զօրութիւն այն-
պիսի ինչ էր, ըստ որում և Հեսիոդոս ինք-
նին գլխովին ՚ի վար արկեալ յայնպիսեաց
անտի՝ զհամբաւի հարեալ է, մանաւանդ
՚ի պատճառս հանճարեղ առածիցն՝ որ ՚ի
գիրս Վաստակոց նորա. յորոց զմի և զայս
առեն լինել ՊիտԹէոսի, եԹէ „Ան բա-
րեկամի, չա՛տ լոյծ արդեօք վարձն խոստա-
ցեալ:“ Զայս և Արիստոտէլ ինքնին վե-
կայէ իմաստասէրն. իսկ Եւրիպիդէս սան
կոչելով զԻպպոլիտոս ողջախոհին Պիտ-
Թէոսի, քանզ իսկ պանծացուցանէ մեզ
զՊիտԹէոսին զիարս:

Ա՛յլ յորժամ Եգէոս ինդրեր ունել
զաւակս, ասեն՝ եԹէ ՊիւԹիաս զդեր-
համբաւեալն զայն պատգամ ետ պատաս-
խանի, որով և պատուիրեր նմա մի երբեք
զուգկըննդ կնոջ՝ մինչեւ՛ հասեալ էցէ ՅԱ-
ԹԷՆս: Ա՛յլ քանզի Թուէր նմին՝ եԹէ ոչ
յայտնաբարբառ ինչ իսօսեցաւ Հարցումն,
ուստի և Եգէոս դէմ եդեալ ՚ի Տրիզենէ
հարցանէր ՚ի ՊիտԹէոսէ զպատգամ դիցն,
որ ունէր օրինակ զայս.

Մի արտաքոյ զոտն՝ ՚ի տիկէն արձակեր մի,
Ո՞վ բարձեր ժողովրդոց իշխան արի,
Մինչեւ՛ յայտնեալ ԱԹենացւոյ հրա-
պարակի:

Եւ ապա չէ լինէ յայտ, եթէ զինչ արդեօք խորհելով Պիտէթոս համոզեաց զԵգէոս՝ կամ թէ խաբեաց նա, զի մերձաւորեսցի նա ընդ Եթրայ: Իսկ իբրև եմուտ առ նա Եգէոս, և ծանեաւ՝ զի ընդ դստերն Պիտէթոսի մերձաւորեցաւ, և կասկածեցաւ նա՝ եթէ յղի է, առեալ զսուր իւր և զկօշիկան՝ եթող անդր, գաղեալ զայնոսիկ 'ի նեղքոյ վկայի մեծի, որ 'ի փապար ծոցոյն բաւական էր առնուլ ամիսոփել զաւանդն: Ապա Եթրայի միայն 'ի վեր հանեալ զբանն, պատուիրեաց նմա՝ զի թէ երբէք զաւակ լինիցի 'ի նմանէն, և յարբունս հասեալ որդւոյն՝ բաւական լցէ զվէմն 'ի վեր բառնալ և լինքն զաւանդան առնուլ, առեալ զորդին առաքեսցէ առ ինքն հանդերձ աւանդիւքն՝ ոչ ուսիք 'ի վեր հանելով զբանն, այլ որչափ ինչ հնար լցէ՝ բնաւ խակ գազա յամենեցունն. (քանզի և կարի յոյժ երկընչէր Եգէոս 'ի Պաղպասեանցն, որք դարանակալք էին նմա, և անգոնէին ևս զնա 'ի պատճառս անզաւակութեանն. և էին թուով չիսուն այս որդիքն Պաղպասայ). զայս պատուիրեաց Եգէոս, և էլ գնաց:

Իսկ իբրև Եթրա ծնաւ որդի, էն որք ասեն՝ եթէ 'ի պատճառս նշանակացն ամիսոփելոց՝ վաղվաղակի խակ անուն եդաւ նմա Թէսէոս. խակ կէսք դարձեալ՝ եթէ յորժամ չէա այնորիկ յորդի իւր ընկալաւ զնա Եգէոս ԱՆԹԵՆ 3: Իսկ յորժամ անանէր նա առ Պիտէթոսի, վերակացու իւր և դաստիարակ ուներ Կոննիդաս անուն զոմն.

որում մինչև ցայսօր ժամանակի՝ միով աւուրբ յառաջ քան զԹեսեան ծննդեան խոյ մի յազէն Աթենացիք՝ ի յիշատակ որա և ի պատիւ՝ առաւելագոյն ևս իրաւամբք քան զԱիղանիոսին շուք և զՊարրասիոսին 4. յորոց մին նկարիչն էր պատկերացն Թեսեոսի, և միւսն՝ քանդակիչ:

Եւ քանզի սովորութիւն էր առ ժամանակօքն այնոքիւք, զի որք միանգամ ըստ տխս մանկութեան էլեալ էին, գնային ի Դելփիս՝ անդ ձօնել դից զնորիս հերաց իւրեանց, չոքաւ ի Դելփիս և Թեսեոս. և տեղին՝ որպէս ասեն՝ առ ի նմանէն անուանեալ կոչի ցայսօր Թէսէա. և փոքրեաց անդանօր զվարսս միայն զՃակատուն, ըստ որում ասէ Հոմերոս յաղագս Ապանտիցն. նորին աղագաւ և օրինակ զայս փոքրեալ՝ անուանեալ կոչեցաւ Թէսէան: Իսկ Ապանտք նախ զառաջինն օրինակ զայս փոքրեցին զվարսս. ոչ եթէ յԱրաբացւոց անտի ուսեալք՝ որպէս կարծեն ոմանք, և ոչ դարձեալ Միւսեանցն նախանձաւորք եղեալ, այլ քանզի պատերազմականք ոմանք էին և ընթերամարտք, և քան զամենեսեան առաւել քաջակերթք ի բռնամարտիկ մըցանս ընդ Թշնամիս. ըստ որում և Ազքիղոքոս վկայէ ի տողս յայսոսիկ.

Ո՛չ հընչեացեն լարից ձայնմունք
ի հաստաձիգ աղեղանց,
Եւ ոչ տարափ տեղ տեղացէ
Քարանց շրջիւն պարսատկաց:

Ա՛յլ դէրաւուօար ՚ի սուաերաց
Նախձիրք ամբաւք յորդեացին,
Ա՛ն ինչ մարտին գոռայ զչքշուկ
Արեան ՚ի դաշտ մոլեգին:
Մարտ յայսպիսի ներհունք արդեօք
Են ՚ի բազուկ քաջամուր,
Ա՛ն հոյակապ իշխանք Եփեայ
՚ի սուր վառեալք սայրասուր:

Ապա զի մի Թերևս ՚ի հանդիպոյ տեղի տացեն Թշնամեացն ըմբռնելոյ զվարսիցն, և վասն այնորիկ փոքրկին: Զսոյն և Ալէքսանդր մակեդոնացի զմտաւ ածեալ, որ ասէս ասեն, պատուէր եաւ զօրագլխացն՝ տալ սափրել զմօրուս Մակեդոնացւոցն, իբրու կռուան դիւրըմբռնելի ՚ի մարտս պատերազմաց:

Ա՛յլ սակայն Եթրա միշտ Թագուցեալ պահէր զՃշգրիտ ծննդեն Թէսէոսի. և ՊիտԹէոս համբաւ ՚ի դուրս ոտեալ էր, իբրու այն Եթէ՝ ՚ի Պոսիդոնէ ծնեալ էցէ Թէսէոս: Քանզի Պոսիդոնի մեծապէս պաշտօն մատուցանէին Տրիզենացիք. և այս դիք են նոցա քաղաքապահ, որում և զպտուղսն երախայրիս մատուցանեն, և զԵռաժանին ունին կնիք ՚ի դրամս իւրեանց:

Իակ իբրև յարբունս եհաս Թէսէոս, և միանգամայն ընդ կորովութեան մարմնոյն երևեցոյց յանձին և զարիւրութիւն և զնոհալականութիւն, մոռաք և հանճարով պատրաստուն, ապա առեալ զնա Եթրայ՝ ած էբեր ՚ի վեմ անդր. և Ճշգրտիւ ՚ի վեր հանեալ

նման զծնունդ նորա, հրամայեաց նմա ի բաց առնուլ զհայրենասանդ նշանակն, և նահաբել յԱԹԷնս: Իսկ նա ի նեղլոյ մոեալ վխմին, հեշտեաւ ի բաց թաւալեցոյց. այլ նաւել ընդ ծով չէաւ յանձն, թէպէտ և անքոյթ էր ուղին, և զնոյն գարձեալ ժամէին միանգամայն հաւն և մայրն: Քանզի ժամանակն այն մարդիկ ի վեր երևեցոյց՝ ի նախձիրս ձեռաց և յարագութեան ոսից և ի կորովութեան մարմնոյ՝ արդարև գերաբուն ոմանս և անհնաւաձեղս. ոչք զընդաբոյս զօրութիւնն ոչ եթէ ի վայելուչս ինչ կամ ի պիտանիս վարէին, այլ ճոխաբար չարեաքն խնդացեալք էին, վայելեալք կորովութեամբն յանագորոյն կիրս և ի գառնութեան և ի բռնակալել և ի հարստահարել և միանգամայն յասպականութիւն դարձուցանել՝ որ ինչ միանգամ ընդ առաջ լինէր նոցա. իսկ զամենի պատկառանաց և զարդարութիւն և զներաւտնս և զմարդասիրութիւն՝ ոչինչ ճահաւորագոյնս համարէին նոքա զայսպիսիկ քաջակորով մարդկանն. իբրու այն թէ՝ ի գովութեան մասին նոցեն այդոքիկ առնամկին, սակս անձեռնհաս գոլոյ նոցա ի գործել զանօրէնութիւն, և յաղագս երկիւղին ի կրել զանկրաւորութիւն: Ոոցա հեռակէս հետամուտ եղեալ, եհար և սատակեաց զնէաս ի նոցանէ. իսկ նէաք գարձեալ՝

թաքթաքուր ընդեանք յերևեր նորա, սար-
սեին և խոյս տային. ուստի և ոչ փոյթ ինչ
էր զնոցանէ՝ իբրև զվատաց արանց: Իսկ յոր-
ժամ Հերակլեայ ձախողակի վարեցան
իրքն, և սպանեալ զԻփիտոս, եկ չոքաւ 'ի
Լիւդիա, և անդանօր ժամանակս ձիգս 'ի
ծառայութեան կայր առ Ոմփալեայ, ըզ-
սոյն պատիժ պատուհասի յաղագս սպա-
նութեանն կամակար առեալ յանձն իւր 5,
յայնժամ սպա և իրք Լիւդացւոցն 'ի բա-
զում խաղաղութեան վայելէին և յանդոր-
րու: Բայց 'ի սահմանս Եղեադայ միւսան-
գամ ընձիւղեալք 'ի վեր երևէին չարիք.
քանզի և չէր իսկ ոք՝ որ նկուն առնէր և
սանձակոծէր: Վասն այսորիկ և վտանգ մա-
հաշունչ կայր 'ի վերայ՝ որոց միանգամ հե-
տևակս ուղեգնաց լինէին ՅԱԹԵՆս 'ի Պեղո-
պոնեսոյ. անդ և Պիսիթէոս զայր այր յա-
ւազակաց անտի և 'ի սրիկայից առաջի դնէր
մերկանայր Թեսեայ՝ եթէ ոչք ոմանք կացեն
նոքա, և զինչ ինչ եղեռն ընդ անցաւոր
օտարան գործիցեն. և խորհուրդ տայր խե-
լամեծոցանէր զԹէսէոս՝ յուղի անկանել
ընդ ծով:

Ա յլ սակայն զնա անդուստ 'ի վերուստ
'ի ծածուկ վառէր բորբոքեր փառք և չուք
առաքինութեանն Հերակլեայ, և մեծապէս
յոյժ 'ի յարգի ունէր նա զայրն. և մտա-
դիւրագոյնս ևս ունկն մատուցանէր նոցա՝
որ միանգամ պատմէին զկենացս զառնն. և
մանաւանդ՝ որոց և առաջեալ իսկ էր զնա,
և ականատեսք և ականջալուրք լեալ էին

գործոց և բանից նորա: Եւ յայնժամ ասպա բնաւ իսկ առհասարակ յայտնի եղև, եթէ զայն ինչ կրէր Թէսէոս, զոր միանգամ բաւ զուամ ժամանակաւք յետոյ կրեաց Թէմիստոկղէս. այն՝ որ ասէր, եթէ՝ Ձփայ ինչ Ռոյլ ննչէւ յաղթանաւին Մինոփէնայ. զսոյն օրինակ ասպա և սա հիացեալ ինն էր ընդ առաքինութենէն Հերակղեայ. զոյդ յերբազանայր յանկողնի զգործս նորա, և զգեբեկ արձարձէր բորբոքեր՝ ի նախանձաւոր կրնցն, որ յանգ մոախոհն իսկ էր հանգուն նատիկ լինել գործոց նորա. որպէս զի և ազգակիցք ևս հանդիպելոք էին միմեանց երկոքեին սոքա, զի ծնունդք էին դստերայց երկուց եղբարց: Քանզի Եթրա դուստր էր Պիտեէոսի. և Աղկմենա՝ դուստր Լիսիդիկեայ: Իսկ Լիսիդիկէս և Պիտեէոս եղբարք՝ էին ծնունդք՝ ի Հիպպոդամեայ և՝ ի Պելոպոսէ: Ուսոյն և դժպատեհ լինն համարէր Թէսէոս և դժոխըմբեր կկրա, զի Հերակղէս ինքնին ամենայն ուրեք չարաց մարդկան հետամուտ եղեալ՝ սրբեաց մաքրեաց միանգամայն զյատաք և զծով, և ինքն՝ որում անդէն առ ոտս իւր հատեալ կան նահատակութենք մարտից՝ տեղի տացէ առ՝ ի նոցանէն, և զկարծեալ և զանուանեալ հայրն անպատիւ արասցէ՝ վախատեայ գնալով ընդ ծով. և սոյդ հօրն իւրում գնշանական առեալ տարցի զկօշկին և զսուր՝ անշաղախ յարեւնէ. և ոչ արագ նահատակութենէանց քաջութեամբ և արդեամբք՝ ի ներքս ընծայեցուցէ զգեղեցիկ հնիք զաղ-

նուաճանուէճեան: Ապա յայս օրինակ խոր-
հուրդս յուզեալ Թէսէոս՝ դիմեաց ընդ
ցամաք. եդ ՚ի մոկ անկրաւել և ոչ յոյք.
իսկ որք միանգամ հարստահարիցեն զնա՝
վըհՃ և ինքն խնդրեաց ՚ի նոցանէն:

Հասեալ ապա յԵպիտաւրոս՝ նախ զա-
ռաջինն ՚ի վեդ եկն ընդ Պերիփիդեայ, և
հարեալ սատակեաց զնա. այս Պերիփիդէս
իբրև զինու վարէր լախտիւն, յորմէ և կո-
չեցաւ ինքն՝ Կորիւնիէէս, այս է՝ Լախտաւոր.
և ընդ հարեալ ՚ի Թէսէոս՝ խափաներ զնա
յընթացից: Զլախտն նորա առեալ յինքն
Թէսէոս, խնդայր բերկրեր, և զէն իւր
արար զնա. և այնուհետև զլախտ զայն ՚ի
գործ վարէր հանապազ, իբրու Հերա-
կլէս՝ զԱռիւծեղէնն: Եւ ուներ զայն Հե-
րակլէս արկեալ զանձամբ, ցուցանել աշ-
խարհի՝ եթէ քանի՞ ահագին գազանին
յաղթեաց. իսկ և սա զլախտն պանծացու-
ցաներ վանեալ յինքենէն, սակայն անվա-
նելի ՚ի ձեռս նորա:

Իսկ յիսնեմոս զՍինննիա Պիտիւկամպ-
սէս՝ 6 նուիրն օրինակաւ սատակեաց, որով
նա ինքն ՚ի մահ վարեալ էր զբազումս.
ոչ եթէ ՚ի նոյն վարժեալ ինչ էր Թէսէոս
կամ թէ բնաւորեալ ինչ. այլ զի ցուցցէ
յանդիման՝ եթէ առաքինութիւնն՝ ամե-
նայն արհեստից և վարժից գերր ՚ի վերոյ
կայ: Եւ էր Սինննիաս չքնաղագեղ դուստր
և աւազակապետ՝ անուն Պերիգունէ. սա
՚ի մեռանել հօրն՝ փախստեայ դիմեալ
գնայր. և Թէսէոս չուրջ յածեալ ՚ի խնդիր

էր նորա: Ձոքաւ Պերիգունէ և մացառա-
ղօղ եղև ՚ի Թաւուսս՝ լցեալ ցրդւովք ղ, և
ծննեբեկօք. և անդ մեծապէս անմեղու-
Թեամբ և մանկաբար ողջքէր հայցէր ՚ի նո-
ցանէ՝ իբրև ՚ի բանաւորաց ոմանց, և յոմիսո
ևս խոնարհէր նոցա հանդերձ երդմամբ,
զի եԹէ Թաքուցեալ ապրեցուսցեն զնա,
ոչինչ իւիք ապա և ինքն մեղիցէ ինչ նոցա,
և կամ այրեսցէ երբէք: Իսկ իբրև անդուստ
մեծագոչ կարդայր զնա Թէսէոս, և ուիստ
ևս դնէր և կնքէր՝ եԹէ գեղեցիկս իննամ
կալցի նմա և ոչ ինչ իւիք զրկեսցէ զնա, էլ
նա յայնժամ արտաքս. և ապա մերձաւո-
րուԹեամբ մտեալ առ Թէսէոս, ծննաւ
զՄեղանիպպոս: Իսկ ապա առեալ զնա
Թէսէոս՝ ետ և հարանացոյց ընդ Դէոնեայ
որդւոյ Եվրիտոսի Եքալացւոյ: Ա յլ՚ի Մե-
ղանիպպոսէ Թէսէոսեան ծննաւ Եովքսոս.
այն՝ որ նիզակակից Որնիտեայ եղև ՚ի չոր
դաղԹականին ՚ի Կարիա. և ՚ի սմանէ են
Եովքսոսեանք: Ա յս Եովքսոսեանք հայ-
րենասանդ ունին օրէնս, մի այրել զԹուխ
ծննեբեկին, և մի դարձեալ զցրդի. այլ պաշ-
տել և շուք ընծայել նոցա:

Իսկ էր Կրոմիւնեանն կինձ՝ զոր մակ-
անունեալ կոչէին փէա՝ ոչ դուզնաքեայ
ինչ գազան, այլ գոռ մարտիկ և գԺնդակ
՚ի պարտել զնա. զսա Թէսէոս՝ իբրև հա-
րևանցի նախձիրս ցուցեալ յուղևորու-
Թեան անդ իւրում, (զի մի Թերևս կար-
ծեսցի՝ եԹէ հարկաւորեալ գործիցէ նա
զսմենայնին), ՚ի վերայ յարձակեալ եհար

և սատակեաց: Մխանգամայն և համարէր նա այնպէս՝ եթէ առն քաջի պարտ և արժան է զդէմ ունել մարդոյ չարաց՝ ի վրէժխնդրութիւն անձին. իսկ գազանաց ամենեցուն ինքնին նահատակ ընդդէմ խաղալ, յաչս զկեանս դնել և՝ ի վեդ գալ ընդ նոսա: Այլ կէսք ասեն՝ եթէ փէռ կին էր կացեալ աւազակ, մարդախոշոշ, և պագշոտ, անգանօր բնակեալ՝ ի Կրոմմիւոն. և անուն կարդային նմա կինճ՝ ի պատճառս բարուցն և կենաց քաղաքավարութեանն. որ և ապա տապաստ անկաւ՝ ի Թէսէոսէ:

Իսկ զԱկերոն առ սահմանօքն Մեգարեայ սպան Թէսէոս՝ գահավէժ ընկեցեալ զնա ընդ պարեխս. սա ըստ հասարակաց համբաւոյն՝ յարձակեալ աւազակէր զանցաւորս. և ըստ որում այլք պատմեն, թերեւս նամանօք և ամբարտաւանութեամբ՝ ձգեալ կարկառէր զոտս իւր առաջի անցաւորաց, և հրամայէր լուանալ. իսկ ապա կիցս արձակէր նոցա և՝ ի ծով անդր ամայր զլուացողն: Այլ սակայն մատնագիրք Մեգարացւոց՝ զուգահեռ ընթացեալք ընդ համբաւոյն, և ընդ հնութեան ժամանակին՝ ըստ Սիմոնիդեայ՝ ի պայքար մտեալ ասեն՝ եթէ ոչ աւազակ ոք, և ոչ դարձեալ թշնամանագիր երբէք կացեալ էցէ Սկերոն. նա մանաւանդ՝ աւազակաց պատուհասադիր. և արանց բարեաց և արդարոց ընտանի և բարեկամ: Քանզի Էակոս՝ ասեն՝ քան զամենայն հելլենացիս համարեցաւ արքայդոյն, և Կիւքրէաս Սալամինացի աս-

տուածական ունէր պատիւ առ Աթենացիս. և զի՝ Պելեայ և Տելամոնեայ առաքինութիւնն անգամին իսկ քաջածանօթ է առհասարակ ամենեցուն: Արդ՝ Սկիրոնէն փեսայ լեալ էր Կիւքրէասայ, և աներ էական, և հաւ Պելեայ և Տելամոնի, որք ծնունդք էին Ենդեդեայ դստերն Սկիրոնի և Քարիկղեայ: Ապա ոչինչ հաւանական է՝ ասեն՝ եթէ ընդ առն եղեռնաւորի որք քաջք և առաքինիք համազգիք երբէք լեալ էին, և զբերահրաշն 'ի գոյից լուր. եանց և զպատուականագոյնն՝ առցեն և տացեն: Իսկ Թէսէոս՝ ասեն՝ ոչ եթէ յորժամ նախ առաջին ընթանայր յԱթէնս, այլ յետ ժամանակաց՝ միանգամայն և էառ զԵլեւսինէ 'ի ձեռաց Մետարացւոյ՝ խառնեցաւ գնացեալ ընդ Դիոկղեայ իշխանին, և սպան զՍկիրոնէն: Այլ յաղագս իրացս այսոցիկ այսպիսի ինչ են ընդդիմախօսութիւնք:

Իսկ յԵլեւսինէ զԿերկիւն Արկադացի 'ի գօտեկռուիւն եհար և սպան. և սակաւ մի յառաջ խաղացեալ՝ զԴամաստէս Պրոկրուստէս սպանանէր 'ի Հերմիոն, հարկ 'ի վերայ կապելով նմա՝ ձգտել պարզել և հատանել զանձն անկոչնոց իւրոց, ըստ որում գործէր նա առ օտարս անդր 8:

Եւ յայսոսիկ նահատակէր Թէսէոս, նմանատիպ եղեալ Հերակղեայ: Քանզի և Հերակղէս ինքնին՝ որով չափով գարանակալութիւն գտանէր 'ի հարստահարողացն, նովին գարձեալ վրէժ 'ի նոցանէն խնդրեալ՝

յազեաց զԲոսփորէս. եհար զԱնաէոս ՚ի գօտեկռուվ. պարտեաց զԿիւինոս ՚ի մենամարտի. և ընդ Տերմերոսի ոգորելով գվնասվն՝ դիտապատառ ընկէց զնա. յորմէ և անուն ընկալեալ ասեն Տերմերեան ախթին. քանզի՝ որպէս պատմեն՝ գվնասիլն ոգորելով Տերմերոս և ընդհարեալ՝ որոց միանգամ և պատահէր, սպանանէր: Զսոյն օրինակ և Թէսեոս շրջէր և պատուհասէր զչարս. որով միանգամ հարստահարէին նոքա զայլս՝ զնոյն դարձեալ կրէին ՚ի նմանէ, զնոյն օրինակ իրաւացի դատաստան լուծեալք զնուաճանց անիրաւութեանն:

Յակ ելբև յառաջ ևս խաղացեալ՝ մերձ եղև նա ՚ի Կեփիսոս, ազգ ոմանք ՚ի փիւդացեանց զարմէն ընդ առաջ եկին Թեսեայ, և առաջինն ոգբա ողջոյն խաղաղութեան ետուն նմա. և ՚ի խնդրել նորա՝ քաւութիւն և մաքրութիւն անձին, նոքա ըստ հայրենի աւանդից արբեցին զնա. և ընծայս առնուվրեալ հաշտարարս՝ ՚ի տուն իւրեանց հիւրընկալեցին. որ քան զայս յառաջ ուրեք յուղտոջ անդ ոչ ոք մարդասէր հիւրամեծարութեամբ երբեք ժողովեաց զնա:

Ա՛րդ՝ յաւուր ութերորդի՝ որպէս ասեն՝ ամսոյն Կրոնեայ 9, զոր այժմ՝ Եկատոմբեան կոչեն, եկն եհաս նա յԱթենս: Եւ մտեալ ՚ի քաղաք անդր՝ եգիտ նա զհասարակացն իրս՝ խռովութեամբ լի և երկապառակութեամբ. իսկ զԵգէոսին իրս և զտուն հայրենի՝ առաւել ևս ախտակրեալ: Քանզի Մեդիա փախուցեալ ՚ի կորնթոսէ՝

եկեալ բնակակից լեալ էր Եգեայ, խոստացեալ նմա՝ յանդաւակութեան ախտէն իւրական դեղովքն ազատել զնա: Մեդիա յառաջագոյն իսկ խրազգած լեալ էր վասն Թէսէոսի. իսկ Եգէոս առ ժամն գիտէր և ոչինչ. այլ զի հնացեալ աւուրբք էր՝ և՛ի միտս կապածոտս զանգիտէր առհասարակ յաղագս ապստամբութեան լինչ խորհրդոց, ած հաւանեցոյց զնա Մեդիա՝ զի իբրև զմի ոք յօտարաց անտի հիւրընկալեալ զԹէսէոս, դեղակուր բարձցէ զնա՛ի կենաց: Արդ՝ եկեալ Թէսէոս՛ի կոչումն, ոչ լաւ համարեցաւ լինքն առաջին յայտնել լինչ զանձնէն՝ եթէ ո՞ր իցէ. այլ սակայն և պատճառս լինն կամեցաւ տալ հօրն ծանօթութեան անձին. ուստի և յորժամ միս առաջի եգաւ նմա, ձգեաց մերկեաց զսուրն՝ իբրու այն թէ կորել լինչ անտի, և եցոյց հօրն զսուրն: Ընդ վաղվաղակի՛ի միտս իւր եկեալ Եգէոս, առ ընկէց՛ի վայր զբաժակ դեղոյն. և հարցփորձիւ ճշգրտեալ զորդին՝ համբաւեաց զնա. ապա՛ի մի վայր խմբեալ ղքաղաքացիսն՝ ծանօթս եառ զնմանէն. որք և մուտիւբութեամբ սրտի առին ժողովեցին զԹէսէոս՛ի պատճառս արութեան քաջութեան առն: Եւ ասեն՝ եթէ՛ի վայր անկանել բաժակին, Թափեցաւ թոյնն՛ի վայրն՝ ուր է այժմ Յանդասպասան՛ի Դեղվիլիոն. քանզի անդանօր էր բնակութիւն Եգէոսին. և զՀերմէս՝ որ կայ յարևելից կողմն մեհենին՝ կոչեն, Հերմէս առ դուրն Եգէայ:

Իսկ Պալլասեանք զառաջինն՝ յոյս՛ի մոլ

հատուատեալ իմն էին, եթէ ՚ի մեռանել Եգեայ անորդի՝ ինքեանք զարքայութիւն կալցեն զբուամբ. այլ իբրև նմա պայազատ հաւքաւեցաւ Թէսէոս, կարի սպա դժկամակք եղեալ՝ զի Թագ կապեաց Եդէոս որդեգրեալն ՚ի Պանդիոսէ, այն որ ազգակցութիւն և ոչ մի ունէր ընդ Երեքթեանցն. և զի՝ և Թէսէոս սպա ինքնին Թագ կապել հանդերձեալ է՝ եկամուտ այրն և օտար, ՚ի մարտ պատեհազմի գրգռեցան: Եւ բաժանեալ նոքա ընդ երկուս, կէսք՝ յայտնապէս ՚ի կողմանց անտի Սփեռեայ ՚ի միասին ընդ հօրն իւրեանց դիմեցին ՚ի վերայ քաղաքին. իսկ կէսք գարձեալ՝ ղօղեալք ՚ի Գարգետոս՝ անդ դարանամուտ նստէին, որպէս զի երկուասեք միանգամայն միադունդ ՚ի վերայ յարձակեսցին թշնամւոյն: Եւ էր ՚ի խմբի անդ նոցա այր ումն Քարոզ յԱգնուսեայ՝ անուն նորա Լ՚ովս. սա այս այր էկն և ՚ի վեր եհան Թէսէոսի զնորհուրդն Պալլասեանց: Իսկ Թէսէոս յերգակարծումն ժամու անկեալ ՚ի վերայ դարանամուխն, զամենեսեան առհասարակ կոտորեաց: Իսկ որք ընդ Պալլասայ էին՝ իրազեկ եղեալ գործոյն, ցան ուցիր վարատեցան: Վասն այսորիկ ասեն՝ եթէ զարմն Պալլասեան ամուսնութիւն չառնէ երբէք ընդ զարմին Ագնուսեան. և ոչ գարձեալ՝ քարոզն կարգայ առ նոսա զսովորեալն կցուրդ, եթէ՝ Ագոռէտէ Լ՚ովս, այս է՝ Լ՚ուարո՛ւ ծողվո՛րդ. քանզի առեալ է առ նոսա անուանդ այդ ՚ի պատճառս մատնութեան առն 10:

Սակայն Թեսէոս նախձիրս կամելով ՚ի դէմս բերել, միանդամայն և զԺողովուրդն յինքն առնուլ յանկուցանել, էր նահատակ ընդդէմ Մարաթոնեան ցլոյն, որ ոչ դուշնաքեայ լինչ վիշտս հասուցանէր քնակչացն Տետրապօլեայ. և ՚ի բուռն սրկեալ զցուլն, ած եբեր զնա կենդանի և հրապարակեաց, և ընդ քաղաքն առեալ ձգեաց, և ապա Դելփինեան Ապողոնի յաղեաց զնա:

Իսկ Հեկաղէն՝ և որ լինչ միանգամ վասն նորա առասպելաբանութիւն հիւրընկալութեան և ասպնջականութեանն առ Թեսէոս, Թուի Թէ ոչինչ գլխովին անբաժ ՚ի ճշմարտութենէն իցէ: Քանզի շրջակայ ժողովուրդք ՚ի մի խմբեալք՝ զՀեկաղեան նուէրն ձօնեն Հեկաղեանն Ազամազդայ, և զՀեկաղէն պատուեն՝ Հեկաղի զնա ազգաբար ձայնելով. քանզի և ինքն Հեկաղէ՝ մինչդեռ տակաւին պատանեակ էր Թեսէոս, հիւրընկալութեամբ ժողովեաց զնա, և ըստ օրինի ծերունեաց ողջունեաց զնա, և գգուեաց փայփայեաց ևս զնա այնպիսի աղուսական ձայնիւք: Իսկ ՚ի խաղալ անդ Թեսեայ ՚ի պատերազմ, քանզի ուխտ եդ Հեկաղէ՝ Ազամազդայ պատարագ ձօնել՝ եթէ ողջանդամ դարձցի Թեսէոս, և զի մեռաւ նա՝ մինչև դարձեալ էր նորա, վասն այնորիկ զայս փոխարէնս ընկալաւ նա զօտարասիրութեան իւրոյ ՚ի հրամանէն Թեսեայ՝ որպէս պատմաբանն Փիղոքորոս:

Իսկ ապա յետ սակաւուց եկին հասին ԱՆԹԷՆա հարկահանք ՚ի Կրետեայ՝ զայս

երրորդ անգամ ժողովել զհան։ Քանզի համբաւ ելին հռչակ հարեալէր այսպիսի, եթէ՝ Անդրոգէոս խաբանօք սպանեալ էր զՅԱտտիկէ. ուստի և Մինովս հարուածս անհնարինս մարտիւ պատերազմի հասուցանէր արանց Ատտիկոյ. այլ և զիք ինքնին յաղարտ վարէին զաշխարհն զայն, որպէս զի և անպտղութիւն զօրացաւ տիրեաց, և սիստ շատ ձարակեալ ծախեաց, և զեղ եալ ողողեցին գետք։ Ապա երբև պատուէր հրամանի Ապողոնեան դիցն ելանէր, զի զՄինոս ողբեալ հաշտեցուսցեն Աթենացիք, և զերկնային զցասումն կարձեսցեն, և՛ի չարեաց անտի հանդարտեսցին, հրեշտակութիւնս յայնժամ առաքեցին նմա և աղաչեցին և յուխտ դաշին մտին՝ զի ընդ ամս ինն միանգամ արձակեսցէն՛ի Կրետէ՛ի հարկի մասին՝ պատանեակս եօթն թուով, և կուսանս նոյնչափ։ Եւ զայս ապա միաբան աւանդէն բազումք՛ի պատմագրաց։ Այլ կարի ինն ողբերգակ առասպելին բան՛ի դէմս ածէ կիկրս, իբրու այն թէ՝ մանկունքն ածեալք՛ի Կրետէ՛ի Լամբիւրինթոսի անդ կեղեքեալ գիշատին՛ի Մինոտաւրոսէ. կամ թէ Թաւխառեալ մոլորեալ նոքա՛ի նմա՝ և զդուրս ելից էրբէք ոչ կարացեալ գտանել, անդանօր սովամահ սովալլուկ մեռանին։ Իսկ Մինոտաւրոսդ այդ՝ ըստ որում ասէ Եւրիպիդէս,

Ազգ ինն իսառնակերպարան
Եւ հրէշածին ծնանի տղայ,

Եւ ՚ի ցլոյ և ՚ի կանանցածնի
Կրկնակի բնութենէն խառնուած :

Ա՛յլ Փիղոքորոս ասէ՝ եթէ ընդ այս զօրացս ոչինչ ամենևին հաւանեալ էն կրեասացիք. այլ ասէն՝ եթէ Լամբսակինեցոյ արգելոց իմն էր, և ՚ի չարեաց մասին չուներ ինչ ամենևին՝ բայց զի վախճել չկարէին արգելեալքն ՚ի նմա : Եւ եթէ՝ Մինոս ՚ի շուք Անդրոգեայ՝ մրցանս ըմբշաց տայր մրցել. ապա ՚ի մրցանակ յաղթականին առեալ պարգևէր նմա զմանկուհիան՝ որ ցայն ժամ արգելեալ պահէին ՚ի Լամբսակինեցոյն անդ : Եւ եթէ՝ յառաջին անդ մրցանն յաղթական գոսաւ այր ոմն՝ որ ՚ի ժամանակին յայնմիկ բարձերկեայ էր ՚ի նախարարան Մինոսի և զօրավար՝ անուն Տաւրոս. սա այս այր ոչինչ հեզ և հանդարտ վիճակեալ բարոյից՝ յաւակնագոյնս և յայրատագոյնս վարէր ընդ մանկունս Աթենացւոց : Ա՛յլ Արիստոտէլ ինքնին գլխովին ՚ի Քաղաքականի 11 անդ Բոստոխացւոց՝ յայտնապէս ցուցանէ, եթէ ինքն ոչ ՚ի Մինոսէն սպանեալ էինչ համարի զմանկունն, այլ եթէ իբրև ստրուկք սպասարկուք անդէն ՚ի կրետէ ծերանային մանկունքն. և եթէ՝ էր երբեմն զի կրետացիք ՚ի կատարումն վաղեմի ուխտին՝ զերեխայրիս մարդկան առաքէին ՚ի Դեղփիս, և ընդ արանցն արձակելոց խառնեցան միանդամայն և ՚ի զարմէ սոցա, և չոքան անդր : Իսկ իբրև անդամնօր չէղեն նոքա բաւական կերակրել զանձինս, չու-

արտրեալ զառաջինն չոքան յԻոտալիա. և անդէն զտեղի կալան շուրջ զսահմանօքն Յասիւդեայ. անդուստ ապա դարձեալ խաղացին եկին ՚ի Թրակիա, և կոչեցան Պոտոսխացիք: Վասն այսորիկ և օրինորդք Պոտոսխացւոցն ՚ի նուիրագործութեան ինչ Լուբեանց երդս առեալ ասեն, Ուր֊ գնաս֊ ցո՛ւ յԱՒԼԷՈՒ:

Եւ այսպէս ապա դժնդակ է յոյժ ՚ի Թշնամութիւն դրդիլ ընդ քաղաքի, յորում Ճարտարապետութիւն զօրացեալ էցէ և քերթողականն. քանզի և զՄինոսէն համբաւ չար հնչեաց հանապազ, և նախասակած Թշնամանեցաւ յԱտտիկեան Թատրոնն: Եւ նմա՝ և ոչ Հեսիոդոս անգամ օգնեաց ինչ, Ուր֊ ՏԵՅՈՓՈՍ անուանեցուիցնա. այլ և ոչ դարձեալ Հոմերոս՝ որ Խօսային ՒԵՒՈՒՒՅ Աւտամեդեայ կոչեաց զՄինոս 12: Այլ Ճոխաբար առաւել զօրացան Թատրոնապետք, և մեծապէս անփառութեամբ ՚ի բեմն և ՚ի Թատերական խորհուրդն Նշանակեցին զՄինոս՝ իբրև այր վայրագ և բռնաւոր: Թէպէտ և Մինոս ինքնին՝ որպէս պատմեն՝ արքայ եկաց և օրէնսդիր, և դատաւոր Հադամանթեան, և աւանդապահ Լրաւանց սահմանեցոյն առ ՚ի նմանէ:

Ընդ իբրև եկին եհաս ժամանակ հարկին երրորդի, և պարտ էր յանդիման ՚ի վիճակընկէցութիւն անդր ընծայեցուցանել զՏարս՝ որոց միանգամ որդիք գոյին պատանեակք, դարձեալ միւսանգամ ան֊

դանօր քրթմնջիւն բազում լսել լինէր վասն Եդեայ ի քաղաքացւոց անտի, որք ի սըր- տունջ լուծեալ էին միանգամայն և ի սրա- մըտութիւն բարկութեան. իբրև զի՝ նա որ ամենայնին պատճառք եկաց, ինքն միայ- նակ անբաժ գլխովին կայ ի պատուհասին. նա՝ և պոռնկորդի և օսար զաւակին ի ձեռս տալով զարքայութիւնն, զնոցանէն փոյթ և ոչ մի ինչ առնէ՝ որ ի հարազատ զաւակացն ամայացեալ ինան, և անորդի լքեալք: Ա՛յս բանիք կարի ի խոր խոցեցին զԹէսէոս. ապա իրաւացի դատեալ բաժա- նակից լինել քաղաքացեաց իւրոց, և մի ան- մասն կալ վնասակի նոցա, դիմադրաւ զանձն ևս առեալ ի նեղըս ընծայեցոյց արտաքոյ վնասակին: Իսկ անդուստ մարդկանն առ- հասարակ յոյժ սքանչացաւ արիութիւն ոգւոյ նորա, և մեծապէս սիրեցին զգէղեցիկ զայն քաղաքավարութիւն նորա: Ա՛յլ ե- դէոս իբրև շատ ինչ ողբեաց զԹէսէոս, և շատ ևս թախանձեալ աչխատ արար, և ան- ողքելի եգիտ զնա և անդրդուելի, եհան ապա վնասակաւ զայրն ի մանկանց:

Իսկ Հերմիկոս ասէ, եթէ ոչ վնասակս տուեալ՝ արձակէր քաղաքն զպատանեական և զալջկունան, այլ թէ ինքնին Մինոս գայր հասանէր անդր և ինքնին ընտրէր. և զայն նուագ առաջին զԹէսէոսն ընտրեաց ըստ պայմանաց դաշինն: Եւ էին պայմանք դա- շինն այս. զի զնաւն Աթենայիք տացեն, և ի նմա վերընտրեալ պատանեակքն նաւեա- ցեն ընդ Մինոսի, և զկնա ինչ երկիք պա-

տերազմական ոչ բարձեն ընդ Լաբեանս. Եւ ի սատակել Մինոտաւրոսին, անդէն և պատուհասին վախճան եղեցի:

Արդ՝ յառաջն յոյս և ոչ մի էին ի վերայ կայր վրկութեան մանկտւոյն. ուստի և առագաստ սեաւ կապեալ էբերու յաներ. կուանալն աղէտս մահուն՝ այնպէս զնաւն արձակէին: Իսկ յայնժամ՝ էբրև քաջալեր հօրն մատուցանէր Թեսէոս, և մեծապանծ ևս խոստանայր նմա՝ նկուն ընդ բռամբ առնել զՄինոտաւրոսն, եւ հայրն նաւապետին և այլ առագաստ սպիտակ. պատուէր տուեալ նմա՝ զի ի դարձին եթէ ողջանդամ զերծեալ էցէ Թեսէոս՝ պարզեսցէ զսպիտակն. ապա թէ ոչ՝ զսեաւն առագաստեալ նաւեսցէ ի նշանակ աղէտից մահուն: Ա՛յլ Սիմոնիդէս ասանդէ, եթէ ոչ ի գոյն սպիտակ էր տուեալն յԱթենէոսէ, այլ առագաստ ծիրանի՝ գունեալ յարիշ ծաղկի մատաղատունկ սղոցոյ. և թէ՝ զայս նա վրկութեան նոցուն եդ նշանակ: Եւ էր զեկավար նաւուն Փերեկղոս Ամարսիացին, որպէս ասէ Սիմոնիդէս: Ա՛յլ Փիլոքորոս ասէ՝ եթէ Թեսէոս ինքնին ՚ի ՚ի Սկիրոսէ զնաւելէթէոս Սաղամինացի զեկավար նաւուն. իսկ վասն առաջակոլման նաւուն՝ զՓէակէս. քանզի յայնժամ չէին Աթենացիք քաջակիրթք ի ծով. և քանզի և մին ի պատանեկաց անտի էր Մենեսթեոս ծնունդ գասերն Սիկիւոսի: Եւ վկայեն այսոցիկ արձանագրութիւնք Նաւելթեայ և Փէակեայ կանգ-

նեալք ՚ի Թեսեոսէ ՚ի փաղեր առ մեհենին Սկիրոնեայ. և ասէ՝ եթէ և ոճնախմբութիւն լիւն կիւպէրնիսեան, այն է՝ ղեկավարեան, կառարեր յիշատակի սոցա:

Իսկ իբրև հանին զվիճական, առեալ յինքն թեսեոս զվիճակաւորան ՚ի Պրիսանիսէ, եկեալ ՚ի Դեղփինիսն ձօնեաց վասն նոցա խնդրուածք Ապողոնի. և էր ձօնն՝ ոստ ՚ի նուիրական ձիթենւոյ բոլորեալ յասր սուրբ: Եւ կառարեալ զաղօթսն՝ էջ ՚ի ծով ՚ի վեցերորդի ամսոյն Մունիքիոնի, յորում և ցայսօր առաքեն աղջկունս հաշտ առնել ՚ի Դեղփինիսն: Եւ զրուցեն ևս՝ եթէ դիւքն Դեղփեայ պատուիրեաց Թեսեոսի, առաջնորդ առնուլ իւրեանց զԱտղիկ և աղաչել ուղեկից լինել նոցա. և թէ՝ ՚ի չազել անդառ ափսամբ ծովուն այծ մի, յանկարծակի փոխեցաւ նա ՚ի նոխազ. վասն այնորիկ և կոչեցան այն դիք՝ Եպիտրագիա 13:

Առդ յորժամ նաւեալ հասս Թեսեոս ՚ի Կրետէ, ըստ որում պատմագրեն բազումք և նուագեն ևս ՚ի տաղս, յԱրիադնեայ տարփածուէն առեալ նա զթելն, և ուսեալ ևս հնարս զելից ՚ի պտուտից անտի Լամբիւրինթոսին, ապան նա զՄինոսաւրոս, և եզ նաւեաց անտի՝ առեալ յինքն զԱրիադնէ և զպատանեսկան: Ալ փերեկիւդես պատմէ՝ եթէ և զսակս նաւուց Կրետացոցն խորեաց կորեաց Թեսեոս, զի անպիտանք լինցին ՚ի հետապնդել: Իսկ Դեմոնն ասէ՝ եթէ և զՏաւրոս լինքնին ՚ի մահ վարեաց զզօրավարն Մինոսի, որ առ ծո-

վեզերքն մարտ եդեալ կռուէր ՚ի նաւարկել անդ Թէսէոսի:

Ա՛յլ որպէս փիղոքորոս պատմագրէ, ՚ի կատարել անդ մրցանաց խաղոցն Մինոսի, նախանձաբեկ ընդ Տաւրոս լինէին՝ իբրու այն՝ որ միւսանգամ հանդերձեալ էր պարտեալ զամենեսեան. քանզի շուք վտառաց նորա գժոխըմբէր էր առհասարակ սակս բարուցն վայրենութեան. և բամբասեալ ևս էր նա՝ վասն առևանկելոյն զՊասիփէա: Վասն այնորիկ իբրև խնդրեաց Թէսէոս մնանել ՚ի մրցանան, զնչեալ հաւանեցաւ Մինոս: Եւ քանզի էր սովորութիւն ՚ի Կրետէ՝ զի և կանայք անգամ ՚ի զինի կային հանդիսին, Արիադնէ՝ որ անդ մերձ կայր՝ հիացեալ յակձիռս լինէր ընդ տեսիլ կերպարանին Թէսէայ, և սքանչացեալ ևս էր ընդ նահատակութիւն արութեանն՝ որով նկուն առնէր նա զամենեսեան միանգամայն. խնդայր բերկրէր անդուստ և Մինոս՝ մանաւանդ զի և Տաւրոս ինքնին գլխովին անկաւ ՚ի գօտեկռուին և առակեալ նշաւակեցաւ այրն. ուստի և Թէսէոսին առեալ ետ ՚ի ձեռս զպատանեական, և քաղաքին ընծրհեաց զհարկն:

Ա՛յլ Կլեդիմոս մանաւոր ինն և ոճով աւանդէ վասն այսոցիկ, անդուստ ՚ի վերուստ առնլով զբանն: Օրէնք հաստարակ էր, ասէ, առ Հելլենացիս, զի Աեռաթիոց անտի և ո՛չ մի կարասցէ երբէք նաւարկել՝ յորում թուով արք առաւել քան զինգ մեռեալ լցեն. և թէ՝ Յասոնէ միայն Արգո-

նաւուն իչխան՝ չուրջ յածեալ ծովակնաց լինէր՝ վանել հալածել զՀէնս ծովուն: Իսկ իբրև Դեդալոս նաւապնաց փախեաւ ՅԱԹԷնս, Մինոս արտաքոյ օրինացն այնոցիկ զՀետ մեռեալ նորա երկայնաձիգ նաւուք, 'ի մերկէ վարեալ՝ անկաւ 'ի Սիկիլիա, և անդ զրաւեաց զկեանն: Եւ իբրև Դևկալիոն որդի նորա Թշնամի ԱԹԷնացւոց՝ յղեաց առ նոսա և հրամայեաց տալ 'ի ձեռս զԴեդալոս. և սպառնայր ևս՝ եթէ չտացեն՝ 'ի մահ մատնել զմանկունն, զորս 'ի պատանդ դի առեալ էր Մինոս. յայնժամ հեզաբար ետ նմա պատասխանի Թէսէոս, 'ի չքմեղս եղեալ՝ եթէ հօրեղբօրորդի իւր է Դեդալոս, և ապակից է նմա՝ մայր իւր ունելով զՄերոպէ դուստր Երեքթէոսի: Եւ ինքն դալոտ նաւատորմիղ մի հանդերձէր կազմեր. կէս մի՝ 'ի Թիմէտադէայ կողմանն 'ի բացեայ արահետ ուղւոյն. և կէս մի դարձեալ՝ 'ի ձեռն Պիտէոսի 'ի Տրիզինէ, 'ի ծածուկ կամելով գործել զամենայնն: Իսկ իբրև հանդերձեցան կազմեցան իրքն, ամբարձաւ 'ի նաւն՝ առեալ ընդ իւր առաջնորդ զԴեդալոս և զփախստեայն 'ի Կրետէայ. և յորժամ դէտակն կալեալ սպասէր նոցա և ոչ ոք, այլ կարծեցին Կրետացիք՝ եթէ նաւք բարեկամաց անգուստ գան և մերձին, հասեալ Թէսէոս՝ սիրեաց նաւահանգստին. և Թափեալ զմարդիկն՝ փութացաւ դիմեաց 'ի վերայ կնովսեայ. և մարտ եղեալ կռուեցաւ առ դուռն Լաբիւրինթոսին և սպան զԴևկալիոնէն և զԹիկ-

նապահս նորա: Ա յլ երդև տէրութիւնն ի ձեռս անցանէր Արիադնեայ, հաշտութիւն արարեալ ընդ նմա, առ կինքն զպատա- նեական, և բարեկամութիւն հաստեաց ընդ Աթենացիս և ընդ Կրետացիս, որք և եր- դումն ևս կռեցին՝ մի առաջին գրգռել ընդ նոսա ի պատերազմ: Իսկ զբոյգք այլ շաղք դարձեալ յաղագս այսոցիկ վիպին, և յաղագս Արիադնեայ. սակայն և ոչ մին է ճշմարիտ: Զի են որք ասեն եթէ իսկզդ առ անձամբ Արիադնէ, յորժամ թողեալ լքաւ ի Թէսէոսէ. և կէսք դար- ձեալ՝ եթէ ի Նաքսոս ածեալ նա ի նաւուր- դաց՝ զուգեցաւ ընդ Ոինարոսի քրմին Դիո- նիսեայ. և թէ՝ ի բաց լքաւ թողաւ նա ի Թէսէոսէ, զի այլոմ ումեք հոմանի գտաւ Թէսէոս:

Զի անձուկ սիրոյն Պանոպեանն
Եգիտեայ տագնապէր զնա.

Քանզի զայս տող ի քերթուածոց ան- սի Հեսիոդեայ ի բաց եբարձ Պիսիստրա- տոս՝ որպէս վկայէ Եղեսս Մեգարացի. ըստ որում և ընդ հակառակն դարձեալ ի շը- նորհս Աթենացւոցն առեալ եմոյծ ի Մե- ռելակոչն Հոմերոսի 14, զայս ինչ.

Իսկ Պերիթոոս և Թէսէոս,
Դից Ծննունդք քաջափառ:

Ա յլ են դարձեալ՝ որ ասեն եթէ և ծնաւ Արիադնէ ի Թէսէոսէ զՆաքսիոնէ և զՍտաֆիլոս. յորս է և Քիոսացին Յոնէ,

որ ասէ այսպիսի լինէ վանն հայրենի քա-
ղաքին,

Ջսա երբեմն Թէսէոսեանն
Հիմնեաց Ինոպիոնէ:

Արդ՝ զայսոսիկ, որ յառաստղեալս-
կուաց անուն նազաբանեցան, ամենեքեան՝
որպէս բանիս կարգ է ասել՝ առհասարակ
՚ի բերան ունին:

Սակայն մանաւանդ իմն յաղագս այսո-
ցիկ Ճառ մատենագրեաց Պէռիէն Ամաթու-
սացի: Քանզի ասէ՝ եթէ Թէսէոս ՚ի բռնու-
թենէ մերկին վարեցաւ ՚ի Կիսրոս. և զի առ
նմա յղի կայր Արիադնէ, և յոյժ վշտա-
նեալ էա ՚ի ծփանաց ծովուն և ախտակիր,
եհան զնա միայնակ Թէսէոս ՚ի դուրս. և
այն լինէ լինքն հաստատութիւն տայր նա-
ւուն խրոյ, դարձեալ միւսանգամ առեալ
՚ի ցամաքէն վարեցաւ ՚ի ծով: Իսկ կանայք
գաւառականք առին ժողովեցին զԱրիադ-
նէ, և շուրջ եկեալ սփոփէին զթաղծեալն
յամայութեան անդ խրոյն. այլ և նա-
մակս էա լինքնահնարս բերեալ մատուցին
նմա խրոյ գրեալ առ նա ՚ի Թէսէոսէ. և
յերկուանս էա ծննդեան նորա վաստակակից
և զօրավիգն լինէին նմա. և զի մեռաւ նա՝
մինչչև ծնեալ էր, առին թաղեցին զնա:
Իբրև եկին եհաս ՚ի վայր անդր Թէսէոս,
թաղծեալ յոյժ՝ առեալ լինչս ելթոլ անդ
գաւառականացն, և պատուիրեաց նոցա
զոհել զոհ Արիադնեայ. և արձանս էր-
կուս փոքրիկ կանգնեաց անդէն, մին՝ ար-

ծաթի, և միւսն՝ պղնձի: Իսկ ՚ի զոհն անդ երկրորդն աւուր ամսոյն Գորիպեայ, պատանի մի ընկողմանեալ ՚ի մահճի՝ հեծծէ և ծեքծեքի և բեկբեկի զլսովին երբև ոչնայս ոմանս ծննդականս. և թէ՝ կոչեն Ամաթուսացիք զանստառն, յորում և զնի բիմ նորա ցուցանեն, Անտո Ապոլիոն Արիադնէայ:

Բայց և ոմանք ՚ի Նաքսացւոց այլազգ պատմագրեն, եթէ երկուք ոմանք կացեալ էցեն Մինոսք, և երկուք դարձեալ Արիադնէք. զնին ՚ի նոցանէ հարսնացեալ ասեն ընդ Դիոնիսեայ ՚ի Նաքսոս, և ՚ի նոցանէ ծնեալ Սաաֆիւղոս. իսկ միւսն՝ կրսերագոյն՝ յաղշտակեալ ՚ի թէսէոսէ և ՚ի բաց լքեալ ՚ի նմանէ, եկն եհաս՝ ասեն՝ ՚ի Նաքսոս. էր ընդ նմա և դայեակն՝ անուն Կորքինէ, զորոյ ցուցանեն և զգերեզմանն. և թէ՝ և Արիադնէ անդանօր մեռեալ էցէ, և պատիւ ևս ընկալեալ՝ ոչնչ զուգահասասար առաջնոյն. քանզի առաջնոյն՝ ոճն կատարեն հրճուանօք և ՚ի կայթս խաղուց. իսկ զոհսն նուիրեալք յիշատակի սորա՝ խաւն են ՚ի լալեաց և յաշխարանաց:

Ասէ ՚ի Կրետեայ նաւեալ թէսէոս, եկն եհաս ՚ի Դելոս, և անդ զոհ զոհեալ դիցն՝ նուիրէ նմա զդրօշեալ Ատղկանն՝ զոր յԱրիադնեայ առեալն էր. և պարս պարէ անդանօր ընդ պատանեկացն, զոր և այժմ տակաւին ասեն առնել Դելացւոց, ՚ի նմանուԹիւն շրջանաց և ելից Ճանապարհացն ԼաբիւրինԹոսի, Թուով լինն զուգա-

հետ կայթիւց և շրջըրլելով պարեն զպարն։ Եւ անուանեալ կոչի այս ազգ պարուց ՚ի Դեղացւոց անուն՝ Գէրանոս, այն է՝ խոր. որպէս պատմէ Դիկարքոս։ Եւ պարեաց Թէսէոս շուրջ զԿերատաւն սեղանոյն, որ կազմեալ էր առ հասարակ ՚ի ձախակողմեան եղջերաց։

Ասեն՝ եթէ և մրցանս խաղուց կարգեաց նա ՚ի Դեղոս, և յայլ Թականացն յայնժամ առաջին պարգեւեաց նա արմաւենի։

Իակ երբև մերձեցան նաքա ՚ի Կնոսիկէ, մոռացաւ Թէսէոս՝ մոռացաւ և նաւասպետն առ խնդին պարզել զառագաստն՝ յորմէ զնոցայն ողջութիւն նշանակաւ մնայր ձեռնդրեալ Եգէոս. ուստի և յուսահատ եղեալ ծերունին՝ գահավէժ ընկէց զինքն ՚ի ժայռէն, և բաւճաւ մեռեալ։ Իակ Թէսէոս մտեալ ՚ի Նաւահանգիստն՝ զոհեաց զոհս ՚ի փառէր՝ զոր և ուխտեալն իակ էր դմա. և հրեշտակ զոմն առեալ արձակեաց ՚ի քաղաք անդր աւետաբեր վրկութեան։ Նա էր եւեալ հանդիպեցաւ բազմաց ոմանց՝ որ կոծէին և աշխարէին զմահ արքային. եղիս և զայլս՝ ըստ որում և ՚ի դէպ իակ էր՝ զի ցնծացեալք հրճուէին, և մուտիւրատիւնս խունէին հիւրամեծարութեամբ ժողովել զնա, և պսակօք ևս պսակել զնա յաղագս աւետարանեալ վրկութեանն։ Նա առնուլ էառ զպսակն, և շուրջ բոլորեալ պսակեաց նոքօք զօձապատ զիւր գառագանն։ Եւ դարձ արարեալ անդրէն ՚ի ծովեզրն, և քանզի չէ՛ւս էր կառարեալ զնուէր իւր Թէ-

սէոս, եկաց ձնաց արտաքոյ առ դուրան, զի ոչ կամէր խառնվել զղօն. իսկ իբրև նուէրքն կատարեցան, ապա և ինքն քարոզեաց զնահ Եգէոսին: Ընդ նոքա գուժիւք և վայիւք առհասարակ խառնվեալք՝ աճապարեցեալն եկին 'ի քաղաք անդր: Ոչսոի և այժմ՝ որպէս ասեն՝ 'ի ժօնահամբուրթիւնս անդ Ոպքոփորեան ոչ եթէ զքարոզն պատակեն, այլ զքարոզչին գաւազանն. և 'ի ձօնան անդ նուիրաց՝ որ միանգամ մերձն կան՝ աղաղակեն, Էնէէ-. Ւ՛-Ւ՛: 'Ի ձայնից սաստիկ զառաջինն՝ գոչել բնաւորեցան աճապարողք և նուագերգուքն Ապողոնի: Իսկ վերջինդ՝ արհաւրաց և սրտաբեկութեան յայտարար է: Իսկ ապա իբրև Թալեաց զհայրն, կատարեաց Ապողոնի զուխան յեօթնեերորդ աւուր ամսոյն Պինէպսիով նի. քանզի 'ի նմին իսկ աւուր ողջանդամ եկին նոքա 'ի քաղաքն:

Իսկ որ ինչ յայլազգս եփոյ ընդոցն ասացեալ է, քանզի 'ի հասանել նոցա ողջանդամ անդր՝ առեալ զամենայն կերակրոց ընչեղսան 'ի մի խառնեցին միանգամայն, և 'ի միում հասարակաց պուտան յեփ արկեալ եռացուցեալ զամենայնն, 'ի մի ակումբ բազմեցան առ հասարակ և ուրախացեալ եկին միմեանց: Ապա յետ այնորիկ 'ի դուրս բերին զԵրեսոսին, որ այն ինքն է՝ ոսո Զևթենուոյ բոլորեալ յատր (որպէս էր յայնժամ ձօն խնդրուածոցն) ամենագուն նակ արդեանց երկրին լև և պատարուն երանելոյ քաղաքի, քանզի և գաղարեալ իսկ էր անձ

պրոպոլութիւնն . և ապա նուագ առնուն՝ նոքա այսպիսի :

Երիտն Թուզ մեզ ած ,
Եւ առոք բերցէս հաց :
Լի մեզու դաշխուրան ,
Զէթ կակուղ նիւթ օծման :
Անապակ բաժակ մեզ ,
Չի արբեալ ննջէացես :

Թէպէտ և ոմանք ասեն՝ եթէ վասն չերակ լեանց կատարէին այսոքիկ , ոչք զայս օրինակ բուծեալք էղեն ՅԱԹԵՆացւոց ասի . սակայն բազումք այն են՝ որ զասացեալդ մեր հաստատեն :

Իակ զնաւն զայն երեանաթի՝ որով ընդ պատանեկացն նաւեաց Թէսէոս և դարձաւ ողջանդամ , մինչև ցժամանակս Դեմետրիոսի փաղերեան 15 պահեցին ԱԹԵՆացիք . քանզի 'ի բաց առեալ զփուտան 'ի տախտակաց , նորս և հաստատուն 'ի տեղին ադուցեալք կարկատէին . մինչ զի և իմաստասէրսացն անգամ 'ի ձառել անդ յաղագս աճմանն գոյից՝ զայս նաւ յառաջ ածէին նոքա 'ի յարացոյց երկբայականաց . կէսք պնդէին՝ եթէ այն նաւ նոյնպէս կայր մնայր . և կէսք դարձեալ՝ եթէ ոչ նոյն :

Իակ ոճնախմբէին նոքա և զոմն Ոսքոփորեանց՝ որպէս սահմանեաց նոցա Թէսէոս . իբրև զի ոչ զամենայն վիճակաւոր կուսանան ասեն՝ առեալ նա յայնժամ տալոյ ընդ իւր . այլ զերկուս ոմանս 'ի պատանեաց

յընտանեաց Լվրոց, որ կանացն բերէին կերպարան և գիրդք ևս էին և փափուկք, բայց և այրականք ոմանք և ժիրք ոգւով. զոսա ապա 'ի բաղանիս լուացմամբ և հովասուն բուծմամբ և 'ի վարս հերացն օծմամբ և 'ի շպարս և 'ի մնգոյր և 'ի պաճուճանս զարդուց՝ որչափ ինչ ձեռնհաս եղև՝ ձչգրտիւ փոխեաց զնոսա. և ուսոյց ևս նոցա զձայնին ծեքել և զմարմնոյն պչրել և զձեմոցն նազել, զի որչափ ինչ միանգամ բաւական լցեն՝ նմանութիւն բերցեն զօրիորդացն, և մի իւիք տարբերեալք լցեն. ապա առեալ իսառնեաց զնոսա 'ի թիւս կուսանացն, և յամենեցուն 'ի ծածուկ ամենևին կալաւ զբանն:

Ա՛Յ իբրև դարձ արար նա անդրէն, ինքն ապա և պատանեակքն սոն խմբեցին ցնծութեան. այնպիսի լինն արկեալ զանձամբ՝ որպէս այժմդ ագանին, որք բարուն նակս բարձեալ տանին ողկուզաբերս: Եւ բարձեալ տանին զայս 'ի շնորհս պատուոյն Դիոնիսեայ և Ափրադնեայ՝ վասն առասպելին. կամ թէ առաւել ևս՝ զի 'ի ժամանակի այգեկութեցն դարձ արարեալ եկին նոքա: Իսկ Դիպնիփոր անուանեալ կանայքն, այն են՝ Ճաչաբէրք, մնանեն 'ի զոհ անդր և բաժանակից լինին, զնմանութիւն բերելով զմարց վիճակաւոր պատանեկացն. քանզի և մարք նոցա յաճախ բերէին զաւակացն ապաս և կերակուրս: Ա՛Յ և առասպել ևս պատմեն աստանօր. քանզի և յայնժամ այն մարք 'ի ափոփել և 'ի քաջալերել՝ առաս-

պէլս Ճառ արկեալ պատմէին որդւոց Լե-
բեանց : Արդ՝ զայսոսիկ և Դեմոնէն ինքնին
պատմագրէ : Ա.յլ և նուիրական վայր սահ-
մանեցաւ Թեսեայ . և տանց՝ որ միանգամ
հարկս հարկանէին՝ պատուէր ՚ի վերայ եդ
նոցա , զի հաս տացեն նմա առ ՚ի զոհ : Եւ
զոհին ոսոխականք ՚ի վերայ կային փիւռա-
լեանք . քանզի այսպէս մեծարեալ հատոյց
նոցա Թէսէոս զվոխարէն մեծի հիւրասի-
րութեան նոցա :

Իսկ ապա յետ վախճանին Եգէոսի ,
մեծ խմն և աքանչելի գործ զմնաւ ածեալ
Թէսէոս , առեալ բնակեցոյց ՚ի միասին զբ-
բնակիչս Ատտիկոյ ՚ի միում անդ քաղաքի .
և միում քաղաքի մի ժողովուրդ ընծայեաց
եւ , որք ցայն վայր ցան և ցիր սփռեալ
կային , և ՚ի գործ ինչ հասարակաց պիտոյից
դժուարահաւաքելիք ումանք . էր՝ զի և երկ-
պառակեալք ևս մարտ եդեալ կռուէին
ընդ միմեանս : Շրջէր ընթանայր Թէսէոս
առ հասարակ ըստ ժողովրդոց ժողովրդոց
և ըստ զարմից զարմից և խելամուտ առնէր
զնոսա : Սոսկականք և աղքատք արագ արագ
յանձին կալան զնորա նորա : Իսկ ճոխ-
ցըն իբրև առաջի արկեալ էգ նոցա քաղաքա-
կանութիւն իմն անթագաւոր և ռամկա-
պետութիւն , և զի՝ զԹէսէոս ինքնին իշխան
միայն կալցեն պատերազմի և պահապան
օրինաց , իսկ յայլն ամենայն հաւասարա-
բաժին կացցեն ամենեքեան , ակնք ՚ի նոցա-
նէ անդէն զնչեալ հաւանեցան ընդ բանն .
իսկ ակնք՝ զանգիսեալք ՚ի զօրութենէ նո-

րա՝ զի մեծ էր ի ժամանակին, և ի ձեռ-
նէրէց Ճոխութենէն ակն ածեալք՝ առա-
ւել ընտրեցին կամակար հաւանել քանիցն՝
քան եթէ բռնութեամբ:

Ապա յետ այնորիկ ի բաց բարձեալ ի
տեղեաց տեղեաց զՊրիւտանեայս և զնոր-
հրդարանս և զատեանս, մի միայն կար-
գեալ սահմանեաց առհասարակ ամենե-
ցուն Պրիւտանիա և խորհրդարան ի տե-
ղւոջ անդ՝ ուրանօր տեսանի այժմ Ա-
կամ Ոսկան անուանեալ վայր. և քաղա-
քին անուն կարգաց ԱՆԷՒ. և մատոյց կա-
տարեաց զՊանաթինեանն զոհ հասարա-
կաց: Տօնախմբեաց և զՄեսիկեանն ի վեշ
տասանեւորդի աւուր Եկատոմբէոնէի ամ-
սոյն, զոր և այսօր տօնեն:

Ապա հրաժեշտ ի Թագաւորութենէն
տուեալ՝ որպէս և խոստացեալն իսկ էր,
կարգաւորեալ յարդարէ զքաղաքականու-
թիւնն՝ սկիզբն արարեալ ի դից անտի:
Քանզի պատգամ եղեալ նմա ի Դելփեայ այս-
պիսի, յորժամ նա խորհուրդ հարցանէր
վասն քաղաքին.

Եգեաւն Թեսևս Պիտթէոսեան
Կուսին Ծնունդ ի քաջաց,
Ի ձեր քաղաք վախճան սահման
Եղ հայրն իմ շատ քաղաքաց:
Մի դու յինէն խորհուրդ հարցցես
Ցոյժ տագնապեալ ի յոգւէ,
Զի էրև տիկ ի ջուրց վերայ
Հատցես ծովուն դու զուրկ:

Ջդոյն զայգ՝ պատմեն՝ եթէ և Սիփիղ-
ղայն յետ այնորիկ խօսեցաւ վասն քաղա-
քին, բարբառեալ օրինակ զայս.

Իբրև տիկ ընկղմեացիս,
Ա՛յլ առաջանիլ չէիք քեզ հնար:

Ա՛յլ կամեցեալ Թէսէոսի առաւել ևս
մարդաշատ զքաղաքն առնել, հրաւէր կար-
դայր կոչէր զամենեսեան առհասարակ՝ ի
մի վիճակ հաւասարութեան. և ասէն՝ եթէ
քարոզ յորդորակին՝ որ ասէ, Եկայք ա՛ռ-
նօր ծղրվե՛ղէք ամենայն, է նորուն Թէսէ-
ոսի, որ կարգեաց սահմանեաց միաբանու-
թիւն իմն յամենայն ժողովրդոց: Ի վերայ
այսր՝ և փոյթ մեծապէս կալաւ նա, զի մի՛
անկարգ լինէ Թերևս և խառնիխուռն ի խա-
ժամուժ ամբոխէն անխտրաբար եղեալ
ռամկապետութիւն. այլ առաջին որոշեաց
զատոյց նա ուրոյն զքաղաքդի ազնուականն,
զերկրագործսն, և զարհեստագործսն: Քա-
ջագէտսն յանձն արար ռազմիկան աստուա-
ծայնոցն լինել, և իշխանս ի դասէն իւրեանց
ի նեղըս ընծայեցուցանել, և օրինացն վար-
դապետս նստել, և իրաւանց և արդարու-
թեանց Թարգմանս: Իսկ և այլոց քաղա-
քացեացն մէն մի և նոցա առանձին վիճակ
բաշխեաց. իբրև զի քաջագիտէր փառաքն գե-
րազանցեալ էցեն, իսկ երկրագործք՝ օգտա-
կարութեամբն, իսկ արուեստագործք բազ-
մութեամբն: Ա՛յլ թէ առաջին Թէսէոս
հակամիտեցաւ ի ռամիկն, վկայէ զայս Ա-
րիստոտէլ. և թէ՝ ի բաց եթող նա զմիա-

պետեն, վկայէ իմն զայս և Հոմերոս ինքնին ի Համարագրի անդ նաւուց, զԱթենացոցն միայն կոչելով Ժողովուրդ։ Եհատ և դրամ, եզն քանդակելով ի նմա. կամ սակս Մարաթոնեան ցլոյն, կամ ի պատճառս զօրավարին Միլտիադեայ, կամ թէ ի մշակութիւն անդր յորդորել զքաղաքացիսն. յայնմանէ ապա ասեն անուանեալ զնկատոմբիոնն և զՀեկատոմբիոնն։

Իսկ իբրև հաստատուն ի մի յօդեաց ընդ Աւտիկոյ զՄեգարացւոց սահմանն, կանգնեաց ապա զդեռահամբաւեալն զայն կոթող յԻսթմոս. և սահման որոշիչ վայրացն արձանագրեաց վերտառութիւն մի՝ կրկին եռաչափիւք։ Որ յարևելից կողմն էր, ոչ նէր այսպէս. Ո՛չ ՊԷՂՈՊՈՆՆԻՈՍ Է այս, այլ ՅՈՆԻԱ։ Իսկ որ յարևմտից կողմն, եթէ՝ ՊԷՂՈՊՈՆՆԻՈՍ Է այս, և ո՛չ ՅՈՆԻԱ։

Եւ մրցանս ևս խաղոց առաջինն նա կարգեալ սահմանեաց նախանձաւոր եղեալ Հերակլեայ. քանզի զոր օրինակ վասն Հերակլեայ Ողիմպիականքն կատարէին Ըրամազդայ, սոյնպէս և վասն իւր պատուասիրաբար Իսթմեանքն կատարեացին Պոսիդոնի ի Հելլենացւոց անտի։ Քանզի այն ինչ՝ որ ի յիշատակ Մելիկերտեայ անդանօր կարգեալ էր, գիշերի կատարէր. և իբրև նուիրական տօն ունէին զնա, քան տեսան իմն և աչխարհական ժողով։ Այլ ոմանք ասեն՝ եթէ ի յիշատակ Սկիրոնէի սահմանեցան Իսթմեանքն ի թէսեոսէ ի քաւութիւն սպանութեանն՝ վասն ազգակ-

յոլթեանն ընդ միմեանս. քանզի Սկկրոնն որդի էր Կանխթոսի և Պիտթեանն Ենխոքեայ: Իսկ կէսք՝ Սիննէս ասեն և ոչ Սկկրոնն. և թէ՝ մրցանք խաղոյն վասն սորա կարգեցան՝ ի Թէսէոսէ, և ոչ վասն նորա: Եւ կարգեաց եղ դասն ընդ Կորնթացիս, զի յերթալն Ամենայցոց առ նոսա յԱթենս մեան խաղն, զնախաթոռ տեղին տացեն նոցա, և վայր այնչափ գրաւեալ կալցեն նոքա անդ, որչափ էնչ յերկիր պարզեալ առագաստ Թէորեան նաւոյն. զոր օրինակ պատմագրեն մեզ Եղանիկոս և Անդրոն Ալիկարնացի:

Ապա յետ այնորիկ և յԵքսինեանն պոնտոս նաւարկեալ Թէսէոս, որպէս փիղոքորոս պատմէ և այլք ոմանք, ՚ի միասին ընդ Հերակլեայ՚ի մարտ զինուորեցաւ ընդդէմ Ամազոնաց. և ՚ի պարգև արուեստեան քաջութեան խրոյ ընկալաւ զԱնտիոպէ: Ա՛յլ բազումք այն էին՝ ըստ որում և փերեկիդէս և Եղանիկոս և Հերոդորոս, որք ասեն՝ եթէ յետ Հերակլեայ առանձին իւրով արշաւանօք նաւեաց Թէսէոս և գերի կալաւ զԱմազոնն. և արդեօք Ճշգրիտ ևս ասեն զոքա. քանզի և ոչ ուրեք երբէք պատմի՝ եթէ ոք ՚ի նիզակակցաց անտի Հերակլեայ զԱմազոնն գերի կալեալ էցէ: Իսկ Բիոնէն ասէ, եթէ Թէսէոս խաբանօք կալաւ զնա և դարձաւ. քանզի ասէ՝ եթէ այլ բռասերք են Ամազոնքն. և ՚ի գալ Հաստանել Թէսեայ ՚ի սահմանն՝ ոչ եթէ փախեան էնչ ՚ի նմանէ, այլ և հիւրոյթս ևս առաքե-

ցին նմա. իսկ Թէսէոս զընծայաբերն զայն մեծարեալ հրաւիրեաց ելանել ի նաւ անդր. իսկ իբրև ել նա ի վեր, ի նոյն և նաւն անկաւ յուսկ:

Իսկ Մենեկրատէս ոմն, որ զպատմութիւնն մատենագրեաց զնկնիկայ քաղաքին Բիւթինիոյ, ասէ՝ եթէ Թէսէոս զԱնտիոպէն ունելով ընդ իւր, դեգերեցաւ վայր մի ի կողմանն յայնոսիկ. էին ընդ նմա յայնժամ և նիզակակից՝ պատանիք երիք Աթենացիք եղբարք միմեանց, Եւնէոմէն և Թոանտէս և Սոլոնտէս: Սա այս Սոլոնտէս հարաւ ի սէր Անտիոպեայ, և ի ծածուկ ունէր զնա յայլոց անտի. սակայն յայտնեաց զայն միւսոյ ումեք յընտանեկաց իւրոց. և իբրև նա զնաւսիւք անկաւ ընդ Անտիոպեայ վան բանիս այսորիկ, Անտիոպէ անդէն պատեհով ի բաց յանձնէն մերժէր զհրապոյրն. սակայն և խնամոութեամբ և հեզաբար նա տարաւ կրկին, և Թէսէոսի ոչ ի վեր եհան զնան: Իսկ յորժամ Սոզոնտէս յուսահատեալ եղեալ՝ ընկէց զանձն ի գետ մի և գետոյն կորեաւ, յայնժամ ապա ի վերայ կացեալ Թէսէոս պատճառն և կրկին պատանւոյն՝ յոյժ ցաւեաց նմա. և այն ինչ դարձեալ նա էր ի յոգին՝ անդէն բան մի ի Պիւթեան պատգամացն ի միտս անկաւ նորա: Քանզի պատուիրեալ նմա էր Պիւթիա ի Դելփիս, զի եթէ երբէք յօտարութեան անդ խրոխտ վիշտ մեծապէս և թաղծութիւն սաստիկ պատահեսցէ ինչ նմա, յայնժամ քաղաք

մի անգամօր շինեսցէ նա, և յիւրոց անտի Թողցէ անդէն առաջնորդս: Եւ վասն այսորիկ՝ քաղաքն զոր շինեաց՝ յանուն դիցն կոչեցաւ Պի-Ռօպօլիս. և մերձակայ գետն՝ Սպընդէս՝ ի պատիւ պատանւոյն. իսկ ե- Թող անդէն և զեղբարս նորա իբրև վերա- կացուս և օրէնադիրս, և ընդ նոսա գար- ձեալ և զկրմոս զայր Աթենացի ազնուա- կան. յորոյ անուն և զտեղին կոչեն Պի- Թօպօլսեցիք՝ Էօմո Խէյա, այն է՝ Հերմէսի փոս. ոչ ուղղապէս Համբոյր գործելով զերկրորդ վանկն, և զդիւցազնին զփառս ի դիս անդր փոխաբերելով:

Ա յլ Ամազոնաց պատերազմին պատ- ճառք այս եղեն. և Թուխ Թէ՝ ոչ գուշ- նաքեայ և ոչ կանացի լինչ արդեօք պատա- հեցան իրք պատերազմիս այսորիկ: Քանզի և ոչ արդեօք ի վայրի անդ Աոփս անուա- նեալ՝ երբեք բանակ հարկանէին Ամազոնք. և ոչ գարձեալ մարտ պատերազմի տային նոքա ի տեղւոջ անդ մերձ ի Պնիւկէ և ի Մուսիոն, Թէ ոչ յառաջագոյն տիրեալ նոքա գաւառին՝ առնաբար քաջութեամբ հորդան տուեալ էին ի բուն ի քաղաք անդր: Իսկ Թէ՝ որպէս պատմէ Եղանիկոս՝ շուրջ յածեալ ոտքա անցեալ ընդ առնա- պատ Բոսպորն Կիմմերեան՝ այնպէս եկեալ հասեալ իցեն, գործ է հաւաստալ: Իսկ այն՝ Թէ ի քաղաքի անդ գոգցես բանակ հարին Ամազոնք, վկայեն այսմ և անուանք տեղեացն, և շինիմք՝ որ անդ անկելոց Ամա- զոնացն: Սակայն Ճակատք երկոքին շատ

ժամանակ այնպէս կացին մնացին ՚ի կայլ իւրեանց, և դանդաղէին ձեռնամուխ ՚ի գործն լինել: Իսկ ապա ուրեմն Թէսէոս ՚ի պատգամէ խմեմնէ շարժեալ, և զոհ յա- զեալ Արհաւրաց, խառնեցաւ ՚ի մարտ ընդ նոսա: Եւ եղև մարտ պատերազմին յամ- սեանն Բեդրոմիոնէի, յորում աւուր և զԲեդրոմեանան մինչև ցայսօր զոհեն Ա- թենացիք: Եւ պատմէ մեզ Կլիդեմոս, որ քա- ջիկ զամենայնն ծայր ՚ի ծայր խնդրեաց ձեռնել, եթէ ձախոյ թևն Ամազոնաց սեղմ տուեալ դարձաւ ընդ կրունկն՝ մերձ ՚ի վայրն՝ որ այժմ կոչի Ամազոնէոն. իսկ աջոյ թևոյն խաղացին դիմեցին՝ հասին նո- քա մինչև ՚ի Պնիւկէ ընդ ձանապարհն Խրիւսոյ: Եւ ընդ նոսա մարտ եղեալ կռուեցան Ա- թենացիք՝ ՚ի կողմանէ անտի Մուսեայ անկեալք ՚ի վերայ Ամազոնաց. և են անդանօր գերեզմանք անկելոցն նոցա մերձ ՚ի հրապարակն՝ որ հանէ ՚ի դրունն առ երի բագնին-քաղկոդոնեայ, և զդրունն այժմ անուանեն Պէրսէոնս. իսկ ապա վանեցան անտի բռնութեամբ Ա- թենացիք մինչև Յեւմենիդոն և ընդ կրունկն խուճա- պեցան յերեսաց կանանցն: Ա- յլ սակայն ՚ի կողմանց անտի Պաղղատեայ և Արդիա- եայ և Լիւկեայ անդրէն ՚ի վերայ յարձա- կեալք, առին պատեցին՝ վանեցին զայլ թև Ամազոնացն մինչև ՚ի բուն բանակ անդր նո- ցա, և տապաստ արկին յայնժամ ղբազումս ՚ի նոցանէ:

Իսկ յամենայն չորրորդի խաղաղութիւն

հաստեցաւ ընդ նոսա ՚ի ձեռն Հիպպողիւ-
տեայ. քանզի Հիպպողիւտէ անուանէ կղզի
գեմոս զԱմազոնն, որ կենակիցն էր Թե-
սէոսի, և ոչ Անտիոպէ: Իսկ կէսք ասեն՝
եթէ այս Ամազոն ՚ի կռուիլ անդ խրոտմ
՚ի ձակատէն Թեսեայ, անկաւ ՚ի մարտին
նեռասհար եղեալ ՚ի Մոլպադեայ. և սիւն
յիշատակի սորա կանգնեցաւ առ տաճարի
սահմանին Ողիւմպիոյ: Ա՛յլ սակայն և չեն
ինչ զարմանք, եթէ ՚ի դէպս անցից բազմա-
ժամանակեայ հնութեանց այսր անդր տա-
րուբերցի պատմութիւնն. քանզի և ասեն
գարձեալ՝ եթէ որք միանգամ խոցեալք
վէրս ընկալան յԱմազոնաց անտի, զնոսա
գաղտ Անտիոպէ առեալ արձակեաց ՚ի
Քաղկիդ՝ անդ գտանել դարմանս. և թէ՝
կէսք ՚ի նոցանէ Թաղեցան անդանօր՝ զոր
այժմ կոչեն Ամազոնիոն: Իսկ թէ՝ և վախ-
ճան պատերազմին հաստատեցաւ ՚ի պայ-
մանս ուխտի, վկայէ այսմ եթէ անուանա-
կոչութիւն տեղւոյն՝ որ առ երի Թեսեան
մեհենին, զոր և կոչեն Ուիոմոսիոն այն է՝
Երդումն. և եթէ գարձեալ զոհն վաղեմի
յազեալ ՚ի ձօն Ամազոնացն յատաջ քան
զԹեսեան տօնն: Ա՛յլ ցուցանեն և Մե-
գարացիք ՚ի մէջ իւրեանց չիրիմ Ամազո-
նաց, ՚ի ճանապարհի անդ՝ որ հանէ ՚ի հրա-
պարակէն ՚ի վայրն անուանեալ Ռոմն, ուր
է՝ Ռոմբէդեան, այն է՝ Տարանիւանայինն:
Ասեն գարձեալ՝ եթէ և մերձ ՚ի Քերոնիա
մեռան այլք ումանք յԱմազոնաց անտի, և
Թաղեցան առ վտակաւն, որ ՚ի նախնումն՝

որպէս կարծեն՝ Թէրմոդոնտէն յորդորչէր, իսկ այժմ Էմոնէն. և յաղագս այսոցիկ ի Դեմոսթենեայ վարան դրեալ կայ: Այլ Թուի Թէ և ոչ ընդ Թեսաղիա առանց լինչ մարտի պատերազմի անցին Ամազոնք. քանզի և ցայսօր տակաւին զգերեզմանս նոցա ցուցանեն մերձ ի Սկոտուսսա և առ Շանագլուխան: Արդ՝ այսոքիկ արժանիք յիշատակաց վասն Ամազոնացն: Զի որ լինչ միանգամ վէպք այլ էցեն առ ի քերթողէն Թեսեան տալոյն՝ վասն արշաւանաց Ամազոնացն, և յարձակմանն Անտիոպեայ ի վերայ Թեսեայ ի պատճառս ամուսնութեանն ընդ Փեդրայ, և վասն վրէժ խնդրելոյն Ամազոնաց նիզակակցացն Անտիոպեայ, և ապա ի մահ մատնելոյն զնոսա Հերակլէայ, այս ամենայն յայտնապէս յառաջաբերեցաք սակի են և քերթողականք:

Այլ յետ մեռանելոյն Անտիոպեայ, ած ի կին Թէսէոս զՓեդրա, ունելով իւր որդի յԱնտիոպեայ զՀիպպողիտոս. իսկ որպէս Պինդարոս ասէ՝ զԴեմոփոնտէս: Իսկ որ լինչ միանգամ ձախողակ դէպք Թեսեայ ի պատճառս Փեդրայ և որդւոյն Հիպպողիտոսի, որովհետև յայնոսիկ տարբերին և ոչինչ քերթողք ի պատմագրաց, ուստի և այնպէս արժան է ունել՝ որպէս միանգամ աւանդեցին միաբան ամենեքեան նոքա առհասարակ:

Այլ սակայն են են և այլ բանք յաղագս հարսանեացն Թէսէոսի, որ ոչն հրապարակեան ի խորանս Թատերաց. որոց

ոչ սկիզբն պարկեշտ ինչ է, և ոչ կատարած՝ բարեբաստիկ: Քանզի և զՆոպքսէ ոմն կէին Տրիզենացի առեն յափշտակեալ նորա. և թէ՝ ապանեալ զՄիննէս և զԿերկիւռնէ՝ բռնի զուգեալ էցէ ընդ դաեբա նոցա, և թէ՝ և ամուսնացեալ ևս էցէ ընդ Պերիթեայ մօրն Ա յասայ. ապա ընդ փերբեբայ և ընդ Իփիկղեանն Յոպայ. և թէ՝ բամբասեալ ևս էցէ, զի՛ ի պատճառս տարփանաց Պանոպեանն Եգղեայ՝ ըստ որում առացաքն՝ ջարաչար և անարդաբար՛ ի բաց արձակեաց նա զՆերիագնէ: Եւ թէ՝ յետ այսր ամենայնի ապա և յափշտակութեամբն Հելինեայ մարտիս պատերազմի եղեց զՆոսիկէ, և անձին խզուեալ տարաշխարհիկ փախուստ առնէր և մահ. զորոց սակաւ մի զկնի պատմեացուք:

Իսկ զայնու ժամանակաւ՝ յորժամ՛ ի շատ մրցանս նահատակէին սրբք քաջք և առաքինիք, նա ինքն Թէսէոս՝ ըստ որում ակնարկէ Հերոդոտոս՝ ոչ ուրեք գտաւ նիզակակից, բայց Ղապլեթեայցն միայն՛ ի մարտ ընդդէմ Յունկաստարկաց: Բայց այլք առեն զնա և ընդ Յասոնէի խաղալ երթալ նիզակակից՛ ի Կողքիս, և՛ ի միասին ընդ Մեղապրոսի տապաստ արկեալ զվարսգն, ուստի և յառակս եղև բանն, եթէ՝ Ո՛չ առանց Թէսէոսի: Եւ թէ՝ ինքնին Թէսէոս ոչ մարտակցի ուրեք կարօտ գտեալ՝ շատ և գեղեցիկ նահատակութիւնս նահատակեցաւ. ուստի և զնմանէ հնչեաց առհասարակ բանն, եթէ՝ Ա՛յլ ոմն Հերակլէս էր:

Ա՛ւ այսոսիկ՝ և Ադրաստոսի գործակից եղև նա ի բառնալ ամիսոփէլ զդիակունս անկելոցն ի Կադմիա. ոչ որպէս Եւրիպիդէս քերթեաց յորջերգութեան իւրում՝ մարտիս պատերազմի յաղթեալ Թեբայեցւոցն, այլ հաշտ առնելով և գաչինս ևս կրելով ընդ նոսա. քանզի և օրինակ զայս պատմեն բազումք: Իսկ Փիղոքորոս ասէ՝ եթէ այն գաչինք առաջինք եղեն վասն բառնալոյ զդիակունսն. սակայն ի Հերակլէայ վասն գրեալ կայ, եթէ Հերակլէս առաջինն եւս ի ձեռս Թշնամեացն զմեռեալս իւրեանց: Ա՛յլ զդէրս զմանս խուժանին ցուցանեն յԵլեւթերիս. իսկ զզօրավարացն՝ մերձ յԵլեւսինա. և զսոյն գարձեալ շնորհս պարտ Թէսէոս Ադրաստոսին: Իսկ հակառակ Եւրիպիդեայ ողբերգութեանն՝ Ոչ-----ր անուանեալ, վկայէ Նաքիւզեայ ողբերգութիւնն՝ որ անուանեալ կոչի Ն-----. յորում քերթողաբար բարբառի մեզ զայսոսիկ Թէսէոս:

Ա՛յլ զբարեկամութիւնն Թէսէոսի հաստատեալ ընդ Պիրիթոսի՝ զայս օրինակ պատմեն: Համբաւ մեծ հնչեալ առհասարակ յաղագս կորովութեան և արութեանն Թեսեայ, կամեցեալ Պիրիթոս ճշդրտել և զվարժ առնուլ արութեան նորա, վարեաց կալաւ ի Մարաթոնայ զանդեայս Թէսէոսի. և լուր առեալ՝ եթէ զինու զարգուպնդեալ գայ Թէսէոս, ոչ ի փախուստ լինել խուճապեցաւ՝ այլ գարձաւ ընդ կռունկն և ընդ առաջ դիմեալ գայր Թէսէոսի: Ընդ

լբրև այր յընկեր հայեցեալ տեսին, և ընդ միմեանց գեղն հիացեալ զարմացան, և ընդ արուեստն քաջութեանն ցնծային, տեղի եւտուն ՚ի կռուոյն. և առաջին Պիրիթոս զալ իւր կարկառեալ առ Թէսէոս, աղեր- սեր զնա՝ զի ինքնին Թէսէոս հարատահա- րութեան անդէնոցն իւրոց նստցի դատաւոր, և ինքն կամակարութեամբ որոյ՝ պատու- հաս զոր միանգամ սահմանեսցէ նա՝ յան- ձին կալցի: Իսկ Թէսէոս միանգամայն և զպատուհասն եթող չնորհեաց նմա, և թե- լադիր ևս եղև նմա՝ բարեկամ իւր լինել և նիզակակից. և այնպէս ապա երդմամբ հաս- տեցին զբարեկամութիւնն:

Ապա յետ այնորիկ յորժամ կին ածէր Պիրիթոս զԱդդամիա, տղաչէաց զԹէսէոս գալ առ ինքն, և յայց ելանել գաւառին, և կենակից կենցաղակից լինել Ղապիթեայց: Դէպ եղև զի և զՅուշկապարիկան՝ այն էն՝ ԿԷՓՓՈՐՈՍ, ՚ի հայկերոյթ անդր հրաւի- րեալ էր Պիրիթոս: Ընդ լբրև ատահա- կեալք պատշտաէին Յուշկապարիկք, և ընդ գինի մոեալք ոչ ժուժկալէին ևս ՚ի կա- նանց, ՚ի վրէժխնդրութիւն բարկութեամբ երդեցան Ղապիթեայք. զկէս ՚ի նոցանէ անդէն հարին ատատակեցին 16, և զկէսն՝ մարտիւ պատերազմի վանեալք պարտեցին. և ապա ուրեմն հանին վարեցին յաշխար- հէն. և էր նոցա յայնժամ մարտակից և նիզակակից Թէսէոս:

Իսկ Հերոդորոս ոչ զայս օրինակ ասէ պատահել այսոցիկ. այլ՝ թէ մարտ պատե-

բազմին գրգռեալ խակ էր յառաջագոյն, և Թէսէոս նիզակակից զօրավիգն հասեալ կայր Ղապլեթայց. և թէ՝ յայնժամ զառաջինն երեսօք ծանեաւ նա զՀերակլէս. զոր և հեռամուտ խակ էր գոանել զնա ՚ի Տրաքինէ՝ ուրանօր հանդարտեալ նստէր այնուհետեւ Հերակլէս ՚ի Թափառական շրջելոյն և ՚ի մրցանաց քաջութեանն: Իսկ հանդիպեալ սոցա միմեանց եղև յայնժամ մեծասէր հիւրամեծարութեամբ և շքով և բազմագէմ ևս գրուատիւք գովելով այր զընկեր իւր: Սակայն լաւ ևս՝ հաւատ ընծայեցուք մեք պատմաբանիցն, որ գրեն՝ եթէ և առէպ առէպ հանդիպեցան սոքա միմեանց. և թէ՝ խնամարկութեամբն Թեսեայ նուիրեալ իւղագլխեցաւ Հերակլէս. և յառաջ քան զիւղագլխութիւնն քաւեալ արքեցաւ՝ ըստ որում պարտ և արժան էր նմա՝ ՚ի պատճառս անքննաբար լինել գործոց նորա:

Ա՛րդ՝ գոլով նա ամաց չինից, որպէս ասէ Եղանիկոս, առևանգեաց զՀելինէ ՚ի տարաժամ հասակի: Ուստի և զմեծապէս վրխակ զայս ուղղագրել կամեցեալ ոմանք՝ ասեն, եթէ ոչ նա լինքն յափշտակեաց զՀելինէ. այլ թէ Խգաս և Լինգէոս յափշտակեալ զնա՝ լինքն յառանդ էառ ՚ի պահել զնա. և ՚ի խնդրել անդ Դիոսկորեանցն 17 զՀելինէ, չետ ՚ի ձեռս նոցա: Կամ թէ՝ որպէս և Ճշմարիտ խակ է՝ Տինդարոս լինքնին յանձն արար նմա զՀելինէ՝ երկուցեալ յԱպոկոնտեանն Ենաստորո-

սէ. այն՝ որ բռնի ձգնէր առնուլ զՀելինէ դէռ ևս ՚ի տիս տղայութեանն:

Իսկ որ ինչ արժանահաւատն է բազում հաստատեալ վկայիւք, այս է: Եկեալ հասին ՚ի Սպարտիա երկոքին նոքա Թէսէոս և Պիրիթոս. և զօրիւրդն՝ որ ՚ի տաճարին Որթիեանն Արտեմեայ կայթա հարկանէր՝ առին յափշտակեցին և վախեան: Իսկ որք զկնի արձակեցանն տաղնապաւ զՀետ ալին դէպ նոցա, իբրև զտեղի կալան, և անդր քան զՏէգեայ վայրն չէղեն նոցա հետամուտ, նոքա յանդորրու այնուհետև՝ անցեալ ընդ սահման Պելոպոննիսեայ, դաշնագիրք եղեն միմեանց՝ զի ոմն ումեք վնճակաւ էցէ Հելինէ, նա կալցէ զնա ՚ի կին. սակայն և այլ ամուսնոյ ՚ի գիւա՝ ընկերին իւրում գործակից լինցի: Զայս կատարեալ ոփսա, ետուն վնճակս, և էլ վնճակն Թէսեայ. նա առեալ կինքն զկոյսն՝ որ չէ էր հարսնացու, ած զնա Աֆիդնէ՝ և զմայրն ևս եգեալ ընդ կուսին՝ յանձն արար ՚ի ձեռս Աֆիդնոսի իւրում բարեկամի, պատուէր տուեալ պահել զնոսա, և գաղտ յամենեցունց ունել զբանն:

Ինքն ապա օժանդակ Պիրիթոսի՝ չոքաւ ընդ նմա Լեպիւռոս վասն Այգուպտեայ գաւառի արքային Մողոսացւոց. այն՝ որ կնոջ իւրում Պերսեփոնէ անուն եգեալ, և դստեր իւրում՝ անուն կոչէ, իսկ շանն՝ անուն կերպէրոս, հրամայեաց ետ տարփածուայ սպանանն՝ մատուիս կուռել ընդ կերպերոսի. զի ո՛ր և պատահեցէ զղազանն՝ նա

կալցի զկոյն: Իսկ իբրև իրազեկ եղև նա
ման Պիրիթոսեանցն, զի ոչ ՚ի խնդրել
ինչ եկեալ էին զաղջիկն, այլ ՚ի յափշտա-
կել, կալաւ զնոսա. և զՊերիթոս սայր ան-
դէն գէշագէշ պատառեալ չանն. իսկ զԹէ-
սէոս առեալ պահէր ՚ի կապանս:

՚Ի ժամանակի առաւ յայմիկ՝ Մէննես-
թէոս որդի Պետէոսի, որ Որնեայ, որ Ե-
րեքթեայ, առաջինն՝ որպէս ասեն՝ ՚ի մար-
դիկ գոն գործել յինքն զժողովուրդն յան-
կուցանել, և ՚ի շնորհս ռամկին խօսել մար-
դահաճութեամբ, զՃոխան քաղաքին գըր-
գռեաց և վառեաց՝ որք և ՚ի վաղնջուց իսկ
դժկամակութեամբ բերէին ընդ Թէսէոս,
և կարծեալ իմն էին այնպէս՝ եթէ զնշխա-
նութիւն և զթագաւորութիւն այնուհետև
բարձեալ Թէսէոս յաղնուականաց աշխար.
հին ըստ առն առն և ըստ տոհմից տոհ-
մից, ՚ի միում անդ քաղաքի խմբեալ զա-
մենեսեան, իբրև նեղքևեալս և իբրև ծա-
ռայս կալեալ էին զնոսա: Ապա խռովեաց
ամբոխեաց և զնաւաժան ռամկին. և Թշնա-
մանէր ևս զնոսա, իբրու այն՝ որ երազով
ազատութեանն յերազանայցեն, իսկ ար-
դեամբք՝ միանգամայն և ՚ի հայրենեաց և
՚ի սրբութեանց անբաժ կացեալ էին. և
զՃոխան ազգային բազմաց և առաքինեաց և
հարազատաց՝ ՚ի մի միայն տէր եկամուտ
և օտարական զանն յառեալ էին:

Ադդ՝ իբրև նա յայտնիկ նկրտէր, սա-
տիկ իմն զայրացոյց ապա զաղմուկ խռո-
վութեանն և մարտ պատեառազմին ՚ի գալ

հասանել անդր Տինդարեանցն. այլ էին՝ և ոչք յայտնի ասեն, եթէ ՚ի Մենեսթէոսէն սադրեալք ՚ի վերայ հասին նոքա անդր: Ա՛յլ նոքա զառաջինն ոչինչ ամենևին հարկ տահարեցին, այլ խնդրէին միայն զքոյրն: Իսկ իբրև զայն լուաւ պատասխանի եառն նոցա քաղաքացիքն, եթէ և բնաւ իսկ ամենևին չգիտեն նոքա՝ ուրանօր քոյր նոցա թողեալ էր, դարձան նոքա ՚ի պատերազմ: Ա՛յլ Ակադեմոս իրազեկ ուսուեք եղեալ իրացն, ՚ի վեր հանէ նոցա՝ եթէ անդ ՅԱ֊փիդնէ դաղտ ՚ի պահեստի կայ քոյրն: Ուս֊ուի և մինչդեռ կէնդանին էր Ակադեմոս, շուք մեծապէս ուսին նմա հանապազ Տին֊դարեանք. և ապա յետ ժամանակաց յոր֊ժամ ստէպ ստէպ արշաւեալ Լակեդեմո֊նացիք ՅԱտտիկէ՝ միանգամայն զամենայն գաւառն հասին քանդեցին, ոչինչ ամե֊նևին ձեռնամուխ եղեն ՅԱկադեմիա ՚ի շը֊նորհս Ակադեմոսին:

Իսկ Դիմաղբոս ասէ, եթէ Եքեմոս և Մարաթոս նիզակակից զօրավիգն ընդ Տին֊դարեանց եկին յայնժամ ՅԱրկադիոյ: ՚ի միոյն՝ Եփեդէ՛ա անուն ընկալաւ՝ որ այժմդ կոչի Ափոդէ՛ա. և ՚ի միւսոյն գար֊ձեալ՝ Մարաթոն յորջորջեցաւ ժողովուրդն. զի սա կամակար՝ իբրև ՚ի պատգամէ խմեմնէ ազգեալ՝ դիմագրաւ ընծայեաց զանձն ՚ի մահ առաջի բանակին:

Ա֊րդ եկեալ հասեալ նոքա ՅԱփիդնէ և մարտիւ պատերազմի վանեալ՝ քանդե֊ցին աւերեցին զվայրն: Անդանօր ասեն ան֊

կեալ և զԱվիւկոս զորդին Սկիրոնիսի, որ նիզակակից էր յայնժամ Դիոսկուրեանցն. յորմէ և տեղի լինէ՛ի սահմանին Մեգարեայ անուանեալ կոչեցաւ Ալիւոս, զի անդ թաղեցաւ մարմին նորա: Իսկ Հերաս պատմէ, եթէ Թէսէոս լինքնին յԱփիդնէ սպան զԱվիւկոս. և՛ի վկայութիւն բանիցն յառաջ բերէ զտողն զայն վասն Ալիւկոսի.

Անդ Թէսէոս՛ի մարտ մտեալ
Լայնատահմանն յԱփիդնէ,
Վարսագեղին վասն Հելինեայ
Տապաստ ըզնա արկանէ:

Այլ չէ՛ լինէ հաւանական, եթէ՛ի հանդիպել անդ լինքնին Թէսէոսի, առեալ էցեն նոքա միանգամայն և զմայրն և զԱփիդնէ:

Ապա՝ իբրև առաւ Ափիդնէ, և բնակիչք Աթենայ լի եղեն ահիւ, հաւանեցուցեալ Մենեսթէոս զժողովուրդն և խելամուտ արար զնոսա՝ զի՛ի նեղութ՛ի քաղաք անդր հիւրասիրաբարութեամբ ընկալցին զՏինդարեանսն. իբրու այն՝ եթէ ընդ Թէսէոսի միայն՛ի վեդ եւեալ էցեն նոքա՝ որ զհարստահարութիւնն զայն գործեաց, իսկ այլ որեւքն նոքա բարեգործք էցեն և պահապանք: Եւ վկայեցին նմա արդիւնք գործոց նոցա: Քանզի և յորժամ ամենայնին միանգամայն սիրեցին Տինդարեանք, ոչինչ այլ խնդրեցին նոքա՝ բայց նուիրական խաղագիտութիւն, իբրև զի և ոչինչ պակաս քան զՀերակլէս նոքա մերձաւորք էցեն քաղաքին.

և անգէն ապա շնորհեցաւ նոցա խնդիրն. և առեալ Ափիդնոս յորդեգիրս ընկալաւ զնոսա՝ ըստ որում Պիւղիոս զՀերակլէս: Այլ և պատիւս դիւցականս ընկալան նոքա, և անուանեալ յորջորջեցան Անոէս. կամ 'ի պատճառս պայմանաց հաշտութեանն. կամ 'ի պատճառս խնամոց և հոգարկութեան նոցա՝ զոր հոգային զի մի վնաս ինչ Թերևս ումեք 'ի քաղաքացւոցն հասցէ 'ի բազմամբոխ զօրականէն՝ որ 'ի նեղլիս անդ 'ի քաղաքն մտեալ էին: Վասնզի Անոէովս էհէն ասեն Հելլենացիք վասն խնամոյ և հոգարկու մարդկանն. և Թերևս դորին աղագաւ և զԹագաւորս կոչեն նոքա Անոէոս: Այլ են՝ և որ ասեն եթէ 'ի պատճառս փայլելոյ աստեղաց նոցա՝ անուանեցան նոքա Անոէոս: Վասնզի զձայնդ Անովն այն ք 'ի վեր, Աստղակեցիք Անէոս անուանեն. և զձայնն՝ Անովհէն, այն ն՝ 'ի վերոյ, կոչեն Անէոսհէն:

Իսկ Եթրա մայրն Թէսէոսի՝ պատմեն՝ եթէ գերի վարեցաւ 'ի Լակեդեմոն, և անդ ապա 'ի Տրոյիա հանդերձ Հելենէաւ. և վկայէ Հոմերոս՝ եթէ Հելենէայ զՀետ չոքաւ Եթրա՝ յասել անդ իւրում 18.

Եթրա Պիտթէոսին դուստր,
Եւ Կլիմենէնէն աչագեղ:

Այլ ոմանք և զայս տող Հոմերեան ոչ ընդունին, ըստ որում և զառասպելաբանութիւնն՝ որ յաղագս Մունիքոսի. զորմէ ասեն՝ եթէ գաղտաբար ծնեալ նա 'ի Դե-

մովնաւէ և 'ի Լաւոդիկեայ՝ անաւ յեղիոն 'ի ձեռս եթրայ։

Ա յլ մանաւոր ինչ և գլխովին տարբերեալ քան յառաջ բերեր վասն եթրայ խորհուս ։ յիւրաքանչիւրոյ երեքտասանեւորդի ի բացն Առաւիկոյ. իբրու եթէ՝ որպէս պատմեն ոմանք՝ զԱղեքսանդր Պարիս 'ի թեսաղիա մարտիւ պատերազմի վանեաց Աքիլէս և Պատրոկղոս մերձ 'ի Սպերքիոն. և եթէ՝ հեկտոր զՏրիզինացւոց քաղաքն կալեալ՝ յաւարի առ, և զեթրա ինքնին վարեաց տարաւ՝ որ անդ թողեալ կայր 'ի պահեստ։ Ա յլ սակայն անբանութիւն յայտնապէս բազում է 'ի բանդ։

Իակ յորժամ Ա յեդոնիւեոս Մողոսեան հիւրընկալեաց առ ինքն զՀերակլէս. և վասն թէսէոսի և Պիրիթոսի ըստ գիպաց երբեմն բանս 'ի մէջ արկանէր, եթէ՝ զինչ ինչ նոքա առ 'ի գործել եկին հասին անդր, և զինչ գարձեալ կրեցին նոքա 'ի յայտնել դաւանացն, կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ Հերակլէս. զի մին այնպէս անարգաբար 'ի մահ մատնեցաւ, և միւսոյն գարձեալ մահ առ դուրս կայ։ Զմոռաւ էած՝ եթէ վասն Պիրիթոսին գանգատել օգուտ և ոչ մի ինչ է այնուհետև. սակայն վասն թէսէոսին աղերսեաց փրկութեան, արժանի համարել տալ նմա զնորն զայն։ Զիջեալ հաւանեցաւ Ա յեդոնիւեոս, և եղոյծ արձակեաց զթէսէոս։ Եւ գարձաւ եկն եմոռ նա ՅԱԹԷնս, քանզի չէ էին բարեկամք նորա նկուն եղեալ գլխովին։ Անդ

Թհսհոս զնուիրական զվայրսն՝ զոր միան-
դամ յառաջագոյն նմա քաղաքն ձօնեալ
էր, զամենայնն միանգամայն առեալ ինքն
նուիրեաց Հերակլեայ. և որ յառաջն Թե-
սէանք կոչէին, անուն եդ նոցա՝ Հերակլէանք,
բայց ՚ի քառից ոմանց՝ որպէս պատմէ մեզ
Փիղոքորոս:

Ապա իբրև անդէն որպէս զառաջինն՝
կամեցաւ Թհսհոս իշխել տիրել և կալ ՚ի
գլուխ քաղաքին, եաւս նա եպիսկոպոսակու-
թիւն և ամբոխ շփոթից. և զորս միանգամ
յառաջագոյն ետ ոչ նա ՚ի քաղաքին առե-
լիս անձին իւրոյ, եդեալ զնոսա՝ զի ընդ ա-
ռելութեանն և լըռութիւն աներկիւղ բար-
ձեալ բերէին. իսկ և ՚ի խուժան ռամկին
ապականութիւն բազում առնէր. զի
փոխանակ լուիկ անչշուկնջ պաշտելոյ նոցա
զհրամայեալն գործ, նոքա ինքնին առաւել
ինդրէին պաշտօն առնուլ: Վասն որոյ իբրև
ձեռնամուխ եղև նա բռնանալ ՚ի վերայ
նոցա, յերկպառակութենէ խուժանին
սանձեալ յետս նահանջեցաւ: Հուսկ ապա
յուսահատ եղեալ յառաջնկայնէն, առեալ
զորդիս իւր արձակեաց Լեւիա առ Եղև-
փոնոր Քաղկոդոնեան: Իսկ ինքն նզովս
կարդացեալ ընդդէմ Աթենացւոց՝ անդա-
նօր ՚ի Գարգեաոս՝ ուր է այժմ առեղին ա-
նուանեալ Արտէրիծ, եւ և նաւեաց ՚ի
Սկիւրոս. իբրև զի՝ բարեկամք իւր էին ընա-
կիչք տեղւոյն՝ որպէս ինքն կարծէր. և զի՝
և կալուածք հայրենիք էին նորա ՚ի կղզւոյն
յայնմիկ. և Թագաւորէր յայնժամ Սկիւ-

բացւոց Նիւկոմիդէս: Իբրև չոգաւ նա առ նա, խնդրեաց զագաթական տալ ի ձեռս իւր, իբրու այն՝ որ անգէն բնաւորս հանդերձեալ էցէ լինել: Իսկ կէսք ասեն՝ եթէ յորդորէր ազաչէր զնա օդնական զօրավիգն իւր լինել ընդդէմ Աթենացւոց: Իսկ Նիւկոմիդէս՝ եթէ իբրև զանգիտեաւ իմն ի փառաց առնն, և եթէ իբրև շնորհս իմն առնելով Մենեսթեայ, առեալ ածէ զԹեսէոս ի բլուրս Լիչ գաւառին, իբրու անդուստ ցուցանել նմա զանդաստանս նորա. և գահավէժ արարեալ զնա ընդ ափսփայն՝ այնպէս սպան զնա: Իսկ կէսք ասեն՝ եթէ Լինքնին անկաւ նա ի գայթակղել ոսկւոյն, յորժամ յետ ընթրեացն ձեմ առեալ ջղջէր՝ որպէս սովորութիւն էր նորա:

Այլ ի ժամուն փոյթ լինչ ումեք ո՛չ եղև վասն մահուն նորա. այլ Թագ կապեաց Աթենացւոցն Մենեսթէոս. իսկ որդիք Թեսէոսի իբրև սոսկականք ոմանք՝ ընդ Եղեփլինորայ նիզակակից չոքան յԵղիւսին: Իսկ իբրև Մենեսթէոս մեռաւ, դարձան եկին նոքա և զաղքայութիւն իւրեանց ըզբռամբ կալան:

Յետ ժամանակաց սպա յորդորեցան Աթենացիք՝ իբրև դիւցազին չուք դնել Թեսէոսի, եթէ ի պատճառս այլ լինչ իրաց, և եթէ գի ի ժամանակի անդ մարտի պատերազմին ի Մարաթոն ընդդէմ Մարաց, բազումք ի զօրականէն համարեցան իմն այնպէս նկատել զառաջք տեսիլն Թեսէոսի գինու զարդու յառաջոյ ձակատուն նա-

հատակեալ դիմեալ՝ի վերայ բարբարոսացն։ Ապա յետ Մարաց պատերազմին առ իշխանապետութեամբն Փեդոնիսի՝ երբև պատրաստեալ հարցանէին Աթենացիք, եթե պատասխանի Պիւթիա, զի զոսկերան Թէսէոսի բարձցեն՝ի տեղւոջէն, և ամփոփեալ պատուականապարապահեցեն առ իւրեանս։ Այլ սակայն կարի դժուարին էր՝ միանգամայն և առնուլ բառնալ զոսկերան, և ձեռնարկել՝ի վերայ կալ գերեզմանին. քանզի անընդելք յոյժ և վայրապատուհք էին բարբարոսքն բնակիչք վայրացն։ Իսկ ապա յորժամ տիրեաց կալաւ Կիմոն զկղզին զայն, ըստ որում՝ի վարս նորա գրեալ կայ, պատուասիրէր նա ինքնին գտանել զանդն. յայնժամ արծիւ մի՝ որպէս առեն՝ կացեալ՝ի տեղի բլրաձև՝ կոցաւն առեալ հարկանէր զվայրն, և մագլօքն փորէր և պեղէր։ Ընդ Կիմոն աստուածային ինն գոգացեալ ազդմամբ՝ խնդրատուս եղեալ բանին, բրեաց զվայրն. և գտանէ անդանօր տապան վիթխարի մարմնոյ, և առ նմա տէգ պղնձի և սուր։ Առեալ Կիմոն զայնոսիկ՝ի նաւ եդաւ և տարեալ յԱթէնս, ցնծացեալ Աթենացիք՝ մեծահանդէս փառօք և՝ի նուէրս զոհից ընկալան զնա, երբոր այն թէ ինքնին իսկ Թէսէոսն՝ի քաղաք անդր դարձ արարեալ կայ։ և եդեալ կայ՝ի քաղաքամիջի անդ մերձ՝ի վայրն՝ ուր է այժմ ըմբշաց վարժարանն։ Եւ է այն ապաստանարան ծառայից և ամենայն հնչացելոց անձանց և հարստահարելոցն՝ի ձոխից. ըստ

որում և Թէսէոս ինքնին վերակացու պաշտօնեայն էր նոցա և օդնական զօրավիգն, և մարդասիրապէս ժողովէը լսէր զինդրուածս վշտաւոր մարդկանն: Ա յլ և զոհ մեծ կատարեն նմա յուԹերորդումն Պիւանէպսիոնէի, յորում ընդ պատանեկացն դարձաւ եկն նա՛ի Կրետեայ: Հանդերձ այսու՝ և յայլ ևս ուԹերորդս պատուեն զնա. կամ՝ զի զառաջինն նա՛ի Տրիզենեայ եկն եհաս յուԹերորդի Եկատոմբէոնէին, որպէս պատմէ Դիոդորոս Պերիպացի, կամ զի առաւել քան զայլս՛ի Թուոց՝ զայս Թիւ Ճահաւորագոյնս համարէին Թէսէոսի՝ զոր՛ի Պոսիդոնէ ծնեալ համբաւէին. քանզի և Պոսիդոնի պաշտօն մատուցանեն յուԹերորդսն: Քանզի ուԹերորդ Թիւդ խորհնարդ առաջին դոլով՛ի զոյդ Թուոց, և կրկնակին՝ առաջին քառակուսւոյն 9, զհաստատութիւնն և զանկակից կորովութիւնն՛ի դէմս բերէ զայսր գիւց, զոր Աֆրւդիտ յարանուանեմք և Ղէօֆհոն, այն է՝ Ընտանեաի և Երիտասարդ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Սոսկաց Սինէկիոսին, որպէս վերագոյնդ յիշեցաք, աւագ այր Հռովմայեցի. որում ընծայէ Պլուտարքոս զմատենագրութիւնն զայս:

2. Հոմերոս. Եղիական. Հագնեցք. Ի:

3. Իբրու եթէ անուանդ թէսևս, առեալ ւոչէ՛ ի յն. բառէն Դիէ՛ոէ, որ նշանակէ՝ Ամէ՛ոէէւ. դնել. միանգամայն և՝ Որէէփէւ:

4. Պարրասիոս երևելի նկարիչ, որ կենդանագրեաց զԹէսևս, և մինչև՛ ի ժամանակս Պլինիոսի կայր նկարագիրն պահեալ՛ ի Հռոմ՛ ի կապիտոլիոնի: Իսկ Սիլանիոս էր քանդակագործ պղնձոյ:

5. Ոչք յանցանս մեծ յանցուցեալ էին, կամակար ինքնին տարաշխարհս հատեալ՝ վտարանդի գնային՛ ի հայրենի աշխարհէն՝ ի քաւութիւն մեղաց իւրեանց:

6. Ա յս է՝ թէքիչ Թեղուչից: Քանզի բըռնութեամբ Թեքեալ զծայրս ծառոց, և՛ ի նոսա կապեալ զանդամս մարդկանն՝ զոր ձերբակալ առնէր, և Թողեալ ապա ազատ զծառան՝ անդամ անդամ յոչէր զմարդիկն:

7. Յունական բառն է, Στοιβή՝. որ բաց յայլոց նշանակութեանց, նշանակէ և՝ Ցրէ՛, որ և՝ Ցիրէ:

8. Ասեն՝ եթէ այս մարդախոշոշ Պրոկ-
րուստէս, այր հսկայ վիթխարի, ունէր կաղ-
մեալ անկողինս բազուսն. և՝ ի հիւրոց ան-
ոմ իւրոց զոր միանգամ տեսանէր մեծա-
հասակս, ընկողմեսեր ցուցանէր՝ ի փոքրիկ ան-
կողնի, և զարտաքոյ անկողնոյն մնացեալ
անդամս զառնն քշտէր հատանէր: Իսկ փոք-
րահասակացն հրամայէր անկողնին մեծ, և
գերարանօք անուօք ձգտէր պարզէր զսրունս
զառնն՝ մինչև հաւասարէր՝ ի չափ անկող-
նոյն:

9. Ի դէպ գայ ամիա՝ ամոյն Ագոս-
տոսի:

10. Քանզի Լ՚ուվ, ի յն. է ժողո-
վուրդ. էր միանգամայն և անուն մասնաւո-
առնն:

11. Ա յս մատեան Աբիատոտէլի առ
մեօք չիք ուրեք՝ ի միջի:

12. Սակայն և կրկին են Մինոսք՝ ար-
քայք Կրետայ: Մին՝ որդի Արամազդայ և
Եվրոպայ. և միւսն՝ Թոռն նորա և որդի
Լիկաստոսի: Առաջինն՝ արքայ եկաց յոյժ
արդարակորով. իսկ երկրորդն էր բռնաւոր:

13, Քանզի Նոխազ, ի յն, է՝ Դրաչօ:

14. Ի Քերթուածն Ոդիսականին:

15. Ա յս է՝ իբրև ընդ սմս հազար:

16. Ա՛յս է յառաջ բերեալն՝ ի խոր. Գլուխ Բ. 63. " Եւ անդ էր տեսանել....
զՂապլեթեայսն և զՅուշկապարիկացն կռիւս
՝ի վերայ Պելլեթեայ հարսանեացն ,, :

17. Ա յն են Երկուորեակքն՝ Պոլիւքս
և Կաստոր, եղբարք Հելենեայ:

18. Հոմերոս. Եղիական. Հատ. Գ:

19. Ա յս Թուոցդ ըղձասլատուամ խորհուրդ առ հեթանոսս, յառաջ եկեալ մանաւանդ 'ի սկզբանց աղանդոյն Պլեթադորայ:

ՀՌՈՄՈՒԼՈՍ

Ա՛ԵՕԱՀՈՒՔ անուն Հռովմայ և առ ամենայն մարդիկ գերահամբաւեաւն վառօք, եթէ յումմէ՞ արդեօք և յի՞նչ պատճառս եղաւ քաղաքին, ոչինչ միաբան առանդին մատենագիրք։ Քանզի կէսք ասեն, եթէ Պելասգոսք շուրջ եկեալ յածեալ ընդ դաւառս գաւառս սիերզերաց, և մարդիկ բազում՝ նկուն արարեալ ընդ ձեռամբ իւրեանց, անդանօր հաստեալ բնակուԹիւն կալեալ լցեն. և զի կորովիք էին՝ ի զինս, այնպէս անուանեցին զքաղաքն 1։ Խակ կէսք դարձեալ՝ եթէ յառնուլ քաղաքին Տրոյեայ, փախստեայք ոմանք նաւս՝ ի ձեռս բերեալք, վարեալք՝ ի բռնուԹենէ հողմոցն՝ անկան՝ ի Տիւրրենիա, և հասին կալան ըզգեան Տիբերիս. այլ քանզի կանայք նոցա կարի լիճն վշտացեալք էին և մեծապէս տաղտկացեալք առ՝ ի ծովէն, մի ոմն՝ ի նոցանէն՝ որ զարմիւ քաջառնմիկ և հանճարով առաւելեալ երևէր քան զամենեսին՝ անուն նորա Հռովմէ, Թելադիր էղև

այլոցն հուր արկանել ՚ի նաւսն : Եւ իբրև զայս արարին նոքա , զառաջինն ՚ի սրամբ առնէին բարկութեան երդեցան ազքն . այլ ապա հարկաւորեալք ակամայ , իբրև տուն ընակութեան կալան առ սահմանօքն Պալլանտեայ , և ՚ի տուղ ժամանակի արտաքոյ յուսոյ ակնկալութեանն քաջապէս յաջողեցան յամենայնի , և քաջաբերութեան ևս երկրին զիւրացն առնին , և ՚ի գաւառականաց անտի հիւրընկալութիւն տեսին , ապա այնուհետև ոչ միայն շուք և պատիւ ընծայեցին Հռովմեայ , այլ և զքաղաքն գվնովին՝ իբրև պատճառք նորա՝ յանուն նորա կոչեցին : Յայնց ժամանակաց հետէ ասեն՝ կալեալ տվողութիւն , զի կանայք զաղգակից իւրեանց և զարս իւրեանց ողջագուրեն ՚ի համբոյր բերանոյ . քանզի և կանայք յայնժամ՝ յորժամ հուր ՚ի նաւսն հարին՝ զայնօրինակ ողջագուրեցին զարս իւրեանց և խաղաղասիրեցան և յողոք խոնարհեցան նոցա և զգուտնութիւն բարկութեն նոցա շնջուցին :

Իսկ այլք ասեն՝ եթէ Հռովմէ գուստր Խոտղոսի և Լեւքարեայ . և այլք դարձեալ՝ եթէ գուստր Տելեփոսի Հերակլեան՝ հարսնացեալն Էնէասայ . իսկ այլք դարձեալ՝ եթէ գուստր Ասքանիոսի որդւոյն Էնէասայ , անուն եդին Հռովմայ : Եւ կէսք՝ եթէ Ռոմանոս որդին Ոդիսեայ և Կիրկեայ շինեաց զքաղաքն . և կէսք դարձեալ՝ եթէ Հռովմոս Խամեթիոնեան՝ զոր ՚ի Տրոյեայ անդր առաքեաց Դիոմիդէս . և կէսք՝ եթէ

Հռոմոս Լատինացւոց բռնաւորն, այն՝ որ վանեաց զՏիւրբենացիս, որք ի Թեսալեայ եկեալ հասին ի Լիպիա, և ի Լիպիոյ գարձեալ յԻտալիա:

Ալ ասկայն և ոչ նոքա, որք միանգամ կրաւացի ևս բանիւ յայտնի առնեն՝ եթէ Հռոմուլոս ինքնին գլխովին ետ զանուն քաղաքին, միաբան ինչ են յաղագս ծագման նորա: Քանզի կէսք ասեն՝ եթէ որդի գոլով նա Էնէասայ և Փորբանեանն Դեքսիթեայ՝ ի տես ապստամբութեանն ածաւ Իտալիա ի միասին ընդ եղբօր իւրում Հռեմոսի: Եւ այն ինչ յորդեալ զերեալ գայր գետն, այլք ի կուրծքն ջրասոյզ կորեան: Իսկ յորում հանգուցեալ կային այս ապստամբք՝ հեզնիկ լինի յառաջ վարեալ կուրն՝ եմուտ ի քաղցրասիւդ խաղ մի գետոյն, և արտաքոյ ակնկալութեան փրկեաց զմանկունսն. և ապա յանուն սոցա անուանեցաւ Հռոմ: Եւ կէսք գարձեալ՝ եթէ Հռոմէ գուստր կնոջն Տրոյացւոյ՝ որ հարաւնացաւ Լատինոսին Տեղեմաքեան, ծնաւ զՀռոմուլոս: Եւ այլք գարձեալ՝ եթէ Եւիւլիա գուստր Էնէասայ և Լաւինեայ՝ մերեալ առ Արէս ծնաւ զՀռոմուլոս:

Իսկ այլք գարձեալ՝ կարի առասպելեաց առասպելս չաղխտղիեն վասն ծննդեան նորա: Խօսի ինն դիւցական՝ ասեն՝ երևուրթացեալ ի տան Տարքետիոսի արքային Ալբայեցւոց՝ այր եղեռնաւոր և անագորոյն: Քանզի ի վառարանէ անտի տանն՝ ասեն՝ ի վեր կանգնեցաւ անգամ սեթական. և

այնպէս կայր մնայր նա և երևէր զաւուրս բազումս : Եւ էր անդ ի Տիւրրենիա պատգամախօս Տէթիս, յորմէ պատգամ այսպիսի ելանէր առ Տարքետիոս, զի մի ոմն ի կուսից մեռեալ խառնեսցի ընդ խօլականին ընդ այնմիկ . և ի նմանէ ապա ծնանիցի զաւակ՝ առաքինութեամբ հոյակապ և բախտիւ և կորովութեամբ քաջութեամբ գերաբեռն : Արդ իբրև գուշակութիւն զայս ի վեր եհան Տարքետիոս միւսմ ումեք ի գաւերաց իւրոց, և հրամայեաց նմա մնալ զուգել ընդ խօլականին ընդ այնմիկ, նա ունչս արարեալ բանին՝ փոխանակ իւր արձակեաց ի գործն զի ոք ի նաժշտացն : Տարքետիոս երազեկ եղեալ բանին՝ ծանրացաւսումն եղև . առ կալաւ և կապեաց զերկոսին միանգամայն և կամէր ի մահ մատնել զնոսա : Ա՛յլ յերազի ի քուն երևեալ նմա Վէստա՝ կարձեաց զձեռն նորա ի սպանութենէն, և հրամայէր տալ օրիորդացն բանտարկելոց ոսոհայն մի յանկանել . զի յորժամ կատարեսցեն նոքա զանկուածն, յայնժամ ապա առեալ տացէ զնոսա ի հարսանիս : Արդ՝ նոքա զցերեկ նստեալ անկանէին . իսկ այլք ի կանանց ի հրամանէն Տարքետիոսի եկեալ զցայգ՝ քակէին զոսոհայնն : Իսկ յորժամ ի խօլականէ անուն ծնաւ նաժիշտն երկուորեակս, առեալ զնոսա Տարքետիոս էա ի ձեռս Տերատիոսի ուրուճն՝ հրամայեալ նմա ի մահ մատնել զողջոյն : Իսկ նա մերձ ի գետն տարեալ՝ անդէն թողոյր զնո-

կոնան. անդանօր ապա գայլ մի մատակ գայր և գնայր և դիեցուցանէր զնոսա. և ազգ ազգ թռչնոց դարձեալ կերակրիկս բարձեալ բերէին և՝ ի բերան գնէին մանկանցն: Մինչև մի ոմն յանդէորդաց տեսեալ զայն և հիացեալ պատչացեալ ընդբանն, համարձակեցաւ գնաց մօտ և եբարձ զմանկիկան: Եւ այսպէս ապա փրկեալ նոքա, անան և զարդացան, և՝ ի վերայ դիմեալ Տարքետիոսի՝ պատուեցին զնա: Արդ զայսոսիկ Պրոմաթիոս ոմն վիպէ, որ զինաւելացուց պատմութիւնն դրեաց:

Այլ որ ինչ միանգամ արժանահաւատ պատմութիւնն է և բազում հաստատեալ վկայիւք, զգլուխս բանիցն հատընտիր՝ ի լոյս ընծայեաց առաջին առ Հելլենացիս Դիոկղէս Պեպարեթացի, որում և Փաբիոս Պիկտովը՝ ի բազմադէմ մատունն զհետ երթայ: Եւ Թէպէտ և յայսոսիկ գարձեալ տարբերեալ լինեն մատենագիրք, սակայն զի տպաւորագոյնս ինչ առասցուք մեք, այսպիսի ինչ է:

՝Ի սերնդոց անտի Էնէասայ՝ որ Թագկապեցին Ալբա, յերկուս եղբարս՝ ի Նումիտոր և յԱմուլիոս էջ պայազատութիւն ազգայութեն: Արդ՝ Ամուլիոս զամ ժառանգութիւն իւրեանց յերկուս բաժանեալ մատունս, և իբրև՝ ի լուծս իմն կշռոց կշռեալ զազգայութեն՝ ընդ ամենայն գանձուցն և ընչից ածելոցն՝ ի Տրոյեոյ, Նումիտոր ընտրեաց և յինքն առ զազգայութեն: Իսկ Ամուլիոս զգանձան առեալ մեծրեալ,

և նոքօք ապա Ձոխաբար զօրացեալ առա-
ւել քան զնուիրսոր, հեշտեաւ այնուհե-
տև զարքայութիւնն մերկեաց ի նմանէ. այլ
զանգիտեաւ՝ եթէ ի գտտերէ անտի նորա
Թերևս եղիցին մանկունք, առեալ նուի-
րեաց զօրիորդն ի քրմուհի Վեստեայ, որ-
պէս զի միշտ անապր և կուսութեամբ վա-
րեսցէ նա զկեանան. և անուանեն զնա կէսք
Իլիաս, և կէսք՝ Ռէա, և կէսք դարձեալ՝
Սիլվիա: Իսկ յետ ոչ բազում ինչ ժամա-
նակաց՝ արտաքոյ սահմանի օրինաց Վես-
տեանցն՝ առակեցաւ նա յոլն գոլ: Եւ զի
մի դժոխքմբեր ինչ կիրս կրեսցէ նա, Ան-
Թովս գուստր արքային յողոք անկաւ հօրն
և խնդրեաց առ զնա: Սակայն եդաւ նա ի
պահեստի՝ կեանս վարել անդ մինակեաց
ամենևին, զի մի Թերևս գտցէ յԱմուլիո-
սէն ծննդեան նա: Եւ ապա ծնաւ նա որ-
դիս երկու՝ հասակաւ և գեղով պատչելա-
հրաշս: Յայսմանէ առաւել ևս զահի հա-
րեալ Ամուլիոս, հրամայեաց պաշտօնէին
առնուլ բառնալ զտղայն և ընկենուլ ի
բաց: Եւ էր անուն պաշտօնէին Փաստիւ-
ղոս՝ որպէս ասեն ումանք. իսկ այլք եթէ
ոչ սորա, այլ այնորիկ՝ որ ապա ի բաց ե-
բարձ զմանկունսն: Արդ՝ եդեալ նա զտը-
ղայն ի կուրն, էջ ի գետ անդր՝ գետա-
վեժ առնել զնոսա. այլ տեսեալ զի լցեալ
գայր դարիւ և դարիւ և զայրացեալ յոյժ,
երկեաւ գնալ մօտ. եդ զնոսա մերձ առ
ափամբն, և դարձաւ յետս: Ապա եկեալ
զելեալ գետոյն, և ի վերայ հոսանաց իւ-

րոց առեալ զկուրն՝ հեզիկ բարձեալ ած
եբեր ՚ի վայր մի հանդարտիկ, զոր այժմ
կոչեն՝ Կերմանոս. իսկ ՚ի նախնումն՝ Գեր-
մանոս, որպէս հաւանեալս եմ. քանզի և
զերզբարսն անուանեն նոքա՝ Գերմանոս: Եւ
էր մերձ ՚ի վայրն մոլաթզենի, զոր Ռո-
նաչեան կոչեն, կամ ՚ի պատճառս Հո-
մուլոսի՝ որպէս համարին բազումք. կամ
զի որոճողք յանասնոց անդանօր ընդ հո-
վանեաւն պատսակէին ՚ի միջօրէի 2. կամ
թէ յաւէտ՝ զի անդ սանդխացք եղեն սը-
զայքն. քանզի զսկինան՝ Ռոմա անուանէին
հինք. և զսաստուածուհի զոմն կարծեալ
վերակացու սննդեան տղայոց՝ անուանեն
Ռոմիլիա. և զոհ կատարեն նմա պարկե-
ցացեալ ՚ի գինւոյ, և ՚ի ձօնան՝ նուիրեն
նմա կաթն: Իսկ մինչդեռ անդ անկեալ
կային մանկունքն, պատմեն՝ եթէ գայլ մի
մատակ դիւեցուցանէր զնոսա, և վայրափոր
թռչունն անդէն մերձ նստէր ՚ի սնուցա-
նել և ՚ի պահպանել զնոսա: Եւ համարին
ինն այնպէս, եթէ այս կենդանիք՝ Արեսի
լցեն նուիրականք: Իսկ զվայրափոր թըռ-
չունն առաւել յարգեն և պատուեն Լա-
տինացիք. ուստի և մօրն մանկանց ոչ դուշ-
նաքեայ ինչ հաւատ ընծայեցին, որ ասէր
և հաստատէր՝ եթէ յԱրեսէն ծնաւ նա:
Թէպէտ և ասեն՝ եթէ խաբեալ նա համա-
րեցաւ այնպէս. քանզի յԱմուլիոսէ պըղ-
ծեցաւ կոյսն, որ զինու զարդու երևեալ
նմա՝ լկեաց զնա: Իսկ կէսք ասեն՝ եթէ
անուն դայեկին յաղագս համաձայնու-

թեանն տեղի ետ համբաւոյն առասպել զրուցաց: Քանզի Լաւինք կոչեն Լաւինք ոչ միայն ի գաղանաց զգայլն մատակ, այլ և զբոզն՝ ի կանանց. և թէ՝ յայսպէս սեաց ասեն էր և կինն փաստիւղոսի՝ որ անոյց զմանկունսն. բայց անուն էր կնոջն՝ Ակկա Լաւրենտիա: Եւ սմա դարձեալ զոհ կատարեն Հռովմայեցիք. և ձօն նմա նուիրէ յամենեսեան Ապրիլի քուրմն Արեսի, և անուն կոչեն տօնին՝ Լուբէնտիա:

Իսկ և զայլ ումն Լաւրենտիա պատուեն նոքա վասն պատճառիս այսորիկ: Աբելածուն տաճարին Հերակլեայ ձանձրացեալ երբեմն՝ որպէս կարծեմ՝ ի պարապոյդ, ննջեցեալ, առաջի եդ դիցն նարտս արկանել. պայման եդեալ՝ զի եթէ յաղթեսցէ ինքն, տացեն նմա դիքն պարգեւս. ապա եթէ յաղթեսցի, սեղան մեծահաց պատրաստեսցէ նա դիցն, միանգամայն և կին գեղաւոր՝ անկոյնոյ նորա: Զայս պայման եդեալ, արկ քուեայ վասն դիցն, արկ դարձեալ և վասն իւր. և յաղթեալ գտաւ այրն: Ապա զգաշնն անդրժելի պահեալ, և իրաւացի ևս գտեալ հատուցանել զպայմանն, ընթրիս մի պատրաստեաց եդ առաջի դիցն. և զԼաւրենտիա զումն ջքնաղագեղ՝ կոյս մարմնով՝ ի վարձու կալեալ հրաւիրեաց յընթրիսն, և անկողին մի ևս արկ ձգեաց՝ ի տաճարի անդ. և յետ ընթրեացն առ վաղեաց՝ ի նեղըս զկոյսն, զի մոցեն առ նա դիքն: Եւ ասեն ևս՝ եթէ մնոյն դիքն առ կինն, և հրամայեցին ևս

նմա՝ զի ընդ առաւօտն յարուցեալ գնաց՝ ցէ՛ի հրապարակ անդր, և որ առաջինն պատահեսցէ նմա, համբոյր ողջունի տուեալ նմա՝ բարեկամ իւր արասցէ զնա: Արդ եկին եւ ընդ առաջ Լաւրենտիայ այր ոմն՛ի քաղաքացւոց անուն՝ հին աւուրց հասակաւ՝ ընչաւէտ և բազմահարուստ, և այր անորդի, քանզի անկին կեանս վարեալ էր, անուն նորա Տարրուտիոս: Սա ծանեաւ զՀաւրենտիա, և սիրեաց զնա, և՛ի մեռանել իւրում ետ զնա ժառանգ բազմամբեր և պատուական գոյից. յորոց և բազմագոյն մասամբ՝ կտակաւ ետ պարգեւեաց Լաւրենտիա ժողովրդեան: Սա այս Լաւրենտիա՝ ասեն՝ փառաց մեծաց հասեալ այնուհետեւ, և դից սիրելի համբաւեալ՛ի ժողովրդեան, յանկարծակի իմն աներեւոյթ եղև՛ի նմին իսկ՛ի տեղւոջն՝ յորում՝ անկեալ թաղեալ կայր առաջինն այն Լաւրենտիա: Եւ կոչեն այսօր զտեղին զայն՝ Վ Է Ս Տ Ա Ս. քանզի յորժամ ստէպ ստէպ ղեղեալ ողողէ գետն, ընդ հուն տեղւոյս այսորիկ անցանեն գան նաւակօք՛ի հրապարակ անդր. և զայսօրինակ անցս կոչեն նոքա՝ Վ Է Ս Տ Ա Ս: Իսկ կէսք ասեն՝ եթէ ողբ միանգամ տեսարանս իմն խաղոց առնէին ժողովրդեան, ՛ի տեղւոջէ անտի սկսեալ՝ առագաստիւք ոմանք արկեալ պատէին զվայրն, մինչև յանցս Ճանապարհին՝ որ՛ի հրապարակէ անտի հանէր՛ի ձիերն Թասցան. իսկ զառագաստսն՝ Վ Է Ս Տ Ա Ս անուանեն Հռովմայեցիք: Ւան այսոցիկ ապա

երկրորդս այս Լաւրենտիա պատիւ առնու ի Հռովմայեցւոց:

Ա՛յլ փաստուղոս խոզարածն արքայի գալը ի ծածուկ յամենեցուն ջոքաւ ե. բարձ զմանկունսն: Իսկ այլք ոմանք առա. ւել ինն հաւանականս ասեն, եթէ գիտու. թեամբ նորուն իսկ Նումիտորի կատարե. ցան խրքն. որ և ի ծածուկ տայր տանել նոցա կերակուրս՝ որք անուցանէին զման. կունսն: Եւ ասեն ևս եթէ և գիրս՝ դնա. ցեալ ի Գաբիա՝ ուսան վարժեցան ման. կունքն, և այլ ևս գպրութիւնս՝ որ միանգամ պիտանացուք էին քաղաքի մանկանց: Եւ պատմեն ևս՝ եթէ անուանեցան Հռո. մուղոս և Հռեմոս՝ ի սահանց, քանզի տե. սան նոքա դիւել զդազանն զայն: Իսկ քաջ առոյգ կերպարան մարմնոց նոցա՝ անդրա. մին ի տղայ սիրոյն աւարառահասակ չափովն և թիկնաւէտ գեղոյն՝ յայտնի ի դէմս բե. րէր զբոյս բարուց նոցա: Ա՛յլ իբրև աճեալ զարգացան՝ երկոքին միանգամայն գտան քաջասիրտք և կորովիք, և ի դէպս գժուա. րինս արիականք գլխովին և դիմագրաւք ան. վանելիք: Ա՛յլ Թուէր Հռոմուղոս առա. ւելեալ ինն հանճարով, և խոհականութի. ունել քաղաքական. յարածել անդ իւ. րում և յորս ելանել բարակօք, գարձեալ և ի կենակից քաղաքավարութեան իւրում ընդ մերձաւորս՝ մեծ և գեղեցիկ կարծիս վասն անձին ի նեղբս ընծայէր. որպէս զի և ի հրամայել մանաւանդ անդասին ի բա. նութենէն ծնեալ էջէ, քան ի հնազան.

դել: Ապա այսորիկ և յոյժ սիրելիք էին նոքա յաչս հաւատարիցն իւրեանց և խոնարհագունիցն. իսկ զվերակացուան և զառաքելական արքունի և զհօտապետան առ ոչինչ համարէին, իբրու այն՝ որ ոչինչ արդեօք յատաքինութեան մասին զնոքխիքք գերազանցեալ էին. ոչ սպառնալեաց էին նոցա երեսս առնէին և ոչ բարկութեան նոցա: Դեգերեալ կային հանապազ՝ ի վարժս և՝ ի սիրուելիութիւնս ազատականս. պարապորդ կեանք և որ առանց վաստակոցն՝ չէր առնոսա համարեալ կեանք վայելուչ. այլ որ ըմբշաց մարզքն էին և գազանաց որսք և ընթացից արշաւանք և վանել աւազակաց և սպանութիւն գողոց և՝ ի բռնութենէ փրկութիւն զրկելոց: Ապա վանն այսոցիկ ամենայնի՝ առ հասարակ համբաւեցան նոքա մեծապէս:

Էր երբեմն՝ զի կապ և կռիւ յուզեալ ընդ անդէորդան Նուամիտորի և ընդ Ամուլիոսին, և՝ ի վարել յափշտակել Նուամիտորեանց զնասունն, ոչինչ ժուժեալ զտեղի կալան պատանիքն. յարեան հարուածս եդին՝ ի վերայ նոցա և՝ ի փախուստ դարձուցին զնոսա, և հասին առին շատ ինչ յաւարէ անտի նոցա, և սրտմտութեան Նուամիտորին վոյթ ինչ չարարին: Ընդունին ժողովէին առ իւրեանս բազմութիւն յաղքատ մարդկանէն և զբազումս ևս՝ ի ծառայից, և լծէին կէց իւիք իսորհրդոց յանդգնութեան կարծիս վասն անձանց՝ ի նեղութս տային:

Իսկ երբեմն՝ յոյժամ Հռոմուլոս զբա-

ղեալ էր ՚ի զոհագործութեան իւրում՝ (և քանզի էր նա անձնատուր ՚ի բանս զոհից և գուշակութեանց), հովիւքն Նումիտորի ՚ի վերայ գիմեալ Հռեմոսի՝ որ սակաւ արամբք երթայր ուրեք, ՚ի վեդ եկին և սկան կռուել: Անդ երբեմն յերկոցունց ևս կողմանց հարուածք յաճախեցին և վէրք, յաղթական գոան Նումիտորեանք, և ձերբակալ արարին կենդանի զՀռեմոս: Երբեմն առեալ տարան զնա առ Նումիտոր և սկսան ամբաստան լինել զնմանէ, ոչինչ կամեցաւ նա պատուհասել զնա՝ երկուցեալ յԱմուլիոսէն՝ զի այր խիստ էր. վասն որոյ ինքնին եկեալ առ նա՝ խնդրեր զատուստան առնել, զի եղբայր գոլով ինքն արքային՝ Թըշնամանեցաւ ՚ի ծառայից արքային: Անդ ՚ի միասին և Ալբայեցիք սրտմտեալ էին, իբրու այն թէ յանիրաւի Թշնամանեցաւ ՚ի նոցանէն Նումիտոր. ուստի և Ամուլիոս զի՛ջեալ՝ եառ ՚ի ձեռս Նումիտորի զՀռեմոս՝ զի նա ինքնին զատեսցի զնա: Երբեմն առ զնա Նումիտոր և եկն ՚ի տուն, հիացեալ զարմացեալ կայր ընդ կերպարան մարմնոյ պատանւոյն, զի հասակաւ գեղովն և կորովու Թեամբն գերազանցեալ էր զամենեքումբք, գիտէր նկատէր և ՚ի դէմս անդ նորա զքաջալերութիւն և զյանձնառաստանութիւն ոգւոյն, միանգամայն և զարիութիւնն անվհեր և անսասանելի յառաջնկայ կիրսն. լուեալ և զգործս նահատակութեան նորա՝ զուգահաւասար պատկերի կերպարանացն նորա, իսկ որ մեծն է՝ որպէս հաւա-

նեալս եմ՝ դից ինքնին մերձ կալով նմա յայնժամ և զսկիզբն առնելով վեհագու-նիցն լրաց, չարժեցաւ Նումիտոր հետա-մուտ լինել ճշմարտութեանն. վասն որոյ և հարցանէր՝ եթէ ո՞ք էցէ նա, և զիարդ ծնեալ էցէ. և աղու ձայնիւն, և հեզաբար և մարդասէր ակնարկութեամբ աչացն՝ վըս-տահացուցանէր և յուսոյ քաջալերը տայր Հռեմոսին: Իսկ նա քաջասիրտս սկսաւ խօ-սել յանդիման և ասէ.

„Ընդունէ արդեօք ծածկեցից ես 'ի քէն. քանզի Թագաւոր՝ դու ինձ առաւել երևիս՝ քան զԱմուլիոս: Քանզի լսես և հարցանես խնդրես, մինչդեռ քո պատուհասեալ էցէ. իսկ նա անքննաբար ետ զիս 'ի ձեռս քո: Մեք զառաջինն՝ զմեզ ինքեանս պաշտօ-նէից արքային Փաստիւղոսի և Լաւրենտիայ հաւատացաք լինել որդիս. և եմք մեք եր-կուորեակք: Ընդ քանզի ամբաստան զմէնջ եղեն առաջի քո, և զլսպարտութիւն առա-դիկ պաշտարեաց զմեզ, և օրհաս մահուն առ դուրս կայ, մեծամեծք են այսուհետև լուրքն վասն անձանց մերոց: Իսկ թէ հա-ւատարիմք էցեն այդոքիկ, վտանգդ առա-ջիկայ ճշդրտել հանգերձեալ է՝ որպէս ինձ թուի: Քանզի 'ի գաղտնեաց իմն և յան-թարգմանելեաց սակի ասեն զլղութիւն մեր. իսկ անուանդ մեր և կաճենաձուձն լի-նել՝ նոր և չքնաղ և օտար 'ի նորածին ման-կանց: Թռչունք և գազանք՝ որոց միանգամ առաջի արկաք մեք՝ նոքին եկեալ անուցին զմեզ, մանաւանդ գայլ մատակ և փայտ-

վոր Թռչուն կերակրիկս բերեալ մեզ, յոր-
ժամ ՚ի կուր մի անկեալ կայաք առ մեծ
գետոյն: Կայ մնայ տակաւին կուրն, և ողջ
է՝ պղնձի պատեալ պահանդօք. և տարք
՚ի նմա խեցբեկք քանդակեալ կան, որք
նշանակք անպիտանք արդեօք լինիցին յա-
պայս ծնողաց մերոյ՝ ՚ի կորնչել անդ մե-
րոմ՚՚:

Նուաիտոր ՚ի բանից տասն յայսցանէ՝
միանգամայն և ՚ի գիտից գիտակի պատա-
նեան զժամանակ երայն ՚ի կշիռ բերեալ,
ոչինչ անհաճ եղաներ ՚ի գերեզիկ յուսոյն.
սակայն հոգայր տառապեր՝ զի՞րդ լինքն բա-
ւական էցէ միայն ընդ միայն իւսեալ վան
երացս այսոցիկ ընդ դատերն. քանզի տա-
կաւին ՚ի խիտ արգելանս փակեալ կայր:

Իակ Փաստիւղոս լուեալ եթէ ըմբռնե-
ցաւ Հռեմոս և մատնեցաւ, աղաչէր զՀու-
մուլոս՝ օգնական զօրավիգն լինել. և յայն
ժամ ասպա յայտ յանդիման ողջոյն ՚ի վեր
եհան նմա զծնունդ նորա. քանզի յառաջն
ակնարկի նմին և ընդ քօղով այնչափ լինչ
յայտնեալ էր, որչափ զի ուշ անձանց ե-
գեալ՝ մի ՚ի նուաստագոյնս լինչ մտածե-
րեացեն: Եւ լինքն զկուրն առեալ ընթա-
նայր առ Նուաիտոր, տագնապեալ յոյժ և
երկիւղիւ լի ըստ ժամանակին բերման: Ընդ
խնթացեալ նմին ընդ նա պահակաց որքայ-
նին՝ որ առ դրան կային, էբրև ՚ի միտս
կատարեցոյց զանձն ՚ի նա յառեցին, նա խու-
զեալ տագնապեալ ընդ հարցուածսն, ոչ
կարաց գալել զկուրն՝ զոր հանդերձիւ միով

պատեալ ծածկեալ էր: Իսկ ըստ դիպաց գտաւ ՚ի պահապանն՝ մի ոմն ՚ի նոցանէն՝ որոց յառաջագոյն ՚ի ձեռս տուեալ էր ընկեցիկ առնել զմանկունսն՝ և ոչք ապա ՚ի բաց լքեալ Թողին զնոսա: Սա այս այր տեսեալ յայնժամ զկուրն, և ծանուցեալ ՚ի կազմածոյն և ՚ի տառէցն, գնաց ՚ի կարծիս վասն իրացն եղելոց. ոչինչ անփոյթ արար, չղքաւ անդէն պատմեաց ալքայլին զբանն և յատեան ևս ձգեաց զՓաստիւղոս: ՚Ի սագնապս անհնարինս և ՚ի մեծամեծս պաշարեալ յայնժամ Փաստիւղոս, ոչ գլխովին անպարտելի կալ ինալ զօրեաց լինչ ՚ի պահուն, սակայն և ոչ գլխովին պարտեցաւ լինչ: Խոստովան եղև՝ եթէ ողջ կենդանի են մանկունքն. սակայն անդ ՚ի բացեայ կան ԱՆԼԲԻԱ և արածեն խաչն: Իսկ լինքն ըզկուրն առ Իլիաս ընթացեալ տանէր, այն՝ որ սահպ տեսանել և չօշափել ցանկայր զկուրն, և հաստատել զանձն ՚ի յոյս փրկութեան մանկանցն:

Ա՛րդ զոր լինչ միանգամ բնաւորեցան կրել մարդիկ՝ որ արհաւրօք խռովեալք լցեն և երկիւղիւ, կամ առ ցասման արամբաւութեանէ խառն գործիցեն զամենայն, զնոյն դէպ եղև կրել յայնժամ Ամուլիոսի: Քանզի զայր ոմն առեալ տագնապաւ արձակեաց առ Նումիտոր, այր բարի և բարեկամ նմին իսկ Նումիտորի, պատուէր տալեալ նմա՝ խնդրել հարցանել ՚ի Նումիտորէ, եթէ լինչ մի զրոյց արդեօք յումեքէն նորա հասեալ էցէ վասն ողջ եղոյ մանկանցն:

Իբրև եկին եհաս այրն առ Նումիտոր, անդ տեսանէր նա զՀռեմոս իբրու գիրկ ընդ խառն ՚ի համբոյր մտեալ ընդ Նումիտորի. յայնժամ եկաց նա և մեծապէս հաւատաբիմ գործէր զոյն նորա, և աղաչէր պընդէր՝ փութանակի անդէն ձեռնամուխ ՚ի գործն լինել, և վանձն ևս խառն ընդ նոսա նիզակակից ՚ի նեղքս ընծայէր: Ա՛ռ այս՝ և ժամանակին քաջադիպութիւն ոչ տայր նոցա դանդաղել ՚ի գործ անդր՝ Թէպէտ և կամէին ևս նոքա:

Քանզի Հռոմաւլոս արդէն իսկ պատրաստեալ կազմ ՚ի վերայ հասեալ կայր, և առ նա ելանէին ժողովէին դաս դաս ՚ի քաղաքացւոց անտի առ աստեղութեանն Ամուլիոսի և առ երկիւղին: Ա՛ռ այս՝ և վառեցոց բազմաց նա ՚ի դլուխ կացեալ էր, բաշխեալ զնոսա ՚ի հարիւրս հարիւրս: Եւ մին մի հարիւրոցն այր մի յառաջնոցդէր՝ բերելով խրձունս խիճ գալարեաց և սալարթոց՝ շուրջ պատեալ ՚ի ձոլ երկայն. և զայդ խրձունսն լայնինք կոչեն Մանիֆոլէ: և յայնց ժամանակաց հետէ և այսր՝ ՚ի զօրու անդ նոցա զձողաբարձագ զայդոսիկ՝ Մանիֆոլաւէն անուանեն:

Իսկ ՚ի նեղքս անդ և Հռեմոս զարս քաղաքին յապստամբութիւն դրդեալ, անդուստ արտաքոյ և Հռոմուլոս ՚ի վերայ յարձակեալ, ապա այնուհետև ոչ գործ լինչ արդեանց և ոչ գարձեալ խորհուրդ հանձարոյ կարացեալ բռնաւորին ՚ի նեղքս բերել վրկաւէտ անձին խրտամ, խուճաս

պեցաւ շուարեցաւ լի եղև արհաւրօք, և ղբռամբ եկեալ՝ի մահ վարեցաւ:

Զայսոսիկ բազմագոյն մասամբ և փա- բիոս ինքնին պատմագրէ. զարձեալ և Դիոկղէս Պեպարիթացի՝ (որ առաջինն՝ որ պէս ինձ Թուխի՝ գրեաց յաղագս շինու- Թեանն Հռովմայ): Ալ են ոմանք՝ որ կեղակարծեալն համարին զպատմուԹիւնս և՝ի Թատերականաց իմն սակն և՝ի քերԹուա- ծոց. այլ սակայն անհաւատանալ չէ ար- ժան՝ որոց միանգամ՝ի վերայ հասեալ է- ցեն՝ եԹէ քանիօն գործոց արդեանց բախ- տն ինքնին լցէ ձարտարապետ. և որք մի- անգամ Հռոմայեցւոց նահատակուԹեանց խելամուտ լեալ լցեն. որպէս զի և ոչինչ արդեօք յայն չափ զօրուԹե տէրուԹեան նոքա յառաջագէմ գնային՝ եԹէ աստուա- ծային իմն գոգցես և մեծ ինչ և նորահրաշ պատճառք չէին՝ի միջի:

Ա րդ երբև Ամուլիոս մեռաւ, և հան- դարտեալ յարդարեցաւ ամենայնն, ոչինչ կամեցան եղբարքն երկոքին բնակել ՀԱԼ- բա առանց Թագաւորելոյ, և ոչ դարձեալ Թագ կապել առ կենդանուԹե հաւուն: Ոսոմի և զարքայուԹիւնն՝ի ձեռս տուեալ նորա, և մերն իւրեանց շուք և պատիւ ձօ- նեալ վայելուչ, լաւ համարեցան բնակել առանձինն և քաղաք մի ուրոյն շինել՝ի վայրն անդ՝ յորում՝ի սկզբան անդ ընան նոքա. և այս պատճառք ինձ Թուխին ձա- հաւորագոյն քան զայլսն:

Ա լ քանզի բազումք՝ի ծառայից և՝ի

լծընկեց վախճանէից դայլին խռնէին առ նո-
սա, հարկ՝ ի վերայ կայր նոցա այնուհետև,
կամ եղծանիլ քակիլ՝ ի ցիր և ցան լինել
խռնելոցն առ նոսա, կամ թէ առանձինն
բնակակից կենակից լինել ընդ նոսա: Ա՛յլ
սակայն բնակիչք Ալբեայ ոչինչ արժանի
համարէին առնուլ խառնել ընդ ինքեանս
զարիկայան զայնոսիկ, և ոչ դարձեալ՝ ի քա-
ղաքացիս ժողովել գրել զնոսա. և քանի-
սոյտ է այս առաջին՝ ի յավիշտակութենէ
անտի կանանցն, ոչ եթէ թիւնամանօք ինչ
յանդգնեալք՝ ի գործն, այլ՝ ի հարկէն բըռ-
նադատեալք ակամայ առ դժուարութեան
հարսանեացն. քանզի և շուք մեծապէս
դնէին նոքա յավիշտակեալ կանանցն:

Իակ ապա երբեմն առաջին հիմունք արկան
քաղաքին, նուվիրական տեղի մի ապաստա-
նարան հանդերձեցին փախստէից, և ա-
նուն եդին տեղւոյն՝ Դիւք Ասիլեում, և
անդր ժողովէին առնուին զամենեսեան.
ոչ տերանց՝ ի ձեռս տային զծառայն, և ոչ
պարտատիրոց զպարտապանն, և ոչ դար-
ձեալ իշխանացն զմարդասպանն. այլ սկսին
դնել՝ եթէ՝ ի գուշակութենէ անտի Պիւ-
թեան պատգամացն՝ առհասարակ վասն
ամենեցուն անդրժելի է ապաստանարանդ
այդ: Եւ այսպէս ապա վաղվաղակի լցեալ
մարդաշատ գոմաւ քաղաքն. զի և յառաջ
քան զայն՝ որպէս ասեն՝ տունք՝ ի նմա ոչ
ինչ աւելի էին քան զխազար: Ա՛յլ յա-
ղագս այսոցիկ զինի ձառեալ է:

Ա՛րդ՝ երբեմն խորհուրդ կալան նոքա՝ ի

շինուԹիւն անդր, անդէն և կապ յուզե-
ցաւ ՚ի նոսա յաղագս տեղւոյն: Հռոմու-
լոս՝ տեղի մի յարդարեալ կազմեաց, որ
անուանեալ կոչէր Հռովմ փոսփորոփա,
այն է՝ Քաղաքոսի. և զայն տեղի կամէր
նա շինել ՚ի քաղաք: Իսկ Հռեմոս՝ զվայր
մի ամրագոյն զԱվենտինին, որ և յանուն
նորա կոչեցաւ Հռեմոնիոն. իսկ այժմ կո-
չեն Ռիփնաոսիոն: Իսկ երբեմն գաշնաւորք
եղեալ միմեանց՝ հմայից հաւուց յանձն
արարին զմրցանակ հեռւին իւրեանց, նը-
ստան ապա այր իւրաքանչիւր առանձինն.
ասեն՝ եԹէ անգեղք վեց Թռուով երևե-
ցան Հռեմոսի. իսկ Հռոմուղոսի կրկնա-
պատիկ քան զայն: Իսկ կէսք ասեն՝ եԹէ
Հռեմոս ձչմարտութեամբ ետես զհաւան.
իսկ Հռոմուղոս ստեաց, և՚ի գալ անդ առ
նա Հռեմոսի, յայնժամ ապա անգեղք
երկոտասան երևեցան Հռոմուղոսի: Վասն
որոյ և մինչև ցայսօր ժամանակի ՚ի հաւա-
հմայն զանգեղսն առաւելապէս՚ի վար առ-
նուն Հռոմայեցիք: Իսկ Հերոդորոս Պոն-
տիկոս պատմէ, եԹէ և Հերակլէս ինքնին
ինդայր բերկրեր, յորժամ անգղ մի երև-
եր ՚ի գործ ինչ նորա: Եւ քանզի այս հաւ
անմեղանչական է գլխովին. քան զամենայն
կենդանիս, ոչ ՚ի սերմանել մարդկան՝ ճեաս
ինչ հասուցանէ երբեք, ոչ ՚ի անկեալ նո-
ցա, և ոչ յարածել նոցա. կերակրի միայն
՚ի գիշոց մեռելոց. կենդանի ընչաւոր եր-
բեք նա ոչ սպանանէ և ոչ ճեասէ. իսկ
յազգակից իւր Թռչունն՝ և ոչ ՚ի մե-

ռեալան անգամ մերձենայ երբեք. իսկ արծիւ և բու և բազէ՝ և զհամազարմս իւրեանց հարեալք ոչ ոչ զիշատեն: Թէպէտ և ըստ Եպիւղոսի, "Հնարջուձան՝ թերջուձն զնայրդ ուտելոյին, սուրբ էիցէ երբեք": Ահա այս և այլք՝ ի թռչնոց (զի այսպէս ասացից) յածին և թարթափին յաչս մեր, և ցանգ առաջի ընծային զգայութեանց մերոց. իսկ անգղ դուն ուրեք տեսանիս, և զձագս անգէղ ոչ հեշտեաւ լինչ կարեմք մեք՝ ի ձեռս բերել: Որպէս զի և այնչափ դուն ուրեք և հազիւ երևել դոցա՝ պատճառս ետ ոմանց դժպատեհ մտածութեց, կարծեալ՝ եթէ յօտար իմն աշխարհէ թռուցեալք իջանիցեն դոքա առ մեզ. ըստ որում և խլէքն հաւահմայք թևակոխեն ասել՝ եթէ ոչ ըստ բնութեան լինչ կարդի կամ թէ յանձանց իւրեանց, այլ յաստուածային իմն ազդմանէն եկեալ երևին դոքա մեզ:

Այլ իբրև խաբանացն՝ ի վերայ եհաս Հռեմոս, ծանրացաւուն եղև. և յորժամ Հռոմուլոս խրատ հաւաներ և՝ ի նմա հանգերձեալ էր շուրջ կանգնել զպատուարն, անգուսա Հռեմոս՝ միանգամայն և այսպիսեր զգործն և խոչընդոտան լիներ գործելեացն: Ապա յետ այնորիկ այսպանօք վաղեալ զնորամուխն, անդանօր տապաստ անկանի Հռեմոս. կէսք ասեն՝ եթէ հարեալ՝ ի նմին իսկ՝ ի Հռոմուլոսէ. իսկ կէսք գարձեալ՝ եթէ՝ ի կեղերոսէ ոմնէից՝ որ նիզակակիցն էր նորա: Ընկան՝ ի կռուին

յայնմիկ և Փաստիւղոս և Պղեստինոս. սա եղբայր էր Փաստիւղոսի, և առեն՝ եթէ ՚ի միասին ընդ նմա անուցեալ էր զՀռոմուլոս: Իսկ Կեղերոս անց գնաց ՚ի Տիւբրենիա. և յանուանէ նորա Հռովմայեցիք զարդուն և զղեայան կոչեն ՁԷԼԷ: Եւ զԿովինտոս Մեստեղոս, իբրև զի յետ վախճանելոյ հօրն՝ մրցանս մենամարտիկս ՚ի սակաւ աւուրս պատրաստեաց, պատչացան ժողովուրդք ընդ արագապէս հանդերձանսն, և անուանեալ կոչեցին զնա ՁԷԼԷ:

Իսկ Հռոմուլոս առեալ զՀռեմոս և զնուցիչն ՚ի միասին Թաղեաց ՚ի Հռեմոնիա, և սկսաւ շինել զքաղաքն. և առաքեալ կոչեաց զարս ՚ի Տիւբրենիոյ՝ որք նուիրական իմն սահմանագրութեամբք և դրովք կրթէին վարժէին զնա և զամենայնն ուսուցանէին՝ իբրու ՚ի պաշտաւոնեա աստուածայինս: Քանզի վոս հասին շուրջ շուրջանակաւ առ տեղեաւն՝ որ այժմ անուանեալ կոչի Կոմիտիոն. և զերախտիսն ամենայն իրաց՝ զորս միանգամ ըստ օրինացն ՚ի վար առնուին իբրև լսաս, և ըստ բնութեանն՝ իբրև կարևորս ոմանս, անդր ածեալ կուտեցին: Եւ ապա այր այր իւրաքանչիւր ՚ի գաւառէն՝ ուստի եկեալ հասեալ էր անդր, հոդ սակաւ բերեալ արկին ՚ի վոս անդր և ՚ի միասին խառնեցին զամենայնն. և անուն զոր կարդան Ողիմպոսի, զնոյն և զվոսն զայն անուանեն Նոքա Մունդուս. և ապա իբրև շրջանակ շուրջ զմիջակաւն առեալ դնեցին զքա-

զաքն : Իսկ հիմնադիր քաղաքին արկեալ յարօր խոփ պղնձի, և լծեալ ի նա եզն և կով, ինքն առեալ ածէր զնոսա առ ելերըք սահմանին ակօս պատառելով խոր : Իսկ որք գինին գային՝ գործ էր նոցա զարօրա- դրեալ զկոշտան առնուլ անդրէն ի նեղըք ամփոփել, հոգ կալեալ զի մի և սակաւիկ մի սփռեալ կայցէ արտաքս : Եւ այսպէս ասպա իբրև ի գծի սահմանեն որոշէն զպա- տուարն, և կրճատութեամբ տառից կոչեն զնա Փոմէրիում, իբրու թէ՝ յետոյ պա- տուարին կամ առ պատուարաւն : Իսկ ու- րանօր խորհեցան արկանել զդուռն, ի բաց ելծեալ զկոփն և ի վերառեալ զարօրն, անդ անջրպետ մի գործեն . ուստի և զպա- տուարն ողջոյն համարին նոքա նուիրական՝ բաց ի դրացն : Ապա եթէ և զդրունան նը- ւիրականս համարեալ էր նոցա, չէր մարթ այնուհետեւ առանց խղճի՝ ոչ ի նեղըք անդ առնուլ ժողովել և ոչ դարձեալ արտաքս առաքել ի կարևորաց ինչ և ի պղծոցն :

Ադդ՝ քաղաքին հիմնարկութիւն եղև ի մեռասանեքորդի աւուր կալանգացն Մայ- խի, որպէս խոստովանեալ իսկ է առհա- սարակ . և զայն օր տօնախմբեն Հռովմայե- ցիք, և անուանեն զնա՝ Ծննդեան հայրե- նեաց : Ադ ի սկզբան անդ՝ որպէս ասեն՝ ընչաւոր ինչ ոչ յազգին նոքա ի զոհ, այլ պարտ և արժան համարէին՝ զի տօն նուի- րական ծննդոց հայրենեացն պահեսցի մա- քուր և անշալախ յարենէ : Ադ սակայն և նախ քան զհիմնարկութիւն քաղաքին

տօն լինի անդհորդական գոյր առ նոսա ՚ի նմին իսկ աւուր, և կարդային զայն փաւէ-
էա . սակայն այժմ Հռոմայեցւոց ամսա-
մուտքն չեն լինչ միաբան ընդ Հելլենա-
յոցն : Իսկ զօրն՝ յորում Հռոմուլոս հիմն
արկ քաղաքին, Ճշդիւտ ասեն հանդիպեալ
յերեսնեերորդի աւուր . և թէ՝ զուգընթաց
՚ի նմին աւուր ելեալ ընդ արեւու լուսին՝
խաւարեցոյց զնա , զոր և Անաքսիմանդրոսի
Տէացւոյ համարին տեսեալ Դիւցաշնական
քերթողն . և էր այն ամ՝ երրորդ ամ վե-
ցերորդ Ողիւմպիադին :

Իսկ առ ժամանակօքն Վարրոնի իմաս-
տասիրի՝ այր ներկուս քաջահմուտ՚ի պատ-
մութեան քան զամենայն Հռովմայեցիս ,
էր Տարուտիոս ընկեր նորա՝ իմաստասէր և
նա ինքն և ուսումնական նեբհուն , որ ՚ի
պատճառս գինուորութեանց դիտողութեանց՝
Թարթափեալ դեգերէր և ՚ի պնակս անդ
աստեղաբանութեան , և գերազանցեալ ՚ի
նմին զհամքաւսի հարեալ էր 3 : Սմա առաջի
արկ Վարրոն հետախոյզ քննութեամբ ՚ի
վեր բերել զծննդեն Հռոմուլոսի ըստ ա-
ւուրն և ըստ ժամուն , ՚ի գործոց անսխնորա
զոր պատմեն՝ խորհրդածելով ինքն վասն
առնն այնորիկ , ըստ որում երկրաչափակա-
նացն սահմանադրեն առաջարկութեանցն
լուծմունք : Քանզի նորուն գինուէ դիտո-
ղութեան գործ է միանգամայն և զկենաց
մարդոյն նախապատում լինել՝ գիտելով
զժամանակ ծննդեան նորա , և զժամանակն
զայն քննել ՚ի վեր բերել՝ գիտելով զը-

կեանս նորա : Արդ՝ արար կատարեաց Տա-
րտահոս զպատուհրեանն, և ձչգրտիւ խոս-
զեալ զկնիս զամենայն և զգործս արդեանց
զառնն զայնորիկ, միանգամայն և զժամա-
նակ կենաց նորա և զօրինակ մահուն նորա,
և զայս ամենայն՝ ի միասին կշռատառեալ
քաջատես վստահութեամբ և աներկեա-
նութեամբ եւ վկիւռ, եթէ յղութիւն Հռո-
մուլոսի յարդանդէ մօրն եղև յառաջին ա-
մի երկրորդի Ողիմպիատին, յամենեսեան
ըստ Եպիտոմացւոց Քէֆէ, ի քառերորդի
երրորդի աւուր. յերկրորդ ժամու՝ յո-
րում ողջոյն խաւարեցաւ արեգական. նակ՝
ըստ ընծայեցաւ նա ծննդեամբ յամենեսեան
Թովը՝ յաւուրն քառերորդի աւուրց երո-
դի ընդ արևածագին : Նակ Հռոմի հիմնար-
կեցաւ ի նոյնժ ամի երկրորդ աւուր ամ-
սոյն փարմաւն՝ ընդ երկրորդ և ընդ երրորդ
ժամն : Քանզի հասանելն՝ եթէ և քահան
քաղաքն՝ որպէս և մարդոյն, ունի նոր սեփ-
հական ճշդիւս ժամանակ, անդասին յա-
ռաջին ծագմանէն զննելով դիտելով ըստ
կայից աստեղացն : Այլ այսպիսի ամենայն
և որ ինչ յայսմանեաց առն՝ նոր ինչ գո-
լով արդեօք և օտար և հետաքննիք ոմանք,
Թերևս առաւել նմին զբօսանացուսցեն զըն-
Թերցանելն՝ քան եթէ տալոկացուսցեն՝
յառաջաբանեաց գոլով առն :

Այլ նորն ինեցաւ քաղաքն, նախ ա-
ռաջին զբաղմունքեն պատանւոյն առեալ
որոշեաց բաշխեաց ի վաշտս վաշտս զօրա-
կանին. և մեն մի վաշտուցն՝ հետևակք էին

երեքհազար, և այրուձի՝ երեքհարիւր. և կոչէ՛ցաւ Լէգէոն. քանզի յամենեցունց անտի սոքա էին մարտիկք այրընտիր: Ապա և զրամիկն առեալ պարտաւէցոյց յայլինչ ակտս. և բազմութիւնն անուանեալ կոչէցաւ փօփուլուս: Իսկ և խորհրդականս հարիւր ընտրեաց սահմանեաց՝ ի հոյակապ մարդկանէն, և զնոսա յորջորջեաց պափրէնս. և զժուռվ նոցա՝ Սէնափոս. իսկ Սէնափոս նախադասէ ձշդիւն նշանակէ ծերակոյտ: Իսկ թէ պափրէնք կոչէցան խորհրդականքն, կէսք ասեն՝ եթէ վասն զի հարստատ զաւակաց հարք էին նոքա. իսկ կէսք մանաւանդ՝ եթէ զի բանական էին նոքա յայտ յանդիմման ցուցանել զհարս իւրեանց, յոր էր արդեօք բանական խուժանն՝ որ նախ զառաջինն Թաւիեցաւ խոնհեցաւ՝ ի քաղաք անդր: Իսկ կէսք դարձեալ՝ եթէ՝ ի պաշտպանեալն այնպէս կոչեցան նոքա. քանզի այսպէս ուրեմն կոչէին հռոմայեցիք զվերակացուԹիւնն, և այնպէս կոչեն մինչև ցայսօր ժամանակն. քանզի համարին՝ եթէ պատրոնոս ումն՝ ի նոցանէն որ եկեալն հաւէն՝ ի Մեսաքն ընդ Եւանդրեայ՝ այր իմաստակաւոր էքսաւոր մարդկանն և օդնականն զօրաւորն նոցա, յուրմէ անուն յայս անուն յորջորջեաց ինքն զինանմանակալուԹեն գործ: Սակայն առաւել ևս հաւանական է կարծել, եԹէ ինքնին հռոմուլոս այնպէս առնուեաց զնոսա. քանզի և այնպէս իսկ համարեցաւ՝ եԹէ պատրոն և արժան է նախատաճիկ արանցն և զօրաւորացն հայրա-

բար խնամով և փութով վերակացու լի-
նել հնչացեալոցն անձանց. միանգամայն և
զայլսն հրահանգել ուսուցանել՝ մի երկըն-
չել, և մի դարձեալ երբէք խեռալ ընդ
իւրք պատուոյ ճոխին. այլ մարդասէր բա-
րոյիւք վարել ընդ նոսա, և առ հարս ևս ու-
նել և անուանել զնոսա: Քանզի և մինչև
ցայսօր ժամանակի՝ Սինկղիտոսին նախարար
անուն կարդան օտարք. իսկ բուն Հռով-
մայեցիք կոչեն զնոսա Հարս պայբնոբէր.
զայս անուն՝ի վար արկեալ՝ որ արժանեօքն
և պատուով՝ի վեր է քան զայլ անուանս,
և անբաժ ևս է՝ի նախանձուն կրից: Զա-
ռաջինն՝ Հարս միայն կոչէին զնոսա. իսկ
ապա իբրև բազմագոյնք ևս յաւելան՝ի նո-
սա՝ Հարս պայբնոբէրս անուանեցին: Եւ զայս
անուն արգոյ և պատուական՝ եղ Հռոմու-
լոս խորոց բաժանման ռամկին՝ի խորհըր-
դականաց անտէ: Իսկ և զայլսն՝ի զօրաւո-
րաց և՝ի ճոխից որոշեաց զատոյց՝ի ռամ-
կէն. զնոսա անուանեալ Բատրօնոս, այն
է՝ Պաշպան. և զտոսա՝ Քլիէնս, այս է՝
Պաշպանաւորս: Մինանգամայն և տոյա ընդ
միմեանց պքանչելի ինն հաստեալ բարեկա-
մութիւն և մեծաց իրաւանց պարտս. քան-
զի պաշտպանքն խնամուս օրինաց առ-
նէին զպաշտպանաւորսն, և վերակացու ո-
տիկան կային՝ի դատս նոցա, և խորհրդա-
տուք նոցա յաւէնային՝ի, և խնամակալու-
թիւնս՝ի նեղս բերէին նոցա: Իսկ և վեր-
ջինքդ՝ սպաս հարկանէին պաշտպանացն,
ոչ միայն շուք ընծայեալ նոցա՝ այլ և յաղ-

քաղաքեան նոցա զդաստիրս նոցա հարս-
նացուցանելով և զաղարս նոցա հաստուցա-
նելով: Իսկ ընդդէմ պաշտպանին լուրոյ
վկայութիւն տալ պաշտպանելոյն, կամ
ընդդէմ պաշտպանելոյն՝ պաշտպանին, ոչ
օրէնք լինէ երբէք և ոչ դարձեալ յաւուրս
կալայ ոք զերկեր տալեւ: Իսկ և յետ ժա-
մանակաց՝ յորժամ այլ երաւունքն դեռևս
կային հաստատուն, գործ անարգ համա-
րեցաւ և յոյժ այպանելի՝ առնուլ դրամս
փաստաբերացն՝ի նեղբևեղոց: Ա՛յլ յաղագս
այսոցիկ այսչափ:

Իսկ յամենեան ջերմեռանդ յետ լինու-
թեան քալեաքին՝ որպէս պատմէ Փաբիոս՝
եղև յանդգնութիւնն յափշտակութեան
կանանց: Ե՛ն ոմք առեն՝ եթէ Հռոմոլոս
քանզի անդատին՝ի բնութենէն պատերազ-
մաւէր էր, և՝ի պատգամախօսութենէ
լինէ ևս հաւանեալ էր՝ եթէ սահմանեալ
լիմն էցէ քալեաքին Հռովմայ՝ի մարտս պա-
տերազմի անանել և ածել, և այնպէս՝ի մե-
ծութիւն աւազութեան հասանել, ձեռն
էարկ բռնանալ ընդդէմ Սաբինացւոց.
քանզի ոչ եթէ բազումն լինէ յափշտա-
կեալ նա, այլ երեսանիւ չափ միայն կու-
սանս, իբրու այն որ մանաւանդ մարտի պա-
տերազմի պէտս ունելոյ՝ քան եթէ հարսա-
նեաց: Բայց այս չէ հաւանական. այլ տե-
սեալ նորա՝ զի անդէն վաղվաղակի բնակ-
չաք լցաւ քալեաքն, յորոց նուազութիւնք միայն
ունէին կանայս. իսկ բազումք այն էին խա-
ժամուժ յաղքատ մարդկանէ և յանշա-

նից, և արհամարհեալք ևս էին, և թուէր ևս այնպէս՝ եթէ ոչ շատ ժամանակ հա մախուռմբ կացցեն դոքա. և յուսայր ևս՝ եթէ սովին օրինակաւ ընդ Սաբինացւոց յօդակապութեան լիմն և միաբանութեան սկիզբն արասցէ այս անկրաւորութիւն՝ յա մոքեալ նոցա զյափշտակեալ կանայսն, ձեռնամուխ եղև 'ի գործ անդր ըստ օրի նակիս ըստ այսմիկ: Նախ զառաջինն համ բաւ եհան, իբրու թէ սեղան լիմն զդից ու րուք գտեալ էցէ նա ծածկեալ ստորեր կրեայ: Եւ անուն կարդային դնցն այնմիկ՝ Քօնսուս, կամ զի խորհրդոց էին Դևքն. (քանզի և այժմ Քօնսիլիում կոչեն զխոր հրդարանն, և զհիւպատոսս՝ Քօնսուլէս, իբրու եթէ՝ խորհրդականս). կամ զի Պո սիդոնն էր ձիաւոր. քանզի և սեղանն է 'ի մեծ ձիւնթացան անդ, և ծածկեալ անե րևոյթ կայ զայլ ժամանակս. իսկ 'ի մըր ցանս ձիականս բանան և ցուցանեն: Բայց և այլք գլխովին զայս ասեն, եթէ քանզի գաղանի պարտ է լինել խորհրդոյ և անե րևոյթ, ուստի և ոչ տարադէպ էնչ սեղան ծածկով ստորերկրեայ չինեցաւ դնցն այն ժիկ: Իսկ իբրև գտեալ յայտնեցաւ սե ղանն, ապա շուրջ հրեշտակութիւնս ար ձակեաց ասել, եթէ զոհ երևեալ յոյժ վսան այնորիկ լինիցի հանդերձեալ է առնել և մըր ցանս լիմն խաղոց և սեսարան աշխարհա ժողով: Եկին հասին խոնհեցան յայնժամ բազում մարդիկ: Իսկ լինքն նախաձո բազմեալ ընդ աւատանուցն ծերանի ար

կեալ զանձամբ, և նշան տուեալ էր ժամանակի յարձակմանն, յորժամ ինքն ’ի վեր յարուցեալ՝ առեալ ծալեսցէ զծիրանին, և դարձեալ միւսանգամ զանձամբն արկցէ: Արդ բազումք ’ի տասերորդացն անտի դէտսն ունէին ’ի նա, և ’ի տալ նշանին՝ անդէն մերկացեալք ’ի պատենից զսուրս, և յաղտակ և ’ի գոչիւն ’ի վերայ խուժեալք յափշտակեցին զդստեր Սաբինացւոց. իսկ զՍաբինացիսն Թոլլին ազատ ’ի վախտս դառնալ: Եւ ասէն ոմանք՝ եթէ երեանիւ ջոկ միայն յափշտակեցին. և ’ի նոցանէ անուանեալ կոչեցան ցեղքն: Իսկ Վալերիոս Անտիաս՝ եթէ հինգ հարիւր քան և եօթն: Իսկ Յոբաս՝ եթէ վեց հարիւր ութսուն և երիք կուսանս. և էր այս մեծապէս ջատագովութիւն վասն հռոմուլեայ. քանզի կին առնակին ոչ յափշտակեցին նոքա՝ բայց միայն պերսիկիա՝ որ և ապա միջնորդ հաշտարար եղև նոցա. յայտ է ապա եթէ ոչ ’ի թշնամանել կին և ոչ դարձեալ ’ի հարստահարել՝ եւկին նոքա ’ի յափշտակութիւն անդր. այլ զի խորհեցան ’ի մի խառնել և ’ի մի խմբել զազգան մեծապէս կարեօք:

Բայց զերսիկիա ոմանք ասեն կին եղեալ Ոստիղիոսի, որ էր յոյժ ականաւոր այր ’ի մէջ հռոմայեցւոց. իսկ ոմանք՝ նորուն իսկ հռոմուլոսի, որում և որդիք ևս ծնեալ էին նմա յերսիկիայ. դուստր մի Պրիմա անուն՝ այնպէս կոչեալ յատկագս կարգի ծննդեան. դարձեալ և ուստր մի միայն՝

զոր և անուանեաց նա Աղլևոս, ՚ի պատ-
ճառս խռնելոյ առ նա զքաղաքացեացն 4.
իսկ վերջինքդ՝ Աբելևոս: Ա՛յլ զայսոսիկ
պատմէ Զենոդոտոս Տրիզենացի, և բազումք
այն են՝ որ հակառակին նմա: Իսկ՚ի յափըշ-
տակումն անդ կուսանացն՝ ասեն՝ եթէ դէպ
եղև զի ՚ի սինկքորաց ոմանք ածեալ տա-
նէին օրիորդ մի յոյժ ջնաղազեալ և առոյգ
հասակաւ. և երբև հանդիպեալ անդր ո-
մանք յաւադայ անտի ձեռն արկին ՚ի բաց
՚ի նոցանէն կորզել զօրիորդն, ձայն բար-
ձեալ աղաղակէին ածողքն՝ եթէ առ Տա-
ղասիոն առեալ տանին զկոյն. և էր Տա-
ղասիոն այր պատանի բարեհամբաւ և քա-
ջալաւ: Արդ երբև զայս լուան նոքա՝՚ի բա-
րեբանութենէն և ՚ի ծափահարս գովելին
զնոսա. և կէսք ՚ի նոցանէն դարձեալք
յետս՝ ընթացակից լինէին նոցա ՚ի շնորհս
բարեկամութեանն իւրեանց, և զՏաղա-
սիոսն անուն ՚ի բերան առեալ մեծապոչ
ձայնիւ բարբառէին: Յայսմանէ ապա մին-
չև ցայսօր ժամանակի՚ի հարսանիս իւրեանց
յերջ առեալ նուագեն զՏաղասիոս, որ-
պէս չեղևնք՝ զնմանէսոս. քանզի ասեն՝
եթէ բարեբաստիկ վարեաց կեանս Տաղա-
սիոս ընդ կնոջ իւրում: Իսկ Սէքստոս
Սիւլլաս կարքեդոնացի՝ այր ևս իմաստու-
թեամբ և շնորհօք՝ առեր մեզ եթէ յափշ-
տակութեանն ՚ի նշանակ զձայն զայն ետ
Հռոմեացոց: Վասն որոյ ամենեքեան որք
միանգամ կուսանանս ՚ի բաց առեալ տանէին,
աղաղակեն Տաղասիոս. և վասն այնորիկ ՚ի

հարսանիսն եւկայ մնայ սովորութիւնդ այդ։ Սակայն բազմադոյն այլք համարին՝ յորս է և Յոբաս, եթէ քաջալերութիւն իմն էր և յորդոր ձայնդ այդ յաշխատասիրութիւն և յասպարծութիւն. զի յայնժամ տա֊ կաւին չէին խառնակեալ խօսլական ա֊ նուանքդ ընդ հելլենականացն 5։ Խակ եթէ ոչ թիւր էինչ է ասացեալդ, այլ արդեօք վարէին հռովմայեցիք յայնժամ զանունդ Տաղասէիս իբրև զմեզ, այլ էին պատճառ ա֊ ռաւել հաւանեցուցիչ արդեօք ոչ՝ի նեղս բերելոյն։ Քանզի յորժամ Սաբինացիք մարտ առեալ ընդ հռովմայեցիս՝ ի հաշտութիւն դարձան, դաշինք՝ի միջի կռեցան վասն կա֊ նանց, զի մի յայլ էինչ գործ սպաս հարցեն նոքա արանց իւրեանց, բայց՝ի գործ ա֊ ստուածց։ Արդ եւկաց մնաց սպա այս և՝ի հարսանիս, զի որք միանգամ տան հար֊ սունս, կամ որք հարանածուք լինին, կամ որք միանգամ ընթերակացք նչեն, առ֊ հասարակ գոչեն և ազաղակեն ընդ իսար՝ Տաղասէոս. վկայութիւն եդեալք՝ իբրու եթէ ոչ յայլ էինչ սպասաւորութիւն ածեալ բերի կինդ այդ՝ բայց յասպարծութիւն։ Խակ և կաց մնաց մինչև ցայսօր ժամանակի, զի հարան ինքնին անձամբ իւրով ոչ կոխէ զսեամն մնանել՝ի տունն, այլ՝ի վեր բար֊ ձեալ յայլոց տարեալ լինի. քանզի և յայն֊ ժամ որք բռնութեամբ ածեալ վարեալ լինէին՝ ոչ մնին կամակար։ Խակ եւն և որք առեն, եթէ և սովորութիւնդ զատեալդ ո֊ րոշեալ զվարս հերաց հարսին սպրիւ նո֊

զակին, նշանակ է եթէ կռուով և մարտիւ պատերազմի կատարեցան առաջին հարսանիքն, զորոց Հոխապոյնս մեք ճառեցաք յԱռաջարկութենէն անդ ինդրոց:

Արդ յանդգնեցան՝ ի յափշտակութենէդ յայդ յուխտանեորդ աւուր առնոյն՝ որ յայնժամ կոչէր Սէքստիլիոս, և այժմ Ապրիլոս. զոստոս. յորում աւուր և զՔօնսուա-ընանդն տօն կատարեն: Իսկ Սաբինացիք բազում էին թուով և պատերազմականք, և բնակէին նոքա յաւանս անպարիսպս. զի և այնպէս՝ ի դէպ և վայելուչ էսկ էր նոցա մեծախոհս լինել և մի ինչ վատութենէն առնել՝ ինչպէս ի վերնումն՝ ի նոքա: Ալ յայսր ամենայնի վերայ տեսեալ նոքա զանձինս իւրեանց կապեալ կաշկանդեալ՝ ի պատանդս մեծամեծս, և երկուցեալք վասն դառերայ իւրեանց, պատուիրակս առեալ արձակեցին, զի գնացեալ հեզաբար և հանդարտութեամբ ողոքեսցեն զՀռոմուլոս, ի բաց տալ նոցա զօրիորդան և լուծանել զգործ բռնութեանն, և ապա իսաղաղութեամբ և ըստ օրինաց առնել ընդ երկոսին ազգան բարեկամութենէն և ընտանութենէն: Իսկ իբրև Հռոմուլոս ոչ կամեցաւ՝ ի բաց զօրիորդան արձակել, և այնքեր յորդորքն ևս զՍաբինացիս յանձն առնուլ ընդունել զհաղորդութենէն զայն, նոքա սկսան դեռ գերել՝ ի խորհուրդս և՝ ի կամութենէն պատրաստութեան:

Բայց Ակրոն դենինացւոց արքայն՝ այր

սրտեայ և գոռ ՚ի պատերազմունս, արդէն
եակ ՚ի վիտս կասկածոտս եղեալընդ առա-
ջին նախձիրան Հռոմուլոսի, և զայն յան-
դգնութիւն ՚ի կանայս անդր՝ իբրև ահըն-
կէց իմն վարկուցեալ առհասարակ ամենե-
ցուն. և թէ՝ այնուհետև անհանդուրժելի
է Հռոմուլոս, եթէ անպատուհաս կացցէ
ծնասցէ, ինքն առաջին տուեալ մարտ պա-
տերազմի՝ ստուար գնդաւ դիմեաց ՚ի վե-
րայ Հռոմուլոսի. դիմեաց և Հռոմուլոս ՚ի
վերայ նորա: Իբրև երեսեցան միմեանց, և
այր յընկեր դէտսակն կալան, ձայն եւտուն
միմեանց ՚ի կռիւ մարտի, և զօրն առհասա-
րակ կազմ և պատրաստ կայր ՚ի զինուո-
րութեան իւրում: Անդ այսօթիւք ուխտ
եդ Հռոմուլոս, զի եթէ յաղթեսցէ և տա-
պաստ արկցէ զթշնամին, ինքնին Արամազ-
դայ տարեալ ձօնեսցէ զզէնս առնն: Հա-
րաւ ՚ի դիմի, պարսեաց զախոյեանն, և
դիաթաւալ կացոյց զնա, և զզօրն առհա-
սարակ մարտիւ պատերազմի վանեաց ՚ի
փախուստ և զքաղաքն առեալ քանդեաց:
Սակայն և ոչինչ անիրաւեցաւ ՚ի բնակչէն
անդր. քայց զի հրամայեաց նոցա հինա-
յատակ առնել զտունն և հետևել առհա-
սարակ ՚ի Հռոմ, և բնակել անդ իբրև հա-
մակիցք քաղաքացիս Հռոմայեցւոյ: Եւ այս-
պէս ապա ոչինչ այլ իւիք այնչափ աճեաց
Հռոմ, որչափ զի՝ որոց միանգամ յաղ-
թեաց նա և նկուն արար, զնոսա առեալ
յաւէտ ընդ ինքեան: Իսկ Հռոմուլոս կամե-

ցեալ կարի իմն հաճոյական Արամազդայ ընծայել զուխան զայն՝ միանգամայն և քաղաքացեաց Լուրոց սեստարան բերկրալի, տեսալ՝ի դաշտի անդ պատերազմին ծառս մի կաղնւոյ հաստահարուստ և մեծ, եհատ զայն. և իբրև ախոյեան առեալ պճնեաց և գեղաւորեաց և զմէն մի՝ի վինուցն Ակրոնի՝ կարդ՝ի կարգ յարմարեաց և կահեաց՝ի նմա: Եւ ապա ինքն գօսևորեալ զպատմուճանն, և՝ի բոլորս սարդենեաց պատկեալ զդեղասվարս գլուխն, բարձեալ՝ի վերայ աջոյ ուսոյն զյաղթանակն պինդ կալեալ և ուղղաբերձ՝ այնպէս գնայր ընթանայր՝ նուագ յաղթական առեալ՝ի բերան. և զհետ նորա խաղայր զօրն վինուզ զարդու, և քաղաքացիք ինդուլթեամբ և հիացմամբ առեալ ժողովէին զնա: Եւ ապա յետ այնորիկ՝ ամենայն յաղթանակաց այս հանդէս եղև ակնզբն և տիպ օրինակի: Իսկ ախոյեանն այն անուանեցաւ Զօն ՓԷՏԷՈՒՆ ասեն Հռոմայեցիք. և Հռոմուլոս ալօթեաց ուխտ եդ՝ խոյել զվերապն զայն և տապաստ արկանել զնա: Այլ զկապուտ կոլոպուսն Օէնմա կոչէ Վարրոն, ըստ որում և զինչն՝ Օէնա ասեն Հռոմայեցիք: Բայց ես առաւել հաւանեալ եմ, եթէ՝ի գործելոյ անուն կոչն այնպէս. քանզի զգործն՝ Օէռա անուանեն նոքա: Իսկ յորժամ ինքնին զօրավարն արուեստիւն նահատակութեան ցուցեալ՝ զոք՝ի զօրավարաց դիտապաստ առնէ, նմա տուեալ ի ձօնել

զկապուտ կողոպուտն: Եւ երից միայն զոբաւարացւոց Հռոմայեցւոց եղև վնճակեբախութիւն այսմիկ: Նախ՝ Հռոմուլոսի որ սպան զԱկրոնն կենենացի. երկրորդ՝ կուռնեբեայ կոտսոսի՝ որ զՏիւրենացին սպան զՏողումնիոս. իսկ ապա ուրեմն՝ կղոդիոսի Մարկեղեայ՝ որ եհար զԲրիտոմարտոս գաղատացւոցն զարքայն: Արդ կոտսոս և Մարկեղոս ինքնին բարձեալ զհոյեանան՝ այնպէս ձգեալ տանէին ի վերայ քաուաձիոց. իսկ վանն Հռոմուլոսի ոչինչ ուղղապէս ածէ Դիոնեսիոս՝ եթէ կառս ի վար արկեալ էցէ: Քանզի պատմեն՝ եթէ Տարկուինոս Դեմարատեան առաջին ի Թագաւորս՝ յայդ կերպարան և ի շքեղութիւն առեալ բարձրացոյց զյաղթանակս: Իսկ այլք ասեն՝ եթէ Պոպլիկոլա առաջին յաղթանակեաց ի վերայ կառաց: Եւ է տեսանել ի Հռոմ զպատկերս Հռոմուլեայ, զի հեռևակ ամենևին բարձեալ տանի նա զհոյեան իւր:

Իսկ ապա երբեմն պարտեալ նկուն եղեն կենենացիք, յորժամ տակաւին ի պատրաստութիւն դեդերեալ կային Սաբինացիք, միախուռն յարեան ի վերայ Հռոմայեցւոց բնակիչքն Փիդինեայ և Կրուստումերեայ և Անտեմնայ, և ի լինել մարտի պատերազմի պարտեցան և ոտքա, և ի ձեռս Հռոմուլոսի Թողին զքաղաքս իւրեանց, և ի բաշն՝ զգաւառն իւրեանց. և ինքեանք ջուս արարեալ փոխեցան ի Հռոմ: Իսկ Հռոմուլոս զմնացեալս գաւառին բա-

ժանեաց՝ի քաղաքացիս. իսկ զոր ինչ միան-
գամ կալուածս ունէին հարք յափշտա-
կեալ կուսանացն, եթող զայնոսիկ՝ի ձեռս
նոցա: Ընդ այս մեծապէս զժկամակեալ
այլոց Սաբինացւոցն, զՏատիոս ոմն ընտ-
րեալ իւրեանց՝ի զօրավար, բանակ յար-
դարեցին՝ի վերայ Հռովմայ: Սակայն զըժ-
ուարամատոյց էր քաղաքն, ամրացեալ
դլեկաւն՝ ուր է այժմ Կապիտոլիոնն.
յորում և պահակ զօրք նստէին զգուշու-
Թեամբ և զօրապլուխն նոցա Տարպէյոս, և
ո՛չ Տարպէյա կոյն՝ որպէս ասեն ոմանք,
ծանծալամիտ ցուցանելով զՀռոմուլոս.
բայց էր իշխանին դուստր Տարպէյա անուն՝
որ մանեաց Սաբինացւոց ցանկացեալ ոս-
կի ապարանջանիցն՝ յորս եռեւ զարդա-
րեալ զՍաբինացիան, և՝ի վարձ մատնու-
Թեան ինդրեաց՝ի նոցանէ զայն ինչ՝ զոր
բարձեալ տանէին նոքա՝ի ձախոյ ձեռս իւր-
եանց: Եւ իբրև զդաշն զայս կռեաց Տա-
տիոս, նա գիշերի ետաց դուռն մի, և՛ընկա-
լաւ՝ի նեղքս զՍաբինացիս:

Արդ՝ ո՛չ Անտիպատոս միայնակ առան-
ձինն՝ որպէս հաւանեալս եմ՝ ասաց, եթէ
„ Սիրէ ինքն զմատնիչս, այլ յետ մատնու-
Թեան առեալ զնոսա“: Եւ ո՛չ դարձեալ
կեսար՝ որ ասէր վասն Ռուբիոսալկեայ Թրա-
կացւոյ, եթէ „ Սիրէ ինքն զմատնուԹիւնս,
սակայն առեալ զմատնիչն“. այլ այս կիրք
առ անզգամ մարդիկն հասարակ է նոցա՝ որք
միանգամ պէտս ունիցին այնպիսեաց ե-
րից, իբրև Թունից և լերդոյ դաղանաց ո-

մանց : Քանզի յորժամ ՚ի պէտս վարեն զնոսա, սկրեն արդեօք. իսկ ապա յետ յաջողելոյն, առեան և նզովեն զչարութիւնն : Զսոյն և առ Տարպէյա ունելով կիրս յայնժամ Տատիոս, հրամայեաց Սաբինացւոց՝ զի յոլով բերեալ զդաշն ուխտին, մի՛ ինչ խնայեսցեն ամենևին տալ Տարպէյայ՝ զոր միանգամ կրէին ՚ի ձախոյ ձեռս իւրեանց. և առաջին ինքն յապուրակի ՚ի ձեռանէն զապարանջանն ընկէց ՚ի նա, ըզհետ և զվահանն իւր առեալ ձգեաց. նմին առհասարակ ամենեքեան զնոյն արարին, հարուածս առեալ Տարպէյա յոսկւոյն և թաղեալ ՚ի վահանացն, ՚ի բազմակոյտ կարկառէն և ՚ի ծանրութենէն ճնշեալ մեռանի : Այլ և Տարպէյոս ինքնին կալեալ ապա ՚ի Հռոմուլոսէ՝ պատժեցաւ նմին մահուամբ, ըստ որում պատմէ Սուլպիկիոս Գալբա, որպէս ասէ Յոբաս : Այլ սակայն ոչինչ արժանահաւատ են այն մատենագիրք, որ զՏարպէյա դուստր ասացին Տատիոսի զօրավարին Սաբինացւոց. և թէ՝ բռնի զուսեալ գեալ ընդ Հռոմուլոսի՝ գործեաց զայսպիսիկ և կրեաց զայսպիսիկ ՚ի հօրէն նմին. յորոց մի է և Անտիգոնոս : Իսկ Սիբիլլոս քերթող գլխովին և բանդագուշէ, որ համարի՝ եթէ ոչ Սաբինացւոց ՚ի ձեռս մատնեաց Տարպէյա զկուսակրօնն, այլ կերպացա՝ հարեալ ՚ի սէր արքային նոցա. քանզի յոսկի օրինակ զայս :

„ Տարպէյա մերձ օթագայեալ ՚ի կատար կապիտոլիոնին, եղև ինքն պատուա-

բակործան Հռովմայ: Նա կելտացն տարփացեալ հարանականն անկումնոց, զգաստացանակիր հարցն ի պահպանեաց զսպաբանան ":

Եւ ապա յետ սակաւուց վասն մահուան նորա ունի այսպէս.

" Զնա ի չէ արդեօք Բոյացիք, և ի չէ դարձեալ ժողովուրդք բնաւրաւորք կելտաց բայացեալք առ Բադոս գետովն ամփոփեցին ի գերեզման: Այլ զչէնս ընկեցեալ ի գոռ պատերազմոյ ձեռաց ի վերայ առեցեալ օրնուրդին, զարդ եղին մահուն ": Արդ՝ քանզի անդանօր Թաղեցաւ Տարպէյա, և բլուրն գլխովին անուանեալ կոչեցաւ Տարպէյոս. մինչև Տարկուվինիոս Թագաւոր զտեղին զայն նուիրեաց Արամազդայ միանգամայն, և նշխարք ոսկերաց նորա փոխադրեցան այլուր, և անուն Տարպէյա ի մոռացօնս եղև. այլ սակայն տակաւին և այժմ ի կապիտոլիոն Տարպէյա կոչեն զժայռն՝ ընդ որ գահավէժ ձգէին զչարագործն:

Իսկ երբ Սաբինացիք զբռամբ կալան զղեակին, անդուստ Հռոմուլոս ի սրտմտութիւն բարկութեան բղխեալ, ձայն ետ նոցա ի մարտ պատերազմի: Բայց և Տատիոս խրախուսեաց ի նոյն, քանզի և ամուր ապաստանի ունէր նա զօրականին իւրոյ, եթէ յանկարծ տագնապ ինչ հասանիցէ նոցա. քանզի և հովտաձև տեղի ձակատամարտին շուրջ բոլորածիր պատեալ էր ի բազում բլուրց, և առ գժտարութեան վայ-

բացն մարտ պատերազմի երկոցունց ևս կողմանցն դժուարին երևեր և դժնդակ. իսկ փախուստն և վանեալն յանձուկն անդ՝ ոչինչ երկարատև: Արդ դեպ ելև, զի յաւել քան զաւուրս ոչ բազումս յորդեալ զերեալ դեսոյն, մօր իմն մեծամօր և անեղրևոյթ եթող անդ ի դաշտավայր տեղւոյն՝ մերձ ի վայրն ուր է այժմ Հրապարակն. ուստի և ոչ յայսմնի ինչ էր աչաց հայելոյ, և ոչ դարձեալ հեշտին ինչ ի զգուշանալ, նա և բազմավտանգ յոյժ էր և գալոնորոգայթ: Ա՛յն ինչ Սաբինացիք յայս վայր անքննութեամբ հորդան տուեալ խաղային, գնացք ինչ գեղեցիկ յալէկոյս նոցա: Քանզի կուրտիոս ոմն այր ականաւոր իբրոխտ և խնդալի՝ յերիվար աշտանակեալ հարուստ միջոցաւ յառաջոյ զօրականին դիմեալ խաղայր: Անգ ի խորս իրեալ երիվարին, գուն գործեաց ձգնեցաւ նա առ ժամանակ մի ի գանս մորակաց և ի խրա-
խոյս ձայնից ի բաց զերիվարն ոստոցանել. իսկ իբրև յանհնարս եմուտ այրն, անդ եւլիք եթող զերիվարն, և ինքն զանձն ապրեցուցանէր. և տեղին միչև ցայսօր ժամանակի յանուանէ նորա կոչի Լիճ կուռփիոս: Յայնժամ ապա ի վտանգէն խոյս առեալ Սաբինացիք, մարտ եդեալ կորով ի կռուեցան. այլ սահման չէղև մարտին, թէպէտ և բազմօք անկան դիւտապաստ, ընդ որս և Ոստիղիոս: Զայս Ոստիղիոս առեն լինել այր Երսիլեայ, և հաւ Ոստիղիոսի՝ որ Թագաւորեաց զկնի Նումայի:

Եւ ապա դարձեալ միւսանգամ մարտ բազում մղեցին ՚ի տուլ ժամանակի՝ որպէս հաւանեալս եմ. և միոյն այնմիկ առաւել լապէս յիշատակ առնեն որ վերջինն էր. յորում Հռոմուլոս հարեալ քարամբ ՚ի գլուխն իւր, և մազապուր ՚ի մահուանէ ուել ետ զդէմ ունել Սաբինացւոց. դարձան ընդ կրունկն և Հռոմայեցիք, և վարաւեալք ՚ի դաշտաւայրս՝ ՚ի փախուստ խուճապեալք դնային ՚ի Պալանտիոն: Իսկ անդ Հռոմուլոս վայր մի դիւրեալ ՚ի հարուածոյն՝ կամէր վինուլ հանդերձ խոչ ընդ ոսն կալ փախստէից, և մեծապոչ ձայնիւ քաջալերէր խրախուսէր կալ և մարտնչել: Այլ իբրև առհասարակ խուճանն ՚ի չուտապ ոգնապի առաջի նորա ՚ի փախուստ ձեպէր, դարձեալ և չէր ոք որ համարձակէր դառնալ ՚ի դիմի հարկանել, ձգեաց Հռոմուլոս զձեռս իւր յերկինս ՚ի վեր. աղօթէր աղաչէր զԱրամազդ արդեւլուլ սանձել զզօրականն, և զգայթ ՚ի գայթ զգործ զայն Հռոմայեցւոց մի՛ անտես առնել, այլ առնուլ և ՚ի վեր կանգնել: Իբրև զաղօթան կատարեաց, յամօթ պատկառանաց յարքայէն ըմբռնեցան բազումք, և անդրէն միւսանգամ քաջալերութիւն զգեցան փախստեայք: Ապա կացին արձանացան առաջի՝ ուր կայ այժմ տաճարն Ադրամազդայ Սպասպոլի, որ Թարգմանի՝ Ա֊հայոց֊յանող: Ապա կրկին խմբեալք ՚ի մարտ՝ վանեցին յետս զՍաբինացիս մինչև ՚ի վայրն որ այժմ կոչի Ռեձիա, և մինչև ՚ի մեհեանն Վեստայ:

Բայց անդանօր իբրև կազմեալ պատրաս-
տէին նոքա միւսանգամ ՚ի մարտ պատե-
րազմի, յետոս նահանջեաց զնոսա տեսա-
րան լինն նորաւաքանչ և երևոյթ ՚ի վեր քան
զբան: Քանզի յափշտակեալ դատերգն Սա-
բինացւոց անդանօր ՚ի տեղեաց տեղեաց
դիմեալ դայլն դուժիւք և ալաղակաւ բեր-
եալք ընդ մէջ զինուց և դիականց մեռե-
լոց՝ գոգցեաս իբրև այսակիրք ոմանք՝ առ իւ-
րեանց ամուսինս և առ հարս իւրեանց. կէսք
՚ի նոցանէ զմանկունս մատաղս բարձեալ
բերելով ՚ի գիրկս իւրեանց, և կէսք դար-
ձեալ հերարձակ գէսս արձակեալք. իսկ ա-
մենեքեան առհասարակ գիրգ և աղուսական
ձայնիւ կոչէին կարդային՝ էր զի զՍաբինա-
ցիս, և էր զի զՀռոմայեցիս: Ընդ երկոքին
կողմանքն միանգամայն ՚ի գուռն չարժե-
ցան, և կացուցին զնոսա ՚ի միջավայրն
անդ ձակատամարտին. իսկ գոյժ աղա-
ղակին միանգամայն առհասարակ հնչէր, և
ընդ սեսիլ նոցա և ընդ բանն մեծապէս
խանդաղատէին. մանաւանդ յորժամ նոքա
յիրաւաբանութենէն իւրեանց և՚ի համար-
ձակութենէն դարձան ապա կողկողել յա-
ղերս և՚ի պաղատանս.

„Զինչ ՚ի դժնդակաց երբեք, գոչէին,
կամ զինչ ՚ի սրտմնականացն գործեցաք
մեք ձեզ, որ աղաղաւ կերս աշխարհեալս
վաղ իսկ կրեցաք մեք, և կրեսցուք և ևս.
բառնի և ընդդէմ օրինաց՝ յափշտակեցաք
մեք ՚ի նոցանէ, որ այժմ ունին զմեզ: Իսկ
ապա յետ յափշտակութեանն անտես է-

ղեպք յեղբարց մերոց և՝ ի հարց և յընտա-
նեաց այսչափ ժամանակ, յորմէ հետէ
մեք ընդ մերոց ոխերիմ թշնամեաց յօդե-
ցաք մեծապէս կապանօք սիրոյ: Ա յժմ
աւադիկ պարտ է և հարկ է մեզ երկնչել
զանգիտել ընդ ակեան նոցուն իսկ բռնա-
բարողացն և օրինազանցից՝ որ զմարուն մը-
ղեն. դարձեալ և կականել զնոսա՝ որ տա-
պաստ անկանին: Քանզի ոչ եկեալ հատ-
եալ է ձեր աւադիկ վնէժ առնուլ զմեր՝
իբրև տակաւին զկուսից ոմանց՝ ի հարստա-
հարողաց անտի մերոց, այլ այժմիկ յարանց
՝ի բաց քեցէք առնուք զկանայս, և՝ ի զա-
ւակաց զմարս. և աւադիկ օգնականու-
թիւն՝ աշխարեալ ևս քան զանհոգութիւնդ
զայդ և քան զմատնութիւնն զայն՝ օգնէք
մեզ հնձացեալոցս. զայս օրինակ տապա մեք
սիրեցաք՝ ի նոցանէ, և զայս օրինակ դար-
ձեալ գութ և գորով ընկալցուք մեք՝ ի
ձէնջ: Եւ քանզի եւթէ յայլ ինչ պատ-
ճառս դուք մարտ եդեալ կուսուիք, պարտ
և արժան էր արդեօք՝ ի պատճառս մեր
հանդարտեալ ձեզ այժմ, որ անեղք այժմիկ
եղերուք դուք մեօք, և հաւք և ընտանիք.
տապա եթէ վասն մեր ինչ լցէ կռիւդ այդ,
առեալ տարայք զմեզ՝ ի միասին ընդ վե-
ասից և ընդ զաւակաց, և տուք մեզ՝ ի ձեռս
ղհարս մեր և զընտանիս, և մի՝ ի բաց առնուք
՝ի մէնջ զորդիս և զարս: Յոլով անկեալ
աւադիկ կոկոտինք առ ձեզ, զի մի միւսան-
գամ եղիցուք մեք գերիք”:

Իբրև բազում ինչ այսպիսի բարբառե-

ցաւ Երսիլիա, ’ի նոյն և այլք ’ի կանանց յոլոք անկեալ կային, զադարեցաւ մարսն, և ’ի մի վայր եկեալ ժողովեցան զօրավարքն ’ի խորհուրդ: Իսկ կանայքն ’ի պահուն յայնմիկ աւեալ ածէին առ հարս և առ եղբարս զարս իւրեանց և զորդիս. և որոց միանգամ պէտք ինչ էին՝ բերեալ մատուցանէին նոցա կերակուր և ըմպելի, և ’ի ոտն իւրեանց ածեալ զվիրաւորսն՝ դարմանս տանէին նոցա. և տային նոցա տեսանել՝ զիարդ նոքա անձամբ տնօրէնք են և տիկնայք տանն, զիարդ և արքն պատկառական նոցա, և զեղեցիկ մարդասիրութեամբ զամենայն չուք պատուոյ ’ի նեղքս բերեն նոցա առհասարակ:

Վասն այսորիկ ապա կռեցան դաշինքս այսոքիկ, զի ’ի կանանց անտի՝ որոց միանգամ կամ եկէ՝ բնակակից կացցեն մնասցեն ընդ ամուսնաց իւրեանց. այլ՝ որպէս սասցաքն՝ ’ի բաց կացցեն յամենայն գործոյ և յամենայն ապաստարկութենէ բաց յասրադործութենէն, և զի՝ հասարակ բնակեսցեն’ի. քաղաքին միանգամայն Հռոմայեցիք և Սաբինացիք. և զի՝ քաղաքն առ ’ի Հռոմուլոսէն անուանեալ կոչեսցի Հռովմ. իսկ Հռովմայեցիքս առհասարակ կոչեսցին Քո-իէէ-ո+ յանուանէ Հայրենեացն Տասոսի. և զի՝ երկոքինն նոքա հասարակ թագաւորեսցեն և զօրավար կացցեն բանակին: Իսկ ուրանօր ապա այս դաշինք կռեցան, կոչի մինչև ցայսօր Քօմինիօ. քանզի Քօիրէ կոչեն Հռոմայեցիքս զզուռպաւորին:

Արդ՝ երբև կրկնապատիկ աձեաց քաղաքն, հարկաւոր ոմանք ՚ի Սաբինացւոց անուն այրինակը յաւելան ՚ի Պատրիկս: Իսկ Լեգէոնք եղեն՝ վեց հազար հեծեալաց, և վեց հարիւր այրուձիոյ: Իսկ ցեղք երեք որոշեալ կարգեցան. ոմանք առ ՚ի Հռոմուլոսէ անուանեցան Ռամնենսէս. կէսք ՚ի Տատիոսէ՝ Տոփենսէս. իսկ երրորդքն՝ Լուցենսէս, յանուանէ անտառին՝ որ առմուր ապաստանի եղև բազմաց փախստեից որ ապաւինեցան անդր, և ապա կցորդք եղեն քաղաքացի անուանն. քանզի զանառնն նոքա Լուցոս անուանեն: Իսկ Թէ այնչափ Թուով էին ցեղքն, զնոյն վկայեն և անուանքն գլխովին. քանզի և այսօր տակաւին Ռամպուս՝ կոչեն զցեղսն, և Ռոմպոնոս՝ զցեղապետսն: Իսկ մէն մի ՚ի ցեղսին ունէր եղբայրութիւնս իմն տասն. զորոց ասեն ոմանք՝ ԵԹէ անուանս կրէին նոքա զկանանցն զայնոցիկ. այլ այդ Թուի տուտ. քանզի չատք ՚ի նոցանէն ՚ի վայրացն ունին զանուանակոչութիւնսն:

Այլ սակայն բազում ինչ ՚ի պատուոյ մասին ընծայեցին կանանցն այնոցիկ. յայնպիսեաց անտի են և այսոքիկ: Ցընթանալ նոցա՝ տէղի տալ նոցա ՚ի ճանապարհին. Բան տգէղ ամենևին չասել ումեք յանդիմանի կնոջն: Եւ մի երբէք երևել նոցա մերկ: Դարձեալ՝ ազատ լինել նոցա, մի երևել ՚ի գառամատանի յանդիմանի նոցա՝ որ ոստիկան կարգեալքն են ՚ի վերայ սպանողացն. Դարձեալ՝ զի և մանկունք նոցա բարձեալ

քերցեն պատմուճան ծիրանի, և զանձա-
գեղ կամարն՝ անուանեալ Պ-ԼԼ, ի պա-
տարաձև նմանութենէ պղպջակացն:

Բայց ի խորհուրդ մտանէին Թագաւորքն
ոչ անդէն վաղվաղակի ի միասին ընդ մի-
մեանս. այլ այր այր ի նոցանէ՝ նախ առան-
ձին ընդ իւրոց հարկուրցն, և այնպէս ապա
ի մի միաբանէին առ հասարակ ամենեքեան:
Եւ բնակէր Տաւխոս ի վայրն՝ ուր կայ
այժմ տաճարն Մոնեետեայ. իսկ Հռոմու-
լոս վերձ ի վայրն՝ զոր կոչէն Ասիճան-
գեղբոյն ծովեղեր. և են այսոքիկ ի սեղջին՝
ուր ի Պալատեայ լճանեն ի մեծ ձկըն-
Թացան: Իսկ անգանօր սահն լինել և զնուվ-
րականն զայն Ջինէ, և առասպելս ևս
խառնեն, եթէ զվորձ կամելով առնուլ
զկոյր Հռոմուլոս, ոչգ մի առեալ արձա-
կեաց անդուստ յԱվենտինոսէ, և էր տի-
գաբոյնն ի չմեղի փայտէ. իսկ սայր տի-
դին այնչափ իմն մխեցաւ ի խորս անդ, զի
և ոչ ոք զօրեաց երբէք ի բաց ի հողոյն
քեցել՝ թէպէտ և շատք ոմանք գուն
գործեալ վորձեցին: Իսկ վայրն պատեալ
ի հողոյ երկրին՝ ի բուսաբեր և յարգա-
ւանդ, արձակեաց ոստս, և բուն մի հաստա-
հարուստ և գեղեցիկ չմենուոյ աճեաց ի
բարձրութենէն: Եւ զայն ծառ՝ որք միան-
գամ կացին զկնի Հռոմուլոսի՝ երբն առաւել
իմն տուրբ ի նուվրականս՝ այնպէս պա-
հէին պաշտէին, և շուրջ պատեալ պարըս-
պեցին զնա: Իսկ եթէ ոք երբէք մերձ գնա-
ցեալ ի ծառ անգր՝ կարծէր իմն եթէ ոչ

յառաջդուբեան իւրում կայցէ ծառն և ի կանաչուբեան, այլ անկերակուր թօշնեալ և թալկացեալ, անդէն փուբեանակի նա ձայն բարձեալ մեծագոչ՝ ասէր որոց միանգամ պատահէր. իսկ նոքա իբրու այն թէ յօդնուբիւն խուճապեալք ի մեծի հրդեհի աղաղակ բառնային ղբրոյ, և յամենայն կողմանց առ հասարակ խուռն ընթանային ի վայր անդր՝ ամանս լիս բարձեալ բերելով: Իսկ յորժամ գայիս կեսար՝ որպէս ասեն՝ հանդերձեալ կազմէր զանազան տեսիան զայնոսիկ, արհեստաւորքն շուրջ բրեալ առ ծառովն՝ անզգոյշ խորհրդով ինսա չարաչար հասուցին արմատոյն, և գօսացաւ տունկն:

Ադրդ՝ Սաբինացիք առին ընկալան զսիս Հռոմայեցւոց, և որ ինչ միանգամ գերեցիկս յաջողեցաւ ի բանին յայնմիկ, այն ամենայն դրեալ կայ ի վարս անուանեալն: Իսկ Հռոմուղոս զվահանս Սաբինացւոց առեալ ի վար արկանէր այնուհետև. և փոխեաց զսպառազինուբիւն զիւր և զՀռոմայեցւոց՝ որ յառաջն ասպարս բարձեալ տանէին Ադրդոլեանս: Բայց ի ոճս և ի նուվրագործուբիւնս բաժանորդք էին նոքա միմեանց. և որ ինչ միանգամ ի ոճսէց իւրաքանչիւր նոցա սեպհականէր էր յառաջագոյն, զայն ոչ խափանեցին. նա և զայլ ինչ ևս նոր սահմանեալ կարգեցին. ըստ որում զՄատրոնեանն ոճն՝ նուիրեալ կանանցն ի պատճառս լուծանելոյ նոցա զկուիս մարտին. նոյն և զԿարմենտան-

եանն: Իսկ զկարմենտա Համարին ոմանք լինել Դիւցալիոնհի ճակատագրին՝ ոսոխական սիկլին՝ ի վերայ ծննդոց մարդկան. ուստի և պատուէն զնա մարք: Իսկ կէսք՝ եթէ կլին էր Եանդրոսի Արկադացւոյ՝ հարցով և արբանեակ փեթոսի Ապոլոնի. և զի պատգամն՝ ի դուրս տայր չափաբերականս, յայնմանէ ապա անուանեցաւ Կարմենտա. քանզի զՑաղն կոչեն նոքա Գոռն. այլ բուն անուն նորա՝ էր Նիկոստրատէ. և այս առհասարակ խոստովանեալ է: Ալ հաւանակաց նագոյն ևս ոմանք Թարգմանեն զկարմեն տայն լինել Խելացիրկ, իբրու այն որ՝ ի մարգարէութիւնս իւրեանց ելեալ էցեն նոքա ըստ խելս իւրեանց. քանզի զՉ-ուն լինելն նոքա անուանեն Քոռ. իսկ զնեելան Մէնդէմ: Իսկ վասն Պալիղենայց ոճնին յառաջագոյն ասացեալ է:

Իսկ Լուսերկալեան ոճնքն երևին կարգեալ վասն մաքրութեան՝ ի պատճառս ժամանակին, քանզի կատարի յաւուրս անգործս փետրուար ամսոյն, զոր Մաքրողական Թարգմանեացէ ոք արդեօք. և զօրն զայն կոչէին փետրուարեան: Իսկ անուանդ Լուսերկալեան ոճնին՝ հելլենացի նշանակէ Լիւոսեան, այն է՝ գայլական. ուստի և Թուի՝ եթէ անդուստ՝ ի վաղ ժամանակաց Արկադացւոց անուն՝ որ էին ընդ Եանդրեայ՝ էցէ ոճնդ: Ալ քանզի հասարակ է անուանդ՝ արուի և իգի, մարթ է և՝ ի մատակ գայլոյ լինել անուանակոչութեանդ այդմիկ. քանզի և Լուսերկեանք՝

սեռականեմք զի՝ ի խաղս արշաւանաց իւրեանց՝ անդուստ առնուն զսկիզբն վազից, ուրա՛նօր ասեն՝ եթէ դիւեցաւ Հռոմուլոս: Խակ որ ինչ միանգամ անդ կատարի, դժուա՛րին է զայնոցիկ ղպատճառն ձշդրիտ՝ ի վեր բերել. քանզի փողոտեալ սպանանեն անդ այծս, ապա յետ այնորիկ պատանեակս երկուս քաջազդիս՝ ի մէջ անդր ա՛ծեալ, մօտեալ ոմանք արիւնաշաղախս դանակ՝ ի ձախատն նոցա հպեցուցանեն. խակ այլք վաղվաղակի առեալ սար թացեալ՝ ի կաթն՝ նուաւս սրբեն ջնջեն. և ապա յետ սրբելոյն պարտ և արժան է պատանեկացն գալ զծաղուս: Խակ ապա զայծեղնան առեալ հատանեն՝ ի փոկս, և այսր անդր յածին ընթանան սփածանելի արկեալ զմիջոցն, և որոց միանգամ հանդիպին՝ չայլոսուքն հարկանեն: Ա՛յլ և ո՛չ կանայք յարբունս հասեալք՝ խոյս տան՝ ի հարուածոյն յայնմանէ. քանզի համարին՝ եթէ օգուտ է՝ ի քաջածնութիւն և՝ ի յղութիւն: Ա՛յլ և սեպհական է ոճնին՝ զի և զշուն մի առեալ Լուպերկեանք յազեն յայնժամ: Խակ Բուտաս ոմն յողբերգուԹիւնս իւր պատճառս նմին առասպելս պատուան յաղագս Հռոմայեցւոցն առողբուԹեանց՝ ի դէմս բերելով՝ ասէ, եթէ ոչք միանգամ ընդ Հռոմուլոսի՝ ի պարտուԹիւն մատնեցին զՔամուլիոս, ուրախուԹեամբ խնդուԹեամբ դիմեալք ընԹացան՝ ի տեղի անդր՝ յորում գայլն մատակ զսնտին իւր առեալ ետ ողայոցն այնոցիկ.

և թէ՝ այս ոճն զվաղնցն զայնոցիկ բերէ զնմանութիւն, և ընթանան վազեն արք քաջազգիք,

„ Եւ որոց միանգամ պատահեն, հարկանեն գանեն, ըստ որում և յայնժամ զվաղակաւորն առեալք՝ Անքեայ ՚ի դուրս վազելին Հռոմուլոս և Հռեմոս “:

Եւ թէ՝ զարհուռնալթաթաւ զսուրն առնուլ և հպեցուցանել ՚ի ճակատ անդր նոցա, նշանակ է որ յայնժամ սպանութեան և վտանգին: Իսկ կաթամբն սրբել ընկճել՝ յիշատակ է կաճնածուծ աննդեան նոցա: Այլ Գայիոս Ակիլեոս պատմէ, եթէ մինչ չև շինեալ էր Հռոմ, էր երբեմն՝ զի խաչն և անդեայք Հռոմուլոսի մոլորեալք անհետացան. իսկ նա աղօթիւք ուխտ եդեալ Փաւնոսի, վազէր ընթանայր ՚ի խընդիր նոցա մերկ մարմնով զի մի ընդ քերան մտեալ պարտասեցի. ուստի ապա մերկ մարմնով այսր անդր վազվազեն և լուսերկեանք: Իսկ յաղագս շանն, եթէ արդարև մաքրողական էյե զոհդ այդ, ասասցէ ոք արդեօք եթէ յաղեն զինա՝ իբրև ՚ի մաքրութիւն ՚ի վար արկեալ զկենդանին զայն. քանզի և Հելլենք ՚ի մաքրութիւնս իւրեանց ՚ի մէջ առեալ ածեն ակունդս, և յաճախ ՚ի վար արկանեն ՚ի մաքրութեանց անուն՝ որ անուանեալ կոչին Սիդայիս: Ապա եթէ ՚ի շնորհս մատակ գայլոյ կատարեն զայդոսիկ, և աննդեանն և վրկութեանն Հռոմուլոսի, ոչինչ ապա տարադէպս փողոտեալ սպանանեն նոքա ղշուն. քանզի

թշնամի է նա գայլոյ. թէ ոչ մանաւանդ՝ որպէս հաւանեալս եմ՝ զայդ կենդանի մանուկ պատուհասեն Լուսիերկեանք, քանզի քաղընդոան լինի՝ ի վազել իւրեանց:

Եւ ասեն՝ եթէ և զրբանուէր Հուրն՝ առաջին Հռոմուլոս կարգեալ սահմանեաց. և առ ընտրեաց կուսանս նուիրականս՝ որ անուանեալ կոչին Վէսպեան. իսկ կէսք վասն նմանոյն պատմեն զայսպիսիկ: Ալ սակայն պատմեն՝ եթէ յաւէտ իմն գերազանցեալ էր Հռոմուլոս յատուածապաշտութեան. և թէ՝ էր նա գլխովին և գուշակ. և թէ՝ ի պատճառս գուշակութեանն արուեստին բարձեալ կրէր նա՝ զոր անուանեալ կոչէին Ղիտիոն. և էր Ղիտիոնն գաւազան կոր՝ որով վայրս իմն աղիւսաձև գծեն հովանաւորեն՝ որք ժամանակ նստին՝ ի հաւահմայս: Եւ թէ՝ այդ գաւազան զոր պահէին զգուշութեամբ՝ ի Պալանտիոն՝ անհետացեալ կորեաւ, յորժամ՝ ի կեղտաց անտի առաւ քաղաքն. իսկ ապա իբրև նկուն եղեալ վանեցան բարբարոսքն, գտաւ նա գալեալ՝ ի նեղլոյ մեծի մոխրակուտէն անկեալ՝ ի հրոյ, ուր ամենայն նիւթ առ հասարակ գլխովին յաճխն և յասպականութիւն դարձեալ էր:

Առ այս՝ և օրէնս կարգեաց սահմանեաց Հռոմուլոս. և՝ ինոսա սաստիկ են օրէնքն՝ որ երբեք թոյլ ոչ տան կնոջ թողուլ զքանել զայրն. իսկ թոյլ տայ՝ ի բաց արձակել զկինն՝ ի պատճառս դեղատուութեան որդւոցն, կամ՝ ի պատճառս կաղակարծ սաղմ

նաուսթեան և ընուքեան : Ապա եթէ այլազգ ոք ՚ի բաց արձակեսցէ զկին իւր, մանն մի ՚ի գոյից առն՝ լեցի կնոջն. և մանն մի դարձեալ նուիրական լեցի Դեմեարեայ, և ՚ի բաց արձակողն զկինն՝ զոհեսցէ զոհ ըստ սանդարամեոսականաց : Եւ դեղեցիկ է այս, զի նա որ պատուհաս և ոչ մի կարդեաց էդ ընդդէմ հայրապանիցն, նոյն ինքն զամենայն մարդասպանութիւն կոչեաց Հայրապանութիւն 6, իբրու այն թէ եղեռն մեծ եցէ առաջինդ, իսկ վերջինդ՝ իբրու յանհնարից ոմանց : Եւ արդեօք մինչև ցհատ բուսաս ժամանակս յայտնի էղիւ՝ եթէ ուղղասէս ուրեմն նորա և ոչ ՚ի միասս անկաւ անիրաւութիւն այդպիսի. քանզի և ոչ ոք արդեօք այդպիսի ինչ գործեաց ՚ի Հռոմ գոգցես ընդ ամս վեցհարիւր. այլ առաջինն յետ Աննիբաղեան պատերազմին՝ պատմեն եթէ Լուկիոս Ոսոիոս եկաց հայրապան : Ա յլ այսչափ ինչ վասն այսոցիկ հերիւքասցի արդեօք :

Իսկ յամին հինգերորդի Տատիոսի արքայի, ոմանք յընտանեաց նորա և յազգականաց պատուհեալ հրեշտակացն՝ ոք ՚ի Լաբենտիոյ դէմ եղեալ գնային ՚ի Հռոմ, ՚ի ձանապարհին բուռն առնէին նոցա՝ կորզել գրասն ՚ի նոցանէ. իբրև նոքա ոչինչ հանդուրեալ զդէմ կալան՝ հարեալ սպանին զնոսա : Յայս ոճիր յանդգնեալ նոցա, Հռոմուլոս անգէն վաղվաղակի արժան համարեցաւ պատուհաս ՚ի վերայ ածել անիրաւացն : Իսկ Տատիոս խոյս տուեալ և

դանդաղեալ անվոյթ լինէը. և ապա այս
ինչ եղև միակ պատճառք յայտնի երկպա-
ռակութեան նոցա 'ի միմեանց. իսկ յայլն
ամենայն գերազիկ միաբանութեամբ գնային
նոքա, իբրու միով ոգւով նահատակեալք
և համաշնչութեամբ գործէին զամենայն:
Իսկ ոզք ընտանիքն էին ապանեղոյն՝ իբրև
յամենայն գառաստանէ պատուհասին ըստ
օրինացն՝ յեռանեալ գոան 'ի պատճառս
Տատիոսին, 'ի վերայ յարձակեալք հա-
րին զնա և ապանին 'ի Լավինիոն, մինչդեռ
նա զոհ մատուցանէր անդ ընդ Հռոմու-
լոսի: Իսկ զՀռոմուլոս 'ի ձայն բարեբա-
նութեան առեալ իբրև զայր արդար՝
զհետ չդքան նորա: Ա՛յլ նա զմարմին Տա-
տիոսի բարձեալ՝ շքով և պատուով թաղ-
եաց. և կայ անդ յԱվենտինոն մերձ 'ի վայրն
կոչեցեալ Արմիլուստրիոն. իսկ զվրէժ սպա-
նութեանն գլխովին անվոյթ եղև նա 'ի
խնդրել: Իսկ կէսք 'ի մատենագրաց պատ-
մեն, եթէ երկուցեալ ապա Լաւրենտա-
ցիք՝ եռուն 'ի ձեռս Հռոմուլոսի զսպա-
նողն Տատիոսի. իսկ Հռոմուլոս աղաւ
արձակեաց զնոսա՝ ասելով եթէ „Մահ-
ուամբ մահ լուծաւ“: Իսկ ապա այս բան
պատճառս ինն ետ կատածելոյ՝ իբրու թէ
հեշտաբար ուրեմն եղև նմա ազատ կալ յիշ-
խանակցէն նոցա: Բայց 'ի գործոյ ասոի և
ոչ մի ինչ ամբոխեալ խռովեաց կամ յա-
պստամբութիւն դրդեաց զՄաբինացիս.
այլ կէսք 'ի նոցանէ՝ 'ի պատճառս սիրոյ
բարեկամութեանն՝ զոր սիրէին զնա, և

կէաք՝ առ ահի զօրութեան նորա, և կէաք դարձեալ իբրև ընդ դից ումեքին գնացեալք ընդ նմա, առհասարակ հիացեալք սիրոյ բար պաշտէին զնա: Եւ բաղում ևս այլ որեար յօտարաց անտի պատանացեալ էին ընդ Հռոմուլոս. իսկ Լատինք նախնիք հրեշտակութիւնս արձակեալք առ նա բարեկամութիւն և նիզակակցութիւն հաստատեցին ընդ նմա:

Յետ այսորիկ էառ նա զփիդինա քաղաք մերձաւոր Հռովմայ՝ որպէս ոմանք ասեն՝ յանկարծակի ինն արձակեալ անդր զայրուձին և հրաման տուեալ նոցա հատանել կորել զնիւթս դրանցն, իսկ ապա և ինքն յեղակարծումն ժամու եհաս 'ի վերայ: Իսկ այլք ասեն՝ եթէ փիդինացիքն առաջին յարձակեալք աւար հարկանէին և աւեր բաղում գործէին գաւառին և արուարձանացն. իսկ Հռոմուլոս դարան գործեալ նոցա տապատաս արկ շատ զոք 'ի նոցանէն և էառ զքաղաքն: Սակայն ոչ քանզեաց և ոչ հիմնայատակ արար զքաղաքն, այլ գաղթական հռոմայեցւոց արար զնա. առաքեալով անդր բնակիչս երկու հազար և հինգ հարիւր. որ օր երեքտասաներորդն էր Ապրիլի ամսոյն:

Յայնու ժամանակաւ դէպ եղև անկանել սրածութեան, և մահուանս յանկարծս 'ի վերայ հասուցանէր մարդկան առանց ինչ ախտից հիւանդութեան. անդ Ձարակեցաւ և անբերութիւն պտղոց, և ամբութիւն անասնոց: Տեղացին և շիթք արեան 'ի քա-

զաքին. որպէս զի և ընդ անհնարին կիրս չարչարանացն խառնեցան յայնժամ և արհաւիրք և մնասպաշտութիւն բազում: Այլ քանզի և ի բնակիչս անդր Լաւրենտոնի նոյն օրինակ դէպք պատահէին, առհասարակ ասպա Թուէր իմն ամենեցուն՝ եթէ քանզի ոչ կատարեցան իրաւունք վասն մահն Տատիոսի և վասն սպանելոցն հրեշտակաց, ցասումն աստուածոյին վասն այնորիկ յաղարտ վարէ զերկոսին քաղաքն միանգամայն: Իսկ իբրև յերկոցունց ևս կողմանց ի ձեռս առան սպանողքն և պատուհասեցան, յայնապէս ասպա սեղմ տուեալ հանգարտեցին ջրիքն, և առեալ Հռոմուլոս սրբեաց զքաղաքն մաքրողական նուիրօք. զորոց և մինչև ցայսօր պատմեն՝ եթէ կատարին այնոքիկ մերձ առ փերեն տեան դուռն:

Իսկ մինչև կարճեալ էր սրածութիւնն, ի վերայ յարձակեցան Հռոմայեցւոց կամերցիք, և առպաստակ ախոյեին ի գաւառն, իբրու եթէ անբաւականք իցեն նոքա զդէմ կալ նոցա ի պատճառս ախտին: Հապա Հռոմուլոս փութանակի խառնաց զօրու ի վերայ նոցա, և մարտ եգեալ ընդ նոսա, վեց հազար այր սպան ի նոցանէ. և զքաղաքն նոցա առեալ, զկէսս ի նոցանէ՝ որ կենդանի մնացեալքն էին՝ ածեալ բնակեցոյց նա ի Հռոմ, և սրս ի Հռոմայ կրկնապատիկ քան զմնացեալսն անդա նօր բերեալ բնակեցոյց ի Կամերիա յառաջնում աւուր Աղոստոսի: Եւ այսչափ

ապա բազմութիւն քաղաքացեաց յաւելաւ նմա՝ յետ երբ վերշտասան ամաց չինուածեան Հռովմայ: Իսկ ի մէջ այլոց ասացն բարձեալ տարաւ նա ի Կամերեայ և զՔառաձիան պղնձի, և զայն նուիրեալ կախեաց ձօն ի մեհենին Հերկեստեայ, և դրօշեալ կարգեաց իւր պատկեր պսակեալ ի Յաղթութենէ:

Եւ այսպէս ապա երբեմն զօրացեալ հաստատեցաւ, որք միանգամ տկարագոյնքն էին ի մերձաւոր բնակաց անտի՝ ընդ լծով մնին նորա, և յանդորրու կացեալ գոհանային. իսկ որք զօրաւորքն էին՝ խնթացեալք և նախանձաբեկ ևս եղեալք՝ ոչ ինչ արժան համարեցան անվրէժ կալ ծնալ. ի վեպ եկին զդէմ ունել բարգաւաճմունեան Հռոմուլոսի և սանձակոծել զնա: Եւ առաջին ի Տիւրրենացւոց անտի վէճացեալք՝ որ գաւառ ընդարձակատարած ըզբռամբ ունէին և բնակէին ի մեծի քաղաքի, սկիզբն արարին մարտի պատերազմի. խնդրէին պահանջէին զփիդինա՝ երբեմն իւրեանց վիճակ սեպհական: Իսկ էր ոչ միայն յանիրաւի խնդիրն, այլ և ծիծաղելի. քանզի յորժամ ի վտանգ տագնապի կային նոքա և ի մարտ պատերազմի՝ ոչինչ զօրավիգն եղեն նոցա. այլ Թողլեն լքին զմարդիկն մատնիլ ի կորուստ. իսկ ապա յաղթութեալք խնդրէին զտունս բնակութեան և զերկիր նոցա՝ յորժամ օտարք եկին բնակեցան ի նոսա: Նոքա երբեմն Թշնամանալից պատասխանիս առին ի Հռոմուլոսէ, ընդ

երկուս բաժանեցին զզօրն. մինն ի վերայ յարձակեցան Փիդինացւոց բանակին, իսկ միւսուն դիմեալք խաղային ընդդէմ Հռոմուլոսի: Արդ ի Փիդինա նշան յաղթութեան կանգնեալ՝ արս երկու հազար ի Հռոմայեցւոց տապաստ արկին. իսկ անդառաձ ի պարտութիւն մատնեալք յերեսաց Հռոմուլոսի՝ առաւել քան զուրթ հազար անկան տապաստ ի նոցանէ: Իբրև միւսանգամ առ Փիդինեաւ Ճակատ յարձակեցին նոքա, անգանօր՝ որպէս առհասարակ խոստովանեալ է՝ կարի յոյժ առաւել քան զամենեսեան նահատակութիւն մեծ նահատակեցաւ ինքնին Հռոմուլոս, զբուեստ զամենայն զիւր ընդ արութեան քաջութեան ի դէմս բերեալ, կորովութեամբ ուժոյն և ոտից արագութեամբ յոյժ ի վեր առաքինացաւ քան զմարդկան բնութիւն: Իսկ որ ինչ միանգամ յայլոց ոմանց պատմի, գլխովին յառասպելեացս սակի է, մանաւանդ եթէ և ամենևին անհաւատալի բանք. իբրու եթէ ի չորեքտասան հազարաց անտի անկելոց՝ կիսով չափ և առաւել՝ ինքնին Հռոմուլոս իւրով ձեռամբն կոտորեալ լցէ. որպէս և Մեսինացիք գլխովին Թուին մեծ ապանձ բան Ճառել յաղագս Արիստոմենեայ, իբրու որ երիցս Հարիւրապանդս յաղեալ լիցէ՝ հարուածս նոյնչափ ածեալ ինքնին ի վերայ Լակեդեմոնացւոցն: Ա՛յլ իբրև Թիկունս դարձուցին մնացեալքն, եթող զնոսա Հռոմուլոս խուճապել ի փախուստ. և ինքն

խաղայր գնայր ՚ի քաղաք անդր նոցա. խակ քաղաքացիքն առ մեծի անձկութեան և հարուածոյն ոչ ժուժեալ զդէմ կալ յոզք խնարհեցան, և միաբանութիւն և բեկամութիւն կուեցին ընդ նմա ընդ ամն հարիւր. և շատ լինէր ՚ի գաւառէ անտի իւրեանց եառնն ընդ ձեռամբ նորա, զոր նոքա կոչեն Սէէրէմաճիւմ, այն է՝ եօթնեորդ մասն. այլ և զաղէհանան՝ որ առ գեառնին՝ ընծայեցին նմա, առ այս և յիսուն այր յաւագայ անտի իւրեանց պատանդս ՚ի ձեռս եառն նորա: Բայց Հռոմուլոս՝ և վասն սոցա յաղթանակի հանդէս կառուցեալ ՚ի հնգետասանն Հոկտեմբերի. և ընդ այլ բազմաթիւ գերւոյն ձերբակալ ունէր և զզօրավարն ինքնին զՎէյացոց, այր ծեր. այլ անձահ իւրում հասակին՝ անխնամատ յանդիմանեցաւ նա և անփոյթ ՚ի գործ զօրավարութեանն: Վասն որոյ և ցայսօր տակաւին յորժամ զյաղթական նուէրսն զոհեն, ծեր մի առեալ ընդ հրապարակն ածեն բերեն ՚ի Կապիտոլիոն ծիլանազգեաց, և մանեակ մի զոսկւոյ կապեն ՚ի նա. իսկ անդուստ քարոզն աղաղակէ Սարդիոյէ ՚ի վաճառ: Քանզի զՏիւրրենական ազգս Սարդիացւոց. և քաղաք Տիւրրենական՝ էն Վէյացիք: Եւ ապա մարտ զայս վերջին մարտեաւ ինքնին Հռոմուլոս:

Բայց զոր լինէր միանգամ կրել բնաւորեցան բազումք, մանաւանդ եթէ բաց ՚ի սակաւուց առհասարակ ամենեքեան՝ որ ՚ի մե-

ծամեծ և՝ ի նորաստանէ բախտից օժանդա-
կեալք բարձրացան՝ ի զօրութիւն և՝ ի մեծ
աւագութիւն, զնոյն և նա ինքն Հռոմու-
լոս ոչ լինէր անբաժ մնաց՝ ի կրից անտի.
քանզի՝ ի վեր վազեաց ամբարհաւաճեցաւ
ընդ արութիւնս նահատակութեանցն, և
բարձրացաւ վիքացաւ՝ ի միտս իւր, ուծա-
ցաւ՝ ի մեծերմութենէ ոգւոյն, և փոխեաց
դարձոյց՝ ի միապետութիւն ոխերիմ. և
առաջին՝ վասն կերպարանի պատմուճանին՝
զոր զանձամբն արկանէր՝ խեթիւ հայեցան
ընդ նա: Քանզի պատմուճան ծովագոյն
արկանէր զանձամբ, և պճնաւոր ծիրանի
բարձեալ բերէր. և՝ ի գահոյս իմն թե-
քեալ կեաս կոյս՝ բազմեալ ճոխաբար տայր
պատգամս, և շուրջ զնովաւ կային հանա-
պազ՝ ի պատանեաց անտի՝ որ անուանեալ
կոչէին Ընկերս, ՝ի պատճառս շուտա-
փոյթ արագութեան՝ ի գործ պաշտաման
իւրեանց: Իսկ յառաջոյ նորա ընթանայ-
ին և այլք ոմանք՝ որ բերր՝ ի ձեռին վանէին
վարատէին զամբոխն, և գօտևորեալք էին
փոկովք՝ որպէս զի վաղվաղակի կապեալ
պրկեսցեն զորս միանգամ հրամայեսցէ նա
ունել: Իսկ զկապեալն՝ հինքն՝ ի Լատինաց
Լիկտոռ՝ ասէին. իսկ այժմ Ալլիկտոռ՝
կոչեն, ուստի և Բրատորքն այն՝ կոչին Լի-
կտօռս, իսկ Բիլքն կոչին՝ Պաֆուլի. զի երբեմն
գաւազանս վարէին զբերան զայն: Եւ մարթի
է ևս ասել, եթէ Լիկտօռս անուանեն
այժմ՝ ի նեղքս ապրդելով ֆասկիդ. իսկ
՝ի նախնումն կոչէին նոքա Լիկտօռս, այն

և հելլենացի անուանդ Լիբուրէ, որք են ոսոխականք ժողովրդեան. քանզի և մինչև ցայսօր Լիբն կոչեն հելլենք զժողովուրդն և Լաճն զռամիկն: Ա՛յլ յորժամ հաւ նորա Նումիտոր մեռաւ յԱլբիա, թէպէտ և նմա անկանէր թագաւորութիւնն, նա՛ի շնորհս ժողովրդեան՝ ի մէջ առեալ կացոյց պետութիւն քաղաքական, և ամի ամի տայր Սաբինացւոց քաղաքապետ: Ջնոյն և՛ի Հռոմ կրթեաց հրահանգեաց նա զՃոխան և զքաւորան՝ ի քաղաքայնոց իւրոց խնդրել պետութիւն ինն քաղաքական անթագաւոր և անձնիշխան, յորում միանգամայն և իշխէին և իշխեալ լինէին: Քանզի և ոչ անուանեալ պատրիկքն անգամ բաժանորդք լինչ էին՝ ի գործ պետութեան, այլ անուն միայն ունէին նոքա փառաւոր և կերպարան պատուոյ. և՛ի պատճառս սովորութեանն՝ քան եթէ խորհրդոյ աղագաւ խմբեալ նոքա՝ ի խորհրդարան անդր, լռիկ այնպէս և անշըշունչ նստեալ ունկն մատուցանէին՝ ի հրամայել նորա. և քան զբազմութիւն ռամկին զայս լինչ առաւել ունէին՝ զի յառաջ քան զնոսա իրազգած լինէին եղելոցն, և այնպէս ասպա ելանէին յատենէն: Ա՛յլ այս ամենայն նուաղ լինչ էր արդեօք, իսկ յորժամ նա լինքնին առանձին բաժանեաց զօրականին զերկիրն ստացեալ՝ ի սայր սուսերի. դարձեալ և զպատանդան առեալ ետ՝ ի ձեռս վէյացւոցն, ընդդէմ խորհրդոյ հաւանութեան և կամաց պատրիկացն, յայնժամ կարի՝ ի խոր խոցեաց նա զհերակոյան.

որը աղագաւ և ՚ի միտս կասկածոտս եղեն զծերակուտէ, և զրպարտութիւն ևս պատշարեաց զնոսա, յորժամ յանկարծակի յետ սակաւուց անհետացաւ Հռոմուլոս ՚ի միջոյ: Եւ անհետացաւ նա յետքին Յուլիսի, որպէս կոչեն այժմ, իսկ յայնժամ Կուինփիլիս: Եւ ոչ ատոյգ ինչ յասել և ոչ դատձեալ արժանահաւատ ինչ ՚ի լսել եթող նա վասն մահու վախճանին իւրոյ՝ բայց ՚ի ժամանակէն զոր այժմդ ասացաք: Քանզի և մինչև ցայսօր ժամանակի ՚ի նմին իսկ աւուր կատարին շատ ինչ յայնպիսեացն անտի՝ որ զնամանութիւն բերեն զաշխարհս կրկին որ յայնժամ:

Սակայն և զարմանալ չէ արժան ընդդատանութիւն բանին, ուր և Սկիպիոն Ափրիկանոս յորժամ ՚ի տան անդ իւրում յետ ընթրեացն անկաւ և մեռաւ, ոչ ինչ արժանահաւատ և ոչ դարձեալ ճշդրտապատում ինչ գոտաւ օրինակ մահու նորա: Ասէ կէսք ասացին՝ եթէ բնաւորապէս նա անկաւ և մեռաւ՝ անգամին ՚ի բնութենէն գոլով ախտակիր. իսկ կէսք՝ եթէ նա անձին արար դեղովք. իսկ կէսք դարձեալ՝ եթէ թշնամիք նորա գիշերի ՚ի վերայ անկեալ հեղձամահ արարին զնա: Եւ սակայն Սկիպիոն անկեալ կայր գիտակնացեալ յանդիման աչաց ամենեցուն. և գիտին նորա զինեալ յամենեցուն՝ տեղի տայր տեսանելեացն կասկածել ինչ և մտախոհ լինել վասն կրկին մահուն: Իսկ Հռոմուլոս յայնան թօթափել բարձեալ ՚ի միջոյ, և ոչ

նչխար մի մարմնոյ նորա ուրեք երևեցաւ երբեք, և ոչ դարձեալ ծուէն մի հանդերձ նորա. ուստի և ի միտս կասկածոտս եղեն ոմանք՝ եթէ ի տաճարի անդ չէ փետառեայ Սիմկղետոսն ի վերոյ յարձակեալ և խողխողեալ զնա՝ գէշագէշ յօշեցին զմարմինն. և այր այր իւրաքանչիւր մանն մի զդիականն ի ծոց իւր առեալ գաղեալ՝ այնպէս տարան ի բաց: Իսկ այլք ոմանք համարին՝ եթէ ոչ ի տաճարի անդ չէ փետառեայ և ոչ դարձեալ ի մերձ կալ Սիմկղետոսին միայն ընդ միայն՝ անհետացաւ Հռոմուղոս. այլ ի վայր բացօթեայ՝ յորժամ մերձ ի ձահիճն անուանեալ Այծու ճահիճ, կամ Այծենան, գէպ եղև զի ժողով մի խմբեալ էր Հռոմուղոս, անդէն յերկակարծումն ժամու հրաշատես և ի վեր քան զբան այսք ամբոխեցան յօգս, և խռովութիւնք սոսկալիք. քանզի արևուն խաւարեցաւ լոյս, և գիշեր պատեաց աղջամղին և արհաւրօք լի, և անդ ամպրոպք ահընկէցք և հողմոյ շնչմունք զայրագին՝ մերկ մեծ յուզեցին յամենայն կողմանց: Իսկ անդանօր ամբոխ բազմութեանն ցիր և ցան դաշտաց ի փախուստ խուճապեցաւ, բայց ազգանին ի մի վայր եկեալ կացին առ միմեանս. և երբև խռովութիւնն հանդարտեաց և միաբանգամ ծագեաց լոյս, ի նոյն վայր անդրէն գայր խնդէր խուժանն, և անձուկ բերէր ի խնդիր արքային: Ընդ ապա ազգանին ոչ թոյլ տայր նոցա ձեռքերս իւ խուզել և ոչ դարձեալ տաղտապիլ ինչ.

այլ իբրաւ տայր և յորդորեր նա զամբոխն շուք պատուոյ տալ Հռոմուլոսի և պաշտել զնա՝ իբրու որ առ դիս անդր յափշտակեալ էցէ, և որ Թագաւոր գոլով բարի՝ այժմ նոցա աստուած բարեմտին լեալ էցէ: Եւ ասէն՝ եթէ բազմութիւն ամբոխին լուեալ զայս և հաճեալ՝ ուրախութեամբ մեկնեցան 'ի վայրացն, և քաջայոյս եղեալք երկըրպագութիւն նա մատուցանէին նմա. իսկ կէսք 'ի նոցանէն զգործն զայն դառնապէս և զայրագինս կշտամբեալ՝ արհավիրս նա արկանէին զպատրիկոքն և դառափեա առնէին զնոսա՝ իբրու որք բանս բանադատուչանաց շաղփաղփեացեն առաջի ժողովրդեան, մինչեւ գլխովին գոլով մարդասպանք առն Թագաւորի:

Ադդ իբրև յայս արհաւիրս պաշարեալ կային նոքա, այր ոմն՝ ասէն 'ի պատրիկաց անուն նախահպատիս և առաջին յազնուականն՝ և 'ի քաղաքավարութեան կենացս նաթատ և ականատես, և նմին իսկ Հռոմուլոսի հաւատարիմ և մտերիմ և մի 'ի գաղԹելոց անուն ՅՆդբեայ, Յուլիոս Պրոկղոս անուն նորա, էկն եկաց 'ի հրապարակ անդր, և երդմնի եդեալ ձեռն 'ի վերայ նուիրականն արբուԹեանցն՝ ասէ յանդիման ամենեցուն, եԹէ զնաղդ 'ի գնալ իւրում 'ի ձանապարհի ընդ առաջ եղեալ երևեցաւնմա Հռոմուլոս, գեղեցիկ նա տեսանելով և յաղԹ մարմնով որպիսի չէր նա առ կեանդանութեամբն, վառեալ և զարդարեալ 'ի զէնս պայծառս և լուսաճաճանչս: Իսկ ինքն

հիացեալ յասպուշ կրթեալ ընդ տեսիլն, ,, Ո՞վ Թադաւոր՝ ասէ, զի՞նչ արդեօք կրեալ քո կիցս, կամ զի՞նչ զմեսաւ ածեալ երբեք, Թողեր լքեր զմեզ յամբաստանութիւնս իմն անիրաւս և եղեռնաւորս. իսկ ոչ՝ զքաղաքն՝ որբացեալ և՝ ի բիւրս պաշարեալ ոչխս և աշխար'': Իսկ նա պատասխանի տայր զայս ինչ. ,, Վիշն այսպէս հաճոյ եղև ո՛վ Պրոկղէ, զի մեք՝ որ՝ ի վերուստ անտի գոլով այդչափ ժամանակ գեգերեցաք ընդ մարդկան և քաղաք մի շինեցաք իշխանութեամբ հոյակապ և փառաւոր, դարձեալ միւսանգամ անդ՝ ի վեր յերկինս գնացեալ բնակեցուք: Այլ դու խնդա, և տուր պատգամ Հռոմայեցւոցն, զի ընդ ոչխարս քաղաքավարութեան և՝ ի քաջութիւն առութեան կրթեալք զանձինս՝ ի ծայր անդր ժամանեալ հասցեն նոքա զօրութեան կանանցածնաց. իսկ ես եղէց ձեզ Կուիրինոս՝ Պաշտօն բարեմոյն'':

Այս բանք հաւատարիմք երևեցան Հռոմայեցւոց՝ ի պատճառս դեղեցիկ քաղաքավարութեան առնն՝ որ խօսէր, և յաղագս երդմանն: Հանդերձ այսու և կիրք իմն առաւածայինն՝ իբրու ոգեշնչութեամբ ոմանք միանգամայն շարժէր վառէր զնոսա. քանզի և ոչ ոք անգանօր՝ ի խուժանէն ընդդէմ լինչ խօսեցաւ, այլ միանգամայն զամենայն խելթ և զկասկած և բանսարկութիւն՝ ի բաց եդեալ, աղօթիւք ուխտ դնէին Կուիրինեայ և իբրև աստուած կարդային զնա:

Արդ՝ այսոցիկ բանից նմանատիպք են

և առաստելաբանութիւնքն Հելլենացւոց յաղագս Արիստէոսի Պրոկոննեսացւոյ և յաղագս Կղէոմեդեայ Ասիւպաղացւոյ։ Քանզի ասեն՝ եթէ Արիստէոս անկեալ մեռաւ ՚ի վանս ուրեք Թաւրկի. և իբրև բարեկամք նորա չոքան անդր բառնալ զմարմին նորա, աներևութացեալ գտին զնա. և թէ՝ արք ոմանք որ այն ինչ գարձեալ գային յուղևորութենէ Լուբեանց, պատմեցին՝ եթէ պատահեցան նոքա Արիստէոսի՝ որ դէմ եգեալ գնայր ընդ Ճանապարհն Կրոտոնեայ։ Իսկ վասն Կղէոմեդեայ պատմեն, եթէ ուժաւոր գոլով յոյժ և հասակաւ մարմնոյն կարի վիթխարի, այլ ՚ի քաղաքավարութեան կենաց ապուշ և յեռատամիտ և կատալի, շատ ինչ գործեաց հարստահարութենս. և ՚ի վախճանի՝ ՚ի վարժարանի ուրեք մանկանց զսիւն մի որ վերամբարձեալ ունէր զյարկն՝ հարեալ ձեռամբ խորտակեաց ընդ մէջ, և ՚ի վայր հոսեաց զձեղունն։ Իսկ ՚ի մեռանել անդ տղայոցն՝ զհետ սպրդեցան նորա. նա փախեաւ և գնացեալ եմուտ ՚ի տապան մի մեծ, և փակեալ ՚ի նմա՝ այնպէս ինն պնդապէս ունէր ՚ի ներքուստ զկափարիչն, որպէս զի և յանհնարինն եղև Թաւալեցուցանել զնա՝ Թէպէտ և շատք ոմանք ՚ի միասին բուռն առնէին. իսկ իբրև խորտակեցին զտապանն, ոչ գտին ՚ի ներքս անդ զայրն ոչ կենդանի և ոչ մեռեալ. զահի հարեալք առաքեցին պատգամ հարցանել ՚ի Դեղփիս, որոց պատասխանի զայս ինչ ասէր Պղեթիաս, " Վերջինն Դևցա-

զանց կղեմեդէս Ասուածալսցի" : Ասեն՝ եթէ և յորժամ զԱրկմենեայ զդիակն բարձեալ տանէին, անյայտացաւ. և սեսին զի վեմ մի հանգուցեալ կայր ի դադաղի անդ: Եւ դլխովին իսկ բազում ինչ յայսպիսեաց ասոի առասպելաբանեն արտաքոյ բանի, աստուածացուցանելով զմահկանացուսն բնութեամբ և ի դիցն խառնելով ի կարգ:

Եւ արդ դլխովին զլանալ առաքինու-թեան մասին՝ զաստուածայնութիւնն, ամ բարշտութիւն է և տմարդութիւն. սակայն և ընդ երկնից խառնել զերկիր՝ անմտութիւն է: Ի բաց ուրեմն թողլի են այդպիսիք, յորժամ հաւասար է մեզ՝ ըստ Պինդարոսի բանին՝ եթէ, " Թէպէտ և մարմին առհասարակ ամենեցուն ի նեղքոյ կայ մեծազօրն մահու, սակայն և ամբողջ տակաւին կայ մնայ յաւիտենականութեանն պատկեր" : Քանզի սա միայն է յաստուածոց անուն, զի անդուստ ի վերուստ գայ՝ և անդր միւսանգամ դառնայ: Ոչ եթէ ի միասին ընդ մարմնոյ, այլ յորժամ յաւէտ իմն ի բաց մեկնեացի ի մարմնոյ, և որոշեալ զաստուցեալ, և ելնցի մաքուր և սուրբ ամենևին և անխառն ի մարմնոյն և ջինջ: Քանզի հոգին ինքն յորժամ ի ցամաքութեան կայ, պատուականագոյն է, որպէս ասէ Հերակլիտոս, իբրև զփայլակն յամպոյ՝ ի բաց թռուցեալ ի մարմնոյ. իսկ յորժամ ընդ մարմնոյ խառնեալ է և ի մարմնոյ շուրջ պատեալ պաշարեալ է, իբրև շոգի իմն թանձրամած և մառախլապատ՝ դժուար-

ապծարծելի է և գժուարաթռիչ: Ապա ուրեմն չէ արժան զմարմինս արանց առաքինեաց ատամբոյ բնութեան առնուլ և ի միասին ընդ հոգւոյն յերկինս ի վեր առաքել, այլ հաւատալ արժան է՝ եթէ առաքինութիւնքն և հոգիքն՝ գերեցիկ և երանաւէտ վախճանի հանդիսեալք՝ ըստ բնութեանն և ըստ աստուածային դատաստանին առեալ վերաբերին ի մարդկանէ ի դիւցազունս, իսկ ի դիւցազանցն՝ ի Քաջս, իսկ ի Քաջացն՝ յաստուածս. ոչ ըստ պատուիրելոյ ինչ օրինաց քաղաքին, այլ ճշմարտութեամբ և ողջախոհ մտածութեամբ. սակայն եթէ անվթար՝ իբրու ի նուիրական իւղագլխութիւնան մաքրեալք իցեն և սրբեալք, զամենայն միանգամայն ի բաց դնելով զմահկանացու և զվշտմբեր զկիրան:

Իսկ զկուիրինոս անուանակոչութիւնն Հռոմուլոսի, կէսք ասեն՝ եթէ Արէս է. և կէսք՝ եթէ քանզի և քաղաքացիքն ինքնին գլխովին անուանեալ կոչէին կուիրիտէսք. իսկ կէսք դարձեալ՝ եթէ զտէգ նիզակին կամ զնիզակն գլխովին հինք՝ կուիրինոս կոչէին. և զդրօշեալն Հերայ զհաստատեալն ի տէգ նիզակի՝ կարդային՝ կուիրինուհւոյն Հերայ: Իսկ և զնիզակն եգեալ ի պահ ի Ռէձձիա՝ կարդային Արէս. դարձեալ և որք միանգամ ի մարտս պատերազմի առաքինի նահատակքն էին՝ նոցա ի պարգեւի մասին տային զնիզակ: Եւ այսպէս ապա իբրև Արէս զումն կամ զմար-

տիկ ումն առտուած՝ կուիրինոս անուանեալ կոչեն զՀռոմուղոս: Իսկ տաճար նորա կանգնեալ կայ 'ի բլրին՝ որ յանուն նորա անուանեալ կոչի Կուիրինոս: Ա յլ օրն՝ յորում փոխեցաւ նա 'ի միջոյ՝ կոչի Փո- խոսպ Ամբոխն և նոյն վրէժխնդիր, այս է՝ Այծականք. քանզի ելեալք ար- տաքս քան զքաղաքն 'ի ճահիճն անուա- նեալ Այծու՝ զոհ կատարեն. քանզի և զայծն նոքա վհատ անուանեն: Իսկ ար- ձակեալք 'ի զոհէն, շատ ինչ անուանս սե- հականս աշխարհին Լատեանց՝ սկսանին կո- չել բարձր բարբառով, ըստ որում՝ Մար- կեղոս, Գայիոս, այլովքն հանդերձ. զնմա- նութիւն բերելով որ յայնժամ զանցին, յորում տաղնապաւ մեծաւ և լի արհա- րոք 'ի փախուստ խուճապեցան նոքա և զմի- մեանս ձայն բարձեալ կարդային:

Ա յլ կէսք ասեն՝ եթէ ոչ փախստեան ինչ նմանութիւն էր անդ, այլ խրախու- սի և աճապարելոյ, և յայլ իմն պատճառս 'ի վեր հանեն զբանն. իբրու այն թէ՝ յոր- ժամ կէղոք լեռ առնլոյ զՀռոմ քաղաք՝ վանեցան 'ի կամիլլոսէ, և քաղաքն այնու- հետև առ տկարութեանն և հարստահա- րութեան չէ էր բաւական հեշտեաւ պաշտ- պանել անձին, բանակ 'ի վերայ յարդա- րեցին յայնժամ քաղաքին բազումք ոմանք 'ի Լատինաց, և զօրավար նոցա 'ի գլուխ անցեալ կայր Ալբիոս Պոստումիոս: Սա բանակ հարեալ զօրուն ոչինչ մերձ Հռով մայ, հրեշտակ արձակեաց ազդ առնել

Հռոմայեցւոց, եթէ խնդրեն Լատինք վերա-
ոին արձարձել ընդ նոսա զիրկեամն ընտա-
նութիւն և զազգակցութիւնն՝ զոր ի վալ
ժամանակաց ունէին. և դարձեալ միւսան-
գամ նորապսակ հարսանեաք զազգն զեր-
կոսին յօդել ընդ միմեանս: Արդ եթէ
դասս զկուսանաց արձակեսցեն առ նոսա
և զայրն կանանց, յայնժամ ապա խաղա-
ղութիւն և բարեկամութիւն հաստեսցեն
ընդ իրեարս. ըստ որում և անդ ուրեմն
օրինակ զնոյն արարին նոքա ընդ Սաբինա-
ցիս: Զայս լուեալ Հռոմայեցւոց՝ միան-
գամայն և ի կուսոյ պատերազմին զահի
հարկանէին, և զկանանցն ուժգնութիւն ի
ձեռս նոցա ոչնչիչ լաւագոյն համարէին
քան զգերութիւնն լինքնին գլխովին: Մինչ
դեռ այնպէս ի վարանս պաշարեալ կային
նոքա, անդուստ ազախին ոմն անուն Փի-
լովոխս, զոր ոմանք Տուռոլա անուանեն,
խորհուրդ ետ նոցա՝ և ոչ զմին յայնցանէ
յանձն առնուլ և կատարել, այլ նենգ
դասանաց ի նեղըս խառնելով միանգա-
մայն և ի կուսոյն անձնապուր լինել և ի
պատանդից անտի: Եւ էր նենգն այսպիսի
լինչ. զինա լինքն զՓիլովոխս և զայլ ևս ազախ-
նեայս ընդ նմա գերազարդս և պճնազար-
դեալս առնուլ արձակել առ Թշամիս անդր
եբրև զկանայս ոմանս ազատս: Իսկ ապա գի-
շերի՝ յորժամ Փիլովոխս ջահ մի վառեալ
ի բանակէն ի վեր բարձրացուսցէ, յայն-
ժամ զինուս զարդուս ի վերայ խուժեալ
Հռովմայեցիք սուր ի վերայ դիցեն Թշն-

նամեացն՝ մինչ նոքա ի քուն լցեն: Եւ
եւ ի գլուխ նենդ դաւանացն, մինչ յան-
հոգս կալին Լատինք. քանզի առեալ փի-
լովոխս զջահն վառեալ՝ շուրջ քաջ պա-
տեաց զնա ի յեռուստ գորգովք և պաս-
տառակալօք, և ընդ ծառ մի ժանտաթզե-
նւոյն ի վեր բարձրացոյց զնա, որպէս զի
Թշնամեացն աչաց աներեւակ կայցէ լոյսն,
խակ Հռոմայեցիք յայտ յանդիման տեսցեն:
Իբրև զջահ զայն յակն արկին նոքա, ան-
դէն վուԹանակի ի դուրս վազեալ աճապա-
րէին, և յաճապարել իւրեանց զմիմեանս
նոքա առ դուրսն սահել սահել խրախոյս
բարձեալ կարդային: Խակ իբրև այնպէս
յանկարծակի յեղակարծուեան ժամու ի վե-
րայ անկան Թշնամեացն և կոտորեցին զնոսա,
վասն այնորիկ զյաղԹողականն նոքա կա-
տարեն տօն. և անուանեալ կոչին Ն-ՈՆՆԱՅ-
ՖԱՒՈՍՊՆԱՅ. քանզի և զմոլաԹզենին Փ-
ՈՒՖԻՓՈՍ անուանեն Հռոմայեցիք: Ապա
և կոչունս նմին առնեն կանանց ի բաց-
օԹեայ ընդ հովանեաւ ոստոյ Թզենւոյն.
խակ աղախնեայք խմբին անդանօր և պարս
պարեն և խաղս խաղան, և ապա քարձիգ
լինին միմեանց և հարկանեն զերեսս. ըստ
որում և յայնժամ ի կռուել անդ Հռով-
մայեցւոց՝ ոգքա խառն զօրաւիգ և մար-
տակից լինէին նոցա: Սակայն ընդ այսոսիկ
ոչ հաւանին բազումք ի մատենագրաց:
Ալ յաղագս սովորուԹեանն կարդալոյ
զանուանն զայնոսիկ յաւուր յայնմիկ, և
յաղագս գնալոյ ի ձահիճ անդր այծուն

Իբրև ՚ի կատարումն զոհի, արժան է մանա֊ւանդ հաւանել ընդ առաջին պատճառն՝ զոր կանխեցաք ասացեալ: Թէ ոչ Թեբևա արդեօք երկոքին ևս դէպք ՚ի նմին իսկ ա֊տուր յայլև այլ ժամանակս պատահեալք լցեն:

Իսկ վասն Հոմուլոսի ասեն, եթէ կե֊ցեալ ամն չիսուն և չորս, և Թագաւորեալ ամս երեսուն և ութ, յետ այնորիկ ապա անհետացաւ յաչաց մարդկան:

ՋՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՀՌՈՄՈՒԼՈՍԻ ԵՒ ԹԷՍԷՈՍԻ

Ա.ՐԴ՝ որ ինչ միանգամ արժանի լիշատակաց բան Ճառել մեզ դէպ եղև վասն Հռոմուլոսի և Թէսէոսի, այդոքիկ են: Եւ արդ՝ առաջին Թուի Թէ Թէսէոս կամակար առանց ուրուք հարկաւորելոյ ինքնին՝ ի մեծամեծ նահատակութիւնս նահատակեցաւ, իբրև մարթ էր նմա յանդորրութ՝ ի Տրիզենէ նստել, և Թագ կապել՝ իշխանութիւն զանձամբ առեալ ոչինչ անփառունակ:

Իսկ Հռոմուլոս փախուցեալ՝ ի ծառայութենէն՝ յորում կայր, և՝ ի պատուհասն որ առ դուրս նորա հասեալ կայր, ըստ որում ասաց Պղատոն՝ անարուեստաբար առ ահի երկիւղին գոտաւ արիական. և զանդիտեալ՝ զի մի ինչ կիրս Թերևս կրեսցէ՝ ի վերջին գժնդակացն, այնպէս հարկաւորեալ դիմադրաւ եղև գործել մեծամեծս:

Իսկ երկրորդ՝ գեղեցիկ է արդեօք նա-
հատակութիւնն Հռոմուղեայ, այն՝ զի ՚ի
մահ մատնեաց զմի ոք բռնաւոր Ալբիոյ:
Բայց Թէսէոսին յաւելուած քաջութեանց
և նախամարտիկ շահատակութիւնք էղեն՝
Սկիրոնին, Սինիսն, Պրոկրուստէսն, Կորի-
նէտեան: Սոցա պատուհաս նա ՚ի վերայ
ածեալ և տապաստ արկեալ՝ փրկեաց զՆե-
լագա ՚ի մարդախոշոյն բռնաւորաց, մինչ-
չև զնա ծանուցեալ լինչ էր նոցա՝ եթէ ո՞
ոք կայք որ յանդորր եհան զնոսա:

Ա՛ւ այս՝ և Թէսէոսի առ ձեռն էր ան-
վտտակ անցանել գնալ ընդ ծով և հարս-
տահարութիւն և ոչ մի կրեալ յաւազակաց
անտի: Սակայն Հռոմուղոսի ոչ առ ձեռն
լինչ էր անվտտակ կալ մնալ՝ մինչդեռ տա-
կաւին կենդանի էր Ամուլիոս: Եւ տարա-
ցոյց մեծապէս բանիս այն է՝ քանզի Թէ-
սէոս անիրաւութիւն և ոչ մի կրեալ լինք-
նէն՝ ՚ի պատճառս այլոց լինքն նահատա-
կեալ յարձակեցաւ ՚ի վերայ չարաց մարդ-
կան. իսկ Հռոմուղոս և Հռեմոս՝ ցորվայը
չարիս և ոչ մի կրեցին ՚ի բռնաւորէ ան-
տի, զանց առնէին զնովաւ՝ որ առհասարակ
հարատահարէր զամենեսեան:

Ապա եթէ մեծ է վերս առնուլ Հռո-
մուղեայ ՚ի կռուիլն ընդ Սաբինացւոց, և
դիտապատս առնել զԱկրոնին, և զբազում
այլ ՚ի թշնամեացն ՚ի մարտին նկուն առ-
նել. ընդ այսոցիկ ապա նահատակու-
թեանց ՚ի կշիռ ձգել արժան է և զԹե-
սեայ առաքինութիւնան ՚ի կռուիլն ընդ

Յուշկապարկաց, և որ լինչ միանգամ առ Ամազոնան:

Իսկ այն՝ զի ՚ի հարկահանութեանն անդ Կրետեայ կղզւոյն դիմագրաւ Թէսէոս զանձն ՚ի նեղըքս ընծայեաց՝ կամակարու- թեամբ սրտի խաղալ նաւել ընդ օրիորդացն և ընդ պատանեկացն ՚ի Կրետէ, և անդ կամ ուժիք ՚ի գաղանացն կուռ լինել, կամ ՚ի սպանդ յաղիլ չերմին Մինդրոգեայ, և կամ թէ՝ որ դուշնաքեայն է քան զառա- ջեալսդ, Թշնամանադիր և ոխերիմ որե- րոյն Կրետացւոց անփառունակ պաշտօն հարկանել, և յանշուք նուաստութիւն առնուլ զանձն ինքուցանել. արդեօք ո՛չ դք երբէք բաւական լցէ ասել, քանիօն արու- թիւն քաջութեան լցէ բանդ, քանի՛ մեծ- անձնութիւն, քանիօն արդարութիւն առ հայրենիսն, քանի՛ սէր վառաց և առաքի- նութեան: Մինչ զի ինձ թուի՝ թէ ո՛չ ան- բարի լինչ սահմանեցին խնամատարքդ, եթէ՝ Սէրն պաշտօնեայ է աստուածոց ՚ի խնա- մարկութիւն և ՚ի փրկութիւն պատանեաց: Քանզի սէրն Ադիադնեայ՝ որպէս թուի՝ առաւել քան զամենայն՝ գործ եղև աստու- ծոյ և հնարք Ճարտարութեան ՚ի փրկու- թիւն առն: Եւ չէ արժան մեզ դնել սի- րոյն այնմիկ, այլ զարմանալ՝ զի ո՛չ ամենե- քեան անգանօր զնոյն օրինակ կրեցին: Եւ եթէ նա միայնակ կրեաց, ապա և ես ար- ժանապէս արդեօք ասացից, եթէ նա՝ որ ոխրեաց զլսաւն, որ սիրեաց զբարին, և որ արանց առաքինեաց ՚ի սէրն հարաւ, լինքն

և արժանացաւ անշուշտ սիրելի և փառելի լինել աստուծոյ:

Եւ արդ՝ երկոքին միանգամայն Հռոմուլոս և Թէսէոս անգամին ի բնութենէն քաղաքագէտք, և ոչ մի ոք ի նոցանէն պահեաց զօրինակ ալքունի քաղաքավարութեան: Ա՛յլ շրջեցին զնոյն ի փոփոխութիւնս, մին՝ ի ռամկականն, և միւսն՝ ի բռնաւորականն. և զնոյն մեղս մեղան երկոքին վարեալք ի նեբրհական կրից: Քանզի պարտ և արժան է իշխանին նախ առաջին պահել պահպանել զնոյն ինքն զիշխանութիւն. և պահի նա ոչինչ նուազ ի բաց կալով յանվայելչականացն, որչափ պատկառ կալով վայելչականացն. իակ որ սանձարձակ լուծանէ զինս, և կամ պնդապէս սանձակոծէ, ոչ ևս ճնայ այնպիսին թագաւոր և ոչ դարձեալ իշխան. այլ կամ ծաղդելոյզ լինելով ռամկին և կամ տէր բռնաւոր, անկանի կամ յատելութիւն իշխեցելոցն և կամ յարհամարհութիւն. և ի սոյանէ առաջինդ Թուի Թէ քաղցրաբարոյութեան ինչ յանցանք և մարդասիրութեան. իակ վերջինդ՝ անձնասիրութեան և խստութեան:

Ապա եթէ պարտ և արժան է և ի ձախողակ գէպսն ոչ գլխովին բաղդին մեղ գնել, այլ խնդրել հետազօտել յայնոսիկ և զայլևայլութիւն բուսոյ բարուցն և ըզկրից իւրաքանչիւր, ապաքէն յանբանաւոր պատճառութենէն և ի շուտափոյթ անխորհուրդ ցասմանէն ոչ ոք ազատ կացուցանէ ար-

գեօք ոչ զմին ՚ի գէպան անդ եղբօրն, և ոչ դարձեալ զմիւսն ՚ի գէպան անդ որդւոյն: Սակայն սկիզբն չարժիչ սրտմտութեանն՝ ա ռաւել ևս ներքնի ողորմութեան գործէ զմարդ՝ որ ՚ի մեծաց պատճառաց յուզեալ էր, իբրու այն՝ որ յուժգնակի իմն թափոյ բերեալ էր: Քանզի Հռոմուղոսի ոչ ոք ներեաց արդեօք, որ ՚ի մեծամեծ խորհրդոց անտի իւրոց և ՚ի խնամակալութեանց յաղագս հասարակացն բարեաց՝ ՚ի լինել լինչ գժտութեան՝ անդէն յանկարծակի յայնչափ իմն կիրս բարկութեան շրջեաց փոխեաց զմիտս իւր: Իսկ զթէսէոս յորդի անդր դրդեաց սէրն և նախանձաւոր կիրք և բանասիրութիւն կինոջն, յորոց յոյժ նուաճզունք արդեօք ՚ի մարդկանէ ազատ եղեն: Իսկ որ մեծն է՝ սրտմտութիւն բարկութեանն Հռոմուղոսի բրդեցաւ ՚ի գործ և յարարած՝ որոյ ոչ բարեբաստ եղեն եղքն: Իսկ ցասումն թէսէայ մինչև ՚ի բան բերանոյն միայն սահմանեցաւ և ՚ի յիշոցս և յանէծս իմն ծերունեաց արանց. իսկ ասպա յայլ աւելնայն գէպան՝ թուի թէ բաղդն ինքնին գործեաց ՚ի պատանին: Որ պէս զի և իրաւունս ոք արդեօք տացէ թէսէոսի յաղագս իրացս այսոցիկ:

Իսկ և Հռոմուղոսի առաջին մեծապէս փառք այն են, զի հիմունս արկ նա փոքունս յաղագս մեծամեծ գործոց. քանզի որք ծառայք ապաստարկուքն էին և խոզաբուծից որդիք անուանեալ կոչէին, մինչև ինքեանք ազատացեալք՝ վայրիկ մի ևս զամե-

նայն Լատինս առհասարակ յաղտոութիւն կարգեցին: Եւ ի միում անդ ժամանակի միանգամայն և անուանս մեծաշուք և գեղեցիկ յանձինս իւրեանց ընկալան, վանինչ Թշնամեաց և փրկիչք ընտանեաց և Թագաւորք ազգաց և շինիչք քաղաքաց, և ոչ փոխադրիչք. ըստ որում Թէսէոսն էր՝ որ ի բազմաց անտի բնակութեանց առեալ մի միայն յօդեաց բնակարան, հիմն ի վեր առնելով քաղաքս բազումս՝ անուանակիցս արքային և գիւցազանց նահինեաց: Իսկ Հռոմոլոս զայսոսիկ ի վերջէ կատարեաց, յոր ժամ զԹշնամիսն իւր ի նեղ լծեաց Թողուլ լքանել զտունս բնակութեան իւրեանց և բնալինջ յատակել, և ընդ յաղԹականացն ընդ մի համար մնանել: Իսկ յառաջն զորս միանգամ կալին ի քաղաքաց՝ զայնոսիկ ոչ փոխադրեաց և ոչ գարձեալ աճեցոյց, այլ գործեաց իբրև յանդոյից ոմանց, և ստացաւ անձին իւրում գաւառ միանգամայն և հայրենի տուն և արքայութիւն և ազգ և ամուսնութիւնս և ընտանութիւնս. ոչ զոք ի մահ մնանեաց և կամ ի կորուստ. բարեգործեաց առհասարակ ամենեցուն՝ զոր միանգամ անտունք և անյարկք խնդրէին լինել ժողովուրդ և քաղաքացիք: Բայց զաւազակս և զչարագործս նա ի մահ ոչ մնանեաց, սակայն ազգս և ազինս նկուն արար մարտիւ պատերազմի, և քաղաքս հիմն ի վեր տապալեաց, և արքայս ոմանս ի հանդէս յաղԹականին իւրոյ ձգեաց և զերաւարս:

Յակ Թէ Հռեմոսին մահ յոյր ձեռաց արդեօք առնէին, կը զգակարծելի է բանդ. և բազումք այն էին՝ որ զայլովք արկանէն զմեղն: Ա՛յլ զմայրն իւր զվտանգեալն ՚ի մահ՝ նա յայնասկս փրկեալ ապրեցոյց, և զհաւն՝ որ անփառունակ սպաս հարկանէր և անշուք՝ առեալ ՚ի գահ անդր էնէասայ բազմեցոյց, և շատ ինչ կամակար տրտիւ բարեգործեաց ՚ի նա, իսկ ինասեաց ոչ ուրեք և ոչ յակամայս ինչ:

Բայց Թէսէոսի մուսայօնքն և անհոգութիւն ՚ի լուսին պատուիրանի՝ որ յաղագս առագաստին, հազիւ արդեօք՝ որպէս ետս համարիմ՝ երկայնաձառ ջատագովութեամբ՝ Թէպէտ և առաջի խօթամիտ դատաւորաց, ազատ կացցէ ՚ի բամբասանաց անտի հայրասպանութենէն: Քաջ իսկ բանին ՚ի վերայ հասեալ Աստիկեցի ոմն այր՝ քանի գժուարին էցէ խնդրել ջատագովել զնա, հնարս իմն հնարի՝ իբրու ետէ ՚ի մերձենալ անդ նաւուն՝ Եգէոս ինքնին ՚ի շտապ տագնապի ընթացեալ էցէ ՚ի գղեակ անդր քաղաքին ՚ի զննել զնաւն, և անդ գայթակղեալ ոտիցն՝ գահավիժ անկեալ էցէ ծերունին. որպէս Թէ այր Թագաւոր գլխովին մեռանցեալ էցէ յիւրոց սպայից, կամ Թէ ՚ի շտապ ուղևորութենէն նորա ՚ի ծով անդր՝ և ոչ մի ոք ՚ի պաշտօնէից նմա մերձ ոչ կացեալ էցէ:

Եւ արդեօք զոր ինչ միանգամ յանցեաւ Թէսէոս ՚ի յափշտակութենէն կանանց՝ ցնորք և անբաժ էն ՚ի գեղեցիկ և յիրաւս

ցի պատրաստակէ : Եւ առաջինն՝ զի շատ անգամ յափշտակեաց . քանզի յափշտակեաց զԱբրահամն և զՅակովպ և զՅոսէփ Տրիզենացի . ի վերայ այսր ամենայնի՝ ի ծերացեալ հասակին և զՀեղինէ ինքնին գլխովին , այն՝ որ չև էր հարսնացու , այլ օրիորդ անտիական . իսկ ինքն հինն աւուրց՝ որում և յօրինաւուր ամուսնութեանց անգամ ժուժկալել այնուհետև արժան էր նմա : Եւ երկրորդ անգամ՝ յաղագս պատճառին . քանզի այդ ոչ խօսեցեալ դատերգդ Ցրիպենացւոց և Լակոնացւոց և Ամազոնաց՝ ոչինչ արդեօք արժանաւոր զաւակագործք էին քան զդատերս Աթենացւոց սերեալ Յերեքթեայ և ի Կեկրոպեայ . այլ այդ գործք զանժուժկալութեանն թէսեայկար ծիս ի ներքս տան և զվավաշոտութեանն : Իսկ Հռոմուղոս ի սկզբան անդ ուրթ հարկաւ գոգցես թուով յափշտակեալ կանայս, ոչ զամենեսեան՝ այլ զմին միայն՝ որպէս ասեն՝ զԵրսիլիա առ յինքն . իսկ զայլսն առեալ բաշխեաց ի քաջորեար քաղաքացիան : Եւ ապա յետ այնորիկ պատուագիր շքոյին և սիրոյն և արգարութեամբն ի կանայս անդր՝ յայտնի ի գէմն երթր . եթէ բռնութիւնդ այդ և հարստահարութիւնդ կատարեցաւ երբէք գործ գեղեցիկ և քաղաքարուեստ հանճար ի պատճառս կենակից ընկերութեանն : Եւ այնպէս ապա ի մի առեալ խառնեաց զազգն և յօգեաց շաղկապեաց ընդ միմեանս . և ապագայիցն երաց աղբիւր լիճն ի ներքս բլրեցոյց զմուրը-

մուԹեան սիրոյ և զգօրուԹեան : Իսկ դե՛ղեցիկ պատկառանացն և սիրոյ և անքակ հաստատուԹեան՝ զոր նա յամուսնուԹիւնն առԹեաց, վկայէ և ժամանակն ինքնին դլխովին : Քանզի ընդ ամս երկերիւր և երեսուն ոչ այր ոք ՚ի նոսա յանդգնեցաւ Թողուլ զքանեզ զկենակցուԹիւն կնոջն, և ոչ դարձեալ կին զառն լուրոյ. այլ զոր պինակ առ Հելենացիս կարի հետաքնին մատենագիրքդ միայն աւանդեալ բաւական են, եԹէ ո՞ր ՚ի նոսա առաջին հայրապան կացեալ էջէ կամ միայրապան, նոյնպէս և Հռոմայեցիքդ առհասարակ գիտեն իսկ քա՛ զ եԹէ կարբիղիոս Սպորիոս առաջին ՚ի նոսա ՚ի բաց արձակեաց զկին իւր ՚ի պատճառս ամլուԹեանն : Իսկ ընդ այնչափ ժամանակին՝ միանգամայն վկայեն և արդիւնք գործոցն : Քանզի ՚ի պատճառս ամուսնուԹեանցն այնոցիկ բաժանորդք հաւասարք յարքայուԹեան գտան Քաղաւորք. նոյն և ազգք և ազինք կցորդք ՚ի քաղաքականուԹեան : Բայց ՚ի հարսանեաց անուն Թէսէոսին օգտակար լինէ ՚ի ներքս երբէք ոչ ընծայեցաւ ԱԹենացւոցդ ՚ի բարեկամուԹեան մասին և ՚ի կենցաղակցուԹեան, այլ ոխերիմ ԹշնամուԹիւնք և մարտք պատերազմաց և մահունք քաղաքացեաց, և ապա ուրեմն հիմն ՚ի վեր տապալեցաւ Ափիդնէ. և հազիւ ուրեմն գումԹ արկեալ նոցուն իսկ Թշնամեացն՝ որոց ա՛ ռաջի ձայն բարձեալ Ափիդնացիք յողբ անկան իբրև ստուածոց ոմանց՝ զերծան ՚ի

կրկին անուն՝ զոր ինչ միանգամ Տրոյացիքդ կրեցին ՚ի պատճառս Աղեքսանդրի։

Այլ մայրն Թեսեայ ոչ վտանգեցաւ միայն, այլ և զկնի կրեաց զչհեկաբեայ, յորժամ Թոզաւ լքաւ նա յորդւոյն իւրմէ. սակայն Թէ ոչ առանցկիկ ինչ էջեն կրք գեբուԹեան նորա. ըստ որում և քաջ խակ՝ լաւ էր ելԹէ՚ի տառԹեանց սակի էր բանդ, որպէս և այլ ևս շատ յայնպիսեաց անուն։

Իակ որ ինչ միանգամ առասպելաբանուԹիւնք են յաղագս աստուածակոյս կոլմանն, իսկոյր բազում ՚ի նեբքս բերեն վասն երկոցուն սոցա։ Քանզի մեծապէս հովանաւորուԹեամբ դիցն վրկուԹեան հանդիպեցաւ Հռոմուղոս. իսկ պատգամ պատուիրանին տուեալ առ Եգէոս՝ ոչ զուգիլընդ կնոջ ՚ի պանդխտուԹեան իւրում, զայն ինչ ակնարկի առնէ մեզ՝ ելԹէ ընդդէմ կամաց աստուածոցն ուրեմն էլ ՚ի դլուխ ծնուանդն Թէսեոսի։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Քանզի յն. Ῥώμη. Է՝ կորովութիւն, ոյժ:

2. Քանզի Ruminare, ՚ի հռովմ. լեզ. է՝ Որոճալ:

3. Էր սա և Կիկերոնէի բարեկամ: Զոր մէ ՚ի գիրս Բ. գուշակ. այսպէս վկայէ նա ինքն Կիկերոն. " Լուկիոս Տարուտիոս Փիրմանոս մերն բարեկամ, քաղդէացի վարժիչն քաջահմուտ և այլն:

4. Թերևս ՚ի յն. բառէն Ἀολλίζω. որ է՝ կուտել, խառնել:

5. Քանզի յն. Ταλασία. է՝ Ասպագործութիւն:

6. Ակնարկէ Պղուտարքոս անշուշտ յօրէնսն յայն, որ ասէ " Եթէ ոք նենգութեամբ և գիտութեամբ սպանանէ զմարդ, հայրասպան համարեսցի: " Այլ զօրէնս զայս կէսք Նումայի ընծայեն:

ՊԼՈՒՏԱՐՓԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇՈՒՔ

ԼԻԿՈՐՈՄԻ

ԵՒ

ՆՈՒՄԱՑԻ

ԼԻԿՈՒՐԳՈՍ

ՅԱՂԱԳՍ Լիկուրգոսի օրէնադրի չէք մեզ ասել ինչ անյերկուանալի. որոյ միանգամայն և ծնունդն և պանդխտութիւնն և վախճան կենացն, և առաւել քան զամենայն երկասիրութիւն նորա յաղագս օրինացն և յաղագս քաղաքականութեանն՝ այլ ազգաբար ունին զպատմութիւնս իւրեանց: Իակ յաղագս ժամանակին՝ յորում եկաց այս այր, ոչինչ ամենևին միաբան են: Քանզի կէսք ասեն՝ եթէ կցորդ և գործակից Իփիտոսի գտաւ Լիկուրգոս՝ ի հանդէս Ողիւմպիական տօնախմբութեանն: Մի է՝ ի սոցանէն և Արիստոտէլ խնամատասէրս, տալոցոյց մեզ՝ ի դէմն բերելով գնդակ մի Ողիւմպիական խաղուցն՝ յորում ողջ տակաւին արձանագրեալ կայր անունն Լիկուրգոսի: Իակ կէսք գարձեալ՝ ի յաչխորդութեանց անտի Թագաւորացն Սպարտիոյ՝ ի հաշիւ արկեալ զժամանակին՝ ըստ որում

Երատոսթենէս և Ապողոդորոս՝ ոչ սակաւ ինչ ամօք հնագոյն ցուցանեն զնա քան զառաջին Ոզիմանդիադն: Բայց Տիմէոսի կարծիք այն էն, եթէ քանզի կրկին ոմանք կացին Լիւկուրգոսք՝ ի Սպարտիա ոչ՝ ի միում ժամանակի, գործք նահատակութեանց երկոցունց նոցա՝ միում միայնոյ ընծայեցան՝ ի պատճառս փառաւորութեան միոյն, և թէ՝ երիցագոյնն՝ ի նոսա ոչինչ հեռի էր՝ ի ժամանակաց անտի Հոմերոսի. իսկ կէսք ասեն՝ եթէ և Հոմերոս ինքնին նմա ակա նատես լեալ էր: Այլ և Քսենէփոն կարծիս ինն տայ մեզ զհնութեան առն, յորժամ ժամանակակից զնա ասէ Հերակլեանցն: Քանզի՝ ի Հերակլեան զարմէն էին արդեօք և վերջին թագաւորքն Սպարտոյ. այլ թուի թէ Քսենոփոն կամի Հերակլեանս անուանել զառաջինան զայնոսիկ և զմերձաւորսն Հերակլեայ:

Այլ թէպէտ և այսպէս այսր անդր տարուբերի պատմութիւնն, ՚ի վերայ այսր՝ դուն գործեացուք մեք զհետ երթալ այնոցիկ՝ որոց նուազունք յոյժ էին ընդդիմաբանք, կամ որք վկայութիւնս ունէին քաջահաւատս և անդրժելիս, և այնպէս տալ ընծայել զպատմութիւնս անցից վասն առնս այսորիկ: Քանզի և Սիմոնիդէս քերթող ոչ զնումաս հայր ասէ Լիւկուրգեայ, այլ զՊրիւգանէս. և զԼիւկուրգոս և զնումաս բազմագոյնք՝ ի մատենագրաց ոչ այնպէս ազգաբանեն, այլ՝ ի Պատրոկղէսէ որդւոյն Արիստոդեմեայ ասեն ծնեալ զՍոս.

Իսկ 'ի Սոսէ զԵպիւդիոն. իսկ 'ի սմանէ դարձեալ զՊրիւդանէս, և 'ի սմանէ՝ զԵնոմոս: Իսկ Յենոմեայ զՊոլիպէքտէս յառաջին կնոջէն, իսկ զԼիկուրգոս կրսեր 'ի Տիանասսեայ: Եւ որպէս Եւռիպիդաս պատմէ՝ վեցերորդ է Լիկուրգոս 'ի Պատրոկղէսէ, և մեռաւանէրորդ՝ 'ի Հերակլէայ: Բայց 'ի նախահարէն Լիւկուրգեայ մեծապէս պահանջելի եղև Սոոս, առ որով և զԼոքովսացիան ընդ լծով ծառայութեան արկին Սպարտացիք. և դաւառ բազում կալան ընդ ձեռամբ իւրեանց՝ հաւասար յԱրկադացւոց անսոլ: Եւ ասեն՝ եթէ էր երբեմն զի Սոոս շուրջ պաշարեալ 'ի Կղիտորացւոց անսոլ 'ի վայր մի առասպար և անջրդի, դաշն եդ տալ 'ի ձեռս նոցա զերկկին՝ զոր սրով իւրով առեալն էր, եթէ ինքն և ոչք միանգամ ընդ նմա արբցեն առհասարակ յաղբերէն՝ որ անդ մերձ կայր: Իսկ իբրև երդմունքն կռեցան և դաշինքն, յայնժամ 'ի մի վայր խմբեաց Սոոս զորս ընդ իւրն էին և խոստացաւ տալ զաղբայրութիւնն 'ի ձեռս առն՝ որ ոչ արբցէ ջուր յաղբերէն: Իսկ իբրև ոչ ոք 'ի նոցանէն ժուժկալեաց, այլ ամենեքեան ողջոյն արբին, ինքն 'ի վերջ քան զամենեսեան ելեալ յաղբիւր անդր և միայն արակեալ զինքն՝ մինչդեռ տակաւին Թշնամիք անդ մերձն կային, այնպէս մեկնեցաւ յաղբերէն. ուսոսի և զդաւառն կալաւ ընդ բռամբ իւրով իբրև զի ոչ ամենեքեան արբին յաղբերէն:

Ա*յլ Թէպէտ և վասն այսոցիկ ամենայ-*

նի աքանչացաւ նա, սակայն և ոչ յանուա-
նէ անտի նորա՝ այլ զաւակի նորա անուա-
նեալ կոչեցին զզարմին Եկրիւտիոնէեան:
Քանզի Եկրիւտիոն Թուխ առաջին՝ որ մար-
գահաճութեամբ շնթեալ ռամկին և 'ի
շնորհս գնացեալ ընդ ամբոխին Թուլացոյց
զոյժ և զշուք միապետական պաքայութեան:
Եւ ապա 'ի մեղկութենէ աստի յայսմանէ
խիզախեալ իւրոխտացաւ ռամիկն. խակ որք
միանգամ զկնի կացին Թագաւորք, էր զի
առեալք ոմանք և ոխերիմք հանդիսանային
առաջի ժողովրդեան 'ի պատճառս բռնա-
նալոյն 'ի վերայ նոցա. էր դարձեալ՝ զի զի-
ջանէին խոնարհէին առ նոսա 'ի շնորհս
նոցա կամ առ տկարութեան իւրեանց. և
այսպէս ապա քաղաքավարութիւն անօրէն
և անկարգութիւն գրաւեալ կալաւ զպար-
տիս ընդ ժամանակս բազումս. յորմէ և
դէպ խակ եղև մեռանել պաքային հօրն Լի-
կուրգոսի. քանզի յորժամ ընդ մէջ մտեալ
կամէր մեկնել զբռնամարտիկս զոմանս՝ հա-
րեալ դանակաւ խահարարի՝ անկաւ տա-
պաստ Թողեալ զթագաւորութիւնն երի-
ցագոյն զաւակին Պոլիդեկտեայ. խակ յոր-
ժամ մեռաւ և սա յետ տակաւուց, Թագ
պաքայութեանն այնուհետև անկանէր Լի-
կուրգոսի, ըստ որում առհասարակ կար-
ծիք էր ամենեցուն: Եւ արդեօք Թագ կա-
պեաց նա՝ մինչչև հրապարակեալ էթէ յոլ
է կին եղբօրն իւրոյ:

Ա յր իբրև այսմ իրազգած եղև Լի-
կուրգոս՝ անդէն վաղվաղակի ետ քարոզ

կարդալ՝ եթէ թագաւորութիւն անկանի մանկանն՝ որ ծնանիցի արու. իսկ ինքն ՚ի ժամուն պաշտէր զիշխանութիւնն իբրև ինաձ մակալ. և ինամակալուացն որբոց ազգայի անուն կարդային Լակեդեմոնացիք Փո-ֆէ-ո-վս: Իսկ ապա դարձ առաքեալ կինն առ Լիւկուրգոս՝ բանս եդ ՚ի միջի գուն դրծել վիժել զսաղմն, եթէ միայն անկող-նակից արասցէ զնա ինքեան ՚ի թագաւո-րել իւրում ՚ի Սպարտիա: Լիւկուրգոս թէպէտ և խոժոռեալ քաջմնեցաւ ընդ խոր-հուրդ կնոջն, և ոչ ընդդէմ ինչ եկաց բա-նին նորա. նա՝ և ձևացաւ ևս գովել և յան-ձին ևս ունել զբանն, սակայն և արձակեաց առ կինն ասել՝ եթէ պարտ և արժան չէ ինասել ինչ անձին իւրում և դեղառու-թեամբ խաթարել զմարմինն և ՚ի վտանգ ևս արկանել. քանզի ՚ի ծնանել անդ ման-կանն՝ ինքնին փոյթ կալցէ նա անդէն վաղ-վաղակի կարձել զնա ՚ի կենաց. և այսպէս ապա մինչև ՚ի ժամանակ ծննդեանն ժա-մավաճառ եղև ընդ կնոջն: Իսկ իբրև լուր էառ եթէ ծննդական է, առաքեաց առ կինն արս մերձ կալ երկանց ծննդեանն և պահապան նատել առ նմա. պատուէր տուեալ նոցա՝ զի եթէ գուստր ծնանիցի, առեալ զսրտյն ՚ի ձեռս տացեն կանանց. ապա եթէ ուստր, առեալ բերցեն զնա առ ինքն՝ չինչ և գործ երբէք թարթափեալ գտցեն զնա: Ընդ՝ դէպ եղև զի չընթրել անդ նորա ՚ի միասին ընդ աւագանւոյն, ծնաւ կինն արու: Ապա առեալ պաշտօ-

նէին զմանուկն, մոին 'ի նեղութս և ետուն զնա Լիկուրգոսի. իսկ նա՝ որպէս պատմեն՝ առեալ էին զմանուկն՝ ասէր առ որս մերձն կային, Աբաս ծնաւ-յէպ, « Սպաս-պոյից. և առեալ բազմեցոյց զոտքսն 'ի գահն տղբունի, և անուն կարդաց մանկան Խոս-լսոս1. քանզի մեծապէս ուրախացեալք էին դայիկն անդ առհասարակ, հիացեալք ընդ քաջախոհութիւն և ընդ արդարութիւնն Լիկուրգեայ:

Եւ թագաւորեաց Լիկուրգոս ընդ ամենայն՝ ամիսս ութ: Այլ սակայն էր նա վասն այլոց ինչ իրաց ականաւոր յոյժ առաջի քաղաքացեացն իւրոց. և քան զնոսա՝ ոչք անսայթն նմա իբրև խնամակալուի արքայի և որ զարքունի իշխանութիւնն յանձին բարձեալ էր, բազմագոյնք այն էին՝ ոչք շուք մեծապէս եղեալ առաքինութեան նորա, զհետ լինէին պատրաստաբար կատարել զհրամայեալսն նորա: Բայց էր 'ի միջի և մախանք նախանձուն, որով և նկրտէին խոչընդոտս լինել յառաջադէմ բարգաւաճութեան առնն՝ մինչդեռ տակաւին պատանի էր. մանաւանդ ոչք միանգամ ազգակիցք և ընտանիք էին մօր արքային՝ զոր թշնամանեալ լինն և արհամարեալ կարծէին նոքա: Իսկ եղբայր մօրն Լէոնիդաս յաւուր միում յայրատագոյնս թշնամանեալ զԼիկուրգոս, յաւել ասել եթէ ճշդրտագոյնս 'ի վերայ հասեալ նոցէ ինքն՝ զի հանդերձեալ է թագ կապել Լիկուրգոս. կասկած 'ի նեղութս տալով և զան-

սարկուԹեամբ յառաջագոյն զըպարտեալսն զԼիկուրգոս երբեմն դարանակալ կենաց արքայի, եԹէ երբեք դէպ լինի մեռանել Թագաւորին: Յայսպիսեաց ասի բանիւ և կինն ինքնին զԼիսովին 'ի ներքս արկանէր:

Ա՛րդ՝ զայսոսիկ մեծապէս գԺկամակուԹեամբ բերեալ Լիկուրգոս և զանգիտեալ ևս յանձայսոյնցն, եգ 'ի մեծ պանդխտուԹեամբ ուղևորուԹեանն զերծանել 'ի բամբասանաց անտի, և գնալ Թափառել մինչև 'ի ժամանակն՝ յորում եղբօրորդի նորա յարբունս հասակին հասեալ՝ ժառանգ ևս ծննդեան իւրում արքայուԹեանն: Եւ այսպէս ապա մեկնեալ անտի, առաջին գՀմ եգեալ էհաս 'ի Կրետէ. և անդանօր զքաղաքականուԹեան նոցա օրէնսն հետախուզեալ և կենակից կենցաղակից եղեալ ազատորեաւր մարդկանն, ինչ ինչ յօրինաց անտի նոցա սիրեաց և առ ընդ իւր, զի 'ի հայրենի աշխարհ իւր առեալ տարցի զնոսա և 'ի գործ վարեսցէ. էր և ինչ ինչ յայնցանէ՝ զոր ընդ վայր հարեալ խոտեաց: Իսկ զայր ոմն անդանօր Թաղէս անուն նորա 2, այր իմաստուն քաջահամբաւ 'ի Կրետէ և այր քաղաքագէտ, ած հաւանեցոյց քաղցր բանիւք և մեծարուԹեամբ սիրոյ, և առեալ արձակեաց զնա 'ի Սպարտիա: Սա այս Թաղէս էր հանարեալ իբրև քերԹող քնարերգակ չափոցն, և 'ի վերին երեսս զարուեստին զայնորիկ պաշտէր զվարժս, այլ արդեամբք 'ի գործ արկեալ վարէր զայն ինչ՝ զոր միանգամ քաջ և առաքինի օրէնսդիրք

ոմանք: Քանզի նորա երդք և նուագք էին բանք բանաւորք՝ որ ’ի հլուԹիւն հնազանդուԹեան և ’ի յօդ միաբանուԹեան յանկուցանէին զլսելեան ’ի պատճառս չափոցն և Թուոցն, որ կարի հին յարդարունք էին և գեղեցիկք և վսեմականք. զորս ոչք միանգամ լսէինն՝ ինքնին տակաւ ամրքեալք հեզանային ’ի բոյս բարուց, և բնականէ կենակից լինէին միմեանց ’ի նախանձ գործ բարեաց՝ ’ի բաց Թողեալ զառաջինն չարակամուԹիւն սրտին՝ որ առ միմեանս: Որպէս զի և օրինակ իմն՝ այս Թաղէոս նա իւրնԹաց հորդէր Ձանապարհ Լիկուրգեայ ’ի դաստիարակուԹիւն Սպարտացւոցն:

Իսկ ’ի կրետեայ անց նա ԼԱսիա. քանզի կամէր՝ որպէս ասեն՝ ընդ կրետացւոցն սակաւապէտ և խստամբեր քաղաքավարուԹեան կենաց առնուլ ’ի կլիտ ձգելզՅոնացւոցն բազմածախ կեանս և զդրդանան, նբրև զբժիշկ՝ ընդ քաջառուղջ մարմնոցն՝ զխօԹան և զհիւանդոտան. և զնեել դիտել զտարբերուԹիւն զկենացն, զվարուցն, և զքաղաքականուԹեան նոցա: Եւ անդանօր առաջին՝ որպէս հաւանեալս եմ՝ դէպ եղև նմա ’ի ձեռս բերել զքերԹուածն հոմերեայ՝ որ պահեալ կային առ մարդիկ ազգասոհմին կղէփիւղեայ. ետես զնեաց ’ի քերԹուածն՝ զի ընդ ափոփանս բերկրուԹեան և անխառնուԹեան՝ խաւն էր ’ի նոսա և ’ի քաղաքականէն և ’ի դաստիարակուԹենէն վարժից՝ ոչինչ նուազ արժանի փուԹոյ անդուԹեան. առեալ մատուցեր ընդ

օրինակեաց և՝ի մի ամփոփեաց զայնոսիկ՝ առնել ընդ իւր: Քանզի փառք նուագացն այնոցիկ էբրև յաննշայլ ինն խաւարի նըմանեալ էին առ Հելլենացիս. և նուագարուն մանք ստացեալ ունէին անձանց հատուածս կցկտուրս՝ և՝ քերթուածոց անտի՝ որ Թափառական ցիր և ցան սփռեալկային. նակ Լիւկուրգոս առաջին քան զամենեսեան՝ և՝ լոյս ընծայեաց զայնոսիկ:

Ապա եգիպտացիք այնպէս ինն համարին՝ եթէ և առ նոսա եկեալ հասեալ էցէ Լիւկուրգոս. և թէ՝ և՝ ի վեր քան զամենայն անդանօր ուրանչացեալ Լիկուրգոս ընդ կարգ որոշման զօրականին յայլոց անտի կարգաց քաղաքացեացն՝ զնոյն առեալ ածեալ էցէ և՝ ի Սպարտիա. և անչատեալ բաժանեալ զգործաւորս և զարհեստաւորս, քաղաքացւոյն կանուխ թին՝ և՝ ներքս ընծայեալ էցէ արդարև հոյակապ և անհատն: Բայց ընդ Եգիպտացւոցդ՝ կէսք և՝ ի Հելլենացի մաեռնագրաց վկայեն այսոցիկ:

Իսկ թէ՝ և՝ ի Լիբիա և յԱսիերիա ձանապարհորդեալ էցէ Լիւկուրգոս, դարձեալ և՝ ի Հնդիկս թափառեալ՝ կենակից իսօսակից լեալ էցէ Մերկիմաստակացն, մեր որչափ՝ և՝ վերայ հասեալ է՝ ոչ ոք ասաց զայդ, բայց Արիստոկրատես Իպպարքեան Սպարտացի:

Սակայն Լակեդեմոնացիք ըղձակալեալ էին Լիւկուրգեայ մինչեռ բացական էր նա, և ատէպ ատէպ յղեալ առաքէին. քանզի և թագաւորիք նոցա զանուն և զչուք

պատուոյն միայն բարձեալ բերէին, և յայլն ամենայն ոչինչ տարբերեալ էին յամբոխէ ռասկին. եւ զԼիւկուրգոս դիտէին նոքա անդատին ՚ի բնութենէ առաջնորդ դականին ունակ դիտութեան, և որ զդէպ ղեցիկ արուեստն ստացեալ էցէ յինքն ըզմարդիկ յանկուցանելոյ: Ար այս՝ և ոչ թագաւորք ինքնին դժկամակ ինչ էին ընդ գալուստ առնն, այլ ակնկալեալ յուսային՝ եթէ ՚ի հասանել նորա առ նոսա՝ նուազեալ գոյն խուժանն ՚ի խեղուութենէն:

Արդ՝ երբեմն եկն եհաս Լիւկուրգոս առ նոսա՝ որ այնչափ նմին նպաստ լինէին, անդէն վաղվաղակի ձեռն էարկ շարժել իւրեւ զառաջնակայ իրան և՝ փոխել փոփոխել դլուսվին զքաղաքականութենէն. երբոր զի օրէնք ըստմանեայք ոչինչ արդեօք նեղդոր ծեսցեն կամ պիտանացուք երբէք եղիցին, եթէ ոք՝ երբոր յախտակրեալ մարմնոյն և որ բնութապատիկ խօթութեամբ լցեալ էցէ, զառկայացեալ զհիւթեան ծախելով և վատնելով՝ ի ձեռն դելոցն և մաքրութեանցն, ոչ նոր նմին և օտար քաղաքավարութեան կենաց սկիզբն տացէ: Զայսոսիկ զմտաւ ածեալ նա, առաջին դէմ եդեալ ջոքաւ՝ ի Դելփիս, և անդ պատգամ հարցեալ՝ ի դևցն և զոհ կատարեալ՝ դարձաւ եկն, ընդ նմա բերելով զդերահռչակեալն զայն պատգամ, որով զնա Ապուոծաոէչ անուանեալ կոչեաց Պիւթիա, և աստուած մանաւանդ քան եթէ մարդ: Եւ թէ՝ ՚ի խնդրել նորա, զի օրէնս բարիս տայցէ ինքն, ասէր

պևռթիա՝ եթէ զնչեաւլ դնք եատուն նմա զնդնչրն. և թէ՝ նորա քաղաք քալաւ յոյժ քան զայլն լինել հանդերձեալ էցէ: ՚Ի բանից աստն քալաերեաւլ Լիւկուրգոս՝ մինչ յանկոյց զաւադրեաւրն, և յորդո֊ րէր իրախուսէր գործակից ձեռնատու լինել նմա. և յառաջագոյն գաղտ խօսեցաւ ընդ բարեկամաց իւրոց, և այնպէս ապա տա֊ կաւ փորձ փորձեալ և ընդ այլոց բազմաց՝ նիզակակից իւր յարդարեաց ՚ի գործ անդր: Իսկ իբրև դէպ ժամանակն եկեալ եհաս, հրաման եա՝ զի երեսունք Թուով յաւա֊ գաց անտի զինու զարդու կանուխ ընդ ա֊ ռաւօտն ՚ի հրապարակ անդր երթեալ հաս֊ ցեն՝ պակուցանել և ահ արկանել նոցա՝ որ միանգամ ընդդէմ լինչ դարձցին նոցա: ՚Ի ստգանէ քանիւ չափ, որ կարի ականաւորքն էին ՚ի նոսա՝ երիպպոս ՚ի հաշիւ արկանէ: Բայց որ առաւել լիաւն քան զամենեսեան՝ Լիւկուրգոսին գործոցն բաժանորդ գոսաւ և ՚ի միասին ընդ նմա առաքինացաւ ՚ի կար֊ գել անդ զօրէնսն, անուն կարդան նմա Արիթմիադէս: Արդ՝ իբրև ալմուկ խառ֊ վութեանն ակսաւ, յահի եղեալ արքայն խառնլատս, թերևս վասն իւր ինչ էցէ քան խուժանին, փախուցեալ էրքաւ ՚ի քաղ֊ կիկոն: Այլ ապա խելամուտ եղեալ երացն, և առեալ զերդմանն՝ յարեաւ էկն և հա֊ ղորդ բաժանորդ լինէր գործելեացն. քան֊ զի և բնութեամբն խակ հեզ և հանդարտ էր. մինչ զի երբեմն՝ որպէս պատմեն՝ Արքե֊ զայոսի որ ընդ նմա թագ կապեալ էր՝ ա֊

սէլատ նոսա որ դրուատեալ գովէին զպատանին. «Իակ զնմրդ տպա. ոչ այր քան զի Խատլատոս, որ և ոչ առ չարա- գործան անգամ խիստ ինչ է նա»:

Բայց ՚ի բազում ինչ էր՝ զոր նորոգեալ յարդարեաց Լիւկուրգոս՝ առաջին և մեծ եկաց կարգաւորութիւն ծերակուտին. որ՝ ըստ որում Պլատոն ասէ՝ իառնեալ գեղե- ցիկ ընդ վքռոցուռոյց իշխանութեանն ար- քայից և իբրև հաւասարակշիռ եղեալ ընդ նմա, ՚ի գործս մեծամեծս փրկութիւն ՚ի ներքս ընծայեաց միանգամեան և հանճար: Քանզի իբրու ընդ օդս կախեալ քաղաքա- կանութիւնն և մէտ՚ի մէտ դեղեալ մերթ առ թագաւորս անդր՝ իբրու ՚ի բռնաւո- րութիւն, և մերթ առ ժողովուրդ անդր՝ իբրև ՚ի ռամկապետութիւն, որպէս մնհար- ձան լինի՝ զծերակուտին իշխանութիւն ան- ջրպետ՚ի միջոցին կալեալ և հաւասարակըշ- ռութիւն առեալ՝ գեղեցիկ կարգաւ և ան- սասանելի սահմանաւ կայր յակաստանի: Քանզի այն քան և ուր թուով ծերու- նիք՝ էր զի պաշտպան նիզակակից կացեալ թագաւորաց կողմանն, շատ ինչ արդեօք ստանայէին ընդդէմ ռամկին պետութեան. և էր դարձեալ՝ զի առ ՚ի սանձակոծել ըզ- բռնաւորութիւն արքայից, ոյժ տուեալ կորովացուցանէին զկողմն ռամկին: Այս- չափ թուով սահմանեալ ասէ Արիստո- տէլ զծերոնեացն դաս. քանզի որ յա- ռաջն երեսուն էին թուով՚ի միասին ընդ Լիւկուրգեայ, երկուք ոմանք ՚ի նոցանէ

վատասիրութք լքեալ ՚ի բաց կացին ՚ի գոր-
ծոյ անտի: Իսկ Սփէրոս ասէ, եթէ և ՚ի
սկզբան անդ նոյնչափ թուով էին բաժա-
նորդքն և հաղորդք խորհրդոյն այնմիկ:
Եւ թերևս արդեօք կատարելութիւն ինչ
գուցէ թուոյն այնորիկ՝ ՚ի քառեակ բազ
մապատկեալ եօթնեկաց. և զի՝ կատարեալ
թիւ գոյ հաւասար գոլով ըստ մասանցն
նմա՝ զկնի վեցեակ թուոյն: Սակայն ինձ
թուի, եթէ նոյնչափ թուով ընտրեաց նա
զծերունիան, որպէս զի ամենեցուն միան-
գամայն լինել երեսուն՝ զերկոսին ևս թա-
գաւորան յաւելեալ ընդ հասարակ քան և
ուրիկն:

Բայց այնպէս ինձ ժիր և փոյթեռանդն
գտաւ Լիւկուրգոս առ այդ իշխանութիւն,
մինչ զի և գուշակութիւն առնուլ բերել
՚ի Դելփեայ յաղագս իշխանութեանս այ-
սորիկ. և անուանեալ կոչեն զգուշակու-
թիւնն զայն Ռհթրա, այն է՝ Սահման օրի-
նաց, որ ունի օրինակ զայս.

“ Յորժամ զԱրամազդայ Սիղղանիոսի և
զԱթենասայն Սիղղանուհւոյ կատարեսցես
զտաճարն. և ցեղս ցեղս ջոկեսցես, և տոհմս
տոհմս. և երեսուն ծերունիս ընդ առաջ-
նորդացն կացուսցես, յայնժամ ընդ ժա-
մանակս ժամանակս հրապարակախօս ե-
ղիցիս ընդ մէջ Բաբիւկեայ և կնակիով-
նեայ. և այնպէս ապա ըստ հաճոյից նոքա
՚ի նեղս բերցեն, դարձեալ և ՚ի բաց ար-
ձակեսցեն զհրապարակ ամբոխին, ուր և
դա կալցէ տէրութիւն“: ՚Ի պատգամիդ

յայդմիկ՝ ի բաշխեւն և ի ջոկեւն զբազմու-
թիւն ժողովրդոցն ի խումբս խումբս, ըզ-
կէաս կոչէ ցեղ, և զկէաս դարձեալ՝ տոհմ.
իսկ Թագաւորքն անդանօր կոչին՝ առաջ-
նորդք. իսկ հրապարակախօսեւն՝ զեկեղե-
ցուցանեւն ասէ: Եւ այսպէս զսկիզբն և զ-
պատճառ զնուրոյ քաղաքականութենէ՝ անդր
ի պիւթեանն Ապոլոն ի վեր հանէ Լիւ-
կուրգոս: Իսկ զԲաբիւկէ և զկնակիոնէն՝
այժմ անուանեալ կուչեն Ոչխարնոտէս: Այլ
Արիստոտէլ ասէ՝ եթէ կնակիոնէնդ՝ գետ
էր. իսկ Բաբիւկէնդ՝ կամուրջ գետոյն:

Արդ ընդ մէջ սոցա ի բացօթեայս ե-
կեղեցւոյն նոքա, ուրանօր ոչ սրահք
կամ դահլիճք և ոչ այլեւն ի կերտուածոց.
քանզի ոչինչ պիտանացու ի խորհուրդ
խորհել համարէր նա զայսոսիկ, նա մա-
նաւանդ և զնաւակար, յորժամ միտք և
խորհուրդք ժողովականացն զբաղեալք ի
սին մտածութիւնն՝ դարձցին և եղիցին
ուռնկէտ և խօթասիրտք, այն ինչ ի դրօ-
չեալս արձանաց և ի նկարս պատկերաց
կամ ի ճակատս թատերական խորանաց
կամ ի պքանչելարուեստ ձեղունս խորհըր-
դարանաց զանն միանգամ արկեալ յառեալ
կին խորհրդականքն: Իսկ ի բազմութենէն
անտի առնուին՝ որ անդ խառնեալ կայր՝ ոչ ու
մէք թոյլէր ասել զկարծիս խորհրդոց նուրոց-
այլ զոր ինչ միանգամ առաջի արկանէին
խորհուրդ ծերունիքն և Թագաւորքն՝ ի-
նան էր ժողովուրդն ի դատել և ի տահմա-
նել: Իսկ յետ ժամանակաց յորժամ ի բաց

բարձմամբ՝ դարձեալ և յաւելուածովք ո-
մանքք խաթարէին ժողովուրդք և բռնա-
բարէին զՍահմանս վճռոյն, յայնժամ Պո-
ղիդորոս և Թէոպոմպոս Թագաւորք զայս-
պիսի ինչ յաւելուած առեալ գրեցին ՚ի
Սահման օրինացն. "Ապա եթէ խոտոր-
նակ ինչ ինդրեսցէ ամբոխն, արժան եցէ
ծերակուտին և առաջնորդացն յետս ընկըր-
կեալ զայն". այս է՝ մի երբէք հաւանեալ
հաստատեսցեն զայն, այլ և գլխովին ՚ի բաց
մերժեալք՝ արձակեսցեն զժողովուրդն ՚ի
տեղի իւր, իբրու այն՝ որ զկարծուրդն քա-
ջութեան և զլաւն տապալեալ յետլաջըջես-
ցէ ՚ի յոտին: Ուր այս՝ և ածեալ հաւանեցու-
ցին նոքա զքաղաքն, իբրու եթէ դէք ինք-
նին պատուիրեալ եցեն և զայդոսիկ. ըստ
որում և Տիւրաէոս յիշատակէ ՚ի բանս յայ-
տոսիկ. "Լուան զի փեբոս՝ ՚ի ձեռն Պիւ-
թեայ՝ աստուածն, եթէ յաղթել կամին,
գուշակութիւն սահմանեաց այսպէս: Բար-
ձերէցք ՚ի խորհրդեան նստոյն աստուա-
ծապատիւ արքայքն, որոց դէտսն կա-
լեալ ծնայ Սպարտիոյ քաղաքն հանդար-
տեալ, նոյն և ծերունիքն արդ՚ք: Իսկ ո-
րեար ժողովրդեանն քաջասահման օրինացն
լեցի հպատակ":

Արդ Թէպետ և օրինակ զայս խառնեաց
Լիւկուրգոս զքաղաքականութիւնն և միան-
գամայն բարեկարգեաց. սակայն և այնպէս՝
զինի եկեալքն տեսեալ զի քուռն իշխանու-
թիւն սակաւուցն այնոցիկ ՚ի վեր վարէր
գոռոզութեամբ, իբրու տանձ իմն՝ ըստ

որում ասէ Պղատոն՝ անջրպետ ՚ի մէջ արքին նմա զպետութիւն Պարեւացն, իբրեւ առաւել քան հարիւր և երեսուն ամօք զկնի Լիւկուրգոսի. և առաջին ՚ի Պարետս եկաց Եղատոս առ Թագաւորութեամբն Թէոպոմպոսի: Զամանէ ասեն՝ եթէ իբրեւ այսպանեաց զնա երբեմն կինն իւր, իբրու որ՝ Արիայուիքն աւանդէաց նա ՚ի չէոս որդուոյ իւրոյ՝ լռնարհագոյն փան պղը էաւն, եւ պատասխանի. Կնա՛ աւաւել վնհ, ՚ըլեա՛ աւաւել բապմաթամանաւէաց: Քանզի այնպէս ՚ի չափաւորութեան կացեալ, միանգամայն զերծ գտաւ և ՚ի նախանձուէն և ՚ի վտանգէն: Որպէս զի և ո՛չ ինչ կրեցին արքայք Սպարտոյ յայնմանեաց անտի՝ զոր միանգամ Մեսսինացիք և Արգոսացիք անցուցին ընդ Թագաւորս ներեանց, որ երբէք յանձն չառին դուլ առնել նչխանութեան նրեանց ՚ի չնորհս ժողովրդեան: Եւ այս աւաւել նին զկնի Լիւկուրգոսի զնմաստութիւնն և զնախատեսութիւնն յայնի ՚ի դէմս բերէ, որոց միանգամ զկին արկանէցեն ՚ի հերձուածս և ՚ի յետսամիտ քաղաքականութիւնս Մեսսինացւոց և Արգոսացւոց՝ որ ազգակից միմեանց և սահմանակից էին ժողովրդք. միանգամայն և ՚ի Թագաւորս նոցա, որք ՚ի սկզբան անդ հաւասարավճակք էին ընդ Սպարտացւոցն, նակ ՚ի կարճածս վճակաց և քան զնոսա աւաւելեալք. սակայն և ո՛չ ընդ երկայն ժամանակ բարեբաստիկ գտան նոքա, այլ ՚ի սակս գոռոզութեան Թագաւորացն, և

յանաստուածեն ժողովրդոյն վեր՝ի վայր տապալեալք առհասարակ զսահմանս կէ֊ նաց իւրեանց, յայտ արարին՝ եթէ աս֊ տուածային ուրեմն էր բարեբախտութիւն Սպարտացւոցդ, զի եւկաց ոք առ նոսա՝ որ զքաղաքականութիւն գեղեցիկ կարգեաց և յարդարեաց: Սակայն այդոքիկ զկնի ու֊ րեմն պատահեցան:

Իսկ երկրորդն՝ի քաղաքական օրէնսն Լիւկուրգոսի, և որ կարի՛ մեծ էր ձեռներէց խորհուրդ մինչ բարձեալ բերէր, է՝ Բաշխման կալուածոց երկրին: Եւ քանզի էր՝ի Սպար֊ տիա դժուխմբեր մեծ անհաւասարութիւն հեռոց, և անմիջապ յոքնութիւնք և աղքատք խռնեալք ընթանային՝ի քաղաքն անդ. և հարստութիւն գոյից առնուազն ոմանց սահմանեալ կայր: Ոսոխ և նա յարմա֊ տաքն խլել զամբարտաւանութիւն մեծ֊ դամոյն և զնախանձ և զչարութիւն և զդրդռանս վտիտութեան. և որ առաւել քան զայդոսիկ՝ հինաւուրց և առաւել չարա֊ չար սովք կոչեն քաղաքականութեան, զի եւկաց ոք առ նոսա՝ որ զքաղաքականութիւն գեղեցիկ կարգեաց և յարդարեաց: Սակայն այդոքիկ զկնի ու֊ րեմն պատահեցան:

Իսկ երկրորդն՝ի քաղաքական օրէնսն Լիւկուրգոսի, և որ կարի՛ մեծ էր ձեռներէց խորհուրդ մինչ բարձեալ բերէր, է՝ Բաշխման կալուածոց երկրին: Եւ քանզի էր՝ի Սպար֊ տիա դժուխմբեր մեծ անհաւասարութիւն հեռոց, և անմիջապ յոքնութիւնք և աղքատք խռնեալք ընթանային՝ի քաղաքն անդ. և հարստութիւն գոյից առնուազն ոմանց սահմանեալ կայր: Ոսոխ և նա յարմա֊ տաքն խլել զամբարտաւանութիւն մեծ֊ դամոյն և զնախանձ և զչարութիւն և զդրդռանս վտիտութեան. և որ առաւել քան զայդոսիկ՝ հինաւուրց և առաւել չարա֊ չար սովք կոչեն քաղաքականութեան, զի հարստութեան գոյից առնուազն ոմանց սահմանեալ կայր: Ոսոխ և նա յարմատաքն խլել զամբարտաւանութիւն մեծդամոյն և զնախանձ և զչարութիւն և զդրդռանս վտիտութեան. և որ առաւել քան զայդոսիկ՝ հինաւուրց և առաւել չարաչար սովք կոչեն քաղաքականութեան, զի հարստութեան, և ածել հաւանեցոյց առհասարակ զքաղաքացիան, զի ողջոյն զկալուածս և զանդամանս իւրեանց՝ի մէջ անդր մատուցեալ՝ նորոգ սահմանաւ բաշխեցեն՝ի մէջ իւրեանց, և կեանս նմանօրինակս վարեցեն առհասարակ ամենեքեան ընդ միմեանս, և քաղաքականութեան հաւասարահաճ. իսկ զնախապատուութեանն ընծայեալ տացեն առաքինութեան: Որպէս զի և՝ի մէջ

առն և ընկերի իւրոյ ոչ այլ ինչ գու-
ցէ տարբերութիւն կամ անհաւասարու-
թիւն երբէք, բայց որչափ ինչ տահմանեցէ
անարգութիւն չարեաց գործոց և գովու-
թիւն գործոց բարեաց: Եւ ապա ՚ի բանից
անտի յարդիւնս գործոյն մատուցեալ, բաշ-
խեաց բաժանեաց ողջոյն ՚ի գիւղականան
զերկիրն Լակոնական յերիս բիւրս վիճա-
կաց. սակայն զերկիրն տահմանեալ վասն
քաղաքին Սպարտիոյ՝ լինն հազար վիճակս.
քանզի նոյնչափ թուով էին վիճակք
Սպարտացւոցն: Իսկ ոմանք ասեն՝ եթէ
՚ի վեց հազար բաժանեաց Լիւկուրգոս.
իսկ զերիս հազարան ապա ուրեմն յաւել
՚ի նոսա Պոլիւդորոս. իսկ կէսք դարձեալ՝
եթէ զկէսն լինն հազարաց Պոլիւդորոս, և
զկէսն՝ Լիւկուրգոս: Եւ առն առն իւրա-
քանչիւր այնչափ լինն էր վիճակն, որպէս
զի և հասանելոցն հոգեանատուն կէղթ
գարուոյ՝ առն, և երկոտասան՝ կնոջն, ըստ
նմին համեմատութեան՝ և շատ ինչ՚ի պըտ-
ղոց դալարեաց: Քանզի և զայն չափ շատ
համարէին անձանց ՚ի կերակուր՝ բաւական
յատուկութիւն և ՚ի քաջառողջութիւն, ոչ
ինչ այլ իմիք կարօտացեալք: Եւ պատմեն՝
եթէ յետ ժամանակաց ՚ի դառնալ նորա
երբեմն ՚ի ճանապարհորդութենէ ինչ իւր-
մէ, և յանցանել ընդ արտորայն այն ինչ
հնձեալ, ուսեալ զդադիչան շերմլեալ զու-
դաչափս և հաւասարս, ժպտեցաւ և ասէ
առ ընթերակացան. “Չիարդ առհասա-
րակ Լակոնական այս երկիր թուի լինել

Իբրև բազմաց եղբարց, որք այն ինչ բաժանեցին զայդ ի մէջ Իւրեանց»:

Իսկ յետ այսորիկ ձեռնամուխ եղև բաժանել բաշխել և զչարժուն գոյան, որպէս զի միանգամայն բնակչին արասցէ զանհատաւորութիւնն և զանմահութիւնն. այլ քանզի տեսանէր եթէ դժուխըմբեր յոյժ է Սպարտացւոցն այնպէս դլխովին անբաժ ինալ՝ի գոյից Իւրեանց, այլով ձանապարհաւ հնարս հնարեցաւ և արմատախիլ արար զաւելաստացութիւնն՝ի նոսա: Եւ նախ առաջին՝ի վերայ դարձուցեալ զաժէս զամենայն դրամոց ոսկւոյ և արծաթոյ, պատուէր ետ՝ի դուրձ վարել միայն զերկաթին. և այնմիկ դարձեալ ետ սահմանեաց քանակ մեծ և կշիռ ծանր, իսկ աժէք սակաւ. մինչ զի առ ատան ինաս դրամոյն այնորիկ՝ մեծ Թանգարանի՝ի մէթերել պէտք էին՝ի տանն, և լուծոց եզանց՝ի բառնալ տանել զայն: Այսորիկ այսպէս եղելոյ, ջնջեաց եբարձ նա՝ի Լակեդեմոնիոյ զազդ աղգ անկրաւութեանց: Քանզի ո՛ք արդեօք զհետ այնպէր այնուհետև՝ի գողանալ, կամ վարձուր լինել ջարուԹեանն, կամ զրկել խորել, կամ յափշտակել երբէք, զոր ոչն իսկ կարող էր՝ի ծածուկ պահել. և ո՛չ դարձեալ նախանձելի էր ատանալ յայնպիսեաց անուն, նա և ո՛չ՝ի պէտս էր այլ մանրել զնոսա: Քանզի սակն՝ եթէ զձոյլ հրաշէկ երկաթոյն չնջուցանելով՝ի քաղցախ, ուժաթափեաց և անգործ կացոյց զերկաթն՝ չինչ և ևս պէտս անպիտան:

Իսկ յետ այսորիկ ապա տարադիր արար յերկրէն զանպիտանն և զաւելորդն յարուեստից: Ա՛յլ արդեօք և բազում լինէր յարուեստից անսի՝ Թէպէտ և ո՛չ ոք տա՜ րագիրը առնէր զայնոսիկ, ՚ի միասին ընդ հաստարակաց դրամոյն այնմիկ հանդերձեալ էսկ էին տապալել, յոմանեցուվ ձեռակեր՜ տացն այնոցիկ եւս վախճանի: Քանզի եր՜ կաթի դրամոյն այնմիկ էին լինէ տարուբեր առ այլս ՚ի հեղինացւոց, և յարդ ամե՜ նևին էր նորա, այլ և ծնծաղէին ևս զնո՜ վաւ: Որպէս զի և էր էսկ հնար գնել լինէ յօտար աշխարհաց, և ո՛չ ՚ի պատուական լինէ վաճառաց, և ո՛չ դարձեալ ՚ի նաւա՜ հանգիստս նոցա երբէք մտանէր նաւ բե՜ ռանց վաճառականաց: Եւ ո՛չդարձեալդէմ եդեալ գնայր ոք ՚ի Լակոնիա՝ ո՛չ ճարտա՜ րախօս ոք բանից, և ո՛չ հարցուկ ոք Թո՜ վիչ, և ո՛չ կաւատ ոք բռզարած, և ո՛չ դար՜ ձեալ ոք ոսկւոյ կամ արծաԹոյ դեղեցիկ զարդուցն ճարտարապետ. զի ո՛չ գոյին անդ դրամք: Եւ այսպէս ապա տակաւ զրպանք փափկութեան լքեալ Թողեալ ՚ի նո՜ ցունց էսկ՝ ոչք արծարծիչք բոլորիչք էին այնմ և անուցիչք, ինքնին Թօշնեալ Թառա՜ մեցան. և առաւելութիւն այնուհետև չու՜ նէին բազմահարուստքն ՚ի նոսա. քանզի և էր լինէ նոցա հնար հանդէս առնել ընչից և առացուածոց իւրեանց, որչափ լինէ ՚ի տան անդ վաճեալ մԹերնեալ կայր յան՜ գործութեան: Սորին ալեպատաւ և կարևորքն այնոքիկ և առ ձեռն ապատք և անօԹք, ըստ

որում անկումինք և աթոռք և տրապիզք, քաջարուեստաբար ինն կազմեալ յօրինեալ էին առ նոսա: Եւ յաւէտ յոյժ գեղահամբաւեալ էր ըմպանակն այն՝ որ անուանեալ կոչէր Գոբեան Լայոնացի, ՚ի պէտս բանակի զօրուն, ըստ որում առէ Կրիտիաս: Քանզի զջուրն՝ զոր հարկ էր ըմպել զօրականին, և որ ՚ի տեսիլն անգամ գարշելի և տալտկալի էր, այն ըմպանակ իւրական գոբնոսին առեալ գալէր, և զպղտորութիւնն ջրոյն ՚ի նեղքս անդ ընկլուզեալ և տանձաւծեալ ՚ի ջրհանց անուն բաժակին՝ տուրք և յատակ զըմպելին մատուցանէր բերանոյն: Եւ էր այսոցիկ պատճառք օրէնադիրն ինքնին գլխովին. քանզի արուեստաւորքն այնուհետև ՚ի բաց թողեալ զանպիտանեացն հոգս, ՚ի կարևորն ընծայեցուցանէին աշուեստ գեղեցիկ:

Բայց նա զմուսաւ ածեալ առաւել ևս վանել զգրգռանն փափկութեան և ՚ի բաց բառնալ զպանկութիւն մեծութեան, կարգեաց եղ և երրորդ քաղաքական օրէնս գեղեցիկս յոյժ, այն է՝ պատրաստութիւն հացկերութիւն: Իբրև զի ՚ի միասին սեղանակից ժամանց ընթրեսցեն նոքա հասարակ և սահմանաւոր ապատուք և կերակրովք. և մի՛ երբէք ձաշեսցեն առ տնին, կամ ՚ի բազմածախ ակումբս և ՚ի տրապիզս ՚ի ձեռաց սեղանապետաց ումանց և խախտմոքից, ՚ի խաւարն իբրև անատուն ումանս զժոխորովայնս պարարեալք, ապականել խաթարել միանգամայն և զքաղաքավա-

րուԹիւն վարուցն և զմարմինս իւրեանց, զակառեալ առ ամենայն հեշտախառուԹիւն և զեղխուԹիւն. ոյր աղագաւ և պէտք լցեն նոցա այնուհետև անհրաժեշտ երկարաձիգ քնոյ ԹմբրուԹեանց և ջերմին բալանեաց և շատ պարապորդուԹեանց և գոգցես հանապազօրեայ իմն խօԹուԹեանց: Արդ մեծապէս էր բանդ. սակայն վեհագոյն և արդեօք այն՝ զի իբրև անմատոյց իմն վայր կարգեաց եդ նա զհարստուԹիւնն. մանաւանդ եԹէ՝ ըստ որում Թէոփրաստոսն ասէր՝ աննախանձելի և անլինչ զընչաւէտուԹիւն լինքնին գլխովին կացոյց նա 'ի պատճառս սեղանակից ընԹրեացն, և սակաւասպիտուԹեամբ կերակրոյն: Քանզի էին անդանօր պէտք ապաստից, և ոչ վայելք, և ոչ դարձեալ տեսիլ գլխովին, կամ ԹէԹ ցոյցք լինչ բազմահանդերձ յօրինուածոց. քանզի 'ի մի և 'ի նոյն ընԹրիս հեռևեալք գնային աղքատն և մեծատունն. որպէս զի և 'ի մէջ քաղաքաց որ ընդ արեգականմբն՝ միայն 'ի Սպարտիա ճչգրտէր գերահամբաւեալն այն բան, եԹէ „Պղուտոն, այն է՝ ընչաւէտուԹիւնն, կոյր է և զաչացու 3, և անկեալ ընկողմանեալ կայ իբրու պատկեր իմն անանձնաւոր և անշարժելի“: Քանզի և էր իսկ արժան յառաջադոյն առ անին ընԹրել, և այնպէս յապ յառնել'ի սեղանակցուԹիւն անդր. քանզի ճչդիւ անդանօր այլք կային զինեալք՝ ո՞ր 'ի նոցանէն ոչ ըմպէր և ոչ ուտէր ընդ նոսա, և առեալ Թշնամանէին զնա՝ իբրու

այն որ անժուժկալ էցէ և որ լըրու գիրգ և փափուկ զգուեսցէ ղհատարակացն սեղան։

Ասաւ և յաւէտ լին՝ որպէս ասէն՝ 'ի պատճառս օրինադրութեան այսորիկ սահմանիկ գրոցն մեծատունք ընդ Լիւկուրգեայ, և 'ի վերայ յարուցեալք նորա մեծաւ խուժանաւ աղտղակ բառնային և 'ի սրտմտութիւն ըրդէին. հուսկ ապա վանեալ քարամբք 'ի խուժանէն, աճապարեաց նա 'ի փախուստ 'ի հրապարակէ անտի. և մինչև հետամտիցն հասեալ՝ նա զերծաւ ապաւինեցաւ 'ի մեհեան մի։ Այլ սակայն պատանի ոմն՝ Թէպէտ և ոչ վայրենամիտ ոք, բայց խիզախ և բարկացայտ՝ Անդկանդրոս անուն նորա, զհետ մտեալ նորա տապնատաւ, մինչդեռ Լիւկուրգոս դարձաւ հայել 'ի Թիկունս, նա հարեալ զնա գաւազանաւն՝ եհան զակն նորա։ Անդ Լիւկուրգոս ոչինչ ահաբեկեալ 'ի կրից անտի, եկաց արձանացաւ յանդիման և ցուցանէր քաղաքացեաց իւրոց զարհնաշտալախ զդէմն և զնեալ զակն։ Անդամօր ապա այնչափ ինն ամօթ և ակնկորուԹիւն գրաւեալ կալաւ զսեաստան, մինչև զԱղկանդրոս կալեալ եւոան 'ի ձեռս նորա, և մինչև 'ի տուն անդր յուղարկաւոր լինէին Լիւկուրգեայ, և ահակից ցաւակից էին նմա. նա Լիւկուրգոս դոս դովեալ զնոսա՝ արձակեաց 'ի բաց։ Այլ զԱղկանդրոս մուծեալ 'ի տուն, զարհնանա ոչ արար և ոչ ասաց. այլ 'ի բաց հանեալ զմարդիկ տանն և զծառայս իւր ապաստարկուս, հրաման եւ Ադկանդրեայ՝ ապա-

սաւորութիւն հարկանել նմա: Իսկ նա թէպէտ և ոչ՝ի վատազգեաց ոք էր, սակայն լուռ և մնջիկ կատարէր զամենայն հրամայեալն, և կացեալ՝ի միասին ընդ Լիւկուրգեայ և կենակից եղեալ նմա, և զննեալ զնորին զհեզութիւն զառնն և զկիրս հոգւոյն, և զխստամբեր զքաղաքավարութենէ կենացն, դարձեալ և յաշխատութիւնս վաստակոց զանխոնջելի ոգին, ինքնին Ալկանդրոս մեծասէր կապեցաւ ընդ նմա. և առ ընտանեաս իւր և առ բարեկամն պատմէր, եթէ ոչ ատամբակ ոք է Լիւկուրգոս և ոչ խստասիրտ. այլ նա միայն է՝ որ հեզ և հանդարտ բնաւորեալ է առ այլս՝ի մարդկանէ: Եւ օրինակ զայս ապա իրատեցաւ նա, և պատուհաս դատաստանին իւրոյ այսպիսի ինչ եղև նմա, զի որ յառաջադոյն պատանին խեղ և ատամբակ՝ դարձաւ եղև այր բարեզգեաց և ժուժկալ: Բայց՝ի յետնումն ատակ կրեցաւ այսոցիկ կանդնեաց Լիւկուրգոս Ապեթեռնասայ ուաճառ, զոր անուանեալ կոչեաց Օէդիփէէ. քանզի զաչս՝ Օէդիփոդս կոչեն Տորիացիք: Իսկ կէսք ասեն՝ յորոց մի է և Դիոսկորիդես՝ որ ձառեաց յաղագս Լակոնական քաղաքականութեանն, եթէ վէրս առնուլ էառ Լիւկուրգոս, այլ ոչ կուրացաւ ականատես. սակայն զուաճառն կանգնեաց դիցուհւոյն՝ի ընդհակառակս բըժշկութեանն: Իսկ ապա յետ արկածին այնորիկ՝ ոչ ստվերեցան Սպարտացիք կրել դաւազան՝ի ժողովս իւրեանս:

Այլ զաբեղանակից զայն կոչման կրե-

տացիք Անդրէա կոչեն, և Լակեդեմոնացիք
Փիլէէա, իբրու այն որ ՚ի սեղանակցու-
Թենէ առուն յայնմանէ սէր և բարեկամու-
Թիւն ՚ի ներքս ընծայեացն, որ է ըստ Հե-
լենացւոց՝ Փիլիա և Փիլօֆ-օսինէ. վոհան
է տաւիդ՝ վարեալք զ ս. կամ Թէ՝ զի տ-
վորէին այնուհիկ ՚ի սակաւապէտ և ՚ի չա-
փաւոր կեանս, որ է ըստ Հելենացւոց
Գիպո՝: Եւ ոչինչ արդելու դարձեալ, եթէ
և եկամուտ Թերևս յաւելեալ ևցէ առա-
ջին տաւդ ֆ, որպէս ասեն ոմանք, ՚ի կո-
չել անդ նոցա Էպէէա, ՚ի բառիցդ՝ Տէէ
և Էպոպէն, այն է՝ Ուսուել: Իսկ խմբեալ
ակմբէին նոքա ՚ի մի վայր հնդետասանիւ
չափ, և սակաւ մի առաւել կամ նուազ: Եւ
այր այր ևրտաքանչիւր ՚ի սեղանակցաց անտի
առեալ բերէր ամոյ չափի՝ ալեր կեղթ մի,
գինւոյ՝ մարս ուԹ, մնաս հինգ՝ պանրոյ,
և Թզոց՝ չափս հինգ. առ այսոսիկ՝ և սակաւ
յոյժ դրամ ՚ի սպաս: Ար այս՝ և որ միան-
գամ վերևխայրևան ՚ի զոհ մատուցեալ էր,
և որ դարձեալ՝ յորս ելեալ էր, առեալ և
անդրուստ մսան առաքէր ՚ի սեղանակցու-
Թիւն անդր: Քանզի և արժան իսկ էր ընԹ-
րել ՚ի տուն այնմ՝ որ ՚ի պատճառս զոհին
կամորսոյն անապանեալ էր. իսկ այլոցն ամե-
նեցուն պարտ էր գոհանել անդանօր. և մինչև
ցհարուստ ժամանակ ձչդրևս պահէցին նո-
քա զսեղանակից զայս հայկերոյԹ: Վան
որոյ և էր երբեմն՝ յորժամ Ագէս Թագաւոր
դարձեալ գայր ՚ի բանակէն՝ յորում վա-
նեալ էր նա մարտիւ զՆԹենացիս, և կա-

մեցաւ ընթրեւլ առ կնոջ իւրում և առաքեալ ինդրեաց զմսան իւր, զորավարքն ոչ եառուն տանել նմա: Իսկ առպա ՚ի գալ աւուրն յորժամ առ բարկութեան սրտմտութեան ոչ մատոյց զնոհն, զոր պարտէր, տուգանս ևս ՚ի վերայ եդին նորա:

Այն՚ի սեղանակցութեանն մերձ եկեալ կային և մանկունք, զորս և ածեալ բերէին անդր նբրև ՚ի վարժարան ժուժկալութե. և անդ ապա ուսնին դնէին նոքա քաղաքացահ բանից, և առաջի աչաց նւրեանց ուսնէին դաստիարակս ինն համարձակախօսս, և ուսեալք սովորէին անդանօր զուարճաբանել և ընդ խաղ ասել առանց խեղկատակութեան, և զնստողս բան լուեալք՝ ոչ զայրանալ և խոժոռիլ: Քանզի և այս սեպհական յոյժ էր Լակոնացւոց՝ համբերութեամբ տանել կատակաբանութեան. խնդ որ համբերութեամբ չբերէր՝ արժան էր նմա խնդրել յընկերէն, և կատակաբանն ՚ի նոյն կարճէր զնստողսն: Իսկ որ միանգամ մատանէր ՚ի նեղքս, հինաւուրցն ՚ի նուագ մատնանիշ ցուցեալ նմա զդուրան՝ ասէր, Ըսպ տ-ւ-ս-ա-ե ջ՛ էլշե բան: Բայց որ խնդրէր բաժանակից լինել սեղանակցութեանն այնմիկ, օրինակ զայս՝ որպէս պատմեն՝ ընդունէին զայնպիսին ՚ի ջերմութենէ: Այր այր՚ի սեղանակցացն առնոյր նշխար հացի ՚ի ձեռն նւր, և լռիկ արկանէր զայն նբրու զնւր քուեայ յաման անդր՝ զոր ՚ի պաշտօնէից ոք անդանօր՚ի դնուի նւր բարձեալ տանէր. որ միանգամ կամէր ընդունել զայրն՝ ողջ

արկանէր զնչխարն. իսկ որ չէր հաճեալ, կարի լաւն ճմլեալով զայն ընդ մատուռնան. քանզի ճմլեաւն այնչափ ինչ զօրէ՝ որչափ և ծակն: Արդ՝ Թէպէտ և մի միայն գտանէին 'ի ճմլեցոյ անտի՝ ոչ ընդունէին զեկամուտն զայն. քանզի կամէին՝ զի ամենեքեան միանգամայն հեշտք և բաղձալիք միմեանց լինեն 'ի սեղանի անդ: Եւ որ օրինակ զայս չլինէր նոցա ընդունելի, կոչէին զայն՝ Քէտապէ-ընէ. քանզի Քաթապօ անուն կարդային ամանոյն՝ յոր արկանէին զնչխարան: Իսկ որ'ի կեռակուրան անդ առաւել արդոյ էր առ նոսա, էր անուանեալն այն՝ Արգանակ աբա. որպէս զի՝ ծերունիքն 'ի նոսա ոչինչ ճաշակեալ'ի մոյ՝ այլ տուեալ զայն կրսերագունեցն, ինքեանք յարգանակէ անտի առնէին ձինն ուտէին: Եւ պատմեն՝ եթէ 'ի պոնտացւոյ ոմն 'ի Թագաւորաց 'ի պատճառս արգանակիս այսորիկ գնեաց զոմն 'ի Լակոնացի խահարարաց. իսկ ապա երբեմն ճաշակեաց անտի, ոչինչ ախորժեաց. յայնժամ ասէ ցնա խահարարն. "Ո՛վ Թագաւոր, նոցա պարտ է ճաշակել յարգանակէդ այսի, որք միանգամ յերրոտաս կ լուացեալք լցեն": Այլ յորժամ և յրմպելեացն առնուին նոքա չափաւորը, ապա երթալ մեկնէին անտի առանց լսպտերաց: Քանզի էր օրէն նոցա 'ի լոյս ճրագին առնել ճանապարհ: Արդ սե-

ղանակցութեան այնուհիկ այսպիսի ինչ էր կարգն առ նոսա:

Բայց օրէնս ոչինչ գրաւորս կարգեաց եղ Լիւկուրգոս. և այս ինչ էր մի՝ ի սահմանաց անուն՝ որ անուանեալ կոչին Ռետրայ. քանզի այնպէս համարեցաւ նա՝ եթէ տիրապոյնքն և մեծամեծ ինչք՝ ի բարեբաստութիւն քաղաքացւոց և յառաքինութիւն՝ ի բարս անդ քաղաքացեացն և՝ ի քաղաքավարութենէ կենաց նոցա հաստեալք և հարկաւորեալք՝ մնան անշարժելիք, ունելով զհաստատութիւն առաջադրութեան կամացն, որ քան զհարկն կապանք են առաւել անխզելի. և դաստիարակութիւն գլխաւորին մանկանց, և սահման օրէնադրի ճշդիւս հրահանգեալ յամենայնի զմի մի՝ ի նոցանէն: Իսկ՝ ի գուշնաքեայ դաշնադրութենէնս չահաճեցան, և ոչք ըստ պիտոյիցն մերթ ընդ մերթ փոխին փոփոխին, լաւ համարեցաւ նա ոչ առնուլ փակել զայնոսիկ ընդ գրաւոր սահմանօք, և ոչ դարձեալ անշարժելիս ունել զնոսա. այլ ըստ դիպաց ժամանակին յաւելուլ և նուազել զայնոսիկ, որչափ ինչ միանդամ լաւ դատեցեն արք հրահանգք և առաքինութիւն: Քանզի ոլորձն իսկ զամենայն օրէնադրութեանցն պահակ՝ առեալ կապեաց նա՝ ի դաստիարակութիւն անդր: Արդ՝ էր մի՝ ի Ռետրայից անտի սահմանացն՝ որպէս ասացաք՝ ոչ վաթսուն օրէնս գրաւորս:

Էր դարձեալ և օրէնք այլ ընդդէմ բազմածախ հանդերձանաց. զի ամենայն առն՝

տախտակամած ունէցի՝ գործ կացնոյ, և դրուն միայն՝ գործ սղոցաց, և ո՛չ այլոյ երեք՝ ի գործեաց: Քանզի զոր յետ ժամա նակաց պատմեն առ Ընպամինոնդեայ վասն իւրոյ սեղանոյն, իբրու թէ ճաշ այսպէսի՝ պէղէ ո՛չ պայ Տապնուելէան, զնոյն անդուստ՝ ի վերուստ քալ նակ խորհեցաւ Լիւկուրգոս. եթէ՝ Տուն այնպիսի տեղի ո՛չ տայ և բազմածախ հանդերձանաց: Քանզի և չէ նակ ոք ուրեք արդեօք այնչափ ծանծաղամիտ և խեղայեղ, որպէս զի և՝ տուն այնչափ անպաճոյճ և ումպէտ առեալ մուծցէ՝ ի նեղքս մահկնճս իմն արծաթոտինս, և պատուտակալս ծիրանիս, և սկահս ոսկիս, և որ ըստ նոցանէն բազմահանդերձ կարասիս. այլ հարկ եցէ արդեօք՝ ի ճահ յարմարել տանն զմահկնճան, և մահճին՝ զհանդերձ զդեստուցն, և սմին դարձեալ՝ զայլսն՝ ի կահուց և՝ ի սպասուց: Եւ ապա՝ ի սովորութենէ աստի յայսմանէ՝ ղէտուխս քիղէս ծերուանին, որպէս պատմեն, մինչ երբեմն ընթրէր՝ ի կորնթոս, և հայեցեալ ետես զձեղուն տանն շքեղ յօրինուածով և գեղեցիկ տախտակամած, հարցանէր ցկոչնատէրն. Աւդէօ փաւկուսի էռաս նէղին աս նուս ֆայպ:

Իսկ երբորդ սահմանադրութիւն Ռետրային Լիւկուրգեայ յառաջ ածեն զայս ինչ. որով նա արգելու մի կրկին ճակատ մարտի յարձակիլ ընդդէմ նոյն թշնամեաց. զի մի՛ թերևս ստէպ ստէպ ուսեալ և սովորեալ նոքա պաշտպանել անձանց, դարձ-

ցին եւ լինկին ամք պատերազմողք: Եւ վասն այսորիկ ապա յաւէտ հին մեղադիր եղեն Ագեսիլայոսի ամքայն, իբրու որ խիտ առ խիտ արշաւանօքն և ճակատամարտիւ 'ի Բիսվեսիա՝ յարդարեաց վարժեաց զթե- բայեցիս դիմամարտ արձանանալ ընդդէմ Լակեդեմոնացւոցն: Ուստի և ՚ի զի խո- ցեալ զնա տեսանելով Անտալկիդաս, ասէր. „ Դեղեցիկ արդեօք զքոյին վարժապետու- թեանդ առնուս վարձ 'ի թեբայեցւոցդ. որ՝ ըրս ո՛չն կամէին և ո՛չն դիտէին մարտըն- չել՝ ուսուցեր „: Արդ՝ զայսոսիկ օրինա- դրուելնս իւր Ռետրայս անուանեաց Լիւ- կուրգոս, իբրու որ ՚ից սահմանադրու- թիւնք եցեն և պատգամք գլխովին:

Բայց զտղայոցն դաստիարակութեան՝ զոր վեհագոյն գործ պաշտաման օրէնադրի և աւելնագեղեցիկ համարեցաւ Լիւկուր- գոս՝ 'ի վերուստ անուն առնլով զսիրզն, անդէն վաղվաղակի դէտսն կալաւ յա- մուսանութիւնս անդր և 'ի ծնունդս զաւա- կաց: Քանզի և ո՛չ խակ՝ ըստ որում Արիս- տոտէլ աւանդեաց՝ իբրև ձեռնամուխ եղև Լիւկուրգոս յողջախոհութիւն ածել բե- րել զկանայս, ձեռնթափ ինչ եղև 'ի գոր- ծոյն, իբրու ո՛չ կարացեալ զդէմ ունել ճոխաբար շքոյն և կանացի տէրութեանն՝ զոր ստացեալ ունէին նոքա 'ի պատճառս ահեղ ստէպ չուոյ արանց նոցա 'ի մարտ պատերազմի, յորում հարկաւորեալք 'ի ձեռս տային կանանց զտէրութիւնն. ուստի և առաւել քան զարժանն պաշտօն հարեալ

նոցա՝ և Տէրուհի անուն կարդային նոցա։ Արդ և՛ի տոցա վերայ մեծապէս փոյթ ինամոց կալաւ նա։ Քանզի և զօրիորդացն մարմինս առեալ վաստակաբեկ կրթեաց յընթացս արշաւանաց և՛ի մրցանս գօտեկռուոց և՛ի ձիգս քարանց և՛ի նետս փըքնաց. որպէս զի և յարձակել անդ արմատս ծննդոց՛ի նոսա՝՛ի կորովի մարմնոյն սկիզբն առեալ կորովի՝ քաջուղէշս բողբոջեսցին. և նոքա դարձեալ ուժոյ պնդութեամբ բեռլով ծննդոցն՝ քաջապէս և հեշտին կռուեսցին ընդ երկունս ծննդեանն։ Ուսաւ և՛ի բաց կարձեալ՛ի նոցանէ զգրգռութիւն վախկոութեան և զհովատուն զկեանս և զնդութիւն զամենայն, ոչինչ նուազ քան զպատանեական առեալ կրթեաց և զօրիորդան՛ի մրցել. դարձեալ և՛ի տօնախըմբութիւնս ինչ կայթս հարկանել և նուագս առնուլ՛ի զնին պատանեաց. Ի զի՝ և կատակս իմն ասէին ձահաւորապոյնս առ մի մի՛ի նոցանէն և կծանէին զմեղրուցեալսն. դարձեալ և առ արժանաւորսն՛ի նոցանէ՝ դրուատս հանդերձ նուագօք առեալ՝ սէր և նախանձ բազում առաքինութեան արծարծէին՛ի պատանիս անդր։ Քանզի որ միանգամ գովութիւն ընդունէր անդանօր՛ի պատճառս արութեան քաջութեանն և փառաւորը լինէր յօրիորդաց անտի, բարձրատարանոց գնայր՛ի տակս դրուատիցն այնոցիկ. նա յանդիմանութիւնք կատակացն և ընդ նմա զրուցացն՝ ոչինչ նուազ ազդոյք էին քան զհանճարիմաստ խրատաբանու-

Թիւնան։ Քանզի ՚ի զնին տեսլեանն այնո՛ր
րիկ ՚ի միասին ընդ այլոց քաղաքացեացն՝ և
Թագաւորք ինքնին և ծերունեացն դասք
մերձ կային։ Ա՛յլ գնացք օրիորդացդ ՚ի
մասինս յայսմիկ ո՛չինչ ուներ յանպարկեշ
տից անտի. քանզի ամօթ պատկառանաց
մերձ էր անդանօր, իսկ անժուժկալու
Թիւնն հեռացեալ մեկուսի էր. և բոյս բա
րուց անպատճոյճ, և գեղեցիկ նախանձ քաղ
աւոյգութեան անդ ՚ի ներքս բերէր. և
կանացն բնութեանն տայր ճաշակել յաղ
նուական խորհրդոց, իբրև զի և ինքն ո՛չինչ
պակաս հայէրդ և բաժանորդ էցէ առա
քինութեան մասին և գեղեցիկ մոլութեան
վարուց։ Ուսոյ և կանանց Սպարտացւոցդ
միայն ՚ի ճահ էր ասել պարծանս միան
գամայն և խորհել. ըստ որում և վասն գոր
ծոնեայ կինոջն Լէոնիդոսի պատմեն. քան
զի յորժամ կին ոմն օտարական՝ որպէս
կարծեմ՝ ասաց առ նա, եթէ Միայն դուք
Լակոնացիք երեսս ՚ի վերայ արանց, եա
պատասխանի. Քանզի և միայն Լակոնացիս
ծնանիմք արս։

Հանդերձ այսու՝ էին այսոքիկ և յորդո
րակք ՚ի հարսանիս անդր. զհանդիսանալ
զայս ասեմ զկուսանացն, և զքաջկազմուի
զմրցանն յանդիման պատանեացն, որք
ածեալք լինէին ո՛չ յերկրաչափական ինչ
հարկէ՝ որպէս ասաց Պղատոն՝ այլ ՚ի կա
րեաց բնութեանն։ Ա՛յլ սակայն և անպա
տուհասն էին յաւէլ սահմանեաց ՚ի վե
րայ անասնոցն արանցն։ Քանզի արդե

լեալ էր նոցա՝ ի զնին կալ Լսողաց ակնեբև օրհորդացն. և՝ ի ձմերանի պատուէր՝ ի վերայ դնէին նոցա իշխանքն շուրջ յածել մերկք ընդ հրապարակն. և՝ ի գալ անդ շուրջանակի՝ նուագ ևս առնուին ընդդէմ իւրեանց իսկ անձանց. լսելոյ ոչք յիրաւի արդեօք պատուհաս կրեսցեն՝ զի անաստուածան օրինացն. առ այս՝ և՝ ի հքոյ պատուէն և՝ ի պաշտամանէն՝ զոր ծերունեացն հարկանէին պատանիք՝ անբաժ էին նոքա: Ոսատի և զբանն զայն ասացեալ առ Դեր-կևուղևիդաս ո՛չ ոք երբէք բամբասեաց, թէպէտ և յականաւոր զօրավարաց ոք էր նա. քանզի՝ ի մնանել նորա երբեմն՝ ի նեղքս, պատանի ոմն անդանօր չեաս նմա տեղի՝ ի բազմականին, ասելով. Քանի՞ ո՛չ ծնաւ ջուրս պատ, որ և ինչ յաւուր հոմ պոյծ պէղի:

Բայց կէին ածէին նոքա յաւիշտակու-թեամբ՝ ո՛չ օրհորդս անտխականս, և կամ՝ ի տարաժամ հասակի հարանուէթեանն, այլ յարբունս հասեալս և հարանացուս. և զօրհորդն յաւիշտակեալ առնոյր յինքն պատ հէր կէնն հարանածու. և զգլուխն ոսկեղէն սափրեր կարձնովէն, և առնոյր հանդերձ ագուցեալ նմա և կօշիկս, այնպէս առեալ ընկողմանեցուցանէր զնա մէյնակ՝ ի վերայ բարձից իւոոց առանց լուսոյ ճրագի: Իսկ փեսայն չէ զուարթացեալ՝ ի գինւոյ և ո՛չ՝ ի դրգռանս ինչ յօրացեալ, այլ զգաստ և սարկաւեջս՝ եթէպէտ այն որ միշտ՝ ի սեղանակցութեան անդ իւրեանց ընթրեալ էցէ, այն պէս մնեալ առ նա՝ լուծանէր զգօտի նո-

րա, և բարձեալ զնա հանգուցանէր յանկոլնի: Եւ կացեալ ընդ նմա ոչ բազում ինչ ժամանակ՝ այնպէս մեկնէր ՚ի վայրացն պարկեշտութեամբ, և ըստ որում յառաջն սովոր էր՝ գնայր ինքն ՚ի նոյնջեւ ընդ այլոց պատանեացն. և զայս այսպէս առնէր նա և յայլ նուագս. ընդ հասակակից պատանեացն անցուցանէր զտիւն ողջոյն և ընդ նոսա դարձեալ հանգչէր զցայգ. և առհաւան մերթ ընդ մերթ ելեալ գնայր՝ մեծապէս ակնածութեամբ, և պատկառէր և զանգիտէր ևս՝ զի մի՛ ոք զդասցէ որ ՚ի նեղքս անդ լցեն: Զնոյն և հարան զաւեանայն ձիգն թափէր՝ զի ՚ի դէպ ժամանակի և գալոյ ՚ի ծածուկ հանդիպեսցին միմեանց: Եւ զայս այսպէս առնէին նոքա ոչ սակաւ՝ այլ հաւուստ մի ժամանակ. որպէս զի և ոմանց ՚ի վեսայից անուն ծնան մանկուանք, մինչեւ էր նոցա տեսեալ ՚ի տուէ զկանայս իւրեանց: Իսկ ապա այս օրինակ մոռանեալ նոցա առ միմեանս, ոչ միայն կրթանք և վարժք էին ՚ի ժուժկալութիւն և յողջախոհութիւն, այլ և մարմնոցն էր արգասաւորութիւն. և զի դողին՝ և ՚ի սէրն միշտ նորք և առոյգք աճեալ բերէին նոքա ՚ի զուգաւորութիւն անդր, և ոչ լերուս յափրացեալս ոմանս կամ թօշնեալս ՚ի պատճառս անպատկառ զուգաւորութեանցն. նա՛ զի և միշտ նշխարքն և իանձ սերոյ և վախճանաց թոյլս ին նոքա առ միմեանս:

Իսկ լերն այսպէս ամօթխածութեամբ և ժուժկալութեամբ պարսպեացն զհար-

անկան, այնուհետև անհաւատալի երշնու-
թիւնն առնոսա: Եւ զոյց կայն ՚ի մէջ առ-
եալ ածէն զԴերպատէայ ուրումն Սպարտա-
ցւոյ՝՚ի կարի հնագունից անտի. առ որ երբեմն
օտարական ոմն հարցանէր, եթէ "Ձինչ
արդեօք պատուհաս կրեսցեն առնոսա չնա-
ցողք", ետ պատասխանի. "Ո՞վ հնարդ դու,
չէք ոք առ մեզ չնացող": Իսկ երբեմն կըրկ-
նեաց նա ասել, "Ապա եթէ կցէք ոք ու-
րեք". ասէ Դերպատաս. "Ցուզ կայն առ-
գանի այնպիսին, ցուզ անարդիլ այնչափ՝ որ
՚ի գահէ անտի Տաւգետեայ 5 կորացեալ
արբցէ ջուր ՚ի գետոյն Եվրոտեայ": Երբեմն
նա հիացեալ պքանչացաւ և ասէր. "Իսկ
զնարդ գոյի ուրեք եզն այնչափ յալթա-
հասակ." Ծիծաղեցաւ Դերպատաս և ասէ.
"Իսկ զնարդ և չնացող ոք գոյի ուրեք ՚ի
Սպարտիա: "Արդ այսպիսի ինչ են պատ-
մութիւնքդ յալպդս ամուանութեանց:

Իսկ ծնողք չունէին իշխանութիւն ՚ի վե-
րայ անդրեան զաւակացն, այլ առեալ ա-
ծէին զնոսա ՚ի տեղի մի անուանեալ Լէ-
էն, յորում անցեալ բազմէին երիցունք
հինաւուրց ՚ի ցեղիս իւրաքանչիւր, և քննէին
զննէին զմանուկն. և եթէ քաչառոյգ գտա-
նէին զնա և հաստահարուստ, հրաման
տային անդրեան մանկանն, և ուռձիկ՝ վի-
ճակ մի յինանուանց հազարաց անտի սահմա-
նէին նմա: Ապա եթէ վատեալ գտանէին
զնա և անարդ, առեալ արձակէին զնա՚ի վայր
անդր՝ զոր անուանեալ կոչէին Ափոթետս,
վայր անդնդախոր. իբրու եթէ զաւակի՝ որ

անդատին ՚ի ծնէ ուչ լինչ գեղեցկիկա բնաւո-
րեալ էցէ ՚ի քաջակազմուԹեան անդամոյն
և ՚ի կորովուԹեան՝ ուչ լաւ էցէ ապրեչն,
ուչ խրտամ անճչին և ուչ քաղաքչին: Ոչաոի և
կանայք ուչ ջրով այլ գինեաւ առեալ լուա-
նային զաղլայան, փորձ փորձելով զնոցա
կազմուԹեանն: Քանզի ասեն՝ եԹէ վեր-
նոտք և իօԹք հարեալ յանապակէն վա-
տին և ընդարմանան. իսկ քաջառողջք ևս
քան զևս հարուստ և կորովի գործեն ըզ-
կազմուածն:

Ա յլ էր և յաղագս դայեկաց նոցա քաջ
արուեստ վոյԹ ինամոց. որպէս զի ա-
ռանց երկչապինդ խանձարրոյ մնուցանի-
ցեն զաղլայն, և զանդամն նոցա և զկերպա-
րանս ազատս և արձակս գործեսցեն. և զի՝
և սովոք և հեշտինք էցեն ՚ի սակաւապի-
տուԹիւն կերակրոցն, և անզարհուրելիք
էցեն ՚ի մուԹ խաւարի, և ՚ի միայնուԹեան
երեւանց աներկիւղք կացցեն, և ՚ի խեւուս-
Թիւնս անազատականս և ՚ի ճիչ լալեացն
անվորձք էցեն: Վասն այնորիկ և յօտար
աշխարհաց ոմանք դայեակս Լակոնացիս
վարձէին զաւակաց իւրեանց: Եւ պատմեն՝
եԹէ Աղկիբիատեայ ԱԹենացւոյ դայեակ
եկաց Ամիւկլէ Լակոնացի. Թէպէտ և պե-
րիկլէս նմա՝ որպէս ասէ Պլատոն՝ դաստիա-
րակ ՚ի վերայ կարգեաց զՋովիւրոս, այն՝
որ ոչինչ առաւելեալ լինչ էր քան զայլն
՚ի տարիս իւրոց:

Բայց ՚ի վերայ Սպարտացւոց մանկանցն
կացոյց Լիւկուրգոս դաստիարակս ուչ ար-

ծաղիկին ոմանս և վարճուրս. և ոչ
դարձեալ օրէն լինչ էր առն իւրաքանչիւր՝
որպէս և կամէր՝ անուցանել կամ դաս-
տիարակել զորդի իւր. այլ առհասարակ
զամենայն մանկունն անդէն ՚ի ժամանել
նոցա յեօթնամեայ տիս հասակի իւրեանց՝
առեալ նա յինքն, և տարեալ ՚ի թիւս հա-
մարոյ դասուց դասուց մուծանէր զնոսա,
և համակրօնս և համանուագս գործէր զնո-
սա, և կրթէր սովորեցուցանէր կալ առ
միմեանս և ՚ի միասին խաղալ և ՚ի միասին
քաղաքավարել: Իսկ իշխան դասուն նոցա
՚ի վերայ կարգէր զմանուկն՝ որ հանճա-
րոմն առաւելեալ էր ՚ի նոսա, և որ քաջա-
սրտութեամբն վեհ էր ՚ի կռուին նոցա:
Եւ ապա այլք ՚ի մանկանցն ՚ի նա դէտ առն
կալեալ հայէին, և հրամանի նորա լսէին,
և ՚ի պատուհասել նորա անսային. որպէս
զի և այս դաստիարակութիւն նոցա էր վար-
ժարան հնազանդութեան: Իսկ ՚ի խաղալ
անդ նոցա՝ ՚ի զնին կային ծերունիք, և շատ
պժտութիւնս և վէգ արկանէին ցանգ ՚ի
մէջ նոցա. և անդուստ ապա ոչ հարևանցի
ինչ արդեօք ՚ի վերայ կացեալք ճշգրտէին՝
զինչ ինչ մոլ մոլ ՚ի նոցանէն ըստ բարուցն
եցէ ՚ի ձեռներէց համարձակութիւնն, և
յանփախուստ անվեհերութին ՚ի մրցմունսն:
Իսկ գերս այնչափ ինչ ուսանէին նոքա՝ որ-
չափ ՚ի պատճառս պիտոյից. և էր այլ ամե-
նայն դաստիարակութիւն նոցա հնազանդու-
թիւն քաջ ՚ի նեղս բերել, և վաստակոց
աշխատութեանց տանել, և ՚ի մարտի պա-

տերազմին յաղթել: Վան որոյ և յաՃՁել հասակի նոցա՝ առաւել խաւամբեր գոր- ծէին զկրթանս նոցա. քնաւ իսկ ոչ ջին սա- փրէին զգլուխս, և անկօշիկս ընթացուցա- նէին զնոսա. և բազում այն էր՝ զի մերկս խաղալ սովորեցուցանէին զնոսա: Ա յլ ևս լերկոտասանամեայք լինէին, առանց պատմուճանի չոլչէին, և ամի ամի հանդերձ մի առնուին նոքա: Ցամաք էին մարմնով. ՚ի լուալեաց բաղանեաց և յօծանելեաց իւղոց անփորձք էին, բայց թէ զաւուրս ինչ սակաւս զտարուրն՝ մարդասիրութեանն այսմիկ բաժանորդք լինէին նոքա: Իսկ ընթ- կոզմանեալք ննջէին ՚ի միասին դաս առ դաս ՚ի խշտիս, զոր ինքեանք յարդարեալք կազմէին իւրեանց իսկ ձեռօք, առանց գոր- ծեաց երկաթոյ մանրելով զծայրս եղե- գանն՝ որ բուսանի առ Եփրատս գետովն: Իսկ ձմերանի՝ ՚ի թփոյ անսի՝ որ անուա- նեալ կոչի Լէոֆքօնօս, այն է՝ գայլատան, առեալ խառնէին ՚ի խշտիս իւրեանց. քան- զի ջերմացուցիչ համարին զթուխն: Ա յլ ՚ի նոյն տիս հասակի նոցա, մեռլինքն քաջ և առաքինի պատանեացն կենակից լինէին նոցա, և արք ծերունիք ուշ եդեալ դի- տէին. և յաւէտ յայնժամ եւս դնային նոքա ՚ի վարժարանս ըմբշացն. և յորժամ պատանիքն մարտ եդեալ մրցէին ընդ մի- մեան և կատակս առեալ խօսէին ընդ մի- մեան՝ ծերունիքն մերձ կային նոցա, ո՛չ ինչ հարևանցի տեսուԹեամբ, այլ օրինակ իմն իբրու եԹէ ամենեքեան նոքա անդա-

նօր միանգամայն և հալք լցեն պատան-
եացն այնոցիկ և դաստիարակք և իշխանք.
որպէս զի և ա՛չ ժամանակ թոյլ լինէր նոցա
և ա՛չ դարձեալ վայր մի, յորում ազատ
լինէին նոքա ՚ի խրատուէ և ՚ի պատուհա-
սէ ՚ի յանցանել իւրեանց: Նա՛ զի և ման-
կավարժ ոմն ՚ի քաջաց և յառաքինեաց ա-
րանց սահմանեալ կայր ՚ի վերայ նոցա. և
նոցա ըստ դասուց դասուց ցանգ վերակա-
ցուն կարգէր զմի ոմն յԻրէնաց անտի՝ որ
առաւել զգօն և առաւել քաջամարտիկն
էր ՚ի նոսա: Իսկ Իրէնա կոչեն զնոսա՝ որ
յերկուց ամաց հետէ ելեալք լցեն ըստ
սխա մանկութեան. և Մելիրէնա կոչեն
զնոսա՝ որ երիցադոյնքն են ՚ի մանկունս:

Արդ այս Իրէն ելեալ քանաւեայ՝ իշ-
խան զօրավար կայ ՚ի գլուխ հնազանդելոց
նոցա ՚ի կռիւ մարտի. և առ անվին դար-
ձեալ սպասաւորութիւն առնու ՚ի նոցա-
նէ ՚ի ժամ ընթրեացն. և հրաման տայ
յարքունի հասեալոցն երթալ փայտ բերել,
իսկ կրսերագունիցն՝ բանջարս դալարիս.
և նոքա գնացեալ գողանան և բերեն, կէսք՝
՚ի պարտիզաց, և կէսք դարձեալ՝ ՚ի միջոյ
անտի սեղանոյ մարդկան, ոտնիւթի մոա-
նելով ՚ի ներքս մեծաւ նենգաւ և կարի
աչալրկս: Ապա եթէ ըմբռնեսցի ոք ՚ի
նոցանէ ըմպէ գան բազում խարազանաւ,
իբրու այն որ պղերգագոյնս էցէ ՚ի գողու-
թեան և անարուեստ 6: Եւ գողանան նո-
քա և յամենայն կերակրոց՝ յոր և ձեռն-
հաս լցեն. և քաջավարժք յոյժ են դա-

ըան նիւթել որոց ՚ի քոան լցեն, կամ ոչք հելպատոյնս առնիցեն զպահպանութիւնս իւրեանց: Ապա եթէ ոչ պարձեալ ըմբըռնեսցի, դանդ են տուգանքնորա և անուսանողութիւն: Եւ դուզնաքեայ են ընթրկնոցա. որպէս զի առ ՚ի հարկանել զքարոյս իւրեանց՝ հարկաւորեսցին նոքա ձեռներէց լինել և նեղել: Եւ այս է գործ ոսկաւաչերութեան այնմիկ. հանդերձ այսու՝ առն եթէ այս ոսկաւաչերութիւն ՚ի նեղքս բերէ և զմարմնոյն աճելութիւն: Քանզի աճին նոքա ՚ի բարձրութիւն, յորժամ ոչ ին ոչ բազում ինչ ժամանակ ընդ վայր թօշնեալ կայցէ առ ՚ի յոլիութենէ կերակրոյն ճնշեալ ՚ի ներքոյ կոյս և ՚ի լայնութիւն, այլ ՚ի վեր կոյս ընթացեալ առ թեւթևութեան՝ հեշտեալ այնուհետև և առնարգել զմարմինն ընդ իւր ձգելով երկայնելով: Իսկ այս՝ թուի թէ և գեղեցիկ գործ է զմարմինն. քանզի վտիտքն և նիհարքն առաւել իմն հպատակք են ոնել զքաջակազմութիւն անդամոցն. իսկ յոլքն և շատակերքն ծանրութեամբ իւրեանց դիմակալ են այնմ. ըստ որում ճշդիւրս և տղայք ինքնին՝ թէպէտ և վտիտք ծնանիցին ՚ի մոլոց իւրեանց՝ որք ընդ ժամանակն յոլութեան մաքրութիւնս ինչ առեալք իցեն, սակայն գեղազէնք են և քաշտակեալք ՚ի պատճառս անօսրութեան նիւթոցն, որ առաւել հպատակեալ կայ ՚ի նեղքոյ ձեռաց ձարտարին՝ որ՚ի տիպ առեալ ճշդիւրեսցէ զինս: Այլ սակայն պատճառք բա-

նոր այդորիկ՝ Թողլի ի առհասարակ ՚ի
քննութիւն գնեւելեացն:

Եւ գողլան մանկունք Սպարտացւոց
այնպէս իմն զգուշաւոր խնամով, որպէս զի
և պատմեն՝ եթէ ՚ի նոցանէ ոմն գողացեալ
երբեմն կորիւն աղուէսու, և մեկնոցաւն
իւրով շուրջ ծածկեալ գնա, առ ՚ի թաք-
նութիւն գործոյն ժուժեաց հանբերութեաց
մանուկն՝ մինչև ՚ի ձիրանաց անտի և յա-
տամանց գազանին գօշեալ կեղեքեալ որո-
վայն իւր՝ անկաւ և մեռաւ: Եւ այս ոչինչ
արդեօք անհաւատալի ինչ կայ. քանզի են
են և առ մեօք աղայք, յորոց զբազումս
տեսաք մեք՝ զի յանդիման բեմին Որթեանն
Արտեմիսեայ անկեալ մեռան ՚ի հարուածոյ
դանից: Իսկ յետ ընթրեացն ընկողմանեալ
իրէնն՝ կիսոց ՚ի մանկանց անտի հրամայէ
երգել. իսկ առ կէսս դարձեալ հարցուածս
՚ի մէջ առնու, որում և պարտ է պատաս-
խանի առնել աջալուրջս և ճշգրիտս: Օրի-
նակ իմն, Ո՞ ոք էջէ ասէ և ասացինէ ՚ի մար-
դէն. կամ թէ՝ Ո՞րպիսի էնէջէն գործ ուրուք
՚ի մարդկանէ: Եւ այսպէս ապա անդաւոն
յառաջին ուրոյն բնաւորեալք սովորէին
նոքա դատաստան առնել յալագս իրաց
բարեաց և լաւաց, և ճշգրտիւ խուզել
քննել զքաղաքացիան: Քանզի ՚ի հարցա-
նել անդ՝ եթէ ո՞ք ՚ի քաղաքացեացն այր
լաւ էցէ կամ ո՞ք անբարի՚ի նոսա, եթէ ոք
դեղեր ինչ ՚ի պատրաստել, խօթամըլ-
ութեանն նշանակ համարէին զայն և անպա-
տուական ոգւոյն յառաջինութեան անդր:

Եւ պարտ և արժան էր պատասխանոյն լինել հանդերձ պատճառաւքն և ապացուցիւքն՝ ի համառօտն ամփոփելով բան և ի հակիրճն: Իսկ որ ոչ անվթար պատասխանի առնէր՝ պատուհաս ընդունէր, խածուած առեալ յԱրքենեայ ի բոյնին իւր: Էր բազում անգամ զի և յանդիմանն նոցուն իսկ ծերոնեացն և իշխանացն, Իրէնն պատուհաս ի վերայ կապէր մանկանցն, առ ի տալ առանել նոցա՝ եթէ արդարև յիրաւի և ըստ արժանեացն ածիցէ զպատուհասն. և ի պատուհասել անդ նորա՝ ոչ ոք արգելոյր զնա: Ա յլ ևս ի քաց գնայինն մանկունքն, յայնժամ և Իրէնն ինքնին վճիռ լուծանէր՝ եթէ երբէք խստագոյնս ինչ քան զարժանն իրատեալ էր զմանկունսն, կամ եթէ ընդ հակառակն՝ յաւէտ ինն հեղգագոյնս և մեղկաբար: Բայց և մտերիմքն հաստատակորդք են մանկանցն գովեստեան մասին՝ միանգամայն և պարտաւանացն: Եւ պատմեն և՝ եթէ երբեմն մի ոմն ի մանկանց անտի ի մրցել անդ ի ւրում ձայն արձակեալ անարի, զմտերիմն վասն այնորիկ պատուհասեցին իշխանք: Եւ այնպէս ինն հաւանեալ էր առ նոսա այս գեղեցիկ օրինակ մտերմանալոյ, որպէս զի և օրիորդաց ինքնին մտերմութիւն ընդունել ի միմեանց քաջաց և առաքինեաց. և նախանձաւոր գժտութիւն չէր անդ ի միջի. նա մանաւանդ այն էր քարեկամութեան պատճառ առ միմեանս մտերմացն հաստատից, որք և գուն գործէին նոքա հաստատակ և մե-

ծաւ ջանիւ քալ և առաքինի գործել զմտե-
րիմն իւրեանց:

Ա՛ռ այս և կրթեալ վարժէին զմանկուն՝
և բանս իմն ասել համեմեալս ընորհիւ առ
՚ի կծեւլ, և որ ՚ի կարճառօտ բառս՝ շատ
ամփոփեացէ խմաստ: Քանզի զերկաթի
դրամն բազմակրկնու գործեաց Լիւկուրգոս,
այլ սակաւաժէք, ըստ որում և աւացաք.
նաև ներհակաբար՝ զդրամ բանկին յարդա-
րեալ կազմեաց ՚ի կարճառօտ և ՚ի սակա-
ւուց բառէց՝ շատ և առատ ՚ի ներքս բե-
րել խմաստս. ՚ի բազում լռութեան կըր-
թեալ զմանկունն, զի սակաւս բարբառե-
ցեն, և ձարտարս պատասխանեացեն: Քան-
զի զոր օրինակ սերմն անժուժկալին ՚ի զու-
գաւորութիւնս՝ բազում այն է ըստ ամուվէ և
անպտղաբեր, սակաս և անժուժութիւն ՚ի
խօսել՝ սին գործէ զբանն և անխմաստ: Ար-
երբեմն յորժամ Աստիկեցի ոմն յերդա-
ռեալ կատակէր զտուսերս Լակոնացւոց՝
երբոռ կարի իմն կարճս և մանուռնս, և ասէր
ևս՝ եթէ զտուրպ զայդոսիկ հեչտեաւ ար-
դեօք կարեն կլանել հրէշարուեստ ածպա-
րարքդ ՚ի Թատերս խաղուց. ետ նմա պա-
տասխանի Ագիս Թագաւոր. "Եւ սակայն
զմանրիկ տուրպ քալ իսկ մեք հատուցա-
նեմք մինչև ՚ի Թշնամիս անդր": Եւ ան-
շուշտ տեսանեմ ես քալ, զի բանք Լակո-
նացւոցդ Թէպէտ և կարճառօտք Թուեցին, սակայն և արագ արագ հասանեն ժա-
մանեն նոքա ՚ի նպատակ անդր, և հարկա-
նեն զմիտս լսելեացն:

Եւ քանզի և Լիւկուրգոս ինքնին՝ որպէս հաւանեալս եմ՝ համառօտախօս եղև զբուխսն և առածաբան. եթէ արժան իցէ արդեօք յանդիման ցուցանել զայն՝ի բանից անոյ՝ զոր յիշատակեն վասն նորա: Յայսպիսեաց ասի է՝ զոր ասաց նա յարգելոյ քաղաքականութեան. զի յորժամ այր ոմն խորհուրդ՝ի մէջ արկանէր ռամկապետութեան հաստատել՝ի քաղաքին, ետ պատասխանի Լիւկուրգոս. "Դուն ինքնին առաջին ռամկապետութիւն հաստատեա՝ի քումմէ տան": Եւ զոր դարձեալ ասաց նա վասն զոհից, յորժամ հարցանէր ոմն՝ի նմանէ, եթէ առ ինչ նա այնչափ դուզնաքեայս և սակաւածախս սահմանեալ կարգեաց զզոհսն, ետ պատասխանի. "Զի մի՛ թերևս դադարեսցուք մեք երբէք՝ի պատուել զաստուածութիւնն": Եւ զոր ասաց նա յարգելոյ ըմբռնմանն, եթէ՝ Զայն մրցման միայն ոչ արդեւր ինքն իւրոց քաղաքացեացն, յորս ոչ կարկառի ձեռն ի: Եւ յառաջ բերեն զնորա և զպատասխանիս ինչ առ իւրն քաղաքացիս՝ի նամակաց ինչ նորա. "Չխորդ մեք բաւական եցեմք արդեօք անձեւխափանել զարշաւանս թշնամեացն, "Եթէ յաղթութեան կացջիք միասջիք, և այր քան զընկեր ոչ ցանկասցի ոանել առաւել": Եւ դարձեալ վասն պարսպաց. "Ոչինչ արդեօք անպարիսպ եցէ քաղաքն, որ յարանց քաջաց շուրջ պատեալ եցէ և ոչ՝ի կղմնորաց "Ա՛յլ յաղագս հարազատութեան նամակացս այսոցիկ և որ

՚ի տոցուն տակի՝ ո՛չ անհաւատանալն դևերին
ինչ է, և ո՛չ դարձեալ հաւատալն: Իսկ թէ
երկայնութենն բանից բամբասեալ էր առ
նոսա, յառածից աստի յայտնէ յայտ յան-
դիման կայ: Լէոնիդէս Թադաւորը, յորժամ
յաղագս պիտանեաց երից խօսս ՚ի մէջ ա-
ռեալ բարբառէր ոք ՚ի տարաժամու, "Ո՛վ
հիւրդ, ասէ, յանդէպ բարբառիս դու
զդէպն": Իսկ Խաւիլատս եղբօրդին Լի-
կուրգեայ երբեմն հարցաւ, եթէ առ ինչ
նուազունք առ ՚ի Լիւկուրգեայ սահմանե-
ցան օրէնք, ետ պատասխանի. "Գանգլի-
որք ոչն վարեն բազում բանս, նոցա չէն
պէտք բազում օրինաց": Իսկ Արքիդամի-
դէս, յորժամ բամբասէին ումանք զԼԿա-
տէոս լմաստակ, զի հրաւիրեալ ՚ի կոչման
և բազմեալ ոչինչ բարբառէր, ետ պատաս-
խանի. Ու գէթ խօսէլ, գէթ և պէտանաւին:

Իսկ զոր ինչ ասացի յաղագս զկծոլբա-
նիցն՝ որ չնորհօք հաւեմեալ էին, յիշատա-
կաց արժանիք այսպիսի ինչ էն: Դեմա-
րատոս, յորժամ տմարդի ումն այր ձանձ-
րացուցանէր զնա անպատկանաւոր հար-
ցուածովքն, և զայս ինչ դարձեալ ստէպ
հարցանէր ՚ի նմանէ, եթէ ո՞ք արդեօք
լաւ և առաքինի էր ՚ի մէջ Սպարտաց-
ւոցդ, ետ պատասխանի. Ու տէր գլխովին
անմտանն էր: Իսկ Ագիս, յորժամ արք
ումանք գովաբանէին բարբառէին յաղագս
Եղևնացւոցն, իբրու այն՝ որ քաջապէս և
արդարութեամբ կառավարեն զՈղիւմպիա-
կանն, ետ պատասխանի. "Եւ զի՞նչ առա

մեծ ինչ գործեն Եղնասցիքդ, որ մի ընդ ամն հինգ գործեալով արդարութեամբ“: Իսկ Թէոպոմպոս, յորժամ օտար ումն այր ըզմտերմութիւն իւր առ նոսա ՚ի դէմս բերէր՝ զի պատմէր եթէ քաղաքացիք իւր անուն կարդան նմա Փիլոլաոն, այն է՝ Լակոնասէր, ետ պատասխանի, “Լաւ էր քեզ արդեօք մի վկայիդ, կոչել Փիլօթօլիդա“. այն է՝ սիրօղ քաղաքացեաց: Իսկ Պղնստոնաքսէս որդի Պաւսանեայ, յորժամ հռետոր ումն Աթենացի անուսամուն կոչէր զԼակեդեմոնացիս, ետ պատասխանի. “Ուսիր սասել. քանզի միայն մեք ՚ի հելլենացւոց՝ ոչ ջար ինչ ուսաք առ ՚ի ձէնջ“: Իսկ Արքիդամիդէս հարցեալ յումեանէ, եթէ քանիսի էին Սպարտացիք, ասէ. “Որչափ միանգամ բաւականք են ՚ի վանել զջարս“:

Բայց է և ՚ի զուարճախօսութեանց անոր նոցա ձանաչել լմնանալ զբոյս բարուց նոցա: Քանզի սովորեալ էին նոքա ոչ խօսել ինչ հարևանցի և յաւելորդս երբէք. և ոչ դարձեալ ձայն մի արձակել անբաժ գլխովին ՚ի հանճարաւոր լսատից: Ո՛ր երբեմն՝ զի յորժամ հրաւիրէին զոմն դնալ ունկն դնել ձայնի ուրումն՝ որ զնմանութիւն բերէր զսոխակի, ետ պատասխանի. Ո՛չ գնացի, քանզի ինքն ինձ լուեալ է պէտն: Իսկ և այլ ումն՝ յորժամ ընթերցաւ զվերտառութիւն ինչ այսպիսի. “Զդուռս՝ որք երբեմն զի չնչուցին զբռնաւորութիւն, պղնձին Արէս հարեալ սպան: Եւ ատ՚ի դրունն Սեղինուսեայ դիտապատա

կան". զայս ինչ ասաց. "Իրաւապէս արդեօք դիտապատ կան արքեդ այդպիսի. քանզի պարտ էր Թուլուբ զբռնաւորու-Թիւնն մինչև յիսպառ այրուձին": Դարձեալ և պատանի ոմն՝ յորժամ տալ զքխտանայր նմա զաքալալս, որք մարտ եւ-դեալ կռուեցին մինչև 'ի մահ տարածել, ասէ ցնա. "Մի դու ինձ զայդոսիկ, այլ տուր ինձ յայնպիսեաց անտի՝ որք մարտ եղեալ կռուեցան մինչև 'ի մահ տարածել": Էր զի՝ և այլ ոմն տեսեալ զմարդիկ՝ զի բարձեալք 'ի վերայ աթոռոց ոմանց և բազմեալք այնպէս առնէին Հանապարհ, ասէ. "Մի լեցի ինձ նստել անդէն՝ ուստի չեցէ ինձ հնար յառնել առաջի ծերոյ": Արդ առածից նոցա այսպիսի ինչ էր կերպարան. որպէս զի և ոչ տարադէպս ինչ առնեցին ոմանք, եթէ՝ Լակոնանալք է լինել համառաւաէր՝ առաւել քան թէ մրցասէր:

Իսկ յաղագս դասակարգութեան 'ի նուագս երգոց և 'ի չափս տաղից՝ փոյթ Հանամոց կալան նոքա ոչինչ պակաս քան զգեղեցիկ նախանձն և զանխառն յառաջ-կոխմն 'ի խօսս նուրեանց. այլ և տաղաչափութիւն նոցա գլխովին՝ խթան հին էր ոգւոց ազդուական, և բոցոյ արծարծիչ և ժրութեան գործոց գեղեցիկ մոլութեամբ: Ոճ տաղից անպաճոյճ էր և անգրգռասէր. նիւթ՝ գործս հին ունելով նուրեանց զարութեանց քաջութեանց և զբարեզգեաց բարուց: Քանզի բազում այն էին՝ զի գովութիւնս գրուածոց ունէին նոքա յաղագս

մեռեալցն ի վերայ Սպարտոյ, եբրու յա-
զագս երջանկաց ոմանց. գարձեալ և պար-
սաք եպերանաց յաղագս վառասիրտ վա-
խճատէից, եբրու այն՝ որ ի ցաւովք և հի-
գադոյնս վարեացեն կեանս: Ա՛ւ այս՝ էին
ի տալն յայնոսիկ և խոստմունք դեղե-
ցիկք և մեծաբան ևս պարծանք յառաքինի
նահատակութենն անդր՝ ի ձահ պատա-
հեալ նոցա իւրաքանչիւր ըստ մեն մի հա-
սակաց նոցա: Յորոց զմի ի տաղից անտի
օրինակի աղագաւ ո՛չ անձահ ևցէ արդեօք
առնուլ ի մէջ: Գանգի ի ծնանիմբու-
թենն՝ յերրեակ դասս զատուցեալք իմիմ
բեալ կային նոքա ըստ երրեակ հասակացն:
Որ ծերունեաց դասն էր, սկսանէր նուագ
առնուլ զայս ինչ. Էր էրբեմն՝ գի ես պա-
պանէ գոլով՝ էաւ անպարփելի: Իսկ որ պա-
տանեաց դասն էր, պատուհասանի ուսեալ
սակր. ե- ես աւագին այնպիսի ոմանց էմ.
էակ էրբ կամս՝ գործ գործեա՛: Իսկ երրորդ
դասն՝ որ էր տղայոց, զայս երգէր. ե- ես
գլխովին էղծաւ յապայս աւասելիորվի: Եւ
բնաւ իսկ ամենևին՝ եթէ ոք ճչգրիտ՝ ի վե-
րայ կացցէ Լակոնացի քերթուածոցն, յո-
րոց ինչ ինչ և առ մեօք պահեալ կան, և
խելամուտ լինի քայլափոխ թուոց նոցա,
զոր՝ ի վար առնուին նոքա՝ ի ձայն տաղի,
՝ի յարձակել իւրեանց՝ ի վերայ թշնա-
մեաց, ո՛չ յանդէպս ինչ համարեացի՝ զի
Տերպանդրոս և Պինդարոս զարուեստ քա-
ջութեան առեալ զուտաւորեցին ընդ ե-
րաժշտութեան: Գանգի այսպէս ուրեմն

Տէրպանդրոս ասաց յալագս Լակեդեմո-
նացւոցն, եթէ "Անդանօր տէգք պատա-
նեաց դալարագեղք են, նոյն և երաժըշ-
տականացն քաղցրութիւնք, և սովորոյթ
լայնափողոց": Իսկ Պինդարոս օրինակ զայս
ասէ. "Անդանօր խորհուրդ ծերոնեաց, և
պատանեաց արանց արեաց տէգք, և կայթք,
և երաժշտականք. և խնծղանք": Որովք
քաջ իսկ 'ի դէմս բերեն դոքա, եթէ երա-
ժիշտք ուրեմն ներկուստք էին Լակեդեմո-
նացիք, վանգամայն և մարտիկք աննմանք:
Քանզի գնաց արանց ընդդէմ էրխոյն գե-
ղէցիկ յայն հիւրատան, ըստ որում ասաց Լա-
կոնացի ոմն քերթող:

Քանզի 'ի մարտս պատերազմի կանխէր
Թագաւորն և զոհ զոհէր Մուսայից, առ
'ի յիշատակ՝ որպէս հաւանեալս եմ՝ վար-
ժից նոցուն և դաստատանացն, որպէս զի
օգնական նիզակակից լինիցին զօրականին 'ի
վտանգս մարտին, և ականատուր յարդարե-
ցեն զգործ նահատակութեան նոցա: Բայց
և երբէք պատանեացն դուլ առնելով խըս-
տամբերութեան կենաց նոցա, ոչինչ ար-
գելուին նոցա գեղապաճոյճ յօրինել ըզ-
վարս հերացն, և 'ի զէն զարդ վառել գե-
ղեցիկ և յարդարել 'ի զգեստս, և խնդալ
ցնծալ՝ տեսեալ զնոսա երբեւ նժոյգս ոմանս
խայտեալ ձախրել և դաշտը հարեալ խինջալ
'ի կռիւ մարտի: Ուսոյն և անդաստին 'ի տալոյ
սիոցն Թողեալք զգեստս վարսից, յաւէտ
էին 'ի ժամանակի մարտի պատերազմին
սպառս հարկանէին վարսից, ջինջս և սուրբս

և ձաղկս յարդարելով զնոսա. 'ի յուշ անձանց բերելով բան մի զԼիկուրգեայ՝ զոր առեր վասն վարսից. եթէ՝ Զգեղեցիկսն առաւել ևս գեղաւոր գործեն վարուք, իսկ զանգելեայն՝ առաւել ահաբեկս: Ա՛յլ կրթուելիւնք և մարզք նոցա մեղկագոյնք էին 'ի ժամանակի մարտի, և քաղաքավարութիւն կենաց ոչինչ այնպէս խաոտամբեր և անձուկ տային յայնժամ պատանեացն. որպէս զի և միայն նոցա 'ի մէջ այլոց կանանցածնաց՝ մարտ պատերազմի էր դուէլ և դադար 'ի վաստակոց պատերազմի: Իսկ իբրև միախուռն կարգեալ գեղեցիկ Ճակատեալ կայր փաղանգ նոցա հանդէպ Ճակատու թշնամեացն, յայնժամ Թագաւորն այծ մի փողոտեալ յաղէր. և քարոզ տայր կարգալ առհասարակ՝ զի բոլորեալք պահեսցին, և տաւղահարացն հրամայէր հարկանել երգել զկաստորեանն տաղ, միանգամայն և ինքն ձայն տուեալ սկսանէր զքայլափոխ նուագ յարձակմանն: Որպէս զի միանգամայն և արդոյ և պատուական և ահընկէց էր տեսիլ կերպարանացն, այն ինչ նոքա Թուով և չափով 'ի ձայն տաւղի տակաւ յառաջադէմ խաղային գնային, ոչ ցիր և ցան գործելով 'ի փաղանգին, և ոչ դարձեալ խուռվ և ամբոխ հարկանելով 'ի հոգիս իւրեանց, այլ հեզ և հանդարտ և զուարթագոյնս 'ի գեղեցիկ նուագացն անտի այնպէս ածեալք բերէին 'ի գոռմունս մարտին: Քանզի և ոչ ասացեր զի արդեօք՝ եթէ ահ երկիւղին և կամ խի-

զախեէլ Ծայրայեղ՝ տեղի ինչ երբէք ունիցի
'ի նոսա՝ որք այնպէսն զգածեալքն էյեն.
այլ անսասանեէլի միտք և խորհուրդ՝ 'ի միա-
սին ընդ յուսոյ և քաջալերութեան սրտի՝
իբրու այն թէ Աստուած ինքնին գլխովին
անդ մարտակից նիզակակից էյե: Եւ ան-
դուստ ապա Թագաւորն դիմադրաւ դիմէր
'ի Թշնամիս անդր, և նիզակակից իւր ու-
նէր Նահատակ մի պսակաւոր յաղթական
'ի մրցմունեան: Եւ պատմեն՝ եթէ երբեմն
յորժամ Յողնամիսականն՝ դրամ բաղում
առաջի առնէին տալ ումեմն 'ի Սպարտաց-
ւոց, և նա չընկալաւ, այլ մեծապէս աչխա-
տութեամբ մրցեալ 'ի գօտեկռուին՝ յաղ-
թեաց ախոյեանին, իբրև այր ոմն ասէր ցնա.
"Ոչինչ առաւել ապա, ո՛վ Լակոնացիդ,
եղև քեզ 'ի յաղթութենէդ այսի յայդ-
մանէ". նա ժպտեալ ետ պատասխանի.
"Ակն յանդիման Թագաւորիս Ճակատ յար-
դարեալ մարտեայց ես ընդ Թշնամիս":
Ապ իբրև 'ի պարտութիւն մատնեալք
զԹշնամիան 'ի վախուստ դարձուցանէին,
զհետ մտեալ վանէին զնոսա, մինչև հաս-
տատուն նշան յաղթութեան կանգնել 'ի
վերայ փախստէից Թշնամեաց. ապա փու-
թանակի դարձ արարեալ տեղի տային 'ի նո-
ցանէ. զի ոչ աղնուական ինչ համարէին, և
ոչ դարձեալ հելլենական՝ 'ի սուր սուսերի
մաշել կոտորել զայնոսիկ՝ որք տեղի տու-
եալք պարտութիւն խոստովանէին: Եւ ար-
դեօք ոչ գեղեցիկ միայն էր գործն և մեծ-
անձնութեան շուք, այլ և կարի սիրա-

նացու։ Քանզի ոչք մարտնչէին ընդ նո-
սա, գիտեալով զայն՝ եթէ զդիմամարտան ի
սուր մաշեն Սպարտացիք, իսկ ի փախըս-
տեայն խնայեն, քան զկալ մնալ ի մար-
տին՝ լաւ ևս համարէին նոքա զփախուստն։

Բայց և զԼիկուրգոս գլխովին մարտիկ
անուանեն ասէ Խպիաս իմաստասէր, և ի բա-
զում զինուորութեան կիրթ և փորձ։ Իսկ
Փիլոստեփանոս տայ ընծայէ Լիկուրգոսի
զբաշխս այրուձիոյն ի վաշտս Ովամից։ Եւ
էր ասէ Ո-ւմն՝ որպէս նա կարգեաց և բաշ-
խեաց, խումբ յինանից այրուձիոյ ձակա-
տեալ ի ձև քառանկիւնի։ Իսկ Փաղերևոս
Դեմետրիոս ասէ, եթէ Լիկուրգոս ոչինչ
միտ եդեալ նահատակութեանց մարտի՝ ի
մեծապէս խաղաղութեան հաստեալ սահ-
մանեաց զքաղաքականութիւն իւր. ևարդեօք օրինադրութիւն Լիկուրգոսի՝ դուռ
և դադար տալ մարտին յՈլիմպիական ի
ածնան՝ մեզ ի դէմս բերել եթէ անդուստ ի
բնութենէն հեզ և հանդարտ էր այրն և
խաղաղասէր։ Ա՛յլ սակայն և կէսք ասեն՝
ըստ որում պատմէ Երմիպպոս՝ եթէ զա-
ռաջինն ոչ վաստակակից լինէր և կամ բա-
ժանորդ երբէք եղև Լիկուրգոս գործոցն
Խիլեաց. այլ թէ՝ դէպ եղև զի ի գառ-
նալ նորա ի պանդխտութենէն և ի կալն
ի զնին նոցա, ձայն լինի լսէր յանկարծակի,
իբրև թէ այր ոք ի թիկանց կուսէն կայր և
կշտամբէր զնա և զարմանայր նա՝ զի ոչ յոր-
դորէր նա զքաղաքացիս իւր հաղորդ և բա-
ժանորդ լինել աշխարհաժողով ածնին։ Նա

իբրև դարձաւ ՚ի Թիկունս և տեսանէր և ոչ զոք խօսել ընդ նմա, աստուածային գոգցես համարեցաւ զբանն. և այնպէս ապա չոքաւ մերձեցաւ առ Խիխտոս, և ՚ի միասին ընդ նմա յարդարեաց զտօնն, և առաւել փառաւոր և հաստատուն գործեաց զնա:

Ա՚յլ դաստիարակութիւնն ձգէր տարածէր և մինչև ՚ի նոսա՝ որ յարբունս հասեալքն էին: Քանզի չէր ումեք Թոյլ ըստ հաճոյս անձին վարել կեանս. այլ որպէս ՚ի բանակի զօրուն՝ նոյնպէս և ՚ի քաղաքի անդ քաղաքավարութիւն կենաց ունէին նոքա սահմանաւոր, և ԹարԹափել պատուել ՚ի հասարակացն գործս. և գլխովին իսկ այնպէս համարէին նոքա՝ եԹէ ոչ անձանց իւրեանց կեան և քաղաքավարեն նոքա՝ այլ հայրենի աշխարհին իւրեանց: Ապա եԹէ գործ ինչ այլ չէր կարգեալ նոցա ՚ի գործել, յարուցեալ յայց երանէին մանկանց, և նստեալ ՚ի պիտանեաց ինչ ուսուցանէին նոցա. կամ Թէ ինքեանք իսկ գնացեալ ուսանէին առ ոտս ծերունեաց իւրեանց: Քանզի և ՚ի գեղեցիկ և յերանաւէտ բարեաց անտի՝ զոր պատրաստեալ նաւԹձեաց Լիւկուրգոս քաղաքացեաց իւրոց՝ էր և բազում ժամանակին պարապոյ. որոց և բնաւ իսկ ամենևին Թոյլ ոչ էր անազատական և մենաքենայագործ արուեստից պատկառ կալ: Նա և չէր իսկ օրէն նոցա մԹերել ինչ ոսկւոյ և արծաԹոյ, որ վաստակ բազում և քիրտն շատ չինքն բարձեալ բերէ. քանզի և գլխովին աննախանձելի էր ՚ի

նոսա ընչաւէտութիւնն և խոտան և արհամարհ: Բայց Խղոտք միակեաց գործէին զերկիր նոցա, և տային հատուցանէին նոցա զեկամուտս հասիցն՝ զոր ասացաք: Էր երբեմն՝ զի Սպարտացի ումն գոլով ԱՆԹԷՆՈՍ, և՝ի պահուն՝ յորում ատեան լինէր գաւառանի, իրազեկ եղեալ եթէ պատուհաս առեալ այր ումն՝ի պատճառս անգործ պարապորդութեանն՝ տխուր և թաղծեալ գնայր զճանապարհ իւր, և յուղարկաւորք լինէին նմա ախտակից սիրելիք նորա՝ դժկամակք եղեալք ընդ պատիժ պատուհասին, խնդրէր հարցանէր Սպարտացին յորոց մերձն կային՝ ցուցանել նմա զայրն՝ որ զպատիժն զայն ընկալաւ՝ի պատճառս այնպիսի ազատանձնեայ քաղաքավարութեանն: Ընդ այնպէս իմն ծառայից և ստրկաց գործ համարէին նոքա զպարապերն յարուեստս 8 և՝ի ժողովել զինչս:

Իսկ պայքարք դատաստանաց՝ որպէս հաւանեալս եմ՝ՀՀ՝ի միասին ընդ ընչաւէտութեանն տարագիր լեալ էին՝ի Սպարտիոյ. քանզի և չէր անդ ուրեք՝ի միջի ոչ աւելաստացութիւն առն քան զընկեր իւր և ոչ դարձեալ աղքատութիւն, այլ հաւասարութիւն գեղեցիկ յառաւութեան գոյից, և կեանք հեշտինք՝ի պատճառս սակաւապիտութեանն: Կայիք և պարք և ոճնախըմբութիւնք և կոչնոց խրախուն և սիրութիւնք որոց գազանաց և մրցանք ըմբշաց և խօսակից կենակցութիւն, էր նոցա պարապումն զամենայն ժամանակն՝ յորում

դադարեալ կային նոքա ՚ի մարտից պատերազմաց:

Ոչք միանգամ ՚ի նոսա չէ էին հասեալ յերեսնամեայ սխս հասակի՝ երթեք ոչ իջանէին ՚ի հրապարակ անդր, այլ ՚ի ձեռն ազդականաց և սիրելեաց պատրաստէին ըզպէտս տնտեսութեան իւրեանց: Իսկ ոչք ըստ սխս հասակին այնորիկ ելեալքն էին, անվայել էր նոցա այնուհետև հանապազօր դեգերել առ տնին, և ոչ մանաւանդ զառաքելագոյն ժամանակ զաւուրն անցուցանել ՚ի մարզս ըմբշամարտիկս, և ՚ի կենակից քաղաքավարութիւնս: Ուրանօր ՚ի մի իրմէ նոքա՝ գեղեցիկս և վայելուչս խօսակից կենցաղակից լինէին միմեանց, յիշատակ և ոչ մի ինչ առնելով ՚ի բանս իւրեանց յաղագս ընչաւէտութեան գոյից կամ շահավաճառութեան ինչ պիտոյից, այլ առաքելագոյն բան կենակից քաղաքավարութեանն այնմիկ էր ՚ի գովութիւն առնուլ զբարին, և այպանել զպերճ ցուրն՝ հանդերձ խաղուս և հանդերձ ծաղուս, որ ՚ի խրատ վարուց և ՚ի հրահանգութիւն բարուց արագ արագ քնաւորեցաւ ձգել ըզմարդիկ: Քանզի և ոչ Լիւկուրգոս ինքնին էր սաստիկ և խիստ. նա՛ զի և որպէս Սովսիբիոս պատմէ՝ փոքրիկ դրօշեալ մի ևս ծաղր եգ կանգնեաց Լիւկուրգոս. առ այս՝ և զզուարճախօս զրոյցն իբրու համեմ գլխովին վաստակոց քրտանց և կերակրոյն՝ առեալ էմոյծ ՚ի դէպ ժամանակին ՚ի սեղանակցութեան նոցա և ՚ի կենակից քաղա-

քավարութեան: Եւ ողջոյն իսկ վարժեաց առնուլ ոչ զքաղաքացիս իւր, ոչ կամել և ոչ դարձեալ գիտել՝ կեանս վարել առանձինն. այլ ցանգ իբրև զպարս իմն մեղուաց խոնիլ գնդանալ՝ի գործ անդր հասարակաց, և միախուռն երամովին շուրջ պարել յածել զթագաւորսն. և վայրիկ մի ևս այլ յայլմէ լինել և՝ի վեր վազել առ գեղեցիկ մոլուութեանն և առաքինի պատուասիրութեանն, և այնպէս առհասարակ կեալ և լինել հայրենի գաւառին: Եւ զի յայս խորհուրդ կամաց նահատակեալ էին ամենեքեան նոքա, քանզ իսկ զննեացն ոք արդեօք և՝ի բանից ինչ նոցա:

Քանզի Պեդարետոս, իբրև ոչ՝ի համար ընտրեցաւ ինքն երից հարկուրց, մեծապէս զուարթութեամբ եղ գնաց, և ինդայր ցընծայր՝զի երեքհարիւր որեար լաւ քան զինքն դասան՝ի քաղաքին: Իսկ Պիսիտրատիդէս գնացեալ ընդ այլոց ոմանց՝ի հրեշտակուԹիւն առ զօրավարս արքային Պարսից, իբրև հարցաւ՝ի նոցանէ, եԹէ իբրև առակաւն ոմանք հասին նոքա անդր, եԹէ առաքեալք՝ի հասարակաց ժողովոյն, էտ պատասխանի. "ԵԹէ կամագիւտք լինիցիմք, ՚ի հասարակաց ժողովոյն. ապա Թէ ոչ՝ իբրև առակականք": Իսկ Արգիլէոնիէ մայրն Բրասիդեայ, յորժամ եկին հասին՝ի Լակեդեմոնիա ոմանք յԱմիւկլայօնեցւոց անտի և մտին առ նա, հարցանէր ցնոսա, եԹէ՝ արդեօք դեղեցիկս և ըստ արժանի Սպարտացւոցն մեռեաւ էցէ Բրասիդաս. իբրև նոքա

սկան մեծացուցանել զայրն, և ասել ևս եթէ զուգահաւասար նմա չունէր Սպարտիա, եւ պատասխանի. "Մի դուք ոչ հիւզքդ՝ ասէք ինձ զայդ. քանզի լաւ և քաջ էր արդեօք Բրասիդաս, սակայն բազում և այլ արս ունի Լակեդեմոն քաղաք կորովիս քան զնա":

Իսկ զծերունեացն դաս՝ որպէս կանխեցեալ ասացաք՝ ընտրեաց սահմանեաց Լիւկուրգոս՝ ի նոցանէն զառաջինն՝ որ միանգամ հալորդ և բաժանորդ էին խորհրդոյ նորա. բայց ապա՝ ի մեռանել միոյ ուրուք՝ ի նոցանէն, օրէնս եդ ընտրել կարգել փոխանակ վախճանելոյն զծերն՝ որ առաքինութեամբ գերազանցեալ էցէ զծերովքն վաթսնամեայք և՝ ի վեր: Եւ ապա բնաւ իսկ յամենայն մրցանս մարդկան այս խնդուտ Լիւկուրգեայ թուէր լինն վեհագոյն և՝ ի պայքարս քննութեանն առաւել ահրաշ. քանզի և ոչ արդեօք զնա երագագոյնն կերպագունն, և ոչ դարձեալ՝ զնա հզօրագոյնն՝ ի հզօրս, այլ որ միանգամ՝ ի լաւն և յողջախոհն քաջալաւ էցէ և առաւել ողջախոհ, զայնպիսին պարտ և արժան է ընտրել կարգել՝ զի տարցի նա իբրև յաղթութեանակ զնուրոյ առաքինութեանն՝ զոր առաքինացաւ՝ ի կեանս իւր, զողջոյն իսկ՝ որպէս բանիս կարդ է ասել՝ տէրութիւն զքաղաքին, և տէր կալ միանգամայն և մտհու և անարգանաց քաղաքացեացն, և բնաւ իսկ մեծամեծ նահատակութեանց:

Եւ էր օրինակ ընտրութեանն այսպիսի

ինչ: Իբրև միախումբ հաւաքէր ժողովէն, ամբ այրընտիրք գնային և արդելուածք փա կէին ի մերձակայ ինչ բնակութեան՝ ուս ոմն ոչ զոք առանէին և ոչ գարձեալ առ սեալք լինէին. այլ զձայն աղաղակին միայն լսէին զժողովելոցն 9: Քանզի ձայնիւ մե ծաւ և աղաղակաւ՝ որպէս և յայլսն՝ առ նէին և զընտրութիւն զնախանձաւոր հե տամուխն, ոմք ո՛չ միախուռն ամենեքեան՝ այլ այր այր ըստ վիճակին տուչութեան մտանէր առանձինն, և լուռ անշշունչ ան ցեալ գնայր ի ժողովէն: Իակ ոմք ի բնա կարանի անդ փակեալք կային, ունելով իւրեանց պնակ մի ի գրել, անդ նշանա կէին զմեծութիւն ձայնի աղաղակին առ մէն մի ի նոցանէն, ոչ ինչ գիտեելով եթէ առ ո՞ ի նոցանէն եղև աղաղակդ այդ. բայց զայն՝ թէ առաջին կամ երկրորդ կամ երրորդ ի մտելոց անտի՝ այլովքն հան դերձ: Իակ ապա առ ո՞ ոք ի նոցանէն բազ մագոչ կամ աղաղակն և մեծ, զնոյն զայն այր յառաջ մատուցեալ հրապարակէին: Իակ նա պատկառ բոլորեալ՝ յառաջ անցեալ գնայր յայց եւ լանել դէց: Նմա զհետ եր թային բազումք ի պատանեաց երանի տա լով առն և մեծացուցանելով, և շառաք ևս ի կանանց ներբողեալ գովէին նուագօք զառաքինութիւն նորա և զկեանս նորա՝ իբրու երանութեան հասեալ մասին: Իակ ի մերձաւորաց անտի այր այր ընթրիս նմա պատրաստեալ՝ ասէր, եթէ ողջոյն քաղաքն շուք գնէ նմա սեղանովդ այդուիկ: Եւ նա

չուրջ եկեալ զնդքօք, ապա մեկնէր գնայր ի սեղանակից հացկերոյթն անդր. և ապա այլն ամենայն ըստ նմանէն կատարէր ըստ սովորութեանն: Բայց զերկրորդ բաժինն՝ որ զայն օր եղեալ լինէր առաջի նորա, նա առնոյր և պահէր: Եւ ապա յետ ընթրեացն, յընտանեաց կանանց իւրոց որ առ դուրսն Յիսուսեայ հասեալ կային՝ կոչէր առ ինքն զոր առաւել պատուէր ի նոսա, և առեալ զբաժինն՝ տայր նմա և ասէր՝ եթէ զդոյն մրցանակ ինքն տարեալ զառաքինութեանն, նմա գլխովին տայ ընձեռէ: Յայնմանէ ապա և կինն այն փառս մեծապէս ստացեալ՝ շքով յուղարկեալ լինէր յայլոց կանանց:

Ա՛ռ այսոսիկ՝ և զթաղումն մեռելոց կարգեալ յարդարեաց նա յոյժ գեղեցիկ: Քանզի առաջին ի բաց եբարձ նա զամենայն ինապաշտութիւն. և ո՛չ արգել նա ի քաղաքի անդ առնուլ թաղել զմեռեալս, և մերձ տաճարաց ունել շիրիմս գամբանաց. քանզի կամէր սննդակից գործել պատանեաց և ընդաբոյս զտեսիլ հանդիսի մեռելոցն, զի մի թերևս խռովեալք ամբոխեսցին և կամ զարհուրեսցին ինչ ի մահուանէ, իբրու թէ պղծել՝ զորս միանգամ մերձեսցին ի մարմին մեռելոց, կամ ոըք երբէք ընդ դէմ զմանս նոցա անցանիցեն: Եկրորդ անգամ՝ ո՛չ թոյլ եւս ամենևին թաղել այլ ինչ ի միասին ընդ մեռելոցն. այլ ի հանդերձ ծիրանի և ի տերևս ձիթենւոյ պատատեալ այնպէս հանգուցանէին զմար-

մինն. առ այս՝ չէր օրէն և չետ Թաղմանն արձանագիր ՚ի վերայ գրել զանուն մեռելոյն. բայց Թէ ոք յարանց ՚ի մարտի պատերազմի մեռեալ լիցէ, կամ Թէ ոք ՚ի կանանց արբաբար վախճանեալ լիցէ: Խակ զժամանակ սգոյն և զկոծոյն սակաւօրեայ սահմանեաց նա, զաւուրս միայն մետասան. և ապա յաւուրն երկոտասաներորդի պարտ էր զոհ կատարել Դեմետրի և այնպէս լուծանել զսուգն: Քանզի ոչինչ էր անդ վայրապար լինչ կամ ընդ վայր հարեալ, այլ գլխովին յամենայն կարևորան կենաց առնոյր նա խառնէր նախանձ իմն առաքինութեան կամ բամբասանս լինչ մոլութեան: Եւ խիտ առ խիտ օրինակօք բարեաց առեալ ընոյր զքաղաքն. յորս հարկ էր ապա ցանգ շրջել ՚ի նոսա և տեսանել և աննդակից լինել նոցա, և ինքնին ածել բերել և կերպարանակից լինել բարեաց մասին:

Ասաի և ոչ Թոյլ տայր կամեցողացն տարաչխարհիկ լինել և ՚ի պանդխտութեան շրջել Թափառել. զի մի Թերևս օտարոտի սովորոյթս ընդ իւրեանս առեալ բերցեն, և օրինակս անհրահանգ վարուց, և այլայլութիւնս քաղաքական կարգաց: Ալ և ինքն գլխովին զհկան որ յոչինչ պէտս հասեալ անդր՝ սպրդեալք մտանէին ՚ի քաղաքն՝ տարագիր առնէր. ոչ որպէս Թուկիդիդէսն ասաց՝ զանգիտեալ լինչ զի մի Թերևս նմանողք եղիցին քաղաքականութեան իւրում, և յաւելութիւն անդր լինչ մի պիտանացու ուսցին նոքա, այլ

մանաւանդ զի մի Թերևս վարդապետք չա-
րեաց լինիցին նոքա: Քանզի յօտար մարդ-
կանէ՝ հարկ է միանգամայն և օտարոտի
զըուցաց ի ներքս մտանել. իսկ զոյգք նոքք
ի ներքս բերեն և դատաստանս նորանորս.
յորոց ապա հարկաւորապէս ի վեր բազ-
բոյթացին կիրք բազումք և առաջադրու-
Թիւնք կամաց, որք զսահմանադրեալ քա-
ղաքականուԹիւնն՝ իբրու զներդաշնակու-
Թիւնն ձայնից՝ խանգարեալք խանգարես-
ցեն: Վասն որոյ և առաւել պարտ
համարեցաւ նա զգուշանալ քաղաքին՝ զի
մի սովորոյԹք վատԹարք լցցեն զնա, քան
Եթէ մարմինք ախտակիրք արտաքուստ
սպրդեալ մոցեն ի նա: Եւ արդեօք յայ-
տնի չէր ինչ բան անիրաւուԹեան և կամ
ագահուԹեան երբէք, որով մեղ դնեն
ոմանք օրինացն Լիւկուրգոսի. իբրու Եթէ
բաւականք լցեն այդոքիկ գործել արիս,
այլ անյարմարք ի գործել արդարս:

Բայց սովորուԹիւնդ այդ՝ որ անուա-
նեալ կոչի առ նոսա Փրէդէա, այն է՝ ծած-
կուԹիւն, (սակայն Եթէ և այս ի քաղա-
քական օրինաց անտի Լիւկուրգեայ էր՝
որպէս ասացաք Արիստոտէլ), Թերևս
զգոյն զայդ կարծիս ետ ունել և Պղատոնի
վասն անձին Լիւկուրգեայ և վասն քաղա-
քականուԹեան նորա: Եւ էր սովորու-
Թիւնն այսպիսի ինչ: Որք միանգամ վերա-
կացուք ոստիկանք կարգեալ էին ի վերայ
պատանեաց՝ ընդ ժամանակս ժամանակս
զառաքել ուշիման ի նոցանէ առեալ ար-

ձակեբասան առաքէին 'ի գիւղօրէս. և ու-
նէին նոքա իւրեանց գանակ մի և զկարևոր
պարէնս, և ո՛չ այլ ինչ ամենևին: Ընդ ոտքս
զգեբեկ ցան և ցկր վարասեալք՝ 'ի խոխոմն
ձորոց ղօղեալք թաքչէին՝ անկեալք զքնով-
խակ ապա զցայգ յարուցեալ իջանէին 'ի ճա-
նապարհս, և յԽլոտաց անուն զորս միան-
գամ որսային՝ անդէն խողխողէին. բազում
անգամ և յանդասանս յարձակեալք,
ոլք միանգամ քաջակորով էին 'ի նոսա և
ուժաւորք՝ սպանանէին զնոսա. ըստ ո-
րում և Թովփիդիդէս պատմէ 'ի պատմու-
թիւնն Պեղոպոննիսեաց, եթէ ոլք միան-
գամ յարութեան մասին այրընտիրք էին 'ի
Սպարտացիս, նոքա պատկեալ լինէին իբ-
րու յազատութիւն գրեալք, և ելեալ շուրջ
յայց էլանէին տաճարաց դից. իսկ ապա
յետ սակաւուց առհասարակ ամենեքեան
նոքա անհետացան 'ի միջոյ՝ որ և էին թու-
ով առաւել քան զերկու հազար. որպէս
զի ո՛չ յայնժամ և ո՛չ գարձեալ յասպայ
ժամանակս գիտաց ոք ասել երբէք, եթէ
զինչ օրինակաւ նոքա անհետացան 'ի միջոյ:
Ա յլ Արիստոտէլ մանաւանդ զայս ինչ ա-
սանդէ, եթէ և Պարէտք յորժամ զնչխա-
նութիւնն զանձամբ առնուին, առաջին՝
մարտ պատերազմի հրատարակէին ընդդէմ
Խլոտաց, որպէս զի արժան և իրաւ իցէ
սպանանել զնոսա: Իսկ և յայլ ինչ իրս
խստագոյնս գնային ընդ նոսա և սաստիկս,
մինչ զի և հարկաւորել զնոսա ըմպել անա-
պակ բազում, և այնպէս առեալ ածէին

զնոսա 'ի սեղանակցութիւն անդր իւրեանց, 'ի դէմս բերելով պատանեացն՝ եթէ որպիսի՛ ինչ էին ակբեցութիւնն. այլ և երգս և նուագս տային երգել նոցա և պարս պարել և կայթս հարկանել անարուեստս և ծիծաղելիս, և 'ի բաց կալ յամենայն ազնուական գործոց: Վասն որոյ և ասեն՝ եթէ յետ ժամանակաց յարշաւել անդ բանակին Թեբայեցւոց 'ի Լակոնիա՝ յորժամ հրամայեաց թագաւոր Լակեդեմոնի՝ զորս 'ի գերութիւն վարեալ էին, երգել զնուագս զԹերպանդրեայ և զԱղկմենեայ և զԱպենդոնի լակոնացւոյ, յանձն չառին երգել՝ 'ի չքմեղս եղեալ եթէ ոչ թոյլ տան նոցա տեարք նոցա: Որպէս զի և որք միանգամ ասացին՝ եթէ 'ի Լակեդեմոն որ ազատն է՝ մեծապէս ազատ է, և որ ծառայն է՝ մեծապէս ծառայ է, ոչինչ յոռեգոյնս արդեօք սահմանեցին զբանն: Ա՛յլ ինձ թուի՝ եթէ յետ ժամանակաց այդպէս խիստ և սաստիկ գնացին ընդ նոսա Սպարտացիք, մանաւանդ յետ մեծի գետնաշարժին 10, յորում ժամանակի պատմեն եթէ միաբանեալ գաշնաւորք եղեն Իլոտք ընդ Մեսսինացւոց, և չարիս բազում անցուցին ընդ գաւառն, և վտանգ մեծապէս 'ի վերայ հասուցին քաղաքին: Քանզի ոչ իսկ բաւեմ ես տալ ընծայել Լիկուրգոսի զնզովեալին զայն գործ զՔրիպեդիային, յայլ ինչ գործոց նորա հեղուեան և արդարութեան՝ քաջիկ խելամուտ լինելով չափ անկակից բուսոյ բարուց

առնն, որում և դիք ինքնին դլխովին վը-
կայեցին:

Իակ իբրև ի հասարակաց սովորութենէ անտի հաստատեալ ամրացան այնուհետև սահմանադրութիւնք օրինաց իւրոց, և քա-ղաքականութիւն նորա գլխովին շատ ինչ անաւ և աճեաց, և բաւական էր նա այնու-հետև կալ առանձին և ինքնին պաշտպանել անձին, ըստ որում Պղատոն ասաց. Եթէ յա-րարտագործութեան աշխարհի և ի շարժել անդ նորա զառաջինն շարժումն, եռեւս Ա-ստուած և ուրախ եղև, սակայն և Լիւկուր-գոս զուարճացեալ և գոհացեալ ընդ գեղն և ընդ մեծութիւն օրինադրութեանցն իւրոց՝ ոչք յարդիւնան արդիւնացան և յառաջա-դէմ ևս գնային ճանապարհ, ցանկայր փա-փաքէր ըստ ձեռնհաս կարի նախատեսու-թեան մարդկան՝ անմահս լինի և անայ-լայլելս առադրել զայնոսիկ ի հանդեր-ձեալն: Ապա առ հասարակ ի մի խմբեալ զամենեսեան՝ եկեղեցի մեծ, ասէր այսպէս. Եթէ ահա ամենայն սահմանադրութիւնքն գեղեցիկ և ի չափու և բաւականք են ի բարեբաստութիւն և յառաքինութիւն ոչ-ջոյն քաղաքին. սակայն որ առաւել տկրա-գոյնն էցէ ի նոսա և վնասադոյն, զայն նա նոցա յայտ յանդիմանութեամբ ի վեր չհա-նէ՝ մինչեւ ինքն պատգամ հարցեալ էցէ ի Դելփիս: Պարտ և արժան է ուրեմն նոցա կալ մնալ հաստատուն ի սահմանս օրինաց իւրոց և չայլայլել, կամ պակասեցուցանել ինչ մի ի նոցանէն, մինչև ի դարձ նոր ի

Դեղփեայ. քանզի՝ ի դառնալ Իւրում այսրէն՝ յայնժամ՝ ի գործ առցէ ինքն՝ որ ինչ միանգամ հաճոյ եցէ դմին: Ընդ իբրև առհասարակ հաւանեալ հաճեցան, և Թելադիր ևս լինէին նմա յայն ուղևորութիւն, նա առհասարակ երդուաւն հաստատութեէ էառ՝ ի Թագաւորացն և՝ ի ծերունեացն, ապա ըստ նոցանէն և յայլոց անտի քաղաքացեացն, կալ հաստատուն և վարել զսահմանադրութիւն քաղաքականութեան իւրոյ՝ մինչև դարձցի ինքն. և ապա եւ և ընդաա՝ ի Դեղփիս:

Իբրև եկեալ եհաս նա՝ ի գուշակարան անդր, և կատարեաց զոհ դմին, հարցանէր եթէ արդեօք գեղեցիկս սահմանեալ եցեն օրէնքն, և բաւական եցեն՝ ի բարեբաստութիւն և յառաքինութիւն քաղաքին: Իբրև զայն լինչ պատասխանի ետուն դմքն, եթէ գեղեցիկս սահմանեալ են օրէնքն. և զի՝ ի մեծաշուք փառս յաւերժասցի քաղաքն՝ Լիկուրգեայ քաղաքականութեանն պատկառ կացեալ, յայնժամ զգուշակութիւն զայս՝ ի գէր արձանացոյց Լիկուրգոս և առեալ յղեաց՝ ի Պարոխա: Իսկ ինքն միւսանգամ զոհ կատարեալ դմին և գիրկս արկեալ բարեկամաց իւրոց և իւրում զաւակին, եդ՝ ի մոխ երբէք ոչ արձակել յերդմանէ անտի զքաղաքացիսն, և զինքն կամակատարութեամբ սրտի անդանօր կարձել՝ ի կենաց. քանզի և զտիս հաստակին ունէր այնչափ՝ յորում միանգամայն և կեալն և մեռանէին՝ ի դէպ էր արդեօք կամեցողացն.

և զի՝ Թուէր ևս նման՝ եթէ իրք իւր գեղեցիկ վիճակեցան էլից: Եւ այսպէս ապա վախճանեաց նա անդէն զկեանս անսուաղուռթեամբ կերակրոց. քանզի և այնպէս համարեցաւ նա՝ եթէ արանց քաղաքական նաց և ոչ մահն գլխովին՝ անպիտան քաղաքին պարտի լինել, և ոչ վախճան կենաց նոցա անավաստակ ինչ, այլ գլխովին յառաքինութեան մասին լինել պարտ է և յարդեանց նահատակութեե 11: Քանզի որ գործեաց զգեղեցիկն՝ եգ 'ի մոի եթէ անձին իւրում լուծին երջանկութեան է արդարև մահն. իսկ քաղաքացեաց իւրոց՝ որչափ ինչ միանգամ 'ի կեանս իւր հանդերձեաց զգեղեցիկն և զբարին՝ այնոցիկ պահապան եթող զմահն իւր. քանզի և երդուեալ իսկ էին նոքա նմա պահել զքաղաքականութիւն օրինաց նորա՝ մինչև գարձցի նա: Եւ ոչ վրիպեցաւ նա 'ի կարծեաց իւրոց:

Քանզի ցայնվայր նախաթոռ և բարձրեց գտաւ քաղաքն ՅԵլլադա բարեկրօն կարգօքն և փառօք, ցորչափ ընդ ժամանակ ամաց հինգ հարիւրոց պահեաց զօրէնսն Լիւկուրգեայ. զորս և ոչ ոք շարժեաց և փոփոխեաց 'ի չորեքտասան Թագաւորաց անտի, որ յետ նորա Թագ կապեցին մինչև յԱգիսն Աղբիդամեան: Քանզի և պարեսացն կարդ և ընտրութիւն ոչ եթէ գուռ ինչ էր քաղաքականութեանն այնմիկ, այլ հաստատութիւն. և Թուէր իմն այնպէս՝ եթէ ժողովրդեան կողմանն զօրավիգն կայցէ, սակայն զօրաւորագոյն ևս գործէր զա-

ազանին : Իսկ յորժամ Թագաւորեաց Ա-
գիս՝ առաջին եմուտ սպրդեցաւ յայնժամ
դրամ ՚ի Սպարտիա . և ՚ի միասին ընդ դրա-
մին հորդան եւս ՚ի նեղըքս և աւելաստացու-
թիւնն և ընչաւէտութիւնն սէր ի ձեռն
Աղեքսանդրի , կամ թէ մանաւանդ ի ձեռն
Լիսանդրոսի : Սա այս Լիսանդրոս՝ ինքն
անըմբռնելի գոլով արդեօք ՚ի կրից ընչա-
ւէտութեանն , էլից յօրացոյց զհայրենի աշ-
խարհն ընչասիրութեամբ և գրգանօք , մը-
թերս ոսկւոյ և արծաթոյ ածեալ բերեալ՚ի
մարտէ պատերազմին . և այնպէս ապա տա-
պալեալ քակեաց զօրէնսն Լիկուրգեայ :
Մինչդեռ յակառաստանի կային նոքա , ան-
շուշտ յայնժամ Սպարտիա ոչ զքաղաքի
ուրուք ունէր զքաղաքականութիւն , այլ
զքաղաքավարութիւն կենաց զառն առա-
քինւոյ և խնամանոյ : Մանաւանդ եթէ
զորօրինակ պուեոխիկոպզ քերթողաբանեն
զՀերակլէայ , եթէ զԱհիւծենին արկեալ
զանձամբ և լսիտ ՚ի ձեռին՝ այնպէս ընդ
սիեզերս շուրջ յածեալ , պատիժ պատու-
հաս ած ՚ի վերայ անօրէնն և վայրենամիտ
բռնաւորաց . սապէս և Սպարտիոյ քաղաք
՚ի ձեռն միոյ Սկիւտալէայ 12 , և ՚ի ձեռն
հնացեալ ձորձոյ՝ սիրասփռեալ ՚ի վերայ
Ելլադայ՝որ կամակարութեամբ սրտի հպա-
տակէր զանձն՝ բնաջինջ արար զանիրաւ
աէրութիւնս և զբռնաւորութիւնս ՚ի քա-
ղաքականութեան մասին, իշխան հրամանա-
տար եղև մարտից պատերազմաց , և զհեր-
ձուածս և զերկպառակութիւնս հանդար-

տեցոյց. և բաղում այն էր՝ զի և ոչ առպարտ մի շարժեաց, այլ զմի ոք ի հրեշտակաց իւրոց առեալ առաքէր, որում անդէն վաղվաղակի առհասարակ ամենեքեան անսային հրամանին, իբրու պարի ինն մեղուաց՝ ոլոք յերևեալ առաջնորդին իւրեանց՝ միաձուռն խմբին և կազմ և պատրաստ յարգարեն զանձինս:

Ա՛յսչափ ինչ բարեկրօնութիւն տիրացեալ էր ի քաղաքին և արդարութիւն: Ոստոխ և իմ մեծապէս ե զարմացեալ ընդայնոսիկ՝ որ ասեն թէ քաջ գիտացին Լակեդեմոնացիք իշխել, սակայն իշխել ոչ. և զի՝ և ի գովութիւն առնուն նոքա զբանս Թէոպոմպեայ Թագաւորին, այն՝ որ յասել ուբոյն. եթէ՝ կեայ Սպարտիա ի ձեռն Թագաւորացն՝ որ գիտեն իշխել. ետ պատասխանի, Մանաւանդ ի չեռն քաղաքացին՝ որ գիտեն իշխիլ: Քանզի ապաքէն ոչինչ յանձն առնուցուն իշխիլ և հնազանդիլ նոցա՝ որ ոչն լցեն բաւական իշխել և առաջնորդել. այլ հնազանդիլն ե ի քաջութենէ անտի իշխեցողին. քանզի որ գերեցիկս առաջնորգէ, գերեցիկս և տայ գհետս երթալ: Եւ զօրօրինակ լուսին ձիավարժ արուեստին՝ ե հեզ և հանդարտ և հլու ընծայել զերիվարն, առպէս քաջ և արքայական մակացութեանն գործ ե զգերեցիկ հլութիւնն ի ներքս տալ ընծայել: Իսկ Լակեդեմոնացիք ոչ զգերեցիկ հլութիւնն, այլ զգերեցիկ մոլութիւնն ներգործեալք հասուցին յայլս՝ առաջնորդիլ ի նոցանէ և հպատակ կալ նոցա: Քանզի ոչ

նաւուց ինչ հանդէս խնդրելին նոքա ՚ի Լա-
կեդեմոնացւոց, ոչ դրամս ոսկւոյ և արծա-
թոյ. և ոչ դարձեալ մարտիկս սպառազէնս,
այլ այր մի Սպարտացի՝ յառաջնորդ. և ժո-
ղովեին զնա առ իւրեանս, և մեծապէս շքով
և պատկառանօք գնային ընդ նմա, ըստ
որում ընդ Գիւլիպպեայ՝ Սիկիլիացիք, և
ընդ Բրասիդեայ՝ Քաղկիդացիք. իսկ ընդ
Լիսանդրեայ և ընդ Կաղլիկրատեայ և ընդ
Ագեսիլայոսի՝ ամենայն բնակիչքն Ասիոյ:
Եւ անուն կարդային արանցն այնոցիկ՝ ղե-
կավարք ճարտարք և յարդարիչք իմաս-
տունք ազգաց ազգաց և նոցուն իշխանաց:
Իսկ ընդ քաղաքն Սպարտացւոց դէտակն
կալեալ յառէին՝ իբրու ընդ դաստիարակ
մեծ կամ ընդ վարժապետ բարեզդեաց
վարուց և գեղայօրէն քաղաքականութեան:
Ջոյն զայս և ճարտարագոյնս առեալ ձևա-
ցուցանէ Ստրատոնիկոս, այն՝ որ ընդ խաղ
և կատակաւ զօրէնսդրի ուրուն Թեկն ա-
ծեալ առանձին, հրաման տայ պատուիրէ
Աթենացւոցն՝ խորհուրդս կատարել և հան-
դէս ասնից. իսկ Եղիսացւոց կարգէ՝ մրցա-
նաց խաղուց լինել հանդիսադիր՝ իբրու
այն որ յոյժ քաջապէս գործեսցեն զնոյն:
Բայց Լակեդեմոնացւոց հրամայէ գան
հարկանել, եթէ երբէք սխալեսցեն նոքա
՚ի պաշտամունս իւրեանց: Ալ զայս ՚ի
պատճառս ծաղրու առացաք մեք: Իսկ Սո-
կրատեանն Ընտիսթենէս, իբրև ետես զթե-
բայեցիան կարի ինն մեծամտեալս ՚ի պատ-
ճառս պատերազմին Լեվկտրեայ, ասէ.

"Ոչինչ ընդհատ էք դուք ի մանկտուին, որ ցնծացեալ հրճուեսցին՝ զի հարին զվարժապետն":

Ա՛յլ սակայն չէր այս յայնժամ կէտ նպատակին Լիկուրգեայ, եթէ քաղաքաց քաղաքաց առաջնորդ՝ զիւրն ընծայեցուցէ քաղաք, այլ զքաղաքին իւրոյ զերջանկութիւնն յառաքինութենէն գիտեալով և ի համաշունչ միաբանութենէն, իբրու զառանձին մարդոյ՝ ի կենացն քաղաքավարութենէն, այնպէս սահմանեալ կարգեաց գեղեցիկ՝ որպէս զի աղատք եղեալ նոքա և ինքնաբաւք և ողջախոհ մտածութեամբ ընդհարուստ ժամանակս կացցեն մնասցեն: Զգոյն առաջարկութիւն քաղաքականութեանն Լիսանտրեայ և Պղատոն և Դիոգինէս և Զենոն. և ամենեքեան՝ որք միանգամ ինչ մի վասն այսոցիկ ձեռն արկին ձառել՝ ի գովութիւն առեալ են. բայց զի ձառս ինչ միայն և բանս թողին գրովք զկնի եկելոցն: Իսկ սա այս Լիկուրգոս ոչ գիրս ինչ և ձառս բանից, այլ արդեամբք և ճշմարտութեամբ քաղաքականութիւն անղուգական ի լոյս ընծայեաց. և որք միանգամ ի կարծիս եղեն ասել՝ եթէ յանհնարինն էգէ գոանել խնամոտուն այնպիսի՝ որչափ ինչ համբաւեն, նա ի դէմն բերեալ եցոյց ողջոյն իսկ զքաղաքն եղեալ խնամոտասէր. ուսուաի և իրաւապէս նա գեր ի վերոյ անց փառաք. քան զամենեսեան՝ որք միանգամ քաղաքականութեան օրէնս եռուն առ Հելլենացիս: Վասն որոյ և Արիստոտէլ ասէ, ե-

թէ շուք պատուոյ նուազ քան զարժանիս իւր ունի Լիւկուրգոս՝ի Լակեդեմոն, թէ պէտ և ունիցի նա մեծամեծս յոյժ. քանզի և մեհեան կայ նորա և ամի ամի զոհս մատուցանեն նմա իբրև աստուծոյ: Եւ ասեն և՝ եթէ նշխարք ոսկերաց նորա իբրև ածեալք բերան՝ի հայրենի աշխարհն, շանթ մի կայծակեան ինքեալ եհար զգերեզման նորա: Իսկ զայս ոչ հեշտին ինչ այլոցմ ումեք յականատուաց և՝ի հոյակապից, բայց Եպիմենիդեայ ասեն հանդիպեալ յետ այնորիկ. որ մեռաւ և թաղեցաւ՝ի Մակեդոնիա մերձ Անրեթուսա. որպէս զի ջատագովութիւն գեղեցիկ և վկայութիւն մեծապէս ունիցին այնուհետեւ սիրելիքն Եպիմենիդեայ, զի նմա միայնոյ պատահեաց յետ վախճանին այն ինչ՝ որ յառաջագոյն հանպիսեցաւ առն՝ որ գիցն ամենասիրելին էր և արբունեաւքն վեհագոյն:

Այլ վասն մահուն Լիւկուրգեայ ոմանք ասեն՝ եթէ՝ի Կիրրա մեռաւ նա. իսկ Ապողոնիա ասէ՝ եթէ բերեալ եղև նա՝ի Հելիս. իսկ Տիմէոս և Արիստոքսենոս՝ եթէ՝ի Կրետէ վախճանեաց նա զկեանսն: Եւ զգերեզման նորա ասէ Արիստոքսենոս՝ ցուցանել Կրետացւոց՝ի Պերգամիա մերձ յարահետ պողոտային: Եւ պատմեն՝ եթէ և որդի մի միածին անուն Անտիոքոս եթող Լիւկուրգոս. յորոյ՝ի մեռանելն անորդի՝ սպառեցաւ զարմն նորա: Այլ մտերիմք նորա և ընտանիք տարեգարձ և համախմբութիւն կարգեցին՝ որ և եկաց

ճնաց ընդ ժամանակս բազումս, և զաւուրն զայնոսիկ՝ յորում համախմբէին նոքա՝ կարգան Լիւկուրգեան: Իսկ Արիստոկրատէս Իպպարքեան ասէ՝ եթէ ասպնջականք Լիւկուրգեայ՝ ի մեռանել նորա՝ ի Կրետէ՝ այրեցին զմարմին նորա և զմոխիրն ցանեցին՝ ի ծով. քանզի ինքն իսկ իւրոյ այնպէս. և զդուշացաւ՝ զի մի Թերևս ուստեք երբէք տարեալ նշխարաց նորա՝ ի Լակեդեմոն, իբրու դարձ արարեալ համարեսցին զնա Սպարտացիք, և յերդմանցն արձակեալք՝ փոխեսցեն զօրէնս քաղաքականութեան նորա:

Արդ՝ այսչափ ինչ բան յաղագս Լիւկուրգեայ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յն. բառդ բարդեալ, նշանակէ. Խնդութիւն ժողովրդեան:

2. Ա՛յլ է Թաղէս իմաստասէրն Միլետացի ժամանակակից Կրեսոսի. և քան զայս Թաղէս չետոյ է ժամանակաւ առաւել քան երկերիւր և չիսուն ամաց:

3. Ըստ որում և սովորեցաւ իսկ Լիւկուրգոս ասել առ բարեկամն. "Ջ իարդ գեղեցիկ էցէ արդեամբք ցուցանել, եթէ զաչացու է Պղուտոն":

4. Եւրոպաս. Գետ ի Սպարտիա:

5. Էր սա լեառն բարձրաբերձ առաւել՝ ի լերինս Սպարտիոյ, ուստի յերևան գայր աղբյն Պեղոպոննիսոս:

6. Որպէս ինչ ինչ ի Լիւկուրգեան մեզանչական օրինաց՝ զոր օրինակ և աղջկանց Սպարտացւոց անպատկառութիւնն, և այլն. սապէս և Դաստիարակութիւն այս Սպարտացւոց՝ չար և վնասակար չոյժ. զի այնպէս ի մանուանն սովորեալ մանկտոյն, և ապա ի մեծամեծս, այր գողոց և աւազակաց այնուհետև լինիցի Սպարտիա:

7. Ա յս է՝ ոչ կարկառի ձեռն կամ աչն խնդրել վհաշտութիւն՝ իբրև պարտեալ:

8. Ա յլ Սոկրատ ընդ հակառակն վարդապետէր, եթէ արուեստագործութիւն չէ ինչ անձահ և անարժան առն ազատի:

9. Արիստոտէլ մեծապէս աղարտէ զբնական զայս ընտրութեան Սպարտացւոց՝ իբրև անտիական և ծիծաղելի:

10. Դէպ եղև գեռնաշարժին այնմիկ առ թագաւորութեամբն Արքիդամոսի յամի ծննդեանն Սոկրատայ 467 ամօք յառաջ քան զքրիստոսեան: Ասեն մեռանել յայնժամ Սպարտացւոց՝ առաւել քան երկուց բիւրուց:

11: Ա յլ անձին առնել, ոչ միայն առաքինութիւն չէ և քաջութիւն, այլ մեղք և վատութիւն է: Բայց զայսմանէ այլուր՝ ի ծան. ընդդէմ Պլուտարքեայ:

12. Ցն. Σχυταλη: Էր այս մորթ պատատեալ՝ ի գաւազան և դրեալ այնպէս, զոր արձակեալ՝ ի գաւազանէն, առաքէին առ զօրավարն. որ ունելով առ իւր և այլ գաւազան նմանօրինակ, պատատէր և ինքն՝ ի նմա զմորթն գրեալ, և ընթեռնոյր անվրիպեալ զգիրն:

ՆՈՒՄԱՍ

Այն են և յաղագս ժամանակացն Նումայի Թագաւորի՝ յորս եկեաց նա՝ ընդդիմահաւասարելիք սատիկք. Թէպէտ և կէսք ի զարմից քաջ ի Նումաս գլխովին կարծեացեն ճշդրիւ ի վեր հանել զձեռն իւրեանց: Ըստ որում և Կղովդիոս ոմն ի Յանդիմանուէ ժամանակացն, քանզի այսպէս ուրեմն մակագրեաց նա զմատեանն, հաստատեալ պնդէ՝ եթէ այն դիւանք վաղեմիք յաղէտս անդ քաղաքին՝ զոր կրեաց ի կեղտաց անտի՝ բնակչինչ անհետացան, և ոչք այժմիկ երևինդ ի միջի, ոչինչ ճշմարտութեամբ շարադրեցան յարանց անտի՝ որ չնորհս իմն կամեցան առնել ումանց՝ ոչք մեծապէս գուն գործէին սպրդել մտանել յառաջին յայն զարմանն և ի հոյակապ ազգաստոհմանն, որոց և ոչ իւիք բաժանորդք ինչ էին նոքա:

Իսկ զոր ասեն, եթէ կենակից խօսակից Պիւթագորայ լեալ էր Նումաս, կէսք գվնասվին հաստատեն՝ եթէ ոչինչ ի հելլենական վարժից մասն ընկալաւ Նումաս, իբրու այն որ անգամին ի բնութենէն կարօղ և ինքնաբաւ էր յառաքինութիւն անդր. կամ թէ լաւագունի ումեմն բարբարոսի քան զՊիւթագորաս ընծայէին նոքա զհրահանգ զայս վարժից թագաւորին: Իսկ կէսք դարձեալ ասեն, եթէ անագան ուրեմն ծննաւ Պիւթագորաս, և յետոյ է քան զժամանակն Նումայի՝ գրեթէ ազգ հինգ: Եւ թէ՝ այլ ումն Պիւթագորաս Սպարտացի, այն՝ որ յաղթական գոաւ յՈղիմպիական ի վազն ի վեշտասաներորդ Ողիմպիադին, յորոյ ժերրորդ ամին թագ կապեաց Նումաս, շրջեալ թափառեալ յիտալիա, կենցաղակից գոաւ Նումայի, և ի միասին ընդ նմա յարդարեալ կազմեաց զթագաւորութիւնն, ուստի և ոչ սակաւք ինչ ի լակոնական սահմանադրութեանցն խառնեցան ընդ հռոմէականն ի հրահանգաց անտի Պիւթագորայ:

Իսկ այլազգ՝ յազգէ անտի Սաբինացւոց էր Նումաս. իսկ Սաբինացիք գաղթականս Լակեդեմոնացւոց գտանեն զանձինս: Ալ սակայն ժամանակական ձըշգրտել յոյժ դժուարին է. և մանաւանդ՝ զոր միանգամ հաշուեալ ի վեր բերեն ի յաղթականաց անտի Ողիմպիականացն, զորոց ժհամարն անագան ուրեմն ասեն ի լոյս ընծայեալ Խպիւտայ Եղիսոի, ոչինչ

արժանահաւատ ցուցակութեամբք բերեալ: Ա՛յլ մեք որչափ ինչ միանգամ՝ ի ձեռս բերցուք արժանի պատմութեան բաներ յաղագս Նումայի՝ զայն դիցուք առաջի, ի ձահ պատմութեանն սկիզբն առնելով այսպիսի:

Յերեսներորդի եօթներորդի ամի հնութեանն Հռովմայ առ թագաւորութեբն Հռոմուղոսի, ի հինգերորդ աւուր ամսոյն, զոր օր այժմ Նոննայք Քաբրադինայք կոչեն, զոհ իմն աշխարհածողով արտաքոյ քաղաքին կատարեր Հռոմուղոս առ լճին՝ որ անուանեալ կոչեր Ա՛յծու լիճ. և անդ համախմբեալ կայր միանգամայն և Սինկղիտոան և բազմութիւն ամբոխին, յանկարծակի իմն մեծապէս խռովութիւն հարեալ ընդ օդս, և ամպրոպք միգախառն պատեալ զերկիրն ամենայն սաստիկ հոլմով և մրրկաւ, դէպ եղև զի առհասարակ ամբոխ բազմութեանն ահաբեկ եղեալ՝ փախուստ խուճապեցան և ցան և ցիր վարասեցան. իսկ Հռոմուղոս անդէն՝ ի տեղւոջն անհետացաւ՝ ի միջոց. և ապա յետ այնորիկ ոչ գինա ոք գտանէր ուրեք և ոչ դարձեալ ըզդիսակն մարմնոյն: Բայց կասկած գժոխ ըմբեր կարծեաց գրաւեալ կալաւ այնուհետև զպատրիկան, և համբաւ տարածեցաւ առհասարակ յամբոխին ընդդէմ նոցա, իբրու այն թէ նոքա՝ ի վաղուց հետէ դըժկամակս բերեալք ընդ թագաւորեն Հռոմուղոսի, և զտէրութիւնն նոքա չինքեանս կամելով յանկուցանել, սպանին զարքայն.

և քանզի Թուէր իմն ևս այնպէս՝ եթէ սաս-
տիկս և ճոխաբար իշխանութեամբ գնայր
ընդ նոսա Հռոմուղոս: Ա յլ զկասկածն
զայն խափանեալ հանդարտեցին նոքա,
պատիւս աստուածականս սահմանելով յի-
շատակի նորա, իբրու ոչ եթէ մեռեալ ինչ
էցէ Հռոմուղոս, այլ լաւագունին վիճա-
կեալ բախտի: Եւ անդ Պրոկղոս այր ակա-
նատես երդուաւ ևս կռեաց՝ եթէ ետես նա
ինքնին զի յերկինս ՚ի վեր զինու զարդու
վերաբերեալ եղև Հռոմուղոս. և ձայն ևս
լսել՝ որ հրամայէր նոցա անուն կարգալ
Հռոմուղոսի Կուիրինոս:

Ա յսորիկ այսպէս եղելոց, այլ իմն աղ-
մուկ ամբոխի և երկպառակութիւն գրա-
ւեաց կալաւ զքաղաքն վասն ընտրութեան
նորոյ արքայի. քանզի չևևս համաշունչք
էին գլխովին ընդ միմեանս հին քաղաքա-
ցիքն ընդ եկամուխն. այլ տակաւին ամբոխ
բազմութեանն ՚ի մէջ լուր մեծապէս ալէ-
կոծեալ ծփայր. այլ և պատրիկք երկպա-
ռակեալք ընդ ակամբ հայէին ընդ միմեանս
Բայց և առհասարակ հաւանեալ էին ընտ-
րել Թագաւոր. այլ էր անգանօր հերձուած
և երկպառակութիւն ոչ վասն առն միոյն,
այլ և վասն ազգացն, եթէ ո՞ յերկուց ան-
ուն ազգացն ՚ի ներքս ընծայեսցէ առաջ-
նորդ: Քանզի որք ՚ի միասին ընդ Հռոմու-
լոսի առաջին չինեցին զքաղաքն, ոչինչ
յանձն առնուին՝ եթէ որք ՚ի քաղաքն Ի-
րեանց և յաւանս Իւրեանց առեալք ժո-
ղովեցան Սաբինացիքն, նոքին դարձեալ

բռնասցին տիրել ՚ի վերայ ասպնջականացն։ Սակայն և Սաբինացւոցն դոյր քաջախորհուրդ բան. իբրև զի ՚ի մեռանել անդ արքային Իւրեանց Տատիոսի ոչ ընդվզեցան ինչ նոքա յայնժամ ՚ի Հռոմուլոսէ, այլ Թոյլ եւսն նմա Թագ կապել միայնակ. ուստի և յայնժամ պնդէին նոքա՝ զի իշխան ոք կայցէ յազգէն Իւրեանց։ Քանզի արդեօք և ոչ յայնժամ և ոչ այժմիկ իբրև հիւպատեալք ումանք յաւելան նոքա ՚ի յաղթականն անդր. և զի՝ Իւրեանց բազմութեամբն նոքա յօրացուցին զքաղաքն և յայն չափ փառաց ածեալ կացուցին զնա։ Արդ վասն այսոցիկ երկպառակեալ հեռանէին ՚ի միմեանց։

Այլ զի մի Թերևս ՚ի պատճառս անիշխանութեան ՚ի դեգևել քաղաքականութեանն՝ հերձուած անհնարին վէր ՚ի վայր տապալեսցէ զամենայնն, զայս ինչ սահմանեալ կարգեցին պատրիկք՝ որ էին Թըւով հարիւր և չիսուն, զի մէն մի ՚ի նոցանէն կարգ ՚ի կարգ զարդարեալ ՚ի նշանագլեսս արքունի՝ զոհեսցէ դից զսահմանեալ զոհսն, և առեան կալցի վեց ժամ զդիշերոյն և վեց ժամ զասունչեանն իբրև Թագաւոր։ Քանզի և այս բաժանումն ժամուց ըստ երկաքանչիւր ևս մասին՝ Թուէր քաղաքավայելուչ յոյժ իշխանացն ՚ի հաւասարութիւն վիճակի, միանգամայն և առ ամբոխին այս փոփոխութիւն իշխանութեանն խափանէր զկիրս մախանացն, այն ինչ առանէին նոքա, զի ՚ի նմին ասունչեան և ՚ի նմին

գիշերի գարձեալ՝ որ յառաջն Թագաւորն էր՝ դառնայր երևեր իբրև զմի ոք ի սոս-
կականաց անտի: Իսկ զայս օրինակ իշխա-
նութեան Ինդէոռէնոմ կոչեն Հռովմայե-
ցիք, այն է՝ Ամենիշխ: Այլ Թէպէտ և այս-
օրինակ քաղաքականութեամբ և անխռով
կարգաւ կարծէին նոքա առաջնորդել ժո-
ղովրդեանն, սակայն և միւսանդամ կաս-
կած չարեաց և աղմուկ խռովութեան պա-
շարեաց զնոսա. իբրու այն թէ հնարել նո-
ցա՝ զգործ տէրութեանն առնուլ և ամ-
փոփել ի պետութիւնն սակաւուց ոմանց,
և ինքնին զքաղաքականութիւնն ըստ հա-
ճոյից տանել և բերել, և ոչ կամել զոք
Թագաւոր: Ապա վասն այնորիկ երկոքին
ևս կողմանք եկեալ միաբանեցան ընդ մի-
մեանս. զի կողմն մի ի միւսմէն անտի ի մէջ
անցեալ՝ ընտրեցէք հասարակաց Թագաւոր.
և այսպէս ապա գիւրեաւ լուծցէ յայն-
ժամ ամենայն պայքար գժտութեանն, և
որ միանգամ ընտրեսցի ի Թագաւոր՝ եր-
կապանչիւր ևս կողմանցն հանդերձեսցի լի-
նել հասարակաց սիրոյ. քանզի զմի կողմն
սիրեսցէ՝ որ ընտրեաց զինքն, և առ միւսն
գարձեալ բարեմոյն եղիցի ի պատճառս
ազգակցութեանն: Իսկ իբրև առաջին Սա-
բինացիք տեղի ետուն Հռոմայեցւոց յընտ-
րութիւն ալքայի, քանզ ևս Թուէցաւ սոցա
ի Սաբինացւոց անտի ընտրել զոմն ի Թա-
գաւոր, քան թէ ի Հռոմայեցւոց զոք տալ
ի ձեռս ընտրութեան նոցա: Ապա ի խոր-
հուրդ մտեալք ի մէջ իւրեանց ընտրեցին

'ի Սաբինացւոց զՆումաս Պոմպիլիոս: Ա-յս Նումաս թէպէտ և չէր յարանց անտի ողբ եկեալք գաղթեցան 'ի Հռոմ, սակայն և այնչափ իմն ականաւոր լեալ էր առաքի-նութեամբ առ ամենեսին, որպէս զի և քան զընտրողսն գլխովին՝ առաւել մտա-դիւրագոյնս Սաբինացիք առին ընկալան զնա ուրախութեամբ 'ի լսել զանուն նորա: Եւ իբրև ազգ արարեալ համբաւեցին 'ի ժողովրդեան զընտրութիւն առնն, առեալ դեսպանս առաքեցին առ նա միաբան արս ասագս յերկուց ևս կողմանց, աղաչել զնա գալ և առնուլ զթագաւորութիւնն:

Եւ էր Նումաս 'ի հոյակապ քաղաքէն Սաբինացւոց 'ի Կուիրեայ, յորմէ կո-չէին կոչեցին զինքեանս Հռոմայեցիք 'ի միասին ընդ եկամտից Սաբինացւոցն: Եւ էր Նու-մաս որդի Պոմպոնիոսի ականաւոր առն, կրսեր քան զյորեսին եղբարս իւր: Իսկ օր ծննդեան նորա՝ ըստ աստուածային իմն գոգցես բախտի հանդիպեր յաւուրն՝ յո-րում զՀռոմ քաղաք հիմնարկեաց Հռո-մուլոս. և է այն օր մեռանելոցդ կալան-գացն մայիսի: Սորա անգամին 'ի բնու-թենէ բոյս բարուցն քաջ իսկ յօժարեալ էր առ ամենայն առաքինութիւն. այլ նա և քան զևս հեզ և ընտեալ գործեաց զանձն 'ի ձեռն հրահանգաց դաստիարակութեան և համբերատար չարակրութեան և խոնա-տասիրութեան. ոչ միայն զանգոնելի ըզ-կիրս հոգւոյն, այլ և զոր առ լաւս ունէին բարբարոսք՝ զբռնութիւն և զընչաքաղց ա-

գահուԹիւն ՚ի միջոց ՚ի քաց բարձեալ, ՀԸշմարիտ արուԹիւն քաջուԹեան համարեցաւ զանձակոծել ցանկուԹեանցն ՚ի մարդումն ընդ լծով բանին: Յայսմանէ նա միանգամայն զամենայն գրգռանս փափկուԹեանն և զբազմահանդերձ ծախսն տարագիր արար ՚ի տանէ իւրմէ, և առ հասարակ ամենեցուն քաղաքացեացն իւրոց և օտարաց ՚ի նեղլբս ընծայեաց զանձն՝ ունել նոցա զինքն իբրև դաստաւոր անբամբաս և խորհրդական. և ինքն ՚ի պարապել իւրում՝ դեղերեալ զբաղնոյր ոչ ՚ի ախոխուԹիւնս զբօսանաց և ՚ի շահս վաճառաց, այլ ՚ի պաշտամունս դից և ՚ի հետաքնին զննուԹեան բանի յաղագս բնուԹեան նոցուն և զօրուԹեան. և այսպէս ապա անուն մեծապէս և շուք փառաց կալաւ նա, որպէս զի և Տաւիոս ինքնին՝ որ ՚ի Հռոմ Թագ կապեաց ՚ի միասին ընդ Հռոմուղոսի, զմիամօր զիւր դուստրն զՏատիա առեալ նմա՝ փեսայ իւր արար զնա: Սակայն նորա և ոչ ՚ի հարսանեաց աստի բարձրացաւ սիրտ, յառնել գնալ առ աներն իւր, այլ եկաց մնաց առ Սաբինացիս և դարման տանէր ծերացեալ հօր իւրում. ՚ի միասին ընդ նմա և Տատիա առաւել ընտրեաց զհասցալաւէտ անդորրուԹիւն զառն իւրոյ սոսկականի՝ քան զշուք պատուոյն և զփառս իւր ՚ի Հռոմ քաղաքի ՚ի պատճառս հօրն: Ալ զՏատիայս ասեն վախճանեալ յերեքտասաներորդի ամի յետ հարսանեացն: Եւ այնուհետև Թողեալ Նումաս զբնականալ իւր ՚ի քա-

ղաքին, առաւել ևս կամէր դեգերել յա-
գարակս և միայնակ շրջել Թափառել, յան-
տառս դիմ և՛ի մարդս նուիրականս և՛ի
վայրս ամայիս առնելով զքաղաքավարու-
Թիւն կենացն: Յայսմանէ ապա առաւե-
լապէս պատճառս առին բանքն՝ որ յա-
ղագս դիմոյուհւոյն, իբրու այն Թէ Նումաս
ինքնին ոչ՛ի Թախծութենէ ոգւոյն և ոչ
՛ի կրից ինչ տաղտանութեանն եղեալ եԹող
զքաղաքավարութիւնն ընդ մարդկան, այլ զի վե-
հագունին կենակցութեան ձաշակեաց նա
զձաշակն, և աստուածայնոցն արժանացաւ
հարսանեաց. և ընդ Եգերեայ դիմոյուհւոյն
միակամ կենակից եղեալ՝ երջանիկ գտաւ
այր և յաստուածայինսն ներհուն:

Ապա եԹէ այս պատմութիւնք զուգա-
հաւասար գոն այլոց բազմաց ևս վասնզուց
առասպելեաց, զորս յաւանդից ինչ առեալ
ընկալան ոմանք, քաջայայտ է. ըստ որում
և Փութագիք առասպելեն վասն Աստէո-
սի, և ԲիւԹանացիք վասն Հերոդոտոսի, և
Արկադացիք վասն Ենդիւմիոնիսեայ, հան-
դերձ այլովք բազմօք՝ որք երանելիք ոմանք
կարծեցան և աստուածոց սիրելիք: Եւ ար-
դեօք ոչ անբան ինչ է կարծել, եԹէ աս-
տուած՝ որ ոչ ձիասէր է, և ոչ Թռչնասէր,
այլ մարդասէր, խնդրեսցէ՛ի միասին կալ
ընդ մարդկան՝ որ քաջութեամբ առաքի-
նութեամբ գերազանցեալ էցեն. և ոչ դըժ-
կամակ ինչ գարձեալ բերցի կենակից լինել
առն աստուածայնոյ և հանճարեղի: Իսկ
Թէ և ընդ մարդկային մարմնոյն և գեղոյն

կցորդութիւն ինչ և յօժարութիւն կալցէ աստուած կամ ոք ՚ի գործս, այդ անհատական բանք են: Թէպէտ և ոչինչ տարակոյս թուին Եպիսկոպոսացիք ընդ սահմանաւ իւիք փակել զբանն. իբրու եթէ ոչինչ յանհնարինն էցէ՝ եթէ հոգի աստուածոյ մերձենայցի ՚ի կին և արգասաւորութիւն տացէ նմա. այլ յարանց ուժիք անհնար էցէ յօդել մարմնով ընդ դիցուհւոյ: Սակայն անդիտանան դոքա, եթէ խառնեաշն և ընդ որում խառնի՝ զհասարակ կցորդութիւնն տան միմեանց: Իակ թէ գուցէ այնպիսի իմն սէր աստուածոյ առ մարդ, յորմէ ապա սէր և յօժարութիւն բնաւորեսցի ՚ի մարդումն ՚ի հրահանգել զևարս իւր և գործել զառաքինութիւն, զայդ ՚ի ձահ է արդեօք հաւատալ: Եւ այսպէս ապա ոչինչ մեղանչեն՝ որք միանգամ քերթողաբանեն՝ եթէ Փորբանդէս և Յակինթոս և Ագմեոոս սիրելիք եղեն Ապողոնի. ըստ որում և Հիւպպողիտոս Սիկիւոնիացի. զորմէ ասեն՝ եթէ քանիցս անգամ գէպ լինէր նմա նաւել ՚ի Սիկիւոնեայ ՚ի Կիլրա, գուշակէր Պիւթիա զնմանէ, իբրու ՚ի նախասղացած իմն տեսութենէ գիցն և ՚ի խնդութենէն, և պատգամ ևս ՚ի գուռս տայր զդիւցազնականն զայս տող.

Եւ Հիւպպողիտեայ միւսանգամ զարդիս
Սիրելին գըլուխ հատանէ զալիս:

Իակ և Պինդարոսին սիրոյ ևնորուն տաղաչափութեանցն՝ քերթողաբանեն զՊան դիան:

Բայց և շուք պատուոյ ետուն դնէք Աղքիղոքոսի և Հեսիոդեայ յետ մահուան նոցա ի ձեռն Մուսայիցն։ Ա՛ռ այս դարձեալ և Ակղեբիոս երբեմն գնացեալ լիջավանս կալաւ առ Սոփոկղեայ մինչդեռ կենդանին էր. և պատմեն զայս բազում ցուցակութեամբք՝ որ կան մինչև ցայսօր. իսկ երբեմն մեռաւ Սոփոկղէս, այլ ոմն ի դից՝ որպէս ասեն՝ խնամ կալաւ ունել Սոփոկղեայ զչիրիմ Թալեան։ Արդ՝ ի հաւանել մեր ընդ այսոսիկ դէպս վասն նոցա, արժա՞ն ինչ լիցէ այնուհետև անհաւատանալ՝ եթէ և առ Ջալեւկոս և առ Մինովս և առ Ջրադաշտ և առ Նումաս և առ Լիւկուրգոս՝ որք աղքայութեանց ղեկավարք կացին և քաղաքականութեանց յարդարիչք և յօրինիչք, երբէք առ սոսա մերձեցեալ լիցէ ոմն ի դից. կամ թէ ո՛չ առաւել ի դէպ լիցէ ասել եթէ ընդ սոսա մեծապէս խնամով կենակից կենցաղակից եղեն դիքն ի հրահանգել զնոսա և վարժել և թելադիր լինել ի լաւագոյնն անդր. իսկ ընդ քերթողացն և ընդ նուաղաձայն քնարերգակացն (սակայն եթէ երբէք պատահեալ լիցէ) կենակից լեալ լիցեն երբեմն զբօսանաց աղագաւ։ Սակայն և ի վերայ այսր՝ եթէ ոք և այլազգաբար ինչ ասասցէ, "Լայն է ասադիկ պողոտայն", որպէս ասաց երբեմն Բակքիւլիդէս։ Քանզի և ո՛չ իսկ ուրախ ինչ է արդեօք միւս այլ բանն, զոր ասեն վասն Լիւկուրգեայ և Նումայի և այլոց ևս նոցուն հանգուցատիպ արանց, եթէ քան-

զի գործ էր նոցա ընդ սանձակոտոր ամբոխին և ընդ անընդհել ռամկին. և զի՝ և մեծամեծս և նորանոր սահմանս՝ ի նեղըքս բերել հանդերձեալ էին՝ ի քաղաքականութիւնս իւրեանց, վասն այնորիկ զսա յաւուրց զփառսն համբաւեցին զանձանց՝ ի շահ վիրկաւէտ մարդկանն՝ ոյց աղագաւ զնոյն պատրուակ զանձամբ առին:

Բայց Նումաս լեալ էր զքաւառսուն ամ հասակի կենացն, յորժամ՝ ի Հռովմայ եկին հասին առ նա հրեշտակքն հրաւիրակք՝ ի գահ արքայութեան: Իսկ որ անդանօր հրաւիրանօք խօսեցան ընդ Նումայի՝ էին Պրոկղոս և Վէղեսոս, զորս զերկոսին միանգամայն պատրաստեալ էին ժողովուրդք ընտրել՝ ի թագաւոր: Քանզի ժողովուրդն Հռոմուլեան գէտ ակն ունէր՝ ի Պրոկղոս. իսկ Տատիոսեանն՝ առաւելապէս՝ ի Վէղեսոս: Արդ եկեալ սոքա համառօտս ինչ խօսեցան ընդ Նումայի, քանզի համարէին եթէ մտադիւր յօժարութեամբ առցէ նա յանձն զդէղեցիկ զդէպան: Սակայն և ոչ սակաւ ինչ քրտանց պէտք եղեն՝ ի տեղւոջն, այլ և շատ ինչ պայքարաց և խնդրուածոց՝ առ՝ ի ածել հաւանեցուցանել և փոխել զխորհուրդ մտաց առն՝ որ՝ ի խաղաղաւէտ անդորրութեան վարէր կեանս, և առնուլ զանձամբ զարքայութիւն քաղաքին, որոյ ծնունդն և անունդն միանգամայն գոգցես՝ ի կռիւս մարտից հանդերձեցաւ: Ապա սկսաւ Նումաս խօսել առ նոսա առաջի հօրն իւրոյ և Մարկիոսի՝ որ մի էր յազգա-

կանաց իւրոց, այսպէս. "Ջ իարդ ամենայն փոփոխութիւն կենաց մարդկան լի է գայթակղութեամբք. և արդեօք որում ոչինչ պակասի 'ի կարևորացն և որ չէ անգոհ ընդ առաջիկայ կենացն վիճակ, զայնպիսին՝ ոչ այլ ինչ բայց անմտութիւնն դվխովին ածել ձգեացէ փոխել փոփոխել 'ի սովորական քաղաքավարութենէ կենաց. ուստի թէպէտ և այլ ինչ յաւելուած բարեաց ոչ գոյցէ, չատ է ըլի անքոյթ հաստատութեամբն գէր 'ի վերոյ է քան զայլսն ամենայն՝ որ անյայտքն իցեն: Դա և ոչ անյայտք ինչ են արդեօք իրք արքայութեանն այնմ՝ որ 'ի կրից անտի Հռոմուղոսին խնդամուտ լեալ իցէ, եթէ զիարդ նա կասկած չարութեան ձգեաց յանձն իւր, իբրու եթէ գառնանակալ լեալ իցէ կենաց գահակցին իւրոյ Տատիոսի. և թէ՝ զիարդ և վասն Սինկղիտոսին պատճառաք նա եղև զնոյն կրել կիրս՝ իբրու որ 'ի նոցանէն գաւեալ իցէ: Դա զի՝ զՀռոմուղոս ժողովուրդք իբրև ձեռ առտուածոց յերգս առեալ համբաւեն. և զնորա անուանդն իբրև աստուածային հին հռչակեն. գարձեալ և զփրկութիւն նորա մինչ տակաւին տղայ էր՝ նորատաքանչ քարոզեն: Իսկ իմ մահկանացու է ծնունդն, գարձեալ և անուանդ և գաստիարակութիւն առեալ է իմ 'ի մարդկանէ՝ զորս դուք ինքնին քաջ ճանաչէք: Իսկ զոր գովէքդ՝ իմ քաղաքավարութիւն կենաց՝ յոյժ աննման է առն որում Թագ կապել հանդերձեալ իցէ. քանզի իմ կեանք 'ի բազում անգորրու

բնաւորեցան, և դեգերանք են իմ ՚ի դըպրութիւնս բանից անվրդով և անզբօս: Որպէս զի և սէր սաստիկ և փափաք մննդակից բնաւորեցաւ յիս խաղաղաբեր կենաց և անպատերազմ գործառնութեանց. և յօժարեալ եմ ՚ի մարդիկ՝ որ միանգամ համաշունչք համախմբեալ կայցեն ՚ի պաշտօն պատուոյ դիցն և ՚ի կենցաղակից իմաստասիրութիւնս. իսկ զպարէնն զաւուրն վաստակեն անձանց իւրեանց՝ զերկիր գործելով կամ խաչն արածելով: Իսկ ձեզ ո՞վ Հռոմայեցիք բազում մարտս պատերազմի՝ անխորհրդաբար Թերևս՝ եթող աւադիկ Հռոմուլոս. որով և քաջավարժի ումեք և մարտիկ և կորովի ազգային պէտք են այսուհետև քաղաքիդ ձերոյ պահել զնա յակատանի: Ա՛ռ այս՝ և բազմաժամանակեայ սովորութիւնդ ՚ի մարտս, դարձեալ և զուարթամիտ յօժարութիւնդ ՚ի պատճառս յաղթութեանցն՝ գրաւեալ կապեալ է առհասարակ զազգդ ձեր. և քանզ իսկ աւադիկ գիտեն ամենեքեան՝ եթէ կամի ինդրէ գա և ևս բարգաւաճ՝ ՚ի վեր վազել և սիրանալ ՚ի վերայ այլոց: Որպէս զի և այսուհետև ծանծաղամտութիւն ծիծաղելի լցէ զերդեաք, եթէ ոք այր պաշտօնասէր կրօնասէր նատցի և վարժեսցէ զքաղաքդ ձեր պահել զկրաւունս և զարդարութիւն, և առել զբռնութիւն, և ՚ի բաց կալ ՚ի մարտից պատերազմաց ուսուսցէ քաղաքիդ այդ միկ՝ որում առաւել զօրաւորի զօրաց պէտք են՝ քան եթէ թագաւորի ՚՚: Ա՛յսպիսի բա-

նկուք ՚ի բաց հրաժարեալ առնն ՚ի Թագաւորութենէ, իսկ անդ Հռոմայեցիք զամենայն գուն գործեալ Թախանձէին ժոէին, և աղերսէին մի դարձեալ միաւանգամ առնուլ զնոսա և ՚ի հերձուած անդը երկպառակութեանն արկանել և ՚ի մարտ պատերազմի ընտանեաց. քանզի և չէ ոք ուրեք՝ ասեն՝ այլ այր յոր միաշունչ յօժարեալ իցեն միանգամայն երկոքին կողմանք:

Իսկ իբրև հրեշտակքն մեկնեցան անտի, ապա հայրն Նորա և Մարկիոս առանձինն մտեալք առ Նումաս ածեալ հաւանեցուցանէին զնա առնուլ յանձն զպարգևն զայն զմեծ և զաստուածային: "Եթէ և քեզ ինքնին՝ ասեն՝ ոչ ընչաւէտութեան ինչ պէտք իցեն ՚ի պատճառս ինքնաբաւութեանդ, և ոչ դարձեալ փառաց իշխանութեան և տէրութեան ՚ի խնդիր եղեալ է քո, զվեհագոյնն ՚ի քեզ ունելով՝ որ յառաքինութենէ անտի. այլ սակայն խնամուտ եղեալ քո՝ եթէ և Թագաւորելն ինքնին գլխովին պաշտօն սպասաւորութեան է աստուածոյ, այն՝ որ արծարծէ վառէ և չառնու յանձն անկած և անգործ կալ այդչափ արդարութեանդ որ ՚ի քեզդ է, մի երբէք ապա փախիցես դու և մի յետս կացցես յիշխանութենէդ՝ յորում գաշտ առաջի բանայ լայնատարածման առն հանճարեղի գեղեցիկ և մեծամեծ նահատակութեանց. յորում և պաշտամունք դիցն մեծավայելուչք իցեն, և մարդիկ ինքնին հեզացեալք՝ ՚ի բարեպաշտութիւն անդր հեշտեաւ և արագ ածեալք

փոխեացին 'ի ձեռն առաջնորդ իշխանին։ Դարձ և ընդ Տաճիոս ինքնին հաձեցան ե֊ կամուտ արքայ, և զՀռոմոլոսի յիշատակն մեծապէս պատուով աստուածացուցանեն։ Եւ ապա ո՞ գիտէ՝ եթէ և երբէք յաղթա֊ կան ժողովրդեանդ այդմիկ եղեցի յադուրդ 'ի մարտից պատերազմաց, և լնացեալք յաղ֊ թանակաք և 'ի կապուտ կողոպուտ, առաջ֊ նորդ մի հեզ և հանդարտ և սիրոյ իրաւանց արդարութեան յանձին կալցեն ունել 'ի պատճառս բարեկրօն կարգաց քաղաքին և խաղաղութեան։ Ապա եթէ և համբուն իսկ արձակեբասան և մոլեգինս բերցի դա 'ի մարտս պատերազմաց, ոչ և յայնժամ լաւ ևս իցէ՝ 'ի ձեռին քում կալեալ զերա֊ սանակ դոցա, այլ ուրեք սանձեալ շրջեա֊ ցես զթափ ուժոյ դոցա. իսկ քումդ հայ֊ րենի աշխարհին և ողջոյն Սաբինացւոց աղ֊ գին յօդակապ մտերմութեան և բարեկա֊ մութեան եղիցիս ընդ քաջառոյդ և հաս֊ տահարուստ քաղաքիդ"։ Յայսոսիկ 'ի բանս յաւելեալ բարդեցին նոքա՝ որպէս ասեն՝ և նշանս և յայտնութիւնս իմն բարեգու֊ շակս, և զփոյթ և զձեպ քաղաքացեացն առ նա և զնախանձն, որք այն ինչ իրազեկ եղեալ հրեշտակութենէ դեսպանացն՝ անդա֊ պէս խնդրէին յառնել գնալ նմա և յինքն զթագաւորութիւնն առնուլ, և յօդել կա֊ պել ընդ միմեանս զքաղաքացիան երկա֊ քանչիւր քաղաքաց։

Արդ երբև նա անձնատուր եղև 'ի խըն֊ դիրն, անդէն զոհ կատարեաց դիցն, և գէմ

եդեալ գնայր ՚ի Հռոմ քաղաք : Նմա ընդառաջ եկին Սիննկղետոսք և Ժողովուրդք առհասարակ ձգեալք ՚ի սքանչելի սիրոյ առն. անդանօր և ձայնք գեղեցիկ բարեբանութեանց կանանց, և զոհից հանդէսք ՚ի տաճարս, և խնդագին հրճուեալ առհասարակ ամենեցուն, իբրու այն թէ ոչ ալքայ զոհն ընդունել քաղաքին, այլ զաղքայութիւն գլխովին : Իսկ իբրև ՚ի հրապարակ անդր իջին, յայնժամ Սպորիոս վ Ֆաուիոս՝ որում ՚ի ժամն յայնոսիկ վիճակեալ էին Ամենքեան, եւ Ժողովրդեանն քուեայս արկանել, և առհասարակ ամենեքեան հաձեցան ընդ Նումաս : Այլ իբրև զաղքունի նշանական ածեալ կացուցին առաջի Նումայի, նա հրամայեաց ժոյժ ունել առ վայր մի, և ասէր խնդրուածս և պաղատանս առ դիան մատուցանել վասն հաստատութեան արքայութեանն : Եւ առեալ ընդ իւր գուշակս և քուրմս եկ ՚ի Կապիտոլիոն, զոր յայնժամ Հռոմայեցիք կարդային Տարպեան բլուր : Անդանօր իշխանն հաւահմայից ՚ի հարաւ կոյս դարձուցեալ զՆումաս ծածկեալ գլխով, և ինքն մերձ կացեալ նմա ՚ի յետուստ կողմանէն, և զաջ իւր եդեալ ՚ի վերայ գլխոյն Նումայի, յաղօթս կայր. և շուրջ դիտէր եթէ ինչ մի յայտնութիւն երևեսցի առ ՚ի դից անտի ՚ի ձեռն հաւուց կամ ՚ի ձեռն այլոց ինչ նշանակաց. և ընդ ամենայն կողմն զաչս իւր յածեալ դարձուցանէր : Իսկ անդ լռութիւն անպայման գրաւեալ ունէր առհասարակ զհրապա-

բակն յայնչափ բազմութեան խուժանին, որ յակձիուս կացեալ անշշունչ գէտակն կալեալ մնային հանդերձելոյն, մինչև անդառաւ ուրեմն երևեցան հասք բարեգուշակք ի յաջողութիւն Նումայի: Իբրև այնպէս արկեալ նա զհանդերձման ալքուն՝ էջ ի բլրոյն առ ժողովուրդն, նոքա ի ձայն ցնծութեան և մեծապէս հիւրամեծարութեամբ առեալք ժողովեցին զնա իբրև բարեկրօն այր և յոյժ սիրելի առաւածոցն:

Ա՛րդ առեալ լինքն զիշխանութիւնն, նախ առաջին ջնջեաց եբարձ նա զվաշտ սիգաւորացն երից հարիւրոց, զորս Հռոմուլոս ունէր ցանգ իւր անձնապահպետս, և անուն կարգայր նոցա Ձէլէրէս, այն է՝ Եռագունք: Քանզի ոչ անվտահ լինել ի վստահացեալն լինքն արժան համարեցաւ Նումաս, և ոչ դարձեալ թագ կապել ի վերայ նոցա՝ որ անվստահքն էցեն ի նա: Իակ եկրորդ անգամ՝ ի քուրմն երկոսին յԱՆրամաղդայն և յԱնրէսին յաւել կարգեաց նա և զերրորդն զՀոռմուլոսին, զոր և Փլոմինէ կոչէին անուանեալ կոչեաց: Նա և զյառաջագոյն եղեալն կոչէին նոքա Փլոմինէս, իբրու թէ՝ Փիլոմենէս որպէս պատմեն, ի գլխարկաց անուն կոչեցելոց Փիլոս, զոր ի գլուխս իւրեանց տանէին: Քանզի յայնժամ առաւել քան այժմ՝ զհելլենական անուանն խառնէին ընդ լատինականին: Քանզի և զպատմուճանս զոր արկանեն թագաւորք՝ անուանեալ Լէնա,

Յոբաս ասէ՝ Եթէ այդ քննայ՝ և հեղլե-
նական. դարձեալ և զսպասարկուն զայն
զտաճարին Աբրահազայ զմանուկն՝ որոյ
կենդանի է հայրն և մայրն, կոչեն նոքա
քահլլօս. ըստ որում և զՀերմէս ինքնին
քահլլօս կոչեցին ոմանք ի Հեղլենացւոց ի
պատճառս սպասաւորութեան նորա:

Իբրև զայսոսիկ այսպէս օրինադրեաց
Նումաս առ ի յինքն յանկուցանել զսէր և
զբարեկամութիւն Ժողովրդեանն, ձեռն
էարկ վաղվաղակի զքաղաքն՝ որ այնպէս
խիստ և սաստիկ էր իբրև զերկաթ և պա-
տերազմասէր, կակուղ յարդարել զնա և
յարդարութիւն քաջ առնուլ ամոքել:
Քանզի արդարև այնպիսի ինչ էր քաղաքն
յայնժամ, որպիսի կոչեաց զնա Պղատոն՝
քաղաք հրաշաւէտ: Քանզի և անդամին ի
սկզբանէ արք խրոխտք և մարտիկք անդա-
նօր խռնեալք խուժեալք յամենայն կող-
մանց յանդուգն և բուռն յարձակմամբ՝
կանգնեցին զնա. և ապա բազմադէմ զի-
նուորութեամբք և կուռ և անդուլ մար-
տիւ պատերազմաց անաւ բուծաւ և ի զօ-
րութիւն աճեաց ի վեր եւ. և զմրօրինակ ի
հոլ վարսեալքն՝ յորժամ ցնցին շարժին,
առաւել ևս ի խորս ամրանան, սակէս և
նա ի վտանգս անդ Թուէր իմն առաւել
հաստահարուստ կորովանալ: Որ աղագաւ
առնուլ ամոքել և ի հեզութիւն խաղաղու-
թեան շրջել զժողովուրդ այնչափ բարձ-
րայօն և խրոխտ, ոչ փղքր ինչ և ոչ գուշ-
նաքեայ քերան վաստակոց համարեալ նու-

մաս, գնաց ապաւինեցաւ ՚ի դիւցն օգնակա-
նութիւն. ուստի և բազում մասամբք ՚ի
նուէրս զոհից և ՚ի ոճնս հանդիսից և ՚ի
կայեթս պարուց՝ զորս ինքնին նա վարժէր
և կարգէր յարդարէր, որ ընդ արգոյ պա-
տուականութեանն էին այնոքիկ և ափոփու-
թիւնք ախորժելիք և կենցաղասէր զբօ-
սանք, սոքիմբք նա հեզ և ընտել դործէր
զժողովուրդն, և դաստիարակեալ ամրքէր
զվայրագութիւն բարուցն և զսէր պատե-
րազմացն: Է՛ր զի և արհաւիրս իմն խըրև
յաստուածակոյս կողմանէն ազդեալ ծա-
նուցանէր նոցա, և տեսիլս առաջօք զբա-
ջաց այլակերպս, և ձայնս իմն բարբառոյ
խժականս, և այնպէս նեղքևեալ պահէր
զնոսա. և խոնարհէր սանձէր զմիտս նոցա
յահէ անտի փաջացն:

Եւ յաղագս այսոցիկ ապա առաւելա-
պէս հնչեաց համբաւն՝ իբրու եթէ խնամա-
տութեան և հրահանգի վարժից Նումայի
լինել ՚ի կենակից ընտանութեենէ անտի նո-
րա ընդ Պիւթագորայ: Քանզի առաւելա-
գոյն մասամբ՝ և խնամատասիրութիւնն Պիւ-
թագորայ և քաղաքականութիւնն Նումայի
պատաղեալ դեգերին ՚ի պաշտամունս աս-
տուածայինս: Եւ ասեն և՝ եթէ և կոկո-
զանս իմն և կերպարան մեծաւայելուչ ըզ-
Պիւթագորայ յանձին երևեցուցանէր Նու-
մաս ՚ի խորհել իւրում: Քանզի և զՊիւթա-
գորայ պատմեն՝ եթէ արծիւ մի վարժեալ
ընտելացուցեալ էր, զի ձայն բարբառոյ ար-
ձակեալ առ նա՝ կասէր վնաս չընթացից,

և առ ինքն ածեալ ի ջուցանէր զբարձրա-
թռիչ հաւն: Եւ թէ՝ ի գնալ յանցանել
իւրում ընդ աշխարհաժողով ոճն Ողոմ-
պիականացն՝ զմի յազդերացն իւրոց երևե-
ցուցանէր ոսկի: Դարձեալ և այլ ևս հրէ-
շանշան մենքենայիւ հնարս զնորա և զա-
րարան պատմեն. զորոց և Տիմոն փղասիոս
գրեաց օրինակ զայս.

"Իակ Պիւթագորաս գիւթ՝ հետամուտ
փառաց, կոկոզաբանութեամբն՝ ի մարդ-
կանէ թռակարթէր որսայր զուռնկինդիրն":
Սակաւս և Նումայի կեղծիք այն էր, զի սի-
րելի է նա գիցուհւոյ ումեմն կամ Յաւեր-
ժահարսին լեռնականի. և զի՝ գաղտնապէս
կենակից կենցաղակից է ընդ նմա, որպէս
ասացաք. և թէ՝ Մուսայիւ նա հասարա-
կորդ է քաղաքավարութեան կենաց: Քան-
զի և շատ ինչ՝ ի գուշակութեանցն իւրոց
նա՝ ի Մուսայս՝ ի վեր հանէր. և զմի ոք՝ ի
Մուսայիցն առանձին և ուրոյն ուսոյց՝ ի
պաշտօն առնուլ Հռոմայեցւոցն, և անուն
կարդաց նմա Դաէիա, այն է՝ Լուռ և մըն-
ջիկ. որով թուի նա յուշ անձին առնել և
պատուել զանբարբառութիւնն Պիւթա-
գորեան: Այլ և օրինադրութիւնք նորա
յաղագս դրօշելոց պատկերացն գլխովին
հանգունաւտիպք են վարդապետութեանցն
Պիւթագորայ: Քանզի զայս ինչ առանգեաց
Նումաս, եթէ ոչ զգալի ինչ է կամ չարչա-
րելի առաջին էակն, այլ անեղական և անա-
պական և իմանալի: Եւ արդեալ նա Հռո-
մայեցւոց, մի՝ համարիլ՝ եթէ մարդակերպ

ինչ էցէ Աստուած կամ անանանակերպ : Եւ չէր իսկ առ նոսա յառաջագոյն ոչ նկարագիր պատկեր և ոչ այլ ինչ ձուլածոյ նմանութիւն Աստուծոյ , այլ ընդ հարիւր և եօթանասուն ամին առաջինա՝ Թէպէտ և մեհեանս շինէին նոքա , և մատրունս կանգնէին նուիրականս , սակայն դիւշեալս պատկերաց երբեք չարարին նոքա . եդին ՚ի մոխ եթէ գժպատեհ է զպատուականագոյնն՝ ՚ի տիպ ձչդրտել վատթարագունիւքն . և զի՝ չիք հնար այլազգ հպիլ և մերձենալ առ Աստուած , բայց մտօք : Իսկ և զոհքն նուանցի մեծապէս ազգակցութիւն ունէին ընդ պիւթագորեան նուիրագործութեանն , քանզի անարիւնք էին . և բազում այն էր՝ զի վճարէին նոքա յալիւր և ՚ի ձօն նուիրաց և յայլ ևս դիւրագին հանդերձանս :

Հանդերձ այսու՝ և այլ ևս ցուցակութիւնս հինս ՚ի մէջ առնուն նոքա , որ կենդանւոյ առնեն զնոսա ընդ միմեանս : Յորոց մին է և այն , եթէ զպիւթագորաս ՚ի քաղաքացի իւրեանց գրեցին Հռոմայեցիք , ըստ որում պատմագրէ Ցալիքարմոս կատակերգակ ՚ի բանն՝ զոր գրեաց առ Ընուեռնոր , այր վաղնջուց և կենդանւոյ լեալ ընդ պիւթագորայ : Իսկ կէսք՝ եթէ զի ՚ի քառից որդւոց անոի՝ որ էղեն ազգային Նուանցի , անուն կարդաց միւսմ ՚ի նոցանէ Մամերքոս ՚ի յիշատակ անուան որդւոյն պիւթագորայ : Եւ թէ՝ ՚ի պատճառս նորա՝ ասեն , ազգին Եմիլեանց՝ զոր ՚ի համար գրեաց պատրիկացն՝ անուն զայս ունել . քանզի ա-

վին անուամբ կամեցաւ Նումաս մատնանիշ ցուցանել զընորհն Պիւթագորայ ՚ի բանն և զքաղցրամոք բարբառն, զոր Էհէյա կոչեն Հեբրայեցիք: Իսկ մեք ինքնին լուսաք ՚ի Հռոմ ասել բազմաց, եթէ էր երբեմն՝ զի պատգամ ընկալաւն Հռոմայեցիք արձանս կանգնել ՚ի մէջ իւրեանց առն՝ որ առաւել հանճարեղն գտաւ առ Հեբրենացիս և առաւել արի. և առեալ կանգնեցին ՚ի հրապարակին դրօշեալս երկուս պղնձի, զմի՝ Աղկէ պիւդէայ, և միւս ևս՝ Պիւթագորայ: Այլ քանզի այսոքիկ մեծապէս են յերկուանալիք, անտիական արդեօք իցէ պայքար և անխորհուրդ՝ յերկարագոյնս ևս յուզել զբազգոտսա և հաւատասրմացուցանել:

Այլ տան Նումայի և զսահմանել կարգել զՔահանայապետացն՝ զոր նոքա կոչեն Բօնդիֆէքս. և ասեն ևս՝ եթէ մի ՚ի նոցանէն առաջին եկաց ինքն Նումաս: Իսկ կոչին դոքա Բօնդիֆէքս, ոմանք ասեն՝ զի սպաս հարկանեն նոքա աստուածոց, և կարողք և տեարք ՚ի վերայ ամենայնին նոքա են. քանզի զկարողն՝ Հռոմայեցիք կոչեն Բօդէնս: Իսկ այլք ասեն՝ եթէ այս անուն եդաւ նոցա ՚ի պատճառս պատուիրանի կարելեացն. իբրու եթէ օրէնսդիրն պատուիրէ քահանայիցն զկարելիսն ՚ի քահանայապետութենէն. իսկ եթէ մեծ ևս իսկ փանաւար ՚ի միջի կայցէ, մեղս ինչ ոչ դնէ նոցա: Իսկ բազմագոյնք վասն անուանն զայն ունին կարծիս՝ որ մանաւանդ ծիծաղելին է, իբրու եթէ ոչ այլ ինչ անուա-

նակոչութիւն էին եղեալ արանցդ այդոցիկ, բայց թէ՝ կամ[illegible], ի պատճառս նուիրագործելոյն նոցա առ կամրջով զգոհան, որ առաւել սրբագոյնքն էին և առաւել վաղըն ջուցք: Քանզի զկամուրջն փծրէմ անուանեն Լատինք: Եւ թէ՝ և իննամակալութիւն պահպանութեան և նորոգութեն կամրջացն, ըստ որում և այլն ամենայն յանփոփոխելի և ի հայրենատուր զոհագործութեանց ընդ իշխանութեամբ քահանայիցն էր: Քանզի և ոչ օրինաւոր էին, այլ անիծեալ գործ էր առ Հռովմայեցիս քակել զկամուրջ փայտեայ: Եւ ասեն և՝ եթէ ըստ պատգամի խիւք՝ հանդուն ի փայտից ագուցեալ կազմեալ էր այն առանց երկաթոյ. իսկ քարեայն շատ ժամանակօք յետոյ շինեցաւ Եմիլիոսէ գանձաւորէն: Նա զի և զփայտեային գլխովին յետ ժամանակացն նուսմայի՝ ասեն կանգնեալ առ Թագաւորութեամբն Մարկիոսի քեռորդւոյն Նումայի: Իսկ մեծ քահանայապետն ունի կարգ իբրև զԹարգմանի և զմարգարէի՝ մանաւանդ թէ իբրև ոստիկանի սրբութեանցն. և խըստամ ունէր նա ոչ միայն ի վերայ հասարակացն նուիրագործութեանցն, այլ և որոց միանգամ առանձինն կատարէին զոհս՝ տեսուչ ի վերայ կարգեալ կայր. և գէտ նաեւէր՝ զի մի զանց արասցեն զսահմանօք օրինացն, և վարժէր կրթէր զնորդ պարտ եղէ պատուել զդիան կամ ողբել:

Էր նա և տեսուչ կարգեալ ի վերայ կուսանացն, զորս ի Տոպեան անուանեն: Քան-

զի և Նումայի գլխովին տան ընծայեն և ըզ-
վեստեան կուսանացն զարքել և զնուիրել,
և ողջոյն իսկ զսպասաւորութիւն պաշտա-
մանն և պատուոյ յաղագս անմահական կրա-
կին՝ որ ի պահպանութիւն տուեալ էր
կուսանացն. որպէս եթէ զքինչ և զանա-
պական բնութիւն հրոյն աւանդեալ տալ ի
ձեռս անապական և անշաղախ մարմնոցն.
և գարձեալ՝ որպէս այն թէ զանպտուղն և
զանծնունդն կրակ յօդել կապել ընդ կու-
սութեանն: Քանզի և Յելլադա ոչ ուրեք
կայ անշէջ կրակն, ըստ որում ի Պիւթիոն
և յԱԹէնս, ոչ կուսանք խնամակալու կար-
գեալ կան այնմ, այլ այրիք և ամուլք:
Ապա եթէ ի դիպուածոյ խմեինէ երբեք
շիջեալ գաւանիցի կրակն, ըստ որում յԱ-
թէնս առ բռնաւորութեամբն Արիստիով
նի պատմեն շիջեալ զնուիրական կանթեղն.
գարձեալ և ի Դելփիս ի հրդեհել մեհե-
նին ի Մարաց անտի. իսկ առ ժամանակօք
Միհրդատեան պատերազմին և ընտանի մար-
տին Հռոմայեցւոց, միանգամայն ընդ բազ-
նին և կրակն գլխովին անհետացաւ ի մի-
ջոց: Աւեն՝ եթէ յայնժամ չէ արժան յօ-
տար կրակէ վառել միւսանգամ, այլ նոր
զնոյն արծարծել նոր իմն հաստանելով բոց
ջինջ և յատակ և անխառն անդաստին յարե-
գակնէ: Եւ վառեն զայն առաւելապէս ի
մակոյկաձև ամանոց, ոյց և գոգաւորու-
թիւնն հանդերձի ի հաւասար կողմանց
ուղղանկիւն եռանկեանն, և միացեալ հա-
սպի ի մի միջակէտ ի շրջանակաց անտի:

Ապ՝ յորժամ առեալ դիցես զայդոսիկ ՚ի հանդիպոյ արևուն, որպէս զի միանգամայն ամենայն շառաւիղքն ամենայն ուսուեք ձառագայթեալք խառնեսցին և ՚ի մի խառնեսցին ՚ի միջակէտ անդր, յայնժամ զնոյն ինքն զօդն անօսրացուցեալ պարզեն, և ըզխառուացեալ և զցամաք նիւթս զհանդիպակացն անդէն արագ արագ վառեն բորբոքեն ՚ի ձեռն ցոլացմանն. քանզի յայնժամ շառաւիղն՝ մարմին լոյս և թափ հրաբորբոք ինքն բնաւորեցաւ ձգել: Ա՛լ ոմանք այնպէս համարին, եթէ ոչինչ այլ գործ էր նուիրական կուսանացդ այդոցիկ, բայց անշէջ պահել զկրակն զայն: Իսկ կէսք ասեն՝ եթէ աւանդեալ էին ՚ի ձեռս նոցա և նուիրական ինչ իրք՝ որք քօղարկեալ կային յայլոց ՚ի մարդկանէ. ոյց ալագաւ որչափ ինչ միանգամ արժան իցէ հաւատալ և ասել՝ դրեալ կայ աւադիկ ՚ի վարն Կամիլլեայ:

Ա՛րդ՝ առաջին ՚ի նուամայէ սրբեալ և նուիրեալ Վեստեանն՝ ասեն՝ զԳեգանիա և զԲեբրինիա. իսկ երկրորդ՝ զԿանուվիա և զՃարպիա: Բայց ապա յորժամ Սերվիոս երկուս ևս այլ յաւել ՚ի թիւ անդր, և այնուհետև նոյն թիւ կայ և պահի մինչև ցայսօր ժամանակի: Եւ սահմանեալ կարգեցաւ վասն նուիրական կուսիցս այսոցիկ ՚ի Թագաւորէն՝ արբուքիւն մարմնոյ երեսնամեայ. յորում զառաջին տասն ամն ուսեալ վարժին՝ որ ինչ պէտք իցեն պաշտաման նոցա. իսկ ՚ի միջինն՝ զոր միանգամ ուսանին՝ ՚ի գործ վարել. իսկ զերկրորդ տասնեակն՝

վարդապետ նստել և վարժել զայլս: Եւ ապա յետ ժամանակին այնորիկ իշխան է՝ որ միանգամ կամեսցի, կամ հաղորդ հարսանեաց լինել կամ թէ զայլ ինչ կենացդ քաղաքավարուքենէ բուռն հարկանել՝ ի բաց կացեալ ի նուիրագործ պաշտամանէն: Եւ պատմեն՝ եթէ նուաղունք ոմանք՝ ի նոցանէն յանձին կալան զընորհդ. և որք յանձին կալան՝ նոցուն ոչինչ գեղեցիկ հանդիսանեցան ելք. այլ յապաշխարութեան և՝ի թաղծութեան ոգւոյ անցուցին զընչխարեալ կեանս իւրեանց. ուստի և այլք յերկիւղածութիւն բերեալք՝ մինչև ցծերութիւն և ցմահ կացին մնացին՝ ի ժուժկալութեան և՝ի կուսութեան: Բայց և պատիւս մեծամեծս ետ սահմանեաց նոցա. յորոց մի է և այս, զի և առ կենդանութեամբ հօրն իւրեանց կարող են նոքա կոտակ գրել, և զայլ ինչ ևս գործել ինքնին առանց ինչ հոգատարութեան վերակացուի, ըստ որում գործեն եռաղաւակ մարքն: Իսկ և յառաջոյ նոցա ընթանան գաւազանակիցք. և եթէ յանկարծ չընթանալն իւրեանց՝ այր մի գատապարտեալ ածեալ՝ի մահ՝ պատահեսցի նոցա, զերծ է այրն՝ի պատուհասէ մահուն. այլ պարտ է երդմնիլ լինել կուսին, եթէ յակամայս և ըստ դիպաց եղեալ ինչ պատահումն են, և ոչ՝ի կամակար մտաց: Իսկ՝ի բարձեալ տանել նոցա՝ եթէ ոք անցանիցէ ընդ պատգարակաւն նոցա, մահու մեռանի: Ապա եթէ ոք՝ի կուսանաց անտի մեղս ինչ այլ մեղ-

ցէ, ՚ի գանս հարուածոց պատուհասի ՚ի հրամանէ մեծի քահանայապետին. է զի՝ և ՚ի մերկուց գանի յանցաւորն, այլ ՚ի խաւարչին վայրի ընդ քօղաձիգ վարագուրաւ: Բայց որ ՚ի նոցանէն երբէք զկուսաւթիւնն պղծեսցէ, ոչ կենդանւոյն Թաղէն զայնպիսին մերձ առ դուռն՝ որ անուանեալ կոչի Կ՚ԼԼԻՆ. ուրանօր է ՚ի նեղքս ՚ի քաղաքին կարկառ ինչ հողոյ ձգեալ ընդ երկայն, և կոչեն զայն ՚ի Լատինաց բարբառն Ք՚ՈՆ. և կայ անդանօր կազմեալ ստորեր՝ կրեայ հիւսել փոքրիկ, և ունի ՚ի վերուստ կողմանէն սանդուղս, և ձգեալ կայ ՚ի նմա անկողին մի և կանթեղ վառեալ. և եղեալ կան անդանօր սակաւք ինչ ՚ի կարևոր պարէնից կենաց, ըստ որում հաց և ջուր, և առանով կաթն և իւղ. քանզի պիղծ հաւմարին սովուս ապականել զմարմին նոցա՝ որ այնչափ մեծաւմեծ պաշտամամբք նուիրեալք սրբեցան: Արդ՝ զվերառեանն պատժաւոր եղեալ փակեալ ՚ի պատգարակի, և արտաքուստ քօղարկեալ ծածկեն քաջ, և շուրջ ևս պատեալ զդուշանան նմա մերթով, որպէս զի մի՛ և ձայն ինչ լսելի լինիցի. և այնպէս բարձեալ անցուցանեն ընդ հրապարակն. և անդ առհասարակ ամենեքեան լուռ և անշշունչ տեղի տան նմա ՚ի փողոցին, և յարուցեալ յուղարկաւորք լինին անմռունչ հանդերձ անհնարին թաղծութեամբ ոգւոյ. և տեսիլ չիք այլ նոցա առաւել սոսկալի, և օր չիք այլ քաղաքին օր մեծի կոծոյ՝ աշխարհելի առաւել քան

զօրն զայն: Իսկ յորժամ ՚ի վայր անդր բարձեալ բերեն զպատգարակն, յայնժամ պաշտօնեայք քահանայապետին մեծ յաղօթս ՚ի ծածուկ կացեալ և զձեռնն առ դին տարածեալ նախ քան զկերպս պատուհասին, մատչի և ՚ի պատգարակէն ՚ի դուրս հանէ զփակեալ պատժաւորն, և ուռեալ կացուցանէ ՚ի վերոյ սանդղոցն՝ որ իջուցանեն ՚ի հիւղ անդր: Ապա ինքն ընդ այլոց քահանայից դարձուցանէ վայր մի զԹիկունն. իսկ իբրև ՚ի վայր իջանէ Վեստեանն, ՚ի վեր առնուն զսանդուղսն: Եւ առեալ ծածկեն զհիւղն զայն՝ հող բազում ՚ի վերուստ նորա կուտեալ, մինչև հարթ հաւասար հողաբլրոյն կացուցանեն զվայրն: Եւ զայս օրինակ ապա պատուհաս ընդունին Վեստեանք՝ որք միանգամ ոչ պահէցին զնուիրական կուսութիւնն իւրեանց:

Ա. այսոսիկ՝ պատմեն եթէ Նումաս և մեհեան բոլորշի կանգնեաց Վեստեայ՝ ՚ի պահպանութեան տեղի անշէջ կրակին. ոչ եթէ առ ՚ի տապաւորել ինչ կամեցեալ նովաւ զձև հողագնտոյս՝ իբրու թէ ինքն Վեստայն իցէ. այլ զձև ընդհանուր տիեզերացս, յորոյ ՚ի միջակին կարգեն Պիւթագորեանք զհուրն. և զնոյն Վեստա անուանեն նոքա և Մէուռիէն: Իսկ զհողագունեան նոքա ոչ անշարժ ասեն, և ոչ դարձեալ ՚ի միջակի կացեալ բոլորակին. այլ շրջանակաւ կախեալ և յածեալ շուրջ զհրովէն. և ոչ դարձեալ ինչ մի դնեն զնա նախասա-

տիւ և՝ ի տպաւորագոյն մասանց տիեզե-
րաց: Յայս ինքնին և Պղատոն՝ ասեն՝ ի
հաստակի Ծերութեան իւրոյ խելամուտ ե-
ղեալ վասն հողագնաոյն, իբրու թէ յայ-
լում վայրի ուրեք ունիցի նա զտեղի իւր.
իսկ զմիջակէն վայր տիրագոյն՝ այլինչ լաւա-
գոյն մարմին Ճահաւորակի գրաւեալ լիցէ:

Առ այս՝ քահանայապետքն ազգ արա-
րեալ քարոզեն և զհայրենաւանդ սովո-
րոյթեան յուզարկաւորութեան մեռելոց՝
որոց միանգամ պէտք լիցեն: Քանզի և զայս
վարժեալ ուսոյց Նումաս՝ մի սիրտ համա-
րել ամենևին ինչ մի յայսպիսեաց ասոի.
այլ մանաւանդ՝ օրինադրութեամբք այդո-
քիւք պաշտօն մատուցանել և դիցն սան-
դարամետականաց. իբրու որք զտիրականն
որ ի մեզ մանն՝ առ իւրեանս առեալ ժո-
ղովեցեն նոքա. իսկ վեհագոյն քան զայսն
շուք հարցեն և այնմ՝ որ անուանեալ կո-
չի Լիբիտինէ, որ այն ինքն են դիք տեսուչ
ինաամակալ հանդիսից պաշտամանց՝ որ վասն
մեռելոցն. եթէ այն Պերսեփոնայն լիցէ,
և եթէ մանաւանդ՝ ըստ որում համարին
քաջագէտքն ի Հռոմայեցւոց՝ Աստղիկն
գլխովին. զի և ոչ տարագէպս ի մի յայն
զօրութիւն դիցն առեալ ամփոփեն նոքա
միանգամայն և զբանս ծննդեան մարդկան և
զմահուն նոցա: Բայց սահմանեաց նա և
զկոծ և զսուգ մեռելոցն ըստ հաստակի տիոցն
և ըստ ժամանակացն. ըստ որում՝ մի կո-
ծել և սգալ զմանուկն՝ կրտսեր քան զերե-
ւեանն. և մի գարձեալ զերիցագոյնն քան

զայն՝ սգալ ամիսս առաւել քան զամս յեր-
կարաձգութեան կենաց նորա՝ տատնամե-
նիւ չափեալ. և յայս չափ ժամանակի ա-
ռեալ վաճառեաց նա միանգամայն և զամե-
նայն հասակն. որպէս զի և յոյժ երկայնա-
գոյն ժամանակի սգոյն լինել տատնամեայ.
և նոյնչափ ժամանակաւ կալ և այրեացն յայ-
րիւթեան իւրեանց. ապա եթէ կանուխ
քան զժամանակն զայն առն լինի, առեալ
կով մի սաղմնառեալ՝ զոհեսցէ նա ըստ
օրինացն:

Բազում և այլ սահմանս քահանայա-
գործութեան կարգեաց ուսոյց Նումաս.
զերկուան և եթ արձանագրեացուք մեք.
զի սաղեանցն ասեմ քահանայից ազգեկե-
ղեանցն. որ քանզ իսկ զբարեպաշտութիւն
զառնն 'ի գէմս բերցեն ընթերցանելեացն:
Քանզի փետեղեան խաղաղարարք ոմանք
էին, և որպէս լինէ թուի՝ 'ի գործոյ անտի
իւրեանց առին զանունն 2. քանզի բանիւք
իւրեանց նոքա հանդարտեաւ ամոքէին զը-
կռիւս և զվէգս. և երբէք թոյլ ոչ տային
ճակատ յարդարել մարտի՝ մինչեւ հատեալ
զամենայն յոյս իրաւանց դատաստանին:
Քանզի և Իդիէ, այն է՝ Խաղաղութիւն, կո-
չեն չելլենք, յորժամ բարեզգեաց բանիւք
և ոչ բռնութեամբ՝ առ միմեանս հակամի-
տեալ մարդիկ՝ լուծցեն զամենայն կապ և
զկռիւ: Այլ Հռոմայեցւոց փեկեղեանքն
բազում անգամ եղեալ գնային ինքնին և
առ անիրաւ հարստահարողն 'ի համբոյր
իրաւանց արդարութեան ածել զնոսա.

իսկ որք ստամբակեալ ընդվզեին, յայնժամ վկայ զդևան կոչէրով յաղօթս կային առ նոսա բազում ինչ և զժնդակս ի կրից ածել կոտոր ի վերայ իւրեանց իսկ գլխոյ և քաղաքին իւրեանց, թէ իրաւացի չիցեն խնդիրքն և իրատ նոցա. և այնպէս ապա հրատարակէին ընդդէմ նոցա զմարտ պատերազմին: Իսկ եթէ երբէք մարտին խափանումն ի սոցանէն լինէր, կամ թէ ոչ ինչ հաճեալ հաւանէին ընդ այն, յայնժամ ոչ զօրականին օրէն ինչ էր, և ոչ դարձեալ արքային Հռոմայեցւոց զէն շարժել ընդդէմ նոցա. այլ պարտ և արժան էր թագաւորին՝ իբրու առն իրաւասիրի՝ ի սոցանէ առնուլ նախ սկիզբն մարտի պատերազմին, և այնպէս ապա թէւակոխել յօգուտ զօրականին: Եւ ասեն ևս՝ եթէ և այն արկածք աղէտից ի կեղտաց անտի հասին ի վերայ քաղաքին յօրինազանցութենէ կարգաց այսոցիկ: Քանզի յորժամ բարբարոսքն պատեալ պաշարեցին զԿղեւսինացիս, առաքեցաւ յայնժամ ի բանակ անդր հրեշտակութեամբ փաբիոս Ամբուստոս բանագնաց լինել վասն ազատութեան պաշարելոցն: Իսկ իբրև պատասխանի ընկալաւ նա անհամբոյր, և համարեալ ի միտս իւր եթէ ի գլուխս տարաւ այնուհետև ինքն զգործ հրեշտակութեանն, բորբոքեցաւ յանխորհուրդս և ի զէն զարդ վառեալ ի կողմանէ անտի Կղուսինացւոցն, ձայն ետ ի վեդ գալ՝ որ միանգամ քաջ նահատակ լցէ ի բարբարոսաց անտի: Անդ քաջապէս

փաբիոս նահատակեալ ՚ի մարտին, ապաստարկ զախոյեանն, և կողոպտեաց զնա: Իբրև զայն տեսին կեղտք, առեալ արձակեցին պատուիրակ ՚ի Հռոմ ամբաստան եղեալ զՓաբիոսէ, զի ընդդէմ դաշանց և ուխտի միաչեւ հրատարակեալ՝ մարտ պատերազմի շարժեաց ընդդէմ նոցա: Ընդառնոր զԱինկղիտոան ածեալ հաւանեցուցին փեկեղեանք՝ զի ՚ի ձեռս տացեն կեղտաց զՓաբիոս: Իբրև նա փախուցեալ ապաւինեցաւ ՚ի խուժան բազմութեանն, և զօրավիգն ևս գտեալ ՚ի ժողովրդենէն ապրեցաւ ՚ի պատուհասէն, յետ սակաւուց ապա ՚ի վերայ յարձակեալ դիմեցին կեղտք և զՀռոմ հիմն ՚ի վեր տապալեցին բաց ՚ի Կապիտոլիոնէ: Ա՛յլ զայսցանէ Ճշգրտագոյն ևս ՚ի վարն Կամիլլեայ:

Իսկ զԱղեան քահանայն յայսպիսի ինչ պատճառաց ասեն կարգեալ: Յամին ութերորդի թագաւորութեանն Նումայի սխտ սրածութեան ձարակեալ առհասարակ յԻտալիա՝ յապականութիւն վարէր և զՀռոմ քաղաք: Իբրև առհասարակ մարդիկն թաղծեալք սրտաբեկ կային, պատմեն՝ եթէ ասպար մի պղնձի վայրաբերեալ յերկնից՝ անկաւ ՚ի ձեռս Նումայի: Ընդ Նումաս արքայ բանս իմն հրաշալիս խօսեցեալ վասն առպարին, զոր լուեալ՝ ասէր՝ ինքն ՚ի նմին իսկ Եգերեայ և ՚ի Մուսայից. իբրու թէ զինդ այդ գերեցիկ եկեալ երկաս առ նոսա ՚ի փրկութիւն քաղաքին, և պարտ և արժան է զգուշութեամբ պահել զնա, և

այլ ևս ասպարս մեռասան կռել՝ որ ձևոնէն և մեծուԹեամբն և կերպարանաւն Ճշդիւտ զուգահաւասարք էցեն նմա. որպէս զի և ՚ի Ճշդիւտ նմանուԹենէն յանհնարինն էցէ ՚ի ձեռս բերել զաստուածառաք ասպարն՝ որ միանգամ գողանալն կամեցի զնա: Եւ Թէ՝ պարտ և արժան է արբել նովրել Մուսայից զվայրն զայն, և որ շուրջ զվայրօքն մարգագետինքն էցեն, ուրանօր նոքա բազում անգամ բնաւորեցան գալ և կենակից էցեն խոսակից լինել ընդ նմա: Իսկ զաղբիւրն՝ որ անդ ելեալ առատ զվայրն՝ ջուր նովրական տալ ՚ի ձեռս վեստեան կուսանացն, որպէս զի առեալք անտի օր ըստ օրէ՝ լուացեն և արբեսցեն զնեղբսակոլին մեհենին: Եւ ասեն՝ ԵԹէ քայ իսկ վկայեցին այսոցիկ և կիրք սրածուԹեանն՝ որ անդէն փուԹանակի կարձեալ դադարեցաւ: Բայց զասպարն զայն առեալ նուամաս եդ առաջի Ճարտարացն, և հրամայեաց նոցա ել և ելս առնել զմիմեամբք յարուեստին իւրեանց ՚ի Ճշդրտել զնմանուԹիւն ասպարին. իբրև այլք առհասարակ ձեռնԹափ լինէին, Բեսուրիոս Մամուրիոս ոմն այր արուեստագործ Ճարտարապետ՝ այնպէս իմն քաջիկ Թևակոխեաց ՚ի սիպ նմանուԹեանն և ողջոյն Ճշդրտեցոյց համանմանս, որպէս զի և ՚ի նմանէն նուամաս այնուհետև բաւական եղև ընտրել որոշել: Արդ՝ այսոցիկ ասպարացս պահապանս և ապաստարկուս կարգեալ սահմանեաց նուամաս զՄալեան քահանայն: Իսկ Մալեանք յորջորջեցան նոքա, ՚ի որ-

պէս ոմանք կելծեն, եթէ քանզի Սամ-
թրակեցի ոչ այր կամ Մանուինացի՝ անուն
Սալիոս վարժեաց կրթեաց ՚ի սպառազէն
կաքաւս ոսից. այլ մանաւանդ ՚ի նմին իսկ
՚ի կայթիցն զոր հարկանեն ոտոտաեւլով
ընթացեալք ընդ քաղաքն 3, յորժամ ըզ-
նուիրական ասպարան զանձամբ առնուն
յամենեանն մարտի, զգեցեալք պատմու-
ճանս ծիրանիս կարճս, և լայն թիւթղամբք
պղնձի գօտեպինդ եղեալք, և պղնձի ևս
գլխանոց արկեալք, և մանրիկ դաշնակօք
ոմամբք զարկուցեալք ընդ զէնս ասպա-
րացն ղօղանջ արձակեն. և ապա զայլն ամե-
նայն ՚ի կաքաւոց անտի ոտքն կայթեն և
կատարեն: Եւ շարժին կաքաւեն նոքա գե-
ղեցիկս և վայելուչս, հիւս եկեալ և շըր-
ջանս գործեալ չափով և թուով արագունս
և կուռս և յաղթս և թեթևաընթացս: Իսկ
զասպարան զայնոսիկ կոչեն նոքա Ամֆի-
ւան ձևոյն: Քանզի չեն նոքա բոլորչի, և
շրջանակ չիք ՚ի նոսա՝ իբրու յասպարան՝
որ կոչին Փէտ, այլ հատած ինն ունին
խուռորնաձև գծի, այց եզերք ծալս ունե-
լով և առ միմեանս գալով գան և ժողո-
վին, և ձև գործեն կորաձև, զոր Հելլենք
կոչեն Ամֆիլօն: Կամ ՚ի բառէդ Աղն, այն
է՝ Արմունկն, զորով շուրջ առեալ տանին
զասպարն: Քանզի զայսոսիկ Յոբաս ասէ,
կարի ինն հեշտացեալ առ ՚ի հելլենացու-
ցանել զանուանն: Սակայն մարթ է և ասել,
եթէ այսպէս անուանակոչեցաւ ՚ի բառէդ
Անֆօրէն, այս է՝ ՚ի վերուստ. զի անդուստ

առաջին բերեալ եղև առպարն. դարձեալ և ՚ի ժանտախտելոցն դարմանէ, զոր Հել-լենք ասեն՝ Ասկղիա. դարձեալ և ՚ի դա-գարելոյ երաշտութեանն, այն է ըստ Հել-լենականին Ա-փոմօս. դարձեալ և յարկածից սղէտից ազատութենէ, զոր Հելլենք ա-սեն՝ Ապոտրոպիա. ըստ որում և զԴիոսկո-եանն՝ զկաստոր և զՊողևւքս Անդրոմոյր-ջորջեցին Աթենացիք: Սակայն եթէ ՚ի Հելլենականն արդեօք արժան էցէ լեզու ՚ի վեր զանունդ զայդ հանել: Իսկ Մամու-ղիոսի ՚ի վարձ գեղեցիկ արուեստին, ասեն, յիշատակ զնորա յերդ առնուն նուագօք Սալեանք ՚ի Պիւրրոսեան կաքաւի անդ իւ-րեանց 4: Իսկ կէսք ասեն, եթէ ՚ի նուագ առեալն է Վէրուրիոս Մոմորիոն: Իսկ այլք՝ եթէ ոչ այլ ինչ է այս, բայց՝ լատի-նականն Վէրեկունդ Մէմօրիամ, այն է՝ Յնախ-նին յիշատակ:

Իբրև այսպէս յարդարեալ կարգեաց նա գեղեցիկ զքահանայականն, մերձ ՚ի մեհեանն Վեստեայ չինեաց զասպարանն՝ որ անուանեալ կոչի Ռէձիա, այն է՝ Ապա-րանք արքունի: Եւ անդանօր ապա բազ-մագոյն մասամբ անցուցանէր զժամանակն՝ նուիրականացն պատկառ կալով կամ զգ-քահանայն գլխովին հրահանգելով և առ չերմեռանդն պաշտաման իւրոյ յաստուա-ծայինն՝ ընդ նոսա կենցաղակից գեգերե-լով: Բայց և տուն բնակութեան այլ ու-նէր նա մերձ ՚ի բլուրն Կուիրինեան, զորոյ և մինչև յայսօր ցուցանեն զտեղին:

Ա յլ՝ ի թափօրս և ողջոյն իսկ յամենայն հանդէսս նուիրականս՝ յառաջոյ ընթացեալ քարոզք և մունետիկք ընդ մէջ քաղաքին, և պատուիրէին հանդչել և՝ ի գործոց ձեռաց իւրաքանչիւր դադարել: Քանզի որպէս Պիւթագորեանք ոչինչ ներէին՝ ասեն՝ հարևանցի գործել զպաշտօն երկրպագութեանն և զաղօթից խնդրուածսն որ առ աստուածս, այլ եղեալք՝ ի տանէն կամակար և մտադիր ոգւով կազմ և պատրաստ փութալ կանխել առ՝ ի նոյն: Սա՛պէս և Դ,ուման պարտ համարեցաւ՝ զի քաղաքացիք իւր ինչ մի յաստուածայնոց անտի ոչ լսեցեն և ոչ տեսցեն իբրու հարևանցի գործ և պղերգագոյնս, այլ գլխովին պատրաստեալք դատարկացին յամենայն գործոց, և մտադիր զգաստութեամբ պատկառ կացցեն գործոյն այնմիկ՝ իբրև վեհագունի խմիք՝ ի բարեպաշտութեան մասին. Նաև և՝ ի շառաչմանց ամբոխից և՝ ի խառնաձայն զարկից և՝ ի ձէնէզոյ վայից, և որ ինչ միանգամ յայսպիսեաց բնաւորեցան՝ ի քաղաքին զհետ գալ պիտոյից և վաստակոց արհեստաւոր մարդկանն, սուրբ և մաքուր յարդարեացեն զպողոտայն՝ ի ժամ հանգիսից սրբութեան: Ոյր և զհետս ինչ մինչև ցայսօր ժամանակի պահեցին նոքա. քանզի յորժամ իշխանն նոցա պարապի՝ ի հաւահմայս կամ՝ ի զոհագործութիւն, զայս գոչեն յայնժամ ժողովուրդք, Հօ՛ձէ, և նշանակութիւն ձայնիդ այս է, Ջայդ արա. որով և՝ ի զգաստութիւն մտադիր-

բագոյնս և բարեկազմ յորդորեն գլխովին զմերձակայսն:

Եւ են և այլ ինչ բազում յօրինագրու-թեանցն Նումայի նմանօրինակ պիւթագո-րեանցն: Քանզի որպէս նոքա պատուիրէին՝ Մի նստել՝ ի վերայ քսեստի. Մի դանա-կաւ շրջիրլել զկրակ. դարձեալ՝ ՚ի գնալ զճանապարհ մի դառնալ յետս 5. դար-ձեալ՝ Երկնատուր դիցն զոհս զոհել ՚ի թիւ կոճատ, իսկ՝ Սանդարամետականացն ՚ի թիւ դար. զորոց և զնմանատ խորհրդոցն իւ-րաքանչիւր գաղտ պահէին նոքա ՚ի ուսմ-կէն: Սակս և ինչ ինչ յաւանդութեանց Նումայի անթարգմանելի ունի զնմանատն: Օրինակ ինն. "Մի ձօն ձօնել դիցն յայ-գեաց՝ որ չկցեն յօտեալ. և մի զոհ զոհել առանց աղեր. և զի՝ երկրպագութիւն տա-ցեն դիցն պարագայեալով. և զի՝ յետ երկըր-պագութեանն ապա եկեալ բազմեսցին": Ընդ առաջին երկուքն ՚ի դոցանէ՝ թուի թէ զնշակեն և զկակղել երկրին ուսուցանեն, իբրու այն որ ՚ի բարեպաշտութեան մասին կցէ գործն: Իսկ պարագայութիւն երկըր-պագուացն՝ ասեն՝ եթէ առ ՚ի նմանութե-նէ կցէ շրջագայութեան տիեզերացս: Սա-կայն թուի առաւել այս ինչ, եթէ քանզի յարևելս կոյս հայեին մեհեանք, վասն որոյ և երկրպագուն աստուածոց դարձուցանէ զթիկունն ընդ արևելս, և փոխադրեալ զինքն շրջէ յաստուածն կոյս, և այնպէս ապա շրջան գործեալ կատարէ միանգա-մայն զաղօթսն ընդ երկաքանչիւր ևս կող-

մանան: Այլ օն և օն, այս գարձուած մարմնոյն՝ զնմանատիպն ակնարկէ և ուսուցանէ զեգիպտական անուտցն այնոցիկ. իբրու այն թէ չէք ինչ հաստատուն և կայուն ի մարդկայնոց աստի, այլ զնարդ և գարձուցէ Աստուած զկեանս մեր, պարտ և արժան է զնոյն սիրել և զնոյն ընդունել հաճութեամբ: Իսկ զնաեէլն և զբազմէլն յետ երկրպագութեանն ասեն՝ գեղեցիկ դուշակութիւն լինել հաստատութեան աղօթից մարդոյն և յաւերժանալոյն նորա ի բարիսն: Այլ ասեն գարձեալ՝ եթէ հանդիսան որոշումն և անջրպետութիւն է գործոյն. վասն որոյ և զառաջինն գործն ի գլուխ հանեալ մարդն՝ նստի բազմի մերձ առ աստուածն, իբրու եթէ առ ի նոցանէն գարձեալ առցէ զսկիզբն երկրորդին: Սակայն մնրթ է այսմ ի ձահ հաւատոել և ընդ նախագրելոցդ բանից. քանզի կրթէ զմեզ օրինադիրն մի լինչ յառ Աստուած խնդրուածոց առնել անպարապութեամբ և հարևանցի՝ իբրու հապճեպ, այլ դէպ ժամանակ գտանելով և պարապեալք յամենայն զբաղանաց:

Այլ ի պատճառս հրահանգացս այսոցիկ և վարժից յաստուածայինն անդր, այնպէս հեզացեալ ընտելացաւ ողջոյն քաղաքն, և այնպէս իմն հիացեալ յապուշ հարեալ էր ընդ առաքինութիւն Նումայի, որպէս զի և զբանս ձառից նորա թէպէտ և առասպելահիւս և գժպատեհս՝ առնուին յօժարութեամբ. հաստատեալ ի միտս՝ ե-

թէ ամենայն խորհուրդք նորա և կամք ոչ ինչ յանհաւատալեաց մասին էին կամ յանհնարից ոմանց: Բայց պատմեն՝ եթէ երբեմն հրաւիրեալ նորա ՚ի հացկերոյթ ոչ սակաւս ոմանս ՚ի քաղաքացեաց, եդ առաջի կահս և անօթս ուսպէտս և ընթրիս գուշնաքեայս և անպաճոյճս: Իբրև սկսան ընթրել, բանս ՚ի մէջ արկանէր նուաստս, որպէս թէ դիցուհին իւրն կենակից՝ անդանօր առ նա եկեալ հասեալ էր. և անդէն ՚ի քթթել սկան երևեցուցանէր նա նոցա զտունն զարդարեալ ծանրագին նուագօք, և զսեղանս լի և զեղուն բազմախորտիկ հասիւք և բազմահանդերձ սպասուք: Իսկ որքան զամենայն գեր ՚ի վերոյ է անտեղութեամբն, է պատմութիւնն յաղագս կենակից լինելոյն նորա և ընդ Աբրամազդայ: Քանզի առասպել հիւսեն այսպիսի, եթէ ՚ի բլուրն Ավենտինոն, մինչ գեռ տակաւին չէր լեալ մանն քաղաքին, և ոչ բնակութիւն ինչ էր ՚ի նմա, այլ աղբիւրք խաղային անդանօր բիւրակնեայք և մայրիք էին անդ հովանաւորք, ձեմ առեալք շրջէին ՚ի նմա երկոք ոմանք ՚ի քաջաց՝ Պիկոս և Փաւնոս, զոր համբուն հանգուանատիպս ոմանս ասացէ ոք արդեօք ազգին Ա յծամարդոց կամ Տիտանաց: Իսկ զօրութեամբ բժշկական գեղոցն և քաջարուեստութեամբն ՚ի դիւթութեան հրէիցն՝ ասեն՝ եթէ Ճարտարութիւն Ճարտարեղով նմանօրինակ այնոցիկ՝ զոր Հելլենք կոչեն Իփէ Տափէիւ՝, այնպէս պարագածեալ շրջէին ընդ Իտալիա:

Ջսոսա ասեն ձերբակալ արար Նումաս՝ գինի և մեղր խառնելով յաղբերն՝ յորմէ սովորէին նոքա ըմպել: Իսկ իբրև ըմբռնեցան նոքա, այնուհետև ՚ի դիմակս գունակ գունակ փոխեցան փոփոխեցան, և ՚ի բաց մերկացեալ զբնութիւն իւրեանց, օտարոտի ինն և այլանդակ կերպարանս և ահըն կէցս տեսանելեաց զանձամբ առին: Ա՛յլ իբրև գիտացին նոքա, եթէ ՚ի կապանս հասեալ և անլուծանելիս շաղեցան, սկսան այնուհետև բազում ինչ նախատաւոտս լինել նմա վասն հանդերձելոց իրաց. դարձեալ և ուսուցին նմա զքաւչական մաքրութիւնն ՚ի շանթից կայծականց, զոր և մինչև ցայսօր ժամանակի առնեն սոխիւք և մաղովք և ձկամբք՝ որ անուանեալ կոչին Մէնի: Իսկ կէսք ասեն, եթէ ոչ գաջքս այսոքիկ ուսուցին զքաւչական մաքրութիւնն, այլ նոքա ՚ի ձեռն մոգական արուեստին իջուցին ՚ի վայր զԱրամազդ. իսկ Արամազդ ՚ի ցասումն բարկութեան բերեալ ընդ Նումաս, պատուէր ՚ի վերայ կապեաց նորա, զի քաւչականդ այդ մաքրութիւն եղիցի Գլխովք. իսկ իբրև անդէն կրկնեաց Նումաս ասել, եթէ՝ Գլխովք ասէ. նա ասէ, Գլխովք մաղթեան. այլ իբրև միւսանգամ խափանել կամելով զնախատպատուիրանն, հարցանէր Նումաս, Ընդէ՞ր մաղվք. եւ պատասխանի Արամազդ, Ընդ՝ որ ոչ կրկնեաց անգրէն Նումաս, Մէնէ՞ ուրեմն 6: Եւ ասեն զայսոսիկ խօսել Նումայն ուսեալ Յեգերեայ. ուստի և Արա-

մազդ մեկնեցաւ ՚ի տեղւոյն հաշտ եղեալ ընդ Նումայի. և յայնմանէ ապա տեղին անուանեալ կոչեցաւ Իլիխիօն, այն է՝ Հաշտական. ուստի և զքաւչական մաքրութեան օրինակ զայն կատարեն: Ընդ այսքիկ առասպելահիւսք և ծիծաղելիք՝ զոյիր ժամանակին զմարդկանն ՚ի դէմս քերեն զանկակիւց բերութեան յաստուածոյինն, զոր բնաւորեալ սովորոյթն գործէր ՚ի նոսա:

Իակ ինքն Նումաս՝ որպէս ասեն՝ այնպէս իմն զամենայն յոյս իւր ապաստարեալ էր յաստուածակոչին կոյս, մինչ զի էր երբեմն՝ յորժամ լուր եհաս առ նա՝ եթէ թշնամիք աւադիկ առ դուրս հասեալ կան, ժպտեցաւ հասէ. Ե՞ն ասաղիկ ըհէմ: Եւ ասեն՝ եթէ նախ առաջին Նումաս տաճար կանգնեաց Հաւատոյ և Տերմինոսի. և զի՝ կարգեաց սահմանեաց Հռոմայեցւոց՝ եթէ հաւատքն են երդումն վեհագոյն, զոր և վարեն և պահեն մինչև ցայսօր ժամանակի: Իակ Տերմինոսի, այն է՝ Սահման, զոհ կատարեն հրապարակաւ և առանձինն ՚ի սահմանագլուխս ագարակաց. այժմ ՚ի շնչաւորաց, իսկ ՚ի նախնումն՝ անարիւն էր զոհն. քանզի զայս լինչ խնամատարքեր Նումաս՝ եթէ զհարդ պարտ և արժան է ՚ի սպանումն թենէն սուրբ լինել աստուածոյն Սահմանոց՝ այն որ խաղաղութեան պահապանն է և վկայ արդարութեան: Եւ թուի թէ՝ այս Թագաւոր Նումաս գլխաւին սահմանագլուխս կարգեաց եղ գաւառն. ուր Հռոմուլոս ինքնին ոչինչ կամեցաւ լարա-

բաժին չափելով զնուրական երկիրն՝ նշա-
ւակել զյափշտակեալն իւր յօտարէն: Քան-
զի սահմանագլուխն կապանք է զօրութեան
իշխանին, եթէ ողջիկ պահեսցէ զնոյն.
ապա եթէ ոչ պահեսցէ՝ յանդիմանու-
թիւն է անկրաւորութեան: Եւ արդ՝ օք չէր
այնչափ լայնասահման գաւառ քաղաքին
Հռովմայ՝ ի սկզբանն, այլ բազում՝ ինչ՝ ի
սէգ նիզակի իւրոյ յաւել բարդեաց՝ ի նոյն
Հռոմուղոս. և ապա զայն ամենայն Նու-
մաս բաշխեալ բաժանեաց յաղքատ քա-
ղաքացիան. և այնպէս՝ ի բաց եբարձ՝ ի նո-
ցանէն զաղքատութիւնն՝ որ հարկաւորեալ
ձգէր յանկրաւորութիւն. և ած զարձոյց՝ ի
մշակութիւն երկրի զժողովուրդն, որ՝ ի
միասին ընդ երկրին և ինքն մշակեալ բեղմ-
նաւորէր: Քանզի և չկայ ինչ այլ յարուես-
տից երբեք՝ որ այնպէս սաստիկ և արագ
արագ բնաւորեցաւ՝ ի նեղքս բերել զսէր
խաղաղութեանն, որպէս պարէն աւտրն
՝ի մշակութենէ երկրին. յորում և պա-
տերազմականն աշխոյժք շատ իսկ յօրանան՝
պաշտպանութեամբ չափ սեպհական կա-
լուածոյն. իսկ Թափ բերմանն՝ ի հարստա-
հարութիւն և յաւելաստացութիւն՝ սան-
ձակոծեալ է: Վասն որոյ և զերկրագոր-
ծութիւնն երբոր խայծ լինի խաղաղութեան
առեալ եմոյծ Նումաս՝ ի քաղաքացիս իւր.
և մեծապէս՝ ի սէր հարաւ այնմ՝ երբոր որ
բարեբարոյ բնաւորեցաւ գործել արուեստն
զմարդ՝ քան թէ ընչաւէտ: Ապա առեալ՝ ի
մասունս մասունս բաշխեաց զդաւառն, զորս

և փակոս կոչեաց, և առ մեն մի ՚ի նոցանէն տեսուչս ՚ի վերայ կարգեաց և ոստիկանս: Է՛ զի և ինքն անձամբ ոքներ ՚ի նոյն, և խելամուտ եղեալ ՚ի գործոյ անտի քաղաքավարուԹեան կենաց քաղաքացեացն, կիսոցն պատիւ և իշխանուԹեան բարձ առաջի ընծայեր. իսկ զկէս՝ զհեղգագոյնան և ըզվատան կշռամբեալ և Թշնամանեալ՚ի զգաստուԹիւն բերէր:

Ա՛յլ՚ի վեր քան զամենայն օրինադրուԹիւնս նորա քաղաքականս՝ առաւել սքանչացեալ բաշխել նորա զբազմուԹիւն խուժանին ըստ արհեստից իւրաքանչիւր: Քանզի յերկուց գոլով ազգաց քաղաքն՝ որպէս ասացաք՝ Թուէր ինձ միացեալ բայց երկպառակ էր, և բնաւ իսկ ամենևին լինել մի՝ ոչ կամէր. և չէր ևս հնար ՚ի բաց բառնալ զօտարուԹիւնն և զլանազանուԹիւն ազգացն. այլ գրգռուԹիւնք անդադրուկ և վէգ գժտուԹեան յերկոցուն կողմանցն ցանգ ՚ի վեր երևէին: Ապա զայն լինչ զմտաւ ածեալ Նումաս, եԹէ և ՚ի մարմնոց անտի՝ որ միանգամ անդատին ՚ի բնուԹենէն անխառնելիք ոմանք բնաւորեցան և խիստք՝ յորժամ փչրին և մանրին՝ այնուհետև հեշտեաւ ՚ի պատճառս մանրուԹեանն միացեալք գան և խառնին ընդ միմեանս, եգ ՚ի մէկ ՚ի մասունս մասունս առնուլ հատուածել զբազմուԹիւնն առհասարակ. և յայսմանէ ապա՝ յայլ լինչ հերձուածս երկպառակս արկանելով զնոսա, զառաջինն զայն և զմեծն ՚ի բաց առնուլ ՚ի նո-

ցանէին՝ ցրուեալ և վարատեալ՝ի վոգւոյնան յայնոսիկ: Եւ էր բաժանումն և բաշխն ըստ արուեստից իւրաքանչիւր, ըստ վոզահարաց և ոսկերչաց, և հիւսանց և նետ-կարարաց, և կարուսակաց և խալըսխորդաց, և պղնձագործաց և բրտաց: Իսկ զայլսն յարուեստից՝ի մի խումբ ժողովեալ, ՝ի բազմաց անտի միաբանութիւն մի՝ի դուրս երևեցոյց: Ա՛ւ այս՝ և ընկերութիւնս իմն կենակից և համախմբութիւնս ըստ ժամանակին, և ոճնս նուիրականս սահմանեաց ետ սեպհականս միոյ միոյ՝ի դասուց անտի: Եւ այսպէս ապա առաջին նա եբարձ ջրնջեաց՝ի քաղաքէն զհերձուածն ոմանց՝ ասել զանձանց և համբաւել՝ եթէ մեք Սաբինացիք եմք. և այլոց՝ եթէ մեք Հռոմայեցիք. կիսոցն՝ եթէ մեք Տատիոսին, և կիսոց դարձեալ եթէ մեք Հռոմուղոսին եմք քաղաքացիք: Եւ այնպէս բաժանումնդ այդ՝ համաշնչութիւն գլխովին դէղեցիկ գործեաց և խառնումն սքանչելի ամենեցուն ընդ ամենեսին:

Իսկ՝ի քաղաքական սահմանս նորա գովելի գտաւ և այն, զի յարդարեալ ուղղեաց զօրէնսն զայն զնոցա, որ իշխանութիւն՝ի ձեռս տայր հարցն վաճառել զորդիսն. յայսց օրինաց ազատ կացոյց Նումաս զամուսանացեալ որդիսն, եթէ ըստ հաւանութեան հօրն և ըստ հրամանին եղեալ ի՛նչ ամուսնութիւնն. քանզի դժնդակ համարեցաւ նա, եթէ որ երբեմն ընդ ազատսն եկեալ հարսնացաւ կինն, ապա յանկարծ

ընդ արծաթագին ծառային գոտանիցն նա բնակակից լեալ:

Ա՛ւ այսոսիկ՝ և զհմտութեան պարագայութեան երկնից էառ նա զձաշակն ոչ ճշդրտագոյնս արդեօք, սակայն և ոչ դիստվին վեր՛ի վերոյ զննութեամբ: Քանզի առ Թագաւորութեամբն Հռոմուղոսի անբանաբար և անկարգս վարէին ամուսինք. կէսք յամուցն և ոչ զքառանիցս աւուրցն ունէին զհաշիւն. իսկ կէսք զերեսուն և հնգից, և կէսք գարձեալ՝ առաւելքան զայս: Եւ ոչ միտ երբէք դնէին անհաւասար պարագայութեան լուանի և արեգական, այլ զայն միայն պինդ ունէին՝ բոլորել զամն ողջոյն յաւուրս երեքհարիւր և վաթսուն: Իսկ Նումա խելամուտ եղեալ՝ զի այլայլութիւն անհաւասարութեանն մեռասանից է աւուրց. լրիւ զի լուսնականն յաւուրս բոլորի երեքհարիւր և չորս, իսկ արեգականայինն՝ յերեքհարիւր վաթսուն և հինգ. առ և կրկնապատակեաց զմեռասան աւուրն, և յաւել ամ ընդ մէջ՛ի փետրուար ամիսն զնահանջն, զոր Հռոմայեցիք կոչեն Մերկինոմ, որ ունէր աւուրս քսան և երկու: Ա՛յլ այս նորա դարման անհաւասարութեանն՝ մեծաց ևս դարմանոց ապա պէտս կալաւ: Բայց փոփոխեաց նա՝ և զկարգ ամսոցն. քանզի զԱ՛պրիան՝ որ առաջնեւրորդ էր՝ կարգեաց երրորդ, և առաջնեւրորդ՝ զՅունուար, որ մեռասաներորդն էր առ Հռոմուղոսիւ. իսկ որ երկոտասաներորդ և վերջին էր Փետրուարն՝

այժմ երկրորդ կ: Ալ են և բազումք՝ որ ասանգեն եթէ այս ամիսք ի Նոսմայէ յաւելեալ եգան՝ Յունուար և Փետրուար. իսկ ի նախնումն անդ՝ տասնեակ ամսովք վարէին ի տարւոջն: Ըստ որում և ոմանք ի բարբարոսաց՝ երիւք. և ի Հելլենացւոց անտի Արկադացիք՝ չորիւք. իսկ Ակարնանացիք՝ վեցիւք. իսկ Եգիպտացւոցն՝ միամսեայ էր տարին, և ապա եղև քառամսեայ՝ որպէս ասեն. վասն որոյ Թէպէտ և Նորոյ բնակիչք են գաւառի, այլ սակայն յոյժ վաղնջուցք են, և շարս իմն ամբաւ ամաց ածեն նոքա յատկաբանութիւնս իւրեանց, զամիսան ի թիւ ամացն հաշուելով: Իսկ Թէ Հռոմայեցիք ամիսս տասն կարգեցին ի տարին և ոչ երկոտասան, քաջայայտ է յանուանակոչութէ անտի վերջնոյն. քանզի մինչև ցայսօր ժամանակի տասներորդ կոչեն նոքա զվերջին ամիսն ?: Բայց Թէ Մարտն առաջին է, կարգն ինքնին ցուցանէ. քանզի և ի նմանէ սկիզբն արարեալ զհինգերորդն կոչեն հինգերորդ. իսկ վեցերորդ՝ զվեցերորդն. և զայլսն ևս նոյնպէս մի ըստ միոջէ ըստ իւրաքանչիւր կարգի: Քանզի եթէ զՅունուար և զՓետրուար յառաջ գասեալ էր նոցա քան զՄարտ, ի դէպ էր նոցա այնուհետև զամիսն Փո-ինիկեայն, այն է՝ հինգերորդ, հաշուել եօթներորդ և անուանել հինգերորդ: Իսկ այլազգ՝ գոյ և այլ պատճառ, զի զՄարտ ամիսն սրբեաց և նուիրեաց Արեսի Հռոմուլոս և անուանեաց առաջին. իսկ երկրորդ՝ զԱպրիլ, ա-

կանուն կրելովզԱվրոդիտեայ, այն է՝ Ատ-
ղիկ, յորում զոհ մատուցանեն դիցուհ-
ւոյն. և ՚ի կաղանդան նորա պատկեալք
մրտեննեօք՝ լուանան կանայք: Իսկ ոմանք
ասեն՝ եթէ Ապրիլ ոչ վասն Ասողկանն
այնպէս կոչեցաւ, այլ զի անուն իւր գիրգ
և փափուկ է ըստ ձայնին, Ապրիլ անուա-
նեցաւ ամիան այն՝ յորում բարգաւաճ է
ժամանակ գարնայնոյն, յորում փթթին և
ընձիւղին բողբոջք բուսոցն. քանզի զայս
նշանակէ և լեզուն 8: Իսկ որ ըստ նմանէն
գայ ամիս, Մայիս կոչեն ՚ի Մայասայ՝ որ
նուիրեալ սրբեցաւ Հերմէսի 9: Որպէս և
զՅունիս՝ ՚ի Հերայ 10: Ալ են և որք զայ-
սոսիկ անուանս ասեն տիոց հասակաց՝ ե-
րիցագունից և կրսերաց. քանզի զերիցա-
գոյնան հասակաւ՝ Մայօռէս կոչեն նոքա.
իսկ զկրսերագոյնան՝ Եունիօռէս: Իսկ զայլսն
ապա իւրաքանչիւր ըստ կարգի, զոր և՚ի հա-
շիւ արկեալ անուանեն նոքա՝ հինգերորդ,
վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, ին-
նեերորդ, տասներորդ: Իսկ յետ ժամանա-
կաց հինգերորդն ՚ի Յուլիոս կեսարէն՝ որ
վանեաց մարտիւ զՊոմպէոս՝ անուանեցաւ
Յուլիս. և վեցերորդն՝ Աւգոստոս անուա-
նեցաւ յերկրորդ կայսերէն Աւգոստոսէ, որ
և Սեբաստոս: Իսկ զամիսն որ ըստ նոցա-
նէն զերկուս՝ Դոմետիանոս Գերմանիկոս
ետ կոչել ըստ անուանց իւրոց, սակայն ոչ
ընդ բազում ինչ ժամանակ. այլ միւսան-
գամ առին նոքա զնուրեանց անուանն, յոր-
ժամ սպանաւ նա. և կոչեցաւ մին Սեպ-

սեմբեր, և միւսն՝ Հոկտեմբեր: Եւ միայն վերջինքդ երկու՝ ըստ իւրեանց կարգին զնարդ և կոչումն ընկալան 'ի սկզբանն՝ զնոյն պահեցին: Իսկ յերկուց անտի՝ որք յաւելան 'ի Նումայէ կամ թէ փոխադրեցան, միւն է Փետրուար, այն է ինքն է՝ քաւութիւն և սրբութիւն. քանզի և բառն ճշդիւ զնոյն նշանակէ. և յայնժամ սրբեն քաւէն զմեռեալս, և կատարեն զտօն Լուպերկաղեանց, որ 'ի բազում ինչ իրս զնըմանութիւն բերէ ղքաւչական սրբութեան. իսկ առաջինդ՝ Յունուար կոչեցաւ 'ի Յանոսէ: Եւ ինձ թուի՝ եթէ Նումաս զՄարտն՝ որ զանունն ունէր զԱրեսի, շարժեաց փոխեաց 'ի նախաթոռ պատուոյն. քանզի կամէր յամենայնի նախապատիւ առնել զքաղաքականն առաքինութիւն առաւել քան զպատերազմականն:

Քանզի այս Յաննոս այր յոյժ վաղնջուց, եթէ 'ի քաջաց ոք էր, և եթէ 'ի թագաւորաց, այր քաղաքական գոլով և այր ընկերասէր, ասեն՝ եթէ 'ի գազանական և 'ի վայրագ կենաց քաղաքավարութենէ փոխեաց և ուղղեաց զմարդիկ, և վասն այնորիկ երկդիմի դրօշեն զնա. իբրև զի այլ յայլմէ գործեաց նա զկերպարան և զգնացս քաղաքավարութեան կենաց: Իսկ է նորա և մեհեան մի 'ի Հռոմ երկդռնեան, զոր դուռն կոչեն՝ Պատերազմի: Քանզի օրէնք այս են՝ բանալ զայն 'ի լինել պատերազմի, և փակել՝ 'ի լինել խաղաղութեան. որ և գժուարին յոյժ է, կամ թէ դուն ուրեք

պատահէ. քանզի ցանգ գոգցես ՚ի մարտ պատերազմի պատուհեալ կայ տէրութիւնն, այն՝ որ ի պատճառս լայնատահման մեծութեանն միշտ մարտ եդեալ կուռվի ընդ ազգաց բարբարոսացն՝ որ շուրջ բնակեալ են զնովաւ: Սակայն առ ժամանակօքն Աւգոստոսի կայսեր յետ վանելոյ հարկանելոյ նորա զՆաւոնիոս, փակեցաւ մեհեանն: Եւ յառաջ քան զայն առ հիւպատոսութէն Մարկոսի Ատիլիոսի և Տիտոսի Մանլիոսի՝ ոչ բազում ինչ ժամանակ. իսկ ապա վաղվաղակի բացաւ միւսանգամ ՚ի դրդռել պատերազմի:

Ա՛յլ առ թագաւորութեամբն Նումայի և ոչ օր մի երևեցաւ բաց. և այնպէս հանապազ փակեալ մնաց այն զամն քառասուն և երիս. այսպէս գործ պատերազմի դադարեալ լռեալ կայր ողջոյն առհասարակ և ամենայն ուստեք: Քանզի ոչ հռոմայեցւոցն միայն ժողովուրդ հեզ և ամոք յարդարեցաւ ՚ի քաղցրութենէ և յարդարութենէ արքային, այլ և որ շուրջանակի քաղաքքն էին, իբրու այն թէ օդ կամ սիւգ քաջառողջ անդուստ ընդխոց, սկիզբն առին փոփոխութեան. և սէր և ցանկութիւն յաջորդեաց ՚ի նեղքս եմուտ ամենայն բարեկրօն կարգաց և խաղաղութեան, միանգամայն և ՚ի մշակութիւն երկրի պարապել, և զմանկունս յանդորրու անուագանել, և ՚ի դիւցն պաշտօն կանխել: Իսկ ուրախմբութեանց հանդէսք և կոչնոց խրախնք, և առ միմեանս զուարթութեամբ

երթևեկ և խրեբաց գեղեցիկ ասպնջակա-
նութիւն և մարդասիրութիւն հիւրամե-
ծար յայնժամ գրաւեալ ունէր ողջոյն զի-
տալիս. որպէս զի անդաստին յաղբերկ ան-
տի խնամատուութեան Նումայի՝ առհասարակ
յամենեսին բղխեաց բարութիւն ամենայն
և արդարութիւն. և բաժանորդ գոան և
նոքա խաղաղաւէտ անդորրութեանն՝ որ
ցանգ չուրջ բակ ունէր զնովաւ: Որով և
ոչ քերթողացն անգամ ծայրայեղ խնամոք
բաւական ինչ եցեն զայնր ժամանակին զվի-
ճակ գեղեցիկ՝ ի դէմս բերել, որ նուագ
հարկանեն մեզ օրինակ զայս.

Իակ՝ի Ճարմանդ կուռ ասպարաց
Ոսոսյնք ձգին սեաւ սարդից,
Եւ ժանգ ծախէ ըզսուր ըզտէգս
Եւ ըզսուսերս երկայրիս:
Հնչմունք ահեղք և շառաչիւնք
Փողոց լըռեալ պըղընձի,
Յարտևանանց չառնուն ըզքուն
Զանուշարարն ըզսըրտի:

Քանզի ապաքէն ոչ միայն պատերազմի և ոչ հերձուածոց երկպառակութիւն, և ոչ այլայլութիւն՝ի քաղաքական՝ի կարգս, պատճառն հանդիպեալ առ թագաւորութեամբն Նումայի: Եւ ոչ գարձեալ՝ ինչ մի ընդդէմ նորա թշնամութեան կիրք, կամ մախանք նախանձուն, կամ դարանակալութիւն՝ի գրաւել ունել զարքայութիւնն, կամ հա-
միշտն չդաւադրութիւն արանց: Այլ ե-

թէ զահ երկիւղին ասիցես զդիցն, որ գոգ իմն խնամ կալեալ՝ պահ մեծապէս ունէին զարամբն. եթէ զյարգ պատկառանաց զառաքինութեան նորա, և եթէ զառ յաստուածոյ զգեղեցիկ բախտն՝ որ յամենայն չարութենէ անդրժելի և աւրբ պահէր զկեանս մարդկանն առ ժամանակաւքն նորա, օրինակ ճշդիւթ և ապացոյց 'ի նեղս եբեր նա զՊղատոնական ձայնին, զոր յետ ոչ սակաւուց ժամանակաց համարձակեցաւ Պղատոն ասանդել յաղագս քաղաքականութեան, եթէ՝ Մի միայն դադար և արձակուրդ մարդկան 'ի չարեաց՝ յաստուածային իմն բախտէ այն իսկ է, յորժամ իմաստասիրականն միւռք համաշունչ միացեալ ընդ արքունի գաւազանին, զօրաւոր առաւել քան զմոլութիւն՝ նախաթոռ բազմեցուացէ զառաքինութիւնն: Քանզի ինքն իմաստուն գոլով, արդարև երանելի իսկ է. իսկ երանելիք դարձեալ՝ և որք լսեն զբանն՝ որ ելանեն յիմաստուն բերանոյ նորա. քանզի ոչինչ արդեօք պէտք լցեն յայնժամ ոչ բռնութեան լինչ առ ժողովուրդն, և ոչ սպառնալեաց: Քանզի նոքին իսկ իբրև 'ի ջինջ և 'ի յատակ օրինակի և 'ի մաքրափայլ քաղաքավարութեան կենաց իշխանին իւրեանց տեսեալք զառաքինութիւնն, կամակարութեամբ սրտի ինքնին յիմաստութիւն անդր բերցին. և միակրօն կարգօք՝ մտերմագոյնս և համաշունչս առ միմեանս արդարութեամբ և չափաւորութեամբ նահատակեսցին կեանս վարել անա-

բառս և երանելիս, յորում գեղեցիկ յոյժ վախճան առնային Թագաւորութեն հաս տատեալ կայ : Եւ՝ի վեր քան զամենեսեան՝ արքունի գահոյիցն արժանի նա է, որ զնոյն քաղաքավարութիւն վարուց և զնոյն գնացս կենաց բաւական է ազդել՝ի հպատակեալս իւր : Արդ Նումաս արքայ առաւել քան զամենայն ոք Թուի Թէ պատկառ եկաց խնատիցս այսոցիկ :

Այլ յաղագս զաւակաց Նորա և հարանեացն՝ ընդդիմախօսեն պատմաբանք : Քանզի կէսք ասեն՝ եԹէ յայլ հարսանիս չէմուտ նա, բայց՝ի Տատիայն. և ոչ դարձեալ այլոյմ զաւակի հայր եկաց նա, բայց միամօր դստերն Պոմպիլեայ : Իսկ այլք դարձեալ՝ ընդ դստերն և այլ ևս չորս ուստերս գրեն զնորա, այս են՝ Պոմպոնէս, Պինոս, Կաղպոս, և Մամերկոս. որոց մէն մի առանձինն Թողին զհետ իւրեանց՝ տանց պայազատութիւն և հոյակապ զարմի : Քանզի՝ի Պոմպոնէ սերեցան Պոմպոնեանք. իսկ՝ի Պինոսէ՝ Պինարեանք. և՝ի Կաղպոսէ՝ Կաղպուրնեանք. իսկ՝ի Մամերկոսէ՝ Մամերկեանք : Եւ վասն այնորիկ և Ռէձէանուանեալ կոչեցան նոքա առհասարակ, այն է՝ Արքայք : Իսկ և այլք դարձեալ մեղադիր լինին նոցա, որք միանգամ չնորհս իմն մարդահաճութեամբ արարեալ ոմանց՝ի զարմից՝ տան նոցա ոչ ճշմարտութեամբ զկնիքս ազգատոհմի պայազատութեանն՝ի Նումայէ : Իսկ զՊոմպիլիա ոչ՝ի Տատիայ այ ասեն ծնեալ, այլ յայլմէ կնոջէ՝ զոր ա

ծեալ լեցէ Նումայ ՚ի թագաւորութեան անդ իւրում՝ Լուկրետիա անուն: Այլ ա- մենեքեան առհասարակ միաբանին ասել, եթէ Պոմպիլիա հարանացաւ Մարկիոսի: Եւ էր այս Մարկիոս որդի այնր Մարկիո- սի, որ յորդոր և թելադիր եղև Նումայի առնուլ զթագաւորութիւնն: Եւ քանզի սա ՚ի միասին ընդ Նումայի եկին դաղթեաց ՚ի Հռոմ, և շուք առեալ անց ՚ի համար Սինկղիտոսին. և յետ մահուանն Նումայի ՚ի վեղ ընդ Ոստիղեայ հետամուտ եղեալ աթոռոյ արքայութեանն և նկուն եղեալ ՚ի նմանէ, անառաղութեամբ անձին արար: Իսկ որդի նորա Մարկիոս ունելով իւր զգ Պոմպիլիա՝ եկաց մնաց ՚ի Հռոմ քաղաքի. և ծնաւ զՄարկիոս Անկոս, որ թագ կա- պեաց յետ Տուլղոսի Ոստիղեայ: Իսկ զսա՝ որպէս ասեն՝ ՚ի հնգամեայ հասակի եթող Նումաս ՚ի մեռանել իւրում:

Եւ մեռաւ Նումաս ոչ արագեալ ինչ մահուամբ և ոչ յանկարծակի, այլ տակաւ առ ՚ի ծերութենէն և անդորր և ամբք խո- թութեամբ պակասեալ վաստեցաւ, որպէս պատմէ Պիսոնէն. և մեռաւ նա ՚ի բարւոք ծերութեան՝ ոչ շատ ինչ անցեալ զտարի- սընամենիւք: Իսկ զքաղաքավարութիւն կենաց նորա նախանձելի յօրինեցին նովին իսկ յուղարկաւորութեամբն ժողովուրդ առհասարակ՝ նիզակակից նորա և բարե- կամք խուռն ընթացեալք ՚ի թաղումն նո- րա հանդերձ աշխարհաժողով ձօնիւք նուի- րաց և պատկօք. և պատրիկք բարձեալ ու-

նէին զդագաղան նորա. անդ և քահանայք դէին՝ համախումբ եկեալ՝ի վայրն յուղարկաւորութիւնն լինէին: Անդանօր և այլ խումբ հանդիսաւոր խառն՝ի կանանց և՝ի տղայոց, ոչ որպէս թէ ծերացելոց ուղուձն արքայի եկեալ հասեալ՝ի Թաղուձն, այլ իբրու այն թէ զոյժ սիրելին՝ որ՝ի նորաբողբոջ հասակին վախճանեալ էիցէ՝ այր այր իւրաքանչիւր եկեալ՝ի Թաղէէ, այնպէս մեծապէս կոծով և լալեօք զհետ երթային: Բայց՝ի հուր խարուելին ոչ եւոան զդիակին նորա. քանզի և ինքնին գլխովին՝ որպէս ասեն՝ արգել խափանեաց զայն: Սակայն տապանս երկուս կոփեալ՝ի քարէ՝ առին Թաղէոսին ընդ Եանիկղեաւ.՝ի միում հանգուցեալ զմարմինն, և՝ի միւսումն՝ զՄատեանս նորա զնուիրականան, զոր ինքնին Նումաս արձանագրեալ էր. ըստ որում և Հելլենացւոց օրէնսդիրք զՆիւբեայս իւրեանց՝ այն են՝ Եռանկիւնի պնակքն: Քանզի և ուսուցեալ իակ էր նա քրմացն՝ միոյգէտ կենդանին էր՝ զգիրսն զայնոսիկ, և ամենայն տառիւքն և իմաստիւքն խորհրդոց խելամուտ արարեալ էր զնոսա. վասն որոյ և զնուիրական գիրսն զայնոսիկ հրամայեաց Թաղէէ՝ի միասին ընդ մարմնոյն. լաւ համբերեցաւ՝ զի մի ծածկութիւնք գաղանեացն այնոցիկ՝ի գիրս անկենդանս տարուբերեալք յայծեացին: Նովին խորհրդով ասեն և զՊիւթագորեանց՝ եթէ ոչինչ արձանագրեն նոքա՝ի գիրս պատուիրանաց իւրեանց, այլ զնիշատակ նոցուն և զհրահանգ վար-

ժիցն անգիր տպաւորեն ՚ի լսելիս արժա-
նաւորացն : Եւ ասեն՝ եթէ էր երբեմն՝ զի
յանարժանից անտի ումեմն առաջի եգան
առաջարկութիւնք և պէտք ՚ի դժնդակաց
անտի և յանթարգմանելեացն երկրաչա-
փութեան, և տպառնացեալ էին դիք մեծ
և նորանշան չարեօք պատուհասել զօրինա-
զանցութիւնն զայն և զամբարշտութիւն :
Վասն որոյ և բազում՝ նեղողութեան հան-
դիպին նոքա՝ որք միանգամ պատուասի-
րեն ասել՝ եթէ կենակից կենցաղակից լեալ
էին միմեանց Նումայ և Պիւթագորաս ՚ի
պատճառս այսչափ նմանութեանց նոցա :

Իսկ Անտիաս ՚ի գիրս իւր պատմէ, եթէ
որ ՚ի տապանի անդ ամփոփեալ եգան Մա-
տեանքն, երկոտասանքն էին վհանայա-
պաշտօնք, և երկոտասանք այլ՝ հելլենացի
գրեալ խմաստասիրականք : Բայց ապա յան-
յանել ջրոյ հարիւրոց ամաց առ հիւպա-
տոսութեամբն Պոպղիոսի Կուռնելիոսի և
Մարկոսի Բէբիոսի, տեղատարափ մեծ ի-
ջեալ անձրևաց և զչխրիմն ողողեալ քան-
դեալ, հոսանք ջրոցն ՚ի դուրս վարեցին զ-
տապանն. և ՚ի բաց թաւալեալ կափար-
չացն, մին ՚ի նոցանէ ունայն գտաւ ամենևին
և թափուր, և մանն և նշխար ամենևին
չգոյր ՚ի նմա ՚ի մարմնոյն. իսկ ՚ի միւսումն
գտին ամփոփեալ զմատեանն : Եւ ասեն՝
եթէ որ ՚ի ժամանակին յայնմիկ զօրավարն
էր Պետիղոս՝ առեալ ընթերցաւ զմա-
տեանն զայն, և չոքաւ առ Սինկղիտոսն և
երդմնիւ եղև, եթէ քնաւ իսկ ոչ արժան և

ոչ օրէն և սուրբ հաւատոյ նա լսել առնել զդէրսն զայնոսիկ առաջի խուժանին. վասն որոյ և՝ ի կոմիտոն տարեալ զմատեանն, անդ այրեցին զնոսա:

Եւ արդ՝ ամենայն արդարոց անձանց և քաջաց և առաքինեաց՝ ի Թիկանց կուսէ մեծ ևս գովութիւն բնաւորեցաւ զհետ գալ յետ վախճանի նոցա. քանզի և կիրք նախանձուն ոչ բազում լինչ ժամանակ կայ ինայ յետ մահուն նոցա. իսկ ի զի և մահ նորա գլխովին կանխէ քան զնոցայն: Բայց զորա փառն քաջափայլ յարդարեցին արկածք աղէտից Թագաւորացն՝ որ Թադ կապեցին զկնի նորա: Քանզի Թագաւորք հինգ կացեալ յետ նորա, վերջինն՝ ի նոցանէ անկեալ յիշխանութենէն՝ անդ՝ ի տարաստահմանութեանն իւրում ծերացաւ. իսկ՝ ի չորից անտի և ոչ մի ոք ըստ բնութեան կարգին վախճանեաց զկեանն. այլ երեք՝ ի նոցանէն՝ գաւեալք խաբանօք վողոսեցան: Իսկ Ոսիոլնոս Տուղղոս՝ որ զկնի Նումայի Թագ կապեաց, շատ լինչ՝ ի գերեցիկ նորա օրինացն, և առաւել քան զայլսն՝ զբարեպաշտութիւն նորա յաստուածայինսն լրնչաց քերեր և ծիծաղեր. իբրու այն որ անդործս և վատս և կնամարդիս՝ ի մարտս պատերազմի յարդարեաց զքաղաքացիսն: Սակայն և ոչ լինքն գլխովին եկաց ինաց՝ ի տատամբակ խեղութեան իւրում, այլ՝ ի բազմս հարուածեան և՝ ի գժնդակ խօթութենէ՝ ի զդաստութիւն բերեալ, ողջոյն իսկ անձնատուր եղև՝ ի անապաշտութիւն անդր, ան-

բաժ գվնովին ՚ի բարեպաշտութենէն Նումայի ազգայն: Ան այսոսիկ գալէաէ՝ ՚ի նոյն անապաշտութիւն առհասարակ առեալ դիմեաց զքաղաքացիան Հռովմայ պակուցանող աղէտք օրհասի մահուն նորա, ըստ որում պատմաբանեն մեզ՝ եթէ կայծակնահար եղեալ Ոստիլիոս Տուլղոս՝ ՚ի նոյն և յամձիւն գարձաւ:

ՁՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԼԻԿՈՒՐԳԵԱՑ ԵՒ ՆՈՒՄԱՅԻ

Ա՛յլ քանզի ընդ Ճառս կենացն Նումայի և Լիկուրգեայ անցեալ՝ զերկոսեան միանգամայն յանդիման եդաք ընթերցանելեացն, ոչինչ դանդաղելի է մեզ այսուհետեւ՝ թէպէտեւ գժնդակ իցէ գործն, առնուլ՛ի միասին ամփոփել և զնոտիրն՝ որ ընդ նոսա: Քանզի որ ինչ միանգամ հասարակ են երկոցունն նոցա՝ քաջայայտ աւադիկ երևին՛ի գործոց անտի նոցա. ըստ որում ողջախոհ ժուժկալութիւն արանցդ այդոցիկ, փոյթ բարեպաշտութեն, կարգ քաղաքականութեանն, հրաշանգ դաստիարակութեանն. և զի՝ զնոյն զմի սկիզբն զաո՛ի դից անտի առնին երկոքին նոքա զօրինադրութեանն իւրեանց:

Ա՛յլ սակայն որ առանձին գեղեցիկ նահատակութիւնք իցեն իւրաքանչիւր նոցա,

նախ առաջինն՝ զի յանձին կալաւ Նոեմաս զԹագաւորութիւնն, և Լիւկուրգոս՝ զի այլոեմ յանձն արար զնոյն: Քանզի Նոեմաս ոչ հեռամուտ ինչ եղեալ՝ ժառանգեաց զնա. իսկ Լիւկուրգոս ժառանգեալ ունելով զնա՝ անդրէն դարձոյց եւս: Զնոեմաս այլք ոմանք տէր իւրեանց կացուցին՝ զայր սոսկական և օտարական. իսկ Լիւկուրգոս գոլով Թագաւոր՝ անձամբ զանձն արար սոսկական: Արդ՝ գեղեցիկ է արգեօք զարքայութիւնն ստանալ արդարութեամբ. և գեղեցիկ է գարձեալ՝ քան զարքայութիւնն նախապատիւ առնել զարդարութիւնն: Քանզի առաքինութիւնն այնպէս փառաւոր գործեաց զնոեմաս, որպէս զի և արքայութեանն արժանի առնել զնա. իսկ զԼիւկուրգոս այնպէս մեծ գործեաց, որպէս զի և արհամարհել զարքայութեամբն:

Իսկ երկրորդ անգամ՝ քանզի իբրու արդարև ներդաշնակութիւն իմն քնարի, ըզԹուլացեալն և զդրդայեալն Սպարտիա կոչեաց Լիւկուրգոս. և զբուռն և զսաստիկ կորով զՀռոմայ Թուլացոյց Նոեմաս: Ա՛յլ մեծապէս քարընդոտն գործոյ ընդառաջ եղ Լիւկուրգեայ. քանզի ոչ եթէ զսպառազինութիւն զրահիցն մերկանալ յանձնէն թելադրեր քաղաքացեացն և զսուսերան 'ի բաց ձգել, այլ զոսկի և զարծաթ 'ի բաց Թողուլ լքանել, և զբազմահանդերձ մահիճս զանկողնոցն, և զսեղանս կոչնոցն ընդ վայր հարկանել: Եւ ոչ

եթէ հանդարտեալ դադարեալ ՚ի մար-
տից պատերազմաց՝ տօնս կատարել և զոհս
զոհել, այլ զընթերոքն և զըմբեղեացն իւր
բախճանօք անփոյթ արարեալ՝ ՚ի զէնս զար-
դուց և ՚ի գօտեկռիւս վաստակել և կրթել:
Ասաի և Նումաս սէր մեռելիմ ընկալեալ
և շուք պատուոյ յիւրոց անտի՝ այնպէս ած
հաւանեցոյց զնոսա և գործեաց զամենայն.
իսկ Լիւկուրգոս ՚ի վտանգ անկեալ և հա-
րուածս ևս առեալ, հազիւ ուրեմն տիրա-
ցեալ՝ ՚ի գլուխ հանէր զգործն: Բայց Նու-
մային կարի իմն հեզ և հանդարտ և մար-
դասէր բնաւորեցաւ բոյս բարուցն, որ ՚ի
խաղաղութիւն և յարդարութիւն փոխա-
կերպեալ հեզայոյզ զքաղաքացիսն ՚ի սան-
ձակոսոր և ՚ի հրաբորբոք աշխուժից:

Ապ՚ եթէ և զօրէնսն որ վասն Խղոտացն՝
հարկաւորեացէ ոք զմեզ կարդել ՚ի քաղա-
քականութիւն անդր Լիւկուրգեայ, գործ
անագորոյն յոյժ և անօրէնութիւն մեծ.
յայնժամ ասասցուք և մեք՝ եթէ օրէնքս-
դիր եղև Նումաս յաւէտ իմն դիպողագոյն
հելլենական խմաստից: Իբրև զի և բուն
իսկ ծառայիցն ետ ճաշակս ճաշակել զպատ-
ուոյ ազատաց, հրամայեալ նոցա ՚ի կռոնո-
սեան կոչունսն բազմել ուստել բարձակից
ընդ տեարց իւրեանց: Վանզի և զայս ինչ
ասեն մի յօրինաց անտի լինել Նումայի,
եթէ պարտ և արժան է ՚ի վայելս տարևոր
պտղոցն միաբան վայելել և գործակից մշա-
կացն: Իսկ այլք քերթողաբանեն՝ եթէ այս
՚ի յիշատակ պահէր կռոնոսեան հաւասա-

բաւիձակ կենացն, յորում՝ ոչ ծառայ ոք երևէր, և ոչ տէր, այլ առհասարակ ամենեքեան ազգակիցք միմեանց համարեալ էին և ղուգապատիւք:

Բայց համբուն երկոքին միանգամայն երևին 'ի սակաւասակս կեանս և յողջախոհ ժուժկալութեան հաստատապէս ածել ձգել զժողովուրդն: Իսկ յայլոց առաքինութենանց՝ մին յարիւթիւն անդր առաւել հակամիտեալ էր. իսկ միւսն՝ յարդարութիւն: Սակայն թէ ոչ՝ որպէս ինձ թուի՝ 'ի պատճառս անկակից աննմանութեան բուսոյ բարուց կամ սովորութեան քաղաքացն իւրաքանչիւր՝ հանգամանս աննմանս պարտ և արժան էր նոցա 'ի ներքս բերել: Քանզի ոչ 'ի պատճառս վատասրտութեան կարձեաց եբարձ Նումաս զկռիւ մարտից, այլ զի մի թերևս անդուստ անիրաւութիւն 'ի ներքս մտցէ: Եւ ոչ Լիւկուրգոս դարձեալ յանիրաւութեան սակս հանդերձեաց մարզեաց մարտիկս, այլ զի մի անիրաւութիւն կրեսցեն իւրքն: Եւ այսպէս ապա երկոքին սոքա զծայրայեղ մոլութիւնսն բարձեալ 'ի միջոյ, և կարևորացն սկիզբնք լցուցեալ զքաղաքացիսն, հարկաւորեցան մեծամեծս այնուհետև 'ի ներքս ընծայել փոփոխութիւնս:

Իսկ յալագս կարգաւորութենէ և 'ի դասս դասս որոշման քաղաքայնոցն, ռամկական արդարև և համբուն ժողովրդական է նկատելին, որ յոսկերչաց ոմանց և 'ի փողահարաց և 'ի կօշկակարաց խառն և բազմա-

դունակ ՚ի վեր երևեցոյց ժողովուրդ։ Իսկ Լիւկուրգոսին մեծասիրտ է և ասաք, որ զձեռագործ և զծառայական արուեստսն յածեցուցանէր ընդ ձեռս ծառայից և ե֊կամտից արանց. իսկ զքաղաքայինսն ՚ի մի խմբեաց վարժեաց յասպարս վահանաց և ՚ի սէգս նիզակաց, զի մարտի պատերազմին եղիցին նոքա արուեստագէտք, և Արեսին սպասարկու պաշտօնեայք. և զի՝ այլ ինչ ամենևին ոչ գիտասցեն և ոչ հոգասցեն՝ բայց հնազանդել զօրավարաց և ՚ի վերայ տիրել թշնամեաց։ Քանզի և ոչ օրէն ինչ էր ազատորեցն ինչս հաւաքել կուտել, որպէս զի և գլխովին և ճշմարիտ ազատք լինիցին նոքա. այլ հանդերձանք և հոգք ընչից՝ ծառայիցն տուեալք էին և խղճացն ՚ի ձեռս, ըստ որում և սպասարկութիւն սեղանոյն և կերակրոցն։ Իսկ նուաստ յայսպիսեաց աստի ինչ ոչ խորհեաց, այլ զընչաքաղցութիւն զօրականին տանձեաց կարձեաց. իսկ զայն ամենայն ընչաւէտութիւն ոչինչ արգել։ Եւ ոչ զանհաւասարութիւն զայս տապալեալ հարթեաց, այլ թոյլ ետ յօրանալ ընչիւք և բարգաւաճել անսահմանաբար. և անփոյթ արար զբազում աղքատութեամբն՝ որ խուռն հոդման տուեալ ՚ի նեղքս՝ ողոլեր զքաղաքն։ Պարտ և արժան էր անդէն վաղվաղակի ՚ի սկզբանն, յորժամ չև ևս էր բազում և մեծ անհաւասարութիւն ՚ի կեանս մարդկանն, այլ մինչդեռ նմանք էին միմեանց և հաւասարք, արձանանալ զդէմ ունել օգտածարաւ ա֊

գահուԹեանն, ըստ որում Լիւկուրգոս. և պահ արկեալ պաշտպանել՝ ի վնասուց և ի տուգանացն նորա՝ որ ոչ գումնաքեայք ինչ եղեն արդեօք, այլ չատ և մեծամեծ չարեացն որ պատահեցան՝ այն եղև սերմն և սկիզբն և պատճառք:

Ա յլոր ինչ յայլազգս բաշխից կալուածոց երկրի, ոչ զԼիւկուրգոս առնէ բամբասել, զի արար. և ոչ դարձեալ զնոսա՝ զի չարար: Քանզի Լիւկուրգոսին խարխս հաստատուն և հիմն քաղաքականուԹեանն ի ներքս ընծայեցաւ հաւասարուԹիւնդ այդ. իսկ նոսայն՝ քանզի այն ինչ լեալ էր վիճակաբաշխուԹիւնն, չէին ինչ պէտք այլոց բաշխից. և ոչ դարձեալ պարտ ինչ էր շարժել փոխել զառաջինն բաժանումնն՝ որ յակառատանին կայր ընդ գաւառն ողջոյն՝ որպէս հաւանեալս եմ:

Բայց զնոսաւն պահպանուԹեան կուռանացն յաւէտ ձնդեաց նոսա. քանզի և այնպէս իսկ արժան և վայելուչ է իգական բնուԹեանն, և գեղեցիկ զարդ նոցա: Իսկ Լիւկուրգոսինն՝ բնաւ իսկ ամենևին լոյծ և մեղկ գոլով և կինամարդի, պատճառս եւս քերԹողացն իմաստից: Քանզի Փէնօֆրէ՞ս, այն է՝ Ազգերացոյցս ոմանս, այսպէս կոչեցին նոքա զկուռանսն Սպարտիոյ, ըստ որում Իբիւկոս: Դարձեալ առ այս՝ և Իբրև այրամոլս Թշնամանեցին զնոսա, ըստ որում Եւրիպիդէս՝ որ ունի օրինակ զայս. "Որք ի միասին գոլով ընդ պատանեացն՝ ամայի Թողուն զտունս, մերկք ազդերքք,

հոլմակոծեալ աեռիւք "։ Քանզի կու-
սանաց պատմուճանին քղանցք անկար
հանդիպեալ ՚ի խոնարհ կուսէն, վասն որոյ
և ՚ի քայլն նոցա բացեալք պարզէին, և
մերկ խայտառակ երևեցուցանէին ողջոյն
զազդին նոցա։ Եւ զայս ասպա ՃՀգրատ-
գոյնս Սոփոկղէս ՚ի գէմս բերէ, ասելով.
"Եւ պատմուճան ինձ արկեալ աւադիկ՝
որ ոչն քօղարկէ զաղջիկն, այլ առաւ անառ
հոլանեալ զազգրն ցուցանէ զՀերմիոնէին".
Վասն որոյ և ասէն, եթէ խրոխտք էին և
լիրբք, և առաւել ՚ի վերայ նոցուն իակ ա-
բանց իւրեանց այրաբար Ճոխանային. ողք
և զառանին իրս իւրեանց տանէին բերէին
մեծապէս իշխանութեամբ. այլ և ՚ի հրա-
պարակական գործառնութիւնան ՚ի նեղքս
տային իառնէին զկարծիս իւրեանց, և խօ-
սէին ևս համարձակութեամբ մեծաւ վասն
մեծաց իրաց։ Իակ Նուաիաս զկանանցն ար-
ժանիս և զշուք պատուոյն պահեաց պահ-
պանեաց առ արս իւրեանց. զոր և ու-
նէին իակ նոքա առ Հռոմուղոսիւ՝ պաշտօն
մեծապէս առեալք և սէր ՚ի պատճառս
յափշտակութեանն այնորիկ։ Սակայն ա-
մօթխածութիւն բազում կարդեաց ՚ի վե-
րայ նոցա, և զնառնել ՚ի գործառնութիւնս
տէրութեանն կարձեաց ՚ի նոցանէն, և ու-
սոյց ևս նոցա զգաստութիւն և պարկեշ-
տութիւն, և սովորեցոյց մարզեաց զնոսա
՚ի լռութիւն. իակ ՚ի գինւոյ ողջոյն իակ
հրաժարեցոյց զնոսա. իակ իսօս ինչ և ո՛չ
վասն կարևորացն անգամ իսօսել նոցա ՚ի

բացականութեան արանց իւրեանց: Մին-չև պատմեն՝ եթէ էր երբեմն յորժամ ՚ի կանանց ոմն համարձակեցաւ զդատ իւր ինք-նին ասել ՚ի հրապարակին, առեալ արձա-կէր Սինկղետոսն արս ՚ի Դելփիս, հարցա-նել պատգամ՝ եթէ ի՞մ իմիք արդեօք նշա-նակ կցէ քաղաքին գործդ այդ:

Բայց ամենայն հլուութեան նոցա և հնա-զանդութեան հեղութեան մեծապէս նշա-նակ էր յիշատակն՝ զոր առնէին նոքա յա-ղագս վաստիար կանանց: Քանզի զմրօրինակ առ մեզ առ Հելլենացիս՝ պատմաբանք ար-ձանագրեն յաղագս առաջնոցն արանց, որք միանգամ կամ սպանութիւնս գործեցին զքաղաքացնոց, կամ որք ՚ի կռիւ մարտի գրգռեցան ընդդէմ եղբարց, կամ որք ձե-ռամբք իւրեանց մահ առնեցին հարց կամ մարց իւրեանց. սակայն և Հռովմայեցիք յուշ ածեալ իսկին ընդ միմեանս, եթէ առաջին սադիկ ՚ի բաց արձակեաց զկին իւր Սպորիոս Կարբիլիոս, յորժամ յետ շինութեան Հռովմայ ընդ ամ երեքհարիւր և երեսուն ոչ ոքեք այլ պատահեաց եր-բեք յայնպիսեաց անուն: Եւ թէ՝ ՚ի կա-նայս առաջին, Պինարիոսի կինն Թաղէա անուն՝ գժտեցաւ ընդ զոքանչին իւրոյ Գե-գանեայ առ Թագաւորութեամբն Տար-կուինոսի Սուբերպոսի: Ա՛յսպէս գեղե-ցիկս յոյժ և վայելուչս կարգեալ և սահ-մանեալ էին իրք հարսանեացն առ նոսա յօրէնսդրէ անուն:

Իակ որ ինչ միանգամ յաղագս գաստիա-

բակութեան կուսից և տուչութեան նո-
ցուն արանց, միաբան էն նոքա: Լիակուր-
գոս ի հասուն հասակի և յորժամ ջե-
նուն, առեալ հարմնացուցանէր զնոսա.
որպէս զի զուգաւորութիւնն գլխովին ի
պահանջէր անդ բնութեանն՝ մտերմու-
թեան սիրոյ սկիզբն և պատճառք էղիցի և
բարեկամութեան առաւել, քան առեղծու-
թեան և երկիւղի նոցա, յորժամ բունի
ընդդէմ բնութեանն վարեացին ի նոյն. և
զի՝ և մարմինքն գլխովին կորովացեալք էցեն
առ ի քաջութեամբ բերել կրից յաղթու-
թեան և երկանց ծննդեանն, իբրու այն՝ որ
ոչ յայլ ինչ պէտս հարմնացեալք էցեն
նոքա, քան ի պատճառս զաւակագործու-
թեանն: Իսկ Հռովմայեցիք յերկոտասան
ամաց հասակի, և կրսերագոյն ևս՝ տային
արանց զկոյս իւրեանց: Վասնզի այսպէս
միանգամայն և մարմին նոցա և բարք նոցա
առաւել ևս մաքուր և սուրբ և անշաղախ
գտանիցին ի հարմնութեան անդ նոցա: Եւ
քաջայայտ է ոչրեմն, զի Լիակուրգոսին
առաւել բնաւորականք էին սահմանքն առ
ի զաւակարարութիւն անդր. իսկ Նումայ
ինն՝ առաւել բարոյականք առ ի կենա-
կից քաղաքավարութիւն ամուսնացն:

Բայց որչափ ինչ միանգամ գեղեցիկ
վերակացութիւնքն էցեն ի վերայ ման-
կանցն Սպարտիոյ, և համագումար խմբել
նոցա և դաստիարակութեան մարզք և հա-
սարակորդ բազմել նոցա ի կոչունս ընթ-
րեացն, և ի վարժս ըմբշացն և ի խաղս զբօ-

սանացն իւնամոս ջանքն վասն նոցա և վայե-
լուչ կրթանքն, այսոքիւք ամենևին զայս ինչ
յանդիմանեաց Լիւկուրգոս՝ եթէ ոչինչ
աւելի ոք էր նուաստ քան զօրինադիրս ո-
մանս հեռուակս և անուսագս: Քանզի նու-
նոս զմանկանցն դաստիարակութիւն և զկըր-
թանան գլխովին ապագարեաց ՚ի կամս հա-
ճութեան հարցն կամ ՚ի պէտս պիտոյից
նոցա, եթէ միշակ հոգադործ կամիցին առ-
նել զորդիան, եթէ նաւադործ արուես-
տաւոր, կամ գարբնին ոք պղնձոյ, կամ թէ
ոք ՚ի վոզարաց. որպէս թէ՝ ոչ պարտ էր
անդամին ՚ի տղայ տիոցն առ մի վախճան
կրթել մարզել և ջոջել ամոքել զբարս ման-
կըտւոյն. այլ զօրօրինակ եթէ համախտուն
՚ի նաւ մի վերելակեալ մոցեն նոքա ըստ
հաճոյիցն իւրաքանչիւր՝ ումն յայս ինչ պէտս
գործոյ և ումն յայլ ինչ, և ապա միայն ՚ի
վտանգս վերլինն նաւուն՝ առ ակն անձանց
խուճապեալք զարհուրեալք համագունդ
գիմեցեն ՚ի հասարակաց գործն. իսկ այլ
ազգ՝ այր այր իւրաքանչիւր զանձինն մի-
այն խնդրեացէ: Եւ արդեօք չէ արժան մեզ
դնել օրինադրացն հեռուակաց, եթէ ուրեք
երբեք նուազեալ գտանիցին յօրինադրու-
թիւնս իւրեանց կամ առ տգիտութեէ կամ
առ ակարութեանն. իսկ առն իսաստնոյ՝
որ զարքայութիւն զանձամբ առեալ իցէ ՚ի
վերայ ժողովրդեանն, որ այն ինչ ՚ի մի վայր
եկեալ ժողովեալ իցէ և անդիմադարձ
հլութեամբ զանձն ընծայեացէ, մի՞ իսկ
այլ առաջին արժան իցէ իւնամով պատկառ

կալ, որպէս գաստիարակութեան մանկըտ-
ւոյն և անդեանն, և վարժից պատանեացն
և կրթուելեան. որպէս զի մի այլազանք մի-
մեանց և մի խռովայոյզք լինիցին նոքա 'ի
բարս իւրեանց, այլ 'ի նոյն 'ի մի հետս շաւ-
ղաց հասարակ առաքինութեան անդամին
'ի տղայական հասակէն հարստեալք և տպա-
ւորեալք՝ միախորհ գտանիցին միմեանց և
միակրօնք: Եւ գաստիարակութիւն այս-
պիսի մեծապէս օգնեաց Լիւկուրգեայ հան-
գերձ այլովք և 'ի պահպանութիւն օրինաց
նորա: Քանզի գուշնաքեայ լինէր ապա-
քէն ահ երկիւղն երդմանցն՝ եթէ 'ի ձեռն
գաստիարակութեանն և վարժից չէր նա
յառաջագոյն յօրէնս իւր հարստեալ ըզ-
բարս և զսովորոյթս մանկտոյն, և ընդ կա-
թին անդեանն չէր անդամին անկակից ա-
րարեալ նոցա՝ և զչէր և զնախանձ օրինաց
հայրենի աշխարհին: Մինչ զի և աւելի քան
զժամանակ ամաց հարիւրոց հնգից կացին
ինացին անայլայլակ մաստունք օրինադրու-
թեանց նորա՝ սիրադոյնքն և նախասպատիւք.
իբրու այն թէ յերանգ իմն գունոյ անա-
պակ և անջնջելի քաջ քաջ արբեալ և տար-
լացեալք լցեն: Իսկ նուաճի ձիգն և նպա-
տակ քաղաքականութեանն՝ որ 'ի խաղա-
ղութեան միայն և 'ի սէր բարեկամութեան
գուն գործէր պահել զհոտ քաղաք,
անգէն և անդ պակասեալ վախճանեցաւ
ընդ նմա: Քանզի յետ մահու վախճանի
նորա զերկդունեան մեհեանն՝ զոր ցանգ
վակ պահեացնա, իբրու թէ 'ի նեղքս անդ

նորա արգելեալ սանձեալ պահիցէ զնաշխին պատերազմին, յերկուց ևս կողմանց երկբացիկ առին պարզեցին Հռովմայեցիք, և արեամբք և դիակամբք մեռելոց լցին առհասարակ զԻտալիա: Եւ ոչ առ սակաւ մի ժամանակ տևեաց մնաց գերեցիկ և իրաւացի սահմանադրութիւն նորա. քանզի և չունէր իսկ յինքեան կապ անխզելի և յօդակապ՝ զդաշտիարակութիւն մանկտւոյն:

Ա՛յլ զի՞նչ ասպա, ասասցէ ոք Թերևս, ոչ ահա՛ ի լատագոյնս յառաջադէմ խաղաց գնաց Հռովմ՛ ի ձեռն մարտից պատերազմաց: Որք զհարցուածիդ զայդ հարցանեն, երկայնագունից արդեօք պատասխանեաց պէտք իցեն նոցա՝ որք միանգամ զլաւութիւն կենցաղոյս մարդկան հաստատեալ դնեն յընչաւէտութեան գոյից և՛ ի փափկութեան գրգանաց և՛ ի տէրութեան աշխարհաց, քան եթէ յանքոյթ խաղաղութեան և՛ ի հեզութեան և յինքնաբաւութեան հանդերձ արդարութեամբ: Ա՛յլ յայտ ամենայնի վերայ՝ Թուի Թէ և գոյն իսկ գլխովին զփառան աձեցուցանէ զի՛ խոկութիւն: Քանզի Հռովմայեցիք յորժամ՛ ի նուաճի օրինադրութեանցն՛ ի բաց կացին, յայնժամ ապա յայդ չափ մեծութեան առեալ հասուցին զկրս տէրութեանն: Իսկ նախեդեմոնացիք՝ իսկ և իսկ անդէն՛ ի Թողուլ նոցա զխոկութեայ օրէնսն, անկան խոնարհեցան՛ ի վերհագոյն կայից իւրեանց. և կապտեալք՛ ի տէրութենէ անտի աշխարհին հելլենաց, և ին-

քեանք դարձեալ մեծապէս վտանգեցան հիմն ՚ի վեր տապալել:

Իսկ զոր մեծ ինչ և աստուածային գոգ- ցես արդարև ՚ի նեղքս ընծայեաց Նոեմաս, զի այր մի օտարական հրաւիրեալ ՚ի գահ անդր, եկն և համոզակեր իմաստութեամբ փոխեաց չըջեաց զամենայն. և Ճոխացաւ սիրեաց ՚ի վերայ քաղաքին՝ որ չև էր ՚ի համաչնչութեան հաստեալ. ոչ զինուց զարդուց պէսք ինչ եղեն նմա, և ոչ բռնութեան բազկաց, զոր որում Նխովրդոս ՚ի զօրավիգն իւր ած իմբեաց զաւագանին ՚ի վերայ խուժանին, այլ ՚ի ձեռն իմաստութեանն միայն և արդարութեան՝ ՚ի մի կարգ գեղեցիկ առ և յօգեաց զամենեսին առ- հասարակ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Պլուտարքոս ծիծաղելի ասէ, բայց ՚ի Հռոմայեցւոց Վարրոն և Դիոնեսիոս Ա-ղիկառնացի՝ ՚ի նմին բառէ ծագումն տան անուանակոչութեանն. քանզի և նորո-գութիւն կամրջացն գործ էր քահանայից. իբրև զի և ամենայն գետք առ նոսա նուի-րականք էին։

2. Քանզի Pax, ՚ի լտ. է՝ Խաղաղութիւն։

3. Քանզի Salio, ՚ի լտ. է՝ Ոստնուլ-վազել։

4. Տեսակ է այս կաքաւու վառելոցն ՚ի զէն և ՚ի զարդ՝ զոր ուսոյց Պիւղրոս։

5. Առհասարակ այս ծածկաբանու-թիւնք խորհրդաւորք են և հրահանգիչք. քանզի առաջինն ազդ առնէ՝ փախչել ՚ի դատարկութենէ։ Երկրորդն՝ մի ևս քան ևս դրգռել զայր սրտմտեալ։ Երրորդն՝ անյեղ-լի կալ ճնալ ՚ի խորհուրդն, այլովքն հան-դերձ։

6. Μαίνη. Մէնի. անուն ձկան, զոր առ-վորէին զոհել Աբրահամեայ։

7. Ա՛յսինքն. December. իսկ Տէ՛ր, ՚ի լտ. է՝ Տան։

8. Ա՛յս է՝ լեզուն Հռոմայեցւոց, որք զբանալն և զփեթթիլ, Aperio, ասեն։

9. Քանզի ըստ Հռոմայեցւոց՝ Հերմէան է Mercurius։

10. Զհերայ դիցուհին, Հռովմայեցիք կոչեն Iuno։

ՊԼՈՒՏԱՐՓԵԱՅ

ՋՈՒԳԱԿՇԻՌՔ

ՍՈՂՈՆԻ

ԵՒ

ՊՈՊՂԻԿՈՂԵԱՅ

ՍՈՂՈՆ

ՅՈՒԴԻՄՈՍ Գրամատիկոս՝ ի մատենագրութեան իւրում՝ ի տախտակս օրինացն Սողոնի առ Ակղեպիադէս, բանս՝ ի մէջ առնու զփիլոկղեայ ուրուանն՝ որ հայր Սողոնիասէ զնա վիրոլոն ընդդէմ կարծեաց այլոց ամենեցուն՝ որ միանգամ խօսեցան վասն Սողոնի: Քանզի առհասարակ ամենեքեան միաբան ծնունդ ասեն զնա եքսեկեստիդեայ, այր միջակային գոյութք և իշխանութեամբ՝ ի մէջ քաղաքացեաց իւրոց՝ որպէս ասեն. այլ ըստ ազգատոհմին՝ ի նախասպատիս զարմէ, անդատին առ՝ ի կոդրոսէ ունելով զձեռն: Իսկ մայր Սողոնի՝ որպէս պատմէ Հերակղիդէս Պոնտացի, էր դուստր քեռւոյն Պիսիադրատոսի: Եւ էր նոցա սէր բարեկամութեան մեծապէս ընդ միմեանս զառաջինն՝ ի պատճառս ազգակցութեանն, միանգամայն և գեղե-

ցիկ բուսոյ բարուցն և գեղոյ կերպարանին Պիսիդրատեայ, յորոյ և 'ի սերն հարեալ ասեն ոմանք զՍողոն: Ուսոյն և զկնի՝ որպէս հաւանեալս եմ ասել՝ յորժամ 'ի վեգ գժաուքեան եկին նոքա ընդ միմեանս 'ի կարգաւորել անդ իւրեանց զքաղաքական նուիրիանն, ինչ մի խիստ և 'ի վայրենի կրից 'ի նեղքս ոչ քերին նոքա 'ի թշնամուքեանն իւրեանց. այլ նոյն կնիքք մեղմուքեանն կացին ճնացին տպացեալ 'ի հոգիս նոցա. և պահեցին վառ և բորբոք զսիրոյն զայն յիշատակն և զնորհն՝ անչէջ գոլով բոց մեծի հրատի:

Իսկ թէ ընդդէմ գեղոյ պատկերաց և սիրոյ չէր ինչ այնպէս հզօր ախոյեան Սողոն՝ իբրև գօտեկուիւ քաջ, ակնարկեն զայս և նորուն իսկ քերթուածք. առ այս՝ զի և օրէնս իւրն գրեաց նա՝ որով արգելու առն ծառայի մի օծանիլ իւղով և մի լինել մանկասէր. 'ի լաւաց մասին և յարգոյ պարապմանց՝ կարգելով զգործն զայն, և օրինակ իւրն՝ զարժանաւորսն յորդորելով 'ի նոյն, որպէս և զանարժանսն 'ի բաց քեցելով յայնմանէ: Բայց սակն եթէ և Պիսիդրատոս 'ի սէր հարեալ էր քարմոսի, և զգրօչեալ սիրոյն արբեաց նուիրեաց ԱՆկատեմեայ վայրին, ուրանօր զՀուրն վառեն՝ որ զնուիրական ղամբարն չըլեցուցանեն:

Ա՛րդ Սողոն՝ քանզի հայր նորա սպառեալ էր զդոյան 'ի մարդասէր ասպնջականուքիւնն և յառաջ հիւրամեծարուքիւնն՝ որպէս ասէ Երմիբոս, թէպէտ և

ոչ ամենայնեւաւ լինէր ի նպաստաւմատոյց բա-
րեկամացն, ի վերայ այսր՝ զամենի հա-
րեաւ առնուլ յօտարաց, զի էր իսկ նա ի
զարմէն՝ որ օտարաց նպաստաւմատոյց բնա-
ւորեաւ էր, եւ զանձն՝ մինչդեռ տակա-
ւին պատանի էր՝ ի գործ վաճառականու-
թեան : Թէպէտ և կէսք ասեն՝ եթէ մանա-
նդ ի պատճառս քաջափորձ կրթանաց
և բազմահմուտ պատմութեանց ընկալեալ
թագաւորեցաւ Սողոն, քան ի պատճառս
ընչաւէտութեան : Քանզի որպէս քաջա-
յայտ է, ի սէր հարեաւ էր նա խնաստու-
թեան· որ զի և ի ծերութեան պարար-
տութեան գոլով՝ ասէր, եթէ ցանդ շատ
ինչ ուսանելով ինքն՝ ծերանայ : Իսկ ընդ
հարստութիւն գոյից չէր նա զարմացեալ,
այլ և ասէր եւ՝ եթէ հաւասարապէս մե-
ծատուն է,

« 1 Որոյ բազում է արծաթ և ոսկի, և ան-
դաստանք և դաշտք յորենաբեր երկրի, և
երիվարք և կիսէշք· Եւ որոյ դարձեալ կա-
րևորքն միայն առ ձեռն կան, և որովայնին
և կողցն և ոտից սպասք հարկանին 2 : Եւ
են նորա որդիք և կին, յորժամ յաջողե-
ցեն նմա զայսոսիկ ժամանակն և արբունք
հասանիլն » : Սակայն և այլ ուրեք ևս ասէ·

« Ինչք սիրելի են ինձ, սակայն զանիրա-
ւութեամբ ժողովեալն չառնում յանձն·
քանզի դէնովին զկնի գայ պատուհաս » :
Բայց և քաջ իշխան է այր առաքինի և
քաղաքական, զի մի զաւելորդացն ստա-
ցումն չանիւս կուտեսցէ, և մի դարձեալ

զպէտս կարևորացն և զբաւականն արհամարհեցէ :

Ալ առ ժամանակաւքն այնոքիւք՝ ըստ որում գրեաց Հեսիոդոս՝ չէր անարդ ոչ մի ինչ գործ, և ոչ դարձեալ ինչ մի յաւրուանէ՝ առաւել գործէր զայր քան զընկեր իւր. իսկ վաճառականութիւնն էր գրեթէ խուվին և՝ ի փառաց մասին. քանզի յընտանութիւն կրթէր ընդ խուժդուժ ազինան, և զթագաւորաց բարեկամութիւնն յինքն յանկուցանէր. դարձեալ և իրաց բազմաց ներհունս և փորձս առադրէր : Նա զի և գոան ոմանք՝ ի վաճառականաց անուն, որք և քաղաքաց մեծաց հիմնադիրք եղեն. ըստ որում և Մէսսաղէայ կամ Մալսիլէայ քաղքին՝ Պրոտոս սիրով պաշտեցեալն՝ ի կեղտաց անուն՝ որք բնակեալքն էն առ Հռոդանոսիւ : Նաև զթագէսէ ասեն՝ եթէ վաճառականութիւն գործեաց. զնոյն արար և Հիպոկրատէս Մաթէմաթիկոս : Նաև Պղատոն ինքնին զպէտս պանդխտութեանն իւրոյ ընդայր՝ հանեալ՝ ի վաճառ ազգ ինչ իւղոյ յԵգիպտոս : Արդ՝ շուայլութիւնն Սողոնի առ՝ ի ծախան, և գրգռութիւն կենաց քաղաքավարութեան նորա, դարձեալ և բանս այնպիսիս խօսել նորա՝ ի քերթածս իւր վասն հեշտութեան՝ գժպատեհ առն իմաստասիրի. այս ամենայն որպէս կարծեն՝ ի վաճառական կենաց անուն նորա բնաւորեցաւ՝ ի նմա : Քանզի բազումն և մեծամեծս յինքն ունելով վաճառականութիւնն, ինդրէ ապա իւր փոխա-

բէն ափոփումթիւնս իմն և վայելս : Իսկ թէ Սողոն քան ՚ի մեծատանցն՝ առաւել ևս յաղքատաց կողմն հակամիտեալ էր , քաջայայտ է ՚ի բանից աստի նորա .

« Քանզի շատք ՚ի մեծատանց չարք են . իսկ աղքատք՝ բարիք : Ա՛յլ մեք ընդ նոսա ոչ փոխանակեացուք զառաքինութեն փարթամութիւնս . քանզի այս հաստատուն է : Իսկ զինչ՝ ՚ի մարդկանէ՝ է զի ժառանգէ մին , և է զի՝ միւսն » :

Բայց զառաջինն՝ քերթողութիւն ՚ի վեր առնոյր Սողոն ոչ յիրս արդոյս , այլ որպէս թուի՝ ընդ խաղս լինէ . և զբօսեցուցանէր ՚ի նոյն զանձն ՚ի պարապել իւրում : Ա՛յլ ապա նաև առածս իմաստասիրականս առեալ չափաբերեաց . և շատ լինէ ՚ի քաղաքական իւր գործոց առեալ հիւսեաց ՚ի քերթուածս իւր , ոչ ՚ի պատճառս պատմութեան և յիշատակի , այլ ՚ի ջատագովիւրոց գործոցն , միանգամայն և ՚ի յորդոր բարեաց և ՚ի խրատս . առ այս՝ և ՚ի կշտամբանս ընդդէմ Աթենացւոցն : Ա՛յլ են որք ասեն՝ եթէ և զօրէնս իւր ձեռն էարկ նա բացայայտել ՚ի տողս չափաբերեալս . և ասանդեն մեզ և զսկիզբն չափաբանութեանն , որ ունի օրինակ զայս .

Նախ կռնոսեան մեք աղբային
Ձօն աղօթից ձօնեացուք ,
Զի Օրինացս այս նաւթձեացէ
Ելոս բարեաց և ըզշուք :

Իսկ ՚ի բարոյական խնամատարութեան մասին՝ սիրեաց նա առաւել զքաղաքականն, ըստ որում և բազումք յիմաստնոց ժամանակին այնորիկ : Այլ ՚ի բնազննականին յոյժ հեռւակ էր նա և անհմուտ , ըստ որում յայնմի կայ ՚ի բանից աստի նորա .

« Յամբոց անսի գոյանայ ձեան զօրութիւն , գարձեալ և կարկուտ : Իսկ որոտն ՚ի շողշողուն լինի փայլականէ : ՚Ի հոլմոց ծով խռովեալ ամբոխի . բայց թէ զնա ոչ ինչ շարժեալ յուզէ , յայնժամ առաւել քան զամենայն ինչ հարթ հաւասար է նա »:

Եւ գլխովին իսկ՝ որպէս թուի՝ թաղէսի միայն իմաստութիւն յայնժամ՝ անդր քան զսովորութիւնն յառաջադէմ էր ՚ի ձեռն սեռական ճշնութեանցն . իսկ այլք ՚ի քաղաքական առաքինութենէ անսի զանուն իմաստութեն ժառանգեցին անձանց : Եւ պատմեն՝ եթէ ՚ի Դեղփիս երբեմն համագումար գան ՚ի միասին իմաստունքն . գարձեալ և ՚ի կորնթոս համախմբեալ կայր այլ ժողով նոցա ՚ի հայկերոյթ՝ ՚ի հրաւիրմանէ Պերիանդրեայ : Եւ անդ առաւել արգոյս և փառաւորս գործեաց զնոսա ետուն այնորիկ չքնաքերութիւնն՝ զոր պատուասիրաբար բարեկամութեամբ այր ընկերին տեղւ տուեալ՝ առեալ զայն յաճեցուցանէին նոքա և ընծայաբերեալ միմեանց լինէին : Քանզի ՚ի կով՝ որպէս ասեն՝ ՚ի քարշել երբեմն ձկնորսաց զուռկանան , անդանօր օտարք ոմանք՝ ՚ի Միլետեայ կանխեցին սակ արկին որոյ ձկանցն՝

մինչեւ էր տեսեալ նոցա . ապա ՚ի ձգել զգործին յանկարծակի գտաւ ՚ի նմա Եւռոտանի մի ոսկի . զոր ասեն արկեալ անդա- նօր Հեղինեայ ՚ի նաւել իւրում ՚ի Տրոյ- էոյ , յորժամ պատգամ մի վանինջուց յուշ եղև նմա : Իսկ իբրև զառաջինն վեցք և կռիւք յուզեցան ընդ օտարսն ընդ այնոսիկ և ընդ ձկնորսան վասն Եւռոտանւոյն , զկնի ապա և քաղաքք գլխովին միջամուխ լի- նէին ՚ի նոյն կռիւ , մինչեւ ՚ի մարտ պատե- րազմի գրգռել ընդ միմեանս , երկաքան- չիւր ևս կողմանց ազգ արար Պիւթիաս , զի որ առաւել իմաստնագոյն էր՝ նմա տացեն զԵւռոտանին : Եւ առաջին առաքեցին զայն առ Թաղէս ՚ի Միլետոն . քանզի մտադիւ- րագոյնս կռվացիք նմա միայնոյ ընծայէին զայն ինչ՝ որ աղագաւ մարտ եղեալ կըռ- ուէին առհասարակ ընդ Միլետացւոց : Իսկ Թաղէս՝ իմաստնագոյն քան զինքն ասելով զԲիաս , առաքեաց առ նա զԵւռոտանին : Բայց և ՚ի նմանէ առ այլ ոք առաքեցաւ՝ իբրև առ իմաստուն ոք առաւել : Եւ ապա զայս օրինակ շուրջ եկեալ և ՚ի միոյն ՚ի միւսն առաքեալ , միւսանգամ եկեալ ժամանեաց առ Թաղէս : Եւ հուսկ ապա ՚ի Միլետեայ ածեալ Եւռոտանին ՚ի Թեբա , սրբեալ նուի- րեցաւ Ամենեւսեան Ապողոնի : Իսկ Թէո- փրաստէս ասէ՝ եթէ առաջին առ Բիաս առաքեցաւ Եւռոտանին ՚ի Բրիւնէ . և եր- կրորդ՝ առ Թաղէս առեալ յղեաց զայն Բիաս ՚ի Միլետոն : Եւ այնպէս ապա շուրջ յածեալ առ ամենեսեան՝ միւսանգամ ե-

կեալ եհաս առ Բիաս. և ապա ուրեմն արձակեցաւ ի Դելփիս: Արդ զայս այսպէս ի մատենագրաց բազմագոյնք հռչակ հարկանեն. սակայն և կէսք ասեն՝ եթէ փոխան Եռոտանւոյն, Փիւլա՝ այն է՝ Աման ապակի առաքեցաւ յընծայ ի Կրեստոսէ ի Դելփիս. իսկ կէսք դարձեալ ասեն՝ եթէ բաժակ մի առեալ եթող անդանօր Բաթիւկղէս:

Իսկ զԸնաքարսեայ զառանձին մտերմութեանն առ Սողոն, դարձեալ և զթաղէսին զառ նա կենակցութեանն և զխօսան՝ աւանգեն օրինակ զայս: Ասեն՝ եթէ Ընաքարսիս եկեալ եհաս յԱթէնս, և դեմ եգեալ ի տուն Սողոնի, բաղխեաց զդուռնն, և ասաց՝ եթէ այր օտար դոլով ինքն՝ անդր եկեալ հասեալ էջէ բարեկամութիւն և հիւրասիրութիւն հաստել ընդ նմա: Իբրև պատասխանի արար նմա Սողոն զայս ինչ, եթէ "Առ տնին լաւ ևս է հաստել բարեկամութիւնս": Կրկնեաց առ նա Ընաքարսիս և ասէ. "Քաջ է՝ դու ինքնդ ուրեմն առ տնին գոլով՝ հաստեացես ընդ մեզ բարեկամութիւն և հիւրընկալութի": Հիացեալ զտրմացաւ Սողոն ընդ ուշիմութիւն մտաց առնն, և դեղեցիկ հիւրասիրարութեամբ առ ժողովեաց զնա, և ժամանակ ինչ ևս կալաւ զնա առ իւր, մինչ ինքն պատուհասեալ կայր յերես քաղաքին իւրոյ, և պարապեալ արձանագրեր զօրէնս իւր: Ընաքարսիս իրազեկ եղեալ այնմ, ծիծաղեր ընդ քէրան վաստակոց Սողոնի, իբրու

որ կարծէր գրովք ոմանք և տառիւք բառնալ բնաջինջ առնել զանիրաւութիւնս և զընչաքաղց ագահութիւնս զիւրոց քաղաքացւոցն : Զանգի " Ո՛չինչ ընդհատ են՝ ասէր՝ տառք օրինացդ յոտոյնկից սարդից . քանզի ըստ օրինակի ոտոյնկից՝ զսկարսն և զփանաքիան յորսոց՝ կալեալ վհակեն տառքդ այդոքիկ . բայց տպա ՚ի զօրաւորաց և ՚ի ճոխից աղարտեալք պատառին " : Ընդ այս պատասխանի զայս ինչ ասեն տուեալ Սողոնի , եթէ և զուխտ դաշանց իւրեանց պահեն մարդիկ առ միմեանս , յորժամ և ոչ միւսք ոմեք ՚ի նոցանէ օգտաշահ իցէ զանցանել զպայմանօքն զայնոքիւք . և թէ՝ ինքն զօրէնսն այնպէս իմն յարդարեալ յօրինեացէ առ քաղաքացիսն իւր , որպէս զի և զամենեսեան առհասարակ քաջիկ խելամուտ առնել՝ եթէ լաւ ևս է նոցա իրաւադործէն քան զօրինազանցութիւնն : Այլ սակայն էլք իրացն պատահէցին յաւէտ ըստ խմաստնախոհութեանն Աննաքարսեայ , քան ըստ յուսոյ ակնկալութեանն Սողոնի : Եւ զայս ևս ասէր յայնժամ Աննաքարսիս՝ ՚ի լինել իւրում երջեցն յատեանս ժողովոց , եթէ " Զարմացեալ եմ՝ զի առ Հելլենացիս իմաստունքն ատենախօսեն , և անուսմունքն դատեն " :

Իակ յորժամ ՚ի Միլետոն չորաւ Սողոն առ Թաղէս , զարմացեալ հիանայր Սողոն՝ զի զհարատեւեօք զամուսնութեամբ և զզաւակարարութեամբ գլխովին անփոյթ առներեալ էր Թաղէս : Ընդհանօր Թաղէս առ

ժամն լռեաց և չասաց ինչ ամենևին. եթող ապա անցանել՝ ի վերայ աւուրց սակաւուց, և զայր մի օտարական՝ ի մէջ առեալ՝ տայր բան՝ ի բերան նորա ասել, իբրու եթէ այն ինչ ահա այս տասներորդ օր՝ եկեալ հասեալ էիցէ նա ԱՆԹԵՆայ: Իբրև հարցանել սկսաւ Սողոն յայրն, եթէ զինչ նոր կայցէ լուր ԱՆԹԷՆա: "Նա խրատեալ յառաջագոյն՝ զոր պարտն էր ասել, էառ պատասխանի, եթէ " Ձինք ինչ այլ բայց՝ ճն և ճն՝ զի պատանի ոմն բարձեալ բերէր՝ ի դաշտայն, և յուզարկաւոր նմա էր առհասարակ քաղաքն. քանզի որդի էր՝ որպէս ասէին՝ առն որ փառաւոր՝ ի մէջ քաղաքայնոցն իւրոց և առաքինութեամբ արդոյ՝ ի նոսա. և չէ աստ ասէին՝ այրն, այլ բազում ժամանակք են՝ յորմէ հետէ՝ ի պանդխտութեան չըլլի նա ,,:

" Բաբէ բաբէ ապերջանիկ առն ", գոչէր Սողոն: " Ա՛յլ զինչ անուն կարդային նմա ": Ասէ այրն, " Զանունն լուեալ է իմ, այլ արդ մոռացօնք եղեն ինձ. սակայն և բանիւք բազմօք Հուլակ հարկանէին զմատուցութիւն զառնն և զարդարութիւն ": Եւ այսպէս ապա առ մէն մի՝ ի պատասխանեաց առնն՝ խէթ երկիւղին երթալով էր. Թայր և աՃէր՝ ի Սողոն. Հուլակ ապա խոստեալ ամբոխեալ՝ ի հոգին, ինքնին Սողոն յոյժ զանունն աՃեալ օտարականին այնմիկ՝ հարցանէր, եթէ " Արդեօք Սողոնի որդի կոչէին զմեռեալն ". իբրև անգէն կրկնեաց այրն, Ա՛յ, յայնժամ յարու-

ցեալ տագնապաւ Սողոն՝ զդլուխ իւր ա-
ռեալ հարկանէր, և զայլն ևս ամենայն առ-
նէր անդ և ասէր և կոծէր՝ զոր միանգամ
՚ի դէպ լեցէ գործել սաստիկ ցաւագնեալոցն
անձանց: Յայնժամ Թաղէս զձեռանէն կա-
լեալ Սողոնի և զծաղուս եկեալ՝ ասէ. "Ա-
դոքիկ աւադիկ զիս, ո՛վ Սողոն, հրաժարե-
ցուցին միանգամայն ՚ի հարսանեաց և ՚ի
զաւակագործութենէ. ոչք և զքեզ ինքնին
դլխովին ահա սրտաւուչ սրտաբեկ արա-
րին զայր հզօր և հաստահարուստ: Սակայն
արի դու և քաջալերեա՛ց ՚ի բանսդ յայդո-
սիկ, զի սուտք են և չեն ճշմարիտ": Ար-
դ զայսոսիկ՝ ըստ որում ասէ Հերմիոքրոս՝
պատմագրէ մեզ Պատէքոս, այն՝ որ ասէր
զանձնէն, եթէ՝ Ջհոգին ոնիմ էս ղեով
պոին:

Ա՛յլ սակայն գժպատեհ արդեօք ոք ի-
ցէ և այր վատասիրտ նա՝ որ առ ահի կորըս-
տեանն յուշացեալ լեցէ ստանալ զայն ինչ
իրս՝ որոց միանգամ պէտս ունիցի: Քան-
զի այսպէս ուրեմն և ո՛չ զմեծութիւն և ո՛չ
զփառս և ո՛չ զնմաստութիւն դարձեալ սի-
րեսցէ ոք ՚ի ժառանգել իւրում զայնոսիկ՝
զանգիտեալ յերկիւղէ անբաժ մնալոյ առ ՚ի
նոցանէն: Եւ քանզի և զառաքինութիւնն
ինքնին դլխովին, ոյր չիք ինչ քան զատա-
ցումն՝ վեհագոյն առաւել և յաւէտ հե-
տասալի, տեսանեմք մեք բազում անգամ
նուազեալ և խաթարեալ ՚ի կրից խօթու-
թեանց և ՚ի դեղոց թունից: Եւ նմին իսկ
Թաղէսի ամուրի կեանք նորա չէր ինչ ար-

դեօք զօրավիգն յապահովութիւն նորա, թէ չէր նորա գլխովին՝ ի բաց հրաժարեալ՝ չունել միանգամայն ո՛չ բարեկամն անգամ և ո՛չ ընտանիս և ո՛չ դարձեալ հայրենի դասու: Ալ նա աւանիկ և զաւակ յորդեգիրս ընկալաւ անձին զկիւբիսեթոս զքեռորդին իւր՝ որպէս ասեն: Քանզի հոգիս այս մեր տնկակից իւր ունի զսիրողականն, և որպէս բնաւորեցաւ նա զգալ և խորհել և յիշել, սապէս և սիրել. և որք միանգամ չունին ինչ անձանց բուն և սեպհական, այնպիսիքն բնաւորեցան միտել և յօժարել յարտաքինն անդր. և զոյսինակ տուն և անդաստան ամայի՝ ի հարազատան ճնացեալ ժառանգաց, սապէս և գորով սրտի մերոյ՝ սպասարկութիւն ընդունի յօտարաց ոմանց և յանհարազատից, որք սիրացեալ նմա և ընդ ձեռամբ դրաւեալ, միանգամայն ընդ սիրոյն և զտաղտապանս հոգոյն և զևէթ երկիւղին վասն նոցա՝ ի նեղքս բերեն նմա: Որպէս զի և դէպ լինիցի քեզ տեսանել ըզմարդիկ՝ որ վերհագոյն քան զընութեան կերան՝ քանս՝ ի մէջ առեալ ճոխաբար ճառեացեն յաղագս հարսանեաց և ծննդեան զաւակաց, այլ ապա նոքին դարձեալ՝ ի վերայ որդւոց ընտրծնացն իւրեանց կամ ծննդոց հարձիցն՝ որ՝ ի խօթութիւն անկանիցին կամ զախտ մահու ջերանիցին, հիւծեալք նուաղեացեն առ՝ ի ցանկութենէն, և ձայնս իմն կանացս և անդրհական յոգւոց հանիցեն: Է՛ զի՝ ոմանք և՝ ի սառակել շանց իւրեանց և երիվարաց գժապա-

տեհա և անկենդան կենօք սուգ առին ՚ի պատճառս Թաղծութեանն : Սակայն և այլք ՚ի մարդկանէ զերկ ՚ի քաջաց ճնացեալ և յառաքինի զաւակաց, ոչինչ կրեցին ՚ի դժնդակացն. և ինչ մի ՚ի դժպատեհիցն չարարին նոքա, այլ և ՚ի նշխարեալ կեանս իւրեանց քաղաքավարեցան մեծապէս իմաստութեամբ : Քանզի տկարութիւնն է և ոչ սէր մեերմութեանն, որ Թաղծութիւնս անսահմանս և արհաւիրս երկիւղի ՚ի նեղս ածէ մարդկանն՝ որք ՚ի դէպս արկածիցն չկրեն հրահանգեալք առ ՚ի բանէն. որք և ոչ ՚ի վայելն անգամ դիտիցեն այնպիսիքն վայելել ցանկացեալ բարւոյն՝ զոր ունին. քանզի հանդերձելոյ Թաղծութեանն ցաւք և խէթ արհաւրացն և անձկութիւն սրտին՝ թէ գուցէ յանկարծ կորուսցեն, ցանգ պատեալ պաշարէ զնոսա : Ապա պարտ և արժան է ոչ յաղքատութեան կալ և տուայտիլ՝ առ ահի չընչիցն կապտելոյ, և ոչ դարձեալ յանբարեկամութեան կալ ճնալ՝ առ երկիւղի ՚ի բարեկամացն անբաժ մնալոյ, և ոչ դարձեալ յանզաւակութեան՝ առ ահի մահու զաւակացն, այլ յամենայնի քաղաքավարել բանիւ և հանճարով : Բայց այսոքիկ ըստ առաջնկայիցդ՝ Թերևս առաւելագոյն էղեն քան զբաւականն :

Ա՛յլ քանզի երկարաժամանակեայ և դժնդակ մարտ պատերազմի՝ Ալթենայ քաղաքացիքն տուեալ ընդ Մեգարացւոց վասն կղզւոյն Սաղամինացւոց, յոգիս ապաստան վաստակաբեկ խոնջեալ էին, վասն որոյ և

օրէնս սահմանեցին յայնժամ ՚ի տուգանս մահու պատուհասի՝ զի մի ոք ամենևին ինչ մի ՚ի դրի հարցէ, և մի ինչ ամենևին առաց- ցէ ոք այնուհետև՝ եթէ առնուլ դրաւել զԱթաղամինս պէտք իցեն քաղաքին Ա- թենայ: Բայց Սողոն կարի դժկամակութեամբ բերեալ ընդ անփառունակ կիրսն, և տե- սեալ ևս զբազումս ՚ի պատանեաց հետա- մուտս գրգռելոց մարտին, այլ իշխեին ոչ ձեռնամուխ դիմագրաւ լինել առ ահի օրի- նացն, կեղծաւորեցաւ Սողոն խելագարու- թիւն մտաց, և հուչակ՚ի տանէն իւրմէ հար կանէր ընդ քաղաքն ողջոյն՝ եթէ մոլեգնե- ցաւ Սողոն: Իակ ինքն գաղտ ՚ի ծածուկ նստաւ՝ ողբերգութիւն մի հիւսեաց յար- մարեաց, և սերտեալ ՚ի միտս՝ զի ՚ի բերան բառական իցէ ասել, յանկարծակի ՚ի տա- նէն ՚ի դուրս վազեաց ՚ի հրապարակ անդր՝ արտահուրակ ՚ի գլուխն: Իբրև խուժան բազում ժողովրդեան խառնեալ կայր, նա դիմեաց եւ ՚ի վերայ բարձու վիմի Մու- նետիացն, և նուագ առեալ այնպէս քա- րող կարդայր նոցա զՈղբերգութիւնն, ո- րոյ էր սկիզբն օրինակ զայս.

Քարող ես ինքն ՚ի փարեզին
Սալամինոյ գամ արագ,
Եւ գեղեցիկ զարդ քերթուածոց
Հրապարակիս տամ նըւագ:

Եւ այս քերթուած մակագրեալ յորջոր- ջեցաւ՝ Սալամին. և են ՚ի նմա տողք հա- րիւրք քերթեալք առհասարակ յոյժ գե-

ղեցիկ և լի շնորհօք : Իբրև աւարտեաց Սո-
ղոն զնուագն իւր , յայնժամ բարեկամք
Սողոնի սկսան 'ի գովութիւն առնուլ դըր-
ուատել. անդ առաւել ինն և Պիսիդրա-
տոս յորդորէր խրախուսէր զքաղաքացիան
անսալ բանից քերթուածոյն : Ապա միա-
բան լուծին բարձին զօրէնսն զայն , և դար-
ձեալ միաւանգամ ձեռնամուխ լինէին 'ի
կռիւ մարտին՝ զօրաւար 'ի վերայ կացու-
ցեալ զՍողոն :

Ա՛րդ որ լինչ յընդհանուրս հռչակ հա-
րեալ է վասն իրացս այսոցիկ՝ այսպիսի լինչ
է. Եթէ նաւարկեալ Սողոնի 'ի Կողխադ
'ի միասին ընդ Պիսիդրատեայ , և անգա-
նօր տեսեալ՝ զի առհասարակ ամենայն կա-
նայք ելեալք՝ զհայրենասանդ զիւրեանց
զոհն կատարէին Դեմետրեայ , առեալ ար-
ձակեաց այր մի հաւատարիմ յիւրոց անտի
'ի Սաղամինա՝ կեղծաւորեալ լուին իբրև
ինքնակամ վախճառեայ , ազդ առնել ստի-
պաւ Մեգարացւոց՝ զի թէ կամք իցեն նոցա
զԱթենացւոց զբարձերէց տիկնայսն գրա-
ւել անձանց , անդէն վաղվաղակի ընդ նմա
նաւարկեալք խաղացեն 'ի Կողխադ : Իսկ
իբրև Մեգարացիք հաւատացին բանիցն ,
առեալ արս արձակեցին 'ի նաւ անդր : Ընդ-
դուստ Սողոն դէտսակն կալեալ ետես՝ զի
արձակեալ մեկնեցաւ նաւն 'ի կղզւոյ ան-
սի , հրաման ետ կանանցն մեկնիլ 'ի վայ-
րացն . իսկ պատանեացն՝ որոց չև էր տեգք
մօրուացն բուսեալ՝ պատուէր ետ արկա-
նել զանձամբ զհանդերձս կանանցն և ըզ-

զարդս գլխոյն և զկօշիկան, և առնուլ ընդ իւրեանս զդաշնական ծածուկս, և խաղալ և պարս պարել առ ծովուն, մինչև Թշնամիք իջանիցեն 'ի ցամաք անդր, և զնաւն լքեալ Թողուցուն 'ի ձեռս իւրեանց: Եւ այսպէս ապա մինչդեռ նոքա զպարն պարէին, հասեալ Մեգարացւոց և խաբեալք 'ի կերպարանաց անտի նոցա, և մերձ եղեալք առ նոսա՝ վազեցին 'ի դուրս 'ի նաւոյ, և այր զարամբ եղեալք գիմեին իւրև 'ի վերայ կանանց ոմանց. և այսպէս զերծաւ և ոչ ոք 'ի նոցանէ, այլ առհասարակ ճաչեցան 'ի սուր սուսերի: Եւ նաւեալք Աթենայեցոց վազվազակի կալան զկղզին:

Իսկ այլք ոմանք ասեն՝ եթէ ոչ օրինակ զայս տիրեցին նոքա կղզւոյն. այլ Թէ յառաջագոյն պատգամ 'ի Դելփիս տուեալ էր Սողոնի Ապողոն, այսպիսի ինչ.

" Ձիշխանս գաւառին զբունա՝ զդիւցազունան զոհիւք հաշտ արա՛, զորս ծոցն Ասովպեան ընդ հողով գանձեալ պահէ, և որք 'ի մահ տարածեալք՝ զերեսս 'ի մուտս կոյս ունիլն արձուն ,, :

Վասն որոյ և Սողոն նաւարկեալ գիշերի 'ի կղզին յայն, յազեաց պատրուճակս Պերիփիմեայ և Փիքրեայ դիւցազանցն. և ապա առեալ ընդ իւր յԱթենացւոց անտի ինքնակամ նահատակեալս՝ Թուով հինգ հարիւր, և կարգեաց հրովարտակ՝ զի եթէ զկղզին զայն կալցեն ընդ բռամբ, նոքին ելցին տեառնք և իշխանք քաղաքին Սալամինացւոց: Եւ ինքն անկաւ յուղի հան-

դերձ բազում նաւակօք ձկնորսաց՝ առեալ ընդ իւր և նաւ մի Էրեսնաթի. և մերձ եղեալ ի Սաղամինա՝ անդ ի նաւակայան զետղի կալաւ առ հրուանդանին՝ որ հայէր յԵւբիա։ Իրազգած Մեգարացւոցն եղեալ որ ի Սաղամինա՝ ի համբաւոյ իմեմ նէ ոչինչ հաստատութեամբ, ինքեանք ամբոխեալք առհասարակ ի զէն վոխեցան. և նաւ մի ևս առեալ լրտեսութեամբ արձակեցին առ Թշնամիս անդր։ Իբրև մօտ առ Աթենացիան եհաս, ի վերայ դիմեալ տիրեաց նմա Սողոն, և զՄեգարացիսն վարեալ ի գերութիւն, եւ ամբաւնալ ի նաւն արս կորովիս յԱթենացւոց իւրոց. հրաման տուեալ նոցա նաւել դիմել ի վերայ քաղաքին, սակայն յոյժ թաքթաքուր՝ որչափ և ձեռնհասն էին։ Եւ ինքն ընդ իւր առեալ զայլս յԱթենացւոցն՝ խաղայր հետի մարտ պատերազմի դնել ընդ Մեգարացւոցն։ Իբրև մարտն խառնեցաւ, կանխեցին փութացան ոքք միանգամ ի նաւին կային, և առին զքաղաքն։ Եւ Թուի Թէ՝ ճշմարտութեան պատմութեանն վկայեն և ցոյցք սովորութեան նոցա. քանզի նախ առաջին նաւ մի ատտիկեցի յառաջադէմ խաղացեալ նաւէ լուռ անշշունչ. իսկ ապա ի յարձակեն և ի դիմել գոռալով և մեծ աղաղակաւ, այր մի սպառազէն ի դուրս վազեալ մեծագոչ ձայնիւ ընթանայ դէմ եդեալ ի բարձրաւանդակն Սկիրադիոն՝ ընդդէմ խաղացելոցն ի ցամաքէն։

Բայց մերձ տեղւոյն տաճար Աբեսի

կանգնեալ կայ ի Սողոնէ, քանզի վանեալ պարտեաց զՄեգարացիս. և ոչք միանգամ տապաստ չանկան ի կռուվին, ուխտ եդեալ ընդ նոսա՝ առհասարակ արձակեաց ի խաղաղութիւն: Այլ սակայն Մեգարացիք ի նոյն միտս կացեալ մնացեալ, շատ ինչ ջարիս միանգամայն և գործեցին ի մարտի պատերազմի և կրեցին. մինչև ապա ուրեմն միաբան զՀակեդեմոնացիսն կարգել հաշտարարս և դատաւորս ի կռուվին իւրեանց: Արդ բազումք այն են՝ որ ասեն եթէ փառք համբաւոյն Հոմերեայ նպաստս մեծապէս եղև կողմանն Սողոնի: Քանզի տողս ի ներքս սպրդեցուցեալ Սողոն ի նաւահաշիւ անդր Հոմերոսի, յաւելն դատաստանի առեալ վերծանեաց օրինակ զայս.

Ածէր Այաս Սալամինոյ
Նաւս երկոտասան ի կարգին,
Եբեր կացոյց՝ յոր վայր փալանգք
Աթենացւոց դարձին 3:

Այլ նոքին իսկ Աթենացիք յումպէտս գրեն զայսոսիկ. և ասեն ևս՝ եթէ Սողոն յայտ յանդիմանութեամբ եցոյց անդանօր դատաւորացն, եթէ Փիլէոս և Եւրիսակէս որդիք Այասայ՝ գրեալք ի քաղաքացիս Աթենացւոց՝ ետուն զկղզին ի ձեռս նոցա. և ինքեանք եկեալ բնակեցան՝ մին ի Բրաւրոն Ատտիկոյ, իսկ միւսն՝ ի Սալամինա: Եւ ժողովուրդք Փիլէսացւոց յորջորջեցան ի Փիլէոսէ, ուստի էր և Պիսիստրատոս: Ասեն գարձեալ՝ եթէ Սողոն առ ի

քաջիկ խելամուտ առնել և զՄեդարացին, զորաւոր փառս ի ներքս եբեր և զմեռելոցն Թաղումն. քանզի Սաղամինացիք ոչ իբրև զՄեդարացին Թաղեն զվախճանեալս իւրեանց, այլ իբրև զԱթենացին. քանզի Մեդարացիք Թաղեն դարձուցեալ յարևելս կոյս զմեռեալս. իսկ աԹենացիք՝ յարևմուտս կոյս: Սակայն Երաս Մեդացի զդէմ կալեալ Սողոնի, ասէր ԷԹէ և Մեդարացիք ինքնին յարևմուտս կոյս դարձուցեալք զդիակունսն՝ այնպէս Թաղեն: Ա՛ւ այս դարձեալ՝ և որ մեծ ևս է, այր այր յԱԹենացւոց ունի իւր առանձին դիր հանգստեան: Իսկ Մեդարացիք վերիս ի միասին և զտրս՝ հանգուցանեն ի միում գերեզմանի: Ա՛յլ Սողոնի կողմանն զօրավիդն օգնականութեան ետուն և պատգամք ինչ ՊիւԹեանք, յորս Ապոլոն՝ Յոնիա յորջորջեր զԱալամինա: Իսկ զգաստաստան զայս գատեցան յայնժամ ի Սպարտայւոց անոի արք հինգ՝ Կրիտողեդաս, Ամոմփարետոս, Իպսեքիդաս, Անագսիլաս, և Կղէոմենէս:

Ա՛րդ և վասն այսոցիկ ամենայնի յոյժ փառաւոր գտաւ Սողոն և արգոյ. իսկ մեծապէս յայնժամ սքանչացաւ նա և զհամբաւի հարաւ առ Հելլենացիս, յորժամ վասն տաճարին որ ի Դելփիս՝ քարոզ կարգայր, ԷԹէ պարտ և արժան է յօգնութիւն հասանել նմա և մի Թողուլ լքանել այնպէս ի ձեռս կիրրացւոցն Թշնամանել ըզԴաբիրն զայն. այլ պաշտպան և զօրավիդն

լինել Դեղփեայ ՚ի պատիւ երեսաց աստուածոյն : Վասնզի ՚ի բանից անտի Սողոնի խելամուտ եղեալ Ամփիկտիոնքն 4, յորդորեալք իրախուսեցան ՚ի կռիւ, ըստ որում ընդ այլոց ոմանց վկայէ և Արիստոտէլ ինքնին ՚ի ցուցակի անդ իւրում յաղագս յաղթականացն Պիւթեանց, յորում զՍողոն գլխովին ասէ լինել պատճառք եղեայ իրացն : Սակայն մարտի պատերազմիս այսորիկ զօրավար ոչ կարգեցաւ Սողոն՝ որպէս աւանդէ Եւսաննէս Սամոսացի՝ ըստ Էփիպոսի : Վասնզի և ոչ Եպքինէս հռետոր ասէ ինչ զայս. դարձեալ և ՚ի յիշատակարանն Դեղփացւոց արձանագրի Աթենացւոց զօրավար Աղկմէոն, և ոչ Սողոն:

Այլ քաղաքն Աթենացւոց անդստին ՚ի բաղում ժամանակաց ամբոխեալ յուզեր յերեսաց կիւղոնեան մեծելեռն չաղեաց. յորմէ հետէ դաշնաւորքն կիւղովնի յողոք անկեալ առ Աթենաս, ած հասանեցոյց զնոսա Մեղակղէս իշխանապետ գալ յանդիման լինել առեղի գառաստոսանի : Իսկ նոքա թեւ ոլորեալ կապեցին ՚ի գրօշեալ արձանին Աթենասայ, և զնոյն կալեալք ՚ի ձեռին՝ իբրև եկին հասին ՚ի տաճար անդր արդոյ գիցուհեացն, անդ ինքնին խզեալ կտրեցաւ առաղանին. յայնժամ Մեղակղէս և իշխանակիցք նորա դիմեցին ՚ի վերայ, եդեալ ՚ի մոլ՝ եթէ զչխնդրուածս նոցա մերժեաց Աթենաս. և որք միանգամ ՚ի նոցանէն արտաքոյ գտան տաճարին՝ զնոսա քարկոծ արարին. իսկ

ղորս ի նեղքս անդ ի բագինան խուռն ա-
պաւինեալքն էին՝ խողխողեցին: Բայց ան-
դանօր իննայեցին միայն՝ յորս միանգամ ըզ-
կանայս նոցա աղաչաւոր կալան վասն ան-
ձանց. և յայսմանէ ապա կոչեցան նոքա
անսուրբք և նզովեալք և ատելիք: Ա՛յլ սա-
կայն որք միանգամ ճնացին կենդանիք ի
Կիւղոնեանց անտի, դարձեալ վերստին զօ-
րացան, և հերձուածս յարուցանէին ցանդ
ընդդէմ Մեղակղեանցն: Իսկ իբրև աղմուկ
հերձուածոյն երթալով երթայր և զայրա-
նայր, և ժողովուրդն երկպառակ էր առ-
հասարակ, Սողոն՝ որ փառաւոր իսկ էր առ
նոսա և ականաւոր, եկն եկաց և արձանա-
գաւ ի մէջ հանդերձ լաւ որերուէն Ա-
նացւոց, և յաղերս խնդրուածոյ և ի խրա-
տս վարդապետութեան ած հաւանեցոյց
զնզովեալսն զայնոսիկ և զանաւրէնն՝ ա-
ռեան յանձն առնուլ և հպատակիլ զան-
ձինս ի նեղքոյ դառնաստանի երից հարիւ-
րոց արանց աւագաց: Անդ ապա ի Միւ-
ռոնէ փղիւացւոյ դառնախառնեալք և դա-
տապարտեալք՝ ձեռն եառն հաւանու-
թեան արքն. որք կենդանիքն էին ի նոսա՝
յաքսորս արտասահման արարին, և որ մե-
ռեալքն էին՝ զնոցա դիակունսն բրեալք ի
հողոյ՝ գէշ արկին արտաքոյ սահմանաց իւ-
րեանց: Բայց յաղմուկս խռովութեանցս
այսոցիկ՝ անդուստ և Մեգարացիք հրոսակ
հանեալ, զնախեաս քաղաք հանին ի ձե-
ռաց Ա՛թենացւոցն, և միւսանգամ հալա-
ծեալ վարեցին զնոսա ի Սաղամինոյ:

Յայնժամ և արհաւիրք երկիւղի առ ի անապաշտութենէն, միանդամայն և ցնորք խօլականք գրաւեալ կալան զքաղաքն. անդաստ և գէտք և կիւսք՝ ազդ և հռչակ հարկանէին, եթէ ի զոհս նուիրացն յայտ յանդիմանութեամբ երևութանան նոցա մեծ ելեն չարիք ի քաղաքին և պղծութիւնք՝ որոց քաւութեան պէտք լցեն: Եւ այսպէս սպա առեալ առաքեցին նոքա հրաւիրակս ի Կրետէ. և էկն ետես առ նոսա Եպիմենիդէս փեստիոս, զոր Եօթնեերորդ յիմաստունս Հելլենաց հաշուէն ոմանք՝ որք ոչն ի նոյն կարգ թուէն զՊերիանդրոս: Եւ էր Եպիմենիդէս ի համբաւի՝ իբրև այր աստուածասէր և հանճարեղ ներհուն յաստուածայինն, հոգեշունչ իմն ազդմանց և խորհրդակատարն լմաստութեան ոմնակ: Վասն որոյ և Յաւերժահարսինն Բաղտեայ զաւակ, և նոր կուրիտէս կարդային զնա մարդիկ ժամանակին այնորիկ: Ազդ եկեալ նա յԱթէնս և բարեկամութիւն սերտեալ ընդ Սողոնի, շատ ինչ կանխեաց օժանդակեաց նմա, և ճանապարհ նախաշաւիղ հորպեաց օրինադրութեանց նորա: Քանզի դիւրագինս յարդարեաց կազմեաց զծախս դիւցական պաշտամանց նոցա, և հանդարտս առաւէլ և պարկեշտս առադրեաց ըզնոսա ի կոծն և ի սուգն իւրեանց՝ զոհս խառնելով վաղվաղակի ի յուղարկաւորութիւնս անդ նոցա. և զխիստ և զխուժադուժ սովորոյթն եբարձ ի նոցանէ՝ զոր յառաջն ունէին բազմագոյնք ի կանանց

նոցա : Եւ որ մեծ ևան է, ՚ի հաշտարար քաւութիւնս և ՚ի սրբութիւնս և ՚ի նուէրս արձանաց՝ մաքրեաց և սրբեաց զքաղաքն, և արդարութեամբ օրինաց հպատակս և հնազանդս, և մեծապէս հեշտս և ամբոխ ՚ի համաշունչ միաբանութիւն կրթեաց զնոսա : Եւ պատմեն ևս՝ եթէ տեսեալ նորա զՄունիքիա, և դէտսն կալեալ ՚ի նա ժամանակս ձիգս՝ ասէր առ մերձակայսն . "Ջիարդ կոյր և զաչացու է մարդ առ հանդերձեալն : Քանզի իւրեանց իսկ աւուրս մամիք մալէին արդեօք Աթենացիք զդա, եթէ նախազգած լեալ էր նոցա՝ քանիօն վնաս և աղէտս հասուցանել հանդերձեալ է քաղաքիդ վայրդ այդ " : Նմանօրինակ և վասն Թաղէսի ասեն նախագուշակ լեալ : Քանզի պատուիրեր նա ՚ի մեռանել իւրում՝ Թաղել զնա ՚ի Միլետոն յումպէտ և յարհամարհ վայրի ուրեք . և նախապատուամ լինէր եթէ հրապարակ Միլետացւոց լինիցի երբեմն վայրդ այդ : Այլ Եպիմենիդես յաւէտ սքանչելի եղև առ նոսա . և այն ինչ պատուասիրէին Աթենացիք տալ ձօնել նմա պարգևս բազումս և պատիւս մեծամեծս, նա ոչինչ խնդրեալ ՚ի նոցանէ՝ բայց ընձիւղ մի ՚ի նուիրական ձիթենւոյ, և առեալ զնոյն՝ մեկնեցաւ ՚ի նոցանէ :

Իսկ Աթենա իբրև հանդարտեալ դադարեցաւ աղմուկ խռովութեանն կիւղոնեանց, և ըստ որում ասացաք՝ տարաստահման ելին անտի նզովեալքն, դարձեալ միւս անգամ ապա վաղնջուցն հերձուած երկ-

պատահեալ յուզեցաւ ՚ի նոսա. և որչափ
ինչ միանգամ վայրք տարբերեալք էին ՚ի
գաւառին յայնմիկ, ՚ի նոյնչափ մասունս
հերձեալ լինէր քաղաքն նոցա առհասա-
րակ: Քանզի Դիակրոնեանցն ազգ՝ այն են
լեռնականքն՝ մեծապէս զհետ միտեալ
էին ռամկապետութեանն. իսկ դաշտայ-
ինքն՝ աւագապետութեանն. իսկ երրորդքն
՚ի նոսա Ծովեզերեայքն՝ միջին և խառն
յերկոցունց խնդրէին քաղաքականութե-
կարգ, և խուռն և խոչընդոտան լինէին այ-
լոցն տիրապետութեան: Եւ էր ապա ՚ի
ժամանակին յայնմիկ ծայրայեղ անհաւա-
սարութիւն ընդ ալքասս և ընդ մեծա-
ատունս, և գլխովին դեղեալ մեծապէս յե-
րերի կայր քաղաքն ոչընդն. և թուէր լիմն
այնպէս՝ եթէ ալմուկ խուռվութեան քա-
ղաքին ոչինչ արդեօք յարդարեալ հանդար-
տեսցի՝ բայց ՚ի ձեռն միահեծան իշխանի:
Քանզի առհասարակ ռամկին պարտք մե-
ծամեծք էին առ մեծատունսն: Զի կամ
զերկիր մշակելով պարտ էր զվեցերորդն
հատուցանել նոցա զարմանեացն, ուստի և
կոչեցան նոքա Վէցաբաժինք և վարձուորք.
կամ թէ զպարսան առեալք ՚ի վերայ ո-
դոց իւրեանց՝ անձնատուր ոչընդն լինել ՚ի
պարտատէրսն. և այնպէս ասպա կիսոցն՝
՚ի սերկուվթեան ծառայութեան կալ մնալ,
և կիսոցն դարձեալ՝ ՚ի տարաշխարհիկս վա-
ճառիլ: Իսկ և շատք ՚ի նոցանէն բռնադա-
տեալք հարկաւորէին վաճառել զիւրեանց
իսկ զմանկունսն, քանզի և օրէնք և ոչ մի

ինչ արգելլոր զդործն, և զքաղաքն Թո-
ղուլ լքանել և փախչել ՚ի պատճառս ա-
նագորոյն բարոյից պարտաւորեարցն: Ա-
յլ բազմագոյնք ՚ի պարտապանաց անտի, և
որք առաւել հզօրք և կորովիք էին ՚ի նո-
սա, յուխտ դաշին մեին ընդ միմեանս և
զմիմեանս քաջալերեալք խրախուսէին՝ մի
այնպէս լքեալ կալ մնալ, այլ իշխան մի
ոտիկան ընտրել կարդել՝ զայր հաւատա-
րիմ. և ազատել փրկել զանաւագան ՚ի ժա-
մանակակէտ պարտուցն յայնցանէ, և զեր-
կիրն առհասարակ առնուլ բաշխել բա-
ժանել, և գլխովին իսկ զքաղաքականու-
թիւնն փոխել փոփոխել:

Ընդանօր ասէա որք միանգամ առաւել
հանճարեղքն էին յԱթենացւոց, քանիկ
խելամուտ եղեալ եթէ Սողոն միայն սուրբ
է առաւել և անմահն ՚ի յանցանաց. ոչ
մեծատանցն բաժանորդ ինչ է անիրաւու-
թեանն, և ոչ դարձեալ յաղմուկ աղքա-
տացն մնան և բաժին ինչ է նորա, յաղեր
անկանէին առ նա ձեռնամուխ լինել ՚ի հա-
սարակաց գործն, և դադարել հանդար-
տել զամբոխ խռովուբեանն: Թէպէտ և
փանիսա Լէսբացի պատմէ, եթէ ինքնին
Սողոն հնարիմաց գնացեալ ընդ երկաքան-
չիւր կողմանն ՚ի փրկութիւն քաղաքին,
աղքատացն խոստանայր ՚ի ծածուկ զբաշխն
և զբաժանումն. իսկ մեծատանցն զհաս-
տատութիւն պայմանաց դաշին նոցա: Ա-
յլ ինքն Սողոն վկայէ, եթէ զառաջինն յոյժ
դանդաղագոյնս յանձին կալաւ զիշխանու-

Թիւնն զայն. և համբուն՝ զանգիտեալ ևս էր նա յընչասիրութենէ մեծատանցն, և՛ի խեղութենէ աղքատացն: Ապա ընտրեալ կարգեցաւ իշխանապետ զինի Փիղոմբրոտեայ, միանգամայն և հաշտարար գատողս, և օրէնսդիր: Ոտադիւր յօժարութեամբ առին ընկալան զնա մեծատունք՝ իբրև զոմն յընչէզաց. իսկ աղքատք՝ իբրև զայր բարի և ղեաւ: Եւ ասեն ևս՝ եթէ և զբոյց մի յառածից Նորա յառաջագոյն ըզհամբաւի հարեալ էր առհասարակ այսպիսի լինչ, եթէ Հաւասարութիւնն ոչ ծնանի ղնութիւն: Էր ապա հեշտընկալ այս առած միանգամայն ընչէզացն և անընչից. քանզի կէսք ակն կալեալ յուսային զուգահաւասար լինել յիշխանութեան մասին և՛ի զօրութեան. և կէսք դարձեալ՝ՙի չափն և՛ի թիւն արարոց: Եւ այսպէս ապա մինչ երկաքանչիւր ևս նոքա մեծապէս յուսով իննգային, անդ աւագորեարն Թեկն ածէր Սողոնի, և Թեզադիր եղեալ վառէր բորբոքէր զնա՝ որ զիշխանութիւնն ունէր՝ի ձեռին, տէր լինել միահեծան, և քաջասիրտս մխիլ ճոխաբար՝ի գործ քաղաքին: Իսկ և բազումք՝ի քաղաքացնոցն՝ որ զմիջինն ուղնէին կոչին, Թէպէտ և տեսանէին ևս եթէ գործ գժուարին է և գժնդակ յոյժ փոփոխութիւն քաղաքին՝ի ձեռն փաստից բանից և օրինաց, ոչինչ յերկուացեալ վերջացան և նոքա ոստիկան՝ի վերայ կարդել գործոյն զայրն՝ որ առաւել արդարն էր՝ի նոսա և առաւել հանճարեղ: Բայց և կէսք

ասեն՝ եթէ և պատգամ մի գուշակեաց Սողոնի Պիւթիաս, օրինակ զայս.

Վերելակեալ ի մէջ նաւուդ
Արի սիվ քաջ բազմեաց դու,
Նիստ ղեկավար, յԱթենացւոց
Շատք քեզ լսցին ձեռընտու:

Իսկ առաւել ընտանիք նորա խոտէին զնա, եթէ յանուանէ բռնաւորութեան զանդիտեալ՝ ամաչէ առնուլ յանձն զինքնակալութիւնն. իբրու թէ առաքինութիւն առոյգն չիցէ բաւական ի գերեցիկ թագաւորութիւն փոխել զնոյն. ըստ որում և դէպք եղեն ի նախնուձն առ Եւբէացիսն՝ որք զՑիւննոնդաս, և արդ իսկ առ Միտիւլինացիսն՝ որք զՊիտտակոս ընտրեցին իւրեանց տէր միահեծան:

Այլ ոչ ինչ յայսպիսեաց ասոի ոչ դրդուեցոյց զՍողոն ի խորհրդոց անսալ նորա. այլ առ բարեկամն իւր՝ որպէս պատմեն՝ զայս արար պատասխանի. Վայր գէ ընծուի է փերուրիւն դահճեցան, այլ անցս է մի ոչ ոանի: Իսկ առ փոկոս օրինակ զայս դրեր ի տառս իւր.

"Իսկ եթէ ես, ասէ, ի հայրենին խնայեցի երկիր, և բռնաւորութիւն և անողոքելի բռնութիւն չառի ի ձեռին՝ պղծել և առակել զգեղեցիկ փառս իմ, ոչինչ ամաչեմ: Քանզի մանաւանդ զովին Թուի ինձ ի վերոյ լինել ամենայն մարդկան,,:

Յորմէ քաջայայտ է, եթէ Սողոն և միոչ չև օրինագիր լեալ՝ փառս մեծասէս ոունէր

առ մարդիկ : Իսկ զոր լինէ շատք ՚ի մարդկանէ հեգնեալք ծիծաղէին զնովաւ, և խօսէին ՚ի պատճառս հրաժարելոյն նորա ՚ի միահեծան տէրութենէն, լինքնին Սողոն քերթեաց զայնոսիկ՝ օրինակ զայս .

Ո՛չ խորհրդական չէ Սողոն,
Զի ո՛չ ձեռեաց զաստուածաձիրն
Յանձին ունել նա ըզձօն :
Զորսըն կալաւ, բայց և քարշել
Զուռկանն ըզմեծ ոչ ուժեաց,
՚Ի սիրան եղեալ իւր անարի,
Եւ դեղեալ ՚ի մըտաց :
Այլ օ՜ն թէ նա բաւէր երբէք
Զինչըս դրաւել անսահման,
Խաթենայեաց դոլ լինքնակալ,
Տիւնա և օր մի միայն .
Տիկ՝ օն և օն՝ ըզմորթ նորա
Արագ արագ հանէին,
Բնաջինջ ՚ի նոյն լինէր անշուշտ
Եւ ձեռ նորայն գըլխովին :

Զայսոսիկ վասն անձին իւրոյ խօսեալ՝ տայ ՚ի բերան խուժանին և անզգամաց մարդկանն : Այլ սակայն՝ թէպէտ և յանձն չէառ նա զինքնակալութիւնն, ՚ի վերայ այսր՝ և ոչ ծայրայեղ հեզութեամբ վարեցաւ ՚ի գործս պաշտաման իւրոյ, և ոչ մեղկագոյնս և չնթեղով ճոխից և զբաւտրաց, և ոչ գարձեալ ըստ քմացն՝ որոց ընտրեցինն զնա՝ կարդեաց եդ նա զօրէնս իւր : Այլ որ լինչ

միանգամ լաւն էր, այնմ գարման և ոչ մի ի վերայ ածէր, և ոչ նորուքիւն ի նեղքս խառնէր, զանդիտեալ՝ թէրևս գլխովին խառն ի խուռն շփոթեալ քաղաքին, ակա- րասցի նա այնուհետև միանգամ առ- նուլ հանդարտել և ի լաւագոյնս փոխել զնա: Իսկ որչափ լինչ միանգամ յուսայը բանիւք համոզակել զհնազանդեալսն իւր, կամ թէ հարկ ի վերայ ածել նոցա բա- ւական էր, ի նոյն ձեռնամուխ ձեռներէց լինէր. որպէս և լինքնին ասէր՝ զոյժ միան- գամայն և զարդարութիւն գէ ղեցիկս խառ- նելով ընդ միմեանս: Ուստի և յետ ժա- մանակաց հարցեալ Սողոն՝ եթէ արդեօք լաւագոյնս լինէ Աթենացւոց գրեաց նա զօ- րէնս, ետ պատասխանի. Լաւագոյնս, զոր դիանգամ նոքա յանձն առեալ ընկալցին:

Արդ որչափ լինէ նորագոյնքն ի մատե- նագրաց ասեն, եթէ Աթենացիք զդժպա- տեհութիւնս զերացն հեշտ և բաղձալի ձայ- նիւք և բառիւք քօղարկեալ՝ յաւագամե- ծար ի շուք զարդարեն, զբոզն՝ կոչելով Բաբելոնահիս. և զմանքն՝ Հոսս. և զվաշտս քաղաքաց՝ Պահապանս. և զբանտն՝ Բնակ- բան. անդուստ ի վերուստ՝ որպէս հաւա- նեալս եմ՝ Սողոնի էր այս ճարտարութեամբ գիւտ, որ զպարտուցն ջնջել՝ անուանեալ կոչեաց՝ Թևնաբէռնուրիան: Քանզի առա- ջին նա զայս գործեաց յօրինագրութեան իւրում, զի հաշուեգիրք պարտուց անվա- ւերք լինիցին. և յայնց ժամանակաց հե- տէ և առ յապայ մի ոք ամենևին վաշխես-

ցէ ՚ի վերայ մարմնոց : Թէպէտ և կէսք գրեն , ըստ որում և Անդրոտիոնն , եթէ ոչ սպառուցն գլխովին թողուածքեամբ , այլ տակաւին չափաւորութեամբ թեթևացան աղքատք . ուստի և մեծապէս սիրեցին զբանն , և գործ զայս մարդասիրութեան՝ թեթևաբեռնութիւն անուանեցին : Ադ այս՝ և զչափոցն աճելութիւն յաւէլ նա ՚ի վերայ , և զդրամոցն յարգ . քանզի հարիւր դիդրաքմայից արար զմնան , որ յառաջն էր եօթանասուն և երից . որպէս զի և ՚ի տալն անդ զհաւասարն ՚ի զօրութեան և զնուազեալն ՚ի թիւ՝ շահ մեծապէս էր որոց հատուցանէինն , իսկ որոց առնուինն՝ ոչինչ զեան : Սակայն բազմագոյնք ևս սաեն՝ եթէ միանգամայն ամենայն գաշանց պարտուց ՚ի բաց բարձումն էր թեթևաբեռնութիւնդ այդ . և սոցա յաւէտ զօրագաձայն գտանին և քերթուածքն Սոլոնի : Յորս և մեծապէս խնդայ Սոլոն , զի ՚ի բաց եբարձ զնախապրաւեալ երկրին զսահմանն և զնշանն , որ ամենայն ուրեք յանդաստանս հարստեալ կային . զի և՝ Ո՛ր էրբեն ծառայ էր երէկն , այժմ՝ ասէ՝ ազատ է :

Նաև ՚ի քաղաքացոց անուն՝ որ ՚ի պատճառս արծաթոյն սպրուկք լեալ էին պարտատէրցն , զկէսս ՚ի նոցանէն ածի՝ ասէ՝ միւսանգամ ՚ի հայրենի երկիրն ՚ի տարագիմ օտարութենէն, յորում շատ ինչ յայլկոյս յայնկոյս թափառեալք շրջեալք՝ զատիկեցի լեզուն մոռացեալ էին . և զկէս դարձեալ՝ որք անդանօր ՚ի տիկէ դժալա-

առհ սորկուԹեան ՚ի ներքոյ կային գրաւեալք, ազատս՝ ասէ՝ արարի։

Բայց պատուին՝ եԹէ ՚ի գործոյ աստի իւրմէ բան մի կարի գԺուխըմբեր գՀպ եղև նմա առանել։ Քանզի այն ինչ հանդերձեալ էր նա բառնալ ընՀՂել զպարտսն, և ինդրեր նա ՚ի գործն բան քաջավայելուչ և սկիզբն ձահաւորակի, չոքաւ և հաղորդս խորհրդոյն իւրոյ առնէր զբարեկամն՝ յորս առաւել վստահն էր և ցանգ կենակից կենցաղակից էր նոցա. և էին նոքա՝ Կոնոն և Կղինիաս և Խալոնիկոս. և ասէր նոցա՝ եԹէ զանգաստանս երկրին չունի շարժել և փոխել, սակայն ՚ի մեծ հաստատեալ է Թողացուցանել զպարտսն։ Լուան նոքա զայս, և գնացեալ կանխեցին առին վաղվաղակի ՚ի վաչխի բազում մԹերս արծաԹոյ ՚ի մեծատանց անտի, և չոքան գնեցին իւրեանց դաստակերտս մեծամեծս և կալուածս. և ապա ՚ի հրատարակել հրովարտակին Սողոնի, վայելէին նոքա յարդիւնս ստացուածոց իւրեանց, և զինչան ոչ հատուցին վաշխառուացն իւրեանց։ Եւ եղև այս մեծապէս ստգիւտ Սողոնի և ամբաստանուԹիւն. իբրու այն Թէ ոչ զրկանս ՚ի միասին ընդ այլոց կրեացէ և Սողոն, այլ Թէ գործակից զրկողացն և ինքն լեալ էցէ։ Սակայն և արագ արագ զերծաւնա ՚ի բամբասանաց անտի ՚ի ձեռն հնգից քանքարացն, որոց ինքնին պարտատէրն էր Սողոն, և ինքն առաջին հպատակեալ օրինացն՝ չնորհեաց զայն իւրում պարտապանին։ Ա՛յլ

ոմանք հնգետասան ասեն զքանքարսն, ըստ որում և Պողիւզենոս Հռոդացի. իսկ այն բարեկամք նորա այնուհետեւ անուանեալ կոչեցան՝ Պէրիպետոս: Բայց ի գործ յայս՝ և ոչ միւսմ կողմանն հաճոյ գտաւ Սողոն. քանզի դժկամակութեամբ սրտնեղոյց զմեծատունսն՝ ջնջելով զդաչինս պարտուցն. և առաւել ևս դարձեալ զաղքատսն, զի բաշխ և բաժին ոչ արար երկրին՝ որում ակն ունէին նոքա. և ոչ դարձեալ նմանս և հաւասարս գոյնք եդ զնոսա, իբրու Լիւկուրգոս: Ա՛յլ սակայն Լիւկուրգոս մետասանեւորդ գոլով ի Հերակլեայ, և թագ ևս կապեալ բազում ժամանակ ի Լակեդեմոնիա, և շուք վտառաց մեծապէս ունէր և բարեկամս և զօրութիւն, որովք և գիտաց նա գեղեցիկս յառաջադէմ խաղալ ի գործ քաղաքականութեան իւրոյ. և այժ առաւել ի գործ արկանէր՝ քան զհաւանեցուցանել, որպէս զի և զմի յաչացն կորուսանէր. և յաջողեցաւ արդիւնացոյց նա զմեծաւայելուչ զգործն զայն ի փրկութիւն քաղաքին և ի համաշունչ միաբանութիւն, զի մի ոք ամենևին ի քաղաքացնոց անտի իւրոց՝ ոչ աղքատ ոք էցէ և ոչ մեծատուն: Իսկ Սողոն բաւական չէղև ի նոյն ժամանել չափ ի քաղաքականութեան իւրոմ, գոլով ինքն ի ժողովրդականաց անտի և դոյնք միջակացին. սակայն և նուազ քան զկար զօրութեան իւրոյ ոչ գործեաց երբէք, օժանդակ և խրախոյս անձին ունելով միայն զնուիրեալ մտաց իւրոց, և զառ

ինքն վստահութեան հաւատոյ զնուագս քաղաքացեացն:

Այլ թէ որչափ ինչ գժկամակք եղեն ընդ նա շատք 'ի քաղաքացւոցն՝ որք այլ ինչ իրաց ակնկալեալ ճնային, ինքնին Սողոն յայտնէ ուսան նոցա օրինակ զայս.

"Որք երբեմն խնդամիտս, ասէ, խորհէին զինէն, արդ ընդ իս սրտմտեալ խէթ ակամբք հայեին ամենեքեան՝ իբրև ընդ ոսեխիմ: Թէպէտ և ո՛ր և ունէր 'ի ձեռին զնոյն զիմ զօրութիւն, ո՛չ զժողովուրդն արդեօք սանձէր, և ո՛չ դարձեալ հանդարտեալ հանդուցանէր, թէ ո՛չ յառաջագոյն՝ խռով հարեալ 'ի նմա, զպարարտն կթէր նորա զկաթն":

Բայց արագ արագ յետ այնորիկ խելամուտ եղեալ նոքա մեծապէս օգտին, և զանձինն իւրեանց 'ի բաց եդեալ զքրթմընջիւն և զբամբասանս, զոհ նուիրեցին հասարակաց, և զնուէր զոհին զայնորիկ անուանեալ կոչեցին՝ ԹԷՒՆԱՒԷՈՒՐԻՆ. և զՍողոն ինքնին հրատարակեալ համբաւեցին ուղղիչ քաղաքականութեանն և օրէնադիր: Եւ ո՛չ այսչափ միայն, այլ և գլխովին զամենայն 'ի նա յանձն արարին, զիշխանութիւնս, զհամախմբութիւնս, զատեանս գատաստանաց, և զժողովել խորհրդականաց, և զկարգ և զհամար միոյ միոյ 'ի նոցանէն, և զթիւն և զժամանակն կարգել ահմանել. առ այս՝ և լուծանել զինչ, և պահել պահպանել զսահմանեալսն յառաջագոյն, որպէս և զնարդ հաճոյ էր նմա:

Ա՛րդ առաջին ընդհատաց երարձ նա միան-
դամայն զամենայն Դրակոնին զօրէնս, բայ
՚ի պատուհասէ մարդասպանիցն. քանզի
յոյժ գժոխըմբեր և մեծամեծք էին պա-
ուհասքն: Քանզի փոքր միւս ևս ընդն մի
պատիժ պատուհասի՝ մահ սահմանեաց
նա ամենայն յանցաւորաց. որպէս զի և
զըմբռնեալսն անգամ ՚ի դատարկութեան՝
մահու սպանանել: Դարձեալ և զգողն
զբանջարոց կամ զպտղոց՝ հաւասար պատ-
ժել իբրև զսեղանակապուտս և զմարդա-
սպանս: Ա՛յսն որոյ և յետ այնորիկ զհամ-
բաւի յոյժ հարաւ Դեմադեայ բանն՝ որ
ասէր. Եթէ՝ Արեամբ և ոչ մելանաս զօրէնս
Իւր գրեաց Դրակոն: Իսկ և ինքն Դրակոն՝
որպէս ասեն՝ հարցեալ երբեմն Եթէ ա-
ւելի՞ն նա շատ ինչ յանցանաց՝ բազմագոյն
մատամբ պատուհաս մահու ՚ի վերայ կա-
պեաց, և պատասխանի. Փոփոքուց յանցա-
նաց ընդն համարէցայ արժանի. իսկ մեծացն՝
մեծ ևս այլ պատուհաս ոչ ունէի:

Իսկ երկրորդ անգամ՝ կամեցեալ Սո-
ղոնի զամենայն իշխանութիւնս միանգա-
մայն՝ որպէս և էրն յառաջադոյն՝ Թողուլ ՚ի
ձեռս մեծատանցն, և ինչ մի ևս խառնել ՚ի
կարգ քաղաքականութեանն՝ յորում մանն
և բաժին չունէր ինչ ժողովրդն, ՚ի կարգս
կարգս զատոյց պատուեաց զքաղաքայինսն
առհասարակ. որք միանգամ ՚ի նոցանէն
հնգից հարիւրոց չափուց առնէին զհաս
զցամաքացն և զհեղանիւթոցն, զնոսա ա-
ռեալ եդ յառաջին կարգն, և անուն կար-

դաց նոցա՝ Փլնդաւօռիօմէպիճռաս, այն է՝ Հինգհարիւրակեղեւս. իսկ յերկրորդ կարդի եդ զնոսա, որք բաւականք էին բուծանել զերիվարս, կամ երից հարիւրոց չափուց առնել զհասս. և անուն կարգացին նոցա՝ Իփփափդէլնդաս, այն է՝ Ասպատանահաս: իսկ Զէուղիդէս, այն է՝ Լծուորք, անուանեցան որ յերրորդ կարգի էին. որք երից հարիւրոց ունէին զչափն՝ ի միասին ընդ երկաքանչիւրոց հասին: Եւ ապա այլք առհասարակ անուանեալ կոչեցան Թիդէս, այն է՝ Վարձուորք. որոց և ոչ մի ինչ իշխանութիւն եւ՝ ի նոցա ձեռս իշխել, սակայն՝ ի ժողովս մտանէին և նոքա և դասէին, որով և միայն հաղորդք և բաժանորդք էին քաղաքականութեանն. որ այս զառաջինն՝ իբրև յոտնակս ինչ գրեցաւ, սակայն ապա՝ մեծ յոյժ: Քանզի բազում այն էին կագք և կռիւք՝ որ՝ ի ձեռս անկանէին դատաւորաց. առ այս՝ և զորոց միանգամ սահմանեալ էր Սողոն դասել իշխանացն, զնոյն դարձեալ թոյլ եւս ընդհեաց՝ որք միանգամ կամեցան բողոքել հանել յատեան անդր դատաստանի: Եւ սահեն՝ եթէ և զնւր օրէնսն անյայտագոյնս իմն գրեաց Սողոն և բազմագիմի ունակ թարգմանութեանց, զի զոյժ և զջորութիւն առեն՝ից դատաստանացն ածեցուսցէ: Վասն որոյ և իբրև ոչ կարէին այնպիսի օրինօքն լուծանել քակել զկնճիռն կագից և զկռուոց, պարտ և արժան էր ցանգ դիմել առ դատաւորսն. և համակ բանալ մերկանալ

զամենայն կագ և զպայքար առաջի նոցա՝ իբրու ոչք սեարք ոմանք իցեն ՚ի վերայ օրինացն այնոցիկ: Իսկ յաղագս հաւատարուԹեանս այսորիկ՝ զոր կարգեաց եդ, ինքնին Սողոն ցնծացեալ բերկրի՝ ասելով օրինակ զայս. "Քանզի ժողովրդեանս ետու այնչափ ինչ սերուԹիւն, որչափ ինչ բաւական էր: Ձփառս և զպատիս ոչ արգելի ՚ի նոցանէն, և ոչ դարձեալ լիաձեռն բաշխեցի: Իսկ որ ճոխքն էին զօրուԹեամբ, և ընչիւք արարովք քաջափայլք էին, սահման եդի նոցա, զի մի ինչ ունիցին ՚ի դժպատեհիլ: Որպէս զի ամրածածուկ շուրջ պատեսցէ վահան զերկաքանչիւր ևս կողմանն, և պարտեալ ոչ լինիցի բաւական այր զընկեր իւր անկրաւուԹեամբ":

Ա՛յլ քանզի արժան դատեցաւ նա և ևս առաւել զօրավիգն տալ տկարուԹեան ոմանց կին, Թոյլ ետ չնորհեաց՝ զի առ հասարակ ամենեքին բաւական իցեն դատախազ յառնել ՚ի կողմն առն՝ որ զհարստահարուԹիւն կրեալ իցէ: Եւ այսպէս ապա ՚ի հարկանել ուրուք զընկեր իւր կամ ՚ի վնասել ինչ կամ ՚ի հարստահարել և ՚ի զրկել, արժան և իրաւ էր առհասարակ որ միանգամ կացողքն էին և ոչք կամէինն՝ ամբաստան լինել զվնասակարէն, և վանել հալածել զնա: Յոյժ ուղղապէս և գեղեցիկս մարզեաց սովորեցոյց օրէնսդիրն զքաղաքացիսն, զի միոյ անգամոյն ցաւոցն զգասցեն ամենեքեան, և միաբան ախտակիցք միմեանց լինիցին առհասարակ: Եւ զուգաձայն այսմ օրինացս

զբան լինչ զՍողոնի ՚ի մէջ բերեն. քանզի հարցեալ երբեմն՝ եթէ ո՞ր քաղաք գեղեցիկ էցէ ՚ի բնակութիւն, ետ պատասխանի. Այն քաղաք՝ յորում չանէրաէսցն ոչինչ պակաս քան զանէրաէսեան, յաղնահարքեն և պարոհասեն զանէրասան:

Ա՛ւ այս՝ և սահմանեալ խոհեաց նա զԱրիսպագինն, տաճար խորհրդոյ ՚ի տարւոջ իշխանապետուց 5. յորում բազմէր և Սողոն՝ գոլով և ինքն յիշխանապետուց անտի: Ա՛յլ սակայն տեսեալ նորա զժողովուրդն՝ զի ամբարտաւանեալ էր և խեռացեալ ստամբակեր ՚ի պատճառս Թողութեան պարտուցն, կարգեաց և երկրորդ տաճար խորհրդոյ. և ՚ի մէն մի ցեղից անտի քառից՝ արս հարիւր ընտրեաց վասն նորա. որոց և օրէնս եդ՝ քննել յառաջագոյն զժողովուրդն, և մի՛ զինչ ամենևին անխորհուրդ և անքննին կանխել հանել ՚ի հասարակաց ժողովն: Իսկ գերագոյն ատեան խորհրդոյ՝ զԱրիսպագինն կարգեաց եդ տեսուչ ՚ի վերայ ամենայնին առհասարակ և պահապան օրինացն: Քանզի արժան դատեցաւ, զի ՚ի կրկին ատեանն խորհրդոյ՝ իբրու՛ի կրկին խարիսխս ամրացեալ և հաստատեալ՝ նուազագոյնս ծովածուփ եղիցի քաղաքն, և ժողովուրդն յանվրդով խաղաղութեան մեծապէս վայելեսցէ:

Ա՛րդ բազումք այն են ՚ի մատենագրաց, որ ասեն՝ եթէ Սողոն ինքնին կարգեաց խըմբեցոյց զԱրիսպագինն տաճար խորհրդոյ՝ ըստ արուամ ասացաքն: Եւ թուի յաւէտ վկայել

սոցա, զի և Դրակոն ինքնին ուրեք երբեք չասէ ինչ վասն Արիստագայեցոցն և յիշատակ չառնէ երբեք. այլ ընդ Եփեսեանցն 6, ցանգ բանս՝ ի մէջ առնու վասն մարդասպանելոցն: Այլ սակայն երեքտասաներորդն՝ ի տախտակացն Սողոնի՝ ուրեմն օրէնս ունի արձանագրեալ օրինակ զայս. "Որք միանգամ՝ ի վաստահամբաւից անուանարկս լեալ լինեն, մինչեւ իշխանապետս կացեալ Սողոնի, ՝ի պատուի եղիցին. բայց ՝ի նոցանէ՝ որք Արիստագեայ կամ Եփեսեանց անսի կամ՝ ի Պրիւտանեայ դատապարտեալք առ Թագաւորքն՝ ՝ի պատճառս սպանութեան կամ յեղուզակութեան կամ բռնատորութեան արտաստահման լեալ լինեն, ՝ի հրատարակել օրինացս այսոցիկ": Արդ՝ այս բանք զայն ինչ ՝ի գէմս բերեն, եթէ գոյր ուրեմն Արիստագեան տաճար խորհրդոյ, մինչեւ իշխանապետս կացեալ էր Սողոնի և օրէնադիր: Քանզի այք ոմանք էին ապա յառաջ քան զՍողոն դատապարտեալքն Արիստագեայ, եթէ արդարև Սողոն առաջին կարգեալ էր դատաւոր գծերակոյտ Արիստագին: Թէ ո՛չ՝ օ՛ն և օ՛ն՝ անյայտութիւն ինչ գուցէ արդեօք յարձանագրութեանդ յայդմիկ, և պակաս ևս կայցէ ՝ի բանիդ. իբրու ասել այսպէս՝ եթէ որք միանգամ ըմբռնեացին ՝ի յանցանս՝ զոր դատեալ էին Արիստագացիքդ և Եփեսեանք և Պրիւտանեանք՝ ՝ի հրատարակել օրինացս այսոցիկ, այնպիսիքն յաւերժացին յանարգութեան ևւրեանց. իսկ այլք՝ ՝ի պա-

տուի եղեցին: Եւ զդոյն զայդ արդեօք ակն-
արկեր և ինքն Սողոն:

Բայց ՚ի մէջ այլոց օրինաց իւրոց մա-
նաւոր ինչ և նորատաքանչ օրինադրեաց նա,
զի վատահամբաւ լինելոյն մարդ՝ որ յերկպա-
ռակութիւնս հերձուածոց՝ և ոչ զմիոյ ու-
րուք կալցի զկողմն: Քանզի կամէր՝ որպէս
հաւանեալս եմ՝ զի մի ոք ամենևին անախ-
տակիր և անցաւ բերցի առ հասարակաց
գործն. և մի յասպահովի կացուցեալ զա-
ռանձինն զնւր գործն, սկսանիցի խնդալ
յանձն և յօրանալ, իբրու այն որ անմասն
և անբաժ էցէ ՚ի ցաւոց և ՚ի կրից հայրենի
աշխարհին. այլ զի փութապէս և ինքնին
զանձն առեալ իսառնեսցէ յայն կողմն՝ որ
լատագունի մասին և արդարադունին զհետ
կրթեալ էցէ. ՚ի նոյն վտանգ եղբարցն մատ-
նեսցէ և զանձն, և զօրավիգն օգնականու-
թեան եղիցի նոցա առաւել՝ քան թէ ինքն
յանդորրու կացեալ, ՚ի զնին բազմեացն եղիցի
յաղթական կողմանն:

Իակ յամառանութիւնս եբարձնա զօժիտս
հարսանց. հրաման տուեալ՝ զի ոչ այլ ինչ
բերցեն նոքա ընդ իւրեանս, բայց պատ-
մուճանս երիս, և սպասս և կարասի դիւ-
րագնի: Քանզի ոչ կամէր Սողոն եթէ
վարձկանութիւն էցեն հարսանիքն և կամ
շահավաճառ ինչ, այլ զի առն և կնոջ բնա-
կակցութիւն ընդ միմեանս էցէ միայն ՚ի
պատճառս զաւակագործութեան և հա-
ճութեան և սիրելութեան նոցա ընդ մի-
մեանս. Վասն որոյ և Դիոնեսիոս՝ յորժամ

մայր իւր ինդրէր ՚ի նմանէ տալ զինքն ՚ի հարանութիւն միւսմ ումեք ՚ի քաղաքացոցն, ասէր. Թագ կապեցի միահեծան՝ լուծանել քակել զօրինս քաղաքաց, այլ չեմ ես բաւական բռնաբարել զօրինս բնութեանն, և հարանածու լինել պատասանց յամուանութիւնս: Եւ արդեօք չէ պարտ չէ արժան զանկարգութիւնդ զայդ ՚ի քաղաքս առնուլ մուծանել, և թոյլ տալ ներել ապաժամ և անշնորհ զուգաստրութեանց, որ ոչ գործ ինչ ունիցին և արդիւնս զամուանութեանն, և ոչ գարձեալ զվախճանն: Այլ ընդ ծերն անցեալ ատուրբք՝ որ զմանկամարդն ինդրեսցէ ածել հարան, արժան է իշխանին կամ օրինադրին ասել համարձակաձայն, զոր ինչ երբեմն առ Փիլոկտետէս. Վա՛շ ծերոնոյդ, էդէն ⁑ ոբեն արբոնէդ ՚ի հարոնէս: Եւ եթէ երբէք գտանիցի ՚ի տան ընչաւէտ պատառոյ այր երիտասարդ, իբրև զկապաւ՝ գիրացեալ ստուարացեալ ՚ի զուգաստրութենէն, առեալ բնաւակից արասցեն զնա հարսին կուսի՝ որում առն պէտք իցեն: Արդ՝ այսպիսի վասն այսոցիկ:

Այլ մեծապէս գարձեալ ՚ի գովութիւն առեալ է Սողոն, որ օրինս եդ և արգել հնքեաց՝ մի չարախօսութեամբ բամբասել զմեռեալն: Քանզի բարեպաշտութիւն է՝ իբրև նուիրական համարել զվոխեալսն յաշխարհէ. և արդարութիւն է՝ ոչ բամբասել զորս ոչն մերձ կայցեն. և քաղաքականութիւն է՝ ոչ յաւիտենական գոր-

ծել զառեղծուածին: Իսկ յաղագս կէնդանւոյ՝ արգել ջարիս խօսել՝ ի տաճարս մեհենից և յառեանս դատաստանաց և՝ ի դիւանս խորհրդոց և՝ ի տեսարանս մրցանաց. և սահմանեաց ջարախօսին՝ տուժել երիս դիդրաքմայս առն ջարախօսելոյ, դարձեալ և երկուս այլ՝ հասարակաց դանձարանին: Քանզի ոչ ուրեք երբէք գիտեալ սանձել զբարկութիւն, անհրահանգ մարդոյ է և անսանձ և անժուժկալ անձին. իսկ ամենայն ուրեք գժուարին է գործն, նա՛ զի և ոմանց՝ յանհնարինն է: Ա՛յլ պարտ և արժան է առ հնարաւորն գրել զօրէնսն. առ այս՝ և պէտք են նմա օգտիւ պատուհասել զնուաղումնս, և մի՛ յանօգուտս՝ զբազումս: Ի գովութիւն առեալ է Սողոն յօրէնս իւր և յաղագս կտակաց: Քանզի յառաջ ժամանակաւ չէր արժան կտակ առնել. այլ ինչք վախճանելոյն և տունն Թողեալ մնային յազգատոհմի անդ իւրում: Իսկ Սողոն սահմանեաց, զի տէր ոք ո՛ւմ և կամեսցի՝ եթէ չիցեն նորա մանկունք՝ Թողցէ զինչս իւր. և նախապատիւ արար զբարեկամութիւնն՝ քան զազգակցութիւնն, և զնորհս՝ քան զհարկն, և զինչսն՝ իբրև տորուակս արծաթագինս արար տեառց իւրեանց: Ա՛յլ սակայն և ոչ արձակերասանս կամ վայրապար Թողացոյց զտուրսն զայնոսիկ. այլ թէ՝ տեառքն մի՛ տացեն զայն՝ ի պատճառաց խօթութեանց, կամ դեղատուութեանց, կամ կապանաց բանից, կամ գրաւեալ՝ ի հարկէ լմնութիւն, կամ ամբաստեալ համոզակեալ

'ի կնոջէ: Յոյժ գեղեցիկ և վայելուչ հա-
մարեցաւ նա, եթէ համոզակեր բանիւք
դաւէր՝ ոչինչ ընդհատ է 'ի բռնաբարելոյ.
այլ 'ի նոյն 'ի մի կարգ դասեաց նա զնաթէ-
ուԹիւնն՝ ընդ հարկին, և զհեշտուԹիւնն՝
ընդ կրկից ցաւոց, իբրու այն՝ որ ոչինչ պա-
կաս բաւական ևցեն խելայեղ զմարդիկ առ-
նել գվնասին:

Կարգեաց նա օրէնս և յաղագս եղից կա-
նանց արտաքս 'ի հրապարակ անդր, և յա-
ղագս սգոյ և կոծոյ, և յաղագս տօնախմբու-
Թեանց, և արգել սանձեաց զանկարգու-
Թիւնան 'ի նոսա և զկռտուԹիւնն: Եւ պա-
տուիրեաց նոցա ելանել արտաքս՝ մի՛ աւե-
լի քան զերիս հանդերձս արկեալ զան-
ձամբ. և մի՛ կերակուր կամ ըմպելի բառ-
նալով ընդ իւրեանս՝ աւելի քան ղդանգի
միոյ. և մի՛ գարձեալ սակաւի՝ որ քան զմի
կանգուն մեծ ևցէ. և մի՛ գիշերի գնալ 'ի
ճանապարհ՝ բայց Թէ բարձեալ 'ի կառս, և
լապտեր ունելով յառաջդ: Եւ եբարձ նա
'ի գիահանան զցեսեալ եղնդանց, և զկոճել
կրծոց, և զջայլս բարձրագոչս, և զձիս և ըզ-
վայիւն առ օտարս մեռեալսն: Եւ ոչինչ
Թոյլ ետ նա նուիրել յաղել զկով և ոչ
Թաղել զմեռեալն հանդերձիւք առաւել
քան երիւք. և ոչ գարձեալ 'ի շիրիմն այլոց
գնալ՝ բայց 'ի յուղարկաւորուԹիւնս: Ա-
ռաքիկ ասաց բազմագոյն մասամբք և 'ի մե-
րոց անուն օրինաց արգելեալ կան: Սակայն
մեր օրէնքս յաւելուն և զայս, զի ոչք միան-
գամ արասցեն յայնպիսեաց անուն, տու-

ժխլք տուգանեացին յոստիկանաց կանանցն, իբրու այն՝ որ 'ի կոծս և յաշխարս անարի կրնէք և ինասու զգածեալք լեցեն:

Յետ այսորիկ տեսեալ Սողոնի, եթէ քաղաքն բազմաժողով ընու մարդկամբ՝ որ ցանգ խուռն ընթանային յամենայն կողմանց յԱտտիկէ 'ի պատճառս անդորր քննակուռթեան, և զի՝ և բազում այն էին 'ի գետնոց գաւառին՝ զի անբերք էին և աղտաղտուկք. և ծովագնաց վաճառականք ոչինչ կամէին բառնալ բերել անդր՝ զի չունէին ինչ առնուլ տրիտուր յերկրէ անտի. վասն այսոցիկ ապա 'ի գործ արուեստից յորդորեաց փոխեաց զքաղաքացիսն: Գրեաց ետ օրէնս, եթէ մի լինի պարտական որդին կերակրել զհայրն՝ որ ինչ մի յարուեստից ուսուցեալ ոչ լինի որդւոյն: Զանգի Լիւկուրգոսի՝ որ քնակեալ էր 'ի քաղաքի աղատացեալ յօտար ժողովրդոց, և որ հանդերձ բազում ժողովրդովք ստացեալ ունէր և վայր բազում՝ կրկնապատիկ ժողովրդոց բաւական հանդերձ առաքելութեամբ՝ ըստ Եւրիպիդէսի, և որ ամբոխ բազմութեան ունէր նա զԼոտտացն, լաւ և գեղեցիկ էր նմա մի 'ի դաստարկութեան Թողուլ, այլ ցանգ յաշխատութիւնս քրտանց և 'ի վաստակս նուաճել զնոսա՝ որ շուրջ 'ի Լակեդեմոնիա սփռեալ քնակեալ կային. խակ զիւր քաղաքացիսն 'ի քրտնավաստակ և յարուեստագործ անպարապութեանց 'ի բաց հրաժարեցուցեալ, ցանգ 'ի զէնս և 'ի զարդս պարապեցուցանել, և 'ի նոյն մի ա-

րուեստ վարժել և կրթել առ հասարակ։ Իակ Սողոն զկնի օրինաց՝ իրացն առաւել յարեալ յարմարեալ, քան զկրսն՝ օրինացն, զընդաբոյս բնութիւն զվայրացն իւրոց զընեալ՝ զի մշակացն հողագործաց հաղիւ ուրեմն բաւական էին, և զամբոխ բազմութեանն զանգործն և զդատաստիկասուէնն ոչ կարէին կերակրել, արուեստից Ճարտարութեանց վասն այնորիկ չուք բազում 'ի վերայ կապեաց. առ այս՝ և զծերակոյտ Արիսպագին կարգեաց տեսուչ և ոստիկան 'ի վերայ կալ՝ զի այր այր 'ի քաղաքացոցն Ճարտարեացէ անձին զպարէնն աւուրն, և զանգործս և զդատաստիկն պատժել պատուհասել առհասարակ։

Իակ որ առաւել սաստիկն էր, զի և ոչ 'ի պոռնկութենէ ծնեալ որդիքն՝ պարտական էին կերակրել զհայրն, որպէս չէրակղեսէս պատմէ Պոնտացին։ Քանզի որ միանգամ յամուսնութեան՝ բարւոյն և վայելչականին պատկառ ոչ կայ, յայտ է ապա՝ եթէ ոչ 'ի զաւակաց լինչ պատճառս, այլ վասն հեշտութեանն մոռանէ առ կինն, և առնու ընդունի նա այնուհետև զվարձն. և իշխանութեան տեղի այլ չէք նմա առ այնպիսի զաւական, զորոց և զծնունդն գլխովին թշնամանօք և անարգութեամբ ելից նա։ Այլ համբուն մեծ ևս անտեղութիւն՝ թուի թէ՝ յինքեանս բարձեալ բերեն օրէնքն Սողոնի վասն կանանց։ Քանզի զընացեալն սպանանել թոյլ ետ այնմ՝ որ 'ի նոյն գործ ըմբռնեացէ զնա. իակ թէ ոք յափըշ-

տակէացէ զկին ազատ կամ բռնաբարէացէ, սահմանեաց վասն նորա տուժել հարիւր դիդրաքմայս. ապա եթէ ոք տացէ զկին ի պոռնկութիւն՝ դիդրաքմայս քսան. Թող զորս առակեալք յայտնի վաճառէն զանձինս՝ զբոլսն ասեմ. քանզի սոքա յայտնապէս մտանեն առ նոսա՝ որ զկապէնան տան: Բայց Թոյլ չէտ վաճառել զդաստերս, և ոչ զքորս, բայց թէ յորժամ ի կուսութեան իւրեանց ըմբռնեացին նոքա մտեալ առ այր:

Սակայն զնոյն մի գործ, է զի գառնապէս և անողոքելի պատուհասել, և է զի թեթև և իբրու ընդ խաղ սահմանել ի պատիժ փոքրոգի տուգանացն, անբանութիւն է: Բայց թէ թեթև՝ ի ժամանակին յայնմիկ նուազեալ քաղաքն ի դրամոց մասին, դժուարագիւտ հատուցումն՝ մեծ գործեաց զտուգանն արծաթոյ: Եւ ապաքէն ի հաշիւս սակից զոհից ոչխար մի և դիդրաքմայ մի՝ համարէ նա ընդ միոյ կէղբի. և որ միանգամ յԱթենացեան խաղն յաղթական գտանիցի, սահմանէ պարգեւել նմա դիդրաքմայս հարիւր. իսկ որ յՈղիւմպիականն՝ հինգ հարիւր: Եւ որ գայլ մի բերցէ, ետ նմա դիդրաքմայս հինգ. իսկ որ մատակ գայլ՝ մի դիդրաքմայ: Հինգն՝ ասէ փաղերեւս Դեմեորիոս՝ գին է կովու. իսկ մին՝ ոչխարի: Իսկ զոր ինչ միանգամ ի վեշտասանեերորդի տարուանացն իւրոց սահմանեաց նա գինս յաղագս հատընտիր սպանդից զոհից, արդեօք յոյժ առատ էին այնոքիկ.

սակայն և այդոքիկ նուաղումք ինչ են առ մերովքս՝ որ այժմ: Իսկ վասնզուց սովորութիւն էր Ամենասուցին մարտ եդեալ կռուել ընդ գայլոց. քանզի երկիր նոցա լաւ ևս է յարօտս ճարակաց, քան ի մշակութիւն:

Եւ են՝ որ ասեն եթէ ցեղքն ի նոսա անուանեալք յորջորջեցան ոչ յորդւոցն Յոնեայ, այլ ի տարբերեալ քաղաքավարութենէ կենաց իւրեանց զառաջինն անուանեցան նոքա: Որք ի մարտս պարապէին՝ Օէլէոյս կոչեցան, այն է՝ վառեալք. իսկ որ ի ձեռակերտս՝ Էոզոպէս, այն է՝ Գործաւորք: Իսկ յայլոց անուն երկուց ցեղիցն՝ որ երկրագործ մշակքն էին, կոչէին Դէնպոյս, այն է՝ Հարկատուք. և որք ի վերոյ այսոցիկ մարգոց և խաշանց վերակացուք էին՝ Էպիօնէս, այն են՝ Այծարածք:

Այլ քանզի երկիրն այն նուաղեալ էր ի ջրոյ, զի չգոյին անդ ոչ գետք միտահոսք, և ոչ լիճք, և ոչ աղբիւրք առատաբուղխք, այլ բաղումք ի նոցանէ ջրհորս ճարտարեցին. վասն որոյ և գրեաց նա օրէնս, զի ուր ուրեք կայցէ հասարակաց ջրհոր բացական Իբիխոն մի, անուն հանցեն ջուր. և է Իբիխոն մի՝ չորից ասպարիսաց. իսկ թէ առաւել քան զայն բացական լցէ, յայնժամ խնդրեսցեն իւրեանց ջուր առանձինն: Ապա եթէ փորեալ իցէ՝ խորութիւն տան գրկասաւի՝ ոչ գտցեն ջուր, յայնժամ առնուցուն ջուր ի մերձաւոր ջրհորոյ և ամանեսցեն վեց սափոր երկիցս յաւուրն. քանզի ար-

ժան համարեցաւ նպաստ լինել կարօտու-
թեանն, և ոչ բուծիչ պղերգութեան:

Սահմանեաց կարգեաց նա և չափս տնկոց
և ծառոց՝ մեծապէս համոզութեամբ. և հրա-
մայեաց՝ զի ամենայն ծառք ի դաշտին հինգ
ռանաչափ ի բացեայ տնկեսցին ի մերձաւո-
րէն իւրմէ. իսկ թզենիք կամ ձիթենիք՝
լինն. քանզի սոքա առաւել ևս երկայնեն
ձգեն զարմատս իւրեանց, և ոչ անվնաս լինչ
են նոքա մերձաւորութեամբն իւրեանց այ-
լոց տնկոց, նա և զնոցա բուծումն ձգեն առ-
նուն, և կիսոցն ևս ընաւսակար շոգի ի դուրս
արձակեն: Իսկ որ ժամանակ փոսս հա-
տանել կամիցի և իրաման, հրամայեաց՝ զի
որչափ ի խոր հատցի փոսն, նովին չափով
բացատ կայցէ և յագարակէ ընկերին իւրոյ:
Եւ որ կամիցի փեթակս դնել և մեղուա-
նոցս՝ ի բացեայ դիցէ յերեսոցն յատաջա-
գոյն՝ ռանաչափս երեքհարիւր: Իսկ ի բե-
րոց երկրին միայն զձէթն թոյլ ետ վաճա-
ռել առ օտարս, և արգել կինքեաց՝ մի՛ այլ
ինչ հանել տանել արտաքս: Եւ որք միան-
գամ հանեալ տարցին, սահմանեաց նզովս
և անէծս կարդալ իշխանապետին ի վերայ
նոցա. կամ թէ ինքեանք հարիւր դիդրաք-
մայս տուժեսցին հասարակաց գանձարա-
նին: Եւ առաջինն ի տախտակացն ունի զե-
րէնագ զայդ: Ոչինչ ապա գլխովին անհա-
ւատալի կարծեսցէ ոք զայնոսիկ որ ասենն՝
եթէ ի նախնումն արգելեալ էր և թզոցն
ի դուրս առաքել. և որ միանգամ ամբաս-
տան լինէր վասն տարօրացն, անուն կար-

դային նամա՝ Սէ֊օֆանդէս, այն է՝ Թղամբասան: Գրեաց և օրէնս յաղագս վնասուն՝ որ ի չորքոտանեաց անտի. յորում և ըզշունն խածանող հրամայէր պատուհասել՝ վայր չորեքկանգնեան աղխելով ընդ պարանոց նորա. և հնարեցաւ գեղեցիկ յապահովութիւն անցաւորացն:

Բայց գժուարաթարգմանելի է օրէնքն Սողոնի վասն գրելոցն ի քաղաքացիս Աթենայ. քանզի ոչ թոյլ տայ քաղաքացիս լինել՝ բայց նոցա որք միանգամ արտասահմանեալք էին յաւերժաբար ի հայրենի երկրէն իւրեանց. կամ թէ որք ոչնչոյն գերդաստանաւն գաղթեալք էին յԱթէնս ի պատճառս արուեստից լինէ: Եւ ասեն ոմանք՝ եթէ արար նա զայս, ոչ զի զայլս կամէր ի բաց մերժել, այլ զի հրաւիրեալ յորդորեսցէ զայնպիսին գալ բնակել յԱթէնս ի միտս անելոյ՝ առնել զնոսա հաղորդս և բաժանորդս քաղաքականութեան: Եւ զի միանգամայն և հաւատարիմս համարէր զնոսա՝ որ միանգամ ի հայրենի երկրէն բռնի տարագիր եղեն, և որք միանգամ իւրեանց իսկ կամաք թողին զքէն զնոսա: Իսկ առանձինն և մանաւանդ է Սողոնի՝ օրէնքն նորա յաղագս ձնշելոյ ի հասարակաց կոչունսն, զոր նա Բաքսէի կոչեաց, այն է՝ հացակերոյք. այլ ոչ թոյլ եւ զի նոյն այր առեալ առեալ ճաշեսցէ անդանօր. ապա եթէ ոք՝ որում անկ էր գալ ի կոչունսն՝ հրաժարեսցի, պատուհաս ի վերայ կապեաց այնպիսւոյն. եդ ի մէկ

եթէ առաջինն անվայելչութիւն է. իսկ երկրորդն արհամարհութիւն է հասարակացն: Եւ զօրութիւն էտ Սողոն ամենայն օրինաց խրոց ընդ սմն հարիւր. և էին այս օրէնք նորա արձանագրեալ 'ի պնակս փայտեայս, ամփոփեալս յամանս քառանկիւնիս և երկայնս, և տարուբերեալս 'ի նոսա: Որոց և առ մեզ 'ի Պրիւտանիա նշխարք փոքունք պահեալ կան, և անուն կարդան նոցա՝ որպէս Աքիստոտէլ ասէ՝ կ՚երբէ+. ըստ որում և Կրատինոս ասէ ուրեք կատակերգակն. "Վասն Սողոնի և Դրակոնեայ, որոց 'ի պէտս՝ այժմ զունդս չորացուցանեն 'ի կիւրբէս": Իսկ կէսք ասեն՝ եթէ բուն կիւրբէք այն են՝ յորս եդեալ պահին սահմանք նուիրականացն և զոհից. իսկ պնակք կոչին այլքն ամենայն: Արդ՝ զերդումն հասարակաց կռեաց Ծերակոյան հաստատուն պահել զօրէնսն Սողոնի: Իսկ առանձինն դարձեալ երդուաւ այր այր 'ի թէսմոթէթեանն, այն են՝ Ոտիկանք օրինացն, 'ի հրապարակի անդ մերձ առ վիմին Մունեատկաց. խոստումն արարեալ հաստատուն՝ զի եթէ զանց արասցեն զօրինօքն, անդրի մի ոսկի հաւասարաչափ անձին կախեսցեն 'ի ձօն 'ի Դելփիս:

Առ այսոսիկ՝ և զանհաւասարութիւն սմ սոցն գինեալ նորա և զչարժուն լուանի, գլխովին տարբերեալ 'ի մտից արեւու և լեցն նորա, և բազում այն է՝ զի 'ի նմին իսկ ուրուր միանգամայն և հասանէ ժամանէ նա յարեգակն և անցանէ զնովաւ, կար-

գեաց եդ՝ զի զօրն զայն անուանեալ կոչեսցեն՝ Վերջին և առաջին լուսին. համարեցաւ՝ եթէ մանն աւուրն՝ մինչեւ եղեալ զուգընթացութեանն այնմիկ, անկանիլ յամիան վախճանեալ. իսկ ողջոյն ժնացորդն նորա՝ յամիան սկսեալ: Առաջինն՝ որպէս ինձ թուի՝ Սողոն ձշդիւտ 'ի վերայ եհաս բանին՝ զոր քերթեաց Հոմերոս յասել անդ իւրում վասն աւուր ինչ, եթէ՝ " 'ի վախճանել ամսոյն այնորիկ, և 'ի յաջորդել միւսոյն ": Եւ ապա զյետագայ օրն կոչեաց՝ Նորալուսին: Իսկ 'ի քսաներորդ օրէ նորա և անդր, ոչ 'ի վերայ բարդեալ համարէր զթիւ աւուրցն, այլ օր մի 'ի բաց առեալ որոշէր, ըստ որում և զլոյս լուսնին սեաւնէր տակաւնուազեալ՝ մինչեւ յերեսներորդ օրն:

Իսկ իբրև առհասարակ հրապարակեցան օրէնք նորա, այնուհետեւ հանապազօր ընթանային բազումք առ Սողոն. կէսք՝ 'ի գովել զնա, և կէսք՝ յեպերել. կէսք՝ խորհուրդ տալ նմա յաւելուլ ինչ մի յարձանագրուածիւնս օրինացն, կամ բառնալ անտի: Իսկ բազումք այն էին՝ որք հարցանէին և քննէին և խնդրէին 'ի նմանէ ուսուցանել և մեկնաբանել նոցա, զի՞նչ այն իցէ մէն մի յօրինացն, և զի՞նչ միտք իցէն նոցա: Արդ՝ տեսեալ Սողոնի, զի զինդրուածն ոչ կատարէր՝ անսեղի էր, և կատարէն՝ նախանձելի. և կամեցեալ գլխովին իսկ տեղի տալ 'ի գժուարութենէ աստի, և ապա 'ի դժկամակութենէն լինել քաղաքացեացն և 'ի քրթմն-

ջանաց նոցա, քանզի՝ 'ի գործս ռեֆառեֆս
գիներակ է հաճոյ լինել առնեցուն, որպէս
ինքն իսկ ասաց, պատրուակ տարադէմ օ-
տարութեանն արարեալ զնաւապետու-
թիւն, ծովագնաց լինելը. ինդրելով յԱ-
թենացւոց անտի իւրոց տանտաճեայ պան-
դըխտութիւն. քանզի յոլաայր նա՝ եթէ
զայնչափ ժամանակն սովորեալք ընտելաս-
ցին նոքա և յօրէնս իւր:

Արդ նախ առաջին եկեալ եհաս նա
յԵգիպտոս, և եկաց անդ. որպէս և ինքնին
իսկ կանխեաց ասաց. "'Ի Նէղոսի բերանն,
մերձ 'ի կանոբեան ափունսն": Եւ ժա-
մանակ լինչ կենակից լինէր՝ իմաստասիրե-
լով 'ի միասին ընդ փսենոփեայ Արեգքա-
ղաքացւոյ և ընդ Սոնքեայ Սայիտացւոյ.
սոքա էին արք լիահանճարք և քաջա-
հմուտք 'ի մէջ քրմացն Եգիպտացւոց: 'Ի
սոցանէ լուեալ Սողոն և զԱտլանտեան
կղզւոյն զճառս՝ որպէս ասէ Պղատոն, ձեռն
էարկ 'ի տողս քերթեալս մերկանալ զայ-
նոսիկ առ Հելլենացիս: Եւ ապա յետ այ-
նորիկ նաւեաց Սողոն 'ի Կիպրոս, և հիւ-
րասիրութիւն մեծ յոյժ ընկալաւ 'ի փի-
ղոկիպրեայ ումեմնէ՝ որ էր 'ի զարմէ Թա-
գաւորաց երկրին: Սա քաղաք մի ունէր ոչ
լինչ մեծ՝ շինեալ 'ի Դեմոփոնտեայ յորդ-
ւոյն Թէսէոսի առ Կղարիոն գետովն յա-
մուր վայրի, այլ առաւպարք էին վայրքն
և անբերք: Արդ՝ ած հաւանեցոյց զնա Սո-
ղոն, զի 'ի մերձակայ անդ դեղեցիկ դաշ-
տին փոխադրեալ նա զքաղաքն՝ շինեսցէ

զնա առաւել փարելի և առաւել մեծ. և ինքնին Սողոն՝ի վերայ կացեալ՝ գօտեպնդ լինէր՝ի միասին ընդ նմա՝ի գործ չինուԹեան, և՝ի միասին ընդ նմա յարդարէր կազմէր՝ որչափ ինչ միանգամ լաւ էր՝ի քաղաքավարուԹիւն կենաց բնակչացն և յանդորր խաղաղուԹիւն. որպէս զի և շատք ոմանք բնակաւորք եկին խմբեցան անդր ընդ Փիղոկիպրեայ, և այլոց Թագաւորաց գտան նախանձելի: Վասն որոյ և Սողոնի շուք պատուոյ ընծայեալ Փիղոկիպրոս՝ զքաղաքն գլխովին որում յառաջ Էպիա անուն կարդային՝ յանուանէ անուն նորա կարդաց Սողոն. և ինքնին Սողոն յիշատակէ զչինուԹիւնն զայն: Քանզի յԵղեբերդուԹիւնս իւր խօսեալով նա ընդ Փիղոկիպրեայ, ասէ օրինակ զայս. "Իակ այժմ՝ի վերայ Սողոսացւոցդ բազում ժամանակ Թագկապեալ, ՛ի քաղաքիդ յայդմիկ բնակեացես դու և զարմն քո: Սակայն զիս արագ նաւու՝ի գերահամբաւ կղզւոյդ ողջանդամ առաքեացէ Աստղիկ պսակաւորն: Իակ՝ի մրցանակ չինուԹեան քաղաքիս լինիմ չնորհս և փառս ձօնեացէ, և դարձ՝ի հայրենին մեր աշխարհ":

Բայց զկենակից իօսան Սողոնի ընդ Կրիւսոսի համարին ոմանք՝ի հաշուէ անուն ժամանակացն՝ցուցանել իբրու առանցիկ պատմուԹիւն: Ա յլ ես զպատմուԹիւնդ զայդ այնչափ բարեհամբաւ, որ և այնչափ հաստատեալ վկայիւք, և որ մեծ ևս է՝ քաջալաւելոյ նորուն իակ Սողոնի բուսոյ բա-

րուցն, և նորուն մեծանձնութեան և հանճարոյն արժանաւոր, ոչինչ ՚ի դէպ համարիմ ընդ վայր հարկանել ՚ի պատճառս ժամանակագրութեանց ինչ՝ որ անուանեալ կոչին Կանոն. զորս և բիւրք ոմանք գուն գործեցին ուղղագրել մինչև ցայսօր ժամանակի, և չէղեն կամագիտ ՚ի մի միաբանութիւն յօդել յարմարել զընդդիմակ ձայնան: Ուրդ առեն՝ եթէ ՚ի հրաւիրմանէ անոի Կրիւասոյ յարուցեալ չոքաւ առ նա Սողոն ՚ի Սարդի. և կրեաց յայնժամ Սողոն գոգցես ըստ նմանութեան մարդոյ՝ որ ցամաքին գոլով ցանդ բնակաւոր՝ զառաջինն նուագն դէմ եդեալ իլանիցէ ՚ի ծովքանզի գետ զոր և միանգամ յակն արկանիցէ նա՝ կարծեացէ արդեօք ծով լինել. սակայն և Սողոն եկեալ անցեալ յայնժամ ընդ ալքունին, բազում ոմանս սեասանէր յալքունի աւագացն՝ զարդս արկեալ բազմահանդերձս, պերճս և սիգաձեւս՝ շուրջ զնուրեամբք զամբոխն ունելով զյուղարկաւորացն և զսիգաւորաց, զմէն մի ՚ի նոցանէն կարծէր Սողոն՝ եթէ Կրիւասոն ինքնին իցէ. մինչև եկեալ եհաս առ նա ինքն առ ալքայն, ողջոյն ընդ լուռեալ ակամբք և գունակ գունակ հանդերձեալ պատմուճանօք, յարուեաոս կիտուածոյս ոսկւոյ, ՚ի զարդ փայլեալ գեղապանծ՝ որչափ ինչ միանգամ յաւէտ փարելի կայցէ ՚ի գոյնից և պերճ և պայծառ, որպէս զի և աեսարան հրաշագեղ ՚ի նեղքս ընծայել և առաւել ևս հրաշագեղ: Իբրև յանդիման եկն եկաց նմա

Սողոն, և ինչ ամենևին ոչ կրեաց նա՝ ի հրաշից անտի, և ոչ՝ ի զինին ազանչելեացն՝ ինչ մի ասաց նա երբէք՝ որում ակն կալեալ ապաստէր Կրիւսոս, նա և յայսմնի երևեր յայնժամ ողջամիտ մարդկանն՝ եթէ ընդ փոքրոգի շուք փառացն ունչս առնէր անդ Սողոն ծանծաղամիտ գեղաւորին. հրաման ետ յայնժամ Կրիւսոս բանալ սիւռել առաջի նորա զամենայն գդանձս իւր զոսկւոյ և զարծաթոյ, և առնուլ տանել զնա և միանգամայն զամենայն հանդերձանս չքեղս և զսպասս գեղեցիկս ցուցանել նմա՝ որում և ոչինչ պէտք էին Սողոնի յայնժամ յայնպիսեաց անտի. քանզի և շատ իսկ ինքնին Կրիւսոս յիւրում անձինն՝ ի գէմս բերէր նմա՝ խնամալ զննել զբոյս բարուցն նորա:

Ա՛րդ իբրև զամենայնն յայնժամ տեսեալ Սողոն՝ եկն եկաց միւսանգամ առաջի նորա, սկսաւ հարցանել զնա Կրիւսոս, եթէ զո՞ք՝ ի մարդկանէ երբէք առաւել երջանիկ քան զինքն տեսեալ իցէ: Եւ պատասխանի Սողոն՝ եթէ՝ ի քաղաքացոց անտի նորա ետես նա զոմն Տեղղոս անուն. և սկսաւ պատմել նմա՝ եթէ այր լաւ և առաքինի եկաց Տեղղոս, և մանկունս բարեմոյնս և ականաւորս եթող զինի իւր, և կեանս վարեալ ոչինչ կարօտ կարևորաց կենցաղոյս, վախճանեաց փառաւոր մահուամբ՝ նահատակեալ՝ ի մարտի վասն հայրենի գաւառին: Կրիւսոսի այնպէս իմն թուէր՝ եթէ՝ ի դուեհկաց ոք իցէ Սողոն և՝ ի վայրենեաց, որ ոչ մերելոց արծաթոյ և ոչ ոսկւոյ երեսս

ինչ արար նա և անդուստ չափեաց զերջանկութիւնն, այլ զառն միոյ սոսկականի և զժողովրդականի զկեանս և զմահ՝ առաւել ընտրեաց քան զայնչափ զօրութիւն և զփառս աւագութեան: Ա՛յլ յայսր ամենայնի վերայ՝ դարձեալ հարցանէր զՍողոն. բայց ապա զկնի Տեղեսի՝ զո՞ր ոք այլ՛ի մարդկանէ ծանեաւ նա առաւել երջանիկ: Կըրկնեաց Սողոն և ասէ, եթէ գիտէ նա զԿղէոբիս և զԲիտոնիսն՝ արս եղբայրասէրս և մայրասէրս բնաւից վեհագոյն. որք և զմայրն իւրեանց գլխովին՝ յորժամ եզինքն կառաջիւգ վաստակաբեկ գնայրին՝ ինքեանք ընդ լուծ կառացն մտեալք՛ի նեղքոյ՝ առին ածին զնա մինչև՛ի տաճար անդր Հերայ, և անդ քաղաքացիքն ծափահարք խնդակից երանի կարգային ցնծացեալ մօրն: Ա՛յլ ապա իբրև զզոհն զոհեցին և նստան ընթրեցին, և՛ի քուն մտեալք, ո՛չ ևս այլ յարեւլին յառնել՛ի գալ աւտրն. այլ զկեանս իւրեանց վախճանեցին, և անցաւ և անտրտում՛ի մէջ այնչափ փառաց հանդիպեցան մահու: Յայնժամ ցասուցեալ Կրիւսոս ասէր առ Սողոն. "Իակ զմեզ գլխովին ո՛չ դասես դու՛ի թիւ երջանիկ մարդկանդ": Յայնժամ Սողոն ո՛չ կամեցեալ՝ ո՛չ չնթեալ ինչ Կրիւսոսի և ո՛չ դարձեալ առաւել ևս՛ի սրամտութիւն շարժել զնա, ասէ. "Հելլենացս մեզ՝ ոմն արքայ Ա՛իգացւոց՝ զայն ամենայն չափով եւ աստուած. և՛ի չափաւորութենէ աստի յայսմանէ ելանէ մեզ մանն մի և բաժին

իմաստութեան՝ անքոյթ և անդրդուելի՝ որ պէս հաւանեալս եմ՝ և հետևակ. ոչ արքայական և ոչ պերճ և պայծառ. որ և զկնի ցաղոյս զկեանս տեսեալ մեր ազգի ազգի և այլազան պատահարաց անկեալ ընդ կրկնք, ոչ ինչ ներէ մեզ յառօրեայ բարիս մեծամեծ ել. և ոչ դարձեալ ընդ բարեբախտութիւն մարդոյ պատճառել ինչ՝ որ ժամանակին փոփոխութեան նեղքոյ գրաւեալ իցէ: Քանզի առն առն իւրաքանչիւր բազմօրինակ բնաւորեցաւ լինել հանդերձեալն, և անյայտ և կեղակարծ: Իսկ որովհետև աստուած բարեբախտութիւն մինչև ցվախճան, զնա ինքն համարիմք մեք երջանիկ. իսկ որ տակաւին կենդանի և յաստի կեցցեալ քաղաքավարի, դեռ՝ ի վտանգ պատահարեալ կայ նորա երջանկութիւնն, և անկայուն է և անվճար, ըստ որում և մեծատուն նահատակին՝ յաղթութեան ձայն մուննեակին և պսակն“:

Զայսոսիկ ասաց Սողոն և մեկնեցաւ անտի. տրտմեցոյց զԿրիւսոս և ոչ հրահանգեաց: Անդանօր՝ ի Սարդի յայնժամ հանդիպեցաւ առակախօսն Եսովպոս՝ եկեալ անդր՝ ի հրաւիրմանէ Կրիւսոսի, և պատուեալ առ՝ ի նմանէ: Որոյ տեսեալ՝ զի մարդասիրութեան ինչ ոչ հանդիպեցաւ Սողոն, ցաւեաց նմա և չոքաւ առ նա, խրատեր և ասէր. “Ո՛վ Սողոն, ընդ արքայից արժան է, կամ ոչինչ խօսել կամ զհեշտալսկրան“: Իսկ Սողոն կրկնեաց անդէն. “Նա՝ օ՛ն և օ՛ն դիքն, կամ ոչինչ, կամ

զնաւան "։ Եւ այսպէս արհամարհեաց յայնժամ Կրիւսոս զՍողոն։ Բայց ապա իբրև մարտ եդեալ ընդ Կիւրոսի՝ վանեալ պարտեցաւ Կրիւսոս 'ի պատերազմին, և զքաղաքն գլխովին կորոյս, և կենդանի ձերբակալ եղեալ՝ հանդերձեալ էր 'ի հուր տապակիլ, և հրաւոտ խարոյկին կազմ բորբոքեալ կայր, և ինքն կապեալ պրկեալ այն ինչ ելանէր 'ի վեր 'ի խարոյկ անդր՝ 'ի զնին տեսութեան առհասարակ Պարսից, և ինքնին Կիւրոս անդ մերձ կայր, ձայն մեծաձայն՝ որչափ ինչ բաւական էր՝ արձակեաց Կրիւսոս բարձր, և գոչեաց երիցս, Ո՜Ղ Ս՜ողո՛ն։ Զարմացաւ Կիւրոս առաքեաց առնա հարցանել, եթէ արդեօք 'ի մարդկանէ ոք էցէ Սողոնդ այդ, կամ եթէ 'ի դից ոք, զոր 'ի տագնապ վերջին զդա միայն յօգնութիւն կարդայ։ Իսկ Կրիւսոս ոչինչ ամենևին ոչ ծածկեաց 'ի նմանէ. "'Ի Հելլենաց անտի՝ ասէ՝ յիմաստնոց էր այրդ այդ, զոր ես ինքնին հրաւիրեալ կոչեցի առիս, ոչ եթէ առ 'ի լսել ինչ 'ի նմանէ և կամ ուսանիլ հրահանգիլ՝ որոց միանգամ պէտք էին ինձ, այլ զի ինքնին նա տեսող ինձ լինիցի և վկայ ինձ կայցէ երջանկութեանն իմոյմ, զոր 'ի կորուսանելն իմ հանդերձեցաւ ինձ մեծ ևս չար՝ քան զբաղին 'ի տանջանսն իմոյմ զնա։ Քանզի համբաւ միայն էր ինձ և կարծիք բարեաց ժառանգութեան դորա. իսկ զարդիս փոփոխումն նորա՝ 'ի կիրս դժնդակս աւադիկ վախճանէ զիս արդէ ամբք և յաղէտս դժոխըմբերս։

Եւ զայսոսիկ ասպա այրդ այդ Սողոն՝ անդուստ ի վերուստ յայնժամ զայժմեանդ իմաստասիրելով իրատ եւս ինձ դէտ ակն ի վախճան կենացն ունել, և մի յանճնապատան ի խորհուրդս անկայունս գոռոզութեամբ պերճանալ»: Իբրև զայսոսիսանի զայս նորա բերին առ Կիւրոս, նա քանզի իմաստնագոյն ևս էր քան զԿրիւասոս, և զբանն Սողոնի գլխովին հզօրացեալ առանէր յօրինակէ անտի որ առաջի կայր, ոչ միայն արձակեաց զԿրիւասոս, այլև ի շուք պատուոյ կալաւ զնա՝ ցորչափ եկեաց նա: Եւ ապա այս մեծապէս փառք եղեն Սողոնի, որ յալքայից անտի միով բանիւն փրկեաց զմին, և վարժեալ գեղեցկապէս հրահանգեաց զմիւսն:

Ա՛յլ ի ժամանակի անդ պանդխտութեանն Սողոնի՝ հերձուած երկպառակութեան էր առհասարակ ԱՆԹԷՆս: Եւ էր առաջնորդ վերակացու դաշտականացն՝ Լիւկուրգոս. իսկ ծովեզերեայցն՝ Մեգակղէս Աղկմէոնեան. իսկ Պիսիսդրատոս՝ Լեռնականացն, յորս էր և խուժան ամբոխին վարձուորացն՝ որք և ոխերիմ թշնամիքն էին մեծատանցն: Եւ Թէսպէս և քաղաքն հաստատուութեամբ ունէր զօրէնսն Սողոնի, սակայն և նորոգ փոփոխութեան իրացն ակնկալեալ ճնային, և առհասարակ ըղձանային կարգ այլ ունել և սահման. ոչ եթէ հաւասարավճռակ ինչ կենաց յուսայեալ ակնունէին, այլ զի առաւել ինչ ի փոփոխութեան անդ իրացն ստասցին անճանց, և

զի գլխովին նկուն արարեալ դադարեցուա-
ցեն զՀերձուածոյն:

Ի լինել այսոցիկ այսպէս՝ էկն եհաս Սողոն յԱԹէնս, և շուք մեծասէր կալաւ յամենեցուն: Ա՛յլ ոչ ևս բաւական էր նա ի պատճառս ծերացեալ հասակին ժրանալ և խօսել ի հրապարակին կամ գործել ինչ. այլ մտանէր խօսէր առանձինն ընդ այնոցիկ՝ որ վերակացուքն էին գլխաւորք հերձուածոյն, փորձ փորձէր դուն գործէր խաղաղել զկագն և միաբանել առհասարակ. և անդ Պիսիստրատոս յաւէտ ինն հակամիտեալ երևէր ի Սողոն: Եւ քանզի առաւել աղու և հեշտ և բաղձալի էր Պիսիստրատոս ի բարբառել իւրում՝, և օգնական զօրավիգն էր աղքատաց, և առ թշնամին իւր հեզ և հանդարտ էր և չափաւոր: Իսկ յոր ինչ անգամն ի քնութենէն չէր վհճակեալ, և զայնոցիկ դարձեալ զնմանութենէն յանձն իւր բերեալ՝ ի վեր քան զբուն ժառանգաւորսն զանձն ի նեղըս ընծայէր, իբրու բարեպարիշտ այր և գլխովին քաջամոյն, և սկրող առաւել իրաւանց արդարութեան. և գժկամակեալ ցանոյր՝ եթէ ոք երբէք գուն գործէր շարժել փոխել ինչ մի ի կարգեալ սահմանացն, կամ նորագոյնս ինչ ի նեղըս խառնել: Եւ այսպիսք ասէա խաբեաց պատրեաց նա զխուժան ռամկին: Իսկ Սողոն արագ արագ նորա բուսոյ բարուցն խեղամուռ եղև, և ինքն առաջին առակեաց զգաւանան, սակայն և ոչ աւեաց ինչ զնա. այլ գուն գոր-

ձէր ՚ի հեղուԹիւն առնուլ ածէլ զնա և խրատել ուղիղ. և յանդիման իսկ ասէր առ նա և առ այլս ոմանս, զի՝ ԵԹԷ ոք զսէր նախաԹուռուԹեանն բաւական էր ընդէլ ՚ի սրտէ դորա, և զցանկուԹիւնն ՚ի դադանէ առնուլ զբռնաւորուԹեանն, չէր ոք այլ արդեօք քան զդա բարեմոյն յառաքինուԹիւն, և ոչ լաւ ոք քաղաքացի քան զդա:

Իսկ զայնու ժամանակաւ իբրև սկսեալ իսկ էր Թեսպիս փոփոխումն առնել ՈղբերգակԹեսպրանին, և ՚ի պատճառս նորոգուԹեան Իրացն ամբոխ ռամկին խուռն ընԹանայր ՚ի տեսուԹիւն անդր, որում չև էր տակաւին երևեալ ՚ի միջի եւ եղք դիմամրցանակք, անդաստին ՚ի բնուԹենէն լրասէր գոլով Սողոն և ուսումնասէր, իսկ առաւել ևս ՚ի ծերուԹեան իւրում՝ ՚ի սփոփուԹիւնս տուեալ զանձն և ՚ի խաղս և ՚ի դինեբերս և յերաժշտուԹիւնս, եկն և նստաւ ինքնին ՚ի ջնին տեսարանին՝ զոր անձամբ Թեսպիս ձևացուցանէր՝ ըստ որում սովորուԹիւն էր առնել հնոցն: Իբրև արձակեցաւ տեսարանն, կոչեաց զնա առ ինքն Սողոն, և հարցանէր ԵԹԷ յանդիման այդչափ բազմուԹեանդ ոչ ինչ ամաչեաց նա այնչափ ինչ բարբառել սուտս: Իբրև պատասխանի ետ Թեսպիս, ԵԹԷ չէ ինչ չար՝ ընդ խաղ ասել յայդպիսեաց այսի և գործել, յայնժամ զգուռալ իւր Սողոն ուժգնակի հարեալ ընդ գետին, ասէ. "Ա՛րագ արագ ուրեմն ՚ի պայմանս գաշանց մերոց գոցուք մեք զնոյն, որ զխաղդ զայդ ՚ի գո-

վրէժխն առեալ ներքողեմք և շուք հա-
րեալ պատուեմք ։

Յետ այսորիկ ապա յորժամ Պխխ-
դրատոս ինքնին վերս ի վերայ եդեալ ան-
ձին, եկն եկաց ի հրապարակ անդր բար-
ձեալ ի կառս, և ի սրտմտութիւն դրդեաց
զամբոխ ռամկին՝ իբրու այն թէ ի պատ-
ճառս օրինաց հայրենեաց խորամանկեալ
աւադիկ էջե ի թշնամեաց իւրոց, և շատք
ոմանք անդանօր սրտնեալք ախտակից լի-
նէին, և ձայն աղաղակին բազմանայր, չդքաւ
մօտ առ նա Սողոն, եկաց և ասէ. " Ո՛չինչ
գործեցիկս դու, ով զաւակ Հիպպոկրա-
տեայ, ձևացուցանես մեզ զՀոմերականն
Ոդիսեա։ Քանզի առնես դու զայդ ի դա-
ժել զքոյին քաղաքացիս. ուր նա վերս ինք-
նին ի վերայ եդ անձինն՝ ի խաբել զթշնա-
միսն " ։ Եւ յայսմանէ ապա խուժան ռամ-
կին կազմ հանդերձեալ էր մարտ զօրա-
վիգն տալ վասն Պխխդրատեայ, և խմբե-
ցաւ ժողովուրդն եկեղեցի մեծ ։ Ընդ իբրև
Արիստոն առաջի առնէր և կնքէր՝ եթէ
պարտ և արժան է արս լախտաւորս յիսուն
թուով տալ Պխխդրատեայ՝ անձնասպահա-
պետ նմա, յոտն եկաց Սողոն և ընդդէմ
դառնայր նմա. և շատ ապա սկսաւ բար-
բառել ի նմանօրինակ բանիցն, զոր ի քեր-
թուածս իւր դրեաց նա օրինակ զայս.
" Քանզի ի լեզուն յակճիռս կայք դուք
և ի խօսս աղու առնդ ։ Իսկ ի ձէնջ այր
այր առանձին զաղուէսսն հետան կոխէ
ընթանայ ։ Ա՛յլ ապա ի մի խմբեալ ձեր՝

խօթուԹիւն մտաց ունի դրաւէ զՁեզ»: Տեսեալ ապա՝ զի աղքատք ալմուկ յարուցեալ հետամուտք էին օգնել Պիսիսդրատոսեայ, իսկ մեծատունք զահի հարեալք և աստ անդ խուճապեալք ղօղէին, էլ և մեկնեցաւ 'ի վայրացն՝, և ասէր. «Խնաստնագոյն եմ քան զաղքատսդ, և արիագոյն քան զմեծատունսդ. խնաստնագոյն եմ քան զնոսա՝ զի ոչինչ խելամուտ են նոքա եղելոց իրացն. գարձեալ և արիագոյն քան զսոսա՝ որ խելամուտ են, այլ երկուցեալ զանգիտեն զդէմ ունել բռնաւորուԹեն»:

Իբրև ժողովուրդն յանձին կալաւ զաւաջարկուԹիւն խորհրդոյն, այնուհետև ոչինչ 'ի պայքար եմուտ Սողոն ընդ Պիսիսդրատեայ վասն Թուոյ լսխտաւորացն, այլ գլխովին անփոյԹ եղև. Թոյլ ետ նմա պահել և ջրջեցուցանել ընդ իւր 'ի նոցանէ՝ որչափ և միանգամ կամք իցեն նմա. մինչև 'ի բուն բերեալ գրաւեաց կալաւ Պիսիսդրատոս զդղեակ քաղաքին, և խուզեալ ամբոխեցաւ քաղաքն ողջոյն. և անդ 'ի շտապ տագնապի Մեգակղէս 'ի փախուստ խուճապեցաւ ընդ այլոց Ալկմէոնեանցն: Իսկ Սողոն՝ Թէպէտև ծերացեալ յոյժ էր, և զօրավիգն օգնականուԹեան ոչ ունէր, 'ի վերայ այսր՝ եկն եկաց 'ի հրապարակ անդր, և խօսէր բարբառէր առ քաղաքացիսն. Ք զի կշտամբէր Թշնամանէր զանհանձար միտս նոցա և զանարի վատուԹիւն նոցա. և Ք զի դրդէր միաւանգամ և իրախուսէր մի մտան լինել ազատուԹեան

իւրեանց: Եւ անդանօր նա զդեղեցիկն զայն յիշատակաց արժանին ասաց բան, եթէ՝ "Յառաջն ձեզ գործ մի հեշտին յոյժ էր խափանել սանձել զբռնաւորութիւնն՝ որ այն ինչ առկայանայր կամէր. իսկ զարդիս մեծապէս է ձեզ և հրաշափառագոյն գործ՝ առնուլ և խլել որ առկայացան՝ և որ արմատս ևս արձակեաց": Իսկ իբրև ոչ ոք նմա 'ի թիկունս եկաց առ ահի երկիւղին, մեկնեցաւ չոքաւ 'ի տուն իւր, և առեալ զդեհն իւր և առաջի դրաց իւրոց եդեալ զայնոսիկ 'ի փողոցի անդ, "Ես՝ ասէր՝ խոովանն զօրավիգն կացի հայրենի քաղաքին իմոյ և օրինաց": Եւ այնուհետև նստաւ և 'ի հանգստեան վարէր կեանս: Եւ մինչ բարեկամք նորա խրատ տային նմա փախչել թաքչել, նա ոչինչ անսաց նոցա, այլ նստեալ դրէր քերթուածս և թշնամանէր այսպանէր զԱթենացիան՝ օրինակ զայս.

"Իսկ թէ զարդիս հիզացեալ կրէք դուք 'ի տրտմականացն առ վաստութեան ձերոյ, մի դուք դիւց ընդդէմ վասն այնորիկ 'ի ցասումն բրդեսջիք: Քանզի դուք ինքնին ըզդոսա զօրացուցէք՝ պահակս տալով դոյա: Եւ արդ վասն այդորիկ կացէք մնայէք դուք 'ի խիստ ծառայութեանդ": Իսկ յորժամ շատք ոմանք յաղագս այսպիսեաց բանից աղդառնէին նմա, եթէ մահու մատնեսցէ զնա բռնաւորն. և հարցանէին ևս գիտել՝ եթէ յինչ վստահացեալ՝ այդպէս ազատասդէմ ճոխանայ, ետ պատասխանի. 'ի ծերութենն:

Բայց անդուստ Պիսիսդրատոս սիրա-
ցեալ ողջոյն ՚ի վերայ իրացն, այնպէս լիո
սպասարկութիւն հարկանէր Սողոնի՝ չուք
մեծ և հիւրամեծարութիւն ՚ի ներքս բե-
րեալ նմա և երբէք երբէք հրաւիրեալ զնա
առ ինքն, որպէս զի և խորհրդական նորա
եղիւ Սողոն, և չատ ինչ ՚ի գործոց նորա այ-
նուհետև յանձին կալեալ գովէր: Քանզի
և զօրէնան Սողոնի բազմագոյն մասամբ պա-
հեաց հաստատուն Պիսիսդրատոս. ինքն
առաջին էր ՚ի պահել, և զբարեկամն դար-
ձեալ ՚ի նոյն հարկաւորէր: Որպէս զի և
իբրև սպանող՝ ամբաստանութեամբ քար-
շեալ նա յԱրիսպագոս անդր, մինչդեռ
տակաւին ինքն թաղ կապեալ էր, չոքաւ
անդր մեծապէս հլութեամբ տալ պատաս-
խանի վասն անձին իւրոյ. իսկ անդանօր
դատախազն ոչ ևս եկաց մինաց յամբաստա-
նութեան իւրում: Գրեաց Պիսիսդրատոս
և օրէնս այլ, յորոց մին է և այն՝ զի զնե-
ղացեալն և զհարուածեալն ՚ի մարտի
պատերազմի հրամայէր կերակրել ՚ի հա-
սարակաց գանձարանէն: Իսկ Հերակղիտոս
ասէ՝ եթէ յառաջ քան զնա Սողոն զնոյն
օրէնս եւս յաղագս Թերսիպատոսի խեղան-
դամին, և նմին հետևուլ դատաւ Պիսիսդրա-
տոս: Իսկ որպէս պատմէ Թէոփրաստոս,
նա և զօրէնան որ ընդդէմ դատարկատուն
անձանց՝ ոչ Սողոն կարգեաց եդ, այլ Պի-
սիսդրատոս. որով և անդաստանք երկրին
առաւել մշակեալք գտան, և քաղաքն
դլխովին ՚ի բազում անդորրու վայելեաց:

Իսկ յետ այսորիկ Սողոն ձեռնամուխ եղեալ ի գործ ի մեծ յաղագս Աղլանտեան ճառին՝ կամ թէ վիպին, զոր լուեալ գիտէր նա յիմաստնոց անտի Սայիտացւոցն, և ճահողակի Աթենացւոցն էր մատենագրութիւնն այն, վաստակաբեկ ձեռնթափ եղև. ոչ եթէ ի պատճառս ինչ անպարապութեանց՝ որպէս Պղատոն ասէ, այլ մանաւանդ առ ի ծերութենէն, զանգիտեալ ի մեծութենէ մատենագրութեանն: Քանզի այս բանք նորա ի դէմս բերեն՝ եթէ շատ ինչ ժամանակ պարապոյ ունէր յայնժամ Սողոն. "Ցանգ եա՝ ասէ՝ շատ ինչ ուսանելով գնալով գնամ և ծերանամ". և թէ՝ "Իսկ զարդիս սիրելի են ինձ Աստղկանն և Դիոնիսեայ և Մուսայիցն գործք, որ զուարթամիտս գործել բնաւորեցան զմարդիկ":

Բայց յետ Սողոնի՝ զմատենագրութիւն զայն յաղագս Աղլանտեան կղզւոյն, որ ամայի կայր իբրու գետին լքեալ ի գեղազուարճ դաշտի, պատուասիրեաց Պղատոն, որում և անկ իսկ էր այն յաղագս ազգակցութեանն իւրում ընդ Սողոնի 7, ձեռն արկանել մշակել և մեծապէս զարդու պսակել զնա. և անդէն ի սկիզբն շինուածոյն նախադրունս իմն ճարտարապետեալ ի նմա մեծամեծս, և ցանգս շրջապատս, և գաւիթս գեղեցիկս, որպիսի ինչ ոչ բանից այլ կամ ճառից՝ ոչ վիպից և ոչ քերթուածոց երբէք վիճակեցաւ ունել չայն պիսեաց անտի: Այլ քանզի անագան ու-

լեծին Պղատոն սկիզբն կալաւ մատենին, քան զգործն յառաջագոյն վախճանեաց նա զկեանս իւր. որ զի՝ որչափ լինչ արձա- նագրեալքն ՚ի նմա հեշտացուցանեն զընթերցանելսն, այնչափ և պակասեալքն ՚ի նմա տխրեցուցանեն զմեզ: Քանզի զոր օրի- նակ քաղաքդ Աթենացւոց միայն զՈղկիմ պիականն ոչ ունի բոլորեալ զմեհեան, սապէս և Պղատոնի խնամատուրիւնն ՚ի բազ- մագէմ հրաշափառան իւր՝ գործ միայն զԱտլանտեանն զայն եթող անկատար:

Ա՛րդ ՚ի սկսանելոյ տիրապետութեանն Պիսիդրատեայ՝ այլ ևս ժամանակս յոլով եկաց Սողոն, որպէս պատմէ Հերակլիտոս Պոնտացի: Իսկ Փանիաս Եփեսացի ասէ՝ ե- թէ և ոչ սակս երկուս եկաց այնուհետև Սո- ղոն. քանզի առ իշխանապետութիւն Կոմիո- սի սկսաւ տիրապետել Պիսիդրատոս, իսկ առ Եգեստրատոսիւ՝ որ իշխանապետ եկաց յետ Կոմիոսի՝ ասէ Փանիաս վախճանեալ զՍողոն: Իսկ թէ յայրիլ մարմնոյն Սողոնի՝ մոխիր նորա ցանեալ էցէ շուրջ զՍաղամի- նայ կղզեաւն, այս գվիսուվին յաղագս ան- տեղութեանն յանհաւատալեաց սակի է և յառանցիկ ճառից. Թէպէտ և զնոյն մատե- նագրեն և այլք ոմանք արժանահաւատք, և Արիստոտել ինքնին իմաստասէրն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ոչրեք աղաւաղ են իմաստք Սողոնի տողից՝ ի Տպ. գործոցն Պլուտարքեայ: Ա. յլ Կրիապինեան Տպ. առաձից իմաստասիրաց, լաւագոյն ևս իմաստս և բոլորեալս ի՝ ներքս բերէ, ըստ որոյ է և Հայն:

2. Ա. յսինքն. Որովայնն յագի, և կողքն ծածկին ի՝ մերկութենէ, և ոտքն ունին կօշիկ:

3. Հոմերոս Հագնեցդ. Բ. ի՝ Նաւահաշիւն Յունաց խմբելոց ի՝ մարտն Տրոյեոյ:

4. Էին սոքա դատաւորք նախաթոռք աշխարհախումբ ատենին Եղբադայ:

5. Էր Արիապագոն՝ բլուր մերձ դղեկին Աթենայ. ուր էր ցանկապատ բացօթեայ, յորում և խմբէին դատաւորք, շուք առեալ իբրև ղդից ոմանց: Եւ էին տարւոր իշխանապետք՝ թուով ինն:

6. Էր այս ժողով արանց ուխտանից:

7. Էր Պլատոն ազգականութեամբ սերեալ յեղբօրէն Սողոնի:

ՊՈՊՂԻԿՈՂԱՍ

Եւ արդ՝ մեծիս այսմիկ Սողոնի զուգակշիռ զՊոպղիկողաս ինքնին դասեմք մեք առաջիկ, որում՝ ի շուք պատուոյ զդոյն անուն ընծայեաց նմա ժողովուրդն Հռոմ մայեցւոց. զի անուն կարդային նմա յառաջագոյն Պոպղիոս Վաղերիոս: Եւ էր սա՝ որպէս Թուխ՝ ի զարմէ անաի նախնւոյն Վաղերիոսի, այն որ պատճառաք մեծապէս եկաց՝ զի որ յառաջն Թշնամիք միմեանց՝ Հռովմայեցիք և Սաբինացիք՝ եղեցին ազգ մի և ժողովուրդ մի. քանզի սա էր՝ որ գուն գործեաց և հաւանեցոյց զԹաքաւորան, գալ ի մի վայր և խօսել ընդ միմեանս և միաբանել: Արդ՝ սմա ազգակից հանդիպեալ մերս այս Վաղերիոս՝ որպէս ասեն, մինչդեռ տակաւին Թագ կապեալ էր Հռոմ, էր ականատես յոյժ ի ճարտարախօսութեան մասին և յընչաւէտութեան. յորոց

զառաջինն ուղղասէս և համարձակաձայն վարէր նա ցանգ վասն իրաւանց և արդարութեան. և զերկրորդն՝ կարօտեալոց անձանց բաշխէր աղատօրէն և մարդասիրապէս: Եւ յայնմի էր ասպա ամենայն տեսանելեացն բարձերէց նախանձոտութիւն առնն, եթէ երբեք յանկարծ ՚ի ռամկապետութիւն անդր փոխէր քաղաքն:

Ա ՅԼ քանզի Տարկուինիոս Սուպերբոս ո՛չինչ գեղեցիկս զանձամբ էառ զարքայութիւնն, այլ ամբարշտութեամբ և անիրաւութեամբ. և ո՛չ իբրև այր թագաւոր վարէր ՚ի գործ զիշխանութիւնն, այլ քամահանօք և ըստ օրինի բռնաւորաց, յատեալ թիւն դրդեալ ընդ նմա ժողովուրդն և ծանրացաւումն եղեալ, սկիզբն այնուհետև ապստամբութեան նոցա եղեն կիւլք աղէտից Լուկրետեայ, որ սակս բռնաբարութեանն՝ ինքնին անձին արար: Իսկ անդ Լուկիոս Բրուտոս ձեռնամուխ եղեալ ՚ի փոփոխութիւն իրացն, յարուցեալ առաջին չքաւս նա առ Վաղերիոս. և գտեալ զնա իւր զօրավիգն ժիր և մտադիւր յոյժ, նովաւ հանդերձ վանեաց հալածեաց զթագաւորն: Եւ ցոր վայր թուէր նմին այնպէս՝ եթէ զօրավար մի փոխանակ թագաւորի ընտրեալ կարդեացէ իւր ժողովուրդն, լուռ մնջիկ եկաց Վաղերիոս, իբրև Բրուտոսի յաւէտ անկ լեալ իշխանութիւնն՝ որ առաջնորդ նահատակ եկաց ռամկապետութեն այնմիկ: Ա ՅԼ քանզի միապետութեանդ անուն ատելի էր ժողովրդեանն, և թուէր

այնպէս՝ եթէ հեշտաբար առաւել բերցէ նա զիշխանութիւն երկակի, զերկուս ոմանս ընծայեցուցեալ յաւագութիւն անդր, և այն ինչ ակն կալեալ մնայր Վաղերիոս՝ եթէ ընդ Բրուտոսի և ինքն գլխովին ընտրեսցի, և՝ի միասին ընդ նմա կացցէ հիւպատոս, վըճռ եղև՝ի յոլսոյն: Քանզի յաղագս կամայ կամ Բրուտոսին ընտրեցաւ իշխանակից նմա փոխան Վաղերիոսի՝ Տարկուինիոս Կոլատինոս այրն Լուկրետեայ, որ չէր ինչ վեհագոյն առաքինութեամբ քան զՎաղերիոս. այլ սակայն առագք քաղաքին երկուցեալք՝ ի թագաւորաց անտի՝ որ տակաւին շատ գոն գործեալ փորձ փորձէին արտաքոյ, և հետամուտք ևս էին յինքեանս յանկուցանել զքաղաքն, թշնամի զոմն նոցա յոյժ ոխերիմ՝ և անհաշտ և անողոքելի կամեցան ունել իւրեանց զօրավար: Ապա ծանրացաւսումն եղեալ Վաղերիոս, զի ոչ աներկբայաբար վստահացան՝ ի նա՝ գործել նմա զամենայն՝ ի պատճառս սկզբոյ հայրենի քաղաքին, իբրու այն որ ոչինչ առանձինն՝ ի չարեաց մասին կրեալ ինչ էր նա՝ ի միապետաց անտի, տէրն էտ մեկնեցաւ յաստենէ խորհրդոյն. էտ հրաժեշտ ողջոյն՝ ի միաստաբան պաշտպանութենէն. և ոչ կամէր ամենևին միջամուխ երբէք լինել՝ ի գործն հասարակաց: Որպէս զի և պատճառս էտ քրմիմնջելոյ ժողովրդեանն և՝ի խորհուրդս տագնապելոյ, յայն ե՛ղեալք՝ գուցէ առ բարկութեան ցասմանն երթեալ յաւելցի նա առ թագաւորան և

վեր ՚ի վայր շարժեացէ զգործն և զքա-
ղաքն գվնասվին՝ որ գայթ ՚ի գայթի կայր։

Ա յլ երբև Բրուտոս ՚ի միտս կասկա-
ծոտս գոլով և վասն այլոց ումանց, կամե-
ցաւ զի ՚ի սպանդս անդ զոհիցն երդումն
կռեսցէ Ծերակոյան՝ և կարգեաց սահմա-
նեաց և զօրն, կարի զուարթամիտ յայն-
ժամ Վաղերիոս էջ ՚ի հրապարակ անդր, և
ինքն առաջին կռեաց երդումն՝ մի ինչ ա-
մենևին զնչանել Տարկուինեայ և մի ինչ
հաշտ լինել ընդ նմա, այլ մարտ եդեալ
կռուել ընդ նմա իւրովանն ՚ի վերայ ազա-
տութեան. և այսպէս ապա մեծապէս
բերկրեցոյց զՊինկղիտոսն և քաջալերեաց
միանգամայն և զնչխանան. և անդէն փու-
թանակի և արդեամբք գվնասվին զերդումն
հաստատուն առնէր։ Քանզի յետ այնո-
րիկ եկին հասին ՚ի քաղաք անդր հրեշտակք
՚ի Տարկուինոսէ՝ նամականի բերեալ յան-
կուցիչս և համոզակերս ժողովրդեան և որ
լի էին հեշտ և հանգարտ բանիւք, որով և
մեծապէս ակն ունէին գաւել պատրել
զնուաժան ռամկին, և խօսէին ևս առ նոսա
՚ի գնմանց ազգայնին՝ իբրու այն որ ՚ի բաց
զպերճութիւն գոռոզութեանն եդեալ
էին, և չափու և արդարութեան զհետ
կրթեալ էին։ Իբրև անդ հիւպատոսք լաւ
համարեցան ածել զհրեշտակսն յանգի-
ման ժողովրդեանն, Վաղերիոս ոչ թողա-
ցոյց, զդէմ կալաւ և արգել զնմ մի ինչ թե-
րևս պատճառս և պատրուակս նորագործ
ազգից եղելոյ այն աղքատ մարդկանն՝ որ

քան ընդ բռնաւորութիւնն՝ առաւել դըժ-
կամակք էին նոքա ընդ մարտ պատերազ-
մին: Բայց յետ այսորիկ եկին հասին և
այլ հրեշտակք՝ որ ասէին եթէ Տարկուփ-
նիոս ՚ի բաց հրաժարեալ կայ այնուհետև
յարքայութենէն և ՚ի կռուոյն ձեռնթափ
եղեալ է. սակայն զինչս իւր և զամենայն
արարան խնդրէ, զնոյն և բարեկամք նորա
և ընտանիք նորա, զի կերակրել զանձինս
բաւական լցեն յարտասահմանութեան իւ-
րեանց: Իբրև ընդ այս զինչեալ հաւանէին
բազումք, և անդ յաւէտ լինի ՚ի նոյն հա-
մախոհ գտանէր Կողատինոս, յայնժամ
Բրուտոս այր անզարհուրելի վճռակեալ
ոգւոյ և բարկացայտ ահընկէց, յարեաւ վա-
զեաց արտաքս ՚ի հարապարակ անդր, գո-
չէր բարձր և մատնոյց զնիշխանակիցն կար-
դալոյր, իբրու որ զօրավիգն սատար խնդրես-
ցէ կալ մարտի պատերազմին և բռնաւո-
րութեան ՚ի շնորհս արանցն՝ որոց և ոչ
արժան էին լցէ արդեօք պարէնս կենաց
սահմանել յարտասահմանութեան նոցա:

Իբրև ՚ի մի վայր խմբեցան քաղաքացիք, անդամնօր առաջին ՚ի սոսկականաց ոմն այր՝ անուն Գայիոս Մինուկիոս հրապարակա-խօս լինէր առ ժողովուրդն, պնդէր հաս-տատէր ՚ի նոյն զԲրուտոս, և խրատէր զՀռովմայեցիսն՝ ընտրել առաւել զի ինչքն առ իւրեանս կացցեն ՚ի կռիւ ընդդէմ բռնաւորացն, քան առ բռնաւորսն՝ ընդդէմ քաղաքին: Ա՛յլ սակայն հաճոյ թուէր ցաւ Հռովմայեցւոցն՝ որ զազատութիւնն

'ի ձեռս բերեալ էին՝ որ աղաղաւ և մարտ եդեալ կռուէին, մի մասն լինել խաղաղութեանն 'ի պատճառս ոսկւոյն, այլ 'ի միասին ընդ բռնաւորացն և զնոյն գարձեալ վարել 'ի միջոց խրթանց:

Ա յլ արդեօք Տարկուինեայ փոյթ դուզ նաքեայ էր յաղագս ընչից այնոցիկ, այլ 'ի խնդիր նոցա՝ միանգամայն փորձ փորձէր նա զժողովրդեանն, և մատնութիւնս իսն դրէր մենքենայել: Եւ 'ի նոյն գուն գործեալ տքնէին հրեշտակքն, որք և դեգերեալ կային 'ի քաղաքին 'ի պատճառս ընչից. իբրու թէ զկէսն 'ի նոցանէ տալ 'ի վաճառ, և զկէսն՝ պահել անդէն, և զկէսն գարձեալ՝ ասէին տալ առաքել առ տէսրսն. մինչև յանկուցեալք խոտորեցուցին ըզզարմս երկուս զականաւորացն և զլաւացն, որոց անուն կարդային Ա՛ռ-իղէանս, որ զերկիս ունէին 'ի Սինկղխոսէն. և Վ՛իթելէանս՝ որ զերկուս: Եւ էին սոքա ամենեքեան քեռորդիք Կողատինոսի հիւպատոսին: Ա յլ առանձինն և այլ ազգակցութիւն էր 'ի միջի Վ՛իտելեանցն ընդ Բրուտոսի. քանզի զքոյր նոցա ունէր Բրուտոս 'ի կին, և որդիս ևս բազում ծնեալ էր առ 'ի նմանէ. 'ի սոցանէ զերկուս ումանս՝ որ յարբունս հասեալք էին, որ ազգակից միանգամայն և կենցաղակից էին Վ՛իտելեանցն, որոյ ցեալք յինքեանս յանկուցին Վ՛իտելեանք, և ածին հաւանեցուցին զնոսա համախոհ 'ի գործ մատնութեանն լինել ընդ նոսա, և առնուլ խառնել զանձինս ընդ մեծի զար-

մին Տարկունեանց, և անկաղուԹիւնս ևս յուսոյ ունել մեծամեծս և արքենիս, և ուծանալ ՚ի բաց կալ ՚ի հլուԹենէ այնպիսի ապուշ և անագորոյն ծնողի: Եւ անագորոյն կարդալին զԲրուտոս, քանզի անողոքելի էր առ չարագործան. իսկ ապուշ, քանզի իբրև այնպիսի ոք ձևացոյց զանձն, և պատրուակեաց զինքն Բրուտոս բաղում ժամանակ առ բռնաւորն՝ որպէս հաւանելոս եմ՝ ՚ի պատճառս աներկևանուԹեան անձինն. և յետ այնորիկ ապա այն մականուն երբէք ոչ բարձաւ ՚ի նմանէ:

Ադդ իբրև ածեալ հաւանեցան պատանիքն, և յարեան չղթան առ Ակուիլեանն անկանել զբանիւք, անդ հաճոյ ԹուեցաւԱմենեցուն երդումն կռել զմեծ և սաստիկ. ապա առին ձաշակեցին յարենէ առն փողոտելոյ, և մատեան շօշափեցին զախոնդիս փորոտեաց նորա: Եւ յետ այսորիկ եկին ժողովեցան ՚ի տուն անդր Ակուիլեանց. իսկ էր տուն բնակուԹեան նոցա՝ յորում հանդերձեալ էին ՚ի գլուխ հանել զգործն, ՚ի ճահ պատահեալ իրացն՝ քանզի յամայի վայրի էր և խաւարչտին: Ալ ոչ միտ եդին նոքա՝ զի ծառայ մի առնուն Վինդիկիոս՝ անդ ՚ի նեղքս զօղեալ կայր, ոչ եԹէ դարանամուտ լինչ եղեալ անդանօր, կամ Թէ յառաջագոյն իրազգած հանդերձելոցն, այլ զի անդէն ՚ի նեղքս ՚ի տան հանդիպեցաւ այրն. և այն լինչ նոքա հապճեպ խուռն ՚ի նեղքս մտանէին, երկեաւ նա երևեցուցանել զանձն, եկաց ան-

գէն՝ կծկեցաւ յետոյ արկեղն որ անդ ե-
դեալ կայր. և անդուստ ապա միանգամայն
և գործելոցն ՚ի ջնին ականատես լինէր և
խորհրդոցն նոցա ականջալուր: Ընդ ՚ի
խորհրդեան հաճոյ Թուեցաւ նոցա մահու
սպանանել զհիւպատոսան. և իրացս այսո-
ցիկ յայտարար Նամականի գրեալ առ Տար-
կուինիոս, եւտուն ՚ի ձեռս հրեշտակացն.
քանզի նոքա անդէն բնակութիւն կալեալ
իջևանեալ կային առ Ակուիլեանան, և
՚ի համաշունչ երդմանն յայնժամ և նոքա
մերձ կային: Իբրև զայս ՚ի գլուխ հանին,
ելին այնուհետև մեկնեցան. եւ և Վինդի-
կիոս արտաքս ՚ի ծածուկ, և տագնապեալ
էր այրն յոյժ ՚ի խորհուրդս իւր, և ոչ գի-
տէր զի՞նչ օրինակ վարեսցէ յառաջիկայ
դէպն. գիտնդակ յոյժ համարէր՝ որպէս և
էր իսկ գլխովին՝ գնալ առ հայրն Բրուտոս
և ամբաստան վասն որդւոցն լինել. կամ առ
քեռին Կոլատինոս վասն քեռորդւոցն՝
յաղագս մեծի դէպին պատահման. և յայլ ոք
դարձեալ ՚ի սոսկականաց անտի Հռոմ
մայիցւոց ոչ արժան համարէր հաւատալ
զմեծապէս գաղտնութեան խորհուրդն:
Արդ իբրև առաւել հեշտեաւ զայլն ամե-
նայն բաւական էր գործել այրն, քան Թէ
՚ի ժամուն յայնմիկ ժուժել լռել, առ այս՝
և ՚ի խղճէ ևս մտացն յուզէր ծփայր վասն
իրացն, գիմեաց չոքաւ անդէն առ Վալե-
րիոս. բերեալ՚ի նոյն՝ ՚ի գերդեցիկ և ՚ի մար-
գասէր բարոյից առնն, զի ամենայն կարօ-
տեալոց առ հասարակ գիւրամատոյց էր, և

զտուն քնակուԹեան իւրոյ ցանգ բաց ու-
նէր առաջի ամենեցուն, և ո՛չ զհայցուածս
բանից իւրաքանչիւր և ո՛չ զպէտս հիքացե-
լոց անձանց երբէք նա ընդ վայր հարկանէր։

Աւրդ՝ իբրև եւ առ նա Վինդիկիոս, և
զամենայնն ետկաց ոճով պատմեաց նմա, և
մերձ առ նմա կայր միայն Մարկոս եղբայր
նորա և կին իւր, յապուշ հարաւ Վալե-
րիոս և զդողանի հարեաւ երկինչէր, այլ
ոչինչ Թոյլ ետ մեկնիլ առն. առեալ զնա
փակեաց ի տան անդ իւրում, և պահապան
նմա զկին իւր ի վերայ դրացն կացուցանէր.
և զեղբայր իւր արձակեաց՝ ետ հրաման
գնալ պաշարել զարքունիսն, և զնամակա-
նին՝ եԹէ հնար լիցէ՝ ի ձեռս բերել, և ըզ-
ծառայսն պահել արդեւլով ի ներքս անդ։
Խակ ինքն առեալ ընդ իւր զբազմուԹիւն
պաշտպանաւորացն իւրոյ և զբարեկամացն՝
որ ցանգ զնովաւ կային, և ամբոխ բաղում
ի սպառաւորացն, գէմ եդեալ ջրաւ ի
տուն անդր Ակուիլեանց՝ որ յայնժամ
չէին ի ներքս։ Վասն որոյ և մինչդեռ ո՛չ
ոք ակն կալեալ սպասէր, յեղակարծումն
խուժեալ ի ներքս ընդ դրունսն՝ գտեալ
ի ձեռս բերէ զնամականին՝ որ կային անդ
ուր օԹեվանս կալեալ էին հրեշտակքն։
Մինչդեռ նա զայս գործէր, անգուստ և
Ակուիլեանք ընԹացան ի վայր անդր, և
մերձ առ դրունսն ձեռն ի գործ արարեալ
ի կռիս ընդ նոսա, գուն գործէին ի բաց
առնուլ ի նոցանէն զնամականին. սոքա
զգէմ կացեալ նոցա, և զձորձան առեալ

պարուրեալ՝ արկեալ նոցա զպարանոցօքն, բռնութեամբ և մեծաւ ուժով էր զի քարշեալք զնոսա, և էր զի ձգեալք առ՝ի նոցանէ, այնպէս ապա եկին էլին ընդ անձուկ փողոցս քաղաքին մինչև՝ ի հրապարակ անդր: Ա յս գործք և յարքունեան կատարէին զնոյն օրինակ. քանզի անդանօր և Պարկոս այլ նամականի՝ զոր յանօթս լեին ամփոփեալ թաքուցեալ տանէին՝ յուզեալ՝ի բուռն արկանէր. և յարքունի պաշտօնէից անտի՝ որչափ լինչ ձեռնհաս լինէր՝ քարշէր ածէր՝ի հրապարակ անդր:

Իբրև զաղմուկ ամբոխին այնորիկ հանդարտեալ խաղաղացուցին հիւպատոսք, և՝ի հրամայել Վալերիոսի՝ ՝ի վակարանէ անտի եկին եհաս անդր և Վինդիկիոս, և զամբաստանութիւն ՚ետուն բարբառեցաւ առ ժողովուրդն, ՚ի մէջ եկին յայնժամ և նամականին և ընթերցան, և լինչ մի անդ ամենևին ոչ իշխեաց ոք ժխտել յարանց անտի: Ընդ եր տեսանել զմեծապէս սրտաբեկութիւն առհասարակ զամբոխին, զի լուռ և անշշունչ կային ամենեքեան. իսկ և նուաղուկք ոմանք չնորհս կամեցեալ առնել Բրուտոսի՝ աքսորանս յուշ ածէին հրապարակին. անդուստ և Կոզա տինոս յարուցաւ հարեալ լայր, և Վալերիոս ինքնին լուռ մնջիկ կայր, և այսչափ լինչ ապա յոյս բարւոյ ակնկալութեան տային նոքա հնազանդեցոյն: Իսկ Բրուտոս եկն՝ի մէջ և արձանացաւ, և յանուանէն զայր այր յորդւոցն իւրոց կարդայ և ասէ.

"Ա՛լէ ապա ոմ Տիտոս, այլ և դու ինքն ոմ վ՛աղերիէ, զի դուք՝ զի ոչ պատասխա-
նի առնէք վասն ամբաստանութեանդ": Իբրև նա այսպէս երկեցա կարդայր զնոսա և հարցանէր, և նոքա ոչինչ եւս պատաս-
խանի, յետ այնորիկ առ պաշտօնեայ դա-
հիճն զերեսան դարձուցեալ, "Գո՛րծ այսուհետև՝ ասէր՝ 'ի ձեզ է զկնովին ա-
պատան": Նոքա յառաջ անցեալ փու-
թանակի ձերբակալ արարին զպատանիսն, հանին կապտեցին 'ի նոցանէ զպատմու-
ճանն, և զձեռն 'ի յետս տարեալ կա-
պեցին, և գաւազանօք հարեալ յօշէին ըզ-
մարմինն: Իսկ անդանօր 'ի հրապարա-
կէն ոչ ոք հանդուրժէր տեսանելին, և կամ երբէք հանդարտէր զակն յառեալ 'ի նոսա. միայն Բրուտոս՝ որպէս ասեն՝ ոչ այլ ուրեք երբէք զակն չրջեալ, և ոչ գու-
թէ ինչ գորովոյ նկուն առնէր զայրն 'ի բար-
կութենէն և յանողոքելի կրից՝ որ յե-
րեսս նորա բոցանայր, այլ տիգօք աչաց կայր այնպէս գետէր անքթիթ զկտտանս զաւակացն, մինչև տարածեալ զնոսա գե-
տապատ՝ սակրով առին զդլուխս նոցա: Ջայս այսպէս գործեալ Բրուտոս, և զայլսն 'ի չիսասակարացն յիշխանակիցն իւր ապա-
տան արարեալ, ինքն էլ և ևեկնեցաւ 'ի նո-
ցանէ. գործ այնպիսի կատարեալ Բրու-
տոսի՝ զոր ոչ գովել ոք արժանապէս ար-
դեօք բաւական եղէ, և ոչ դարձեալ պար-
սաւել: Քանզի կամ բարձրութիւն առաքի-
նութեանն յանախտութիւն առ յաւիտս-

կեաց զոգի առնն, կամ սատակութիւն կրելոյն յանցաւորութիւն փոխեաց զնա. և երկաքանչիւր այս՝ ոչ գուշնաքեայ ինչ է, և ոչ ի մարդկայնոց ասի, այլ կամ աստուածային է և կամ գազանային: Սակայն արժան և իրաւ է դատողական մտացն հպատակել առաւել փառաց առնն, քան իւրաքանչիւրոցն դատողին՝ զառաքինութիւնն զլանալ նմա: Քանզի հռովմայեցիք ոչ այնչափ գեղեցիկ նահատակութիւն հռոմուլեայ հանարին զչինուածիւն քաղաքին, որչափ Բրուտոսին՝ զհիմնարկութիւն քաղաքականութեանն և զգեղեցիկ հաստատութիւն նորա:

Ա՛րդ երբև այսպէս եւ գնաց Բրուտոս ի միջոյ անտի հրապարակին, անդանօր հարուստ մի ժամանակ յափշտակութիւն հարեալ կային առհասարակ ամենեքեան. և զդողանի հարեալք ի խոր լռութեան կային վասն երացն գործեցելոց. բայց զմեղկութիւն տեսեալք զկողատինոսին Ակուլեանք և զգեցուել և զգեգերել զառնն, պատապնդեալք խնդրեցին ժամանակ պատրաստոյ վասն անձանց պատասխանի առնելոյ. և ել՝ ի ձեռս իւրեանց տացեն զվէնդիկիոս՝ որ սորուքն էր նոցա, ել մի ի կողմն ամբաստանողացն այնուհետեւ կացցէ նա: Երբև կողատինոս կամեր իմն զնջանել բանիցն և արձակել զեկեղեցին, վաղերիոս ոչ զայրն Թոյլ եաս առնուլ՝ որ կայր ի խառն անդ չուրջ զնովքն, և ոչ աւերիչին Թոյլ եաս ցրուել և յափշտակութեան Թո-

ղուլ զվնասակար մատնիչն : Հուսկ ապա
ինքնին միսեալ ձեռս ՚ի պարտաւորան անդր,
ձայն արձակեալ կարդայր զԲրուտոս, բո-
ղոք բառնայր եթէ զանհանդուրժելին
այնուհետեւ գործէ Կողաւինոս, իբրու այն՝
որ իւրում իշխանակցին հարկ ՚ի վերայ ա-
ծեալ որդեկոտոր լինել, ինքն ապա ար-
ժան համարի չնորհս առնել կանանց, և Թո-
ղուլ արձակել զմանտու վնասակարն և
զԹշնամիս քաղաքին : ՚Ի սրտմտութիւն բար-
կութեան բրդեցաւ Հիւպատոսն Կողաւի-
նոս, ետ հրաման առնուլ ՚ի բաց զվնդի-
կիոս. անդ պաշտօնեայ դահիճքն եկեալ
՚ի բաց վարատեցին զամբոխն, և ձեռն
միսեալ ՚ի նա առին յիւրեանս. հարուածս
՚ի վերայ դնէին՝ որ խնդրէին ՚ի բաց կո-
ղել զայրն : Իսկ բարեկամք Վալերեայ ան-
դանօր զօրավիգն տուեալ պաշտպանէին
նմա. և առհասարակ ժողովուրդն ձայն
բարձեալ խնդրէր ստիպաւ՝ զի եկեալ հաս-
յէ անդր Բրուտոս : Իբրև դարձաւ եկն
նա միւսանգամ, և առհասարակ ՚ի լռու-
Թիւն փոխեցան առաջի նորա, բարբա-
ռեցաւ և ասէ. "Զաւակացն իմոց ես ինք-
նին շատ իսկ արդեօք կացի դատաւոր.
իսկ արդ զայրն ՚ի դատաստան քաղաքայ-
նոցս ազատացեալոց առնեմ ապաստան.
ա՛ղէ արդ ո՛ւմ և կամք իցեն, ձայն տացէ և
առեն նախաօս եղիցի առ ժողովուրդդ" : Բայց
առենախաւսութեանց պէտք ինչ չէին նոցա
՚ի ժամուն. առ հասարակ ետուն դատա-
կնիք, և ձերբակալ արարեալ զամենայն ինա-

սակարան՝ տապարահար սատակեցին։ Իսկ Կոլատինոս ընդ կատածանօք անկեալ՝ որպէս հաւանեալս եմ՝ ի պատճառս ազգակցութեան իւրոյ ընդ արքային. և զի՝ և յերկրորդ անուանէ նորա Տարկուինոս՝ գալ չէին ժողովուրդք առ աւելութեանն ընդ Տարկուինիոս, և զի՝ և ի դէպս յայսոսիկ առհասարակ խոժոռեցաւ ընդ նա ժողովուրդն, ինքնակամ հրաժարեաց նա յիշխանութենէն, և էլ գալոտ մեկնեցաւ ի քաղաքէն։ Եւ այսպէս ապա ի կարգել նորոյ ընտրութեան իշխանացն, մեծապէս փառաւք Վալերիոս ընտրեալ հրատարակեցաւ հիւպատոս, և տարաւ նա զարժանին մրցանակ զառաքինի նահատակութեանն իւրոյ։ Սակայն պարտ համարեցաւ նա՝ և զվինդիկիոս ինքնին գլխովին բաժանորդ շնորհին առնել. եւ վճիռ՝ զի նա առաջին ազատագրեալ՝ եղիցի քաղաքացի Հռովմայ, և քուէայ ևս բաւական իցէ տալ՝ յոր ցեղ և կամք իցեն նմա ի թիւ մտանել։ Եւ յետ այնորիկ զայս իշխանութիւն քուէայց՝ անագան ուրեմն և յետ բազում ժամանակաց՝ այլոց տորկաց ազատացելոց եւ Ապպիոս ի շնորհս ժողովրդեան։ Իսկ զազատագրութիւն այսպիսի ամենակատար՝ մինչև ցայսօր ժամանակի անուանեալ կոչեն Հռովմայեցիք վինդիկիոս, ի պատճառս վինդիկիոսին՝ որպէս ասեն։

Յետ այսորիկ զինչ թագաւորացն եւտուն յաւար և ի կապուտ Հռովմայեցւոց. իսկ զտուն բնակութեանց նոցա և զարքունիսն

հիմն ի վեր տապալեցին. և զգեղազարձ վայր զգաշտին Արէսի՝ զոր ժառանգեալ ունէր Տարկունիոս, և զայն ևս առեալ դիցն այնմիկ նուիրեալ սրբեցին: Իսկ գէպ եղև, զի այն ինչ հնձեալ էին անդ զհունձն, և գադիշքն դէզադէզ կուտեալ կային. վասն որոյ ոչ արժան համարեցան կասուլ զհունձն, և ոչ ի պէտս ինչ այլ վարել զայնոսիկ վասն նուիրական սրբութեանն, այլ խումբս առեալ բարձին զորայն և տարան ի գետս անդր. առ այս՝ և զծառան հատեալ արկին ի նոյն գետ, և այնպէս Թռչնին դիցն զվայրն զայն անգործ գլխովին և անբեր: Իսկ ի գալ խոնեալ անդանօր բազում ինչ նիւթոյ կուռ զհետս միմեանց, ոչինչ հեռագոյնս առեալ տանէր զնոսա հոսանք գետոյն. այլ առաջինքն կուտակեալք մնային կառեալք ի տեղւոջն, և որ զկնին գային՝ ջունելով եղս ընթացիցն, և կառեալք և ընդ միմեանս կուռեալք, հիւս և անկուած մեծ և հաստահարուստ առ կայանայր, և արմատս ևս արձակէր, և ի հոսանաց գետոյն երթալով երթայր և Թանձրանայր: Քանզի սիկ բազում առեալ բերէր գետն և կուտեալ հանապազօր՝ հաստատուն Թումբ ամուր կարգէր նմա. գարձեալ և ոչ խրամ ի հարուածոյ հոսանացն խոռէր ի նմա, նա և որ միմեանց զհետս գային նիւթք տակաւ և հետզհետ ի մի պնդեալք, ի նոյն ձոյլ առհասարակ ձուլէր ամենայնն. և առ մեծութեան և առ ամրութեանն առնոյր ամ

վոփեր 'ի ծոց իւր շատ լինէ 'ի վայրաբեր-
ելից գետոյն, և ևս քան զևս աճեր 'ի մեծու-
թիւն: Եւ ե այժմ այս վայր՝ կղզի նուի-
րական 'ի մէջ քաղաքին, և են 'ի նմա մե-
հեանք գից և ձեմելիք, զոր Լատինացք բար-
բառովն կոչեն՝ ընդ մէջ երկոցունց ճամբուց:
Բայց կէսք պատմեն հանդիպեալ զայս, ո՛չ
յորժամ դաշան Տարկունիոսի նուիրեալ
սլքեցաւ, այլ յետ ժամանակաց՝ յոր-
ժամ այլ վայր սահմանակից նմին՝ Տար-
կունիա ընծայեաց գիցն: Իսկ այս Տար-
կունիա կոյս էր նուիրական՝ մի 'ի վե-
տեանց անտի, և շուք փառաց մեծապէս
ժառանգեաց նա անձին իւրում վասն այսո-
րիկ. յորս էր և այն, զի 'ի մէջ կանանց՝ սո-
րա միայն վկայութիւնն ընդունելի էր 'ի
դատաստանի. և իբրև զայն ևս վճիռ եղեալ
կարող լինել նմա՝ լինել առն, նա չէառ
յանձն: Եւ զայսոսիկ օրինակ զայս վկայեն:

Բայց զՏարկունիոս՝ որ յուսահատ
լեալ էր այնուհետև դառանջք միւսանգամ
'ի բուռն զարքայութիւնն արկանել, առին
ժողովեցին Տիւրրենացիք մեռադիւր յօժա-
րութեամբ, և զօրու ծանու եկին խմբեցան
'ի միասին: Անդուստ և հիւպատք շարժե-
ցին ընդդէմ նոցա զՀռոմայեցիան, և եկին
Ճակատեցան 'ի վայրս նուիրականս, որոց
անուն կարգային միումն՝ Ապսո Արեան,
և միւսոյն՝ Մարգ Եռուան: Իբրև ձեռն 'ի
գործ արարին մարտն պատերազմի, ան-
դուստ Արրոն որդի Տարկունեայ, և Բրու-
տոս Հռոմայեցւոց հիւպատոս, ո՛չ ըստ

դիպաց արդեօք պատահեալք միմեանց, այլ յատեղութենէ դրդեալք և՝ ի սրամբ տուքենէ բարկութեան, սա խըրու՝ ի վերայ բռնաւորի և թշնամւոյ հայրենեացն, և նա անդուստ՝ ի վրէժ խըրոյ արտասահմանութեանն, միանգամայն մտրակ՝ ի կուշտ յարձակեցան երիվարաքն հանդէպ միմեանց: Այլ քանզի սաստկապէս խուճապմամբ խառնեցան՝ ի կռիւն՝ քան հանճարով զգուշացեալք, այր այր ոչինչ միտ եդեալ անձին վրկութեան, հարան՝ ի դիմի և՝ ի միմեանց անկան դիտապատաս: Եւ այս ահագին նախամարտիկ շահատակութենն կատարեալ՝ ի ժամուն, ոչինչ այնուհետև լսագոյն վիճակեցաւ ելից և մարտ պատերազմին. այլ խըրև հարուածս անհնարինս հասեալ՝ ի վերայ ածին միմեանց ճակատք երկոքին, տեղի ետուն մեկնեցան արդելեալք՝ ի տեղատարափ անձրևոյ: Ընդ անհնարին տագնապեալ Վաղերիոս՝ ոչ գիտեր զի՞ս մարտի պատերազմին, այն լինչ տեսանէր զի սրտաբեկ էր զօրն վան խըրոց անկեղոյն, դարձեալ և խրատուեալ՝ ի հարուածոյ անակն թշնամեացն. այնպէս իմն անսահման էր կոտորածն և զուգակշիռ առ՝ ի բազմութենէ անկեալ դիականցն: Սակայն մէն մի՝ ի կողմանցն ակն յայտնի զիւրն տեսանելով յաղթեալ զանձն ասէր, քան եթէ յաղթող՝ ընդ միտ զթշնամւոյն ածելով: Խակ՝ ի վերայ գալ գիշերոյն, որպիսի լինչ՝ ի ձահ պատահեալ կարծեացես այնպիսի սրտաբեկ մարտուցե-

լոցն, մինչդեռ ՚ի հանդստեան կայրին բա-
նակք զօրաց, յանկարծակի՝ որպէս պատ-
մեն՝ ասսիւն ասսափիւն լինէր յանտառին,
և ձայն բարձրագոչ անդուստ արձակէր
՚ի դուրս՝ որ ասէր եթէ միով աւելի քան
զՀռոմայեցւոցն ՚ի մարտի անդ անկան ՚ի
Տիւրրենացւոց. և էր արդեօք դիւցական
իմն բարբառն 1: Քանզի անդէն վաղվա-
զակի ՚ի բարբառոյ անտի մեծաւ ձայ-
նիւ և աղաղակաւ քաջալերուելիւն ըզ-
գեցան Հռովմայեցիք ՚ի ճակատուն. իսկ
Տիւրրենացիք ահաբեկ ընդ միմեանս խառ-
վեալք շփոթեցան, զոտս արձակեալք ՚ի
փախուստ խուճապեցան ՚ի բանակէն. և
բազումք այն էին՝ որ ցկր և ցան սիւռեցան
ընդ երեսս դաշտին: Եւ որ միանգամ ան-
դէն ծնայեին ՚ի բանակին կրկին հինդ հազա-
րաւ չափ, ՚ի վերայ յարձակեալ Հռովմայե-
ցիք ձերբակալ արարին, և կապուտ կողո-
պուտ Թողին զնոսա: Իսկ ՚ի հաշիւ դիա-
կանցն՝ գտան ՚ի թշնամեաց անտի անկեալք
մեռասան հազար և երեքհարիւր. և նոյն-
չափ ՚ի Հռովմայեցւոց՝ միով պակաս: Եւ
ասեն զայս մարտ պատերազմի հանդիպեալ
յառաջ քան զմի կաղանդացն Մարտի:

՚Ի լինել այսորիկ այսպէս՝ վառօք յաղ-
թանակեաց Վալերիոս, առաջին ինքն ՚ի
Հիւպատոսս բարձեալ բերեալ ՚ի քառա-
ձիոց. և էր հանդէսն նոր և չքնաղ, ահա-
ւոր և սքանչելի. ոչ տեսանելիքն երբէք նա-
խանձաբեկ եղեն, և ոչ դարձեալ խոժո-
ռեցան լինչ՝ որպէս ասեն ումանք: Քանզի և

ոչ իսկ արդեօք՝ այնպիսի գեղեցիկ նախան-
ձու և մեծապէս պատուասիրութեամբ ընդ-
ման յոլով պահէին նոքա զհանդէս յաղթա-
նակիդ այդորիկ : Յայնժամ և ընդ չուք պա-
տուոյն յոյժ հաճեալ հաւանեցան Հռով-
մայեցիք՝ զոր պատուեաց Վաղերիոս զիւրն
իշխանակից, փառս մեծապէս հանդերձե-
լով նմա 'ի յուղարկաւորութեան նորա և
'ի թաղման : Ընդ այս՝ և ձառ ևս դամբա-
նական 'ի վերայ նորա խօսեցաւ ինքնին Վա-
ղերիոս, զոր յոյժ սիրեցին Հռովմայեցիք
և հաւանեցան՝ որպէս զի և ամենայն քա-
ջաց արանց և առաքինեաց օրէնք եդան
այնուհետև, յետ իւրեանց վախճանին գո-
վութիւն առնուլ 'ի հոյակապ որերոյն :
Եւ ասեն՝ եթէ երիցագոյն է այս և քան
զհելլենական դամբանականան. եթէ ոչ՝ և
այս մի յօրինաց անուն ինչ Սողոնին, որպէս
պատմէ Անաքսիմենէս Հռետոր : Սակայն
վասն այսոցիկ և 'ի սրանութիւն ընդդէմ
Վաղերեայ դրդեցան ժողովուրդք և խոժո-
ռեցան, իբրու զի Բրուտոս ինքնին՝ զոր
հայր ազատութեան գլխովին համբաւէին
Հռովմայեցիք, ոչինչ արժան դատեցաւ
միայնակ զանձամբ առնուլ զիշխանութիւն,
այլ միանգամ և երկիցս իշխանակից զոմն
ընտրեաց անձին իւրում. " Իսկ դա՛ ինքնին՝
ասէին՝ յանձն իւր զամենայն միանգամայն
ամփոփեալ, ոչ ևս է Բրուտոսին ժառանգ
հիւպատոսութեանն՝ որ ոչինչ արդեօք ան-
կանէր նմա, այլ Տարկուինիոսին բռնաւո-
րութեանն ժառանգ է դա : Իսկ զինչ պէտք

էին զմա բանիւ զԲրուտոս ի գովուն առնուլ, և արդեամբք Տարկունիոսին լինել նմանող, զի ամենայն գաւազանօք և տապալօք միայնակ գա ի վայր իջանէ յապարանից՝ որ մեծուքեբ զանցանէ զարքունական զապարանօքն՝ զոր գա ինքն տապալեաց»: Եւ քանզի բնակէր իսկ Վաղերիոս յապարանս հոյակապ յոյժ ի բլրակին՝ որ անուանեալ կոչէր Վէղիոս, հովանացեալ ի վերայ հրապարակին, և ի գիտէ անտի տիրացեալ տեսանէր զամենայն, և արտաքուստ եւթից գժուարամատոյց էր վայրն. որպէս զի և յիջանել նորա ի վայր՝ շքեղ յոյժ էր տեսիլն, և զարքայից մեծափառութեան բերքն զօրինակ:

Եւ արդ՝ թէ քանիօն լաւ էին իշխանաց և որք ի մեծամեծ իրողութիւնս գեգերեալքն էին՝ ունկն մատուցանել համարձակախօս և ճշմարտապատում մարդկանն՝ քան մարդեղուզացն բանից, քաջ իսկ ե՛ց յոյց Վաղերիոս: Քանզի այն էին լուեալ ի բերանոյ բարեկամացն, եթէ ի ձախողակ կարծիս են վասն նորա ժողովրդք, ոչ էին յամառեալ եկաց, և կամ սրտնեցաւ էին, այլ անդէն փութանակի ի մի վայր ժողովեալ զբազմութիւն գործատրաց՝ մինչդեռ տակաւին գիշեր էր, քանդեաց զապարանսն, և հիմն ի վեր յատակեաց զամենայն. որպէս զի և ի գալ աւուրն տեսեալ զայն Հռովմայեցւոց՝ որ ի վայր անդր խառնեցան, մեծապէս սիրեցին զառնն մեծանձնութեանն և սքանչացան. բայց և վասն

աղէտից ապարանիցն ցաւէր նոցա՝ իբրու այն որ առ նախանձուն մահանաց և զուր տարապարտուց հիմն ի վեր տապալեալ էին. և անձուկ ևս յոյժ բերէին զգեղեցիկ և զնոյական դաստակերտին՝ իբրու եթէ ի կենդանեաց ոչ ի մարդկանէ էին. առ այս՝ և վասն իշխանին Իւրեանց ցաւէր նոցա, զի այնպէս անյարիկ անծածուկ առ այլս ոմանս երթեալ բնակութիւն կալեալ էին: Քանզի զվաղերիոս յայնժամ բազբեկալք նորա առեալ ժողովեցին, մինչև տեղի մի ետ ընծայեաց նմա ժողովուրդն, և շինեաց նա անդանօր իւր ապարանս իսկ նարհադոյն քան զառաջինն, ուրանօր կայ այժմ մեհեանն՝ որում անուն կարգան Պոպղիոս:

Ա՛յլ կամեցեալ վաղերիոսի ոչ զինքն միայն, այլ և զիշխանութիւնն գլխովին յահաբեկ կերպարանէն հեշտընկալ գործել և մարդասիրագոյն ժողովրդեանն, ի միջոց անտի գաւազանացն ի բաց հառ զտապարան. և զգաւազանան գլխովին՝ յորժամ էինքն գայր հասանէր յասեան ժողովոյն՝ ի վայր հակեալ խոնարհեցուցանէր առաջի ժողովրդեանն, շուք մեծապէս ընծայելով ռամկապետութեանն. և զայս մինչև ցայսօր ժամանակի հաստատուն պահեն հիւպատուք: Բայց զայն էինչ ոչ գիտեին ժողովուրդք, եթէ ոչ զանձն էինչ իւր՝ որպէս կարծէին՝ ի նուաստութիւն առեալ էջուցանէր վաղերիոս, այլ չափաւորութեամբզմխանս նախանձուն սրբէր և սանձակո-

ծէր. իսկ անձին իւրում և ևս յաւելոյր առաւելութիւն փառաց և զօրութեան, որչափ ինչ թուէր կապուել զանձն յիշխանութենէն. քանզի այնուհետև մեծապէս հեշտութեամբ հպատակէր նմա ժողովուրդն և մատուցանէր ևս անասայր, որպէս զի և Պոպղիկողոս անուն կարդալ նմա, այն է՝ ժողովրդամեծար: Եւ ապա այս անուն զօրացաւ 'ի վերայ նորա քան զառաջինն անուանն նորա. զոր և մեք ինքնին վարեսցուք՝ 'ի պատմել մեր այսուհետև զինացորդս վարուց զառնն: Քանզի և Թոյլ եաւ նա՝ ուր և կամք իցեն հետամուտ լինել յընտրութիւն 'ի հիւպատոսութիւն անդր. այլ մինչև ընտրեալ իշխանակցին իւրոյ, կասկածեալ ընդ հանդերձեալն՝ զանգիտէր գուցէ դիմադարձ ինչ եղիցի նմա 'ի գործս առ նախանձուն ինչ կամ առ տիւրութեան. ուստի և զինքնիշխան տէրութիւնն 'ի վար արկեալ 'ի ժամուն՝ դեղեցիկս յոյժ և մեծամեծս 'ի նեղըս եբեր 'ի քաղաքականութեան մասին:

Քանզի նախ առաջին եղեալ բազմացոյց միաւանգամ զթիւ սրանց Սինկղիտոսին՝ որ նուազեալ յոյժ էր. քանզի կէսք 'ի նոցանէն յառաջագոյն առ Տարկուինիոսիս մեռեալք էին. և կէսք դարձեալ այն ինչ 'ի մարտի պատերազմին անկեալք էին. և ոչք միանգամ 'ի նմանէն կարգեցան եղան՝ առեն եթէ հարիւր վեցտասն և չորս էին ընդ ամենայն: Իսկ երկրորդ անգամ՝ դրեաց և օրէնս խին, որովք և մեծապէս զօրացոյց

զկողմն Ժողովրդեանն. առաջինն յօրինաց անտի Թոյլ տայր՝ առ Ժողովուրդն բողոքել առն՝ որ զանձն Ճոխացրել կամէր ի ներքուստ դատաստանի հիւպատոսացն: Իսկ երկրորդն մահու դատէր զայրն, որ միանգամ զանձամբ առնոյր զիշխանութիւնն՝ զոր չէտ նմա Ժողովուրդն: Բայց օրինք երրորդ՝ գլխովին օժանդակ զօրավիգն էր աղքատաց, որով զքաղաքայինսն ազատ կացուցանէր ի հարկաց. և այնպէս ապատմագիւրացոյնս և ժրաջանս հանդերձէր զամենեսեան ի գործս ձեռաց իւրեանց: Իսկ որչափ լինէր օրինադրեաց նա վասն անաստիցն ընդդէմ հիւպատոսաց, ոչինչ պակաս հակամիտեալ էր և այն ի Ժողովուրդ անդր, և նպաստս առաւել էր բազմութեան խուժանին՝ քան Ճոխից քաղաքին. քանզի տուգանս անաստուածութեան սահմանեաց՝ հինգ եզանց չափ և երկուց ոչխարաց: Եւ էր յայնժամ գին ոչխարին դանկս տասն, և եզին՝ դանկս հարիւր. չև յայնժամ դրամն այնչափ ի վար առնուին Հռովմայեցիք, այլ էր նոցա Ճոխութիւնն ի տասյօտասծս խաշանց և անասանց: Վասն որոյ և զդոյս իւրեանց մինչև ցայսօր ժամանակի կոչէն նոքա՝ Փէքունիա, ի Փէքուս անուանէդ՝ այն է խաշն. և ի հին դրամն նոցա տպաւորեալ կայր քանդակ եզին կամ ոչխարին կամ խոզին. և որդւոց իւրեանց ևս անուանս տային՝ Սուիլլուս, և Պուպուէուս, և Քաէսաոէուս, և փօսթիուս. և Քաէսա ասեն նոքա զԱյծն, և փօսթուս զԽոզն 2:

Եւ որ այսպիսեաք օրինադիր երևեցաւ նա այնչափ մարդասէր և չափաւոր, ի վերայ այսր՝ և պատուիժ պատուհասն սաստիկ ի վերայ կապեաց ի չափաւորութեան իւրում: Քանզի դրեաց օրէնս՝ զի առանց ինչ ևրաւանց դատաստանի Թոյլ լինի ամենայն ումեք սպանանել զայրն՝ որ զբռնաւորութեան Թեան Թեկն ածիցէ. իսկ զսպանողն ազատ արար ի մարդասպանութեան մեղաւն՝ եԹէ յայտ յանդիմանութիւնս վկայից ի նեղքս բերցէ զանիրաւութեան սպանելոյն: Եւ քանզի՝ որ չափաւոր եղեռն ձեռնամուխն լինիցի, չկամ հնար եԹէ չամենեցունց ծածկեսցի. իսկ ի նշաւակել բռնաւորութեան առն՝ որ արդէն սիրացեալ էր, մարԹ է այնմ կանխել զառեանն և վեր ի վայր գործել անիրաւութեամբ զնրաւունս դատաստանին. վասն որոյ և Թոյլ ետ առհասարակ՝ զի որ ձեռնհաս էր՝ զառաջս առցէ զանիրաւին: Բայց ի գովութիւն առաւնա և յաղագս օրինաց Գանձասրին: Եւ քանզի պարտ և արժան էր քաղաքացեացն ըստ գոյնն հարկս դրամոց հարկանել ի պէտս մարտի պատերազմի, ոչինչ կամեցաւ նա զանձամբ իւր առնուլ զտնտեսութիւն դրամոցն այնոցիկ, և ոչ բարեկամացն իւրոց Թոյլ ետ վասն այնորիկ. և ոչ՝ Թէ ի տուն տոկականի ուրուք մԹերեալ երբէք կայցեն ինչք հասարակաց. ապա գանձարան դրամոցն այնոցիկ սահմանեաց զտաճար Կռոնոսին, զոր և մինչև ցայսօր ժամանակի պահեն նոքա ի նոյն

գործ: Իսկ ՚ի վերայ գանձուն եւս իշխանութիւն ժողովրդեանն ընտրել կարգել զերկուս ոմանս յերիտասարդաց: Եւ ընտրեցան կացին առաջին Պոբլիոս Վետուրիոս, և Մինուկիոս Մարկոս. և կուտեալ մեծաբեցաւ գանձ բազում: Քանզի երեքտասան ՚ի թիւ ՚ի մանկանց և զայրիս ՚ի կանանց, որ ազատ կային ՚ի հարկաց անտի:

Իբրև զայսոսիկ այսպէս կարգեաց եդ, սահմանեաց այնուհետեւ իւր իշխանակից զհայրն Լուկրետեայ՝ զԼուկրետիոս, որում և ընծայեաց զնախաթոռ բարձն. քանզի երէց էր քան զինքն հասակաւ, և նմա յանձն արար զիսրձունան: Եւ ապա այս նախաթոռութիւն յայնց ժամանակաց հետէ մինչև ցայսօր պահեցաւ երիցագունիցն հասակաւ: Իսկ իբրև յետ աւուրց սակաւուց վախճանեցաւ Լուկրետիոս, դարձեալ ՚ի լինել ընտրութեան բարձի՝ ընտրեցաւ Մարկոս Ովատիոս, և եկաց հոմիշխան Պոպլիկոլեայ զծնացեալ ժամանակ տարւոյն:

Բայց Տարկուինիոս յորժամ մարտ պատերազմի երկրորդ ՚ի Տիւրրենիա կամէր շարժել ընդդէմ Հռովմայեցւոց, ասեն՝ եթէ նշան մեծ երեւեցաւ յայնժամ: Քանզի ՚ի ժամանակին՝ յորում Թագ կապեալ Տարկուինիոս՝ շինէր զտաճարն Կապիտոլեանն Աբրամազդայ և չէ ևս էր կատարեալ զնա, եթէ ՚ի պատգամաց ինչ դրդեալ՝ և եթէ յիւրոց իսկ խորհրդոց, կառս իմն

աղեաւեայ կամեցաւ կանգնել ՚ի ծայր տա-
ճարին. և զնոյն գործ յանձն արար Տիւր-
բենացւոց ոմանց ճարտարաց վէյացւոց. և
ապա յետ սակաւուց ինքն տարապիր ան-
կաւ յարքայութենէն: Իսկ Տիւրբենացիք
կազմեալ զքառաձիան զայն՝ իբրև արկին ՚ի
հնոց անդր, ոչինչ կրեաց՝ զոր միանգամ
կրեալ բնաւորեցաւ կաւն ՚ի հուր. յորում
տեղի տուեալ խոնաւութեանն՝ խոտանալ
բնաւորեալ է կաւն և թրծիլ պնդիլ. այլ
ուռուցեալ անօսրացեալ աձէր և ծաւա-
լէր, և յայն չափ մեծութեան հասանէր՝
՚ի նոյն կորովացեալ և կարծրութեամբ,
որպէս զի և հազիւ ուրեմն հանել զնա ան-
տի արտաքս՝ քակեալ ՚ի բաց զկամար հնո-
ցին և քանդեալ զպատուար նորա: Ընդ՝
իբրև այնպէս լիուն կարծիս կալան գուշակք
և գէտք, եթէ աստուածային է նշանն բա-
րեբաստութեան և զօրութեան իշխանու-
թեան՝ առ որս միանգամ կացցէ ճնասցէ
քառաձիքն, ՚ի մոլ եդին վէյացիք՝ մի ՚ի
ձեռս տալ զայն Հռովմայեցւոց որ խըն-
դրէինն զնա. և պատասխանի ևս արարին
եթէ Տարկովինիոսին անկ է գա, և ոչ հա-
լածէցին Տարկովինիոսի: Իբրև աւուրք սա-
կաւ ՚ի վերայ անցին և լինէին առ նոսա
մրցանք ձիընթացիցն, և այլն ամենայն հան-
դէս տեսարանին այնորիկ և խաղք կատա-
րեցան ըստ սովորութենէն: Իսկ այն ինչ
զաղթական քառաձիան ինքնին կառավարն
պսակաւոր քայլ առ քայլ տակաւ վարէր
՚ի մէջ կրկեսին, անդէն երիվարքն ահաբե-

կեալք՝ և չէր լինչ ի միջի պատճառք յայտնի, այլ ի դէց կամ եթէ ըստ դիպաց, վազս առեալ արձակերասան արագ արագ ի քաղաքն կոյս Հռոմայեցւոց բարձեալ բերէին զկառավարն. իբրև հնար ամենևին չեղև սանձակոծել զերիվարսն, և ոչ ձայնիւ ամրքել զնոսա, այնպէս յափշտակեալ վարէր ի նոցանէ այրն, մինչև առին տալրան զնա բռնութեամբ և ածեալ մերձ ի Կապետոլիոն, անդ հոսեցին զնա ի վայր մերձ առ դուռն՝ զոր անուանեալ կոչեն Ռոֆոմենաս: Եւ ի լինել այսմ այսպէս, հիացեալ սքանչացան Ազգացիք և զահի հարեալք երկնչէին. չոքան ապդ արարին ճարտարաց արուեստին՝ զի ի ձեռս տացեն Հռոմայեցւոց զկառսն զայն:

Բայց զտաճար Կապիտոլեանն Արամազդայ ուխտիւք ուխտեալ էր կանգնել Տարկուինիոսն Յեմարատեան՝ յորժամ մարտ եդեալ կռուէր ընդ Սաբինացիսն. իսկ չկնեաց զնա Տարկուինիոս Սուպերբոսն՝ Թոռն ուխտադրին. սակայն ոչ ժամանեաց սրբել նուիրել զտաճարն, այլ սակաւ ինչ ինացորդ էր յամբոխ դործոյն՝ յորժամ Տարկուինիոս վարեցաւ ի քաղաքէն: Ապդ իբրև ողջոյն պատակեցաւ գործն, և վայելուչ զարդու ողջոյն յարդարեալ կազմեցաւ, մեծապէս պատուասիրէր Պոպլիկողաս նուիրել սրբել զնա: Այլ սակայն բազումք յաւագաց քաղաքին՝ որ խանդաղեալ էին ընդ նա, ոչ այնչափ ինչ խեռային ընդ այլ շուք փառաց նորա՝ յորի-

նագրութեան խրատ և ի զօրավարու-
թեան մարտի, բայց չուք զայս նորանշան
ոչինչ արժան համարէին յաւելուլ ի փառս
նորա. և զՈվրատիոս ինքնին յորդորէին և
թախանձէին հետամուտ լինել պատուա-
սիրաբար ի նուվրագործութիւն անդր:
Արդ երբև հարկ լինէր յայնժամ Պոպլի-
կողեայ խաղալ զօրու ի կռիւ մարտի, տալ
ետուն նոքա վձիռ վասն Ովրատեայ ի նուվ-
րել զտաճարն, և առեալ ածին զնա ի կա-
պետոլիան, երդու որ գամագիտ չէին ի նոյն
ի հանդիպել անդանօր Պոպլիկողեայ: Իսկ
կէսք սոքն՝ եթէ վիճակս արկեալ ի վերայ
հիւպատոսացն, Պոպլիկողեայ վիճակեցաւ
յակամայ կամն երթալ ի բանակն, և Ով-
րատեայ՝ պրել զտաճարն: Ա՛յլ վասն այ-
սոցիկ ի գէպ է արդեօք խմաստասիրել զար-
ժանն ի գործոց անտի՝ որ հանդիպեցան
ի ժամու նուվրագործութեանն: Արդ կե-
րեքտասանն Սեպտեմբերի՝ որ հանդիպի
ճշդիւտ ի լրումն լուսնի, որ ըստ Ա-
թենացւոյն Մետագիտնիոնէ, երբև առհաս-
տակ խմբեալ կային ի Կապետոլիան, և
Ովրատիոս ինքնին՝ մինչդեռ լուռ և ան-
շշունչ կային ամենեքեան՝ կատարեալ զայլն
ամենայն, և մերձ եղեալ ի դուրսն՝ անդ
ըստ սովորական կարգին բարբառեր զաս-
մանեալ կցուրդսն յաղագս նուվրագոր-
ծութեանն, անդուստ երկայն Պոպլիկո-
ղեայ Մարկոս՝ որ հարուստ մի ժամանակ
անդանօր առ դրամբքն գոլեալ կայր և գե-
տակն ունէր ժամուն, աղաղակեաց և ասէ.

"Ո՛վ հիւպատոս, որդին քո՛ի բանակի անդ խօթացեալ՝ մահու տարածեալ կայ". և այս բարբառ թալձեալ տիրեցոյց առհասարակ զլսողն: Իսկ Ովրատիոս ոչինչ խռովեալ ամբոխեցաւ, այլ այսչափ ինչ միայն ասաց. "Արիկէք դուք ապա զդիակն յո՛ր վայր և կամք իցեն ձեզ. զի զարդիս կոծ և սուգ չառնուամ յանձն". և կատարեալ՛ի գլուխ եհան զնուիրագործութիւնն: Իսկ գոյժ մահուն չէր ճշմարիտ, այլ ինքնին Մարկոս խաբանօք կեղծեաց խանգարել՛ի գործոյն զՈվրատիոս:

Առդ գլխովին աքանչելի է այրն յաղագս անվրդով հաստատուութեանն, եթէ խաբանայն արագ արագ խելամուտ լեալ առասցես զնա, և եթէ՝ զի հաւատս ևս ընծայելով բանին՝ ոչինչ խռովեալ շարժեցաւ՛ի ժամուն: Բայց նոյնօրինակ դէպք՝ որպէս կարծեմ՝ պատահեցան և՛ի նուիրագործութեան անդ երկրորդ տաճարին. քանզի առաջինն՝ զոր շինեաց Տարկունիոս՝ որպէս ասացաք՝ և սրբեաց Ովրատիոս, հրկիզեալ յաձիւն դարձաւ՛ի ժամանակի քաղաքական մարտի: Եւ զերկրորդն կանգնեաց Սիլլաս, այլ յաղագս օրհասին կանխելոյ, սրբել զնա կարգեցաւ Կատուղդոս: Իսկ յորժամ և այս քանդեցաւ՛ի ժամանակի խռովութեանց մարտից, վէսպասիանոս ինքնին՝ որպէս յայլ ինչ կրս՝ նոյն և՛ի սա գեղեցկիկս յաջողեալ, անդաստին՛ի հիմանց երրորդ անգամ կանգնեաց զսա մինչև՛ի պսակել գործոյն. և եռես կատա-

րեալ համբուն և չետես զքանդել նորա. այլ այնչափ ինչ բարեբաստիկ գտաւ քան զԱիղղաս, որչափ զի՝ նորա կանխեաց օրհասս մահուն քան զնուիրագործութիւնն, և Վեսպասիանոսին՝ քան զաւերածն տաճարին. քանզի միանգամայն ընդ վախճանել Վեսպասիանոսին հրդեհակէզ եղև կապետոլիոն: Իսկ ջորրորդս այս՝ որ այժմ՝ կատարեալ պսակեցաւ 'ի Դոմետիանոսէ և սրբեցաւ: Եւ պատմեն՝ եթէ Տարկուինիոս 'ի հիմունս իւրոյ տաճարին ծախեաց լտերս արծաթոյ բիւրս չորս. իսկ որ այժմ առ մեօք երևի, նորա միայն յոսկեզօծ 'ի ծախսն չէ բաւական այր՝ որ առաւել ընչաւէտն էր 'ի Հռոմ, զի եղև տաղանդաց առաւել քան երկոտասան հազարաց: Եւ են նորա սիւնք կանգնեալք 'ի պենտելեան քարանց 3, որ միանգամայն ըստ թանձրութեանն և ըստ երկայնութեանն էին չոյժ գեղապատշաճք, ըստ որում տեսեալ իսկ էր մեր զայնոսիկ ԱՆԹԷՆս: Բայց ապա բերեալք 'ի Հռոմի, և միաւանգամ կոփեալք և յղկեալք, այնչափ ինչ անմանն գտան 'ի գեղոյն, որչափ միանգամ կորուսանն նոքա 'ի չափակցութենէն, և երևին այժմ վսեմք և անգերազանցք: Արդ որ ոք միանգամ 'ի տեսողաց հիացեալ սքանչացեալ ընդ հոյակապ մեծագործութիւն կապետոլեայ, և անցեալ անդուստ՝ սրահ մի յակն իւր արկանիցէ 'ի տան Դոմետիանոսին, կամ արքունիս, կամ բաղանիս մի, կամ զբնակարան հարճիցն, ապաքէն զոր

ինչ երբեմն ասաց Եպիքարմոս առ անժուժկալն այն շռայլ, եթէ՝ "Ձեռս դու մարդասէր այր դու, ախտացեալ է քո, և ինդաս դու ի վատնելն". այնպիսի ինչ ստիպեացի նա ասել և առ Դոմետիանոս. "Ո՛չ բարեպաշտութիւն ինչ է քո և ո՛չ հոյակապ մեծութիւն. ախտացեալ է քո: Ինդաս ի վատնել զամենայն ի շինութիւնս Իբրու զմիդասն զայն՝ ինդրես դու զի ամենայնն քեզ յոսկի փոխեացի և յականս պատուականս": Արդ այսչափ ինչ վասն այսոցիկ:

Իսկ Տարկուինիոս յետ մեծի մարտին՝ յորում և զորդին իւր կորոյս ի մենամարտիկ մրցանն ընդ Բրուտոսի, փախուցեալ ապաւինեցաւ ի Կղուսիոն, և անդ յողբ անկանէր առ Կղարաս Պորսենաս՝ այր զօրութեամբ փառաք վեհ և առաւել ի թագաւորս խոալացւոց, և լաւութեամբ առաքինութեամբ ականաւոր և հոյակապ: Սա խոստացաւ օգնել Տարկուինեայ. և կանխեաց արձակեաց հրեշտակս ի Հռոմ, պատգամ տայր առնուլ ընդունել զՏարկուինիոս: Իբրև ոչինչ անսացին Հռոմայեցիք, մարտ պատերազմի կարգաց ընդդէմ նոցա, միանգամայն և զժամանակ մարտին ազդ առնէր նոցա և զտեղին յորում հանդերձեալ էր անկանել ի վերայ. և խաղաց եւին եհաս նա զօրու ծանու: Իսկ Պոպղիկողաս՝ մինչդեռ ինքն ի բացեայ էր ի Հռոմայ՝ ընտրեցաւ երկրորդ անգամ հիւպատոս, և ի միասին ընդ նմա Տիտոս Լու-

կրեալոս: Իբրև եկն եհաս 'ի Հռոմ, և անդէն լինէ մի վեհագոյն քան զՊորսեննաին՝ կամէր 'ի նեղքս բերել յարուեստն մասին, ձեռն էարկ շինեաց զքաղաքն Սինգղուրիա, մինչդեռ անդէն մնաւ բանակեալ կայր Պորսեննաս. և պատուար ածեալ քաղաքին մեծագանձ հանդերձանօք՝ գալ Թարկանս եօթն հարիւր թուով առաքեալ բնակեցոյց 'ի նեղքս. իբրու այն որ կազմ և աներկիւղ դիմագրաւ լցէ 'ի կռիւ մարտին: Ընդ սակայն հորդան ահագին յերակարծումն տուեալ Պորսեննաս 'ի պատուար անդր՝ վանեաց հալածեաց զպահապանսն. և մինչդեռ նոքա 'ի փախուստ խուճապէին 'ի Հռոմ, վայրիկ մի ևս խառն ընդ նոսա և Թշնամեացն խուժեալ էր 'ի քաղաք անդր: Կանխեաց Պոպլիկոլաս՝ աճապարեալ 'ի Թիկունս օգնականութեան առաջի գրացն՝ մարտ եդեալ առ գետոյնն կայր և կռուէր ընդդէմ Թշնամեացն, այլ տագնապեցաւ 'ի բազմութենէ անոնց, մինչև վերս գփառաց քաջութեանն առեալ բաղումն, և անկեալ 'ի գետնին՝ բարձեալ ածաւ արտաքս 'ի մարտէն: Իսկ իբրև զնոյն կիրս կրեաց անգանօր և իշխանակից նորա Լուկրեթիոս, այնուհետև ողջոյն արտաբեկ Հռոմայեցիք 'ի փախուստ խուճապէին 'ի քաղաքն, ապրեցուցանել զանձինս. զհետ նոցա աստակասէս այնքեալ Թշնամեացն՝ վանէին 'ի վերայ կամրջին փայտեայ, և 'ի վտանգ մեծ պաշարեցաւ յայնժամ Հռոմ առնուլ բռնութեամբ: Ընդ նահատակ

գիմագրաւ Կոկղնոս Ովբատիոս, և նիզա-
կակիցք նմին երկուք ոմանք յականաւոր
արանցն Երմինիոս և Լուկրետիոս, զդէմ
կալան նոցա առ կամրջին փայտեայ: Իսկ
մականուն զայս Կոկղիոս՝ տալին Ովբատեայ,
քանզի զմի ակն իւր կորուսեալ էր՝ ի մար-
տին. բայց որպէս կէսք ասեն՝ տափաքիթ
գոլով այրն, այնպէս ինն էր խորափոս ունն-
գացն, որպէս զի և խարոյց անջրպետ չերև-
էր ընդ աչս նորա, այլ և յօնքն ևս թիւ-
րեալք և խռուացեալք կային ընդ միմեանս.
ուստի և Կինղոպոս կամեցեալ կոչել զնա
ժողովուրդք, ՚ի խեցբեկել լեզուին՝ խու-
ժանն սովորեցաւ կոչել զնա Կոկղիոս: Սա
այս Կոկղնոս յայնժամ ՚ի վերայ կամրջին
արձանացեալ զդէմ կալաւ Թշնամեացն,
մինչև նիզակակիցք նորա ՚ի թիկանց կու-
սէն հատին զկամուրջն: Եւ այսպէս ապա
զինու զարդու գեռաւէժ եղեալ նա յայն-
ժամ՝ անկաւ ՚ի լուղ և ետ կալաւ զայն-
կոյս գետեզերը, վերս տիգախոց առեալ
յազդեր ՚ի Տիւրրենացւոց անտի: Պոպղի-
կողաս մեծապէս զարմացեալ ընդ առաքի-
նութիւն քաջութեան առն, վաղվաղակի
ածէր հաւանեցուցանէր զՀռոմայեցիան
առհասարակ, զի որչափ ինչ այր այր ՚ի նո-
ցանէն ծախեսցէ օրապահիկ, զնոյն առեալ
ասցեն Կոկղնոսի ՚ի պարգև. ապա և կա-
լուած գետնոյ նմա այնչափ՝ որչափ միան-
գամ նա բաւական լինէ յաւուրն արօրա-
գիր առնել: Ա՛ռ այս՝ և արձան պղնձի կանգ-
նեցին նմա ՚ի մեհենին Հեփեստեայ. և

'ի շուք պատուոյս խրախոյս քաջալերու-
Թեան ետուն առն վասն կաղուԹեանն՝
զոր կաղացաւ նա 'ի վերաց անտի։

Բայց Պորսենաս բանակ հարեալ 'ի վե-
րայ քաղաքին նատեր, և 'ի տագնապ սպառ-
արկաներ զՀռովմայեցիս. անդուստ և
գունդ մի հատեալ 'ի Տիւրրենացւոց՝ ա-
պատակ կապեալ յաւարի առնոյր զդա-
շառն։ Ա՛յլ Պոպղիկողաս երրորդ անգամ
կարգեալ Հիւպատոս, 'ի դէպ համարեցաւ
զդէմ ունել Պորսենեայ՝ անկուխ պահ ու-
նելով քաղաքին. և ինքն գաղտ 'ի գուպս
ելեալ անկաներ 'ի վերայ Տիւրրենացւոց,
և մարտ եդեալ և 'ի փախուստ գարձու-
ցեալ՝ հինգ հազար այր 'ի նոցանէ դիտա-
պատ կացուցաներ։ Իսկ որ ինչ միանգամ
յաղագս Մուտիոսի բանք լցեն, 'ի բազմաց
բազմօրինակ ասացեալ է. սասացուք և մեք՝
որ ինչ առաւել արժանահաւատն լցէ։
Սա այս Մուտիոս՝ ամենայն առաքինու-
Թեամբ լաւ և քաջ այր, և 'ի մարտս պա-
տերազմի ախոյեան. սա 'ի մոխ եդեալ սպա-
նանել զՊորսենաս, եւկն սպրդեցաւ 'ի
նեղքս 'ի բանակ անդր Տիւրրենացւոց՝ ար-
կեալ զանձամբ հանդերձ սիւրրենացի և
զնոցուն բարբառեալ բարբառ. և շուրջ
յածեալ եւկն մատեաւ 'ի բեմ անդր՝ ու-
րանօր բազմեալ կայր Թագաւորն ինքնին.
այլ Ճշդիւտ ոչ Ճանաչէր նա զարքայն, և
հարցանել ևս զանգիտեր վասն նորա. ապա
զոր ոք յաԹոռակցաց անտի նորա առա-
ւել կարծեաց՝ եԹէ ինքն իսկ արքայն լցէ,

մերկեաց զսուրն և եհար սպան: Ընդէն
ձերբակալ արարեալ՝ սկսան խոշտանգա-
նօք դատել և հարցանել զինա. էր յայնժամ
կրակեալ հայծականց բորբոքեալ 'ի պէտս
զոհիցդ Պորսենեայ. և անդ 'ի վերայ կրակին
կալեալ Մուսիոս զալջ իւր՝ մինչդեռ միան
հրակէզ խորովէր, կայր և հայէր առ Պոր-
սենաս անքթիթ ժպիրհ ակամբ և անզար-
հուրեալ տեսլեամբ, մինչև զարմացեալ հիա-
ցեալ ալքային արձակէր զնա, և ինքնին 'ի
բեմէն զսուրն նորա կարկառեալ ետ նմա:
Իսկ Մուսիոս զահեակ ձեռն ձգեալ հառ
զսուրն, և յայտանէ ասպա ասեն մակա-
նուանել զնա Սէջէլս, այն է՝ Ահեկան:
Եւ անդ ասպա յանդիման հրապարակին
վկայէր Մուսիոս, եթէ զահ երկիւղին
Պորսենեայ պարտեաց նա, այլ յառաքի-
նութենէն նորա պարտեցաւ. և 'ի չնորհս
այնուհետև հանդերձեալ է 'ի վեր հանել
զայն ինչ, զոր բունի չունէր երբէք մերկա-
նալ. "Երէքհարիւրք՝ ասէր՝ 'ի Հռովմայե-
ցւոց 'ի նոյն խորհուրդ ինձ համախոհք՝
թափառեալք աւազիկ շրջին աստ 'ի քում
բանակի՝ դէպ ժամուն դէտսին կալեալք.
իսկ ինձ վիճակեալ արդ նահատակ դիմա-
գրաւ լինել 'ի գործն, բախտին ինչ ես ոչ
ցասնում՝ զի իմ սխալեաց աչն մեղանչել
յայր լաւ և բարի, որում արժան է լինել
բարեկամ Հռովմայեցւոց՝ քան եթէ թըշ-
նամի": Ջայս լուեալ Պորսենաս՝ ընծայ-
եաց հաւասս. և խաղաղութեան մարտին
ջնեա կրթէր այնուհետև, ոչ այնչափ որ-

պէս ինձ Թուի՝ զահի հարեալ յերից հարիւրից անտի, որչափ զի հիացեալ զուարճացեալ էր ազքային ընդ առաքինու- Թիւն նահատակութեան Հռոմմայեցւոյն: Ձսոյն զայս այր՝ զոր Մուտիոս միանգամայն և Սկեւողաս յորջորջեն ամենեքեան, Ամենոդորոս Սանգուին ՚ի մատենին իւրում առ Հոկտաւիա քոյր կեսարին՝ ասէ, եթէ և Պոռնոմոս կարդային ինա, այն է՝ Վերջնածին:

Ա՛յլ Պոպղիկողաս զմնաւ ածեալ՝ եթէ ոչինչ այնպէս ինաս իւկ Թշնամի ունել զՊորսենաս, որչափ կարի օգտակար քաղաքին ունել զինա բարեկամ և նիզակակից, յանձն էառ՝ զինա ինքնին զՊորսենաս դառաւոր կացուցանել իւրացն Տարկուինեայ. վասն էր յանձն իւր այրն և բազում անգամ յառեան ձայն տայր Տարկուինեայ, զի յայտ յանդիման ցուցցէ հրապարակին՝ եթէ այր ամենաչար է Տարկուինիոս, և զի իրաւամբք կապտեցաւ յաղքայութենէն: Իբրև առ այս յայրատագոյնս տայր պատասխանի Տարկուինիոս, ոչ ունել անձին դառաւոր՝ ևս առաւել զՊորսենաս, որ նիզակակից իւր գոլով՝ արդ ուծանայ ՚ի նմանե, սրանեցաւ Պորսենաս և դառապարտ առնէր զՏարկուինեայ գնացն. անդ միանգամայն և որդի նորա Ավրոնն յողոք անկեալ առ հայրն՝ միջնորդ կայր վասն Հռոմայեցւոցն. ուստի և Պորսենաս ելոյծ զպատերազմ, դաշն եդեալ՝ դարձուցանել զոր միանգամ հատեալ էր Հռոմայեցւոց ՚ի

տիւրրհենական երկրէն, գարձեալ և զգե-
րին առաքել առ նա: Առեալ և Հռով-
մայեցւոց չինքեանս զկամաւոր փախըս-
տեայն, առ այս՝ և՛ի պատանդի եռուն
Պորսենեայ՛ի Պատրկաց անտի ծիրանա-
զգեացս տան և կուսանս նոյնչափ, յորս
էր և Վաղերիա դուստր Պոպղիկողեայ: Ի
կատարել այսոցիկ, ապա և Պորսենաս
վատահ եղեալ արձակեաց՛ի բաց միանգա-
մայն զամենայն պատրաստութիւն մարտի
պատերազմին:

Իսկ կուսանք Հռովմայեցւոց լքեալ
յայնժամ՛ի գետն՛ի լուանալ՛ի վայրին՝
ուրանօր լուանային ափն՛ի ծոց իւր պարու-
րեալ զգետն՝ կարի հին հեզ և խաղաղ ամ-
փոփեր զհոսանս ջուրցն, իբրև ոչ պահա-
պան զոք անդ տեսին՛ի վերայ իւրեանց
աղջկունքն, և ոչ գարձեալ անցաւոր զոք
ընդ ցամաք կամ ընդ ջուր, խրախուսե-
ցան՛ի լիւլ անցանել ընդ գետն, թէպէտ
և բազմաջուր էր և բազմախոր: Ա՛յլ կէսք
ասեն՝ եթէ մի ոմն՛ի նոցանէ անուն կվի-
լիա՝ յերկիւար աշտանակեալ անցանէր ընդ
գետն քաջալեր մեծ կարդալով ընկերացն՝
որ՛ի լիւլ անկեալ էին: Իբրև ողջանդամ
եկին հասին նոքա առ Պոպղիկողաս, նա ոչ-
ինչ զարմացաւ ընդ գործն, և ոչ հաձեալ
հաւանեցաւ ինչ. այլ և խրթացեալ եթէ
երբէք գրժող դաշինն երևեսցի առաջի Պոր-
սենեայ, և զի՝ Թերևս յանդգնութիւնդ
այդ կուսանաց իւրեց՛ի նեղքս տացէ զդա-
ւաճանութեանն Հռովմայեցւոց, վասն ո-

ըոյ և ժողովեալ զնոսա՝ յղեաց անդրէն առ Պորսենաս։ Իրաղեկ այսոցիկ եղեալ Տարկովինեանք՝ նաոուցին ՚ի դարանի արս ՚ի վերայ մարդկանն՝ որ ածեալ բերէին զաղջկոնան. սոքա իբրև եկեալ անցանէին՝ նոքա բազում գոլով անկան ՚ի վերայ և պաշարեցին. իբրև զդէմ կալեալ պաշտպանէին անձանց, անդ Վաղերիա գուստր Պոպղիկողեայ վազեալ սաստկութեամբ ՚ի միջոյ խուժանին ՚ի փախուստ ձեռակեր, և երեք ոմանք ՚ի ծառայիցն՝ ընդ նմա անձնապուր եղեալ՝ յանդորը հանէին զնա։ Իսկ իբրև այլք ոչինչ անվտանգ անդէն խառնեալ կային ՚ի կռիւ մարտին, լուր առեալ Աբրուէն որդին Պորսենեայ, հասեալ ՚ի վայրն հասանէր ՚ի թիկունս օգնականութեան, և ՚ի փախուստ զթշնամին դարձուցեալ՝ փրկէր զՀռովմայեցին։ Ալ Պորսենաս տեսեալ զմիւսանգամ դալուստ կուսանացն, խնդրէր հարցանէր՝ եթէ ո՞ք ՚ի նոցանէն առաջնորդ եկաց գործոյն, և ՚ի նոյն ցայգն իրախուսեաց. իբրև լուաւ զԿլելեայ զանունն, համբոյր և զուարթ աչօք սկսաւ հայել ՚ի նա. ետ հրաման երիվար մի յիւրոց անուն յարքունեացն ածել ՚ի մէջ հոյակապ շքեղ զարդարեալ, և ետ նմա ՚ի պարգև։ Եւ զայս ՚ի վկայութիւն առնուն իւրեանց՝ որ ասէին եթէ միայն Կլելիա յերիվար աշտանակեալ անց ընդ դէտն. բայց այլք ոչ ասեն զայդ, այլ թէ դովին զառնաբար քաջութիւն կուսին պատուեաց Տիւրրենացին։ Իսկ ՚ի նուիրական

փողոցին ՝ի կողմանէ որ հանէ ՝ի պալատ անդր՝ կանգնեալ կայ ՝ի բարձու անդրի ձիաւոր, զոր ոչ կրնէաց ասեն ումանք, այլ Վաղերեայ: Բայց Պորսենաս խաղալու- Թեամբ գնացեալ ընդ Հռովմայեցին, բազում մասամբք զգեղեցիկ առատաձեռ- նութիւն իւր ՝ի նեղսն ընծայէր քաղաքին. եւ հրաման Տիւրրենացւոցն ոչնչ այլ ՝ի բաց տանել ՝ի բանակէն, բայց զզէնսն միայն. և Թողեալ անդէն զամբարան լի կե- րակրովք, և զչոեմարանն յորդ և զեղուն ՝ի մէթերս գունակ գունակ ընչից, տայր զայն Հռովմայեցւոց: Վասն որոյ և մինչև ցայսօր ժամանակի յորժամ զհասարակաց գոյն ՝ի վաճառ հանեն, մունետիկքն քա- րոզ կարգան եթէ Պորսենեայ գոյքն են առաջինքն ՝ի վաճառս, ՝ի յիշատակ յա- ւերժական պահելով զպատիւ զառնն ՝ի ընորհս երախտեաց նորա: Եւ անդրի ևս պղնձի կանգնեալ կայ նորա մերձ յատեան ծերակուտին. գործ անարուեստ և վաղըն- ջուց ձեռակերտ:

Իսկ յետ այսորիկ երբև յարձակեցան Սաբինացիք ՝ի գաւառն, կարգեցաւ հիւ- պատոս Մարկոս Վաղերիոս եղբայր Պոպլի- կողեայ, և Պոստումիոս Տուբերտոս: Եւ քաջացան սոքա ՝ի գործս մեծամեծս խոր- հրդով և նիզակակցութեամբն Պոպլիկո- ղեայ. ուստի և յերկուս պատերազմունս անհնարինս տարաւ Մարկոս զյաղթու- թիւնն. յորոց յերկրորդումն և ոչ զմի ոք ՝ի Հռովմայեցւոցն կորուսեալ, արս երեք-

տասան հազար տապաստ արկ ՚ի Թշնա-
մեացն : Վասն որոյ ՚ի վերայ յաղթանա-
կացն և այլ ևս մրցանակ տարաւ նա զտուն
բնակութեանն՝ զոր ՚ի հասարակաց գան-
ձէն շինեցին նմա ՚ի պալատան : Եւ զի յայնմ
ժամանակի ամենայն վիեղկք դրանց բա-
նային առ ՚ի նեղքս ՚ի տունն , միայն զնորա
տանն գուրսն արարին բանալ առ արտաքս
՚ի գաւիթն , իբրու ՚ի նշան պատուոյ առն՝
եթէ ցանգ արժան է նմա գրաւել ինչ ան-
ձին ՚ի հասարակացն : Ա՛յլ զէ՛ելենաց
դրունն առհասարակ օրինակ զայս ասեն
շինեալ ՚ի նախնումն , և ցուցանեն զայս ՚ի
Կատակերգակ տեսարանացն . ուր նախ
բաղխեն և շառաչով արձակեն ՚ի նեղքուստ
ընդ գուրսն՝ որ միանգամ հանգերձեալ
լցեն ելանել արտաքս ՚ի տանէն . որպէս զի
արտաքոյ իրազգած եղեալ անցաւորք , կամ
ոք անդ առ դրամբքն գեգերեալք լցեն ,
զգուշացին անձանց, և մի՛ յանձուկ փողոցան
ինչ ՚ի բուռն բաղխմանէ վիեղ-
կիցն բացելոց :

Ա՛յլ ՚ի յաջորդ ամին գարձեալ հիւ-
պատոս ընտրեցաւ Պոպղիկողաս չորրորդ
անգամ . և էր յայնժամ կասկած մարտի
պատերազմի . քանզի դաշնակիցք միմեանց
լեալ էին Սաբինացիք և Լատինք : Ա՛ռ այս՝
և անապաշտութիւն յայնժամ գրաւեալ
ունէր զքաղաքն . քանզի ամենայն յղի կա-
նայք նոցա յայնմ ժամանակի վիժեցին
առհասարակ զսաղմն , և զսակաւ անվթար
ուրեք երբէք ո՛չ ծնանէր : Ոսաի և Պոպղի-

կողաս ՚ի մատենից ինչ Սիբիլլայից հաշտ արարեալ զոհիւք զԱնդարատեան, և մրցանս ըստ պատգամացն Պիւթեայ միւսանգամ նորոգեալ, և գեղեցիկ յուսոյ ակնկալութեամբ յաստուածակոյս կողմն անդր իրախուսեալ և սրտապնդեալ զքաղաքն, այնուհետեւ կազմ պատրաստեր զանձն ընդէմ ահագին սպառնալեացն՝ որ ՚ի մարդկանէ: Քանզի մեծապէս էր պատրաստութիւն մարտին, և բազումք էին թըշնամիքն դաշնաւորք: Արդ էր Ապոլիոս կղաւդիոս առ Սաբինացիս, այր ճոխ և ընչաւէտ, և կորովութեամբ մարմնոյն ուժաւոր անհնարին. իսկ յառաքինութեան մասին յաւէտ քաջահամբաւ, և ճարտարապանութեամբ լեզուին բնաւից վեհագոյն: Ա՛յլ զոր ինչ կրեալ բնաւորեցան արք հոյակապք և առաքինիք, ոչինչ անբաժ մնաց և սա. քանզի և ընդ նա ակամն խանդալ, և բիծս կարկատէին չարակնեալք՝ եթէ հեռասամուտ է նա կարձել զմարտ պատերազմին, և հաստահարուստ զՀռոմայեցիսն յարպարել, և ՚ի նոցա ձեռն բռնանալ ՚ի վերայ գաւառին և ՚ի ծառայութիւն նուաճել զնա: Իբրև իրազեկ եղև այրն, զի հեռոտնկալ էին ՚ի լսելիս ժողովրդեան բանքն, և ՚ի նոսա արք պատերազմողք և արք զօրութեանց ընդ ակամբ հայէին ընդ նա, երկեաւ այնուհետեւ յառեղծ դառնասոսնին: Ա՛յլ քանզի զօրավիգն ՚ի Թիկուն ունէր նա զբազմութիւն բարեկամացն և զընտանեացն՝ որ նիզակակից կային նմա,

հերձուած խռովութեան յարոյց ՚ի քա-
ղաքին. և եղև ասա այն Սաբինացւոցն յա-
պաղումն և խոչընդոտումն մարտի պատերազ-
մին: Իսկ անդուստ Պոպղիկողաս ոչ միայն
ձչդրիտ ՚ի վերայ կալ այսոցիկ գոն գոր-
ծէր, այլ և սադրել և առաւել դրդռել
զհերձուած խռովութեանն. ունէր և յիւ-
րոց անտի արս ժկրաժիրս՝ որ ՚ի գիմաց իւ-
րոց բարբառէին յոմանկն Կղաւդիոսի յայս-
պիսեաց աստի. "Պոպղիկողաս՝ ասէին՝ առ
արս լաւս և առաքինիս զքեզ ինքն ունե-
լով և առ արս արդարակորով, ոչինչ ար-
ժան համարի՝ եթէ չարեաւ դու վրէժխնդ-
դիր քոյին լինիցիս քաղաքացեաց, թէպէտ
և զրկեացիս ինչ ՚ի նոցանէ: Ա՛յլ եթէ քեզ
կամք իցեն յանդորր հանել զանձն քո, և
առ մեզ անցեալ՝ խոյս տալ ՚ի նոցանէն՝ որ
ատեանն զքեզ, առեալ ժողովեսցէ զքեզ
՚ի հրապարակին. և առանձին դարձեալ՝ ըստ
արժանեաց առաքինութեան քո և ըստ
հռոմայեցւոցն սահմանութեան": Զայսո-
սիկ իբրև ստէպ ստէպ զմոտաւ ածեալ
Կղաւդիոս, լաւ համարեցաւ զայն ՚ի խոր-
հուրդս ըստ առաջնիկայ հարկին, այնուհե-
տև Թեւտիւր՚ի նոյն լինէր և բարեկամացն.
և նոքա դարձեալ բազում որեար ՚ի նոյն
ածեալ հաւանեցուցանէին. ապա երդս
հինգ հազար առեալ ընդ իւր հանդերձ
մանկամբք և կանամբք, որք միանգամ էին
՚ի Սաբինացւոց առաւել խաղաղարարք և
համբոյրք և բարեկենցալք, ած զնոսա ՚ի
Հռոմ: Յառաջագոյն իրազգած եղեալ

Պոպղիկողաս, մեծապէս հիւրամեծարու-
թեամբ և մտադիւրագոյնս ժողովեաց առ
ինքն և զամենայն մարդասիրութիւն եցոյց
առ նոսա: Քանզի անդէն վաղվաղակի ա-
ռեալ զորեարն զայն խաւնեաց և գրեաց
'ի քաղաքացիս Հռովմայ, և գեռին ևս
լծավարաց երկուց՝ միոյ միոյ 'ի նոցանէն
բաշխեաց առ Ընիկէն գետոնէն: Խակ կղաւ-
սիեայ եւս քսան և հինգ օրավարս գետնոյ.
և առեալ գրեաց զնա 'ի համար Սինկղի-
տոսին: Նա միջամուխ 'ի գործ եղեալ քա-
ղաքին՝ մեծապէս զգօնացաւ 'ի գործս իւր,
և անդէն վաղվաղակի էլ նա 'ի բարձրու-
թիւն մեծ, և զօրացաւ յոյժ. և եթող
զինի իւր 'ի Հռոմ քաղաքյանուանէն իւր-
մէ զՆղաւտեանցն զարմն՝ ոչինչ խոնարհա-
գոյն քան զայլսն:

Իբրև այսպէս յետ գաղթելոյ որերոյն հանդարտեալ կայր խռովութիւն Սաբի-
նացւոցն, որք միանգամ 'ի նոսա մարդա-
հաճոյքն էին խուժանին՝ ոչինչ թոյլ ետուն
մնալ անկռիւ և յանդորրու, գառնապէս
բողոք բարձեալ եթէ յոր չեղև բաւական
կղաւսիոս՝ մերձ առ նոսա կալով ածել
հաւանեցուցանել, այժմ տարագէմ փախըս-
տեայ 'ի նոցանէ և թշնամի նոցա՝ հասանէ
աւադիկ խնդրոյն, զի անպատուհաս ար-
ձակեսցին Հռովմայեցիք յանիրաւութիւնս
իւրեանց: Ապա չուս արարին խաղացին գնա-
ցին զօրու ծանու և եկին բանակեցան մերձ
'ի Փիդենաս, և դարան ևս կարգեցին մերձ
Հռովմայ 'ի վայրս հովանաւորս և խորա-

ձորա՝ երկուց հազարաց սպառազինաց. և ընդ այգն ընդ առաւօտն սակաւք ոմանք յայրուձիոյն պատրաստեալ կային առպատակել յայտնի յառ և յապուր գառաւռին: Եւ էր սոցա հրաման առեալ՝ զի 'ի մերձենալ նոցա մօտ քաղաքին, յետս ընդ կրունկն 'ի փախուստ դարձցին, և ածեալ ձգեսցեն զհետ Լուբեանց զԶինամին մինչև 'ի դարան անդր: Իրազեկ այնմ եղեալ Պոպղիկողաս 'ի նմին իսկ աւուր 'ի փախստէից ոմանց, փութանակի կարգեաց յարդարեաց դէղեցիկ զամենայն և բաշխեաց բաժանեաց զզօրն: Քանզի Պոստումիոս Բալբոս վեցհազար նորա երիւք հազարօք սպառազինօք յայգանալ աւուրն եղեալ արտաքս ընդ քաղաքն, հասեալ կալաւ զբարձունս բլրոյն՝ ընդ որովք դարանամուտ նաւէին Սաբինացիք. և անդ պահ կալեալ դադարեր: Իսկ Հոմիշխանն Պոպղիկողեայ Լուկրետիոս առեալ ընդ իւր զԹեԹևաբեռինն 'ի զօրականէն և զշոյտան և զքաջասիրտսն, նոքօք հանդերձ կազմ հայր դիմել 'ի վերայ ասպատակաւոր աւարառուացն այրուձիոյն. իսկ ինքն Պոպղիկողաս յանձն իւր առեալ զամենայն զզօրն՝ շուրջ եկեալ 'ի թիկանց կուսէն պաշարեաց զԼընաժին: Իբրև դէպ եղև՝ զի և մառախուղ Թանձրամած ելեալ պատեալ կայր, անդ ընդ այգանալ առաւօտուն միանգամայն Պոստումիոս ձայնիւ մեծաւ և աղաղակաւ 'ի վայր 'ի բլրոյն հոլոգան տուեալ անկանէր 'ի վերայ դարանամտիցն. և Լուկրետիոս 'ի քաղաքէն՝ որ զնուրն էին՝ առեալ սաստ-

կուԹեամբ արձակէր ՚ի վերայ այրուձիոյն՝ որ յառաջադէմ խաղացեալ էին. անդուստ և Պոպղիկողաս բովանդակ զօրուն անկանէր ՚ի բուն բանակ անդր Թշնամեացն: Իբրև այսպէս յամենայն կողմանց միանգամայն տագնապեալ Սաբինացիք հարան սաստկապէս, ոչ կացին մնացին զդէմ ունել Թշնամեացն, այլ վարատեալք առհասարակ ՚ի փախուստ խուճապեցան. զորոց զՀետ մնեալ Հռովմայեցւոց կոտորէին զնոսա. որպէս զի և յոյս բարւոյ ակնկալուԹեան նոցա՝ մահաւիԹ յոյժ եղև նոցա: Քանզի անդանօր այր զընկեր կարծեալ յանդորրու և ՚ի խաղաղուԹեան, ոչինչ միտ եդին կալ և զդէմ ունել մարտին. այլ կէսք ՚ի նոցանէն ՚ի ղակշէ բանակին առ դարանամուտան դէմ եդեալք փախչել, և կէսք դարձեալ ըստ օրինակին նոցա ՚ի դարանացն ՚ի բուն բանակն դիմեալք, առ որս ինքեանք ապաւինեալք փախչէին՝ զնոսա գլխովին ՚ի փախուստ խուճապեալս գտին, և օգնականուԹեան իւրեանց կարօտս՝ յորոց օգնուԹիւն գտանել յուսային: Սակայն և ոչ առհասարակ կոտորեցան Սաբինացիք. քանզի ապրեցան՝ որ միանգամ անկան ՚ի Փիդինա քաղաքն՝ որ անդ մերձ կայր. մնանդ ՚ի բանակեալ զօրուէն բազումք դիմեալք ապաւինեցան անդր ՚ի տագնապել բանակին. իսկ որք միանգամ ոչն բաւեցին ունել զՓիդինա, ՚ի սուր սուսերի մաշեցան, և կէսք դարձեալ ՚ի գերուԹիւն վարեցան:

Ա՛րդ Հռովմայեցիք՝ Թէպէտ և զայլ ամենայն շահատակութիւնս մեծամեծս դիցն տալ բնաւորեցան, այլ զայս նահատակութիւն քաջութեան՝ գործ միայն հանճարեցան զօրավարին արուեստից, և էր անդ լսել՝ի զօրականէն անդէն յետ հարուածոյն, զի ասէին՝ եթէ կաղս և կոյրս՝ի ձեռս նոցա և վայրիկ մի ևս կապեալս զԹշնամիս՝ հետ մատնեաց Պոպղիկողաս՝ի սուր սուսերի նոցա: Եւ զօրացաւ յօրացաւ յայնժամ ժողովուրդն յաւարէ անտի Թշնամեացն և՝ի գերուէն նոցա: Իսկ Պոպղիկողաս զհանգէս կատարեալ յաղթանակին, և զքաղաքն յանձն արարեալ՝ի ձեռս հիւպատոսացն՝ որ յետ նորա ընտրեալ կարգեցան, ինքն վաղվաղակի մեռանի՝ վախճանեալ զկեանս՝ի փառս մեծամեծս և՝ի բարօրութեան կենցաղոյս՝ յորչափ ինչ միանգամ ձեռնհաս եղէ այր կանանցածին: Ա՛յլ ժողովուրդն՝ իբրու այն որ առ կենդանութեն ոչինչ չուք պատուոյ նմա ընծայեալ եղէ, այլ զամենայն չնորհս նմա տակաւին պարտապան եղէ հատուցանել, ետ վճիռ՝ի հաստարակաց ընչից տալ նորա թաղումն մարմնոյն. առ այս՝ և այր այր՝ի նոցանէն հատուցանէր տայր զչորիր մանեան 4: Բայց և տիկնայք առանձին խորհուրդ ընդ միմեանս արարեալ, տարի մի ողջոյն՝ի Թուխս համակեցան վասն առնն. սուգ մեծապէս և փառաւոր յոյժ: Եւ Թաղեցաւ նա՝ի հրամանէ քաղաքացեացն՝ի նեղոս անդ՝ի քաղաքին մերձ՝ի վայրն՝ որ անուանեալ

կոչեր Վէղիա. ուրանօր և բովանդակ զար-
մին նորա կարգեցան դիրք հանգստեան:
Ա յլ այժմ թաղէն անդ և ոչ զոք ի զար-
մէն, այլ բարձեալ զմեռեալն՝ անդէն վայր
մի հանգուցանեն, և ջահ վառեալ առ-
նու ոք և ածէ սակաւ ի նեղքոյ դիականն
և ապա ի բաց առնու. վկայութիւն զայս
հդեալ վասն նոցա՝ եթէ արժան և իրաւ է
նոցա շուք պատուոյդ այդորիկ, այլ նոքա
խնայեալք հրաժեշտ տան. և այսպէս ապա
բարձեալ ի բաց տանին զմեռեալն:

ՋՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՍՈՂՈՆԻ ԵՒ ՊՈՊՂԻԿՈՂԵՆԱՅ

ՋՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ մեր այս՝ մանաւանդ ինչ՝ ի նեղքս ընծայէ, զոր ոչ գտցես արդեօք հանդիպեալ՝ յորս միամամ գրեցաք մեք ցայժմ. քանզի՝ ի սոցանէ մին միւսոյն նմանաւոր է, և միւսն գարձեալ՝ ընկերին վկայ է: Եւ արդ՝ քաջ մի՛ւտ գիր, եթէ գնա՛րդ զոր ինչ Սողոն յաղագս երջանկութեանն՝ առած բանի՝ ի նեղքս եբեր առ Կրիւսոս, առաւել ինն Պոպղիկողեայ՝ ի ձահ պատահեաց, քան Տեղղոսի: Քանզի զՏեղղոսին՝ զոր յոյժ երջանիկ կոչեաց Սողոն յաղագս դեղեցիկ մանհուանն և առաքինութեան վարուցն և քաջաբերութեան զաւակացն, յիշատակ ինչ ոչ արար ինքն յիւր քերթուածսն իբրև վասն առն բարւոյ, և ոչ վասն զաւակացն, և ոչ խչհանութեան ինչ վառաց եհաս Տեղղոս:

Իակ Պոպղիկողաս ոչ միայն առ կենդանու-
Թեամբն ՚ի պատճառս առաքինութեանն
բարձերէց գոտաւ զօրութեամբ և փառօք
առ Հռովմայեցիսն, այլ և յետ մահու
վախճանին՝ ՚ի ձեռս և յաղգատոհմ յոյժ
ականաւոր. և մինչև ցայսօր ժամանակի
Պոպղիկողեանք և Մեսալեանք և Վալե-
րեանք ընդ ամս վեցհարիւր զաղնուակա-
նութեան իւրեանց զփառս ՚ի Պոպղիկո-
ղաս անդր ՚ի վեր հանեն 5։

Եւ Տեղոս ինքնին ՚ի թշնամեաց անտի
իւրոց՝ իբրև այր քաջ և առաքինի ՚ի ձա-
կատամարտի արձանացեալ և կռուեալ՝ տա-
պաստ անկաւ։ Իակ Պոպղիկողաս զիւր թըշ-
նամին դիտապատաս արարեալ, որ քան զան-
կանելն երանագունին արդեօք վիճակեալ
է մասին. դարձեալ և զիւր քաղաքն յաղ-
թական տեսեալ առ իւրով իշխանու-
թեամբն և զօրավարութեամբն, շուք մե-
ծապէս ընկալեալ և յաղթանակս ասրեալ
բազումս, օրահասին այնմ հանդիպեցաւ
մահուն՝ զոր Սողոն երանելի կարդաց և
յաւէտ փարելի։

Ա՛ս այս դարձեալ և զոր ինչ միանգամ
ընդդէմ Մինեերմինի ուրուն՝ խօսելով
վասն ժամանակին կենաց, մակագանչեաց
Սողոն,

Ո՛չ անկոծ ոչ անարտօսր
Օրհաս մահուն իմ անցցէ,
Ալլ թառանչ և հեծութիւն
Մահն իմ խնդց առթեսցէ.

և այս ևս նուաղ Սողոնի՝ երջանիկ գործէ զՊոպղիկողաս: Քանզի ՚ի մեռանել նորա՝ ոչ բարեկամացն իւրոց միայն և ոչ ընտանեացն միայն, այլ և քաղաքին ողջոյն և բիւրուց բազմաց գերարուստ և անձուկ սրտի և թաղծութիւն սաստիկ ՚ի նեղքս եբեր վասն անձին իւրոյ: Քանզի և Հռովմայեցւոց տիկնայք ՚ի Թուխս համակեալ կոծեցին զնա, իբրու այն որ յորդւոցն իւրեանց կամ յեղբօրէն կամ ՚ի հասարակաց հօրէն զերկաք ինացեալ էցեն:

"Իակ ինչք՝ ասէր Սողոն՝ ինձ հեշտ և բաղձալի են. այլ զանկրաւորութեամբ ժողովեալն չառնում յանձն". իբրև զի պատուհաս դատաստանին ՚ի վերայ կայ: Արդ Պոպղիկողեայ վիճակեցաւ ոչ միայն արդարութեամբ ընչաւէտութիւն, այլ և գեղեցիկ բարեգործութեամբ ծախել զինչսն ՚ի պէտս և ՚ի շնորհս կարօտելոցն. որպէս զի եթէ իմաստութեամբ բնաւից վեհագոյն էցէ Սողոն, երջանկութեամբ զամենեքումբք գերազանցեալ է Պոպղիկողաս: Քանզի զոր ինչ միանգամ ՚ի բարեաց մասին ուխտիւք իւնդրեաց Սողոն իբրև գեղեցիկս յոյժ և մեծամեծս, զայնոսիկ միանգամայն և զբուամբ ածել բաւական գտաւ Պոպղիկողաս և պահել և վայելել մինչև ցվախճան: Եւ այսպէս ապա Սողոն զՊոպղիկողաս մեծարեալ պսակեաց, և զՍողոն դարձեալ Պոպղիկողաս նպաստակ կալեալ՝ քաջ և գեղեցիկ յարացոյց ՚ի քաղաքականութեան մասին առն՝ որ միանգամ վայե-

լուէ յարդարել զուամկապետութիւնն հան-
դերձեալ էր, զգուշութիւն ամբարտա-
ւանութեանն ՚ի բաց սրբեաց յիշխանու-
թենէ հիւպատոսութեանն, և հեզ և փա-
րելի ամենեցուն հանդերձեաց զնա, և շատ
ինչ յօրինաց անտի Սողոնի առ և արդիւնա-
ցոյց: Քանզի ընտրութեան և կարգելոյ
իշխանացն զժողովուրդն տեարս կացոյց
հրամանատարս. և որք միանգամ զնոցուն
դատաստան յանձին չկալցեն, ետ նոցա իշ-
խանութիւն բողոքել առ ժողովուրդն. ըստ
որում և Սողոն՝ առ դատաւորսն:

Եւ թէ Պոպլիկոլաս ոչ կարգեաց եղ-
այլ ծերակոյտ՝ ըստ որում Սողոն, սակայն
զերեսաւն աձեցոյց, և վայրիկ մի ևս և կրկնա-
պատկեաց ՚ի թիւն: Իսկ և սահմանն օրի-
նացն՝ որ վասն դանձատրաց ընչից՝ վասն
այնորիկ հանդերձեցաւ, զի մի թերևս ՚ի
հիւպատոսաց ոք՝ եթէ այր լաւ լիցէ՝ ան-
պարապութեամբն խափանեսցի ՚ի մեծաց
գործոց. և մի թերևս՝ եթէ այր չար հան-
դիպեալ լիցէ, պատճառս կալցէ և ևս անի-
բաւութեան, տէր գոլով միանգամայն ա-
ռաջնորդութեան քաղաքին և մերկելոյ ըն-
չից: Իսկ առաքութիւնն առ բռնաւորսն՝
սասակիկ և ոխերիմ ևս էր ՚ի Պոպլիկոլաս.
քանզի որ միանգամ զբռնաւորութեան
թեկն ածէր՝ այնպիսւոյն չետ ձշդիւտ հար-
յափորձին պատուհաս ՚ի վերայ կապեաց
Սողոն. իսկ Պոպլիկոլաս՝ և յառաջ քան
զդատաստանն Թոյլ ետ սպանանել զնա:

Ա յլ սակայն ուղղապէս և իրաւացի

բարձր ՚ի գլուխ պանծայ Սողոն. զի յորժամ առաջնիկայ դէպքն իշխանութիւն նմա ՚ի ձեռս ետուն միապետութեան, և այն ինչ և քաղաքացիքն մեծագիւրագոյնս նմա հպատակ կային, նա ՚ի բաց հրաժարեաց յիշխանութենէն: Ա՛յլ ոչինչ պակաս գերզեցիկ էջե և Պոպղիկոլեայ, զի յիւրում բուն զիշխանութիւնն ունելով ըզմիապետութեան, ռամկական յաւէտ յարդարեաց զնա. առ այս դարձեալ՝ և ոչ որչափ ինչ ձեռնհաս էր՝ վարեցաւ իշխանութեամբն. և զնոյն զգօնութիւն թուի թէ և Սողոն ինքնին ակնարկեաց յառաջագոյն, յասել անդ իւրում.

" Յորժամ ժողովուրդն բարեհամբոյր հլութեամբ հպատակ կայցէ իւրում առաջնորդին, յայնժամ մի սաստկագոյնս վարեսցի, և մի դարձեալ մեղկագոյնս ":

Բայց գլխովին առանձին է Սողոնի արձակուրդն ՚ի պարտուց, որով և առաւել հաստատուն գործեաց նա զաղատութիւն քաղաքացեացն: Քանզի ոչինչ արդեօք օգուտս ցիեն օրէնք սահմանիչք հաւասարութեանն, յորժամ պարտք ՚ի ներքս անկեալ՝ բառնան զայն յաղքատաց ժողովրդեանն. նա յորժամ առաւել թուեցին նոքա վարել զաղատութիւնն, յայնժամ առաւել ՚ի ծառայութեան կան նոքա մեծատանցն, և ՚ի գատելն դատաստան և ՚ի վարելն զիշխանութիւն և ՚ի խօսելն գլխովին, առհասարակ ակնարկութեան նոցուն պատկառ կալով և սպաս հարկանելով:

Ա՛յլ որ վերագոյն ևս է քան զայս, զի առհասարակ յամենայն արձակուրդան պարտուց՝ աղմուկք մեծամեծք բնաւորեցան՝ ի վեր երևել. միայն զայս նուագ՝ զնոյն դեղ դարմանոյ յոյժ կերզակարծելի՝ սակայն և կարի ապաքինիչ՝ ի վար արկեալ Սոլոն, ի դէպ ժամուն և զյուզեալ աղմուկն հանդարտեաց, և առաքինութեամբ և փառօք անձինն զանփառութիւն գործոյն և զբանսարկութիւնն պարտեաց:

Իսկ յամենայն քաղաքականութեան մասունս միանգամայն՝ է մեզ տեսանել զՍոլոն առաւելահռչակ ի սկզբանն: Քանզի առաջնորդեաց և ոչ երբէք առաջնորդեցաւ. և ինքնին առանձին և ոչ այլոցն նիզակակցութեամբ՝ շատ ինչ և մեծամեծ նաև հատակութիւնս ի ներքս երբեր քաղաքին: Սակայն ի վախճան կատարածին է մեզ տեսանել զՊոպղնիկողաս առաւել բարեբաստիկ և նախանձելի: Քանզի զՍոլոնեան քաղաքականութեան օրէնսն ինքնին Սոլոն իւրովք իսկ աչօք էտես տապալեալ: Իսկ Պոպղնիկողաս մինչև ի ժամանակ քաղաքական մարտին՝ դեղեցիկ կարգաւ յարգարեալ պահեաց զքաղաքն: Քանզի Սոլոն անգէն ի կարգել զօրէնսն՝ երթոյլ եղեալ զայնոսիկ ի տախտական և յարձանագրութիւնսն՝ անբաժ յօդնականէն, և ինքն էլ տարագէմ գնաց յԱՄԵՆայ: Իսկ Պոպղնիկողաս անգէն կացեալ մնացեալ և զնչխանութիւնն վարեալ և քաղաքին առաջնորդեալ, հաստատեաց զքաղաքականութիւնն

և գեղեցիկ սահմանաւ յանդորրու առեալ կացոյց զնա:

Աւ այս՝ և Սողոն Թէսպէտ և նախազգած եղև բռնակալուԹեանն Պիսիսդրատեայ՝ ոչ զօրեաց իսափանել, այլ նկուն գոսաւ՝ մինչդեռ բռնաւորուԹիւնն արմատս արձակել կամէր: Իսկ Պոպղնկողաս զԹագաւորուԹիւնն գլխովին՝ որ ՚ի հարուստ ժամանակաց պնդեալ և տիրացեալ էր՝ վանեաց և տապալեաց. զնոյն առաքինուԹիւն բերելով յանձին և զնմանօրինակ խորհուրդ կամաց զՍողոնին. իսկ բախտիւն և զօրուԹեամբն առաւել ևս ճոխացեալ ՚ի գործն:

Աչ ՚ի նահատակուԹիւնս մարտից՝ Դամոնաքոս Պղատէացի՝ և ոչ զՄեգարեանց մարտն վկայէ կռուել Սողոնի, զոր ուրեմն աւանդեցաք մեք. իսկ Պոպղնկողաս ՚ի մերձմինս մեծամեծս նահատակեալ՝ ինքնին և մարտ եղեալ կռուեցաւ և զօրավարեաց:

Աւ այս և ըստ քաղաքական գործառնուԹեանցն, Սողոն ըստ խալարկուաց օրէնակի՝ և խելայեղուԹեան պատկեր զանձամբ առեալ՝ ՚ի մէջ անցեալ քարող կարդայր յաղագս արշաւանին Սաղամինոյ: Իսկ Պոպղնկողաս գիմագրաւ զանձն ՚ի կշիռ եդեալ՝ ՚ի նահատակուԹիւնս մեծամեծս զդէմ կալաւ Տարկուինեայ և զգաստանս մատնուԹեանն առակեալ նշանակեաց. և պատճառք մեծապէս ինքն եղեալ՝ զի մի անպատուհաս արձակեսցին չարքն, ոչ միայն զբռնաւորացն զանձինս ՚ի քաղա-

քէն արտաքս վարեաց, այլև գլխովին զոյս
ակնկալութեան նոցա եհատ կտրեաց: Եւ
այսպէս ապա՝ որ քաջասիրտ և անվանելի
զօրութեամբ միջամուխ եղև յիւրս՝ որոց
մրցանաց պէտք էին և արիութեան սրտի և
ճակատամարտ հանդիսի, նոյն դարձեալ և
լաւագոյն հանճարով քաղաքավարեալ՝ յոր
ինչ միանգամ արժան էր վարել գնացս
անկուխ և բան հաւանական հեշտընկալ,
հնարիմաց ճարտարութեամբ յինքն յան-
գուցանէր և՝ի բարեկամ փոխէր զՊորսե-
նաս՝ զայր անպարտելի և ահաւոր:

Ա յլ թերևս ոք զայն ինչ՝ի գէմս բերցէ
աստանօր, եթէ Սոլոն եւս Աթենացւոցն
միւսանգամ գրաւեալ զՍալամինա՝ զոր՝ի
ձեռաց հանեալ էին. իսկ Պոպղիկոլաս եւս
Հռովմայեցւոցն հրաժեշտ տալ երկրին՝ զոր
ժառանգեալն ունէին: Ա յլ սակայն պարտ
և արժան է զկրան ըստ հանգամանաց ժա-
մանակին զննութեամբ կշռել: Քանզի այր
քաղաքագէտ բազմօրինակ գոլով և բազ-
մահնար, զմէն մի կիրացն տանի բերէ՝ որ-
պէս և զնարդ նմա օգտակար թուեցի. և
է բազում անգամ՝ զի զմանն թողեալ՝
ապրեցոյց զբոլորն. և՝ի փոքուէն հրաժեշտ
տուեալ՝ մեծամեծացն հանդիսեցաւ: Որ-
պէս և Պոպղիկոլասդ այդ յայնժամ տեղի
տուեալ օտարին գեռնոյ՝ զնուրն զամենայն
փրկեալ յանդորր եհան. և որոց միանգամ
գժուարին կոյժ էր պաշտպանել քաղաքին
նուրեանց, զնոսա առեալ ժառանգորդս ա-
րար բանակի պաշարողացն նուրեանց: Դար-

ձեալ և զնոյն ինքն զԹշնամին դատաւոր ՚ի մէջ կացուցեալ, և ՚ի դատաստանին յաղթական եղեալ, անձին իւրում դրաւական նեաց այնչափ ինչ՝ որչափ միանգամ սիրելի էր նմա տալ առ ՚ի պայթուցանելն զայն տանել: Քանզի զմարան գլխովին եղոյծ Թշնամին, և զպատրաստուԹիւն և զկազմած պատերազմին պարգևեաց Հռովմայեցւոցն. քանզի կարծիս գերեցիկ կալաւ զառաքինուԹեան նոցուն և զբարեբաւուԹեանն, զոր ինքնին հիւպատոսն վասն բոլորից Հռոմայեցւոց սադրեաց ՚ի միտս նորա:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Անշուշտ՝ որպէս ասեն, գիւցական այս բարբառ՝ էր բարբառ Հնարագիտու-թեան նորուն իսկ Վաղերիոսի՝ ի մեծի տագնապին:

2. Իսկ Սոխլոս՝ ի լո, է՝ Խոզենի. և Պոպոյա, եզող:

3. Այս սիւնք հատան՝ ի քարահանքացն Ատիկոյ, մերձ՝ ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Պենաեզլի:

4. Քոպոան, կոչէին Հռովմայեցիք զքառորդն պղնձի դրամոյն իւրեանց:

5. ՝Ի ժամանակագրութենէ աստի յայտ է, եթէ՝ ի սկզբան անդ կայսերութեան Տրայիանոսի գրեաց Պլուտարքոս զվարս Պոպլիկոլեայ:

ՊԼՈՒՏԱՐՓԵԱՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԹԷՄԻՍՏՈԿԼԵԱՅ

ԵՒ

ԿԱՄԻԼԼՈՍԻ

ԹԷՄԻՍՏՈԿՂԷՍ

ԹԷՄԻՍՏՈԿՂԵԱՅ՝ ոչ մեծ ինչ՝ ի փառաց մասին՝ ի նեղքս բերէր նմա զարմին։ Քանզի հայր ունէր զՆէոկլէս՝ որ չէր՝ ի մեծաց անտի ականաւորացն Աթենացւոց՝ ի փրէարեան ժողովրդենէ, ՝ի Ղևոնդեան ցեղէն. իսկ մայրենեաք՝ անհարազատ, որպէս ասեն ոմանք՝ ըստ նուագացն. եթէ,

Ընուն ունիմ Աբրոտոնէ
Եա թրակացւոց՝ ի կանանց,
Բայց ես պանծամ զԹէմիստոկղէս
Ծննանէլ ըզմեծն Հելլենաց։

Սակայն փանիաս զմայրն Թէմիստոկղեայ ոչ Թրակացի ասէ, այլ Կարիացի. և ոչ գարձեալ Աբրոտոնէ անուն կարդայ նմա, այլ Եւռեըպէ։ Իսկ Նէանթէս՝ և քաղաք ծննդեան՝ ի Կարիա տայ կնոջն զԱղիկարնասսոս։ Վասն որոյ և՝ ի խմբել անդ անհա-

բազատ պատանեացն 'ի Կիւոսագրէս, (և էր այս առեղն արուաքոյ դրացն՝ մրցարան ըմբշաց Նուիրեալ Հերակլեայ. քանզի և ինքն Հերակլէս չէր ինչ հարազատ 'ի դիս, այլ անհարազատ հանդիպեցաւ՝ մահկանացու ունելով զմայրն), ած հաւանեցոյց Թեմիստոկղէս զոմանս 'ի քաջազգեաց պատանեկացն լինել ընդ նմա 'ի միասին 'ի Կիւոսագրէս և օծանել ընդ նմա: Եւ 'ի լինել այսմ այսպէս, Թուի Թէ խորագիտագոյնս Թեմիստոկղէս 'ի միջոյ եբարձ զնովին զնախերն՝ որ ընդ անհարազատ ծնունդան և ընդ հարազատսն: Իսկ Թէ անդատին ընդ զարմին Լիկոմեդեանց ազգակցութիւն կալեալ էին Թեմիստոկղէս, անդուստ քաջայայտ է: Քանզի 'ի հրկիզել 'ի բարբարոսաց առ փղիւսացիս մատրանն՝ որ անկանէր Լիկոմեդեանցն զարմին, ինքնին Թեմիստոկղէս կառոյց միւսանգամ և նկարուք ևս զարդարեաց, որպէս պատմէ Սիմոնիդէս:

Իսկ որպէս միաբան աւանդեն առհասարակ, անդատին 'ի տղայ տիոցն՝ եռանդուն յոյժ էր Թեմիստոկղէս, և բնութեամբ մտավարժ և զգօն. իսկ կամացն ընտրութեամբ 'ի մեծամեծս ձեռնէրէց և քաղաքական: Քանզի յորժամ ժամանակ էր նմա հանգստեան և պարապոյ յուսմանց վարժից, նա ոչ 'ի խաղս զբօսնոյր, և ոչ գարձեալ պարապորդ կայր իբրու զայլ մանկունսն. այլ եկեալ գտանէին զնա՝ զի նատեալ մտախորհ լինէր և ձառս և բանս յօրինէր գրեր ինքնին միայնակ. և էին

Ճառքն այնոքիկ դատախազութիւն կամ ջատագովութիւն միոյ ուրուք ՚ի մանկանց անտի: Ուստի և վարժապետ նորա սովորեալ էր ասել առ նա. "Ո՛չ դուշնաքեայ ոք հասանէ քեզ լինել ոմ՛ մանուկ դու, այլ գլխովին խակ՝ կամ մեծ ՚ի բարեաց կամ մեծ ՚ի չարաց": Քանզի և ՚ի մարզից անտի՝ զայն լինչ որ միանգամ հրահանգիչք էին վարուց, կամ որ լինչ միանգամ զհետ կրթէր բերկրանաց և պերճութեան ազատանուցն, նա հեղգագոյնս և ակամայացեալ իմն ուսանէր զայնոսիկ. իսկ որչափ լինչ բանք լինէին յաղագս զգօնութեան հանճարոյ և արդեանց արարոց, յայտնի էր տեսանելեացն՝ զի ուշով պատկառ կայր այնոցիկ արտաքոյ տիոց հասակին, իբրու այն որ անդամոյն ՚ի բնութենէն ՚ի նոյն յանկուցեալ էջ:

Ուստի և յետ ժամանակաց յակումբս լինչ ազատաց և ճոխից քաղաքին՝ իբրև ունչս արարին նմա առաւել բարեմարդիկքն ՚ի նոսա, ստիպեցաւ նա յայնժամ յոխորտագոյնս պատասխանի առնել վասն անձին և ասել, եթէ "Քնար դաշնակել ոչ գիտեմ, և ոչ սաղմոսարան հարկանել. սակայն քաղաք մի փոքրիկ և անփառունակ զանձամբ առեալ՝ բաւական եմ փառաւոր և մեծ յարդարել զնա": Ալ Սոեսիմբրոտոս ասէ, եթէ Անաքսագորեայ աշակերտութեամբ լսէր Թէմիստոկղէս, և փութոյ ընդունելեամբ ևս հպատակէր զանձն Մելիսեայ բնախօսին. սակայն ոչ ճշդիւրեն նա

ժամանակն: Քանզի Պերիկղեայ՝ որ բազմօք կրսերագոյն էր քան զԹէմիստոկղէս, ընդդէմ արձանացեալ կայր զօրավարութեամբ Մեղևոս՝ ի պաշարել նորա զՍամոս. իսկ Ընաքսագորաս ժամանակակից էր Պերիկղեայ: Ապա լաւ ևս ձայնակից լինի ցի ոչ Թերևս այնոցիկ՝ որ սակն եթէ նախանձաւոր եւկաց Թէմիստոկղէս Մնեսիփիղեայ փրէարեայ. որ ոչ՝ ի հռետորաց ոչ էր նա և ոչ յիմաստասիրացն՝ որ անուանեալ կոչին Փիւսիկեան՝ այն են բնախօսք. այլ կրթէր նա զանձն յայն ինչ վարժս՝ զոր անուանեալ կարդային իմաստութիւն. այն էր քաջավարժ կրթութիւն քաղաքականին և գործօնեայ զգօնութիւն առաջնորդութեան. և՝ ի նոյն տքնէր նա հանապազօր լըրև ժառանգ գլխովին ալանդոյ վարժարանին Սողոնի. զոր ապա զկնի եկեալքն խառնեցին ընդ դատաստանական արուեստս առնոյց ինչ հանճարոյ բանի և դատախարազանց փոխադրեալք զնա՝ ի մարզս լսոյն բանից և ճառից՝ անուանեալ կոչեցան իմաստասէր: Այլ Թէմիստոկղէս՝ ի քաղաքին առաջնորդութեան հեռևալ զանձն ընծայէր նմա. բայց յառաջին բերմունս պատանեկութեանն՝ յեղյեղուկ էր և անկայուն՝ առ՝ ի բնութենէն միայն ձգեալ և բերեալ առանց ինչ հանճարոյ բանի և դատախարազանց կրթութեան՝ յայս կոյս յայն կոյս տարուբերեալ՝ ի փոփոխութենս մեծամեծս կէնայր. և բազում այն էր՝ զի՝ ի յոռեգոյնն կրթէր: Ըստ որում և ինքնին ապա խոստո-

վան լինէր, եթէ՝ և սանձակոտոր մորուկք դառնան լինին երկիվարք քաջք, յորժամ դէղէցիկ մարզից հանդիսանային և անպատ՝ ասիր հրահանգաց:

Իակ զոր ինչ միանգամ յայտնիկ յաւե՝ լուն ոմանք՝ հիւսուածոյս՝ ինձէքս բերելով բանս, իբրու որ անժառանգեալ էցէ ինքն՝ ի հօրէն. իակ մայրն նորա կամաւորու՝ թեամբ և անձին ևս արարեալ էցէ՝ անհը՝ նարին թաղծեալ ընդ անարգութիւն վա՝ տահամբաւութեան զաւակին, թուի թէ ատեն առհասարակ: Եւ ընդ հակառակն են և ոչք պատմեն, եթէ հայր նորա առ՝ ի տալ նմա ՚ի բաց հրաժարեալ յառաջ՝ նորդութենէ քաղաքին, տարեալ ՚ի ծով՝ եզրն ցուցանէր նմա անդանօր հառաթիս նաւացդ հնացելոց լքեալս և ամայացեալս և անխնամս. իբրու այն թէ զնոյն օրինակ կիրս կրեացեն ՚ի ժոլովրդենէ և առաջ՝ նորդք ժոլովրդոյ՝ յորժամ անպիտանք ոմանք այնուհետև եղիցին նոցա: Բայց թէմիստոկղէս՝ թուի թէ կանուխ և յաշ՝ խոյժս երևոտասարդականս բուռն եհար զքաղաքական գործոց. առ այս՝ և մեծա՝ պէս խոչ փառաց աստիականէս տիրեաց նմա. վասն որոյ և անդէն ՚ի սկզբանն զհետ կրթեալ նախանձու բարձի և գահու՝ ձըգ՝ եաց յանձն թշնամութիւնս ոխերիմս և անհաշտս զճոխից քաղաքին իւրոյ և զբար՝ ձերէց աւագաց. և առաւել՝ զԱրիստէ՝ դեայ Լիւսիմաքեան՝ որ յանդ ընդ հակա՝ ռակս և խոտորնակս ընթացաւ ընդ նմա:

թէպէտ և Թուի Թէ գլխովին Թշնամու-
Թիւնն ընդ նմա՝ սկիզբն առեալ էր՛ ի
պատճառաց անտի պատանւոյ ուրումն ։
Քանզի երկոքեան միանգամայն՛ ի սէրն հա-
րեալ էին գեղեցկին Ստեսիլեայ՝ որ Թէա-
ցի էր ազգաւ, որպէս պատմէ Արիստոն
իմաստասէր. և յայնմանէ եկաց մնաց առ
նոսա հակառակութիւն և յառաջնորդու-
Թեան անդ քաղաքին ։ Ա յլ սակայն՝ որ-
պէս հաւանեալս եմ՝ վարուց նորա և կե-
նաց աննմանութիւնն առաւել՛ ինեղբս քե-
րէր զհակառակութիւնն ։ Քանզի բնու-
Թեամբ հեզ գոլով Արիստիդէս և քաջա-
մոյն՛ ի վարս, առաջնորդ կայր քաղաքին
ոչ՛ ի ընորհս ինչ մարդահաճութեան և ոչ
՛ի փառաց սակս, այլ լաւագունին նախան-
ձաւորութեամբ՝ միշտ դէտ աչին կալեալ
յապահովութիւնն և յարդարութիւնն,
հարկաւորեալ բերէր զդէմ դնել Թէմիս-
տոկղեայ բազում անգամ, և քարկնդուան
լինել բարգաւաճութեան առնն՝ որ՛ ի շատ
ինչ իրս չարժէր յուզէր զժողովուրդն, և
մեծամեծս՛ ի նեղբս արկանել կամէր կար-
գաց նորութիւնս ։ Քանզի պատմեն՝ եԹէ
այնպէս իմն բուռն ըղձակաԹ էր նա առ
փառս, և մեծապէս պատուասիրութեամբ
անճնատուր՛ ի նախձիրս մեծամեծս, որ-
պէս զի և վինջդեռ տակաւին պատանեակ
էր, ՛ի լինել մարտի պատերազմի՛ ի Մարա-
Թոն ընդդէմ բարբարոսաց, և անդ զՄիլ-
տիադեայ զօրավարութեին զհամբաւի հար-
կանէին, բազում անգամ տեսանէին զնա

մոտախոհ եղեալ ինքնին առանձինն և զգի-
ջերս հակել ոչնել, և ՚ի սովորական գի-
նարբուսացն ժուժկալել. և որք միանգամ
զարմացեալք ընդ փոփոխումն կենացն՝
հարցանէին զնա, նա պատասխանի առնէր,
եթէ՝ Ո՛չնէրէ էնչ ՚ի փոն լինել յաղթանակն
Մելոպէայ: Քանզի ուր այլք վախճան
պատերազմին համարէին զպարտուելիսն
բարբարոսացն ՚ի Մարաթոն, Թէմիստոկ-
ղէս սկիզբն առեր զնոյն մեծ ևս մարտից,
յոր և գօսէպինդ կազմեր ցանդ զանձն իւր՝
նահատակեալ առ հասարակ ՚ի վերայ Ել-
լադայ. և ՚ի նոյն դարձեալ կրթեր մար-
զեր զքաղաքն, և անդուստ ՚ի հեռաստանէ
գիտեր առեաներ զհանդերձեալն:

Եւ նախ առաջին՝ յորժամ ըստ Աթե-
նացւոցն սովորութեան զԱպրոտիկեան
եկամուտսն՝ որ յարծաթահանքաց անտի՝
բաշխէին ժողովրդեան, Թէմիստոկղէս միայ-
նակ ՚ի մէջ հանդիսացեալ՝ համարձակեցաւ
ասել, եթէ պարտ և արժան է ՚ի բաց հրա-
ժարել ՚ի բաշխից անտի, և զինչն զայնոսիկ
առնուլ և վարել ՚ի պէտս շինութեան ե-
ռաթիոցն վասն մարտի պատերազմին ընդ-
դէմ Եգինացւոց: Քանզի այս պատերազմ
մեծապէս յուզեալ էր յԵլլադա, և Եգի-
նացիք զծովահասարակ գրաւեալ ունէին
բազմութեամբ նաւաց: Որով և հեշտեաւ
յոյժ Թէմիստոկղէս ած հաւանեցոյց զնո-
սա, ոչ զԴարեհ և ոչ զՊարսս առաջի առ-
նելովնոցա, քանզի բացականք էին նոքա,
և կեղակարծելի ևս էր երկիւղ գալստեան

նոցա, այլ զբարկութիւն և զնախանձ զիւրոց քաղաքացեացն ընդդէմ Եղինացւոց առեալ իւր գեղեցիկ պատրուակ՝ ի դէպ ժամու յառաջ վարեաց զպատրաստութիւնն մարտին: Քանզի եռաթիւք հարիւրիւ չափ կազմեցան պատրաստեցան ի դրամոց անտի, որք և մարտ եդեալ ապա կռուեցան ընդ Քսերքսեայ: Եւ այսպէս տակաւ առ ձգեաց նա զքաղաքն և ի ծով անդր առեալ իջոյց զնա. որպէս զի և որք ի ցամաքի և ոչ ընդ հաւասարին իւրեանց անգամ ձա կատ յարդարեալք բաւականք ինչ էին կռուել, նոքա առ ի նաւաց զօրութեանէն միանգամայն և զբարբարոս վանեալք հալածեցին, և զԵլլադայ իշխանութիւնն ըզբռամբ կալան. և որք առկայացեալ ցամաքացս ապատաժէնքն էին՝ որպէս ասաց Պղատոն, զնոսա Թէմիստոկղէս առեալ նաւազս գործեաց և ծովաբնակս. և քըրթինջնիւն ևս յոյզեաց վան իւր՝ իբրու եթէ զտէգ զգեղարդն և զասպար իւրոց քաղաքացեացն ի բաց կապոեալ Թէմիստոկղէս, ընդ Թիակս նաւաց և ընդ մաշկեայ ակուամբ Թիավարաց՝ զՆթենայսոց ժողովուրդն առեալ բևեռեաց: Եւ զօրացաւ տկրացաւնա գործել զայսոսիկ, Թէպէտ և անդուստ զդէմ կալեալ հակառակէր նմա Մելտիադէս, որպէս պատմէ Սահմբրոտոս:

Իսկ Թէ զայսոսիկ գործեալ Թէմիստոկղէս՝ արդեօք ինասեաց ինչ ձշգրտութեան և անարատութեան կարգաց քաղաքին իբրեանց, եթէ ոչ, Թողցուք մեք գայն իմաս-

տասկրացն առ՝ի զննել։ Ա յլԹէ յայնժամ վրկուՀ հԷլլենաց հանդԷրձեցաւ առ՝ի ծո֊ վէն, և զԱԹենացւոց քաղաքն որ գայԹ՝ի գայԹ կայր՝ պնդեալ հաստատեցին եւա֊ Թիքն այնոքիկ, հանդերձ այլովք և գաւե֊ քահս ինքնին գլխովին քաջիկ վկայեաց։ Զանգի մինչդեռ տակաւին բանակ ցամա֊ քին զօրաց Զաբդքսեայ ոչՂ անարատ կայր, յետ խորտակելոյ նաւուց նորա՝ ինքն՝ի փախուստ դարձաւ իւրում այն որ անձեռն հաս լեալ այնուհետեւ մարտ դնելընդ հԷլ֊ լենաց. և զՄարդոնիոս ինքնին առեալ ԷԹող անդ՝ի վերայ նոցա, զի խոչընդոտան մանաւանդ լեալ հԷլլենաց հետամտիցին, որպէս ինձ ԹուաԻ, քան ԹԷ՝ի ծառայու֊ ԹիւնԻ ինչ նուաճԷլ զնոսա։

Եւ էր ԹԷոփիստոկղէս ընչահաւաք յոյժ՝ որպէս ասեն ոմանք՝ ի պատճառս ազատ֊ անձնեայ առատաձեռնուԹեան. քան֊ զի և զոհասէր յոյժ էր նա և հիւրընկալու պերճ՝ տալ կոչնա մեծահաց հիւրոցն, որ աղագաւ և ծախուց անսպառ պէտք էին նմա։ Բայց կէսք ընդ հակառակն՝ իբրև կծծի յոյժ և նուաստախոհ ընչաքաղց ամ֊ բաստանեն զնա, որպէս զի և զկերակուրս անգամ նմա առաքեալս՝ի պատիւ՝ վա֊ ճառել նորա։ Իսկ իբրև իններեաց նա եր֊ բեմն մտրուկ մի՝ի փիլիսեայ՝ որ առաս֊ տանիկս անուցաներ, և զլացաւ նմա, սպառ֊ նացաւ ԹԷոփիստոկղէս զտուն նորա արագ արագ վտխել ջջԻ՝ի ձի փայտեղէն. զայն ինչ ակնարկի առնելով նմա՝ ԹԷ ամ֊

բաստանուԹիս յաղԹակցայ անտի և գաՅս առենից յընտանեացն՝ յուզեալ գրգռեցէ նա ընդդէմ առնն։

Ա՛յլ ՚ի փառասիրուԹեան մասին գեղազանցեաց նա զամենեքուքէ. զի և մինչ դեռ տակաւին պատանեակ էր և անծանօԹ, աղերսէր զԷպիկղէս զՀերմիոնին քնարահար՝ որ ՚ի համբաւի յոյժ էր առ ԱԹենացին՝ գալբնակեալ առ նմա. քանզի պատուասիրէր զի շատք ՚ի նմանէ ելեալ նորա, ՚ի տուն իւր անդր եկեալ ստէպ ժողովեացին։ Էակ նոքա և յՈղիմպիա եկին եհասանա, և ել և ել նախանձաւորս առնէր ընդ կիսոնի յաղագս մեծահաց ընԹրեաց և գեղեցիկ վրանաց և այլոց ևս պերճ և պատուական կարասեաց, ոչինչ հաճոյ գտաւ հելլենացցւոց։ Քանզի ՚ի ճահ և արժան համարէին տեղի տալ կիսոնի՝ յայսպիսեաց աստի, քանզի պատանի էր տակաւին և ՚ի քաջափայլ զարմէ. իսկ թէմիստոկղէս՝ քանզի յանծանօԹից ոք էր տակաւին և անշուք, առ այս՝ և ՚ի վեր քան զկար զօրուԹեանն և առաւել քան զարժանն Թուէր իմն պերճանալ, վասն որոյ և իբրև առ իրօխաս և առ ամբարտաւանս ունէին զնա։ Բայց տարաւ նա և զյաղԹուԹիւնն ՚ի մէջ հանդիսատրաց Ողիմպիական տեսարանին. քանզի առ այնու ժամանակօք մեծապէս փուԹոյ անդուԹեամբ պատուասիրէին ՚ի պայքարս յայսոսիկ. և այնակ մի զյաղԹուԹեանն առեալ եդ ՚ի բարձու թէմիստոկղէս, այսպիսի ունելով վերատուուԹիւն. “Եկայց

հանդիսատէրը Թէմիստոկլէս փրէսպիոս. քէրթեաց և վարժեաց փրինկիպոս. նախաթոռ բազմեցաւ Ադիմանտոս»: Ի վերայայսը և հաճոյ յոյժ էր նա խուժանին: Մի՝ զի զայր այր ի քալաքայնոց անտի ձանաչէր ճչգրիտ, և զմէն մի կարդայր յականէ յանուանէ. և միւս ևս՝ զի դատաւորը անաչառ և ճչգրիտ էր նա ի դաչինս և ի պայմանս: Ըստ որում երբեմն և առ նա ինքն Սիմոնիդէս Քէոացի, որ ի զօրավարութեան Թէմիստոկլեայ ինդրէր ի նմանէ ինչ մի յանպատշաճից, եւս պատասխանի. «Ո՛չ Սիմոնիդէս առանց չափուց նուագ առեալ՝ եղիցի քէրթող քալ, և ո՛չ դարձեալ Թէմիստոկլէս ընդդէմ օրինաց չնորհս արարեալ՝ իշխան առաքինի»: Իսկ և յայլում նուագի յընչաց քերեալ նա զՍիմոնիդէս՝ կոչէր զնա անմիտ, զի զկորնթացիս Թշնամանէր՝ զբնակաւորս մեծի քաղաքին. իսկ զինքն զանդեղեայ յոյժ՝ տայր նկարել ի պատկերս: Ուսաի և իբրև աճեաց և զօրացաւ նա, և հաճոյ ևս էր յաչս ռամկին, հուսկ ապա յարոյց ամբոխ ընդդէմ Արիստիդեայ, և խեցեկոյտ վճռով եւս զնա արտաստմանէլ:

Բայց յորժամ Մարն հորդան տուեալ էջ յԵլլադա, և Աթենացիք խորհուրդ ի մէջ առնուին վան զօրավարին ընտրութեան, աւեն՝ եթէ այլք առհասարակ կամակար տեղւն եսուն ի զօրավարութենէ՝ զարհուրեալք ի վտանգէն: Իսկ Եպիկիդես Եվխիմիդեան՝ հաճոյ յաչս ժողովըր-

դեան և ճարտարաբան մեծ, այլ զօրավարել և կաշառաբեկ, հետամուտ եղև իշխանութեան. և առհասարակ էր կարծիս վասն նորա ընտրութեան ՚ի զօրավարութիւն անդր: Յայնժամ Թէմիստոկղէս զանգիտեալ, զօրէն ամենևին իսկ տապալեցեալն ևրք Հելլենաց յընտրել նորա առաջնորդ զօրուն, արծաթով ընկալեաց զԵպիկկղէս ՚ի բարձէ անտի: Այլ զԹէմիստոկղեայ գովքն և զգործն՝ որ առ Թարգման անդր, որ եկեալ հասեալ էր առ նոսա ընդ պատգամաւորան՝ որ՚ի դիմաց արքային Խնդրէին յԱթենացւոց հող և ջուր. քանզի հասանել տակաց վճռով եւս ունել զԹարգմանն զայն և սպանանել, զի զբարեբաւ Հելլենաց յանդգնեցաւ նա վարել յառաջարկութիւնն բարբարոսաց [1]: Դարձեալ՝ և զոր առ Արթաֆրէոս ՚ի Ջհլեստէս. քանզի բանիւք Թէմիստոկղեայ՝ Միանդաւոյն և Արթաֆրէոս և որդիք նորա և բովանդակ զարմն առ վաւոտահամբաւս գրեցան. քանզի ՚ի Մարտից անտի առ Եբեր նա ոսկի առ Հելլենացիս: Իսկ որ վեհագոյն կայ քնաւից, եղյծ հանդարտեաց նա զառանին մարտս պատերազմին Հելլենաց, և զքաղաքն գլխովին առեալ հաշտեցոյց ընդ Մեդեանս և ած հաւանեցոյց ՚ի բաց դնել ՚ի ժամուն զԹշնամութիւնն ՚ի պատճառս պատերազմին այնորիկ: Եւ ՚ի բանիս յայսմիկ մեծապէս զօրացեալ նա և զարծակից առեալ զանգամբ զԱրիստոդեմոս Արկադացի:

Արդ առեալ նա զանձամբ զնշխանութ-

Թիւնն, անդէն վաղվաղակի գուն գործէր զի քալաքացիք առհասարակ ամբարձցին ՚ի նաւս եւ ելանէին. և ածէր հաւանեցու֊ցանէր զնոսա թողուլ զքալաքն, և յոյժ ՚ի բացեայ յԵլլադայ չու առնել իսաղալ և՚ի ծովու անդ զդէմ դնել բարբարոսին: Իսկ երբեմն բազումք զդէմ դառնային թէմիստոկ֊լեայ, նա զօր բազում առեալ ածէ ՚ի Տեմ֊պէ հանդերձ լակեդեմոնացւովք. զի անդանօր կացեալ ՚ի վտանգէն ապրեցուսցէ զԹեսաղիա, որ էև էր յայնժամ դաշնա֊ւոր Մարացն՝ որպէս կարծէին: Իսկ յոր֊ժամ ելեալք մեկնեցան նոքա անտի՝ ոչ֊ինչ գործ գործեալ, և Թեսաղացիք միա֊բանեցան ընդ ալքային, և առհասարակ դաշնաւոր գոան Մարաց մինչև ՚ի Բիով֊տիա, յայնժամ խոնարհեցան Աթենացիք ՚ի խորհուրդ Թէմիստոկղեայ՝ որ վասն ծո֊վեն. և առեալ արձակեցին զնա հան֊դերձ նաւուք յԱրտեմիսիոն՝ անդ կալ և պահ ունել նեղուցացն: Բայց անդանօր լերև հաճոյ Թուեցաւ Էեւլենացւոց տալ զզօրավարութիւնն ՚ի ձեռս Եւրիբիադեայ և Լակեդեմոնացւոցն, և Աթենացիք՝ քան֊զի բազմութեամբ նաւաց գերազանցեալ էին քան զայլսն միագունդ առհասարակ, ոչինչ արժան համարեցան հպատակու֊թիւն յանձն առնուլ, ծանեաւ Ճչգրիտ Թեմիստոկղէս զվտանգ ժամուն. յատուկ մատեաւ և ինքնին տեղւն տայր Եւրիբիա֊դեայ ՚ի զօրավարութենէ անտի խրմէ. ՚ի նոյն և զԱթենայիս իւր հեզացուցեալ

յանկուցանէր. և խելամուտ ևս առնէր զնոսա՝ զի Թէ արիաբար նոքա առաքինացեալք նահատակեսցին՝ ի մարտ պատերազմին, այնուհետև ինքնին մատուկր հելլենացեալք խոնարհեսցին և հպատակ կացցեն նոցա: Վան որոյ և պատճառք մեծապէս վրկուԹեան Եկղատայ եղև յայնժամ Թէմիստոկղէս, և ինքնին ՚ի մեծ վտառս առեալ ած զՆԹենացիան՝ իբրու այն որ քաջուԹեամբ արուեստիւք բաւական էին յաղԹել իւրեանց Թշնամեացն, և մարդաներ խորհրդով՝ իւրեանց նիզակակցացն:

Ա յլ իբրև հրոսակ բարբարոսացն խուժեաց յԱՓիետէ, զահի հարեալ Եւրիբիադես ՚ի նեղուցան ՚ի բազմուԹենէ անտի նաւացն, և զի՝ լուր ևս էառ ԵԹէ երկեր ուր ևս այլք ՚ի նաւաց չոլյան առեալք առ ՍկիաԹեաւ դիմեալ գային, խորհեցաւ ՚ի չտապ տագնապի անցանել ապաւինել ՚ի նեղքս անդ յԵլլադա, և չուրլ քերել առ Պելոպոննիսեաւ, և զցամաքին բանակ՝ նացան ՚ի Թիկունս առնել. քանզի գլխովին անկուսեալ և անվանեալ համարեցաւ նա յայնժամ զծովահանդէս զօրուԹիւն արքային. յորմէ զարհուրեալ Եւբէացիք՝ եԹէ Թերևս լքեալ Թոզցեն զնոսա չէլլենք, գալտ բանս եդին ընդ Թէմիստոկղեայ, և զՊելոպոն զոմն ընչիւք բազմօք առաքեցին առ նա. իսկ նորա առեալ զդրամն՝ որպէս պատմէ Հերոդոտոս՝ եւ Եվրիբիադեայ: Ա յլևբրև ՚ի քաղաքայնոց անտի իւրոց մեծապէս ընդդէմ դարձաւ

Թէմիստոկղեայ Ադբիտեղոս, որ իշխան հրամանատար էր նուվիրական նաւուն, և զոր նեղվնա դրաման ՚ի Թոշակ նաւաստեացն, փութայր ձեպէր դառնալ յեաս նաւաւն հանդերձ, անդուստ Թէմիստոկղէս յոր զեաց սաստկապէս զքաղաքացիան և գըրդուեաց ընդդէմ առնն. նոքա միագունդ ՚ի վերայ հասեալ նորա, նաև զընԹրիս նորա առին յափշտակեցին ՚ի նմանէ. իբրև այնպէս Թալծեալ կայր Ադբիտեղոս վանն իրացն եղելոց և ծանրացաւումն եղև, ԹԷմիստոկղէս առեալ յլեաց սակառեաւ զընԹրիս նմա հաց և միս, և անդ ՚ի նեղքոյ սակաւուցն գաղեաց եդ տալանդ մի արծաԹոյ, պատուէր տուեալ նմա ընԹրեալ ՚ի ժամուն, և ապա ՚ի գալ աւուրն հոգալ զպէտս Թոշակաւորն նաւաստեացն. ապա Թէ ոչ հուշակ հարեալ ամբաստան զնմա նէն լինելի ինքն առ քաղաքացիան, Թէ արծաԹ առեալ է նա ՚ի Թշնամեաց անտի: Եւ զայսոսիկ մեզ պատմաբանէ Փանիաս Լեսբացի:

Իսկ որ ինչ յայնժամ ՚ի նեղուցն անդ պատերազմունք եղեն ընդդէմ նաւաց բարբարոսացն, Թէպէտ և ոչ գլխովին վճար եառն մարտին, սակայն ՚ի վորձոյ իրացն մեծապէս օգտեցան հելլենացիք. յարդեանց անտի վարժեալք ՚ի վտանգաւորս կիւրսին, Թէ ոչ հանդէս բազում գումարտակաց նաւաց, և ոչ հրաշից զարդք և պերճութիւնք նշանաց և դրօշակաց, և ոչ դարձեալ խաժամուժ գոչիւնք կամ նուագք

երգոց բարբարոսաց, երբէք ահընկէց լինել ցին արանց քաջաց՝ որք ի գործ անդր բա- ւականք էցեն նահատակել և ձայն տալ խրախուսել ի կռիւ մարտին. այլ թէ ար- համարհել արժան էցէ զայսպիսեօք առհա- սարակ, և նոցուն իսկ մարտիւցն ի վերայ դիմել յարձակել, և միջամուխ իսուն ընդ նոսա մարտ եղեալ կռուել: Զայն և պին- դարոս ինքնին ճշգրիտ ծանեաւ, և գեղե- ցիկս յաղագս Արտեմիսեան մարտին զայս երգեաց, եթէ "Մանկունքդ Աթենաց- ւոց արկին հոյակապ հիմունս զազաւոու- թեան": Քանզի և գլխաւին իսկ՝ սկիզբն և յաղթութեանն՝ քաջալերութիւնն: Իսկ և Արտեմիսիոն՝ ծովակին Եւբեայ ի վե- րոյ Եստեայ՝ ձգեալ ի հիւսիս. և ի հան- դիպոյ կայ նմա կշռաւոր Ողկոն՝ որ է ի կալուածս անդ գաւառին փիլոկտետեայ: Եւ կայ անդանօր և ՌԷհեան մի ծչնչ մեծ՝ Արտեմեայ, որ անուանեալ կոչի Աւրե- ւէան. և շուրջ զնովաւ ծառք բուսեալ կան. և սիւնք շուրջանակաւ քարտրեալք են ի սպիտակ մարմարիոնէ. իսկ մարմարիոնն այն շփեալ ձեռամբ արձակէ զհոտ քրքմոյ՝ միանգամայն և զգոյն: Իսկ ի միում ի սեանց անուն գրեալ կայր արձանագրու- թիւն՝ օրինակ զայս. "Զայրանալոյ արանց ազգս ի սահմանաց անուն Ասիոյ, ման- կունք Աթենացւոց՝ էր երբեմն զի ի ծո- վու նաւամարտութեամբ նկուն արարեալ՝ երբև բանակ զօրուն կորեաւ Մարաց, նշա- նակս զայսոսիկ արձանացուցին կուսին Ար-

տեմեայ“: Եւ տեսանի զծովափամբն շուրջանակի վայր բարձրակատար, որ փոշի աճնայեն և թուխ՝ ի վեր բերէ՝ ի խորոց անտի իբրև հրակէզ նիւթ, յորում կարծեն այրեալ զնաւաբեկեան և զդիակունս մեռելոցն:

Բայց ԱՆրտեմիսիոն լուր եղև յաղագս անցեկին՝ որ անցին՝ ի Թերմոպիւղէ, և լուան և՝ եթէ անկաւ՝ ի մարտին Լէոնիդէս, և փաթըքսէս տիրացեալ՝ ունի զանցս ցամաքին. այնուհետեւ ընդ կրունկն տեղի եւտուն հելլենք՝ ի նեղքս Թերմոպիւղա, և Աթենացիք պահ կալեալ զամենեքումբք և յանձնառել խաղային՝ ի վերջէ, մեծապէս քաջալերեալք յանձինս յաղագս նահատակութեանն՝ զոր նահատակեցան: Իսկ Թէմիստոկղէս յայնժամ նաւապետութիւն քերեալ առ դաւառաւն, ուրանօր միանդամ յանկ արկանէր նաւակայս իմն կալուրս Թշնամեաց և տեղիս ապաւինի, անդէն գիրս խոշորս և երևակս առեալ քանդակէր՝ ի վէմս, զորս ըստ դիպաց գտանէր անպանօր կանգնեալս և զորս ինքնին արձանացուցանէր առ վայրօք նաւահանգրստին՝ ուսուի ջուր առնուն նաւաստիք. և յարձանագրութիւնս անդ ակնարկի ազգառնէր Յոնիացւոցն, զի եթէ հնար ինչ էցէ՝ եւևեալ անցցեն նոքա զօրավիդն՝ ի Թիկուն մարտին Աթենացւոց՝ որ նախահարք կացեալ էն նոցա և զարդիս՝ ի վտանգ մեծապէս պաշարեալ կան վանն ազատութեան նոցա. տակաւ Թէ ոչ՝ խոչ և քարընդոտն լի-

նէցին բարբարոսացն ՚ի մարտին և խուռվ հարցեն ՚ի նոսա: Եւ այսպիսեօք ապա ակնկալեալ յուսայր Թէմիստոկլէս յիւր կողմն յանկուցանել զՅոնիացիս, կամ առ մուկ գրգռել ՚ի նոսա և կեղակարծելիս ցուցանել զնոսա առաջի բարբարոսացն: Ա՛յլ Քսերքսէս անդուստ ընդ վերնագաւառն Տորիկեան հորդան տուեալ ՚ի փոկէաս և զփոկէացւոց քաղաքն հրձիդ առներ. սակայն և ոչինչ այնպէս ՚ի Թիկուննս օգնականութեն կացին Հելլենք, Թէպէտ և աղաղակէին Աթենացիք՝ անդր ՚ի Բիով տիս խաղալ զդէմ ունել Թշնամւոյն ՚ի պաշտպանութիւն Աստիկոյ, որպէս ինքնին Աթենացիք ընդ ծով յօդնութիւն հասին Արտեմիսիոն: Իբրև ոչ ոք այնուհետև ունկն մատուցանէր նոցա, այլ առհասարակ ուշ ունէին նոքա վասն պեղոպոննէսեայ, և զամենայն ճիդն և զջերութիւն Թափէին ՚ի նեւքս ՚ի կիրճ անդր, և պատսար ևս ձգեալ՝ որմեցին նոքա զկիրճն ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, ապա յայնժամ ՚ի մեծ բարկութիւն սրտմտութեան ելդէցան Աթենացիք վասն մատնութեանն և սրտաբեկ միջաբեկ Թալծեալ կային՝ զի այնպէս լքեալ Թոլան. քանզի և ոչ ընդ միտ անդամ ածէին նոքա մարտ դնել կուռել ընդ անհուն բիւրաւորաց բանակին: Եւ էր ապա միակ կարևոր ՚ի ժամուն Թոլուլ լքանել զքաղաքն և չուլ առնել ապաւինել ՚ի նաւսն, Թէպէտ և խուժան ռամկին մեծաւսպէս դժկամակութեամբ լսէր զբանն.

Իբրու այն՝ որ ո՛չ յաղօթս կալ այնուհետև բաւական էին վան յաղթուԹեան, և ո՛չ վրկուԹեան ևս ակն ունել՝ Ի Թողուլ լքանել նոցա այնպէս զմեհեանս դիցն և զբիլիմա հարցն իւրեանց։

Յայնժամ յուսակտուր ԹԷմիստոկղէս Ի մարդկայնոց ձարտարուԹեանց՝ ածել հանեցուցանել զբազմուԹիւն խուժանին, գնացեալ ապաւինեցաւ ըստ օրինակի Ողբերտիկ քերԹողացդ Ի հնարս մենքենայից, և նշանս լման դիւցականս՝ այլ և պատգամս ևս Ի վեր բերէր յայնժամ խուժանին։ Ի նշանաց սակի Ի նեղքս արկանէր զվիշապին զայնորիկ, այն՝ որ յաւուրսն յայնոսիկ անհետացեալ աներևոյԹ կարծէր լեալ Ի գաւԹէ մեհենին. և զերեխայրիսն՝ զոր հանապազորդ նմա առաջի դնէին՝ անմեղս և անհուպ գտանէին քահանայք. ուստի և հոչակ հարեալ քարոզ կարդային Ի խուժանին՝ ըստ որում ԹԷմիստոկղէս եղեալ էր ասէ Ի բերանս նոցա, եԹէ Թողեալ լքեալ է դիցուհին զքաղաքն, և առաջնորդ կարապետ լեալ է նոցա Ի ծով անդր։ Դարձեալ և պատգամս ոմանք յանկուցանէր յայնժամ զխուժանն, ասել՝ ԹէՊէտ ո՛չ այլ ինչ յայտ առնէր ասէն՝ Պապուասը ֆայֆէղէն, բայց ԹԷ՝ զնաս. վան որոյ և զԱաղամինա՝ Ապոլոժայէն կոչեաց դիքն Ապոլոնն, և ո՛չ հէգ և ԹշուառականԹեան, իբրու այն՝ որ մեծի բարեբաստուԹեան հեղինակացուցս էր գուշակ լորջորջեալ այդ։ Իսկ իբրև այսպէս Ի

գլուխ հանէր զխորհուրդ մոտացն Թէմիս-
տոկլէս, ապա ի վճիռ մի ևս գրեաց եւս,
եթէ քաղաքն ողջոյն յանձն լինի Աթենա-
սայ պաշտպանին Աթենացւոց. և որք միան-
գամ յարձակեսցին ի Տրիզենէ. զոր
և առհասարակ մեծապէս պատուասիրու-
թեամբ առեալ ժողովեցին Տրիզենացիք.
քանզի և վճիռ ետուն նոքա՝ զի ի հաս-
րակաց դանձարանէ անտի կերակրեսցին
նոքա, և դանկս երկու օրապահիկ առն
առն ի նոցանէ սահմանեցին. և զի՝ Թոյլ
լինի մանկանց նոցա առնուլ քաղել պը-
տուլն՝ ուր և գտանիցեն. դարձեալ և վար-
ժապետաց նոցա վարձս կարգեցին տալ.
իսկ զվճիռ զայս գրեաց Նիկադորաս:

Ա յլ քանզի հասարակաց դրամք պա-
կասէին Աթենացւոց, Արիստոտէլ ասէ՝
եթէ Արիապագին խորհրդով բաշխեցան
առ մեն մի՝ ի զօրականէն դիդրաքմայք ութ.
ուստի և մեծապէս լցեալք զեղան նաւք
եռաթիւոցն: Սակայն կղեդեմոս՝ և զոյն
զայս ասէ լինել հնարիմաց ճարտարուԹե-
Թէմիստոկղեայ: Քանզի յորժամ՝ ի պը-
րէա՝ ասէ՝ լինին Աթենացիք, անդամօր դրօշ-
եալ դիցուհւոյն կորոյս զԴորդոնեանն 2:

Յայնժամ Թէմիստոկղէս կեղծեաւ եբրու
այն որ հետամուտ ՚ի ինդիր եղեալ էջէ
այնմ, և վեր ՚ի վայր յուզեալ զաւենայն,
՚ի մէջ կահուց կարասեաց գտանէ Թաքու֊
ցեալ մԹերա բազում պրամոց. զոր և ՚ի
մէջ անդր ածեալ հրապարակին, Թոշակ ա֊
ուաւ բաշխէ՝ որոց միանգամ ամբարձան ՚ի
նաւան: Արդ՝ իբրև նաւեալք մեկնէին նո֊
քա ՚ի քաղաքէ անտի իւրեանց, կիսոցն՝
յոյժ գերաշխարեալ էր սեռին, և կիսոցն
պանչելեաց հիացուաին էր քաջալերուԹի
սրտից նոցա, ոչք միանգամայն զմարս իւ֊
րեանց և զհարս յօտարուԹիւն տարադէմ
արձակեալ, ինքեանք իբրև սրտեայք անո֊
ղոքեցեալ աւ աղէխարշ հեծուԹիւնս ծնո֊
ղացն և աւ գերարտօսր նոցա և աւ գիրկ֊
ընդ խառն համբոյր նոցա, եւեալք ջու աւ֊
նէին գնային ՚ի կղզի անդր Սալամինոյ.
էր անդ և տեսիլ ոլորմելի հինաւուրց
քաղաքացեացն՝ որ ՚ի պատճառս ծերա֊
ցեալ հասակին լքեալ Թողան անդամօր:
Խակ և ընդ անտառն կէնդանիքն՝ որ հեզք
և ընտելք բնաւորեցան և անդադիցք
մարդկան՝ ախտակցաբար ոք խանդալատեր
արդեօք, յորժամ նոքա ՚ի վայ և ՚ի կալ֊
կանձիւն և ՚ի քծնել տարփանօք ընԹա֊
ցակից լինէին տեարց անուցչաց իւրեանց՝
որ չուեալք ամբառնային ՚ի նաւան: Յորս
և վան չան ՔսանԹիսպուսի հօրն Պերիկ֊
լեայ պատմեն, եԹէ ոչինչ հանդուրժեալ
կէնդանին այնպէս առանձին ինալ ՚ի տեառ֊
նէն, արկանէ զինքն ՚ի ծով և ցանգ առ

նորա նաւուն ՚ի լիւղ քերեալ, և ապա ու-
րեմն անկանի ՚ի Սաղամինա, և անդ վա-
տեալ յուժոյն և նուաղեալ խակ և խակ
մեռանի. ուր և զվայրն՝ զոր մինչև ցայսօր
ժամանակի ցուցանեն, սահն լինել գերեզ-
ման նորա, և անուանեալ կոչեն՝ Ընէմ զան:

Արդ այսոքիկ են մեծամեծ նահատա-
կութիւնք Թէմիստոկղէայ: Ա. այսոսիկ
դարձեալ՝ և իբրև լրագրեկ եղև, եթէ քա-
ղաքացիք իւր անձկան Արիստիդէայ, և զան-
դիտեն և՝ գուցէ առ ցասման բարկութեն
երթեալ յարեցի առ բարբարոս անդր
և վեր ՚ի վայր սասպանէցէ զնրա Ելլադայ,
(քանզի իւեցեկոյտ վճռով նախ քան զ-
մարսն պատերազմին տարադիր լեալ էր ՚ի
Թէմիստոկղէայ). ապա վճիռ մի դրեցաւ
ետ Թէմիստոկղէս, եթէ ոչք միանգամ առ
ժամանակ մի արտաստհմանք եղեն, Թոյլ
լեցի նոցա դառնալ և գալ և ՚ի միասին ընդ
այլոց քաղաքացեաց գործել զամենայն և
իօսել զամենայն՝ որ ինչ ՚ի լաւագունն մա-
սին նցէ Ելլադայ: Իակ իբրև Եվրիպիա-
դէս ՚ի ընորհս փառաց Սպարտիոյ առեալ
յանձն զառաջնորդութիւն նաւացն, դան-
դաղէին դեղևէր մինչամեռս ՚ի գործն
լինել, և կամէր ջուել անտի և նաւել ՚ի
կիւճն կոյս, ուրանօր և ցամաքին զօրք պե-
ղոպոննիսացւոց միադունդ խառնեալ կային,
զդէմ դարձաւ նմա Թէմիստոկղէս: Եւ
պատմեն յայնժամ զնիշատակաց արժա-
նիս ասել Թէմիստոկղէայ բանս. քանզի
իբրև այսպիսի ինչ առ նա Եվրիբիադէս ար-

ձակեաց բարբառ, եթէ "Ո՞վ թէմիստո-
կղէ, ի խաղս մրցանաց գան ոան ըմբէշ՝ ո-
րոց միանգամ կանուխ յառնեն քան զժա-
մանակն". կրկնեաց թէմիստոկղէս. "Եւ
կարի խակ քաջ. այլ ո՛չ և զվերջոտնեալն
պահեն": Եւ իբրև ամբարձ Եվիսիադէս
զգաւազան իւր՝ իբրու հարկանել զնա, ա-
սէ թէմիստոկղէս. "Հայր աւադիկ, այլ
մատո և ունկն": Իբրև հնացեալ պանչացաւ
Եվրիբիադէս ընդ հեզութիւն նորա, և թա-
խանձեաց ևս զնա խօսել, թէմիստոկղէս
առեալ զնա՝ խօսեր և ածէր հաւանեցու-
ցանէր: Եւ իբրև անդուստ ոմն այսպիսի
ինչ ասաց, եթէ՝ Ա՛յր անքաղաք ոչինչ ուս-
ղապէս բաւական է ուսուցանել այնոցիկ՝
որ հանդերձեալն լցեն թուղուլ զքանիլ
զհայրենի երկիրն իւրեանց, թէմիստոկղէս
դարձեալ դարձուցեալ զբանն՝ ասէ. "Մեք
աւադիկ հէգ և թշուառական, զոռունս
բնակութեան մերոյ և զպատուարս պարսպ-
պաց մերոց թողաք լքաք, քանզի ոչինչ
արժան համարեցաք ի պատճառս անկեան-
դան իրացդ ի ծառայութիւն նուաճիլ:
Իակ քաղաք գոյ մեզ աւադիկ մեծ ևս քան
զաննման հելլենացւոցդ, այս նաւք եռա-
թիոց երկերիւր. որ այժմ ձեզ օգնական
զօրավիգն կան, եթէ միանգամ ի դոսա
ինդրեսջիք դուք ապրեցուցանել զանձինս
ձեր: Ապա եթէ ի բաց մեկնեալ գնայցէք՝
այս երկիցս անգամ մատն լինելով մեզ,
հուսայ ընդ հուսայ աւադիկ լուիցէ ոք ի հե-
լենաց, եթէ՝ Անթենացիք ժառանգեալ

կալցեն միանգամայն քաղաք ազատ և գա-
ւառի սահման, ոչինչ պակաս քան զայն՝ զոր
հանին ՚ի ձեռաց “ : Իբրև զայսոսիկ բար-
բառեցաւ Թեմիստոկղէս , մոտախորհ ե-
ղեալ զանդիտեր Եվրիբիադէս յԱթենա-
ցւոց անտի, գուցէ լքեալ զնոսա ՚ի բաց
չուեսցեն : Բայց անդ իբրև և յԵրետրիա-
ցւոց այր ոմն փորձ փորձեաց խօսել ընդ-
դէմ նորա , եւ պատասխանի Թեմիստոկ-
ղէս և ասէ . “ Մինչ և ձեզ ինքնին վան
մարտի պատերազմի բանք ինչ էցեն , որք
իբրև զձկունան Տեւթեանս ունիք սուր ,
այլ սիրտ չիք ՚ի ձեզ “ : Եւ սակն՝ եթէ Թէ-
միստոկղէս բարբառեալ խօսէր զայսոսիկ՝
կացեալ ՚ի բարձու ՚ի վերայ տախտակա-
մածի նաւուն . և ահա անդրադառ երևեցաւ
բու մի Թռուցեալ յայլմէ նաւացն , և եկն
նստաւ ՚ի վերայ առադաստակալացն . յայս-
մանէ յորդորեալք ձայնակից գտան խոր-
հրդոյն Թեմիստոկղեայ , և կազմեցան պատ-
րաստեցան առհասարակ ՚ի նաւամարտու-
Թեան հանդէսն :

Ապա իբրև գրամարուակ նաւաց Թշնա-
մեացն եկն մերձեցաւ Աթտիկէ մօտ ՚ի
Փաղերեան նաւահանգիստն , և առհաս-
րակ զծովափունան շուրջանակի պատեալ
ծածկեաց , և ինքնին ևս առաջն էջ ՚ի ծով
անդր հանդերձ ցամաքին զօրու , որպէս զի
և խուռն ՚ի միում վայրի գրամարեցաւ ա-
մենայն զօրուԹիւն նոցա , յայնժամ ՚ի մո-
ւացօնս գարձան հելլենացւոց բանքն Թէ-
միստոկղեայ , և միւսանգամ պեղոպոննէ-

ասելիք ուշ՚ի կուրծս լինէին վան կրծին եւ
րեանց . և եթէ ոք այլազգի ինչ բան՚ի ներքս
արկանէր՝ ծանրացասուծին լինէին : Ապա
հաճոյ Թուեցաւ նոցա գնչերն յուել գնալ
՚ի վայրաց անտի, և պատուիրակս ևս առա-
քեցին առ ամենայն ղեկավարս վան նա-
սագնաց ջուրն: Յայնժամ ոչինչ հանդուր-
ժեալ Թեմիստոկղէս , զի ՚ի դիպան վայ-
րացն անտի և ՚ի նեղուցացն մեծապէս օժան-
դակեալ հելլենացիքն՝ գնացեալ վարա-
տեցին ընդ քաղաքս քաղաքս , խորհուրդ
կալաւ ՚ի սրտի իւրում և հնարիմացութիւն
նևեթեաց ՚ի ձեռն Սիկինոսին : Սա այս Սի-
կինոս էր ՚ի դերեցն ազգաւ Պարսիկ , մեե-
րիմ էր Թեմիստոկղեայ և դաստիարակ որ-
դւոց նորա : Զսա ինքնին առեալ արձա-
կեաց գաղտ առ Պարսիկն , պատուէր տը-
ւեալ ասել՝ եթէ Թեմիստոկղէս Աթե-
նայոց զօրավար՚ի կողմն եղեալ արքային ,
ինքն առաջին ազդ առնէ նմա՝ եթէ հել-
լենք աւադիկ ՚ի բաց ջուել հանդերձեալ
են . և յորդորէ ևս զնա՝ մի Թոյլուլ նոցա
դառնալ՚ի վախուստ , այլ ցորվայր նոքա
ամբոխեալք չփոթեալք կան ՚ի բացեայ ՚ի
ցամաքին բանակէն , նա՚ի վերայ խուժեալ
նոցա՝ սպառսպուռ խորտակեացէ զնաւա-
կան զօրութիւն նոցա : Քանզի այսէս լիցի
յանկնդ մտաց բարբառ հաճարեալ ըզ-
բանան , յանձն լուր զուարճանայր . անդէն
վաղվաղակի յղեաց պատուէր առ առաջ-
նորդս նաւացն , զի լուռ անշշուկն կամ
և պատրաստ կացեն զամ զնաւան , և եր-

կերիւր նաւուք գնացեալ փակեսցեն շուր-
ջանակի զամենայն անցան, և պահ ևս կա-
լեալ պաշարեսցեն զկղզեան, զի մի ոք ամե-
նեւին ՚ի Թշնամեացն փախստեամբ ձողուպ-
րեսցի երբէք:

՚Ի լինել այսոցիկ այսպէս՝ Արիստո-
դէս Լիւսիմաքեան առաջին իրազգած է-
լեալ գործոյն, եկն եմուտ ՚ի վլան անդր
Թեմիստոկղեայ, Թէպէտ և չէր ինչ բարե-
կամ. քանզի ՚ի ձեռն Թեմիստոկղեայ իե-
ցեկոյտ առեալ էր նա վճիռ, որպէս պատ-
մեցաք: Արդ՝ յարեաւ եկն ընդառաջ նո-
րա Թեմիստոկղէս, որում և պատմեր Ա-
րիստոդէս զբան պաշարմանն: Իսկ Թեմիս-
տոկղէս՝ որ և յայլմէնչ իրս քաջ իսկ ՚ի վե-
րայ հասեալ էր լաւութեան և առաքինու-
Թեանն Արիստոդեայ, և յայնժամ ևս ցըն-
ծասաւ յոյժ ընդ գալուստ առն, և առեալ
զնա՝ պատմեր մի ըստ միոջէ ղոր միանգամ
նիւԹեաց նա ՚ի ձեռն Սիկինոսին, և յոր-
դոր ևս մատուցանէր նմա՝ զի ՚ի միասին
ընդ իւր և ինքն կալցէ առ եառեղ զՀելլե-
նացին և զօրավիգն իւր ելցի ՚ի գործ
անդր, իբրու որ արդոյ և պատուական էր
նա առաջի նոցա. որպէս զի յանձուկան
յայնոսիկ զտեղն կալեալ՝ նաւամարտիկք
ելցին նոքա: Արդ Արիստոդէս նախ գո-
վեԹեամբ պատուեալ զԹեմիստոկղէս, չո-
քաւ և զայլս ևս ՚ի զօրավարացն և ՚ի նա-
ւապետ իշխանացն ածէր հաւանեցուցա-
նէր և քաջալերեալ խրախուսէր ՚ի մարտ
ատենազային: Իբրև նոքա տակաւին և այն-

պէս չհաւանէին, երևեցաւ յայնժամ նաւ
մի եռաթի սենեդացի ինքնակամ անձնա-
տուր նոցա՝ որոյմ նաւապետ էշխան էր
Պանէտիոս, որ գոյժ բերէր նոցա զպաշար-
մանն առհասարակ. որպէս զի և՛ ի զայրոյթ
ցասման չարժել զՀելլենս, միանգամայն
և տխպաւ հարկաւորել զնոսա՛ ի գործ
պատերազմին:

՛Ի ծագել աւուրն ելեալ Քաբլքսէս բազ-
մէր՛ ի բարձրաւանդակ տեղւոջ, անդրադառ
հայեալ դիտել զգումարատակ նաւացն՝ և զգ-
ձակատամարտ պատերազմին՝ ըստ որոյմ
գրէ Փանոդիմոս՝՛ի վերոյ մեհենին Հերակ-
լեայ՝ յորոյմ ընդ հուն մի վտքրիկ որոշէր
կղզին Սատիկոյ: Իսկ ըստ որոյմ Ակէս-
տոդորոս պատմէ՝ ՛ի սահմանապլուխն անդր
Մեգարեայ՛ի վերոյ բարձանցն՝ որոց ա-
նուն կարդան՝ Եղէւզ, բազմեալ յաթոռ
ոսկի, և շուրջ նմա ունելով դպիրս բազումս,
զի՛ի գիր արձանացուսցեն ժիրաժիր զամե-
նայն գործս պատերազմին այնորիկ: Արդ
երբև Թեմիստոկղէս յիւր նախաթոռ եռա-
թին զգոհս իւր յազէր, առաջի կացուցին
նմա զերիս ոմանս՛ի գերւոյն, ՛ի պատկեր
դիմացն գեղեցիկ յոյժ տեսանելով և՛ ի
հանդերձս երևելիս և յոսկեհուռն զար-
դարեալ. և ասէին զնոսա որդիս լեալ Սան-
դաւկեայ քեռ Թագաւորին և Աստարկտո-
սի: Զոսա յակն արկեալ յայնժամ Եւ-
վրանտիդոս գուշակն և խոշ, յորժամ անդ
՛ի զոհից անուն բոց հատեալ՛ի վեր ցոլա-
նայր մեծ և լուսաճաճանչ, միանգամայն և

փոռնպիւն բարեհնչան յաջմէ անտի լսէլն լի-
նէր , եկն կալաւ զայլոյն Թէմիստոկղեայ .
հրաման ՚ի վերայ կապէր նորա միանգա-
մայն զերիս պատանեական զայնոսիկ՝ ինքն
յաղօթս կացեալ՝ սրբել յապէլ և զոհել
Ովմեստեանն Դիոնիսեայ . քանզի այսպէս՝
ասէ՝ հանդերձեացի ապա վրկութիւն և
յաղթութիւն հելլենացւոց : Զահի հա-
րաւ Թեմիստոկղէս ընդ նորանշան և ընդ
անապորոյն գուշակութիւն ըղձին . այլ
քանզի խուժան ժողովրդեան բնաւորեցաւ
՚ի մեծամեծ մարտից տագնապս և ՚ի դըժ-
ուարին նահատակութիւնս՝ առաւել ՚ինո-
րանշան և յօտարոտի երից քան ՚ի պատուա-
ճին և լինէին՝ յօսով ակն ունել
վրկութեան անձանց , ուստի և առհասա-
րակ ձայն բարձեալ կարդային յօգնութի՛ն
ղէնն զայն , և զգերեալ պատանիսն ա-
ծեալ կացուցեալ առաջի բագնին , սուր
պէին զզօհն ՚ի գլուխս հանել , ըստ որում
հրամայեաց իւրն : Արդ զայսոսիկ մեզ
պատմէ Փանիաս Լեսբացի այր իմաստասէր
և պատմական դպրութեանցն ոչինչ անտե-
ղեակ :

Իսկ յաղագս հանդիսի բազմութեան
նաւուց բարբարոսացն Եպքիւղէս քերթող՝
իբրու ականատես հաստատութեամբ զայս
ինչ ասէ յՈղբերդութեան իւրում՝ զոր
յորջորջեաց Պարսս .

„ Բայց անդ Քսերքսեայ՝ (քանզի քալ
իսկ գիտեմ) հազար էր նաւուց բազմու-
թիւն : Իսկ արագ նաւք սրաթռիչք յոյժ՝

էին նորա երկերկրւրդ եօթն : Զայս և համ
բաւն ինքնին հուչակ հարկանէ " :
Իակ Աստիկէացւոցն հարկւր և ուԹսուն նա
ւաց էր գումարտակն , և մէն մի 'ի նոցանէն
ունէր արս ուԹևտասն՝ որ մարտ եդեալ
կռուէին 'ի տախտակամածէն . 'ի ոտքանէ
ջրիք էին աղեղնաւորիք , և այլքն սպառա
զինք : Այլ Թուի ԹԷ՝ ոչինչ պակաս քա
ջուԹեամբ՝ միանգամայն և զգեստի վայր
պատերազմի և ժամանակն գլխովին գի
տաց ՃՀգրիտ ԹԷմիստոկղէս և պահ կա
լեալ դէտսն ունէր . քանզի ոչ յարդա
րեաց նա ճակատ զիւրոյ եւսեԹիոցն ընդ
դէմ բարբարոսացն նաւաց , մինչև ոչ էին
ժամանեաց ժամ բարեպատեհ , յորում
ցանդ բնաւորեալ էր յանձուկան յայնոսիկ
հոլմ սասակաշունչ գալ 'ի ծովէն և զա
լեան առնուլ վայրաբերել ընդ նեղուցան
ընդ այնոսիկ : Արդ այս՝ ինաս և ոչ մի ինչ
հասուցանէր նաւացն Հելլենաց , քանզի
զնատագոյնք էին և քաջակուռք . իակ բար
բարոսացն՝ քանզի 'ի խեղան ուղղորդք էին
և 'ի տախտակամածան վերամբարձք և ծան
րատանդաղք , այսր անդր տարուբերելք
ծփային՝ հարեալք սասակուԹեամբ 'ի հոլ
մոյն , և առ 'ի չեղ հանդիպէին նաւաց Հել
լենաց՝ որք արագընԹաց ետոյանային 'ի նոսա ,
ցանդ դէտսն կալեալք ԹԷմիստոկղեայ
հրամանին՝ որ քաջիկ գիտէր և դիտէր յա
ռնային զլսեն և զօդտակարն : Իակ անդուստ
Արիամենէս ծովապետ Իշխանն Քսերքսէս՝ որ արձանայեալ կայր 'ի նաւ մեծ ,

իբրև ՚ի մահարձանաց բարձանց ոսկեղինաձիք և նետաձիք լինէր ընդդէմ նորուն իսկ թէմիստոկղեայ. և էր Արիամենէս այր լաւ և քաջ, և քան զամենայն եղբարս Թագաւորին էր նա կարի ուժաւոր և յոյժ արդարակորով այր: Արդ՝ յայնժամ Արիամենէս Դեկեղացի և Սոսիկղէս Պեդուսացի ՚ի միասին նաւեալք ՚ի ժամուն, իբրև նաւացաւ առաջակողմանիքն ընդ միմեանս հարեալք որդորէին՝ իսառնեալք և կառեալք ընդ պղղնձապատ ցռուվան, և այն ինչ կամէր Արիամենէս քաջն ոստնուլ մտանել յեռաթին նոցա, նոքա զդէմ կալեալ քաջին՝ հանին զնա ՚ի տէզ գեղարդան և ՚ի ծովանդը ամացին զնա: Իսկ զդիակն նորա՝ մինչդեռ ընդ այլոց նաւաբեկեալցն ծփայր ՚ի վերայ միանանցն, անդուստ Արտեմիսիա տեսեալ և ծանուցեալ՝ բարձեալ բերէ զնա առ քսերքսէս:

Իբրև այս նահատակութիւնք կատարէին, պատմեն եթէ անդուստ և յԵլևսինեայ լոյս մեծ վայլատակեալ ցոլանայր, և շառաւիղ սաստիկ և ձայն աղաղակի բարձրանայր պրաւէր առհասարակ զդաշտագեօղն Թրիասեան մինչև ՚ի ծով անդր, իբրև խուռն խուժանի բազմութեան մարդկան՝ ոլք ՚ի դուրս ածեալք զնորհրդականն զայն բերելցեն Եակքոս: Իսկ ՚ի խուռն բազմութենէ անտի բարձրագոչ խուժանէն տակաւ առ ՚ի յերկրէ ՚ի վեր ամբառնալ երևէր ամբ մուգապատ, և դարձեալ միտանգամ խոնարհել եջանել և անդէն

հովանացեալ պատեալ ծածկեալ զնաւս ե-
ռաթիւն: Բայց և կիսոց Թուէր ցնորս իմն
խօլական և երևոյթս դիտել զարանց սպա-
ռազինաց, որք անդուստ յԵգինեայ ձեռս
իմն և բազուկս կարկառեալք ձգէին յա-
ռաջոյ եռաթիւն հեղլենաց. ոյց ալագաւ
և՝ ի կարծիս լինէին՝ եթէ ինքեանք էակի-
դեանքն էցեն, զորս և յօդնականուն աղո-
թիւք կարդացեալ իսկ էին նոքա յառաջա-
գոյն քան զմարտ պատերազմին: Արդ անդ
առաջին քան զամենեսեան Լիւկոմեդէս
այր Աթենացի իշխան եռաթիւոց հասեալ
կալաւ նաւ մի՝ ի թշնամեաց անուն, և հա-
տեալ բարձեալ զհանդերձանս զարդուց և
զինչս անակաց՝ արբեաց և ձօնեաց զայն սար-
դենաբարձն Ապողոնի: Անդ և այլք զու-
գահաւասար ձակատ յարդարեալ ընդ բար-
բարոսացն, քանզի առ խուռն բազմութեն
նոքա ըստ մանեայ ևեթ և զատաբար յա-
ռաջ մատչէին և ընդ միմեանս ևս ընդհար-
կանէին. զորս ապա ուրեմն՝ որ զդէմ կա-
լան մինչև ցերեկոյ՝ ընդ կրունկն՝ ի փա-
խուստ դարձուցին հեղլենք, ըստ որում
ասէ Սիմոնիդէս, զդեղեցիկն զայն և զգե-
ղահամբաւեանն տանելով զյաղթութիւն,
քան զոր ոչինչ հրաշափառագոյն արդեօք
ո՛չ առ հեղլեն և ո՛չ առ խուժադուժս եր-
բէք եկաց՝ ի ծովական նահատակութեանց.
և զայս նահատակութիւն նաւամարտիկքն
առհասարակ տարան յայնժամ արուեստ
քաջութեամբ, իսկ Թեմիստոկղէս խորհըր-
դով և հնարիմաց արուեստիւն:

Ա՛յլ յետ նաւամարտութեանն այսո՛ր
ւիկ տակաւին արտասնդեալ Քսեր֊քսէս,
ընդդէմ Ձախողակ բազդին՝ ձեռն արկանէ
զցամաքին բանակ առնուլ ածել ՚ի Սաղա֊
մինա ընդդէմ Հելլենաց, և հոլաբերով
փակել զհուն անցից այնոցիկ: Իսկ Թէ֊
միստոկղէս փորձեալ յայնժամ բանիւք զԱ֊
րիստիդէս, խորհուրդ մի կեղծաւորեր ա֊
ռաջի նորա խաղալ նաւուք ՚ի Հելլեսպոն֊
տոս, և անդ զկապեալ կամուրջն Քսեր֊
սեայ քակել: "Զի այսպէս՝ ասէ՝ զԱսիա
դլխովին առեալ փակեացուք Յունաստ":
Ընդ Արիստիդէս գժուարեալ ընդ խոր֊
հուրդն՝ եւ պատասխանի և ասէ. "Ցայժմ
մեք ընդ զրդասեր ումեմն բարբարոսի մարտ
եդեալ կռուեցաք. ապա եթէ զարդիս ա֊
ռեալ մեք զնա փակեացուք Յելլադա, և ՚ի
հարկդ յայդ դրդեացուք զնա առ ահին եր֊
կիւղն՝ որ ամբաւ բանակիդ տէր և իշխան
կացեալ է, նա այնուհետև ոչ եթէ ՚ի ներ֊
քոյ ոսկեհուռն վրանաց բազմեալ յանդոլ֊
րու ՚ի զնին կայցէ մարտի պատերազմին,
այլ զամենայն ձիւղն Թաւիեացէ յայնժամ,
և յամենայնին միանգամայն ձեռներէց լինի
առ վտանգին, և առեալ յոտին կացուսցէ
զպայթակղեալսն, և ոչ ամիտ ևս խորհր֊
դով նահատակեացն այնուհետև յամենայն
գործս իւր". Յաւել ապա և ասէ. "Ապա
ոչ եթէ զկապեալ կամուրջն մեզ արժան
ինչ լցէ քակել մի Թեմիստոկղէ, այլ կա֊
մուրջ մի ևս այլ՝ եթէ հնար ինչ լցէ՝ կա֊
պել մեզ առաջի դոլոս, և վաղագոյն յԵ֊

րոպայ հանել վարել զայրդ զայդ ,, : Թէ-
միստոկլէս ասէ . " Ապա ուրեմն է Թէ այդ-
պէս հաճոյ իցէ և օգուտ , ժամ առաջիկ
այս է առհասարակ մեզ ամենեցուն ուշ՛ի
կուրծս լինել և հնարս մէնքենայել , զի ա-
րագ արագ և հապճեպ դա չուեալ՛ի բաց
գնայցէ Լեղեադայ " : Իբրև այսպէս հաճոյ
Թուեցաւ , առեալ յայնժամ Թէմիստոկ-
լէս զայր ոմն յարքունի նեղքինեացն՝ զոր
եդիտ՛ի մէջ գերւոյն , անուն Առնակէս ,
յղէ առ Թագաւորն՝ պատուէր տուեալ
ասել առ նա . ԵԹէ՝ չէլլենացիք յաղԹա-
կանք առաջիկ՛ի նաւամարտի՝ խորհուրդ
կալան հաստատուԹեամբ խաղալ նաւել
՛ի Հելլեսպոնտոս և անդ զկապեալ կա-
մուրջն քակել : Բայց Թէմիստոկլէս խնայ-
եալ յարքայն , խորհուրդ առաջիկ տայ
նմա՝ փուԹալ ձեպել՛ի ծով իւր և անցա-
նել յայնկոյս , մինչ լինքն խոչ և խուԹ
տացէ իւրոց նիզակակցացն՝ և դանդաղա-
գոյնս յարդարեսցէ զնոսա ՛ի հետամուտն
ալնդել : Զայսոսիկ լուեալ բարբարոսին՝
յոյժ զահի հարաւ , և անդէն փուԹանակի
տեղւն տուեալ չուեաց անտի : Եւ արդ օք
որ աստանօր հանձարոյն Թէմիստոկլէայ և
Արիստիդէայ հանդէան՝ գեղեցիկ ցուցաւ
առ Մարդոնիոսիւ , յորժամ նոքա ՛ի վեդ
եկեալ մարտիւ ընդ դուշնաքեայ յոյժ զօ-
րու քան զՔսերքսեայն՝ ՛ի Պղատէա , ՛ի
վտանգ վերջին պաշարեալ մատնեցան առ-
հասարակ : Իսկ ՛ի մէջ քաղաքաց յայնժամ
յաւէտ լիմն տարաւ զմրցանակն քաղաքն

Եգինեանց, ըստ որում ասէ Հերոդոտոս։ Իսկ Թեմիստոկղեայ՝ (Թէպէտ և յակամայ կամ առ նախանձուն կրից) առհասարակ ամենայն Հելլենք տուեալ ընծայեցին պարծանս նախաթոռ։ Քանզի յորժամ տեղի տուեալ չուեցին նոքա ՚ի կիրճն պերզոպոննիսեան, և ՚ի բագնէ անտի առին զօրավարք Լրտաքանչիւր զքուեայս Լրտեանց, անդ այր այր ՚ի նոցանէն առաջին զանձն համբաւեր քաջ և առաքինի, և երկրորդ յետ Լւր՝ զԹեմիստոկղէս։ Իսկ Լակեդեմոնացիք առեալ ածեալ զԹեմիստոկղէս ՚ի Սպարտիա, մրցանակ զարուեստեանն եռուն Նէրիբիադեայ, և զնմաստուեթեանն՝ Թեմիստոկղեայ, պսակ ՚ի ձիթենւոյ։ Ա՛ռ այս՝ և կառք մի յոյժ գեղեցիկ քան զամենայն կառս որ ՚ի քաղաքին՝ առեալ պարգևեցին Թեմիստոկղեայ. և պատանիս ևս երեք հարիւր Թուով յուղարկաւորս եգեալ ընդ նմա շքով արձակեցին մինչև ՚ի սահմանագլուխս անդր։

Եւ պատմեն՝ եթէ յետ այնորիկ ՚ի հանգիստանալ ողիմպիական մրցանացն, այն ինչ ինքնին Թեմիստոկղէս եկն արձանացաւ յատպարիսին, հանդիսականք առհասարակ զաչս ՚ի բաց դարձուցեալ ՚ի մրցանատրաց անտի, զօրն ողջոյն ՚ի նա յառեալ յակձիռս կային. և զնա անդ օտարաց և եկաց մատնանիշ ցուցանէին, և սքանչացեալք ևս ծափս հարկանէին։ Որպէս զի և ինքն Թեմիստոկղէս յանձն իւր զուարճացեալ խոստովան լինէր առ բարեկամն,

եթէ զնուրոց վաստակոց քրտանց վասն Եկեղեայ՝ կթեաց յայնժամ զպտուղն. քանզի և անդամին ի բնութենէն էր նա պատուասէր յոյժ, եթէ խնամատարել զնոյն արժան էր ի պատմութեանց անտի նորա: Քանզի և իբրև ընտրեալ կարգեցաւ նա ծովապետ Էշխան ի վերայ քաղաքին, էնչ մի ի գործոց անտի պաշտամանն ոչ մանաւանդ էնչ և ոչ գարձեալ զհասարակացն՝ կարգ ի կարգ և ուրոյն կատարէր նա, այլ միանգամայն զամենայն գործառնութիւնն խոնէր արկանէր յօրն՝ յորում չուէր նաւել հանգերձեալն էր. որպէս զի շատ էնչ ի գործոց անտի ի միում անգ վայրի գործեալով, և ընդ բազմաց և ընդ այլազանից մարդկան քաղաքավարելով ի ժամուն, իբրև ի վերհագուննից սակի տեսողացն զանձն ի ներքս ընծայեցուցեալ և իբրև այր մեծազօր: Էր երբեմն՝ զի և զդիակունս տեսեալ նա զանկեղոցն ի մարտին առ ծովեզերբն, և ի նոսա զապարանչանն ոսկիս կիս յակն արկեալ և զքայռասանեակն, էնքն զնոքօք զանց արարեալ գնայր. և որ զհետ իւր գայր բարեկամին ցուցեալ զայնոսիկ, ասէր. "Բարձ դու զայդոսիկ վասն քո, զի չես դու Թէմիստոկղէս": Իակ և առ այլ ոմն պատանի գեղեցիկ տեսանելով Ընտիփագէս անուն, որ յաւակնագոյնս էին գնայր ընդ Թէմիստոկղեայ յառաջագոյն, իակ ապա սպաս հարեալ պաշտէր զնա ի շուք փառաց նորա, "Ո՞վ պատանի դու՝ ասէր՝ Թէպէտ և անագան ու-

լեան, սակայն երկաքանչիւր միանգամայն խելս խառնեցաք ի մէջ»: Եւ ասէր նա ի բանս իւր, եթէ՝ Ալթենացիք ոչ եթէ շուք պատուոյ դնեն նմա, և ոչ դարձեալ հիացեալ լինչ են ընդ նա, այլ իբրև ընդ սոսեաւ ոմանք եկեալ պատապարին ընդ հովանեաւ նորա ի յառնել մրրկաց և վտանգաց. և ապա ի պարզել օդոյն առ նոքօք՝ հարեալ տերևաթափ և ոստաքանց ևս առնեն զնա: Իսկ առ Սերիփացի ոմն՝ որ պանծայր առ նմա՝ եթէ ոչ յանձնէ իւրմէ ինքն փառաւոր է, այլ ի պատճառս քաղաքին իւրոյ, ետ պատասխանի Թեմիստոկղէս և ասէ. «Ճշմարիտ ասես զայդ. այլ ոչ ես ինքն Սերիփացի գոլով լինէիր արդեօք փառաւոր, և ոչ դու Ալթենացի գոլով»: Դարձեալ և առ այլ ոմն ի զօրավարացն՝ որ կարծեալ յանձին պիտանացու լեալ իւրում քաղաքին, իրրոխաս խիղախեր ընդդէմ Թեմիստոկղեայ, և զնւրան ընդ նորայն ի կշիռ ձգեր նահատակութեանց, ասէ. «Է՛ր երբեմն՝ զի ընդ աւուր ոմն ի պայքար մտանէր յաջորդեալ օրն արդոյ, և ասէր. եթէ անպարապութեամբք լի եմ ես և վաստակաբեկ, իսկ ի քեզ ամենեքեան շաբաթացեալք՝ վայելս վայելեն զվաստակոց նւրեանց: Ա՛ռ որ պատասխանի տուեալ օր ոմնին ասէր, Ճշմարտութեամբ ասես. այլ եթէ իմ չէր լեալ, և ոչ դու ինքնին էիր արդեօք: Արդ՝ եթէ և իմ յայնժամ չէր լեալ՝ ասէր Թեմիստոկղէս, ոչ անօր արդեօք լեալ էր ձեր

այժմ "։ Նա և վասն որդւոյն իւրոյ, որ ճոխաբար իշխանութեամբ գնայր ընդ մեր իւրում, և 'ի ձեռն մերն՝ ընդ նմա գլխովին, ձայնաբեր ասէր այսպէս Թէմիստոկղէս "Որդիս մեր այս վճիռ է զօրութեամբ քան զամենայն Հելլենացիս։ Քանզի Հելլենացւոց հրամանատարք են Աթենացիք. իսկ ես՝ Աթենացւոց. ինձ գլխովին՝ մայր դորա, և դա ինքնին՝ մեր իւրում "։ Եւ զի խնդրէր նա յամենայնի առաւձինն լինել քան զայլս 'ի մարդկանէ, զադարակ իւր 'ի վաճառ հանեալ՝ տայր հրաման մունետկին քարոզ կարդալ այսպէս. Եթէ՝ ագարակդ այդ ունի իւր մերձաւոր բնակակից զայր ոք լաւ և բարի։ Իսկ 'ի փեսայացուս՝ որ զնորա դուստրն կին ածել խնդրէին, նա զհամեան նախապատիւ ընտրեաց քան զընչէղն. և ասէր՝ Եթէ խնդրէ նա այր՝ որ դրամոց պէտս ունիցի, քան եթէ դրամ՝ որոց առն պէտք իցեն։ Արդ յառաջս իւր հանձարեղս այսպիսի ոք էր Թէմիստոկղէս։

Ա յլ իբրև հանդարտեցաւ նա 'ի դողծոց անտի նահատակութեանցն, վաղվաղակի ձեռն էարկ նորոգել զքաղաքն, և պատուար ևս ածել նմա. ըստ որում պատմէ Թէոպոմպոս, արծաթով ածեալ հաւանեցուցեալ զՊարէտս, զի մի լինէ դիմադարձ գոցին նմա. իսկ ըստ որում բազմագոյնք ևս այլ աւանդեն՝ խոթանօք գնացեալ ընդ նոսա։ Քանզի եկին եհաս նա 'ի Սպարտիա՝ հրեշտակութիւն զանձամբ առեալ. և իբրև մեղադիր լինէին Սպարտա-

ցնք՝ զի պատուար ածէն նոքա քաղաքին Ա-
թենայ. և ինքնին քաղաքապետն՝ որ ՚ի
ձեռն զնոցա առաքեցաւ անդր յԵգի-
նեայ՝ ամբաստան կայ վասն այսորիկ. Թէ
միատոկղէս ժխտեաց զբանն, և ստիպեաց
և զնոսա՝ արձակել արս յԱթենս ՚ի լըր-
տես. քանզի ՚ի դէպ երանաց անտի խըն-
դրէր նա ժամանակ ՚ի նեղըս արկանել ՚ի
լսումն պատուարին. և զի կամէր և՝ զի ընդ
անձին իւրոյ կալցեն Աթենացիք զհրեշ-
տական զայնոսիկ ՚ի պատանդի, որ և եղև
իսկ: Քանզի ձեռնհաս այնուհետև ՚ի վերայ
հասեալ իրացն Լակեդեմոնացիք՝ ոչինչ
ապա ընդհարան ՚ի Թէմիստոկղէս, այլ ՚ի
ծածուկ ևեթ զայրացեալք ՚ի սիրտս՝ այն-
պէս առեալ արձակեցին զնա:

Յետ այսորիկ չինեաց նա և զՊիրէան
նաւահանգիստն, զմուտս ածեալ զքաջա-
փիպուԹիւն նաւահանգստացն այնոցիկ, և
զքաղաքն ողջոյն առեալ յարմարէր դի-
պաւոր ՚ի ծով անդր. և այսպէս իբրև հա-
կառակ վաղնջուց Թագաւորացն Աթենաց-
ւոց՝ քաղաքականուԹեան կարգ ՚ի նեղըս
ընծայէր: Քանզի նոքա առաջինքն՝ որպէս
ասեն՝ գուն գործեալք ՚ի ծովն ՚ի բաց զք-
քաղաքացիսն քեցել, և սովորեցուցանել
զնոսա կեանս վարել առանց նաւարկուԹե,
և նստել մշակել զերկիր իւրեանց, զվեցն
զայն զհամբաւն հարեալ հռչակեցին վասն
Աթենասայ. իբրու եԹէ Պոսիդոն ինքնին
՚ի վեգ եկեալ լցէ ընդ Աթենասայ ՚ի պատ-
ճառս աշխարհին այնորիկ, իսկ Աթենաս

ցուցեալ դասաւորացն զձիթենին՝ յաղթական լեալ էցէ: Իսկ Թէմիստոկղէս՝ որպէս Արիստոփանէսն ասաց կատակերգակն, ոչ եթէ ընդ քաղաքին առեալ խառնեաց զՊիրեանն, այլ զքաղաքն ինքնին մերձաւորեալ յօդեաց ընդ Պիրեան նաւահանգստին, և զցամաքն գլխովին՝ ընդ ծովուն: Եւ այս ապա զնուաժան ժողովրդեանն յօրացոյց ՚ի վերայ աւագանւոյն, և խրոխտս և խիզախս առաւել յարդարեաց զնոսա. քանզի այնուհետեւ զօրութիւն ամենայն և իշխանութիւն դարձաւ փոխեցաւ առ նաւազն և առ թիապետս և առ զեկավարս: Ոսաոի և զտեղի առեւնին՝ որ չինեալ կայր ծովահայեաց ՚ի Պնիւկէ, առեալ ապա երեսունքն դարձուցին ընդ ցամաք կոյս. զմեսաւ ածեալք՝ եթէ ծովական իշխանութիւնդ ծնող և հզօրիչ է ռամկապետութեանն. իսկ երկրագործք ինքնին ոչինչ այնպէս գժկամակութեամբ բերին ընդ պետութիւն աւագանւոյն:

Բայց Թէմիստոկղէս և այլ ինչ մի վհատագոյն մեսախորհ լինէր վասն նաւական զօրութեանն: Քանզի յորժամ ՚ի բաց չուեաց անտի Քսերքսէս, և նաւատորմիղ Հելլենացւոցն տեղի էս մեկնեցաւ ՚ի Պեդասաս ձմերել անդանօր, Թէմիստոկղէս յայնժամ հրապարակախօս եղեալ առ Աթենացիս, ասէր ՚ի բանս իւր՝ եթէ ինչ մի մեսախոհ եղեալ է նա՝ կարի օգտակար նոցա և փրկաւէս, այլ անճահ ՚ի խօսել զայն ՚ի լուր խուժանին: Յայնժամ Աթենացիք

հրաման ետուն նմա յայտնել զայն ի լուր միայն Արիստիդեայ. և եթէ Արիստիդէս հաճեալ հաւանեացի ընդ խորհուրդն, ի գործ վարեացեն զայն: Ապա Թէմիստոկղէս ջոքաւ խօսէր ընդ Արիստիդեայ, եթէ խորհուրդ իւր այն է՝ հրձիգ առնել առհասարակ զնաւահանգէս Հելլենացւոց: Վասն որոյ և Արիստիդէս եկեալ արձանացեալ ի մէջ ժողովրդեան՝ ասէր այսպէս. "Քան զբանն՝ զոր Թէմիստոկղէս մտախոհ եղև գործել՝ չէք լինչ առաւել օգտակար, և չէք լինչ առաւել անկրաւ": Ասեն և Աթենացիք պատուիրեցին Թէմիստոկղեայ դադարել ի խորհրդոյ անտի իւրոց:

Ա՛յլ իբրև Լակեդեմոնացիք յառեալոյ ժողովոյ Ամփիկտիոնեանց զայն լինչ առաջի արկանէին, եթէ մի մտցեն ի ժողով անդր խորհրդոյ Ամփիկտիոնին քաղաքք՝ որ միանգամ չէղեն նիզակակից ընդդէմ Մարաց. զանգիտեալ Թէմիստոկղէս՝ գուցէ Թեսալացիք և Արգիացիք, դարձեալ և Թեբացիք՝ անբաժ մնացեալ ի ժողովոյ անտի, այնուհետև Սպարտացիք ոչընդն սկսցեն ի վերայ քուէայցն, և ըստ իւրեանց հաճոյից տարցեն և բերցեն զամենայն, չառաջով մտեալ խօսեցաւ վասն քաղաքացն այնոցիկ, և փոխեաց չըչեաց զխորհուրդս պատուիրակացն. յայտ արարեալ՝ եթէ երեսուն և մի քաղաքք են՝ որ միանգամ բաժանորդ գտան պատերազմին այնորիկ, և ի սոցանէ բազում՝ այն են՝ որ յոյժ փոքրիկք են. վասն որոյ և դժնդակ է՝ ա-

սէր՝ եթէ Եկլեդա ողջոյն անբաժ ՚ի ժողո-
վոյ անտի ունացեալ, առեան խորհրդոյն
ամիսոփեացն ևեթ յերկուս կամ յերիս քա-
ղաքս մեծամեծս: Եւ յայսմանէ ապա մե-
ծապէս սրտնեղոյց նա զԱկեդեմոնացիս.
վասն որոյ և ՚ի շուք մեծ առեալ ամբարձին
նոքա զԿիմոն, և առաքեն զնա ընդդէմ Թէ-
միստոկղեայ կացուցին ՚ի քաղաքականու-
թեան մասին:

Բայց նիզակակցաց նորոց յաչաց անկաւ
Թէմիստոկղէս, քանզի շուրջ եկեալ նաւէր
՚ի կղզիս՝ հաւաքել ՚ի նոցանէ դրամս: Ըստ
որում և առ Անդրոսացիան գնացեալ և
խնդրեալ արծաթ՝ այսպիսի ինչ ասէր առ
նոսա և լսէր ՚ի նոցանէ՝ որպէս պատմէ Հե-
րոդոտոս. "Եկեալ հասեալ կամ՝ ասէր
Թէմիստոկղէս, ածեալ ընդիս աստուածս
երկուս, զՀաւանականն բան և զբռնու-
թիւն": Առ որ կրկնեցին և Անդրոսացիք և
ասեն. "Եւ առ մեզ գլխովին կան աս-
տուածք երկուք մեծամեծք. աղքատու-
թիւն և կարօտութիւն, որ արդեւլուն մեզ
տալ քեզ դրամս": Իսկ Տիմոկրէոն տաղ-
ասող Հռոդացի ՚ի նուազի խրոմ դառ-
նապէս երգիծանէ զԹէմիստոկղէս, իբրու
այն որ արծաթ առեալ՝ զհետ եղև և դար-
ձոյց զայլս ՚ի վտարանդութենէ. իսկ զինքն՝
զհիւր նորա գլխովին և զբարեկամն մատ-
նեաց ՚ի պատճառս արծաթոյ. և երդէ
նա օրինակ զայս.

Իակ եթէ դու զՊաւսանիաս,
Ըզբաանթիպատոս զբրուտտես,
կամ թէ զարդոյն Լէւտիքիդաս
Դու յերդ առնուս մեծապէս,
Ա՛յլ ես՝ ի գոլն Արիստիդեայ
Քաջլին արանց յօրանամ,
Որ նա միակ՝ ի հրաշափառն
Եկն՝ ի ԱԹԷՆս յերևան։
Բայց զայրըդ զայդ թէմիստոկղէս
Ատել աստեաց Լատոնէէ,
Չի այր է դա սուտակասպաս,
Անկրաւ է, մատնիչ է։
Որ՝ ի կաշառ իւր զարծաթոյն
Զիր աղբեղէն առեալ ձօն,
ՉՏիմոկրէոն չած նա ըզհիւրն
Յիւր հայրենին Եաղիսոն։
Ա՛յլ արծաթոյ տաղանդս երիս
Առեալ՝ ի ծոց իւր անդուստ,
Եւ նաւագնաց ելեալ երթայր,
Օ՛չ թէ երթայր՝ ի կորուստ։
Նա զի՛ւր ըզկէսս ածէ այսրէն,
Ըզկէսս առնէ տարագիր,
Կիսոց տապաստ տայ անկանել,
Դա ոսկւով է ախտակիր։
Իակ անդ յԱթէմոս ծխծաղական
Հիւրոց իւր տայ պանդոկի,
Ընթրիս կահէալ և միս ըզպաղ
Դընէ նոցուն առաջի։
Բազմեալ նոքա ուտել ուտեն,
՝ի նոյն առնեն խընդըրուած,
Չի տարաժամ թէմիստոկղեայ
Արևն հասցի՝ ի յաչաց։

Դարձեալ և կարի յայրատագոյնս և լըրնի յիշոցիւք լուսոյ Տիմոկրէոն զԹէմիստոկլէս՝ յետ վտարանդի լինելոյն նորա և դառապարտութեանն, նուագ քէրթեալ՝ որոյ է սկիզբն այսպիսի.

Դու ով Մուսա ըզխառս ըզշուք
Զխոյն այսմիկ ըզտաղն,
Դու յընդհանուրս Հելլենացւոց
Հրուչակ հարցես արժանի:

Եւ պատմեն՝ եթէ սա այս Տիմոկրէոն յաք. սոր տարագիր եղև՝ և պատճառս կուսակցութեան իւրոյ ընդ Մարս, և ընդ այլոց և Թէմիստոկլէս ինքնին դառապարտ արար զնա: Իսկ յերկրէ և Թէմիստոկլէս գլխովին ամբաստանեցաւ յերկրէ կուսակից Մարաց, զայս ինչ յայնժամ՝ քէրթեաց Տիմոկրէոն ընդդէմ նորա.

Ո՛չ արդեօք Տիմոկրէոն
Ի ընդ Մարաց միայնակ.
Ձկ միայն նա դաշնակից,
Եւ են և այլք նըշաւակ:
Մեծացեալ չեմ օն և օն՝
Հաստեալ ձեռով ես աղուէս.
Աղուէսունք են են և այլք,
Զարդիս եկին՝ ի հանդէս:

Ա՛յլ քանզի քաղաքացիք առ նախանձուն հեշտաբար ընդունէին զբանսարկութիւնն վասն նորա, հարկաւորեցաւ այնուհետև

Թեմիստոկղէս յաւերացուցանել զնոսա, զի ըստ այնմ նահատակութիւնս և զնախաձիրս առէպ առէպ յուշ ածեալ ժողովրդեան: Եւ ասէր ևս նա առ գիկամակ լսելիս. "Զի՞ դուք, զի՞ նեղիք յանձինս ձեր, առէպ առէպ 'ի նոցունց իսկ բարերարութիւն գտեալք":

Սակայն Թեմիստոկղէս ընդհարաւ 'ի ժողովուրդն՝ և 'ի չինել անդ իւրում զսահմանն Արտեմեայ, զոր և անուանեալ կոչեաց Ընթոպոէոուղէ, այն է՝ Քաջախորհուրդ. իբրու այն՝ որ խորհուրդս քաջս առեալ ունէր քաղաքին և Հելլենացւոց: Իսկ մերձ 'ի տունն բնակութեան իւրոյ կառոյց 'ի Մելիտէ զտաճարն. ուրանօր այժմ զդիակունս սպանելոցն արկանեն դահիճք, և զհանգերձս և զնետղս ձգեն զհեղձամահ եղելոցն և զկախելոցն: Եւ կայր մնայր անդ տակաւին և Թեմիստոկղեայ արձան փոքր 'ի նմին տաճարին Արիստոբուղեայ մինչև ցաւուրս մեր. և ճշդիւտ մեղ 'ի գէմն բերէ զԹեմիստոկղէս՝ ոչ ըստ հոգւոյն միայն, այլ և ըստ պատկերի դիտակին՝ այր դիւցազնական:

Աւրդ՝ առեալ զնա խեցեկոյտ վճռով վտարանդի արարին, նկուն առնելով զշուք փառաց նորա և զմեծ զաւազութեանն, ըստ որում և բնաւորեալ իսկ էին նոքա գործել առ ամենեսին՝ որ միանգամ ըստ նոցուն կարծեաց գժոխըմբերելիք էին նոցա առ մեծի զօրութեանն, և 'ի ոտնկան հաւատարութեանն՝ իբրև վհատոյնք

անմանք: Քանզի ոչ եթէ պատիժ պատուհասի ինչ էր այս խեցեկոյտ վճիռ, այլ սփոփանա իմն և դիւր մխանաց կրելոյն, այն՝ որ հեշտանայ խոնարհեցուցանել զամբարձեալսն յաւագութիւն, և զկիրս իւր ոխերիմս դրդէ և սրէ՝ յանփառութիւն ինքեանս զնոսա:

Իբրև՝ ի քաղաքէն տարագիր եղև Թէմիստոկղէս, և երթեալ բնակեցաւ Արգոս, պատճառս չարեաց առին ընդդէմ նորա Թշնամիք նորա՝ ի պատահարացն անտի Պաւսանեայ. քանզի Պաւսանեայ ընդդէմ իբրև մատնչի՝ դատախազ չարեաւ Լէովբոտէս ազգմէծնեան Ափրաւեացի՝ ի միասին ընդ Սպարտացւոց: Քանզի Պաւսանիաս նիւթեր մեղաբեռնացեր զնորս մատնութեանն. և անդ զառաջինն՝ ի ծածուկ ունէր զբանն՝ ի Թէմիստոկղէայ, Թէպէտ և բարեկամ էր նորա: Իսկ իբրև ետես զնա անկեալ վտարանդի՝ ի քաղաքէն և ծանրացաւսումն ընդ կիրսն, համարձակեցաւ յորդորել զնա բաժանորդ լինել բանին, և՝ ի վեր ևս եհան նմա զնամականի արքային. և դրդէր զնա ընդդէմ Հելլենացւոցն՝ իբրև ընդդէմ անզգամաց և ապաշնորհից: Բայց նա զհրապոյրսն հերքեաց մերժեաց զՊաւսանեայ, և զխոստմն անբաժ կացուցանէր զանձն՝ ի հաղորդութենէ նորա. սակայն և ոչ ուժեք՝ ի վեր եհան ըզբանն, և ոչ մտան եղև գործոյն. քանզի ակնկալեալ ճնայր, զի կամ ինքն Պաւսանիաս գադարեսցէ՝ ի խորհրդոց անտի, կամ

Թէ այլազգ ինչ՝ի վեր եկեալ բանն. քանզի անհանճար խորհրդովք Թեակոխէը Պաւսանիաս՝ի գժպատեհ և՝ի բազմավտանգ գործն: Եւ այսպէս ապա իբրև մեռանէը Պաւսանիաս, գտանէին առ նմա ինչ ինչ նամականի և արձանագրութիւնս վասն իւրացս այսոցիկ, յորոց կէղակարծելի գտաւ և Թեմիստոկղէս ինքնին գլխովին: Ընդ ընդգէմ նորա բոլոր բառնային Լակեդեմոնացիք, և ամբաստան լինէին զնմանէ՝ որ միանգամ՝ի քաղաքացեաց անուն իւրոց մախային ընդ նա՝ի բացակայութենէ նորա. բայց ինքնին Թեմիստոկղէս գիրս և նամականի տայր և պատասխանի առնէր վասն անձին, և առաւել վասն առաջինն ամբաստանութեանցն: Քանզի վասն որոց զրպարտէին զնա Թշնամիք նորա, նա գրեաց առ քաղաքացիս իւր և ասէր, եԹէ զնարդ ինքն՝ որ ցանգ հեատամուտն էր իշխանութեան, և երբէք բնաւորեալ չէր՝ի հպատակել, և ոչ՝ի սիրտ նորա երբէք անկանէր արդեօք՝ բարբարոսաց և Թշնամեաց՝ի ձեռս տալ զանձն՝ի միասին ընդ Ելլադայ: Ա՛յլ սակայն խուժանն յանկուցեալ՝ի բանս ամբաստանողացն, առեալ արձակեաց զոր՝ հրաման տուեալ ձերբակալ առնել զնա և ածել կացուցանել՝ի գառաստան զառաջեաւ Հելլենացւոց: Թեմիստոկղէս նախագաղած եղեալ բանին, յարեաւ անց՝ի Կերկորա. և էր նա երբեմն բարեգործ գտեալ քաղաքին այնմիկ: Զի էր երբեմն՝ զի կապ և կռիւ յուզեալ ընդ Կերկորացիս

եւ ընդ Կորնթացիս, Թէմիստոկղէս կացեալ դատաւոր՝ երկայն զԹշնամութիւնն, եւ Կորնթացոցն վճիռ եառ հատուցանել տալանդս քսան. եւ զի՝ Լեւկադէ հասարակաց նոցա լեցի քաղաք բնակութեան՝ երկաքանչիւրոց նոցա գոլով գաղթական: Ապա անտի անց եւ ապաւինեցաւ նա Լեպիւռոս. անդանօր հալածանս կրեալ յԱթենացւոց եւ ի Լակեդեմոնացւոց, դիմագրաւ այնու հեռւ անճնաւորս լինէր ի յոյս իմն դժբնդակ եւ անել. քանզի չգթաւ ապաստան եղեւ առ Ադմետոս, որ Թագ կապեալ էր ի վերայ Մողոսացւոց: Սա այս Ադմետոս լինէ մի երբեմն խնդրեալ յԱթենացւոց եւ արհամարհանօք մերժեալ ի Թէմիստոկղեայ՝ որ յայնժամ ի բարձի աւագութեան էր ի քաղաքին, ծանրացաւսուճն եղեալ՝ ցանգ ոխակալէր ընդդէմ Թէմիստոկղեայ. և յայտնի էր ապա ամենայն տեսանելեացն՝ զի Թէ երբէք զբռամբ արկանէր նա զԹէմիստոկղէս, վրէժ անշուշտ պահանջէր ի նմանէ: Սակայն ի փախուստեան իւրում առաւել զահի հարեալ Թէմիստոկղէս ի նորոգածին մահանաց ընտանեացն, քան ի հնացեալ ցասմանէ արքայինն, եդ ի մոլ անճնաւորս լինել նմա, և մատեաւ աղաչաւոր Ադմետեայ մանաւոր և նորանշան օրինակաւ: Քանզի առեալ լինքն զողոյ մանուկ արքային՝ այնպէս հանդերձ նուաւ յողոք խոնարհեալ տաճեաց զանձն առ սեղանոյն. քանզի միայն զայս օրինակ աղերսանաց մեծապէս

յոյժ և գոգցես անզլանալի համարին Մո-
ղոսացիք: Ա՛յլ կէսք ասեն՝ եթէ փթիա
սիկին արքային Թեւկդրեաց Թէմիստոկ-
լեայ զօրինակ զայս ազերսանաց, և զոր-
դեակն իւր ինքնին առեալ եդ առ սեղա-
նոյն 'ի միասին ընդ Թէմիստոկլեայ: Իակ և
կէսք՝ եթէ նա ինքն Ադմետոս առ 'ի հար-
կաւորել զանձն իբրու 'ի կրօնասէր հարկէ՝
մի տալ զայրն 'ի ձեռս հալածչացն, նիւթ-
եաց զայս՝ և այնպէս աշխարհել յարդա-
րեաց զօրինակ ազերսանացն:

Յայնժամ զկին նորա և զորդիս նորա առեալ գաղտ յԱթենացւոյ Եպիկրատէս Աքարնացի՝ յլեայ առ Թէմիստոկլէս. զոր և ապա վասն այնորիկ 'ի մահ գատապարտեաց զնա կիմոն, որպէս պատմէ Սաթիմբրոտոս: Բայց գիտեմ ո՛չ զնարդ 'ի մոռացօնս գարձուցեալ զայսոսիկ ինքնին Սաթիմբրոտոս, կամ Թէ Թէմիստոկլեայ ինքնին տալով 'ի մոռացօնս գարձուցանել, պատմէ՝ նաեւել Թէմիստոկլեայ 'ի Սիկիլիա, և 'ի Հերոնէն բռնաւորէն Սիկիլեայ խնդրել զդուստր նորա 'ի կին, խոստանալով նմա ընդ նորա իշխանութեամբ զՀելենացիան նուաճել. իակ 'ի մերժել Հերովն նմի զբանն, ապա անցանել գնալ Թէմիստոկլեայ յԱսիա: Ա՛յլ այս պատահումն իրաց չէ ինչ արժանահաւատ: Քանզի Թէոփրաստոս 'ի մատեանս իւր յաղագս արքայութեան պատմէ, եթէ յորժամ յՈղիմպիա արձակեաց Հերոնն երիվարս ձիընթացիկս, և վրան մի անդամնօր եւս հար-

կանել մեծահանդերձ և շքեղ, յայնժամ Թէմիստոկղէս խօսեցաւ առ Հելլենացիսն և ասէր, եթէ պարտ և արժան է զվրանն զայն յաւարի առնուլ զբռնաւորին, և արգելուլ խափանել զերիվարան զայնոսիկ ի ձիընթացիկ մրցանացն: Իսկ Թուկիդիդէս ասէ, եթէ իջեալ Թէմիստոկղէս ի միւս այլ ծովն՝ նաւէր ի Պիւդնայէ. և էր յանծանօթս ամենայն նաւազիցն, մինչև ի բռնութենէ հողմոյն նաւ իւր վաճառաբարձ վարեալ գնայր ի Նաքսոս, զոր յայնժամ պաշարեալ նստէին Աթենացիք. զահի հարեալ Թէմիստոկղէս՝ ետ ծանօթս անձին իւրոյ ի Նաքսոս նաւաստեառնն և ղեկավարին. և անդ՝ էր զի յաղերս անկանէր, և էր զի սպառնալիս ի վերայ կապէր նոցա, և ասէր ամբաստան լինել զնոցանէ և սուտ ևս յօդել և զրպարտել առաջի Աթենացւոցն, եթէ ոչ յանգէտս ինչ նոքա՝ այլ կաշառաբեկ կաշառակուրծ եղեալ յառաջադոյն՝ այնպէս առին ժողովեցին նոքա զԹէմիստոկղէս: Եւ այնպէս ապա հարկաւորեաց զնոսա նաւել յառաջ և ունել զԱսիա: Ա՛յլ ի գոյից նորա և կընճից բազում մասամբ գաղտագողի առաքեցան առ նա Ա՛սիա ի ձեռն բարեկամացն: Իսկ որչափ ինչ միանգամ հրապարակեցան յայնցանէ և գրաւեալ կուտեցան յարքունիս, Թէոպոմպոս զկշիռն հարիւր տալանդաց ասէ. իսկ Թէոփրաստոս՝ ութսուն. այն զի Թէմիստոկղէս ինքնին՝ մինչչև միջամուխ լեալ էր ի քաղաքականութիւն անդր, և

ոչ երից տաղանդաց չափ ժառանգեալ ու-
նէր առացուածս:

Իբրև նաւեալ եհաս նա ի կիւմէ, և ի-
բազեկ եղև՝ զի բազումք ի վերայ ծովուն
շրջին հնարին որսալ զնա. և առաւել էր
գոսեղէս և Պիւթոդորոս, (քանզի էր խակ
Թէմիստոկղէս որս պարարակ վասն ամե-
նեցուն նոցա՝ որ միանգամ օգտածարուաքն
էին շահիլ յինչ և իցէ իրաց. զի և արքայն
ինքնին երկերիւր տաղանդաց քարոզ տու-
եալ էր կարդալ մունետակին վասն ունելոյ
զնա), ապա անց վախեաւ Թէմիստոկղէս
յԵգա՝ որ քաղաք փոքրիկ էր Էողևոյ. և
էր նա յանծանօթս ամենեցուն՝ բայ ի Նի-
կոգենոսէ՝ որ ասպնջականն էր նորա. և էր
Նիկոգենոս ընչաւէտ յոյժ քան զամենայն
Էողացիս, և ծանօթ և մտերիմ յոյժ մե-
ծամեծ ասագանուոյն. առ սմա թաքու-
ցեալ կայր Թէմիստոկղէս աւուրս ոչ բա-
զումս: Իսկ յաւուր միում զինի ընթրեացն
ի կատարել լինել զոհից, անդ Ոլբիոս անուն
դաստիարակն որդւոյն Նիկոգենեայ, այլ
յայլմէ և ասառուածազգեցիկ իմն եղեալ,
ձայն բարձեալ գոչեաց տաղաչափութիւն
այսպիսի.

Գիշերոյ՝ տուր ասպիւն,
Գիշերոյ՝ զգօնութիւն,
Գիշերոյ՝ յաղթութիւն:

Ցեղս այնորիկ իբրև գնաց ի ննջել Թէմիս-
տոկղէս, թուէր նմա երազ սեռանել՝ վի-
շապ մի զի պատատեալ ունէր զորովայն

նորա, ապա մօտ գայր խալապատեր ըզ-
պարանոցաւն. իսկ մերձ էկեալ հպեալ
յերեսս նորա՝ դառնայր վիշապն և լինէր
արծուի, և թևովքն շուրջ բակ ունէր զնո-
վաւ, և առնոյր ամբառնայր զնա, և ընդ
շաւտ ուղի այնպէս բարձեալ բերէր զնա.
ապա յետ այնորիկ երևութանայր ոսկի
գաւազան օձապատ, և ՚ի վերայ այնորիկ
ինքն յանդորրու ամրացեալ կայր, զեր-
ծեալ յանհնարին արհաւրացն և ՚ի խոտո-
վութենէն:

Ա՛րդ առեալ Նիկոգէնոս զԹէմիստոկ-
լէս, առաքեր առ Թագաւորն հնարիմաց
ճարտարութեամբ՝ օրինակ զայս: ՚Ի բար-
բարոս ազգաց բազումք՝ և առաւել Պար-
սիկք, ՚ի խանդ սիրոյ առ կանայս յոյժ
վայրագք են բնութեամբ և գժնդակք ո-
մանք: Քանզի ո՛չ միայն առ ամուսինս իւ-
րեանց, այլ և առ արծաթագին աղախ-
նեայս և առ հարճս սաստկիկ պահ արկա-
նեն, զի մի ումեք յարտաքինոց անտի երևե-
ցին նոքա երբէք, այլ՚ի տան անդ փակեալք
դադարեսցեն. իսկ յուղևորութեան ուրեք
նոցա՝ ընդ վրանօք շուրջանակի պատեալք
պարսպեալք՝ այնպէս ՚ի ժանուս բարձեալ
բերեն զնոսա: Ապա և վասն Թէմիստոկ-
լէայ այսպիսի ինչ պատրաստեալ վաչէ,
առեալ տանէին զնա. իսկ որք ՚ի Հանա-
պարհին հանդիպէին և հարցանէին, զայս
ինչ նոցա հանապազ պատահիանի առ-
նէին՝ որք զնովաւն էին, եթէ ՚ի կանանց
զոք ՚ի Հելլենացւոց ածեալ տանին նոքա

'ի Յոնիոյ՝ առ ոք յաւագանւոյն յոստանն ալքմէնի : Ա՛յլ Թուկիդիդէս և Փարուէն Լամփսակեցի պատմեն՝ եթէ 'ի մեռանել Քսերքսեայ՝ առ որդի նորա յարուցեալ չղթաւ Թեմիստոկղէս . իսկ Եփորոս և Դիմոնէն և Կղեոտալքոս և Հերակլեոտոս և այլք շատք , եթէ առ նա ինքն Քսերքսէս չղթաւ նա : Սակայն ժամանակացն հաշուի առաւել և Թուկիդիդէս Թուի զուգաձայն լինել . Թէպէտ և ոչ այնոքիկ զարձեալ ձըշդըրտագոյնս ժողովեալք եղան :

Արդ իբրև եկն եհաս Թեմիստոկղէս 'ի Կէտ գԺուարին նպատակին , դէպ եղև նմա առաջին խօսել ընդ Արտաւանայ հազարապետի արքային , և ասէր . " Հելլենացի եմ ես և խնդրեմ խօսել ընդ արքային վասն մեծամեծ իրաց , և ոչ աղագաւ մեծապէս փոյթ պնդութեան է նմա " : Արտաւան ասէ . " Ո՞վ օտարական դու , օրէնք զանազանեալք են 'ի մարդիկ . և մէն մի յայնցանէն՝ միւսմ միւսմ 'ի նոցանէն գեղեցիկք են . այլ ամենեցուն գեղեցիկ է արդեօք զնւրականն պաշտել և պահել : Արդ՝ համբաւ հարեալ է , եթէ ձեր Հելլենացւոցդ առաւել իմն ընդ աղատութիւնն զարմացեալ է և ընդ հաւասարութիւն . իսկ առ մեզ՝ Թէպէտ և շատ են օրէնք և գեղեցիկք , սակայն որ ամենագեղեցիկն է՝ այս է , չուք և պատիւ դնել արքայի , և երկիր պագանել 'ի նմա պատկերին նմա՝ որ զահեղերս ոլջոյն պահպանէ : Արդ եթէ դու հաճեալ ընդ մեզն , երկրպագութիւն նմա

մատուսցես, Թոյլ լեցի քեզ միանգամայն և զարքայն տեսանել և խօսակից նմա լինել. ապա եթէ այլազգ ինչ խորհուրդ ւոյժ քո, հրեշտակ պատգամաւոր զայլս կալցես դու առ արքայն. քանզի արքային հայրենասանդ օրէնք են՝ ոչնկին ոչ մատուցանել առն՝ որ ոչ երկրպագութիւն տացէ նմա": Զայսոսիկ լուեալ Թէմիստոկղէս՝ ասէ առնա. "Ալ և ես ինքնին ով Արտաւանէ, զարքային շուք համբաւոյ և զզօրութիւնն աձեցուցանել հասեալ գամ աւադիկ. և ես ինքնին մատուկս զանձն իմ ձերոցն հպատակեմ օրինաց, (որովհետև այսպէս հաճոյ է ձեզ՝ որ բարձր արար զՊարսիկս): Եաև յիմ ձեռն բազմագոյնք այլ քան զայժմուսդ, երկրպագութիւն մատուսցեն արքային: Մի ինչ ապա այդ խոչընդոտան լեցի բանիցն՝ զոր ես խնդրեմ խօսել ընդ նմա": "Իսկ զո՞ ոք արդեօք 'ի Հելլենաց (կրկնեաց Արտաւան) հասեալ այսր՝ ասասցուք արքային. քանզի ոչ զսոսկականի ուրուք դու 'ի քեզ բարձեալ բերես զհանճար": Թէմիստոկղէս ասէ. "Զայդ բան՝ ով Արտաւան, ոչ ոք՝ յառաջ քան զարքային՝ լուիցէ արդեօք": Զայս այսպէս պատմէ մեզ Փանիաս: Իսկ Երատոսթենէս 'ի դպրութիւնս իւր յաղագս ընչաւէտութեան՝ յաւելու պատմել, եթէ 'ի ձեռն կնոջ ուրուն Երետրացւոյ՝ զոր ունէր հազարապետն, զայսոսիկ խօսեցաւ առ նա Թէմիստոկղէս և մեծարութեամբ ևս կապեցաւ ընդ նմա:

Ա֊րդ՝ իբրև մուծաւ Թեմիստոկղէս ա֊ռաջի արքային, և երկրպագութիւն մա֊տուցեալ նմա՝ արձանացեալ կայր լռիկ, հրաման եւս արքայ Թարգմանին հարցանել՝ եթէ ո՛վ ոք իցէ։ Ա֊ւ որ պատասխանի տուեալ Թեմիստոկղէս՝ ասէ. "Հասեալ գամ առ քեզ արքայ եւս Թեմիստոկղէս Աթենացի, տարագիր վտարանդի՛ ի Հելլե֊նացւոց. որ չարիս բազում արդեօք ան֊ցոյց ընդ Պարսիկս, այլ բազմագոյն ևս՛ ի բարեաց մասին. որ արդեւր Յունաց զհե֊տամուտ ինդելն, յորժամ յանդորրու այ֊նուհետև բնակեալ էր Եղլադա. և իրաց մերոց յաջողել՝ ժամ եւս ինձ շնորհս առ֊նել և ձեզ։ Ա֊րդ՝ ինձ ասադիկ ամենայնի՛ ի ձահ և վայելուչ է յառաջիկայ տագ֊նապ աղէտից իմոց. և ես զարդիս կազմ և պատրաստ հասեալ գամ առնուլ՛ ի քէն շնորհս՝ եթէ բարեմոյն կամաք հաշտ եղեալ իցէ քո ընդ իս. ապա եթէ խէթ տակաւին կայցէ՛ ի քեզ, յայնժա՛մ անկեալ՝ ողոքել զցասումն բարկութեանդ։ Այլ ա՛յնէ դու զիմ զԹշնամիան վկայս կալեալ՝ որչափ ինչ ցանգ բարեգործեցի առ Պարսիկս, զձա֊խողակ զայս զիմ բախտ հաճեացիս վարել՛ ի հանդէս առաքինութեանդ՝ քան՛ ի լը֊րումն ցասման բարկութեան։ Ա֊նկուն եթէ վրկես զիս, վրկեա զայրն՝ որ ապաշաւոր առ քեզ յողոք խոնարհի. ապա եթէ կո֊րուսանես, կորուսանես զայրն՝ որ Հելլե֊նացւոց է Թշնամի"։ Զայսոսիկ իբրև ասաց Թեմիստոկղէս, յաւելեալ՛ ի բանս իւր

յայտնեաց մերկացաւ արքային և զաս-
տուածազգեցիկ տեսիլն, զոր ետես ՚ի տան
Նիկոպէնեայ. ՚ի նոյն և զպատգամ Տով
գոլնեանն Ապոլոզեայ, եթէ զիսպիդ պա-
տուէր տայր նմա յառնել երթալ առ ա-
նուանակիցն աստուծոյ. յորմէ և հաստա-
տեցաւ ՚ի միտս՝ եթէ անշուշտ առ նա ինքն
արքայն առաքեցաւ. քանզի երկոքինն նոքա
են և անուանին Աբիայ ՇԷՖ:

Իսկ զայս ամենայն լուեալ Պարսիկն,
ոչինչ պատասխանի արար Թէմիստոկղէայ,
Թէպէտ և զարմացեալ հիացեալ էր ընդ
գեղեցիկ հանճարն և ընդ անվեհեր հա-
մարձակութիւն նորա: Սակայն պատմեն՝
եթէ առաջի բարեկամաց իւրոց երանի
կարդայր նա անձին իւրում, իբրու վեհա-
գունեին վիճակեալ բարեմասնութեան. և
թէ՝ յաղթեա կացեալ նա առ Ափիսան՝
ցանգ զնոյն խորհուրդ մտաց տալ իւրոց
Թշնամեացն, զի զքաջս և զառաքինիս ՚ի
միջոյ անտի իւրեանց տարագիր հանցեն,
զոհս ապա զոհեաց աստուածոցն. և ան-
դէն վաղվաղակի ինձոյից բազմականին
հրաման տայր. և ՚ի դիշերին յայնմիկ՝ առ
աստիկ ինդգին ՚ի ննջել անդ իւրում գո-
չեաց երիցս. Ի՛մ է Թէմիստոկղէս Ափենայի:
Իբրև առաւօտն ծագեաց, խնբէր առեան
զբարեկամացն. հրաման տայր ածել ՚ի ներքս
զԹէմիստոկղէս, որ անցեալ իսկ էր ըստ
գեղեցիկ ակնկալութիւն յուսոյն՝ յորմէ
հետէ յակն էարկ նա զսենեկապետանան ար-
քունի, զի լուեալք զանունն Թէմիստոկ-

ղեայ՝ խեթիւ հայէին ՚ի նա և յիշոցս ևս արձակէին ՚ի նա: Առ այս և Ռոքսանէս հազարապետն՝ անդ յորժամ յառաջոյ նոր բա անցանէր գնայր Թէմիստոկղէս, մինչ դեռ Թագաւորն ՚ի գահոյս իւր բազմեալ էր և այլքն առհասարակ ՚ի լուռթեան կային, ՚ի ցած յոգւոյ հանեալ՝ ասէր այսպէս. "Օ՜ն խայտախարիւ Հելլենացի, արքային բախտ զքեզ աւադիկ ածեալ կայցէ այսր": Այլ սակայն իբրև միւսանգամ երեսեցաւ Թէմիստոկղէս արքային և երկիր եպագ նմա, ողջունիւ ընկալաւ զնա արքայն և մարգասիրապէս ևս խօսեցաւ ընդ նմա. և խոստովաներ անդ զանձն իւր պարտապան Թէմիստոկղեայ՝ երկերիւր տալանդաց, զի ինքնին առեալ զինքն ած առնա, և պարտ և արժան է նմա առնուլ վայելել՝ զոր միանգամ մունետիկն վարձ կարդայր մարդոյն՝ որ կալեալ բերցէ զնա: Եւ շատ ևս այլ առաւել քան զայսոսիկ խոստացաւ նմա, և քաջալերեալ խրախուսեր զնա: Եւ հրամայեաց ևս նմա, ասել համարձակ վասն իրացն Հելլենացւոց՝ որչափ ինչ միանգամ հաճոյ լցէ նմա: Իսկ Թէմիստոկղէս պատասխանի ետ արքային, եթէ խօսք մարդոյ ճշդիւթ նմանեալ էն նկարակերտ ճամկաւոր գործոց. քանզի զոր օրինակ այնպիսի գործք, սակս և խօսք եթէ տարածեալ ձգեսցին՝ ողջ զնկարս պատկերացն ՚ի դէմս բերեն. ապա եթէ ծալեալք ամփոփեսցին՝ ծածկեն զնկարսն և աղարտեն. որ աղագաւ նմա ժամանակի

պէտք էն վասն իրացն այնոցիկ: Զուարճացեալ արքային ընդ գեղեցիկ նմանութիւնն, հրաման ետ Թէմիստոկղէսի առնուլ ինքնին զժամանակն զայն. և իսկ ընդ դրեաց նա յարքայէն տալի մի: Եւ շատ իսկ յետ այնորիկ ուսեալ Թէմիստոկղէս զպարսիկ լեզու, բերան 'ի բերան այնուհետեւ մտանէր խօսէր ընդ արքային: Իսկ որք արտաքոյ կային, կարծէին այնպէս՝ եթէ վասն հելլենացւոցն իրաց բան ձառեալ խօսի: Ալ քանզի փոփոխութիւնք շատք եղեն 'ի ժամանակին յայնմիկ յարքունիս անդր և 'ի բարեկամս արքային, նախանձաբեկ եղեն ընդ նա աւագք և ձոխք, իբրու այն՝ որ և վասն նոցա համարձակեալ էջէ ազատօրէն խօսել ընդ արքայի: Քանզի ո՛չինչ ապաքէն զուգահաւասար էր շուք և պատիւ Թէմիստոկղէսի ընդ այլոցն օտարականաց. այլ նա միանգամայն և 'ի բարեկաւոր որոս արքային միջամուխ, և յամենայն առ անին դեգերանս նորա հաղորդ բաժանորդ էր. որպէս զի և մեր արքային գնայր յանդիման լինէր նա և նստեալ քաղաքավարէր ընդ նմա. առ այս՝ և 'ի հրամանէ արքային ուն կընդիր նստաւ նա և մոգացն և քաղդէից ձառից:

Իսկ անդամօր իբրև Դեմարատոս Սպարտացի հրամայեաւ յարքային խնդրել պարգև, խնդրեաց նա՝ զի ըստ օրինակի Թագաւորաց զնոյր արքունի 'ի գլուխ եդեալ՝ այնպէս 'ի կառս բարձեալ բերիցի ընդ Սարդիա, յառաջ մատեաւ Միլեթոպաւա-

տէս եղբօրորդի արքային՝ կալաւ զաջոյն Դեմարատեայ և ասէ. Խոյրէ այդ էրէէ+ լոանի կոտոփն 'ի ծածկել: Երէ +ո և շանի կայծակեան էջէ 'ի յերուդ, ել վասն այդորիկ արդեօք լինիս դու Աբրամպէդ: Իակ իբրև գալ խումբն յաջոց ընկէց արքայն զԴեմարատոս՝ ցասուցեալ ընդ ինդիրն, և Թուէր ինն այնպէս՝ եթէ անողոքելի այնուհետեւ եղիցի վասն նորա, յաղերս անկաւ Թէմիստոկղէս և ած հաւանեցոյց զարքայն և հաշտ արար ընդ նմա: Եւ պատմեն՝ եթէ որք զկնի եղեն Թագաւորք Պարսից, առ որովք մեծապէս իրք Պարսից խաւնեցան ընդ Հելլենացւոյն, քանիցս անգամ պէտք լինէին նոցա առն ուրումն Հելլենացւոյ, հրեշտակ առաքեալ՝ գրէին առ նա, եթէ վեհագունի ևս բարձի վիճակեսցի նա քան զԹէմիստոկղէս: Եւ պատմեն ևս, եթէ 'ի մեծի աւագութեան անդ Թէմիստոկղեայ և 'ի սպասահարկութեան 'ի բազմաց, իբրև յաւուր միում սեղան մեծահաց և շքեղ առաջի եդեալ կայր նորա, դարձաւ առ մանկունս իւր և ասէ. Ո՞վ որդեակք, կորընչեսջ մեք արդեօք, երէ չեսջ կորուսեալ: Եւ բազումք 'ի մատենագրաց պատմեն, եթէ և քաղաք երեք պարգևեցան Թէմիստոկղեայ վասն հացի, վասն գինւոյ, և վասն սպասու. այն են՝ Մագնեսիա և Լամփսակ և Միւոն: Բայց և զերկուս այլ քաղաքս յաւելուն 'ի վերայ Կիւզիկենոս, Նէանթէս և Փանիաս, զՊերկովզէ և զՊաղէսկեփսէ՝ վասն անկողնոց և վասն հանդերձից:

Իակ էր երբեմն՝ զի լքրև ՚ի պէտս ինչ ի-
րաց Հելլենաց էլ Թէմիստոկղէս ՚ի ծով,
Պարսիկ ոմն այր անուն Եպիքսեենիս՝ որ նա-
խարարն էր վերին Փռիւգիոյ, դարան դոր-
ծեաց նմա. որ և յառաջագոյն պատրաս-
տեալ իակ էր նա արս ՚ի Պիսիդացւոց՝ որ-
սալ սպանանել զԹէմիստոկղէս, ՚ի հասա-
նել և յիջևանել նորա ՚ի քաղաքն՝ որ ա-
նուանեալ կոչի Լէոնդոփէքսօ, այն է՝
Առիւծագլուխ: Արդ՝ պատմեն եթէ ՚ի
ննջել նորա անդ ՚ի միջօրէի, մայրն աստու-
ծոց երևեալ նմա յերազին՝ ասէր. "Ո՞վ
Թէմիստոկղէ, խոյս տուր գու ՚ի գլխոյ ա-
ռիւծուց, զի մի պատահեսցիս գու առիւ-
ծուն: Իակ ես փոխարէն այսմ խնդրեմ ՚ի
քէն ինձ սպասարկու զՄնէսիպտոլոմէն": Խռովեցաւ զահի հարաւ Թէմիստոկղէս, յարեաւ յաղօթս եկաց առ դիցուհին, և թողեալ զարշահետ ուղին՝ ընդ այլ ճանա-
պարհ շրջան առեալ՝ դիմեաց անց զտե-
ղեաւն, և այլուր արար երեկօթս: Եւ դէպ
եղև՝ զի մին ՚ի գրասուց անտի որ քար-
ձեալ տանէին զնորոյն Թէմիստոկղեայ՝ անկաւ ՚ի գետ. ուստի և ծառայք նորա զպաստառակալն զԹացեալն արկեալ տարածեցին ՚ի ցամաքեցուցանել: Իակ ան-
դուստ արքն Պիսիդացիք առեալ զտաւերս իւրեանց՝ յարձակեցան ՚ի վայր անդր. և զտարածեալ պաստառակալն ՚ի լոյս լուա-
նին ոչ կարացեալք ճշդրիտ տեսանել, հա-
մարեցան եթէ անչուշտ Թէմիստոկղեայ խորանն էցէ, և զնա լինքնին գլխովին գտա-

նիցեն հանգուցեալ ՚ի ներքս : Իսկ իբրև մերձ եղեալ ՚ի վեր առին զպատառականն, անկան ՚ի վերայ նոցա պարեկապանքն և ձերբակալ արարին զնոսա : Եւ այսպէս ապա անձնապուր ՚ի վտանգէն եղեալ Թեմիստոկղէս, և հիացեալ զարմացեալ ընդ երևումն դիցուհւոյն, տաճար մի Դիոնէոնէայ կանգնեաց ՚ի Մագնեսիա, և զդուստր իւր զՄնեսիպտողեմէ կարգեաց անդ ՚ի քրմուհի :

Իբրև եկն նա ՚ի Սարդիա, և պարապեալ ՚ի գործոց չքշէր ՚ի զնին և յայց ելանէր չինուԹեան մեհենեացն, և տեսանէր ձօնս բազում յոյժ ձօնեալ ՚ի նոսա, եկն և ՚ի մեհեան անդր մօրն աստուծոց, և ՚ի նմա յանկն արկանէր զպղնձի ձուլածոյն Օրիորդին՝ որում անուն կարդային Խթօֆ՛օս, այն է՝ ջրաբարձ, երկկանգնեան մեծուԹեամբ. զոր նա ինքն Թեմիստոկղէս՝ մինչդեռ ինքն յԱԹենս ոստիկան ՚ի վերայ կարգեալ կայր ջրոց՝ ձօնեաց դից. ձուլեալ զայն ՚ի դրամոց տուգանաց արանցն զորս ՚ի ձեռս եբեր՝ մինչ գողանային նոքա ըզջուրն և այլուր փոխէին զերԹն : Արդ՝ եԹէ դժկամակս եղեալ նա ընդ գերուԹիւն ձօնին իւրոյ, և եԹէ կամեցեալ իմն ցուցանել Աթենացւոց՝ քանիօն իցէ նորա շուք և պատիւ և իշխանուԹիւն յերս արքունի, չոքաւ զբանիւք անկաւ ընդ նախապարին Վիւգիայ և խնդրեաց զձուլածոյն զայն Օրիորդին արձակել անդրէն յԱԹենս : Ջայրացաւ բարբարոսն ընդ բանսն,

և սպառնացաւ ևս տալ առ արքայն նա-
մականի վասն իրացն. երկեաւ Թէմիստոկ-
ղէս և գնաց ապաւինեցաւ ՚ի կանանոցն և
զհարձս նախարարին ամոքեալ դրամովք,
այնպէս ապա զնջոյց զնա ՚ի ցասմանէ բար-
կութեանն: Եւ այնուհետև Թէմիստոկղէս
մեծապէս զգուշութիւն եդ անձին իւրոյ.
քանզի երկուցեալ զանգիտէր ՚ի մախանաց
անտի բարբարոսացն. սակայն ոչ եթէ՝ որ-
պէս Թէոպոմպոս ասէ՝ Թափառեալ շրջէր
ընդ Ասիա, այլ անդէն ՚ի Մագնեսիա տուն
բնակութեան կալեալ՝ վայելէր զպտուղ
զմեծամեծ պարգևաց արքային, և շուք
պատուոյ ունէր հաւասար աւագանւոյն
Պարսից, և շատ ևս ժամանակ յանդորրու
եկաց մնաց անդէն. քանզի և իրացն Հելլե-
նացւոց ուշ չունէր Թագաւորն վասն մեծի
անպարապութեանն իւրոյ ՚ի գործս վեր-
նագաւառացն:

Ա յլ երբև Եգիպտոս վտարանջատ յար-
քայէ՝ նիզակակից իւր ունելով զԱթենա-
ցիսն, և եռաթիռն նաւք Հելլենացւոց
մինչև ՚ի Կիպրոս և ՚ի Կիլիկիա նաւեալք
հասին, և կիմոն ինքնին տիրացաւ ծովուն.
յարեաւ ապա արքայն զդէմ ունել Հել-
լենացւոցն և սանձել զյառաջադէմ խա-
ղալ նոցա ՚ի վերայ նորա: Հապա խաղա-
ցին գնացին գունդք գունդք զօրաց, և զօրա-
վարք ամենայն ուրեք արձակեալք գային:
Եկին հասին և ՚ի Մագնեսիա հրեշտակք
առ Թէմիստոկղէս, և հրաման արքունի բե-
րին նմա յառնել ձակատել ընդդէմ Հել-

լենացւոց, և զԻւր խոստմունսն հաստատուն առնել: Բայց Թեմիստոկլէս ոչ առ ցասման սրտմտութեանն վառեցաւ ընդդէմ քաղաքացեացն, և ոչ դարձեալ առ այնչափ մեծաչուք պատուոյն և աւագութեան և զօրութեանն գրգռեցաւ լինել ՚ի մարտ պատերազմին. այլ համարեալ՝ եթէ ոչինչ էլք բարեաց Թերևս իցեն գործոյն այնորիկ, նա զի և յայնժամ Եղեսգա ունէր իւր զօրավարս մեծամեծս և առաքինիս, և Կիմոն ինքնին պանչելահրաշ յաջողեալ էր յերս Հելլենացւոցն. և զի առաւել քան զայս ամենայն՝ մեծապէս նա պատկառ կայր նահատակութեանց արութեանց անձին իւրոյ և գեղեցիկ յաղթանակացն. ապա վասն այսոցիկ ամենայնի՝ երբև խորհուրդ քաջ այն Թուեցաւ նմա՝ վախճան վայելուչ 3 գնել կենաց իւրոց, զոհս զոհեաց դից և զբարեկամին և զսիրելին ՚ի մի խըմբեալ և ողջագուրեալ, ցլու արիւն 4 առ և արբ, ըստ հասարակաց հանբաւոյն: Իսկ որպէս կէսք ասեն՝ Թոյն իմն վաղամահ ինքնին առեալ անդանօր ՚ի Մագնեսիա՝ զրահեցաւ ՚ի կենացն՝ կեցեալ ամն վաթսուն և հինգ, քաղաքավարեալ բազմագոյն մասամբ յառաջնորդութիւն քաղաքին և բանակին զօրաց:

Բայց զպատճառ մահուն նորա և զօրինակին լուեալ արքային, պատուեն՝ եթէ առաւել ևս հիացեալ պանչացաւ նա ընդ այրն. և առ յապայ ցանգ մարդասիրապէս վարեցաւ ընդ բարեկամն և ընդ ընտանիս նո-

րա : Իակ եթող Թէմիստոկղէս որդիս զկնի իւր յԱղքիպպեայ դստերէն Լիսանդրոսի Ազոպեկացւոյ, զԱղքեպտողէս և զՊողեվտոս և զԿղէոփանտոս. զայս Կղէոփանտոս յիշատակէ և Պղատոն խնաստասէր երբեմն ասպականի բնաւից վհատոյն, իսկ յայլ ինչ երս այր խոտան : Բայց յերիցագունից նորայն զաւակացն՝ Նէոկղէս միևչդեռ տակաւին տղայ էր՝ խածեալ ի ձիոյ մեռաւ. իսկ զԴիոկղէս՝ հաւ նորա Լիսանդրոս յորդեգիրս իւր ընկալաւ զնա : Եղեն Թէմիստոկղեայ և դստերք բազումք. յորոց և զՄնեսիպտողեմէն ծնեալ յերկրորդ ամուսնութենէն, ած ի կին եղբայրն Աբքեպտողէս՝ որ չէր նորա հասմահայր. իսկ զԻտալիա՝ Պանթիդէս Փխացի. իսկ զՍիբարէ՝ Նիկոմիդէս Աթենացի. իսկ զՆիկոմաքէ՝ Փրասիկղէս եղբօրորդի Թէմիստոկղեայ. որ յետ մահուն նորա նաւեաց եկն ի Մադնեսիա, և առ զնա յեղբարց անտի նորա. ած ընդ իւր և զԱսիա ի սնուցանել՝ որ կրսերագոյնն էր յամենայն զաւակս Թէմիստոկղեայ :

Ա՛յլ զդերեզման նորա հոյակապ ի հրապարակին ունին Մադնեսացիք : Իակ վասն նշխարացն Թէմիստոկղեայ չէ արժան սիտ դնել բանիցն Անդոկիդեայ, որ առ բարեկամն իւր գրեաց այսպէս. Եթէ Աթենացիք գողացեալ զնշխարս նորա ցիր և ցան արարին. քանզի տէ դա և հնարի զաւազանուցն կողմն գրգռել վառել ընդդէմ խուժանին : Սակս և փխղարքոս յիւրում

պատմուԹԵՆ՝ իբրև յողբերգակ տեսարանի մենաբեննայ լինն ամբարձեալ և 'ի մէջ անդր ածեալ կացուցեալ զնէոկլէս զոմն և զԴեմոպողէս իբրու որդիս Թէմիստոկղեայ, հնարս հնարի գուԹ և գորով շարժեալ 'ի սրտի, զոր և ոչ ոք արդեօք՝ Թէպէտև 'ի ուամկաց ոք էցէ՝ անգիտասցի ԵԹԷ հիւսուածոյ է բանն: Իսկ Դիոդորոս Պերիղացի 'ի դիրս իւր յաղագս Ըէրմաց ասէ (իբրու 'ի կարծ առասԷԼ՝ քան ԵԹԷ դիտումԹեամբ), ԵԹԷ առ Պիրեան նաւահանգստին 'ի հրուանդանէ անտի որ 'ի կողմն Ազկիմոսի՝ ձգեալ տարածի վայր մի իբրև բաղուկ. և 'ի ներքին գոգ անդր նորա՝ յորում խաղաղական յոյժ է ծովն, կայ խարխս հաստահարուստ. և որ շուրջ զնովաւ բազնաձևն՝ այն է ասէ դերեզման Թէմիստոկղեայ: Եւ համարի սա 'ի միտս իւր, ԵԹԷ և Պլատոն ինքնին կատակերգակ վկայէ իւրոց բանից 'ի քերԹուածս տողից այսոցիկ.

Իսկ քոյ դամբան 'ի դէղեցիկ
Կայ ամբարձեալ կարկառուն,
Փեզ 'ի ծովէ վաճառականք
Ողջոյն տացեն առաջին:
Ձեզրս նաւաց նա և զմուտս
Համբուն տեսցէ քոյդ դամբան,
Եւ 'ի զընին՝ է զի կայցէ
Նաւաց վազից 'ի մերցման:

Իսկ առ Ձեռն Թէմիստոկղէսայ՝ և մինչև ցա-
ւուրս մեր շուք պատուոյ տակաւին պա-
հէր ՚ի Մագնեսիա. յորս և վայելէր ինք-
նին Թէմիստոկղէս Ամենացի, այն՝ որ եղև
մեր կենակից և բարեկամ առ Ամմոնիոսի
խնամոսասիրի:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Եւ զնաւդ Պղուտոսիք աստանօր նիրհէ. և զգործ զայն զԹէմիստոկղեայ զնա բարբարոսականն՝ ոչ դատի և դատակնքէ:

2. Քանզի դրօշեալ պատկերն դիցուհւոյն Աթենասայ էր վառեալ վահանաւ, յորում կռեալ կայրն ահաբեկ կերպարանք Դժոխայնոց, որ անուանեալ կոչին Գորգոնէանք:

3. Վախճան ոչ անվայելուչ միայն, այլև յանցաւոր և անբանական. զի տէր կենաց մարդոյ նա միայն է՝ որ ետն զնա. և որ չետ ինքեան զկեանս, չկարէ և բառնալ:

4. "Ցլուց արիւն՝ ասէ Պլինիոս՝ սրագ արագ մածնու և սերտի: Ուստի և յոյժ մահացու է յարբուին": Ընդհակ առ մերն յիշատակ զնրացն. "Ջցլու միս ուտել՝ ասէ Եղնիկ, դարման է մարմնոյ. բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ, սատակի": Եւ Թուի 'ի Պարսս սովորեալ այս մահացու բաժակ, ըստ որում և Թէմիստոկղեայն. զոր և Խոր. ասէ. Գիրք. Գ. 17. գրել Շապհոյ առ Տիրան, եթէ ընդ զօրականն՝ "Յասուցեալ մեր, սաղարի նոցա ցլու արբուցաք արիւն":

ԿԱՄԻԼԼՈՍ

ՅԱՂԱԳՍ Փուրիոսի Կամիլլոսի՝ թէ պէտ և շատ ինչ և մեծամեծք արձանագրեալ կան, սակայն յաւէտ մանաւանդ և նորանշան՝ ի նոսա այն է՝ զի որ նահատակութիւնս բազումս և մեծամեծս ուղղեաց՝ ի զօրավարութեան անդ իւրում, և որ հնդկաց անգամ իշխանապետ կարգեցաւ, և որ չորիցս յաղթանակս փառաւորս կանգնեաց, և հիմնադիր ևս Հռովմայ երկրորդ՝ զհամբաւսի հարաւ, սա այս Կամիլլոս երբէք և ոչ միանգամ հիւպատոսութեան բարձին եհաս: Իսկ պատճառք այսորիկ էր՝ որ յայնժամ քաղաքին վիճակ, յորում ժողովուրդ առհասարակ երկպառակ՝ ի Սինկղիտոսէն՝ զդէմ կացեալ ոչ թոյլ տայր ընտրութեան հիւպատոսաց, այլ տրիբունաց՝ ի ձեռս տային զզօրավարութիւնն, որք թէ պէտ և հիւպատեան իշխանութեամբ

և զօրութեամբ զամենայնն ճոխաբար տա-
նէին և բերէին, սակայն և ոչինչ այնպէս
գժոխըմբերելի էր նոցա իշխանութիւնդ՝ ի
պատճառս բազմապետութեանն: Քանզի
հրամանատարութիւն քաղաքին ոչ ի ձեռն
երկուց ոմանց՝ այլ ի ձեռն վեցից արանց,
ափոփանս և գիւր ի նեղքս ընծայէր նոցա՝
ոչք միանգամ խեթիւ հայէին ի սակաւա-
պետութիւն անդր:

Ա՛յլ ի ժամանակին յայնմիկ Թէպէտ
և առաւել փառօք և արդեանց նահատա-
կութեամբ բարգաւաճ էր Կամիլլոս, յայտ
ամենայնի վերայ ոչինչ արժան համարեցաւ
նա յակամայ կամն ժողովրդեանն կարգիլ
հիւպատոս. Թէպէտ և բազում անգամ
յայնժամ յանձին կալաւ քաղաքն և իսն-
դրէր զհիւպատոսութեանն ընտրութիւնն: Բայց
նա յայլ ինչ աւագութիւնս իւր և գվնա-
սին յամենայն առաչնորդութիւնս՝ այնպէ-
ս ի նեղքս ընծայէր զանձն, որպէս զի իշ-
խանութիւնն՝ ևս և ի միապետութեան անդ
իւրում՝ հասարակաց ամենեցուն էր. խակ
փառք և շուք պատուոյն՝ իւրում անձին ա-
ռանձին, Թէպէտ և յիշեալ անդ իւրում
ի միասին ընդ այլոց: Եւ էր առաչնոյն
պատճառք՝ չափաւորութիւն և համեստու-
թիւն անձին նորա՝ որ յիշեալ իւրում ոչ
ինչ նախանձաբեկ առնէր զսահմանելին:
Խակ վերջնոյն պատճառք՝ գեղեցիկ խոհե-
մութիւն նորա, որով զամենեքումբք գե-
րազանցեալ էր նա ըստ հասարակաց վկայու-
թեանն: Ա՛յլ յայնժամ չև էր այնչափ ա-

կանաւոր Փուբլիոսեան զարմին. և նա ինքն Կամիլլոս առաջին ամբարձաւ 'ի փառս՝ 'ի մեծի պատերազմին ընդ Եկեւանց և Վոլսկեանց, զինուորեալ առ իշխանապետաւն Թեամբն Պոստումիոսի Տուբերտոսի: Քանզի յերիվար աշտանակեալ շահատակեր յառաջոյ բանակին, և առեալ վերս և հարուածս 'ի կողն՝ ոչինչ տեղի ետ 'ի մարտէն. այլ զսայր փքնին խորամուխ 'ի վերան ինքնին 'ի բաց քարշեալ՝ այնպէս նահատակեալ խառնեցաւ 'ի մարտ ընդ թշնամիսն ընդ քաջս և ընդ կորովիս, և 'ի փախուստ դարձոյց զնոսա: Եւ յայսմանէ ապա 'ի վերայ այլոց ձրից և մրցանակացն զոր տաբաւ, կարգեալ ընտրեցաւ և համարակալ. և այս չուք պատուոյ իշխանութեան մեծապէս էր առ նովին ժամանակօքն:

Ա՛րդ 'ի համարակալութեան նորա՝ դէպ եցիկ գործոյ ուղղութեան յիշատակ առնեն վասն նորա. քանզի զամուրիսն՝ էր զի բանիւք ածեալ հաւանեցուցեալ, և էր զի սպառնալեօք տուգանացն ահացուցեալ՝ լծակից արար կանանց այրեաց. քանզի բազում այրիք էին յայնժամ 'ի պատճառս մարտից պատերազմացն: Հանդերձ այսու՝ և այլ գործ կարևոր պատմեն վասն նորա. զի և զորքս՝ որ յառաջն ազատք էին 'ի հարկաց, 'ի մի համար առեալ գրեաց: Իսկ պատճառք էին այսորիկ անդուլ զինուորութիւնք մարտից, որոց պէտք էին մեծամեծ ծախուց: Եւ որ առաւել քան զամենայն տագնապեր, պաշարումն Վէյացւոց.

զորս կէսք Վ. Հինէհտանոսս անուանեն: Եւ էր Վ. Հյացւոց քաղաքն՝ մայրաքաղաք Տիւբրենիոյ, զինուն առատութեամբ և զօրականին բազմութեամբ ոչինչ իսնարհագոյն քան զՀռոմ. իսկ ընչաւէտութեամբն և կենացն բարեկենդանութեամբ և դրդանոքն փափկութեամբ և բազմահանդէրձ շքեղութեամբն՝ պերճ և պանծալի. մարտս պատերազմի բազումանգ և կռուեցաւ քաջաբար, և վասն բարձի աւագութեանն և տիրապետութեանն գլխովին ի վեդ և ի պայքար մրցեցաւ ընդ Հռոմայեցւոց. իսկ զայնու ժամանակաւ տէղի տուեալ էր ի պատուասիրութենէն, քանզի անկեալ բեկեալ էր ի մեծամեծ մարտս պատերազմաց: Ա. Լբնակաւորքն ի ներքս պատուար մեծ և քաջամուր ածեալ քաղաքին, և զինուք զարդուք և նետից հանդերձանօք և ամբարօք ցորենոյ և ամենայն կազմածոց պատրաստութեամբ լցեալ զքաղաքն, յանդորրու և յաներկիւղս կացեալք՝ քաջաբար բերէին պաշարմանն՝ որ ժամանակս ձիգս եկաց մնաց, և ոչինչ պակաս տաժանակիր և դժոխըմբեր գտաւ ևս նոցուն իսկ պաշարողացն: Քանզի Հռոմայեցիք ընդ ժամանակ ոչինչ հարուստ և միայն ամբայնի սովորեալ էին արտաքոյ ի մարտ զինուորիլ. և ժողովեալք ի ներքս՝ առ ոչին ձմերէին. իսկ յայնժամ նախ առաջին հարկաւորեցան նոքա ի տրիբունից իւրեանց՝ պատնէշ պատել և ամրացուցանել զբանակեցուն յերկրի անդ Թշնամեաց, և զձմեռն

և զամառն անդանօր անցուցանել: Ընդ ամք եօթն դոդցես 'ի գլուխ եղեալ էին պատերազմին այնորիկ. որպէս զի և ամբաստանութիւնք ևս յուզեցան վասն զօրավարացն. և իբրու մեղկագոյնս և դանդաղագոյնս գնացեալք նոքա 'ի պաշարման անդ՝ փոխեցան յիշխանութենէ իւրեանց, և այլք փոխանակեալք կարգեցան 'ի վերայ պատերազմին: 'Ի նոցանէ ապա մի էր և Կամիլլոս, որ յայնժամ այս երկիցս անգամ եկաց տրիբուն. այլ սա 'ի ժամանակին յայնմիկ 'ի պաշարմանն նահատակեցաւ և ոչինչ. քանզի վիճակեալ էր նմա մարտ պատերազմի դնել ընդ Փալիսկեանց և ընդ Կապենեանց. որք 'ի բազում անպատրաստութեան գտեալ զՀռոմայեցիսն՝ զգաստս նոցա յայնժամ աւար հարկանէին. և ոչքոյն ընդ ժամանակ տիւրրենեան մարտին վիշտ բազում հասուցանէին նոցա. իսկ ապա ընկրկեալք յերեսաց Կամիլլեայ, վերջոյանեալք մտին փակեցան 'ի պատուարս իւրեանց, շատ զոք կորուսեալ 'ի գնդէ անտի իւրեանց:

Բայց յետ այսորիկ 'ի սաստիկ դրդռեալ պատերազմին, դէպք եղեն յայնժամ և նորանշան կրկին Ալբանեան լճին, ոչինչ խոնարհագոյն յամենայն աքանչելիս հրաշալուրս և դժուարինս. որ և անբաժ 'ի հասարակ պատճառաց, և ապստամբ 'ի բնաւորական գոլով ընութեանց և 'ի բանից՝ արհաւիրս արկանէր առհասարակ: Էր ժամանակն սկիզբն աշնայնոյ և կատարած ա-

մարայնոյ. ո՛չ տեղատարափք լինէաք էին անձրևոյ, և ո՛չ դարձեալ հարաւայնոյն հովմոց ընչմունք այնչափ տիրացեալ ինչ էին: Եւ քանզի լինաս բազումս և դեռս և ջրադարձս ազգի ազգիս առատութեամբ ունի Իտալիա, ՚ի սոցանէ կէսք խապառ նուազեալ ցամաքեցան, և կէսք դարձեալ՝ կարի սակաւջուրք հանդիպեցան և դանդաղամածք. իսկ գեռք առհասարակ՝ որպէս ցանգ յամարայնի՝ այնպէս ծանծաղք և իտնարհագոյնք գնային: Բայց անդուստ Լիճն այն Ալբանեան՝ որ անդ յիւրում ծոցին բնաւորեցաւ ունել զակն իւր և ՚ի նմին դարձեալ լճանալ, պատեալ շուրջանակի արգաւանդահող լերամբք, յոչինչ այլ պատճառաց արդեօք՝ 2 բայց յածայնոյն, յայտնապէս աձեալ գիշանայր ուռնոյր և ելանէր բարձրանայր մինչև ՚ի կողս լերանցն, և անդուստ մինչև ՚ի բարձրակատար գագաթունսն միաձոյլ ընթացեալ հասանէր, անալէկոծ և անծուփ յորդեալ առ ՚ի վեր: Եւ էր այս պանչէլեաց տեսիլ զառաջինն՝ հովուաց զարմանալիք և անդէորդաց. իսկ անդ իբրև ՚ի բուռն յորդումբեննէն և ՚ի մեծամարմին զանգուածոյն չհանդուրժեալ պատատեցաւ թումբ կըճին՝ որ սանձէր ունէր զլիճն յառաջոյ գիջագոյն դաշտագետնոյն, և հոսանք առհասարակ ինքնին թափ առեալ այնուհետև գային ինքանէին ընդ արօրադիր դաշտս և ընդ տընկահխոտ պարտէզս՝ զայրացեալք մինչև ՚ի ծով անդր, յայնժամ ասպա ո՛չ հնուվմայե-

ցնք միայն զահի հարեալք ընդ տեսիլն յա-
պուշ կրթեցան, այլև առհասարակ բնակ-
չացն Խոալնոյ Թուէր լինն այնպէս՝ եթէ
ոչ գուշնաքեայ լինչ իրաց նշանակ էցեն
այն արկածք: Նաև ՚ի բանակի անդ զօրուն՝
որ պաշարեալ ունէին զՎէյացիան՝ բազում
զօրացայ պայքար լսել լինէր վասն բանից
այսորիկ, որպէս զի և առ նոսին Վէյացիան
հասանէր լուր արկածից Ալբանեան լծին:
Եւ զօրօրինակ դէպք լինէին ՚ի բազմաժամա-
նակեայ պաշարմունսն, զի բազում անգամ
կենակիցք միմեանց և խօսակիցք նստին թըշ-
նամիքն, գէպ եղև և առն ուրումն Հռո-
մայեցւոյ ընտանութիւն ունել և քաղա-
քավարութիւն ընդ միում ումեք ՚ի թշնա-
մեաց անտի Վէյացւոց՝ այր փորձ և հմուտ
նախնեացն զօրացայ և վիպից. և Թուէր
այնպէս եթէ և քան զայլս առաւելեալ էր
գիտութեամբ ՚ի գուշակական արուեստին:
Ընդ տեսեալ զսա Հռովմայեցին՝ զի ՚ի
լսել անդ զզէզումն հոսանաց լծին, մե-
ծապէս հեշտացաւ այրն և ունէս արարեալ
ծիծաղէր զպաշարմանէն, ասէր ցնա՝ եթէ
ոչ այդոքիկ միայն ՚ի նշանաց հրաշից պա-
տահէցան ՚ի ժամանակի սոսո յայսմիկ,
այլ և այլ լինչ ևս պատճէնից նշանք քան
զայդոսիկ նորահրաշք երևեցան առ Հռո-
մայեցիս, զորս մոռացուր արդեօք՝ ասէր նա՝
պատմել նմա, զի թերևս հնար լինչ իցէ ՚ի
հասարակաց աղէտսն յանդորրու հանել
զնուրան առանձին: Իսկ իբրև բանիցս այսո-
ցիկ մոռացուրացոյնս ընծայեաց զանձն այրն

Վէյացի, և միջամուխ զբանիւք անկանէր ընդ Հռոմայեցւոյն՝ ակնկալեալ գաղտնեաց ինչ պատչէլեաց ունկնդիր և հաստու լինել. սակաւ այնպէս զբանիւք անկեալ ընդ նմա և Հռովմայեցին, ածէր բերէր զնա ընդ իւր մինչև հարուստ միջոցաւ 'ի բաց ձգեցան նոքա 'ի դրանց անտի քաղաքին: Յայնժամ ընդ օգս 'ի վեր առեալ զնա Հռոմայեցին՝ քանզի քաջակորով քան զնա էր, և այն ինչ ևս շատք 'ի բանակէ անտի գիմեցին 'ի վայր անդր, այնպէս ձերբակալ արարեալ զնա և տիրեալ անդէն՝ ած կացոյց զՎէյացին առաջի զօրավարացն: Իբրև յայն հարկ ըմբռնեալ պաշարեցաւ այրն, և գիտէր իսկ քաջ եթէ անձողոպրելի է նախատահմանեալն բան, կացեալ ապա զծածուկս գաղտնեաց պատգամացն՝ որ ասան իւրոյ հայրենի քաղաքին՝ մերկանայր առաջի նոցա. իբրու այն թէ՝ ոչ ըմբռնեցի քաղաք Վէյացւոց մինչև Ալբանեան լճին յորդեալ զերեալ լցէ, և հոսեալ գնացեալ ընդ ուղիս ընդ այլս. և յետս ընկրկեալ շրջեցուացեն զնա Թշնամիք և արգելեալ սանձեացեն զնա մի խառնիլ ընդ ծով:

Զայսոսիկ լուեալ Սինկղետոսին՝ 'ի վրան տարակուսի մնանէր. ապա լաւ համարեցաւ առնուլ առաքել 'ի Դելփիս՝ հարցանել զաստուած: Եւ որք առաքեցանն՝ արք փառաւորք և մեծամեծք էին, Կիտոս Լիկինիոս և Վալերիոս Պոտիտոս և Փաբիոս Ամբուստոս: Նաւեալ սոքա հասին անդր և հարցեալք յաստուծոյն՝ դար-

ձան եկին ածեալք ընդ իւրեանս և այլ ևս պատգամս գուշակութեանց, որ ազդ առնէին Հռոմայեցւոց՝ եթէ ինչ ինչ ի հայրենասանդ կարգաց իւրեանց հեղգաբար ի մոռացօնս դարձուցեալ են նոքա ի տօնախմբութիւնսն՝ որ անուանեալ կոչին Լուդիհրոսք։ Իսկ յաղագս Ալբանեան ջրոյն հրամայն տայր, զի յետս ընկրկեալ զայն որչափ միանգամ ձեռնհաս լցեն՝ ի ծովն անսխ դարձուացեն զնա ի վեր կոյս անդր յառաջին ծոց իւր. ապա եթէ այդ յանհնարինն լցեն, փոսս և խորս և խրամս հատեալ ի գաշտին, շրջեցուացեն զջուրն և այնպէս նուազ արասցեն զնա։ Իբրև այս ամենայն պատգամաւորեցան առ նոսա, այնուհետև քահանայքն ի պաշտամունս զոհից իւրեանց փութացեալք պարապեցան, և խաժամուժն դարձաւ առհասարակ յաշխատութիւն գործոյն՝ յետս առնուլ ընկրկեալ զջուրն։

Բայց ի տաճարին ամի մարտի պատերազմին ի բաց հանեալ Սիննկղիտոսն միանգամայն զամենայն իշխանս և զզօրավարս, իշխանապետ կարգեաց եդ զԿամիլլոս։ Նա անդէն զօրավար այրուձիոյն ընտրեալ իւր զՀուռնեղիոս Սկիպիոն, առաջին յաղօթս կացեալ ուխտս եդ աստուածոց, զի եթէ վախճան գերդեցիկ և փառաւոր հղիցի մարտի պատերազմին, տեսարանս մեծամեծս հանդիսից նա ի նեղքս ընծայեցուսցէ, և տաճար մի և կառուցեալ սրբեսցէ դիցուհոյն՝ զոր Հռոմայեցիք անուանեալ

կոչեն Մայր Մատուռէ: Իսկ զՄատուռն զայն՝ ի պաշտամանց անտի զոհից այսր դիցուհւոյ համարեաց ոք արդեօք լինել զնոյն ինքն Էֆոնէայն, այն է՝ Սպիտակ Դիցուհի: Քանզի յաղախնեայց զոմն ի գաւիթ մեհենին առեալ մուծանեն կանայք, և գաւազանօք հարկանեն զնա և ասպա ի բաց վարեն ի տեղւոյն. և փոխանակ որդւոյ՝ զերբօրորդիս իւրեանց ի գիրկս բարձեալ բերեն, և գործեն կատարեն անդ ի ժամու զոհից զայն ինչ՝ զոր միանգամ արարին դայեակքն Դիոնիսեայ. և կիրս ցուցանեն հանգուցատիպ կրից՝ զոր կրեալ նոքա ի պատճառս հարցին:

Իսկ Կամիլլոս յետ կատարելոյ զաղօթիան և զուխտն՝ յարձակեցաւ ի վերայ փալիսկեանց. և սասիկ մարտ պատերազմի տուեալ՝ նշան յաղթութեան կանգնէ ի վերայ նոցա առհասարակ և կապիներանցն՝ որ նիզակակից քն էին նոցա: Յետ այսորիկ չու առնէ խաղալ գնալ ի պաշարուածն անդ Վէյացւոցն, և մրցանս յոյժ տաժանելի և դժնդակ տեսեալ զյարձակուածն ի վերայ քաղաքին, հրամայէ ական բազում հատուցանել. քանզի և որ շուրջանակի զքաղաքաւն հող գետնոյն առհասարակ քայքայեալ յոյժ էր ի փոսս և ի գուբս, և հեշտին ևս էր ի խորս անդ տանել խաղացուցանել զվատսակ գործոյն գաղտ ի թշնամեաց անտի: Իբրև այսպէս ըստ սկզբնակալութեան յոյսն յաջողեցաւ նմա գործն, այնուհետև ինքն արտաքուստ արտաքս յարձակեր ի

վերայ քաղաքին, զի՝ ի պատուարս պարըսպայն հրաւիրեալ ածցէ զԹշնամիսն: Իսկ այլք յիւրոց անտի ԹաքԹաքուր գաղտագողի ընԹացեալք ընդ ականն, ելին մտին՝ ի ծածուկ միոչէ՝ ի նեղքս անդ՝ ի դղեակն, ուրանօր տաճարն էր Հերայ. և էր այս տաճար մեծ յոյժ քան զամենայն տաճարս քաղաքին և մեծապէս պատուեալ յամենեցունն: Ընդանօր՝ ի տաճարին՝ պատմեն՝ եԹէ դէպ լինէր՝ ի նմին ժամանակի զօրավարին Տիւրրենացւոց զոհս կատարել. և անդ լերդահմայ գուշակն յակն արկեալ զախտնդիս զոհին, բարձրաձայն գոչեաց և ասէր. եԹէ՝ զյաղԹուԹիւնն գվնասվին տացէ աստուած՝ ի ձեռս առն՝ որ զզոհսն զայնոսիկ՝ ի գլուխ հանեալ կատարեացէ: Զձայն զայս լուեալ Հռոմայեցւոցն՝ որ ականամուտք լեալ էին, անդէն փուԹանակի պատառեալ հերձին զԹանձրուԹիւն յատակին, և աղաղակ բարձեալ և՝ ի շահին շառաչիւն զինուց միանգամայն ոստեան՝ ի վեր. անդ իբրև ահաբեկ եղեալ Թշնամեացն՝ ի փախուստ խուճապեցին, սոքա առին յափշտակեցին զախտնդիս զոհին, և եկեալ բերին առ Կամիլլոս: Ա՛յլ զայսոսիկ Թերևս հանդուներորդ առասպելացս կարծեսցէ ոք արդեօք:

Արդ իբրև բռնուԹեամբ առաւ քաղաքն, և Հռոմայեցիք խուժեալ՝ ի նեղքս՝ ածէին կուտէին հարստուԹիւնս ամբաւս, Կամիլլոս՝ ի բարձանց անտի դղեկին՝ ի զինի կայր իրացն. նախ եկաց նա վայր մի և ար-

տասուեաց. և ապա իբրև երանի կարդային նմա՝ որք շուրջ զնովաւն կային, նա ամ֊բարձ զձեռս իւր առ դիս, և յաղօթս կա֊ցեալ ասէր այսպէս. "Արամազդ վեհա֊փառ, և դուք աստուածք՝ որ դիտէք զիննէք զգործս բարիս և զչարս. դուք ինքնին գի֊տէք՝ զիարդ Հռոմայեցիքս ոչ յանիրաւի ինչ, այլ ի հարկէ ստիպեալք զէն առաք վրէժ խնդրել պատուհասել զքաղաք զայս զոխերիմ արանց և զանիրաւաց: Ապա ե֊թէ (կրկնեաց նա անգէն) և ի մեր վերայ հանդերձեալ էցեն աղէտք չարեաց ի փո֊խադարձ բարեբաստուԹեանս մերոյ, աղա֊չեմ և աղերսեմ՝ զի զդոյն աղէտս ի բաց ի քաղաքէն դարձուցեալ Հռոմայեցւոց և ի բանակէ դոցա, յիմ գլուխս առեալ կու֊տեացես յոյժ փոքրոգի և խուն մի արկա֊ծիւ": Զայս իբրև ասաց, (և զորօրինակ սովորութիւն էր Հռոմայեցւոց յետ աղօ֊Թիցն և երկրպագուԹեանն գառնալ յաջ կոյս), իբրև այնպէս գառնայր և Կամիլլոս, գԹեաց և անկաւ: Խռովեալ ամբոխեցան որ շուրջ զնովաւն կային. նա դարձեալ միւսանգամ յոտին կանգնեալ՝ եկաց և ա֊սէ. "Ըստ ինդրուածոց աղօԹիցս պատա֊հեաց ինձ անկուածիդ փոքրիկ ի վերայ մե֊ծափառ բարեբախտուԹեանս": Բայց զգ֊քաղաքն յաւարի առեալ, եդ ի մոխ զդրօ֊շեալն Հերայ փոխադրել ի Հռոմ՝ ըստ որում և ուխտեալ իսկ էր: Եւ իբրև ժո֊ղովեցան վասն այսորիկ Ճարտարք արուես֊տաւորաց, ինքն Կամիլլոս զոհ զոհեաց և

անկեալ ալերսեր զդիան, փոյթ խնամոց ունել՝ ի վերայ Հռոմայեցւոց, և մտադիւր յօժարութիւ գալ բնակակից լինել դիցն՝ որոց բնակութիւն կալեալ էին ի Հռոմ: Իսկ դրօշեալն՝ որպէս զրուցեն՝ եթէ՝ ի ցած բարբառեալ ասացեալ էցէ, կամիլ և հաճ և հաւան գոլ ընդ բանն: Սակայն Լիվիոս ասէ, եթէ Կամիլլոս յաղօթս կացեալ և մերձեալ՝ ի դիան ողոքէր և հրաւիրէր. և յայնժամ պատասխանի ետուն ոմանք որ զնովաւն կային, եթէ և նա ինքն զնոյն կամի և հաճեալ է ընդ բանն՝ և մտադիւրա- դոյնս ևս զհետ երթայ նոցա:

Ա՛րդ՝ որք միանգամ զհրաշսդ զայդ հաստատեն և ընդունին և պաշտպանեն, մեծապէս զօրավիդն է այնպիսեաց դէպ բախտի քաղաքին այնորիկ. որում յայդ- չափ դուշնաքեայ և արհամարհ սկզբնէ՝ յանհնարիցն էր արդեօք յայդչափ փառս աւագութեան և զօրութեան ելանել բարձ- րանալ, եթէ չէր աստուծոյ ինքնին զօրա- վիդն բազմադէմ և մեծամեծ յայտնու- թեամբք երբեք երբեք երևեալ՝ ի մէջ նո- ցա: Ա՛յլ սակայն և ինչ ինչ նմանաւոիպ հրաշիցս՝ ի ներքս բերեն, ըստ որում այն՝ զի դրօշեալք բազում անգամ երևեցան և քրտունս հոսել. և զի՝ և երբեք հեծել և յոգւոց հանել: Դարձեալ և քանդակա- գործ պատկերք ցուցան երբեք դարձուցա- նել զերեսս, այլ և ակնարկի առնել աչօք. զորս պատմեն ոչ նուազունք ոմանք յա- ռաջնոցն: Նաև մեզ ինքնին՝ ի ժամանակս

կից մերոց արանց լուեալ՝ մնրթի էր աստա-
նօր բազում ինչ պատմել արժանահրաշս,
զորովք ոչ ունիցի ոք արդեօք վայրապար և
անխորհրդաբար ծիծաղել և արհամարհել:
Բայց սակայն այսպիսեաց բանից՝ վտանգ
մեծագոյս է՝ միանգամայն և կարի հաւա-
տալ և կարի անհաւատանալ, ի պատճառս
մարդկային տկարութեան՝ որ սահման չու-
նի և ոչ ի չափու երբեք գիտէ պահել
զանձն. այլ է զի՝ ձգեալ բերի ի անապաշ-
տութիւն և յամբարտաւանութիւն. և է
դարձեալ՝ զի յանփոյթութիւն աստուա-
ծայնոցն և յարհամարհութիւն: Ա յլ որ
յայսոսիկ քաջ և լաւ խորհուրդ՝ բարե-
պաշտութիւնն է, և գերեցիկ առածն՝ եթէ
մի ինչ ի՞ւրէ:

Իակ Կամիլլոս յայնժամ առ մեծու-
թեան նահատակութեան գործոյն, զի ըզ-
քաղաքն զայն ախոյեան Հռովմայ ի տաս-
ներորդ ամի պաշարմանն վանեալ էառ,
ի նոյն և ի լուր բազմագէմ երանութեանցն
զոր կարդային նմա, ամբարձաւ ի հպար-
տութիւն գոռոզութեան և մեծամտեցաւ
ի խորհուրդս գժպատեհս իչխանի՝ որ ընդ
օրինօք և ընդ կարգօք քաղաքին կարգեալ
էր: Եւ կարդեաց յաղթանակի հանդէս
բարձրայօնս և ճոխաբար շքով. առ այս՝ և
քառաձիս լծեալ ի սպիտակ երիվարաց՝
եւ աշտանակեաց ի նմա, և այնպէս յա-
ծեալ շրջեցաւ ընդ Հռոմ. զոր ոչ յա-
ռաջնոց ոք ի զօրավարաց և ոչ ի վերջնոց
ոք երբեք չարար յայսպիսեաց առաւ: Քան-

զի սուրբ և նուիրական համարին հռոմայե-
ցիք զկառան այնպիսի, ընծայեալ և սրբեալ
զայն հօրն և ալքայլին աստուածոց: Եւ յայս-
մանէ ապա խոժոռ ակամբ հայեցան ընդ
նա քաղաքացիք՝ որ երբէք չէին սովորեալք
տեսանել զայնչափ խեռուԹիւն: Բայց և
պատճառս երկրորդ յաւել նա ՚ի նոյն, զի
ընդդէմ դարձաւ օրինացն՝ որ չերկուս
կամէր բաշխել զընակիչս քաղաքին: Քան-
զի տրիբունք ժողովրդեան առաջի արկին,
զի խուժան ռամկին միանգամայն և Սինկ-
ղետոսն ՚ի կրկին բաժանեացի. կէսք դադա-
րեալք անդէն ՚ի քաղաքին բնակուԹիւն
կալցեն. և կէսք վճռակ հանեալ՝ չուեալք
փոխադրեացին ՚ի քաղաք մի՝ զոր ընդ ձե-
ռամբ իւրեանց կալեալ էին, զի այսպէս
ասպա բարգաւաճիք ևս եղիցին նոքա. և կրկին
այս մեծամեծ և գեղեցիկ քաղաքօք պահ
և հովանի կալցեն նոքա ողջոյն գաւառին
և ամենայն գոյից իւրեանց: Ընդ խուժան
ռամկին որ արդէն իսկ աճեցուն էր և բազ-
մահարուստ՝ մուտ իւրացոյնս յանձին կա-
լաւ զբանն, և զօրհանապազ խռնէր կուտէր
և խուով հարեալ ցանգ յատեան խորհըր-
դոյն՝ խնդրեր արկանել վճռակս: Իսկ ձե-
րակոյտն և այլք ևս ՚ի ձոխից և յաւագաց
քաղաքին հաստատեալք ՚ի միտս, եԹէ ոչ
բարժանումն քաղաքին իցէ խորհուրդ հնա-
րից տրիբունացդ՝ այլ վարատումն հռով-
մայ, մեծապէս սրտնեալք՝ դիմեալ ապաս-
տան եղեն ՚ի Կամիլլոս: Նա զանգիտեալ
մտաւս ՚ի վեդ գալ, պատրուակս և պատ-

ձառանս ՚ի նեղքս բերէր ժողովրդեանն և անպարապուրթիւնս բազումս, որով և ցանգ խոչ և խուճ արկանէր առաջի օրինացն այնոցիկ: Եւ վասն այսորիկ ցասեաւ ընդ նա ժողովուրդն:

Ա՛յլ մեծ ևս և մերկապարանոց պատճառք առեալ զնա ժողովրդեանն եղև տանջանորդումն ասելին. յորմէ և պատճառս էառ խուժանն, թէ ոչ կարի իրաւացի՝ սակայն և ոչ դէնովին անբանաւոր: Քանզի ուխտ եդեալ էր Կամիլլոս՝ ՚ի խաղալ անդ իւրում ընդդէմ Վէյացւոց՝ որպէս հաւանեալս եմ, զի ՚ի վանել քաղաքին՝ դիցն Ապողոնի արբեալ նուիրեցեալ զտասանորդն: Բայց ապա յառնուլ քաղաքին և յաւար հարկանել, եթէ ՚ի պատճառս վարանամիտ դանդաղանացն՝ զի մի թերևս խռով լինչ հարցէ ՚ի քաղաքացիս անդր, կամ թէ արդեօք մոռացօնք եղեալ նմա ՚ի մեծաց անտի անպարապուրթեանցն՝ թոյլ ետ ասելով և զոր ուխտեալն էր: Բայց նա ՚ի լռանալ ժամանակի խշխանուրթեան իւրոյ, ազդ արար վասն ուխտին իւրոյ առ Սինկղետոսն: Ջնոյն և լերդահմայ խղճքն բողոք կարդային՝ եթէ ՚ի պաշտամունսն զոհիցն ակն յայտնի երևի ցասումն դիցն, և հաշտարար քաւուրթեան պէտք են ՚ի ժամուն և երախտապարտ շնորհաց: Ապա քանզի յանհնարինն էր յետս նահանջել զեղեալ բաժանումն, վճիռ զայս ետ յայնժամ վասն ուխտին Սինկղետոսն, զի ոք միանգամ առնին յաւարէ անտի, հանդերձ

երդմամբ զտասանորդն այնորիկ ՚ի մէջ ա֊
ծեալ մատուցեն : Եւ եղև յայնժամ
քրիստնէից բազում և ԹալծուԹիւն ամ֊
բաւ ՚ի զօրականին . զի էին նոքա առք առ֊
քաւք , և որք այնչափ քրտնավաստակ տա֊
ժանեալքն էին , և ապա հարկ ՚ի վերայ
կայր նոցա՝ զի զոր ստացան անձանց և
յայլ պէտս վարեալ էին՝ այնչափ ինչ
մասն յայնցանէն ՚ի մէջ մատուցանել :
Իբրև վասն այսորիկ ՚ի տագնապ արկանէին
նոքա զԿամիլլոս , նա յանհնարս մտեալ
գտանել գեղեցիկ պատրուակ՝ երԹեալ
ապաւինեցաւ ՚ի բանն յոյժ ծանծաղա֊
միտ . քանզի խոստովան եղև՝ ԷԹէ մոռա֊
ցօնք եղեն նմա ուխտն Ա֊լ նո֊
քա սրտմտեալ ցասնուին՝ ԷԹէ որ ուխտս
եդ յայնժամ տասանորդել զԹշնամեացն ,
այժմ տասանորդել խնդրէ զքաղաքա֊
ցեացն : Յայսր առնելի վերայ իբրև այր
այր խրատքանչիւր ՚ի մէջ մատոյց՝ որչափ
ինչ պարտականն էր , հաճոյ Թուեցաւ ժո֊
ղովոյն ընդանակ մի ոսկի հանդերձել ՚ի
մԹերից անտի և առնուլ առաքել ՚ի Դէղ
փիս : Ա֊լ քանզի նուազուԹիւն յոյժ էր
՚ի քաղաքին՝ և իշխանք առհասարակ ՚ի խոր֊
հուրդս վարանեալք էին եԹէ աղագս գտա֊
նել վասն այնորիկ , յայնժամ տիկնայք
Հռովմայ ՚ի խորհուրդ մտեալք առանձին ,
որչափ ինչ մէն մի ՚ի նոցանէն զարդս ոս֊
կիս ունէր զանձամբ՝ առեալ զայն տային
՚ի ձօնն յայն . և էր կշիռ ոսկւոյն՝ ուԹ
տաղանդաց : Սակայն և Սինկղիտոսն ինքնին

շուք պատուոյ քաջալայեալ էր հատուցանէր յայնժամ ոչինչացն. եւ վճիռ՝ զի յետ վախճանի մահու նոցա, ըստ որում վան արանցն՝ նոյնպէս և ի վերայ կանանց՝ դրուատից ճառ գեղեցիկ խօսեսցին ի գամ բանին: Քանզի յառաջ քան զայն երբէք չէր սովորութիւն ի կանանց վախճանելոց զոք ներբողել ի հրապարակին:

Յայնժամ ընտրեալ կարգեցան արք երեք ականատեսք յաւագայ անտի. և նաև մի երկայնաձիգ հանդերձեցին կազմեցին լի այրընակիր արամբք, և շքեղ և գունակ գունակ զարդու զարդարեալ, և այնպէս առեալ արձակեցին զնոսա: Եւ դէպ եղև նոցա ժամանակ ձմերայնոյն, միանդամայն և ծով գլխովին անսուգ. և զարմանալիք մեծապէս այն էին՝ եթէ զնարդ նոցա յաջողեցաւ յայնժամ ողջանդամ ճնալ յամենայնէն, և արտաքոյ յուսոյ ակնկալու թեան ապրիլ ի վտանգէն յայնմանէ: Քանզի ի գլխովին նուաղել հոլմոյն, անդուսա ի վերայ անկան նոցա՝ իբրև ի վերայ հինից եռաթիք նաւաց Վխարացւոց առ կղզեաքն Էողեայ. իբրև տեսան յաղերս անկան և զձեռս իւրեանց պաղատահառն տարածանէին, զտեղի կալան Վխարացիքն ի յարձակմանէն. այլ զնաւ նոցա կալեալ առին քարշեցին մինչև ի նաւակայն. և անդ ի վաճառ հանէին զդոյս նոցա և զանձինս նոցա. քանզի աստատակս ծովու համարեցան զնոսա: Իսկ յայնժամ հազիւ ուրեմն ածեալ հաւանեցուցեալ զնոսա

Տիմեսիթէոս անուն զօրավար՝ այր մեծ ա-
ռաքինութեամբ և զօրութեամբ, արձակե-
ցին Թռղին ղՀռոմայեցիան: Եւ Տիմեսի-
թէոս և յիւրոց անտի նաւազից իջուցեալ
՚ի ծով այնպէս յուղարկէր զնոսա, և ՚ի
միասին ընդ նոսա և ինքն արբեր նուիրեր
դից զձօնն զայն: Վասն որոյ և շուք պատ-
ուոյ մեծապէս կալաւ նա՚ի Հռոմ ըստ ի-
րոց արժանեացն:

Բայց ՚ի Հռովմ տրիբունք ժողովրդեան
իբրև դարձեալ միաւանգամ դրդռէին զօ-
րէնսն՝ որ վասն գաղթելոց բնակչաց քաղա-
քին, ՚ի վեր երևեցաւ յայնժամ մարտ
պատերազմին ընդդէմ Փաղիսկեանց. և
զօրացան յայսմանէ աւագք քաղաքին ըն-
տրել իշխանս ըստ իւրեանց կամաց. և զԿա-
միլլոս ինքնին կարգեցին տրիբուն զօրակա-
նին ՚ի միասին ընդ այլոց հնգից. քանզի և
դեպք ժամանակին խնդրէին զօրաւոր զոք՝
որ բարձի աւագութեամբն առաւելեալ
էցէ և փառօք և քաջափորձ հմտութեամբն:
Իբրև հաճեալ հաւանեցան ժողովուրդք,
առեալ զբազմութիւն զօրուն Կամիլլոս՝
դիմեաց ՚ի վերայ Փաղիսկեանց. և եկեալ
շուրջ պաշարեաց զքաղաքն Փաղերիա՝ քա-
ղաք քաջամուր և հանդերձեալ գեղեցիկ
ամենայն պիտոյիւք ՚ի մարտ պատերազմի:
Գիտէր իսկ քաջ Կամիլլոս՝ եթէ դուշնա-
քեայ էինչ գործ չէր առնուլ քաղաքին, և
ոչ սակաւաժամանակեայ քիրտն, սակայն
և այնպէս կամէր թարթափել և դեգերե-
ցուցանել անդէն զքաղաքացիս իւր, զի մի

Թերևս դատարկք և պարապորդք և առ
ունլին նստեալք՝ յուզեացին ինչ ՚ի տարա-
պարա խորհուրդս և յաղմուկս : Քանզի և
ցանգ վայելուչ զգարման զայս վարէին
Հռոմայեցիք՝ ըստ որում և բժիշկք, զամ-
բոխեալ և զաղմկայոյզ զկիրան ՚ի բաց ՚ի
քաղաքէն վարելով արտաքս :

Իսկ փաղերացիք ամենայն ուստեք իբրև
ամրածածուկք յանձնաստաստանք՝ ունչս
արարեալք ծիծաղէին զպաշարմամբն . որ-
պէս զի և բաց ՚ի պահապանաց պարսպաց
քաղաքին, այլք առհասարակ խուսեալ ա-
ռեալ և ՚ի պատմուճանս զարդարեալ՝ այն-
պէս ձեմ առեալ գնային ընդ քաղաքն .
իսկ անդ և մանկունք նոցա խառնէին հե-
տևեալք ՚ի վարժարանն, և ՚ի վարժապետէն
դարձեալ ածեալք բերէին ՚ի վայր՝ շուրջ
զպատուարօք պարապացն ձեմ առնուլ
չքնել և ՚ի խաղս ևս ախոժել : Քանզի և
փաղերացիք լինքնին ըստ Հելլենացւոցն օրի-
նակի՝ հասարակաց զոք ունին վարժապետս.
և կամին՝ զի մանկունք նոցա անդաստին ՚ի
սկզբանէ աննդակիցք միմեանց լինիցին և
կենակիցք : Արդ այս վարժապետ նենգ
գործեալ մատն լինել փաղերացւոցն ՚ի
ձեռն մանկանցն, առեալ զնոսա զօր ամե-
նայն ածէր արտաքոյ քան զպատուարսն .
զառաջինն ՚ի մերձակայ վայրս, և ապա յետ
կրթելոյ առեալ բերէր մուտանգամ ՚ի
նեղքս : Իսկ ապա տակաւ սովորեցուցանէր
զնոսա ձգիլ ևս ՚ի բացեայ և մի՛ ինչ զան-
գիտել ամենևին, իբրու այն՝ որ ՚ի մեծի

անդորրու բնակեալ էցեն: Ի վերջ ուրեմն յաւուր միում առհասարակ ընդ իւր ունելով զմանկունան, անկաւ ի ձեռս յառաջապահ գնդին Հռոմայեցւոց, և անձնամատն եղեալ նոքօք հանդերձ հրամայեաց ածել առ Կամիլլոս: Իբրև ածաւ, եկաց ի մէջ և ասէր վասն իւր՝ եթէ դաստիարակ է մանկանց և վարժապետ, այլ քան զգործ պաշտաման իւրոյ նախասպասիս ընտրեաց ընդունել նմա. և եկեալ հասեալ կայ աւադիկ՝ ողջոյն նմա զքաղաքն բերելով ընդ իւր ի մանկունան յայնոսիկ: Ի լուր բանին՝ կարի գժտիլմ բեր Թուեցաւ Կամիլլեայ գործն. և առ ընթերակացան դարձեալ ասէր, զնարդ գժբնդակ էցէ մարտ պատերազմի՝ որ և բազմադէմ անկրաւորութեամբք և հարստահարութեամբ հասանէ ժամանէ յամբոխ գործոյն. այլ սակայն են են՝ ասէ՝ և ի մարտս պատերազմաց կարգք և օրէնք արանց լացաց և առաքինեաց. և չէ պարտ չէ արժան այնպէս ի դլուխս տանել զյաղթութիւնն, զի ապա հարկ ի վերայ կայցէ չնորհապարտ լինել չարութեան անօրէնն և ամբարիշտ մարդկանդ: Քանզի մեծի և առաքինի զօրավարի պարտ և արժան է զինուորսկիզբն գործոյ քաջութեամբ անձին, և ոչ օտարին չարութեամբ նահատակիլ: Զայս ասաց, և անդէն պաշտօնեայ դահճացն հրամայէր զհանդերձան կապտել ի բաց յառնէն, և զձեռան յետս կապել. իսկ մանկանցն ի ձեռս տալ մականս և խարազանս, զի այն-

պէս գանեալք զմատնիչն՝ հեռամուռք վա-
րեացեն զնա մինչև ի քաղաք անդր։

Փաղերացիք ի ներքս անդ այն ինչ իրազ-
գած լեալ էին մատնութեան վարժապե-
տին, և քաղաքն նոցա այնուհետև՝ որպիսի
ինչ ի գէպ լցեալ կարծել՝ յամբաւ աղէտս
տարակուսանաց յողբ և ի լալիւն պաշա-
րեալ նստաւ. և մինչդեռ ազք ականաւորք
քաղաքին և կանայք ինքնին ի պատուարս
պարսպացն և ի դրունս քաղաքին իբրև խե-
լայեղք և մոլեմտիք այնպէս խուռն ըն-
ծացեալք գային, անդուստ մանկունքն
վարէին ածէին զվարժապետն մերկ ողոր-
մելի և կապեալ ձեռօք գանէին և խոշտան-
գէին, և ձայն բարձեալ կարդային զկա-
միլլոս իւրեանց փրկիչ և աստուած և հայր։
Ընդ ապա ոչ միայն ծնողք մանկանցն,
այլ և առհասարակ որեարն որ ի զնին
կային տեսլեանն, հիացեալք սքանչացան
և միաբան հարան ի սէր արդարութեանն
Կամիլլեայ։ Ուստի և ի ժողով խմբեալք
միահամուռ, առեալ հրեշտակս առաքե-
ցին առ նա, և զամենայն ինչ զիւրեանց ի
նա ապաստան առնէին. նա առ զնոսա և
արձակեաց ի Հռոմ։ Իբրև եկին և յա-
ռեն խորհրդոյն արձանացան նոքա, ա-
սէին այսպէս. եթէ՝ Հռոմայեցիք զար-
դարութիւնն գլխովին նախասպատիւ արա-
րեալ քան զյաղթութիւնն, վարժեցին
հրահանգեցին զփաղերացիս սիրել զնուա-
ճութիւնն առաւել քան զազատութիւն.
և ոչ այնչափ ի զօրութեան զինուց խոնար-

հագոյն քան զնոսա համարին զինքեանս, որչափ յառաքինութենէ նոցա պարտեալս խոստովանին զանձինս: Իսկ երբև ծերացեալ կոյսն միւսանգամ՝ ի Կամիլլոս ապաստան արար դառնալ և վարել զամենայնն, նա ինչ առեալ՝ ի փաղերացւոց և առհասարակ բարեկամութիւն հաստեալ ընդ փաղիսկեանսն, չու արար և մեկնեցաւ: Այլ զօրականքն՝ որ ակն կալեալ ծնայելն յաւարի առնուլ զփաղերացիս, երբև դարձան եկին՝ ի Հռոմ դատարկաձեռինք, ամբաստան լինէին զԿամիլլոսէ առ քաղաքացիս՝ երբոր ժողովրդատեաց ոք էր Կամիլլոս, և խանդայ ընդ բարգաւաճել աղքատաց:

Յետ այսորիկ տրիբունք ժողովրդեան առաջի արկեալ զօրէնսն գաղթելոյ բնակչացն՝ ի Հռովմայ, միւսանգամ կարգային զնուաճան ռամկին արկանել քուէայս: Ընդ ապա Կամիլլոս ոչինչ ամենևին խնայեալ՝ ի պըղծու առելութեան ժողովրդեանն և ոչ դարձեալ՝ ի համարձակաձայն ազատութիւն լեզուին, առաւել քան զամենեսեան երևեցաւ յայնժամ բուռն առնել ժողովրդեան. և զօրէնսն զայն յակամայ կամ իւրեանց խափանեցին. սակայն ընդ Կամիլլոս մեծապէս ցասմամբ յառելութիւն դարձան: Որպէս զի և յաղէտս առ տնին ցաւոց նորա (քանզի մի յորդւոց նորա խոթացեալ՝ ի ժամանակին՝ մեռաւ), ոչինչ ախտակցաբար՝ ի բաց եղին զառելութիւն ցասմանն. Թէպէտ և ինքն Կամիլլոս այր դոլով հեզ բնութեամբ և քաղցր յանչափս՝

Թաղծեալ վշտանայր. այլ իբրև և՝ ի հարց-
փորձ դատաստանի ձայն եռուն նման, նա
առ սգոյն դադարեաց առ ունկն, և վա-
կեալ կայր անդէն՝ ի միասին ընդ կանանց:
Եւ էր նորա դատախազ Լուկիոս Ապու-
լէյոս. և ամբաստան կայր՝ եթէ յընչից ան-
տի տիւրրենական աւարին խորեալ էցէ
Կամիլլոս. և արդեօք և վեղկք էին ևս
դրանց պղնձեաց՝ ասէին՝ թէ տեսան՝ ի
տան նորա՝ որ էին գերւոյն: Խակ խուժանն
կարի զայրացեալ էր ընդ նա, զի և յայտ-
նի էր տեսանելեացն՝ եթէ որով և իցէ
պատճառանօք վճիռ հանդերձեալ էր տալ
ընդդէմ Կամիլլեայ: Յայնժամ՝ ի մի վայր
խմբեալ Կամիլլոս զբարեկամս իւր և զսի-
բելիս և զնիղակակիցան և զհոմիշխանան ոչ
էինչ նուազուցանս՝ ի բազմութեան, յորոց
անկեալ պաղատէր՝ մի անփոյթ առնել
զնուաճս՝ ի պարտաւորութեան իւրում զուր
տարապարտ յաղագս անիրաւ ամբաստա-
նութեանցն, և մի թողուլ լքանել զնա
այսպն և կատակ լինել՝ ի թշնամեաց անտի
իւրոց: Իբրև բազեկամք նորա առհասա-
րակ՝ ի խորհուրդ մտեալք առանձին խօ-
սեցան ընդ միմեանս, և ապա զայս էինչ
պատասխանի արարին նմա, եթէ յաղագս
վճռոյ դատաստանի նորա չէն էինչ բաւա-
կան զօրավիգն կալ նմա. խակ՝ ի պատու-
հաս տուգանաց նորա մնագիւրագոյնս օգ-
նեցեն նմա: Ո՛չ ժուժեաց ոչ յանձին
կալաւ զայս Կամիլլոս. ՝ի սրտմտութիւն
բարկութեան բրդեալ՝ եդ՝ ի մոխ էինքնին

տարադէմ տարագիր մեկնել ՚ի քաղաքէ անտի Իւրմէ։

Ապա ողջագուրեալ զկինն և զորդիան, յարեաւ եւ լուռ ձնչիկ ՚ի տանէն և չդաբաւ մինչև ՚ի դուրս քաղաքին։ Ընդ վայր մի եկաց արձանացաւ և դարձաւ ՚ի Թիկունս կոյս, և զձեռան ամբարձեալ ՚ի Կապետոլեան կողմ՝ յաղօթս եկաց առ դիս. զի ե՛թէ ոչ իրաւամբք ինչ՝ այլ ՚ի խեղուճենէ խուժանին և ՚ի սոսահակութենէն և ՚ի մահ խանացն այնպէս վայրաւատին նա տարաշխարհիկ վտարի, արագ արագ ապա կրեացեն ապաշաւ Հռովմայեցիք. և առհասարակ մարդկան յայտնի արասցեն՝ եթէ Կամիլլոս պէտք են նոցա, և առ Կամիլլոս անձկայրեացք բերին։ Արդ սա այսպէս՝ ըստ որում անդ ուրեմն Ալբիլլէս՝ անէծս կարդաց ընդդէմ քաղաքացեացն, և ել մեկնեցաւ. և եթող եղիք զդատ անձին ամ բաստանութեանն՝ որ էր հնդետասան հազար ասասարիոնից. որ ըստ արծաթոյն հաշուի է հազար և հինգհարիւր դիդրաքմայից. քանզի ասասարիոն է դրամ մանր, և տասն ասասարիոն՝ առնէ դենար մի։

Բայց ՚ի Հռովմայեցւոց չիք ոք արդեօք՝ որ ոչն համարեացի եթէ Կամիլլոսին աղօթք արագ արագ զհետ բերին զվրէժ դատաստանին. և պատիժ պատուհասին խնդրեցաւ Հռովմայեցւոցն անիրաւութենէ ընդդէմ առն՝ յոյժ յայտնի և զհամբաւի հարեալ առհասարակ, սակայն և ոչ հեշտական ինչ արդեօք Կամիլլեայ. նա և նմին

յոյժ գԺոխրմբերելն կիրք: Ա՛յնչափ ինն ամբաւ աղէտիւք պաշարեալ նստաւ քաղաք Հռովմայ, և այնչափ հարուած կոտորածի և վտանգաց տագնապ մեծապէս նշաւակու թեամբք ած կուտեաց ժամանակն այն՝ ի վերայ քաղաքին. եթէ՛ ի դիպաց լինչ պատահեալ զայսոսիկ առասցէ ոք, և եթէ յաստուածոց անտի միոյ ուրուք նահատակութեան գործ. զի մի՛ անպատուհաս արձակեսցի առաքինութենէն հարստահարեալ յապաշնորհից անտի: Արդ առաջին գուշակ մեծաց չարեաց կարծեցաւ լինել յամենեսեան Յուլիսի՝ մահ վախճանի համարակալ իշխանին Հռովմայ. քանզի մեծապէս պաշտօն և սպաս հարկանէն այնմիկ Հռովմայեցիք, և առ սուրբս և առ նուիրականս ոմանս ունին զնոսա իշխանութեան համարակալացն: Իսկ երկրորդ անգամ՝ մինչեւ տարադիր գնացեալ Կամիլլոս, այր ոմն՝ ոչ յականաւորաց ոք և ոչ ի խմբէ ծերակուտին, այլ սակայն էր նա այր բարեհամբոյր և լաւ՝ Մարկոս Կեդեկիոս անուն նորա, չքաւ պատմեր տրիբունաց զոր ինչ մի՝ ի մեծապէս ծուխս խորհրդոց: Քանզի ասէր՝ եթէ յանցեալ գիշերի յընթանալ իւրում ընդ պողոտայն՝ որ անուանեալ կոչի՝ Նոր, իբրև աղաղակ մեծի բարբառոյ ուրուք կարդայր զնա ի թիկանց կուսէն, դարձաւ յետս և տեսանէր և ոչ ոք: Իսկ ապա ձայն ահեղ մեծագոչ ևս քան զմարդոյ լսելի լինէր, որ ասէր այսպէս. "Ա՛ղէ գու Մարկիէ Կե-

դեկիոս, արի վաղ քաջ ընդ առաւօտն՝ գնա պատմեա իշխանացն և զօրավարաց, եթէ վայրիկ մի ևս ժամանակ՝ և Գաղատացւոց ակնկալեալ ճնասցեն“: Զայս լուեալ զօրավարացն սկսան 'ի ծաղր և 'ի խաղ ընդ զրանն. այլ յետ սակաւուց դէպք եղեն իրացն վասն Կամիլլոսին:

Իսկ Գաղատացիք ազգ գոլով 'ի կեղտաց անտի, պատմեն՝ եթէ առ բարգաւաճ բազմութեանն իւրեանց Թողեալ զիւրեանց աշխարհն ոչինչ բաւական 'ի սնունդ ամենեցուն նոցա, չու արարեալ խաղացին գընացին 'ի խնդիր այլոց աշխարհի: Եւ քանզի բիւրաւորք բազում էին նոցա արանց երիտասարդաց և քաջամարտիկաց, դարձեալ և բազմութիւն մեծ մանկանց և կանանց ածեալ բերէին ընդ իւրեանս, կէսք 'ի նոցանէ խաղացին գնացին յՈվկիանոս կոյս հիւսիսոյ, և հատեալ անցեալ զՒսպեան լերամբքն՝ հասին կալան զվերջին սահմանսն Եւրոպայ. իսկ կէսք դարձեալ ընդ մէջ Պիւրենեան լերանցն և Ալպեանց չու արարեալ մօտ առ Սենոնս և առ կեղտորոսս՝ անդ հարուստ մի ժամանակ կալան բնակութիւն: Յետ այսորիկ ճաշակս երբեք առեալ նոքա զգինւոյ՝ զոր յայնժամ առաջին բերին նոցա յԻտալիոյ, այնչափ հիացան ընդ ըմբեղին՝ և առ նորութեան հեշտութեանն այնպէս այլ յայլմէ եղեն առհասարակ նոքա, որպէս զի և անդէն 'ի զէն 'ի զարդ վառեալք և առեալ ևս ընդ իւրեանս զծնողս իւրեանց, ելին խա-

ղացին ՚ի կողին Ալպեանց, և հետամուտք ՚ի խնդիր ջրջէին երկրին՝ որ զայնպիսի պըտուղն պտղաբերեացէ. և զայլ ամենայն երկիր դրէին նոքա այնուհետև առ անբերրիս և ամայիս և առ կորդս: Իսկ որ զդինին ած տարաւ առ նոսա, և որ առաւել և առաջին դրդեաց զնոսա հորդան տալ յԻտալիա, ասեն՝ եթէ էր Աբրոն անուն Տիւրրենացի, այր ականաւոր և ՚ի բոյս բարուցն ոչ վատթար ոք. սակայն յայսպիսի ինչ աղէտից իւրոց ածաւ նա ՚ի նոյն: Էր աա այս Աբրոն պահապան դաստիարակ մանկան որբացեալ՝ որ ընչաւէտութեամբն նախաթոռ էր ՚ի քաղաքացիան, և ՚ի դիտակ պատկերին հրաշագեղ, անուն Լուկումոնէս: Սա անդատին ՚ի մանկութենէն սնեալ և դաստիարակեալ առ Աբրոնի, և յարբունս ևս պատանեկութեան հասեալ, ոչ էրկեք եթող զտուն բնակութեան նորա. նա՝ ՚ի վերին երեսս ցուցանէր զանձն իբրև դադին ընդ բնակակից լինել նմա: Եւ էր ապա հարուստ մի ժամանակ գաղտ ՚ի ծածուկ տուփանք պատանւոյն առ կին Աբրոնի, գարձեալ և կինոջն՝ առ պատանին: ՚Ի վերջ երկոցուն նոցա կարի լիւն վառեալք ՚ի կիրս, և ոչ ևս կարացեալք՝ ոչ սանձել զտուփանան և ոչ ծածկել, ձեռն էարկ պատանին այնուհետև յայտնապէս յափշտակել զկինն և ունել առ իւր: Իսկ այրն ՚ի դառնանան քարշեալ զպատանին, իբրև յաղթահարեցաւ ՚ի բազմութենէ անաւ բարեկամացն Լուկումոնեայ, առ այս՝

և՝ ի բաղմամբեր առատաբաշխութենէ արծաթոյ պատանւոյն, եթող ելիք զհայրենի երկիրն: Եւ լուր առեալ զգաղատացւոցն՝ յարեաւ չղքաւ առ նոսա, և առաջնորդ կարապետ լինէր զօրականին նոցա խաղալ դիմել յԻտալիա:

Նղբա չու արարեալ խաղացին գնացին և անդէն հասին կալան զգաւառն՝ զոր՝ ի նախնւոյն ընդ Իւրեանց ձեռամբ ունէին Տիւրրենացիք, որ յԱլբեանց անուն ձգեալ տարածեալ ընդ մէջ երկուց ծովուց. ըստ որում և անուանքն գլխովին վկայեն բանին: Քանզի հիւսիսոյ ծովուն՝ անուն կարգան Ատրիա, յԱդրիոյ քաղաքէ անուն Տիւրրենացւոց. իսկ որ առ հարաւոյն Թիւսկոխեալ է՝ի հանդիպոյ՝ կոչեն զայն ծով Տիւրրենական: Եւ է այն ամենայն գաւառն՝ երկիր տնկախիտ ծառովք, և մարգաւէտ պարարտարօտ անասնոց, և ոռոգեալ՝ի գետոց: Եւ էին անդ ուխտատան քաղաքք գեղեցիկք և մեծամեծք, քաջադէպք և օգտամատոյցք՝ի հայթայթանս մեծի շահավաճառութեան և յաշխարհաժողով բարեկենդանութիւն կենաց. զորս միանգամայն հասեալ կալան գաղատացիք՝ վանեալ անտի զՏիւրրենացիս: Ալ այսոքիկ հարուստ ժամանակաւ յառաջ գործեցան անգանօր:

Բայց յայնժամ գաղատացիք բանակ հարեալ՝ի վերայ Կլուսիոն քաղաքին Տիւրրենեան, շուրջ եկեալ պաշարեցին զնա: Իսկ Կլուսացիք ապաւինեալք՝ի հռովմայե-

ցիս, ինդրեցին 'ի նոցանէ՝ հրեշտակս և նամականի տալ առ բարբարոսն: Եւ առաքեցան ապա 'ի փաբեանց զարմէն արք երեք աւագք ականաւորք, որ մեծապէս շուք պատուոյ ունէին 'ի քաղաքին. զորս և մարդասիրապէս առեալ ընկալան Գաղատացիք՝ շուք եղեալ անուանն Հռովմայ: Ապա գաղարեալք մարտ դնել ընդ պարիսպան, եկին ժողովեցան խօսել ընդ միմեանս: Իբրև զայն լինչ հարցանէին Հռովմայեցիք առ Գաղատացին, եթէ զինչ լինչ չարիս կրեալք 'ի Կլուսացւոց՝ այնպէս հորդան տուեալ գիմեցին նոքա 'ի քաղաք անդր, ծիծաղեցաւ Ազբայն Գաղատացւոց Բրենննոս, և ասէ. "Անիրաւին առ մեզ Կլուսացիք, որ սահման և չափ գեռնոյ գուշնաքեայ՝ ձեռնհասք և եթ գոլով 'ի միակել, սահման բազում ինդրեն գրաւել ընդ ձեռամբ իւրեանց. և զմեզ չառնեն բաժանորդս՝ որք եկք և օտարք եմք և յոքնաթիւք և աղքատք: Ցայսպիսեաց արդեօք և առ ձեզ լինքնին անիրաւեցան ոմն Հռովմայեցիք՝ անդ ուրեմն Ազբայեցիք և փիւդինացիք և Արդէացիք. իսկ զարդիս Վէյացիք և Կապինացիք, և շատք ևս 'ի փաղխակեանց և 'ի Վոլսկեանց: Ցոյց վերայ դուք բանակ հարեալ՝ յորժամ բաժանորդ զձեզ չառնեն բարեացն իւրեանց, 'ի գերութիւն վարէք, յաւարի առնուք, և հիմն 'ի վեր առապալէք զքաղաքս նոցա: Այլ և ոչ դուք լինքնին պովին բանիւ զրկէք լինչ և կամ անիրաւիք արդեօք, այլ զհետ երթեալ հալա-

տակէք զանձինս օրինացն՝ որ երիցագոյնն
է քան զամենայն օրէնս. այն՝ որ զօրաւո-
րին ի ձեռս տայ զտկարն, սկիզբն արա-
րեալ անդաստին յԱստուծոյ այս օրէնք՝ և
դայ աւարտի մինչև յանբան կենդանիս:
Քանզի և անբանք ինքնին ձգեալք անդըս-
տին ի բնութէն, որք զօրաւորք և յաղթքն
են ի նոսա՝ խնդրեն ի վերոյ լինել քան
զանաւագան: Ա՛ղէ դուք դադարեցէք ախ-
տակից լինել Կլուասցւոցդ՝ որ պաշարեալդ
կան աւադիկ. զի մի Թերևս և Գաղատաց-
ւոցս ինքնին ուսուցանիցէք դուք ախտա-
կից կարեկից լինել նոցա՝ որ ըզկեցան ի
Հռովմայեցւոց": ի բանից աստի յայտա-
նէ Ճշդիւտ Յանեան Հռովմայեցիք, եթէ
գաշն խաղաղութեան և ոչ մի ամենևին
յանձին կալցէ Բրեննոս: Ապա յարեան
մտին ի Կլուսիոն քաղաք, ձայն առեալք
խրախուսեցին զարս քաղաքին ելանել ար-
տաքս և խառն ընդ նոսա դիմել ի վերայ
բարբարոսացն. խնդրէին ի ժամուն՝ և կո-
րուսումն եան նոցուն հաւաստի ի վերայ
կալ, և զիւրեանց զօրութիւնն ի դէմս բե-
րել: Իբրև գունդ մի ի Կլուասցւոց անտի
հատաւ արտաքս, և կռիւ մարտին զրգռե-
ցաւ առ պատուարօքն, մի ոմն ի փաբեանց
անտի Կուինտոս Ամբուստոս ձի ի վեր ա-
ռեալ մարտակ ի կուշտ՝ դիմեաց ընդդէմ
ախոյեանին ի Գաղատացւոց անտի այր
յաղթամարմին և գեղեցիկ՝ որ հարուստ
մի դիմագրաւ յառաջ նահատակեալ էր
քան զնիզակակիցն: Ընդ զառաջինն՝ քան-

զի յոյժ ի շուտ տագնապի խառնեցան ընդ միմեանս նահատակքն, և զի և զինուցն փայլուն շլացուցանէր զաչեսանելիսն, ոչինչ կարացին ճանաչել զկովինտոս. իսկ իբրև մարտ եղեալ սկրեւաց նա ի վերայ ա֊խոյեանին, և տապատատ արկեալ սկսաւ կո֊ղոպտել զայրն, անդուռն ծանեաւ զնա Բրեննոս՝ և անդէն ի վկայուածիւն կար֊դայր զդիան, եթէ զնաւդ Կովինտոս ընդ֊դէմ հասարակաց իրաւանց և կարգաց՝ որ առ ամենայն ազգ մարդկան նուիրականք են և սուրբք՝ հրեշտակուածեամբ դեսպան եկեալ առ նոսա, զնշնամեղ գործ գոր֊ծեաց: Ապա անդէն փուճանակի դադար տուեալ մարտին՝ և կլուսացուցին ոգւոյն հրաժարական տուեալ, ի Հռովմ կոյս չարժեաց առհասարակ զբանակ զօրուն: Այլ ոչինչ կամեցեալ այնպէս կարծեցու֊ցանել՝ եթէ ընդ անիրաւութիւնդ խնդա֊ցեալք իմն էցեն Գաղատացիք՝ իբրու այն թէ պատրաստեալք պատճառս առ ձեռն ունել մարտին ընդ Հռովմայեցիս, առա֊քեաց ի նեղըս հրեշտակ և խնդրէր տալ նորա ի ձեռս զայրն ի պատուհասել. զայս յղեաց և ինքն պարապեալ անդէն տակաւ չարժէր զբանակն:

Իբրև ի խորհուրդ խմբեցաւ ծերակոյտն ի Հռովմ, շատք ևս այլք ամբաստան կային զփաբեանցն. այլ և քահանայք ինքնին գըլ֊խովին՝ որ անուանեալ կոչին փեթիղեանք՝ հասեալք անդր յաստուածակոյս կողմա֊նէն պնդով հրաման ի վերայ կապէին

Սինկղետոսին՝ զպատուհաս ինեսուն առ-
նուլ կուտել միայն ի գլուխ յանցաւո-
րին, զի այլք առհասարակ քաւեալք ար-
ձակեսցին ի հարուածոյն: Զփեռիլեանոզ
զայդոսիկ ինքնին Նումաս Պոմպիլիոս մեծ
խաղաղաւէր և յոյժ արդարակորով Թա-
գաւոր քան զամենայն Թագաւորս, կար-
գեաց եդ զսոսա պահապանս խաղաղու-
Թեան և քննիչս և խորհրդականս ի վերայ
պատճառացն՝ ոյց աղագաւ իրաւամբք հան-
դերձեսցին մարտք պատերազմաց:

Իբրև ծերակոյտն ի ժողովուրդ անդր
ապաստան արար զբանն, և անդ դարձեալ
քահանայքն նոյնօրինակ ամբաստան գա-
տախազ կային զփաբիոսէ, խուժան ռամ-
կին այնպէս իմն ձաղանօք գնայր ընդ աս-
տուածակոչմն անդր քահանային և ուն չս
արարեալ ծիծաղէր, որպէս զի և զօրավար
բանակին կարգեցին անդէն զփաբիոս ինք-
նին հանդերձ եղբարբք իւրովք: Իսկ ան-
դուստ կեղտք լուր առեալ զիրացն և ծան-
րացաւումն եղեալք, ոչինչ այնուհետև
դուլ և դադար տային ձեպոյն. յարու-
ցեալ արագ արագ և ի շտապ տագնապի
խաղային գնային. և ապա առ յոյժ բազ-
մութեան նոցա և առ փայլուն կազմածոյ
զինուց և զարդուց նոցա, և առ յանդուգն
հրոսակի և բարկութեան սրտմտութեան
նոցա զահի զդողանի հարեալ կային առ-
հասարակ միջերկրեայք, եղեալք ի մոխ
եթէ միանգամայն զամենայն գաւառ նո-
ցա յաւար յասպատակ առնուցուն նոքա,

և զքաղաքան գլխովին անդէն ՚ի քթթել ական հիմն ՚ի վեր արասցեն. սակայն արտաքոյ ակնկալուԹեան իւրեանց՝ ոչինչ անիրաւեցան ՚ի նոսա Գաղատացիք, և ոչ զագարակս ինչ նոցա յաղարտ վարեցին. նա՝ և առ քաղաքօք նոցա քերեալք՝ զայս ինչ գոչէին եԹէ ՚ի Հռոմ կոյս գիմեալ խաղան նոքա, և ընդ Հռովմայեցւոց միայն մարտ եգեալ կռուին. իսկ զայլս առհասարակ առ բարեկամս ունին: Իբրև այսպէս յանդուգն գիմեալք գային հասանէին բարբարոսք, առին և Տրիբունք հանին արտաքս զՀռովմայեցիս ՚ի մարտ պատերազմի. բազմուԹեամբ զօրականին ոչինչ պակաս էին քան զնոսա, քանզի էին նոցա սպառազինք հետևակք ոչինչ պակաս քան զքառասուն հազար. սակայն շատք ՚ի նոցանէ անփորձք անհմուտք էին, և յայնժամ առաջին զէն ՚ի ձեռս առեալ էին: Ընդայս՝ և զաստուածայնովք նոքա անվոյԹ արարեալ էին. ոչ զոհից ինչ սպանդս յաջեցին, և ոչ զգէտս և զնշանս հարցին, զոր արժան էր առնել՝ մինչև ՚ի վտանգ և ՚ի կռիւ մարտին մխեալ նոցա: Այլ ոչինչ պակաս խռովս հարկանէր ՚ի գործս նոցա յայնժամ և բազմիշխանուԹիւնն. ուր յառաջն Հռովմայեցիք և մինչև սկիպիոն եղեալ խոնարհագոյն ինչ մարտից մրցանաց, կանխեալք ընտրէին բազում անգամ իշխանապետս ումանս, որոց և Տիպատօս անունն կարդային. ոչինչ անգիտացեալ՝ եԹէ քանիօն օգուտ լոյէ ՚ի գժուարին և ՚ի կե-

ղակարծելի ժամանակ զմի ունել իշխան հրամանատար ինքնապետ և անբողոքելի, և ի գեղեցիկ բարեկարգութիւն իրացն՝ նորա ի ձեռս տալ միանգամայն զամենայն իրաւունս: Իսկ ոչինչ նուազ քան զայդոսիկ՝ զեան հասոյց յայնժամ գործոց նոցա և ապաշնորհ գնացք նոցա առ Կամիլլոս. քանզի ընդ երկիւղիւ գրաւեալ փակեցաւ այնուհետև անաչառ և անմարդահաճոյ իշխանութիւնն:

Արդ իբրև ընդ ասպարէզս իննսուն ի բաց ձգեցան նոքա ի քաղաքէն, եկեալ բանակեցան առ Ալիաս գետովն, որ ոչինչ հեռի ի բանակէն իջանէր խառներ ի Տիբերիս: Իսկ անդանօր յերևեալ գնդի բարբարոսացն, մարտ պատերազմի անարգաբար տուեալ Հռովմայեցւոց՝ առ անկարգ հանդերձանացն ընդ կրունկն ի փախուստ գառնային: Եւ անդ զձախոյ Թևն նոցա արագ արագ ի գետ անդր վանեալ կեղտացն, հարուածս մեծամեծս դնէին: Իսկ աջոյ Թևն նոցա խոյս տուեալ ի հրոսակէն, ի դաշտէ անտի հասեալ կալան ըզբարձունս բլրոցն, և նուազ եղև հարուած նոցա. և ի սոցանէ բազումք գնացեալ անկան ի քաղաք անդր: Բայց այլք առհասարակ որ ոչնանգամ ճնացին՝ յետ յոգնեղոյ Թշնամեացն ի կոտորածէն, փախուցեալք գիշերային չղջան ապաւինեցան առ Վեյացիս. իբրև Թէ վասն Հռովմայ այնուհետև վճարեալ իցէ, և ամենայն բնակաւորք նորա ի կորուստ մատնեալ: Եւ եղև

այս մարտ պատերազմի յԱրևագարձման ա-
ժարայնոյ ի լուանին լճման, յորում ա-
ւուր ի նախնումն Հանդիպեցան և մեծա-
մեծ կիրք աղէտից Փաբեանցն. քանզի ե-
րեքհարիւր ի նոցանէն տապատատ անկան
ի Տիւրրենացւոց անտի: Ալ զօրացաւ տո-
վորութիւնն՝ յերկրորդ կոտորածէ ասակ
զօրն զայն մինչև ցայսօր ժամանակի կոչել
Անէաոէան՝ ի պատճառս գետոյն:

Իակ յալագս ձախողակ աւուրցն՝ եթէ
արդեօք արժան էցէ այնպիսի կարծել ըզ-
կէսս յաւուրց, և կամ ոչ. ըստ որում և
Հերակղիտոս լինքնին մեղ դնէ Հեսիոդեայ,
որ զկէսս բարիս ասաց, և զկէսս՝ չարս,
իբրու որ անդէտ էցէ՝ եթէ նոյն և մի է
բնութիւն ամենայն աւուրց, մեր լինքնին
այլուր 3 վիճեալ է վասն այդորիկ: Իակ
աստանօր ի մատենագրութեանն՝ Թերևս
ի Ճահ պատահեցէ յիշատակել սակաւս
ինչ յօրինակաց: Իբր այն՝ զի Բիովտացիք
յաւուր Հինգերորդի Իպպոդրոմիոն ամ-
սոյն իւրեանց՝ զոր Ամենացիք կոչեն
Եկատոմբէոն, գնալ եղև զի յալթութիւնս
կրկին ականաւորս տարան, որով և զՀե-
լենացիս գլխովին յազատութիւն վոխե-
ցին. զմին՝ ի Լեւկտրաս, և զմիւսն՝ ի Գե-
րատոս, երկերիւր և աւելի ամօք յառաջ
յորժամ զԱտտամիաս և զԹեսսաղացիս
ի պարտութիւն մատնեցին: Բայց ընդ Հա-
կառակն և Պարսիկք ի միում անդ ամ-
սեան Բոդրոմիոնին ի վեցերորդում ա-
ւուրն հարան վանեցան ի Հելլենացւոց ի

Մարաթոն. յերկրորդումն՝ ի Պղատէա՝ միանգամայն և ի Միւկաղէ. իսկ ի քսաներկրորդի վեցերորդի նորուն ամոյ՝ յԱրբելիա: Աթենացիք ի նաքսոս յաղթական գան ի նաւամարտի առ զօրավարութեքն Քաբրիասայ ի նմին իսկ յամսեանն Բոդրոմիոնի ի լուանին լրման. իսկ ի Սաղամինա՝ ի քսաներկրորդի աւուրն, ըստ որում ցուցաք մեք ի Դպրութեան մերում յաղագս աւուրց: Բայց դէպ եղև և ամոյն Թարգելիոն՝ գոլ բարբարոսաց յայտնապէս ձախողակ. քանզի Ալէքսանդր ի նմին ամսեան ի պարսկութիւն մտանէաց զջօրավարս արքային ի Գրանիկոս: Եւ կարքեդոնացիք լինքնին ի Սիկիլիա նկուն եղեն ի Տիմոլէոնեայ ի քսաներկրորդի յերկրորդի նորուն ամոյ. յորում աւուր Թարգելիոնիի՝ կարծեն և զաւուրն Եղիոնին, որպէս պատմեն Եփորոս և Կալլիսթենէս և Դամաստէս և Փիլոլաոքոս:

Իսկ ընդ հակառակն Մետագէտնիոնիին ամիս՝ զոր Բիսիատացիք Պանեմոն կոչեն՝ ոչինչ այնպէս բարեբաստիկ հանդիպեցաւ Հելլենացւոց. քանզի յեօթներկրորդի նորուն ամոյ ի Կրանոնէ մարտ եղեալ պարսից յԱնտիպատրոսէ և խոպառ սպուռ Հարան, և յառաջ քան զայն ի Քերոնէիա պատերազմեալք ընդ Փիլիպպոսի՝ ձախողակք գտան. և ի նմին աւուր գարձեալ և ի նմին ամսեանն Մետագէտնիոնիին և ի նոյն տարի՝ որք միանգամ ընդ Արբելդամոսի եղեն չոքան Իտալիա, տապաստ

անկան ՚ի բարբարոսաց անտի երկրին: Իսկ Կաղքեդոնացիք մեծապէս զդուշութեամբ պատկառ կան քահանայապետի երկրորդի աւուր Նորուն ամսոյ, իբրու այն՝ որ բազում յոյժ և մեծամեծ անբախտութիւնս նոցա միշտ ՚ի նեղս եբեր: Նաև անտեղեակ ինչ չեմ, զի և ՚ի ժամանակի անդ պաշտաման խորհրդոցն՝ թէպէտ հինն ՚ի վեր տապալեցաւ ԱՆԼԵՔՍԱՆԴՐԷ. և յետ այնորիկ ԱԹԵՆացիք ՚ի քահանայապետի աւուր Բոդրոմիոնիին՝ յորում աւուր ՚ի թափօր հանեն նոքա զխորհրդականն Եակոբոս՝ ընկալան զպահակապանս զօրաց Մակեդոնացւոց: Զնոյն օրինակ և Հռովմայեցիք ՚ի նմին իսկ աւուր՝ նախ ՚ի կիմբրացւոց անտի հարուածս ընկալան ՚ի բանակին առ Սկիպիոնի զօրավարութեամբն. և ապա առ զօրավարութեամբն Լուկուլղոսի ՚ի պարտութիւն մատնեցին զՀայս և զՏիգրան: Իսկ Աւտալոս արքայ և Պոմպէոս Մագնոս մեռան ՚ի նոյն աւուր ծննդոց իւրեանց: Եւ միանգամայն իսկ մարթ է մեզ ակն յայտնի ցուցանել, զի բազուկք ՚ի նոյն ՚ի մի չըջանս ժամանակաց միանգամայն և ձախողակի և բարեբաստիկ հանդիպեցան բանից: Այլ Հռովմայեցւոց այն օր՝ մի է ՚ի ձախողակ աւուրցն. և ՚ի նորա պատճառս յիւրաքանչիւր ամիսս այլ ևս երկու աւուրք, յորմէհետէ՝ ըստ որում բնաւորեալ է՝ գնալով գնաց և աճեաց անապաշտութիւնն և արհաւիրքն ՚ի պատճառս արկածից այնոցիկ: Արդ մեր վասն

այդոցիկ 'ի մատենին մերում յաղագս հռովմէական խնդրոցն ճշդութագոյն ևս ճառեալ է։

Իակ յետ մարտի պատերազմին այնորիկ՝ եթէ անդէն վաղվաղակի զհետ փախստէից մտեալ էր Գաղատացւոց, ոչինչ այլ արգելուր յայնժամ հիմնայատակ քանդել զՀռովմ. և առհասարակ ամենեքին՝ որ անդ մնացեալքն էին՝ 'ի սայր սուսերի մատէին. այնչափ արհաւիրս 'ի վերայ ածին փախստեայքն քաղաքացւոցն որք ժողովեցին զնոսա, և խռովութեամբք և ափշութեամբք լցին նոքա զքաղաքն։ Ալ 'ի ժամուն՝ քանզի ոչ մեծ ինչ համարեցան բարբարոսք զյաղթութիւնն գայն, և զի և մեծապէս խնդամտեալք զուարճացան յանձինս, միանգամայն և զառ և զապուր բանակին նոցա դարձան նոքա առնել և բաշխել, ապա դուռ և տեղի փախստեան ետուն նոքա խուժանին Հռովմայ, որ զոտս արձակեալ փախչէին 'ի քաղաքէն. առ այս՝ և յոյս բարեաց ետուն մնացեալոցն անդէն, և ժամանակ հանդերձանաց մարտին։ Քանզի այնուհետև զայլ ամենայն կողմն քաղաքին Թողեալ Հռովմայեցիք, Կապետոլիոնին ամրութիւն ածէին նետակալօք և մահարձանօք. և նախ առաջին զնուվիրականս իւրեանց 'ի Կապետոլիոն անդր փոխեալ ապստարեցին։ Իակ զկրակն վէստեան կուսանքն 'ի միասին ընդ այլոց նուիրականացն յափշտակեալք փրկեանս՝ առին և փախեան։ Թէպէտ և կէսք պատ-

մեն՝ եթէ ոչ այլ ինչ իրաց պահապանք ի վերայ կային նոքա, բայց անշէջ կրակին. ըստ որում Նումաս թագաւոր սահմանադրեալ իսկ էր պաշտօն հարկանել այնմ, իբրու այն որ ոկիզբն և պատճառ էցէ ամենայնին: Քանզի հուրն քան զամենայն ինչ չարժագոյն է ի բնութեան. այլ և ծնունդն ինքնին չարժուածն է, կամ թէ՝ դլխովին զուգեալ ընդ չարժման. իսկ և այլ ինչ մասունք նիւթոյն անբաժք ի ջերմութենէն՝ անգործք ամենևին կան և մեռեալատիպք են. և տարփան հրոյն զօրութեան իբրև հոգւոյ, որ ի գալ մերձենալ ի նոսա՝ անդէն արծարծին ի գործել և ի կրել: Ընդ զայս հուր Նումաս՝ իբրև գերազանցեալ այր և որ զհամբաւի հարեալ էր կենակից լինել Մուսայից առ խնամոութեան հանձարոյն, սրբեաց և անչինջանելի պահել պատուիրեաց ի պատակեր նմանութեան մշտնջենաւոր զօրութեանն՝ որ զամենայնն յարդարեալ անօրինէ: Իսկ կէսք ասեն՝ եթէ կրակդ այդ՝ ըստ որում և առ Հելլենացիսդ՝ առաջի նուիրակացն այնոցիկ վառեալ բորբոքեր ի տիպ անշահախնդրութեանն. իսկ և այլ ինչ իրք ի ներքս անդ գալեալ կային անտես և աներևակ յամենեցուն, բաց ի կուսանաց անտի՝ որոց անուն կարդային Վէսպեան: Ահա այս՝ և բան առ բազումս յոյժ զհամբաւի հարեալ էր, եթէ տրոյականն Պալլասայ դրօշեալն՝ զոր Ենէաս ածեալ էբեր Իտալիա՝ անդանօր աւանդեալ կայր: Եւ

և ոչք առաստելաբանեն՝ եթէ զդիան զայն
'ի Սամոթրակեայ փոխեաց եբեր Դարդա-
նոս 'ի Տրոյիա, և 'ի շինել անդ քաղաքին,
ոմն սահմանեաց պատուերին և սրբեալ
նուիրեաց զնա. իսկ Ենէաս յառնուլ
Տրոյիոյ՝ գաղտաբար առեալ ապրեցոյց զնա
առ իւր մինչև 'ի գալ բնակել իւրեամ յի-
տալիա: Ալ ոչք վստահքն են ճշգրտա-
գոյնս ինչ առաւել գիտել վասն իրացն,
սակն՝ եթէ Թակոյկք երկու մեծամեծք
անդանօր եդեալ կային. մին՝ բաց և թա-
փուր, միւսն՝ լի և կնքեալ. և զերկոսեան
դարձեալ՝ միայն անարատ կուսիցդ այդո-
ցիկ Թոյլ եր 'ի տեսանել: Իսկ այլք հասա-
րին զնոսա խաբեալս. իբրև զի 'ի ժամանա-
կին յայնմիկ բազում ինչ 'ի նուիրականաց
անոն օրհոդեդ այդպիսիկ ամփոփեալ 'ի թա-
կոյկս երկուս՝ առեալ Թալեցին ընդ հո-
գւով 'ի նեղքոյ Կուիրինեան տաճարին. և
տեղին այն մինչև ցայսօր ժամանակի 'ի թա-
կուածոց անոն առեալ բերէ զանուանակո-
չութիւնն 4:

Իսկ որ ինչ միանգամ առաւել տի-
րադոյնքն էին 'ի նուիրականաց անոն և
մեծամեծք՝ առեալք չիւրեանս կուսանքն
փախստեայք գնային ընդ երկայնութիւն
գետոյն: Անդանօր Լեւկիոս Ալբինոս այր
սուկական հանդիսացաւ 'ի ժամուն ընդ
այլոց փախստէից, որ զմանկտին իւր
և զկինն հանդերձ գոյնեք իւրովք բար-
ձեալ 'ի սայլս՝ ածէր այլուր: Սա այս այր
իբրև եառ զկուսանսն, զի 'ի գիրկս իւր-

եանց բարձեալ բերեալ զնուիրականն ըզ-
դիցն՝ այնպէս անտէրունչք ամայիք ընթա-
նային իսոնջք և վաստակք, անդէն վաղվա-
ղակի զկին իւր հանդերձ մանկամբք իւրովք
և գոյիւքն՝ ի վայր՝ ի սայլիցն առեալ, տայր
նոցա զսայլն՝ ելանել՝ ի վեր և այնպէս տա-
րագէմ փախստեայ գալ ապաւինիլ՝ ի մի
՝ի քաղաքաց անուն Հեբրեննացւոց: Ընդ
զնեբրինոսին զայնորիկ զբարեպաշտութենն
հանդէս և զմեծարանացն առ աստուա-
ծայինան՝ ի գիւտարին ժամուն, ոչ արժան
էր արդեօք աստանօր անյիշատակ Թողուլ
անցանել:

Բայց այլոց դիցն քուրմք, դարձեալ և
ծերունիք յաւագաց անուն՝ որ հիւպատո-
սութեան բարձին վիճակեալքն էին և յաղ-
թանակս ևս տարեալք էին, ոչինչ հան-
դուրժէին Թողուլ լքանել զքաղաքն. ա-
պա յարուցեալ միաբան՝ զնուիրական զիւր
եանց և զմեծաշուք պատմուճանան զան-
ձամբ արկին, և՝ ի հրամանէ անուն մեծի
քրմապետին Փաբիոսի յաղօթս կացեալք
առ դիս՝ իբրու եթէ զանձինս իւրեանց ինք-
նակամ դիցն նուիրեալք փոխան հայրենի
քաղաքին, այնպէս ելեալք՝ ի փղոսկրեայ
գահոյս բազմեցան զարդարեալք՝ ի մէջ
հրապարակին. ակնկալեալ ճնային հան-
դերձելոյ կատարածին: Ապա յերրորդում
աւուր զկնի մարտի պատերազմին՝ եկն ե-
հաս Բրեննոս ածեալ՝ ի վերայ քաղաքին
զբանակ զօրուն. նա իբրև բաց եգիտ ըզ-
դրունսն, և զպատուարս պարապացն ամայի

լքեալ ՚ի պահապանաց, զառաջինն դաւս դարանաց և խաբս կասկածեցաւ. ոչինչ հաւատայր յանձն՝ եթէ այնպէս դլխովին միջաբեկք յուսակտուրք լեալ էին Հռով մայեցիք: Իսկ երբ ծանեաւ զՃշմարիտն՝ մտեալ ՚ի ներքս ընդ դուռն կոչէինեան, հաւ զՀռովմ քաղաք՝ յետ ամաց երից հարիւրոց և վաթանից և առաւել ՚ի շինու թենէ անտի նորա, սակայն եթէ ամենևին արժանահաւատ պահեալ էին Ճշգրտու թիւն ժամանակացն. յորս և յաղագս նո րագործ ինչ հանդիպելոց էրացն դարձեալ յերկբայս արկանէ զմեզ գումար հաշուիդ այդորիկ: Արդ թուի թէ աղէտիցս այսո ցիկ և առնան Հռովմայ համբաւ՝ ընդ աղօտ վաղվաղակի հասեալ ժամանեալ էին յԱԵ լադա: Քանզի Հերակղիտոս Պոնտացի՝ որ ոչինչ հեռի էր ՚ի ժամանակաց անտի, ՚ի Մասենին իւրում յաղագս հոգւոյ, ասէ՝ եթէ լուր եհաս յարևմտից, զի բանակ զօ րու Լիւսիբոորացւոց իսաղացեալ արտաքս՝ հասեալ կալեալ էին զՀռոմ՝ քաղաք հե ղեղնացի յարևմուտս բնակեալ ուրեք առ մեծի ծովուն: Արդ ինձ չէ ինչ զարմանալ ընդ Հերակղիտէս այր առասպելահիւս և մոացածին, զի ընդ Ճշմարիտ պատմութե առման քաղաքին՝ առեալ յերկրեաց նա և զՀիւսիբորացիս ոմանս և զմեծ ծովն: Իսկ Արիստոտել իմաստասէր Ճշգրտագոյն ևս լուր առեալ ասէ, եթէ ՚ի կելտաց անտի առաւ քաղաքն. իսկ որ փրկեալ ազա տեաց գնա, էր ասէ Լուկիոս: Սակայն Մար

կոս էր և ոչ Լուկիոս՝ Կամիլլոսն. այլ այդ-
պիսի՛ կարծ ինչ արդեօք առացան։

Ապրդ երբեմն կալաւ Բրեննոս զՀռոմ, պահակապանս շուրջ՛ի վերայ Կապետո-
լիոնին կացուցանէր. իսկ ինքն իջեալ՛ի հրապարակ անդր, հիացեալ յակձիռս կայր ընդ աւագորեացն՝ որ անդ նստեալ բազ-
մեալ էին այնպէս յարդարունք և զարդա-
րեալք և լուռ անշշունչ. երբեմն եւս՝ զի ոչ յոտին կանդնեցան յերևել անդ Թշնա-
մեացն, և ոչ դարձեալ զդիտակ երեսացն կամ զգոյն երբէք փոխեցին ինչ նոքա, այլ այնպէս խաղաղիկ և յանհոգս և յան-
դոլորս կային՝ յեցեալք խրաքանչիւր՛ի ցուպս իւրեանց զոր բարձեալ բերէին, և հանդարտեալք հայէին այր ընդ երես ընկերի իւրոյ. անդանօր ընդ տեսիլն նոր և չքնաղ հիացեալ էին Գաղատացիքն, և հարուստ ժամանակ այնպէս կային դե-
զևեալք մինչ երթալ և ձեռն մխել՛ի նո-
սա. զի միոս կասկածոտս եղեն՝ եթէ գեր-
աշխարհիկք ոմանք իցեն։ Եւ ապա ուրեմն մի ոմն՛ի նոցանէն սրոտասնդեալ չղքաւ մինչ առ Պապիրոս Մանիոս, կարկառ ըզ-
ձեռն և հեզաբար շօշափեալ զծնօտն՝ առ-
եալ փայփայեր զմօրուսն երկայն յոյժ։ Իսկ Պապիրիոս՛ի վեր առեալ զցուպ իւր և հարեալ ջաղխեր զկառափն նորա. զի նոյն և բարբարոսն մերկացեալ զսուրն՝ եհար և սպան զծերունին։ Եւ յայնմանէ դիմեալք և յընկերս նորա՝ դիտապատս սրկին զնո-
սա. և զայլս ևս որոց միանգամ հանդի-

պեցան՝ ի մահ վարեցին: Ապա յաւարի առեալ զտունն՝ աւուրս բազումս այնպէս ածէին զառ և զասպուր. և հուր հարեալք այրէին և հիմն ի վեր քանդէին, ի բարկութիւն սրտմտութեան բրդեալք ի վերայ արանցն՝ որ կալեալ ունէին զնապետոլիոն. զի և ոչ ի կոչ հրաւիրանաց նոցա երբէք ունկն մատուցին նոքա, այլ և յարձակողացն հարուածս ի վերայ գնէին՝ ի բարձանց անտի պատուարացն մարտ եդեալ ընդ նոսա: Ւ ման այսորիկ և յաղարտ վարէին զքաղաքն, և զորս ի ձեռս բերէին՝ ի մահ վարէին առհասարակ անխտիր զարս և զկանայս և զծերս և զմանկունս: Իբրև այնպէս ընդ ժամանակս ձիգս երկարեր պաշարումն, ապա ամբարոյ կերակրոյ պէտք եղեն Դաղատացւոց. ուստի և զօրահատոյց եղեալ, կէսք ի նոցանէն անդէն ճնացին պահակ արկեալ զնապետոլիոնիս. իսկ կէսք՝ երեալք առպատակ կապեալ յաւարի առնուին զգաւառն, ի վերայ անկեալ գեղից և ագարակաց կապուտ կողոպուտս թողուին. ոչ երթէ առհասարակ ամենեքին միահուամբ, այլ յայսկոյս յայնկոյս սփռեալք և բաշխեալք ի վաշտս և ի գունդս գունդս, խիզախեալք և խնդամբեռալք ի բարեյաջող ելից և աներկիւղք յամենայնէն:

Բայց յոքնաթիւ և քաջակազմ գունդ նոցա չու արարեալ խաղաց գիմեաց ի վերայ քաղաքին Ադրէացւոց, յորում ինքնին կամիլլոս բնակեալ էր՝ ոչինչ միջամուխ

ամենևին ՚ի հասարակաց գործն յետ տա-
րագիր վախատեսանն, և կեանս վարեր զաս-
կականի: Ալ գեղեցիկ յուսոյ ակնկա-
լեալ ՚ի ժամուն այնր քալ, և խորհուրդս
բազումս ընդ միտ յածեալ՝ ոչինչ սիրեր
այնուհետև ՚ի ծածուկ կալ ճնալ և ՚ի թըշ-
նամեաց անտի խոյս տալ փախչել, այլ գեա-
ակին կալեալ սպասեր ըստ քալիդիպու-
թեան ժամուն մարտ եդեալ վանել զնո-
սա: Վասն որոյ և զԱգրէացիան տեսեալ՝
Թէպէտ և բազմատրս, այլ վատասրտեալք
էին ՚ի պատճառս անհմտութեան և անա-
րուեստութեան զօրավարացն. սկսաւ նախ բանս
՚ի մէջ արկանել առաջի երիտասարդաց
նոցա, և ասել. Ձէ պարտ չէ արժան զձա-
խողակ դէպս զհռովմայեցւոցն ՚ի քալդու-
թեան ինչ մասին կեղտացդ դրել. և որ-
չափ միանգամ դէպ եղև կրել նոցա ըստ
ձախողակի խորհրդոցն, այն արուեստին
ինչ գործ կեղտացն չէ՝ որ ոչինչ ՚ի նեղըս
բերին ՚ի յաղթուեթեան մասին, այլ դի-
պաց և բախտին է հանդէպ: Գեղեցիկ է
ապա՝ Թէպէտ և վտանգ յանձն առեալ՝
յաւնել վանել զկռիւ մարտին՝ զօտա-
րացն, զայլազգիցն, զխուժադժիցն, որոց
վախճան յաղթուեթեանն ոչ այլ ինչ, բայց
ըստ օրինակի հրոյ՝ ծախել և ապականել
զյաղթեալն: Ալ սակայն եթէ մտադիւ-
րուեթեամբ քալաքերուեթիւն զգեցեալ է
ձեր, և անվտանգք արդեօք ՚ի դէպ ժա-
մուն ՚ի գլուխ տարցուք մեք առհասարակ
զյաղթուեթիւնն:

Զայս ասաց Կամիլլոս և հաձեալ հա-
ւանեցոյց զերիտասարդան. եւ ապա ջո-
քաւ առ իշխանս և առ աւագանին Ա-
րեացւոց, և իբրև զնոսա ևս հաւանեցոյց,
առեալ զամենեսեան՝ որ յորբունս հա-
սեալքն էին՝ ի զէն ի զարդ վառեաց զնո-
սա և ժողովեալ կալաւ ի նեղքս պատուա-
րացն. ոչ կամէր եթէ յայտնի լինիցի բանն
Թշնամեացն՝ որ մօտ էին առ նոսա: Իսկ
յայնժամ հրոսակ կեղտացն ասպատա-
կեալ զգաւառն, և ծանրաբեռինք յառ և
յստուար բազում աւարացն, յանհոգս և
յանխորհուրդս եկին բանակեցան ի գաշ-
տին: Իբրև գիշերոյն ժամ եհաս ի վերայ
նոցա, և էին նոքա առհասարակ արբեալք,
և լուռ Թիւն խոր գրաւեալ ունէր միան-
գամայն զբանակ նոցա, իրազեկ բանին
եղեալ Կամիլլոս ի լրտեսաց անտի՝ խա-
զացոյց արտաքս զԱդրէացիան, և լուռ անշը-
շունչ անցեալ ընդ միջավայրն զհասարակ
գիշերաւ՝ եկին մատեաւ ի բուն ղակիշ անդր
նոցա. և անդէն բազմագոչ աղաղակ հա-
րեալ ի նոսա և զփողոսն միանգամայն ամե-
նայն ուժեղք հնչեցուցեալ, ի սագնապ
մեծի խռովութեան արկանէր զմարդիկն,
որ յահաբեկ չառաչմանէն հազիւ ուրեմն
էր նոցա սթափիլ ի գինեբռուաց անտի և
ի քնոյն Թանձրութենէ: Ընդ ապա նուա-
զունք ոմանք յարհաւրացն արթնացեալ
և զէն առեալք զդէմ կալան Կամիլլեայ,
մինչև մարա եղեալ անկան գիտասատա:
Իսկ բազմագոյնք ի նոցանէ խոնջք և

թմբրեալք ՚ի քուն և ՚ի գինւոյ՝ անզէնք և անկազմք այնպէս ՚ի մահ վարեցան։ Բայց ոմք միանգամ ՚ի գիշերին յայնմիկ ՚ի փախուստ խուճապեցան ՚ի զակչէ անտի իւրեանց ոչինչ բազումք, զնոսա դարձեալ ՚ի գալ աւուրն՝ ոմք ցան և ցիր կային ընդ դաշտն՝ զհետ մտեալ այրուձիոյն սատակէր։

Իբրև համբաւ նահատակութեանս այսորիկ արագ արագ հռչակ եհար ընդ քաղաքս, խրախուսեալք քաջալերէին բազումք յերիտասարդաց քաջաց գալ նիզակակից խառնիլ ընդ Կամիլլեայ։ Առաւել ևս հռովմայեցիք առհասարակ՝ որ միանգամ ՚ի մարտէ անտի պատերազմին Ալիասայ փախստեայք անկեալ էին առ Վէյացիս, մեծապէս ցաւեալք ընդ միմեանս՝ ասէին. "Բաւէ, զինւոր զօրավարն զմեծ՝ Քաղն տարագիր ՚ի հռովմայ հանեալ, զԱրդեացիս ինքնին փառաւոր արար արուեստիւք քաջութեամբք մերոյն Կամիլլեայ. և զարդիս քաղաքն՝ որ ծնաւ և սնոյց զայրդ զմեծ՝ յաւեր աւադիկ և ՚ի կորուստ մատնեալ կայ։ Ակ մեք դլխովին անբաժք ՚ի զօրավարէ՝ փակեալք արգելեալք ՚ի ներքոյ պատուարաց օտարին՝ անգործք ՚ի խնամոց լքեալ թողեալ եմք զխոտելիս։ Չապա ճն առեալ՝ յղեացուք առ, և զմեր զօրավարն խնդրեացուք յԱդրեացւոց անտի, կամ թէ ինքնին մեք առեալք զլէնս ընթացուք առ նա։ Քանզի դա այսուհետև տարագիր տարաշխարհիկ չէ, և մեք ինքնին այսուհետև քաղաքացիք եմք հայրենի քաղաքին՝

որ չէ ՚ի միջի, այլ ՚ի ձեռս մատնեալ կայ Թշնամեացն ՚՚: Ապա միաբան հաձեալ ընդ խորհուրդն՝ առաքեցին և աղաչէին զԿամիլլոս յանձն առնուլ զիշխանութիւն զօրավարութեանն: Նա ընդդէմ կայր խորհրդոյն, մինչև քաղաքացեացն՝ որ ՚ի Կապետոլիոն անդր նստէին՝ քուեայս արկեալ ըստ օրինացն. ՚՚Քանզի ցորչափ կեան՝ ասէ՝ և ապրին դոքա, զնոսա համարիմ ես հայրենի քաղաք. և մտադիւրագոյնս հնազանդեալ կամ ՚ի հրամայել նոցա. իսկ յակառակ կամն դոցա՝ ՚ի գործ ինչ երբէք չլինիմ միջամուխ ՚՚: Աբանչացան ընդ բարեպաշտութիւն և ընդ քաջալաւութիւն առնն. այլ տագնապեալ տառապէին՝ զիարդ զհրեշտակութիւն զայն առաքեացեն նոքա ՚ի Կապետոլիոն. նա և գլխովին յանհնարինն Թուէր նոցա՝ եթէ հրեշտակ ոք պատգամաւոր անցեալ գնասցէ ՚ի դըղեակ անդր քաղաքին՝ մինչդեռ քաղաքն ՚ի Թշնամեաց անտի կալեալ բնակեալ լցէ:

Ա՛րդ էր յայնժամ առ նոսա երիտասարդ անուն Պոնտիոս Կովինիոս՝ ըստ զարմին միջակային ՚ի քաղաքացիան, այլ փառաց և պատուոյ հետամուտ այր: Սա մտադիւր յանձին կալաւ զդժուարին մրցանան, այլ գիրս և նամականեր չէառ ընդ իւր՝ առ որս ՚ի Կապետոլիոն նստէին Հռովմայեցիք. զի մի Թերևս յըմբռնել նորա՝ ՚ի տառից անտի ՚ի վերայ հասցեն Թշնամիք խորհրդոյն կամիլլեայ: Այլ հանդերձ հնոտի առեալ նա զանձամբ, և ՚ի ներքոյ բար-

ձեալ կեղևս անկենդոյ, զցերեկ ողջոյն ընթացաւ զամենայն ճանապարհն յաներ-
կիւղս. իսկ յերեկոյանալ աւուրն մերձ եղեալ՝ի քաղաքն, և քանզի չէր նմա հնար ընդ կամուրջն անցանել զգետն, զի գիշերապահք նստէին բարբարոսք, առեալ զհանգերձն շուրջ կապեաց՝ի վերայ գլխոյն, զի և ոչ շատ ինչ էր և ծանրաբեռն, և ըզկեղևան անկենդոյն յարեաց յերիվարեաց ընդ մարմինն՝ և առաւել թեթևաբարձ այնպէս անկաւ՝ի լիւղ, և անցեալ եկն եմոստ գաղտաբար՝ի քաղաք անդր: Զդուշացաւ անձին, և խոյս տուեալ միշտ՝ի աքնուխենէ պահապանացն՝ ուրանօր միանգամ խառոյկք վառեալք ազդէին նմա և ձայն ազդակին, չոքաւ եհաս՝ի դուռն Կարմենտեան: Ընդ հանդարտութիւն բազում էր և լռութիւն մեծ, և անդանօր յաւէտ ուղղորդ և սեպացեալ բարձրանայր բլուր Կապետոլինին, և շուրջ որձաքարիք բազում վիմաց և աւիափայք պատեալ կային՝ ընդ որս մագլցի գաղտագողի ելանէր նա՝ի վեր անդր, և սաստիկ տաժանմամբ հազիւ ուրեմն վատեալ յուժոյ եհաս մինչև առ պահապանս պատուարացն: Անդանօր ողջունեալ Պոնտիոս զարան, և յանուանէն ծանօթս տուեալ անձինն և ժողովեալ՝ի նոցանէ՝ դէմ եդեալ չոքաւ առ աւագանին Հռովմայեցւոց: Փութապէս՝ի մի վայր խմբեցան նոքա, և կայր Պոնտիոս և պատմէր նոցա զյաղթութիւնն կամիլլեայ, ո-
րում յառաջագոյն ոչինչ իրազեկ էին նո-

քա. և Ծանոյց ևս նոցա զՊիտս և զկամս զօրականին. և այնդէր յորդորէր՝ հաստատել կարգել զԿամիլլոս յիշխանութիւն զօրավարութեան. իբրու այն՝ զի նմա միայնոյ խնդրեն հպատակ կալ քաղաքացիք՝ որ արտաքոյ Հռովմայ: Նոքա լուեալ և խորհուրդ ՚ի մէջ առեալ՝ կարգեցին անդէն իշխանապետ զԿամիլլոս, և զՊոնտիոս անդրէն ընդ նոյն Ճանապարհ առեալ արձակկէին. նա իբրու զառաջինն բարեյաջող հանդիպեալ ելից՝ գաղտ և աներևակ ՚ի Թշնամեաց եկն եհաս, և զհրաման Ծերակուտին առեալ բերէր հրեշտակութեամբ առ Հռովմայեցիսն՝ որ արտաքոյ կային: Իբրև նոքա մատուցին ընկալան, այնուհետև Կամիլլոս յառաջ մատուցեալ և Թիւ համարոյ առնէր զօրականին որ ընդ ձեռամբ իւրով իբրև քան հազարաց. կուտէր ասպա խմբեր բազմադոյն ևս այլ ՚ի նիզակակցաց անտի, և հանդերձէր կազմէր յարձակել ՚ի վերայ: Եւ այսպէս իշխանապետ այս երկրորդ անգամ կարգեալ Կամիլլոս, եկ ջոքաւ առ Վէյացիսն և գտանէ անդ զզօրն Հռովմայեցի. և շատ ևս այլ ՚ի նիզակակցացն առեալ ստուարացոյց ըզգունդն, անդուստ խաղալ դիմել ՚ի վերայ Թշնամեացն:

Իակ ՚ի Հռովմ քաղաքի ոմանք ՚ի բարբարոսաց անտի անցեալք ըստ գիպաց ընդ նոյն վայր, ընդ որ գիշերի Պոնտիոս ՚ի վեր ելեալ էր ՚ի Կապետոլիոն, տեսանէին անդանօր բազում ուրեք հետս ջոտից և զձե-

ռաց՝ իբրև զմադլողաց և զոտնակառելոց, և բազում ուրեք ևս այլ զԹվփոցն զինքնաբուսից ընդ ժայռս՝ զաւերն և զաղճատել, և զանդանօր հողոյն աստ և անդ զառաքուր կոխել։ Ապա չղթան պատմեցին զայս Թագաւորին. նա ինքնին եկեալ ՚ի վայր անդր և յակն արկեալ՝ լուեաց յայնժամ և ոչինչ ասաց. իսկ յերեկոյին պահու ՚ի մի վայր ժողովեալ առհասարակ զմարդիկն՝ որ միանգամ՚ի Կեղտս Թեթևընթացք յոյժ մարմնով և արագունք, և որ անդստին ՚ի ծնէն բնաւորեալք յաւէտ լեռնագնացք վերնաչուս լինել, խօսէր ընդ նոսա և ասէր. "Ուղի իմն անծանօթ մեզ՝ անձամբ անձին Թշնամիք ցուցանեն մեզ երթալ առ նոսա. իբրու որ ոչ անհետ իցէ ՚ի մարդկանէ վայրդ այդ, և ոչ ամայի անկոխ։ Արդ ամօթ մեծապէս է, եթէ որ սկիզբն արարաք՝ նուաղեալ գոանիցիմք ՚ի վախճանի և Թողեալ լքանիցեմք զտեղիս զայս՝ իբրու որ անառիկ իցէ. յորժամ նոքին իսկ Թշնամիք մատնանիշ ցուցանեն մեզ, ուստի առնուլ մարթ իցէ։ Քանզի ընդ որ միւսմ ումեք հեշտին է ՚ի վեր ելանել, ոչինչ գժուարին իցէ արդեօք և բազմացն ի ըստ միոջէ. նա՝ և արուի պնդութիւն և արիութիւն և զօրավիգն մեծապէս տացէ այր ընկերի իւրում։ Բայց ապա պարգևաց մատունք և պատուոյ շուք՝ քաջալայեալ ուրուքեան քաջութեան մատուցին առն առն իւրաքանչիւր"։

Իբրև զայս իօսեցաւ Թագաւորն, մոա-

գիւրագոյնս յանձին կալան զբանն Գաղա-
ատացիք. և ապա զհասարակ գիշերաւ ՚ի
վեր երեսաց ընթացեալք, բազումք միան-
դամայն ընդ առաւպարան գնային ՚ի վեր
անշշունչք՝ կռուեալք և պնդեալք ընդ
ժայռս սեպացեալս և գժուարակոխս, բայց
և ՚ի փորձ անդ նոցա՝ ոչինչ այնպէս ուղ-
ղաբերձս և անեղս և անկոխա՝ որպէս կար-
ծէին յառաջագոյն: Իբրև անդ առաջինքն
հասին կալան զծայրս բարձանցն, պատ-
րաստեալ էին ունել զնախապարիսպն և
ձեռն ածել ՚ի պահապանն՝ որ անկեալ
ննջէին. քանզի և ոչ ՚ի մարդկանէ ոք ա-
մենևին յայնժամ իրազգած եղև և ոչ ՚ի
շանց. այլ սագք ոմանք նուիրականք՝ էին
անդանօր առ մեհենիւն Հերայ, զոր յայլ
ժամանակս բուծանէին առատ կերակրովք.
իսկ յայնժամ ՚ի նուազել պաշարոց՝ որ և
հազիւ մարդկանն բաւականք էին, այնպէս
լքեալ կային սագքն և հիւծեալք վաստէին.
և է կենդանիս այս անդաստին ՚ի բնութենէն
սուր լսելեօք և առ ամենայն սօսիւն ահա-
բեկ: Իբրև այս սագք առ քաղցուն այն-
պէս տքնեալք, և բազմակարկաչք ևս բնա-
ւորեալք, անդէն փութանակի զդացին
զմուտ Գաղատացւոցն և ընդ առաջ վա-
զեալք նոցա՝ մեծակարկաչ ձայն բարձեալ
առհասարակ զարթուցին զամենեսեան,
յայնժամ և բարբարոսք լինքնին խուռվ
ամբոխից հարեալ՝ զի ոչ կարացին ծածկել
զանձինս, սաստիկ ևս ուժով ՚ի վերայ յար-
ձակեցան պահապանացն: Նոքա առ ձեպ

սագնապին՝ յափշտակեալք որ զինչ և զէն ի ձեռս բերին այր այր ի նոցանէ, ի մօտալուտ վտանգէն պաշտպանէին անձանց: Իսկ առաջին ամենեցուն նահատակ Մանլիոս՝ հիւպատեան այր, և կորովու- թեամբ ևս մարմնոյն և հոգւոյն արու- թեամբ ականատուր, գիմագրաւ արձանա- ցեալ ընդդէմ երկուց ախոյեանից ի թըշ- նամեաց, աճապարեաց՝ մինչդեռ մին ի նոցանէն ի վեր ամբարձեալ ունէր զտա- պարն՝ եհար սուսերըն և կտրեաց զաջոյ ձեռն նորա. իսկ ընդ միւսն ասպարաւն ոգորեալ՝ հարեալ ընդ երեսան գահավէժ ընդ կրունկն ի վայր հոսեաց ընդ պա- րեխան: Եւ ապա ի վերայ արձանացեալ պարսպին հանդերձ նիզակակցօքն և որ միանգամ շուրջ զնովսեան էին՝ յետս ըն- կղմեր վաներ և զայլս ի նոցանէ որ ի վեր ելեալ էին ոչինչ բաղումք, և ոչ ի ժա- մուն արժանի ինչ գործ գործէին նահա- տակութեան իւրեանց: Եւ այսպէս ապա անձնասպուր եղեալ ի վտանգէն, անդէն յառաւօտուն պահու զգլխաւոր պահա- պանացն Հռովմայեցիք գահավէժ ընդ ժայռան արկանէին ի մէջ թշնամեացն: Իսկ Մանլիոսի մրցանակ յաղթութեանն վճիռ եառն ի շուք պատուոյ՝ քան եթէ ի պէտս ինչ՝ ընձեռել նմա այր այր իւրա- քանչիւր զօրապահիկ կերակուրն՝ զկիսա- լիսր գաւառական ցորենոյն, քանզի այս- պէս կոչեն զայն. և զգինւոյ՝ զչորրորդն հելլենացի կոտիւլին:

Եւ յայնմ հետէ և առյառապայ լքան լուծան կելտք՝ ի գործս իւրեանց. և քանզի և կերակուրք նոցա նուազեալ էին, և դարձեալ ամբարել պաշարս ոչինչ իշխէին առ ահի երկիւղին Կամիլլոսի: Ար այս՝ և ախտ մահու Ճարակեալ էր՝ ի նոսա, որ՝ ի բազմութենէ անոի դիականցն անկելոց և չեղջաչելջ կուտելոց՝ խորանս հարեալ էին՝ ի մէջ աւերակաց: Հանդերձ այսու՝ անդանօր և մոխրակոյտն բազում հոսեալ՝ ի հողմոյ, և՝ ի ոսթոյն չորութեամբն և դժնէութեամբն չարաչար վարակեալ առ հասարակ զօդն՝ վատթարէր զմարմինս՝ ի ուր և առ չնչոյն: Եւ առաւել ևս՝ փոփոխութիւնն տնկակից քաղաքավարութեան կենաց մարդկանն, որք՝ ի հովանաւոր վայրաց անոի իւրեանց՝ որ գիւր և ապաւէն էին ոսթայելոցն ամարայնի, եկին անկան՝ ի գաւառ անդր զիջագոյն և խոնարհ և խորշակահար՝ առ գուրս աշնայնոյն, տագնապեաց զնոսա. առ այս՝ և բազմաժամանակեայ դէգերումն և պաշարումն կապետոլէոնին. քանզի այն եօթնեերորդ ամիս էր յորմէհետէ պաշարեալ նստէին. մինչ զի և ախտ մահու բազում չերանէր՝ ի բանակին, և ոչ թաղել անգամ բաւական ինչ էին՝ ի բազմութենէ անոի մեռելոցն:

Ալ սակայն և քան զայն լաւագոյն ինչ չէին իրք պաշարելոցն՝ ի նեղքս. քանզի երթալով երթայր և սաստկանայր սովն՝ ի վերայ նոցա. և այն ևս՝ զի անգէտք էին ամենևին իրացն Կամիլլոսի՝ մեծապէս թաղ-

ծուխին ածէր ի վերայ նոցա: Քանզի և ոչ ի կամիլլեանց անտի ոք կարէր անցանել առ նոսա. որպէս զի մեծաւ զգուշութեամբ պահ արկեալ էին քաղաքին բարբարոսքն: Եւ իբրև այսպէս երկոքին կողմանքն ի տարակուսի կային, զառաջինն ի մէջ յառաջապահ զօրականին զըղյեք դասանց պայմանաց յածեալ՝ սկսան նոքա խօսել ընդ միմեանս: Իսկ իբրև այն հաճոյ Թուեցաւ և աւադացն, առաքեցաւ Սուլպիկիոս տրիբուն Հռովմայեցւոց ի միասին գալ խօսել ընդ Բրենննոսի. դարձն եդեալ հասարակաց հաւանութեամբ՝ զի Հռովմայեցիք հազար լտերս ոսկւոյ կշռեալ տացեն. իսկ Գաղատացիք առեալ զկշիռն՝ անդէն չուս արարեալ մեկնեացին ի քաղաքէն և ի գաւառէն: Իբրև երդմունք ևս կռեցան վասն այսորիկ, և առեալ բերին զոսկին, անդ զառաջինն գաղտաբար խարդախէին կեղտք ի կշիռն. ապա և յայսնապէս՝ Թինդս տուեալ և ըստ իւրեանց քմացն հակամիտեալ զնժարն, ի սրտմտութիւն բերդեցան Հռովմայեցիք ի վերայ նոցա: Յայնժամ Բրեննոս իբրու Թշնամանս դնելով և եպերանս, արձակեալ զսուր իւր հանդերձ կապարանաւն՝ եդ միանգամայն ի լուծ անդր կշռոցն: Իբրև Սուլպիկիոս հարցանէր, եթէ զի՞նչ իցէ այն, ետ պատասխանի և ասէ. Ձի՞նչ այլ, բայց ընդ վայ ասել ի պարտութիւն մատնելոցն. և ապա յառակս եղև բանս այս: Իսկ յայնժամ կէսք ի Հռովմայեցւոց ի մեծ բարկութիւն

բրդեալք՝ ասէին բառնալ անդրէն զոսկին և գնալ ՚ի բաց, և կրկին պաշարմանն տևել տակաւ իբրու զառաջինն: Բայց և կէսք խորհուրդ տային ժուժալ չափաւոր անի- բաւութեանն, և մի առ առօթ ինչ անար- գանաց գրել զառաւէլառուր ոսկին. իբրու որ զտաղն ինքնին ոչ իբրև գեղեցիկ ինչ յանձին կալան նոքա, այլ ՚ի հարկէ ժա- մանակին ստիպեցան այնպէս:

Իբրև այս պայքարք և կռիւք Հռով- մայեցւոց յուզէին ընդ Կելտս, գարձեալ և ընդ Միմեանս, անդուստ Կամիլլոս զզօրն խաղացուցեալ եկն եհաս ՚ի դրունս քա- ղաքին: Լուր առեալ զնրացն՝ հրաման ետ և յիւրոց անտի երթալ և գեղեցիկ կար- գաւ և հանդարտութեամբ միջամուխ ՚ի գործն լինել. իսկ ինքն ընդ աւագանւոյն ամբապարեալ վաղվաղակի գայր հասանէր ՚ի վայր անդր առ Հռովմայեցիս: Ընդ տե- սիլ նմա տուեալ ամենեցուն և ՚ի շուք պա- տուոյ պատկառանօք և լռութեամբ ժողո- վեցին զնա իբրև ինքնիշխան տէր. նա ան- դէն զոսկին բարձեալ ՚ի կշռոց անտի՝ ետ զայն պաշտօնեայ դահճացն. իսկ կեղ- ծացն հրաման ետ առնուլ բառնալ զկշիռն իւրեանոյ և զմէտան՝ և գնալ ՚ի բաց. և ա- սէր այսպէս. Երկաթով՝ հայրենասէր օրէնք են Հռովմայեցւոց՝ պատերազմանել զհայրենիս, և ոչ ոսկով: Իբրև ՚ի ցասումն բրդեալ ան- դառնօր Բրեննոս՝ բողոք բառնայր, եթէ անիրաւութեամբ քակեալ լուծանին այ- նուհետև պայմանք դաշինն, կրկնեաց կա-

միլլոս. "Ո՛չ օրինաւոր ինչ եղեն դաշինքդ և ոչ վաւերականք: Եւ քանզի ես ինքն ընտրեալ կարդեցայ իշխանապետ, և ըստ օրինաց չէք ոք այլ իշխան, դաշինքդ եղեն ընդ որս իշխանութիւն ինչ չունէին նոքա. իսկ զարդիս՝ եթէ ինչ մի այլ կամիջիք խօսել, ընդ իս արժան է խօսել: Քանզի ըստ օրինացն իշխան կարգեալ կամ՝ տալ ներումն եթէ խնդրեսցեն. և պատիժ պատուհասի կապել ի վերայ յանցաւորացն՝ եթէ ոչ ապաշխարեսցեն":

Զայս լուեալ, յոյժ ամբոխեալ խռովեցաւ Բրեննոս, և սաստիկ ալմուկ չփոթից յուզեր գրգռեր ի ժամուն. որպէս զի և երկոքին ևս կողմանք զայրացեալք՝ մերկեալ զսուսերս վանէին զնրեարս. և անդ խառնաւորեալ ընդ միմեանս եղեալք՝ որպէս սի ինչ ի դէպ ևցէ կարծել՝ չուրջ վազեալք յայս կողս յայնկոյս ի մէջ տանց բնակութեանց և ի մէջ անձուկ փողոցաց, և ի վայրս տեղեացն՝ յորս ոչ ինչ բաւէին ձակատ յարդարել առ ձակատ:

Բայց Բրեննոս անդէն խելամուտ ի միտս եղեալ՝ առ խաղացոյց զԿեղտան ի բանակ անդր, ոչ շատ զոք կորուսեալ յիւրոց անտի. և ի գիշերին յայնմիկ չուտ հրաման տուեալ ամենեցուն՝ եթող զքաղաքն. և յառաջ խաղացեալ ասպարէզս վաթսուն, եկն բանակեցաւ մօտ ի ձանապարհն սաբինեան: Իսկ անդէն ի ծագել առաւօտուն եկն երևեցաւ ի հանդիպոյ նորա և Կամիլլոս ի զէն զարդ գեղեցիկ

վառեալ, և խրախոյս քաջալերը յայնժամ յորդեալ էր ՚ի բանակին Հռովմայեցւոց։ Իբրև սաստիկ մարտ եղեալ կռուեցան նոքա ընդ միմեանս հարուստ մի ժամանակ, հարուածք բազում ՚ի վերայ եղեալ կէզուացն ՚ի փախուստ դարձոյց զնոսա և հաւասարեալ կալաւ զբանակ նոցա։ Իսկ ՚ի փախըստէից զկէսս՝ անդէն հետամուտ եղեալ կոտորեցին Հռովմայեցիք. և զբազմագոյնն ցան և ցիր հարին ՚ի բերան սրոյ՝ որ միանգամ՚ի չըջակայ գեղից և՚ի քաղաքաց ելեալ անկան ՚ի վերայ նոցա։ Եւ այսպէս նորաստքանչ ինն առաւ Հռովմ, և առաւել նոր բաստքանչ փրկեցաւ գարձեալ. ամիսս էօթն ողջ կալան զնա բարբարոսք. քանզի խուժեալ մտին ՚ի նա սակաւ աւուրբք յետ հաստարակելոյ յուլիս ամսոյն, և ելին անտի ՚ի հաստարակել փետրուարի։

Իսկ Կամիլլոս հանդէս կարգեաց յաղթանակի, ըստ որում և ՚ի դէպ այնմ՝ որ փրկիչ եղև քաղաքին կորուսելոյ և որ զքաղաքն գլխովին առեալ միւսանգամ դարձոյց ինքն։ Անգանօր որ միանգամ տարադէմ լեալ էին ՚ի Հռովմայ, ՚ի միասին ընդ մանկանց իւրեանց և ընդ կանանց ըզհետ կառացն Կամիլլեայ այնպէս մտանէին ՚ի քաղաքն. իսկ որք պաշարեալ կային ՚ի Կապետոլիոն և վայրիկ մի ևս առհասարակ սովամահ սատակեալ էին, ընդ առաջ ընթացեալ գիրկս արկանէին միմեանց, յարտասուս լուծեալք ընդ անակնոնելի կիրս եկեալ հասեալ ուրախութեանն։ Ընդ և

քահանայք և սպասաւորք և աւելածուք աստուածոյն, զոր միանգամ ՚ի նուիրականաց անտի փախուցեալք անդէն ՚ի քաղաքին գաղեաալ էին, կամ թէ ընդ իւրեանս առեալ տարեալ էին, դարձեալ միւսանգամ ողջ անարատ ածեալք բերեալք, հանդէս գեղեցիկ էր տեսիլն՝ այն ինչ քաղաքացիքն զտարփալի ձօնսն զայն նուիրացս մեծապէս խնդութեամբ յիւրեանս առեալ ժողովեցին, իբրու այն թէ նոքին իսկ աստուածքն անդրէն միւսանգամ ընդ նոսա դարձ ՚ի Հռոմ քաղաք արարեալ իցեն։

Յետ այսորիկ կառարեալ զզոհս իւր Կամիլլոս և արբեալ զքաղաքն՝ ըստ սպառուիրելոյ արանցն որ յայսոսիկ քաջափորձք և կիրթքն էին, առեալ նորոգեաց զտաճարան՝ որ կայրինն յառաջագոյն. իսկ ինքն տաճար նոր կանգնեաց դիցն Համբաւոյն և Գուշակին, ՚ի խնդիր եղեալ և գտեաալ զվայրն զայն՝ յորում գիշերայն զգալուստ զայն զբարբառոսացն ձայնն ազդարար ՚ի դից անտի նախասպասուամ եղև կենդիկիոսի Մարկոսի։ Ա՛յլ սակայն կարի դժուարին և մեծապէս հոգարկուԹեամբն Կամիլլեայ և բազմաքրտին աշխատուԹեամբ քահանայիցն՝ հաղիւ ուրեմն գտեալ ՚ի վեր երևեցան վայրք տաճարացն այնոցիկ։ Իսկ իբրև դէպ լինէր և զքաղաքն ինքնին կանգնել լինել՝ որ ամենայն ուրեք քանդեալ աւերեալ էր, լքան լուծման յայնժամ ժողովուրդք առհասարակ, և դեղեալք դանդաղէին ՚ի գործն՝ զերկիք և ամայիք յամե-

նայնէն. և զի՝ և ՚ի ժամուն պէտք էին նո-
ցա առաւել հանգստեան՝ ոգի առնուլ
յաղէտից անտի խրբեանց, քան եթէ ընդ
քիրտն մոանել և վաստակաբեկ խոնջել.
զի և նուաղեալ խակ էին նոքա միանգա-
մայն և ՚ի գոյից ընչից և յուժոյ խրբեանց:
Եւ այնպէս տակաւ նոքա միասանգամ առ
Վէյացւոց քաղաք անդր դարձուցանէին
զաչս խրբեանց. քաղաք՝ որ ամենայնիւ
յարդարուն և կազմ՝ կայր մնայր յիւրում
յակաստանի. ուստի և յայնժամ պատ-
ձառս առին սուտակասպասք խուժանին
բանալ զբերանս՝ այն որ սովորեալքն խակ
էին խօսել առ նոսա ՚ի շնորհս նոցա: Եւ
էր այնուհետև բարուրս իմն լսել և զոյցս
ամբոխից և խեռուեթեանց ընդդէմ կա-
միլլեայ, իբրու որ ՚ի պատուասիրութեան
սակս և փառաց անձինն զլանայ Հռով-
մայեցւոց զքաղաքն զայն զՎէյացւոց՝ ըզ-
կազմինն և զյարդարունն, և հարկ ՚ի վերայ
կապէ նոցա կալ բնակել խորանաւ ՚ի մէջ
աւերակաց, և առհասարակ զհրկիզեալն
քաղաք և զաճիւնացեալն ՚ի վեր առնուլ
կանգնել, որպէս զի ոչ առաջնորդ միայն
Հռովմայ և զօրավար լինքնին անուանեալ
կայցէ Կամիլլոս, այլ և հիմնադիր Հռով-
մայ՝ ՚ի բաց դրդեալ զՀռոմուլոս:

Յայսմանէ ապա ահ երկիւղի պատեալ
պաշարեալ զծերակոյտն վասն ամբոխին,
թոյլ չետ Կամիլլոսի մինչև ՚ի տարի մի ՚ի
բաց յիշխանութենէն կալ՝ զոր և խնդրէրն
խակ. թէպէտ և ոչ յիշխանապետացն եր-

բէք կացեալ էր ի նմին աւագուԹեան աՀեղի քան զվեց ամիս: Իսկ ինքն ծերակոյան խրախուսեր վԻԹարէր զխուժան ռամկին և ածէր հաւանեցուցանէր հնարիմաց և համոզակեր բանիւք. և առեալ մատանին ցուցանէր նոցա զչխրիսն գամբանաց և զգերեզմանս հարց և զնախնեաց նոցա, և յուշ ևս ածէր նոցա զվայրս մեհենից և զնուիրական տեղեացն, յորս Հռոմուլոս ինքնին կամ Նումաս կամ այլ ոք ի Թագաւորաց նոցա՝ նուիրեալ պրեալ, և յաւանդ Թողեալ էր նոցա: Եւ նախ առաջին ի մէջ նուիրականացն նոցա, զոր գտին այն ինչ հատեալ՝ յանդիման ցուցանէին խուժանին, գտեալ անդանօր ի գնել զՀիմունս կապետոլիոնին. իբրու ԹԷ տեղւոյն այնմիկ սահմանեալ էցէ անգրսաւն ի սկզբանէ կալ ի գլուխ Խոալիոյ: Ու այս՝ զի և ամօԹ անարգանաց լինիցի Հռովմայեցւոց, եԹէ վԷտեանն կրակ՝ զոր յետ մարսի պատերազմին կրկին արծարծեալ վառեցին կուսանքդ այդոքիկ, անդրէն կրկին անցցէ դա՝ եԹէ ի բաց լքացեն նոքա զքաղաքն, և ապա յայլոց ոմանց բնակեալ տեսցեն զնա յեկաց պանդխտաց և յօտարաց. և կամ Թէ ամայի անասպատացեալ և կարդեալ յարօտ խաշանց: Յայսպիսեաց աստի ծերակոյան առ այր այր առանձինն և աշխարհաւ դարձեալ՝ խօսեալ բազում անգամ յումնէն խուժանէն՝ գուԹ և գոռով արկանէր նոցա. անդանօր և խուժանն յողոք մատչէր առ նո-

սա, կայր և յանդիման ցուցանէր գանգա-
տելով զեկեալ հասեալ զանձեռնհաս ըզ-
կիրան, և խնդրէր աղերսէր՝ մի զնուաս ոչք
իբրև ի նաւաբեկութեան աղէտից անձնա-
պուր լեալ էին մերկս և անքաստս և մուրա-
ցիկս, առնուլ հարկաւորել՝ զնշխարս ա-
ւերակաց զքաղաքին քանդելոյ կցկցել
միւսանգամ, յորժամ այլ քաղաք կազմ
և ողջանգամ առ ձեռն կայցէ նոցա:

Ապա հաճոյ Թուեցաւ Կամիլլոսի ի
ծերակոյտ անդր ապաստան առնել զբանն.
իսկ ինքնին Կամիլլոս շատ ինչ հրապարա-
կախօս լինէր և յորդորէր ի սէր աշխարհին.
շատ ինչ գարձեալ և այլք՝ որոց միանգամ
հաճոյ էր բանն: Հուսկ ապա իբրև յոտին
կանգնեցաւ Ղուկիոս Լուկրետիոս՝ այն որ
առաջորեալն էր նախ քան զամենեսեան ա-
սել զնորհուրդս իւր, եւ հրաման Կամիլ-
լոս զնա առաջին նա խօսեցուի, և այլքն ըստ
նմանէ: Իբրև առհասարակ լռութիւն լի-
նէր, և Լուկրետիոս ինքնին հանդերձեալ
կազմ կայր սկիզբն առնել բանին, ան-
դուստ ըստ դիպաց արտաքոյ ընդ փողոցն
հարիւրապետս մի ածեալ զվաշտ զօրակա-
նի պահակին տուընջեան, անցանէր մօտ ի
վայր անդր. և անդէն մեծագոչ ձայն ար-
ձակեալ առ այրն՝ որ յառաջոյ գնդին
բարձեալ բերէր զդրօշակն՝ հրաման տայր
զտեղի ունել և անդանօր զդրօշակն հան-
գուցանել. իբրև որ քաջադէպ յոյժ էր
վայրն յոտնակառել: Իբրև այս ձայն լսելի
եղև այնպէս ի ձահ պատահեալ ժամուն՝

յորում խորհուրդք ի մէջ յուզէին վասն հանդերձելոցն և անյայտութեան իրացն, անդէն վաղվաղակի Լուկրետիոս երկրպագութիւն մատուցեալ ասասուածոյ, ասէ. Իմ խորհուրդ՝ ապրուածոյնոյն ընդ էրնայ ձայնին. ապա և առհասարակ միաբան ընդհետ ջոքան Լուկրետեայ:

Անդ էր տեսանել զպաքանչելի փոփոխումն զմտաց խուժանին, զի այր զարամբ պմիմեանս քաջալերեալ խրախուսէին և պնդապնդէս ժրացուցանէին ի գործ անդր, ոչ բաշխելով ինչ յիւրեանս զգործն, կամ թէ կարդ հաստատելով, այլ որպէս և զիարդ առն առն ի նոցանէ առ ձեռն լինէր՝ ըստ կամի իւրաքանչիւր գրաւէր անձին զվայրն ի շինել: Ոստի և այնպէս անյարդար և անպատրաստ ի պողոտայն, և խառնիխուռն ի տունս բնակութեանցն շինեցաւ քաղաքն առ ձեռ փութոյն և ի շոտապ տագնապին: Քանզի պատմեն՝ եթէ ընդ ամ մի կանգնեցաւ միւսանգամ քաղաքն՝ ի պատուարս պարսպացն և յառանձին տունս բնակութեանց:

Իսկ յայնժամ որ միանգամ հրաման առեալ էին ի Կամիլլոսէ՝ երթալ գտանել զվայրս նուիրականս և զսահմանս նոցա, քանզի խառնիխուռն եղեալ էր ամենայնն, իբրև շուրջ յածեալ զպաղատիոնաւն եկին հասին ի մատուռն Արեսի, զայն ևս իբրու զայլսն գտանէին խաթարեալ և հրձիգ եղեալ ի բարբարոսաց անտի: Բայց ի պեղել զվայրն և ի մաքրել, դէպ եղև նոցա

անդանօր գտանել զհաւահմայն ցուպ ըզ-
Հռոմուլոսին ի ներքոյ ամբաւ մոխրակու-
տին թաղեալ: Եւ ե այս ցուպ կորաթեք
ի մի ծայրան, և կոչեն զնա Ղ՚ուռեան: Եւ
վարեն զայն ցուպ ի հովանագրել զաղիւ-
սակս, յորժամ բազմին ի հմայս գուշա-
կութեանց հաւուց. զոր և լինքնին Հռո-
մուլոս վարէր՝ հաւահարց գոլով քաջա-
կերթ: Իսկ երբև Հռոմուլոս աներեւութա-
ցաւ ի մարդկանէ, զցուպ զայն առեալ
քահանայքն՝ երբեմն լինչ մի ի նուիրակա-
նացն պահեցին անմատոյց և անհուպ: Եւ
զնոյն գարձեալ յայնժամ ի ծախել և ի
կորնչել այլոցն՝ գտին զսա միայն անծախ
և անապական. և յոյս գեղեցիկ այնուհե-
տեւ ուրախացեալք կալան վասն Հռովմայ,
երբոր որ նշանակ հաստատութեան էցե
յաւերժական փրկութեանն Հռովմայ:

Ա՚յլ մինչդեռ տակաւին յամբոկ գոր-
ծոյն չէին ժամանեալ նոքա, ի վեր երևե-
ցաւ այլ մարտ պատերազմի. քանզի էկ-
ացեալք ի միասին ընդ Վոլսկեանց և Լա-
տինաց դիմեալք յարձակեցան ի գաւառն.
անդուստ և Տիւրրենացիք հասեալ պաշա-
րեցին զՕուտրիոն քաղաք՝ որ նիզակակից
էր Հռովմայեցւոց: Յայնժամ զօրավա-
րութիւն զանձամբ առեալ տրիբունք խա-
զացին գնացին և բանակեցան առ Մարկիոն
լերամբն, և անդ մնացին պաշարեալք ի
Լատինաց. երբև մեծապէս տագնապեցան
նոքա կորուսանել զբանակն, առաքեցին
ի Հռոմ, և անդէն Կամիլլոս այս երից

անգամ ընտրեալ կարգեցաւ իշխանապետ։ Բայց յաղագս մարտի պատերազմիս այսորիկ կրկնակի պատմին բանք. և ես զառաջնոյն պելսխառնն կարգեցից յառաջոյ։ Ասեն՝ թէ Լատինք (եթէ պատճառս պատճառելով, և եթէ ճշմարտութեամբ կամելով միաւանգամ խառնել զազգ իւրեանց յազգակցութիւն ընդ Հռովմայեցւոցն), առաքեցին խնդրել ՚ի Նոցանէ ՚ի կանայս՝ կուսանս ազատս. իբրև ՚ի վարանս մտին Հռովմայեցիք վասն բանին, քանզի և ՚ի մարտէ պատերազմին երկուցեալ զանդիմացէին՝ զի չև էին հանգարտեալ և ոգի առեալ, և կասկածէին ևս՝ եթէ խնդիր կանանցն թերևս ՚ի պատանգս լինէ իցէ, և ամուսնութեան անուն տան խնդրոյն՝ քօղ արկանել զբանիւն. յայնժամ յաղաւնեայց ումն անուն Տուտուլէ, իսկ որպէս այլք ասեն Փիլովմիդէ, խրատ ետ իշխանացն առնուլ առաքել ընդ իւր ՚ի նաժշտաց անտի՝ որ առոյգահասակքն իցեն և ՚ի դիտակ գիմացն քաջափայլք՝ զարդարեալք զարդու իբրու հարսունս ոմանս քաջազգիս. իսկ ապա զայլն ամենայն ՚ի նա ապատան առնացեն։ Իբրև հաճեալք հաւանեցան իշխանքն ընդ բանն, ընտրեցին նմա ՚ի նաժշտաց անտի որչափ միանգամ հաճոյ թուեցաւ Տուտուլեայ ՚ի պէտս իւր, և զարդարեալ պաճուճեալ զնոսա ՚ի պատմուճան և յոսկի, ՚ի ձեռս ետուն զնոսա Լատինաց՝ որ ոչինչ ՚ի բացեայ ՚ի քաղաքէն բանակեալ կային։ Իսկ ՚ի գիշերին այլք ՚ի

նաժշտացն գաղտաբար բարձին առին ըղ-
դաշնական ՚ի Թշնամեացն. և Տուտուղէն
այն կամ Թէ փիլովիդէն էլեալ ՚ի ժան-
տաթզենի մի մեծ, ձգեաց տարածեաց
պատատակալ մի յետուստ կողմանէն, և
առեալ բարձրացուցանէր ջահ վառեալ ՚ի
հուովմ կոյս, որպէս և զնարդ բան եդեալ
էր նա ընդ իշխանաց քաղաքին, և ոք ՚ի
քաղաքացեաց անտի գիտէր և ոչինչ: Վասն
որոյ և աղմուկ շփոթից լինէր ՚ի վայրն ՚ի
խուժել արտաքս զօրականին, ՚ի խուճա-
պեցուցանել զնոսա զօրավարացն, և զմի-
մեանս ձայն բարձեալ կարդային, և հազիւ
ուրեմն յարդարեալք կացին ՚ի կարգի:
Ապա դիմեալ յարձակեալ ՚ի վերայ զակ-
շին, մինչդեռ ակն չունէին Թշնամիք և ՚ի
քուն կային, հասին կալան սոքա զբանակն
և զբաղուսն ՚ի նոցանէն կոտորեցին: Եւ
եղև այս յեօթներորդումն ամսոյն՝ որ
այժմ կոչի Յուլիս, և յայնժամ՝ Քուին-
դիլիս: Եւ հանդէս ածին՝ զոր կատարեն,
յիշատակ ե գործոյն այնորիկ:

Քանզի առաջին ելանէն նոքա միախուռն
արտաքս ՚ի քաղաքէն, և շատ ինչ ՚ի գաւա-
ռական և ՚ի սովորեալ անուանց իւրեանց
մեծագոչ կարդան, իբրու՝ Գայիոս, Մարկոս,
Լուկիոս, և որ ՚ի սոցուն սակի, զնմանու-
Թիւն բերելով զնրացն՝ զոր յայնժամ ՚ի
շտապ տագնապի ձայն բարձեալ կարդային
զմիմեանս. և ապա աղաղնեալք զարդա-
րեալք պայծառապէս՝ շուրջ գան և խաղ
և կատակ գործեն՝ որոց միանգամ պատա-

հեն: Ալ և մարտ ինն դնեն ընդ միմեանս, ըստ որում և յայնժամ խառնեցան նոքա զօրավիգն 'ի մրցանն ընդդէմ Լատինաց. և ապա ակնթին 'ի խնջոյս ընդ հովանեաւ ոստոց թզենւոյն: Եւ կոչեն նոքա զօրն զայն Նոննայ֊ Քաբռադինայ֊, ըստ որում կարծեն՝ 'ի պատճառս ժանտաթզենւոյն, ընդ որ աղջիկն այն բարձրացոյց զՋահն. քանզի և զՄողաթզենին անուանեն նոքա Քաբռիֆիս֊: Իսկ կէսք ասեն՝ եթէ բազում ինչ 'ի գործոց աստի գործեն նոքա և խօսին 'ի յիշատակ անցիցն Հռոմուլեայ: Քանզի ասեն 'ի նմին աւուր անհետացեալ զնա արտաքոյ դրաց քաղաքին, այն ինչ մեգ և մառախուղ և մրրիկ յանկարծակի հասեալ կալաւ զվայրն. իսկ որպէս և կէսք համարին՝ և արեգակն ինքնին խաւարեցաւ. և յայսմանէ ասեն կոչեցաւ օրն՝ Նոննայ֊ Քաբռադինայ֊, քանզի զԱյծն Քաբռա անուանեն նոքա. և Հռոմուղոս անհետացաւ յայնց ինչգեռ հրապարակախօս լինէր առ Ձիւն՝ որ անուանեալ կոչէր Այծ. ըստ որում 'ի վարս նորա գրեալ կայ:

Ալ զմիւս բանն՝ որում հաւանեն բազմագոյնք 'ի մատենագրաց, զայսօրինակ պատմեն: Իբրև այս երկից անգամ կարգեցաւ Կամիլլոս իշխանապետ, և լուր հառ եթէ 'ի միասին ընդ տրիբունաց և զօրն առհասարակ պաշարեալ կայ 'ի Լատինաց և 'ի Վոլսկեանց, հարկ եղև նմա 'ի զէն 'ի զարդ վառել և զծերս տկարս քաղաքին: Ապա հարուստս միջոցաւ շրջան առեալ առ

Մարկիոն լերամբն՝ եկն եհաս գաղտ ի Թշնամեացն և բանակեցոյց զզօրն ի Թիկանց կուսէ նոցա, և խիտ առ խիտ խառոյկ վառեալ՝ յայն նշան աղդ առնէր Հռովմայեցւոց զգալոյսս իւր: Անդանօր քաջալերութեան ոգի առեալ պաշարեղոցն, խորհուրդ ի մէջ առնուին յարձակել միջամուխ ի մարտ ի վերայ Թշնամեացն: Իսկ Լատինք և Վոլսկեանք ժողովեալք խուռն ի նեղքս ի զակշին, շերտաւորս բազումս հարեալ փակէին և բովանդակ ցանկեալ ամրացուցին զբանակն. քանզի յառաջոյ և զկնի պաշարեալ կային ի Թշնամեացն. եդին ի մոխ անդէն զտեղի ունել և մնալ այլոց ևս զօրաց ի գաւառէն. գարձեալ և ի Տիւրրենացւոց անտի Թիկունս օգնականութեան սպասէին ունել: Իրազգած Կամիլլոս եղեալ, և զանգիտեալ Թէ որ պաշարեալ պահէն զնոսա՝ ինքն զնոյն կիրս կրեսցէ՝ զօր ի վերայ հասոյց նոցա, փութացաւ զառաջս առնուլ ժամանակին: Եւ քանզի ի շերտաւորս փայտից էր պատնշափակն, և հողմ մեծ ընդ արևածայրան բնաւորեալ էր անկանել ի բարձանց լերանցն, նա խարոյկ շատ պատրաստեաց կազմեաց, և ընդ այգն ընդ առաւօտն հորդան տուեալ զօրուն՝ կիսոց ի նոցանէ հրաման ետ նետաձիգ ի Թշնամիսն լինել, և ի միւս կողմանէն գարձեալ աղաղակ բառնալ: Իսկ ինքն առեալ ընդ իւր զօրս պատրաստեաւն իսկ էին հարկանել զհուրն, յայնմ կուսէ՝ ուստի սաստիկ բնա-

ւորեալ էր հողին ընչել ՚ի զակիշ անդր Թշնամեացն՝ անդ կայր մնայր դէտակն կալեալ դէպ ժամուն։

Իբրև մարան դրդռեցաւ և արևածայրքն արձակեցան և հողին ուժգնակի ընչէր, եւ նշան յարձակման. և անդուստ առհասարակ ՚ի զակիշ նոցա հրձգուԹիւնս ամբաւս եռացուցանէր. անդ արագ արագ ընԹացեալ բոցոյն ՚ի նիւԹ խիտ առ խիտ և ՚ի ցանգասատս փայտակերտս, և շուրջանակի առհասարակ ճարակեալ մինչդեռ ոչինչ բաւական էին լատինք առ ձեռ տագնապի՝ ոչ սանձել ինչ և ոչ շինուցանել, որպէս զի և ողջոյն բանակ նոցա պատեալ պաշարեցաւ ՚ի բոցոյն, և ինքեանք յանձուկ վայրին այր զարամբ խռնեցան. և խուճապեալք ՚ի հարկէն խուժէին արտաքս առ Թշնամիս անդր՝ որ վառեալք և ճակատեալք կային ՚ի հանդիպոյ բանակին նոցա։ Մինչ այս մինչ այն՝ նուաղունք յոյժ յայնժամ ՚ի նոցանէ ապրեցան ՚ի սրոյ. իսկ որք զտեղի կալան անդէն ՚ի բանակին՝ առհասարակ ՚ի հուր ծախեցան. մինչև ինքնին Հռովմայեցիք հասեալք ՚ի վերայ շինուցին, և գարձան այնուհետև յաւար բանակին։

Իբրև այս կատարեցաւ, եԹող Կամիլլոս անդէն ՚ի բանակին զորդի իւր զՅուլիոս պահապան ՚ի վերայ գերուցն և աւարին, և ինքն խաղաց գիմեաց յերկիր Թշնամեացն. և առեալ զբազուքն Էկուեանց, և նուաճեալ զՎոլսկեանս, անդէն փութանակի

չու առնէր ՚ի վերայ Սուտրիոնին. զի չև էր նա լուր առեալ զանցիցն՝ որ անցին ընդ Սուտրացիս. փութայր յօգնականութիւն նոցա՝ իբրու որ ՚ի վտանգի կայցեն տակաւին պաշարեալք ՚ի Տիւրրենացւոց անտի: Բայց Սուտրացիք զքաղաքն տուեալ խակ էին ՚ի ձեռս Թշնամեաց, և ինքեանք մերկք և կողոպուտք յամենայնէն՝ միայն հանդերձիւք չափ ՚ի բաց արձակեալ գնացին ՚ի քաղաքէն. և դէպ եղև՝ մինչդեռ նոքա հանդերձ մանկտւով և կանամբք գնալով գնային և աշխարեալք լային զաղէտս իւրեանց, ՚ի Ճանապարհին պատահել նմին խակ Կամիլլեայ: Անդ Կամիլլոս յայն տեսիլ ողորմ ՚ի գութ ալեկիզեալ, այն ինչ և ՚ի հովմայեցիան յակն արկանէր՝ զի ՚ի խաղաղասուել զնոքօք Սուտրացւոցն՝ արտասուս հեղեալ կարեկից լինէին հնչացեղոցն, եդ ՚ի մոռ մի ինչ այնուհետեւ դառնալ ՚ի վրէժ պատուհասին. անդէն վաղվաղակի ՚ի նմին աւուր խաղայր դիմէր ՚ի վերայ Սուտրիոնի. զմտաւ էած՝ եթէ մարդիկ որ այն ինչ կալան զքաղաքն երջանիկ և բազմահարուստ, և ոչ զոք ՚ի Թշնամեացն Թողին անդէն, և ոչ գարձեալ արտաքուստ ինչ Թշնամեաց սպասեալ ինան, նա գլխովին զնոսա լուծեալս և չուայտեալս և անպահապանս գտցէ այնուհետեւ. և յոյժ խնասուեթեամբ այնպէս զմտաւ ածէր Կամիլլոս: Քանզի ոչ միայն ՚ի խաղալ նորա ընդ գաւառն՝ խնացաւ զայն և ոչ ոք, այլ և ոչ յորժամ ՚ի դրունս քաղաքին եկն

Եհաս, և զպարիսպն կալաւ. քանզի պահապան չէգիտ անդանօր, այլ առհասարակ ՚ի գինեբըռա և ՚ի խնճոյս յօրացեալք շուայտէին ՚ի տունս տունս: Իսկ իբրև յանկարծ իրազգածք եղեն՝ եթէ Թշնամիք տիրեցին քաղաքին, այնպէս իմն սաստիկ նոքա ընդարմացեալ էին ՚ի զեղխութիս և ՚ի գինեբռա, որպէս զի և շատք ՚ի նոցանէն և ոչ ՚ի փախուստս մտաբերեցին. այլ ՚ի նեըքս ՚ի տունս մեծապէս խայտառակութեամբ Թմբրեալք այնպէս՝ կամ ՚ի մահ վարեցան կամ անձնատուըք ՚ի Թշնամին եղեն: Եւ այսպէս ապա Սուտրացւոց քաղաքն ՚ի միում անդ աւուր երկիցս անգամ առաւ. և գէպ եղև՝ զի որք առինն զնա՝ ՚ի բաց վարեցան, և որք կորուսինն՝ դարձեալ միւսանգամ ՚ի ձեռն Կամիլլեայ:

Այլ յաղագս այսոցիկ յաղթանակին հանդէս, ոչինչ պակաս քան զերկուս առաջինան՝ շնորհս և շուք պատուոյ ՚ի նեըքս եբեր Կամիլլեայ. քանզի որք միանգամ կալի ընդ ակամբ խեռայինն ընդ նա ՚ի քաղաքացեացն, և որք զամենայնն, քան առաքինութեան նահատակութեանց նորա՝ բաղդին ընծայէին, ստիպեցան յայնժամ յարդեանց գործոցն՝ քաջափորձ հմտութեան և ժրութեան առնն ընծայել ըզփառան: Իսկ որ առաւել ականատուրն էր ՚ի հակառակորդս նորա և ՚ի նախանձաւորս՝ էր Մարկոս Մանղիոս. այն՝ որ առաջին վանեաց զկէղտան ՚ի ծայրից անտի Կապետոլիոնին, որք գիշերային գիմեցին անդր.

վան որոյ և ինքն կապէտոլինոս անուն ընկալաւ: Սա Թեկին ածեալ զնախաձոռ բարձի 'ի մէջ քաղաքացեաց, իբրև ոչինչ բաւական էր գերազանցել 'ի վառս քան զԿամիլլոս գեղեցիկ նահատակութեամբք, սկսաւ օրինակ զբռնաւորութեանն հայթհայթել զհատարակացն և զսովորականն, սուտակատպատուութեամբ լինքն յանկուցեալ զխուժան ռամկին, և առաւել եա՝ զպարտապանն. կխօցն 'ի նոցանէ նպաստ լինելով և պաշտպան ընդդէմ պարտատէարցն, և զկէս 'ի բաց կորզեալ բռնի 'ի 'ի դատաստանէն՝ Թոյլ ոչ տալով նոցա 'ի նեղքոյ դրաւիլ օրինացն: Եւ այսպէս ապա շատ զոք յաղքատաց և 'ի չքաւորաց մարդկանն արագ արագ շուրջ զիւրև գումարեաց. և ահ և երկիւղ բազում այնուհետեւ 'ի նեղքս բերեր աւագաց քաղաքին 'ի ժպիրհ խեղուԹենէն՝ որ 'ի վեր 'ի վայր խուռվեր զհրապարակն: Իսկ իբրև նմին իրն իշխանապետ կարգեցաւ Կուինտոս Կապետոլինոս, առեալ զՄանլիոս յարգելանս արկանէր. իբրև այս եղև՝ անդէն և խուժանն փոխեաց զհանդերձս. և էր այս սովորութիւն ամբոխին 'ի դէպս մեծամեծ և աշխարհական աղէտից. զահի հարաւ Սինկլիտոսն՝ եԹէ աղմուկ յուզեցի խուռվութեան, եւ հրամայն յանդորր հանել զՄանլիոս: Բայց նա ոչ եԹէ զգաստացեալ լինչ 'ի լաւագոյնս դարձաւ, այլ լըրագոյն եւս ստահակութեամբ ամբոխ յուզէր և խուռվ հարկանէր 'ի քաղաքին:

Իբրև միւսանգամ ընտրեցաւ Կամիլլոս որբեռն զօրականին, ամբաստանեցաւ դարձեալ Մանլիոս ՚ի դատաստանի. սակայն մեծապէս խոչ դատախազին արկանէր տեսութիւն վայրացն։ Քանզի վայրն՝ յորում քաջաբար Մանլիոս գիշերամարտս մրցեցաւ յայնժամ ընդ Կելտոն՝ անդուստ ՚ի ծայրից Կապետոլիոնին ՚ի դուրս կարկառեալ հովանոցայր ՚ի վերայ հրապարակին. և ՚ի կոյս անգր Մանլիոս մատուռնս տատանեալ ՚ի վեր ՚ի վայր՝ գուշս արկանէր տեսանելացն և զդերարտօսրն հոսեալ յաչացն՝ յուշ ածէր նոցա զմրցանս նահատակութեան իւրոյ, որպէս զի և դատաւորքն ինքնին վարանեցան, և բազում անգամ յամրագոյնս զդատակնիքն գործեցին. ոչ անպատուհաս զյանցանսն կամէին արձակել յետ ակներև ցուցակութեանցն, և ոչ դարձեալ Հանդուրժէին տալ դատաւճիռ ըստ օրինացն, ակն յանդիման ունելով զմրցանսն նորա ՚ի վայրաց անտի։ Յայնժամ խորհուրդ ՚ի մէի եդ Կամիլլոս առնուլ զտեսանն դատաստանին և վոխել արտաքոյ դրաց քաղաքին ՚ի Պետիոլինոն անտառն, ուստի ոչինչ երևէր Կապետոլիոն. անդա նոր ապա դատախազն եդ առաջի զամբաստանութիւնսն, և դատաւորացն մոռացօնք եղեալ յիշատակ առաջինն գործոց նորա, ՚ի պատմութիւն դատաստանին բղխեցան ՚ի վերայ վերջին անիրաւութեանց նորա։ Եւոան ունել զՄանլիոս, և ածեալ հանել մինչև ՚ի Կապետոլիոն, անդուստ ընդ

պարեխան ՚ի վայր հոսեցին զնա. և այնպէս նոյն մի տեղի եղև Մանկունոսի յիշատակարան գեղեցիկ նահատակութեան նորա, դարձեալ և բազմաղէտ արկածից նորա: Իսկ զաուն բնակութեան նորա հիմն ՚ի վեր տապալեցին Հռոմայեցիք, և կանգնեցին տաճար դիցուհւոյն՝ որում անուն կարդային Մոնետաս. և վճիռ ևս եւոան՝ զի մի այնուհետև ոք ՚ի պատրկաց յակառն բնակութիւն կալցէ:

Բայց Կամիլլոս այս վեցից անգամ հրաւիրեալ ՚ի սրինբունութիւն զօրականին՝ ՚ի բաց հրաժարէր պատճառելով եթէ անցեալ զաւուրքք էցէ 5, առ այս՝ և երկուցեալ զանգիտէր ՚ի մահանաց նախանձուն և ՚ի ձախողակ եղից յետ այնչափ վաստացն և գեղեցիկ նահատակութեանցն. իսկ յայտ յանդիման պատճառք էր նորա վատութիւն և խօթութիւն մարմնոյն. քանզի և ընդ այն աւուրս դէպ եղև նմա խօթանալ: Ա՛յլ ամբոխ ժողովրդեան ոչնչէ ներեաց նմա հրաժարել յիշխանութենէն. և ձայն բարձեալ աղաղակէր եթէ ո՛չ կամին զնոցա ո՛չ յերկիւար աշտանակել և ո՛չ սպառազինութեամբ ՚ի մարտն մտանել, այլ զի խորհուրդ միայն հրամայեսցէ և հրամանատարութիւն յանձին կալցէ, և այնպէս՝ ապա հարկաւորեալ ստիպեցին յանձն առնուլ զզօրավարութիւնն, և անդէն վաղվաղակի ՚ի միասին ընդ Լուկիոսի Փուրիոսի որ մի էր յիշխանակցաց անտի իւրոց՝ ածել խաղացուցանել զզօրն ընդդէմ Թըչ-

նամեաց: Եւ էին յայնժամ Թշնամիքն Պրենէստեանք և Վոլսկեանք, որ սաստկապէս գնդաւ հասեալ՝ յաւար հարկանէին զերկիր նիզակակցացն Հռովմայեցւոց:

Զոր արար խաղաց գնաց Կամիլլոս և եկն բանակեցաւ մերձ առ Թշնամիսն, և կամէր ինքն ընդերկարել զկռիւն, զի՝ ի պէտս և ինքն առողջ մարմնով խառնեսցի՝ ի մարտն: Բայց Լուկիոս իշխանակից նորա՝ ի բուռն ցանկութենէ փառացն բերեալ անդէն միջամուխ՝ ի վտանգն լինել, և իբրև՝ ի նոյն ևս դրդեին զինա և զօրապետքն և գնդապետքն, զանգիտեալ Կամիլլոս՝ Թերևս խանդալ ինչ կարծեսցեն՝ ի զլանալ սորա զնահատակութիւնն և զփառս անձանց երիտասարդաց, Թոյլ ետ նմա յակամայ կամն ձակատեցուցանել զզօրն. իսկ ինքն առ տկարութեան մարմնոյն զառելն կալաւ անդէն՝ ի բանակին ընդ սակաւուց ոմանց: Իսկ Լուկիոս յանդգնաբար մեաալ՝ ի մարտ պատերազմին, ընդկրունկն խուճապեցաւ. լուր ետ Կամիլլոս զփախստեան Հռովմայեցւոցն, և ոչ հանդուրժեալ, յարեաւ վազեաց յանկոչնոյն, չոքաւ ընդ առաջ հանդերձ իւրովքն մինչև՝ ի դուրս անդ պատնշին, և անցեալ ընդ մէջ փախստէից՝ գուն գործեր յետս զհետամուտսն ընկրկել, զի և արագ արագ անդէն յետս դարձան փախստեայքն և զհետ երթային նորա. իսկ որք արտաքուստ՝ ի բանակն խնդրէին ապաւինիլ, զառելն առին և նոքա յանդիման նորա՝ ի միասին

պաշտպանել նմա. ձայն բարձեալ գոչէին առ միմեանս մի թողուլ լքանել զզօրավարն իւրեանց: Եւ այնպէս ապա յետս նահանջէցան յայնժամ Քշնամիք ի հետամուտ պնդելոյն: Իսկ յերկրորդումն աւուր յառաջ մատուցեալ զզօրն ինքնին Կամիլլոս, և միջամուխ ի մարտն եղեալ՝ ի պարտուլթի մատնէր զնոսա զօրութեամբ. և զղակիչն հասեալ կալաւ՝ անկեալ ի նեղքս ի միասին ընդ վախատէից՝ ուր խուժեալ ապաւինէին նոքա, և զբազմացոյնս ի նոցանէ անդէն ի սուր սուսերի իւրոյ մաշէր:

Յետ այսորիկ լուր առեալ եթէ զքաղաքն Սադրիա առին Տիւրրենացիք, և ըզբնակիչս նորա տապաստ արկին՝ որ էին առհասարակ Հռովմայեցիք, առեալ ըզբազումս ի զօրականէն՝ ի նոյն և զծանրագիենան ի նոցանէ արձակեաց ի Հռովմ. և ինքն զառօդահասական և զդիմադրաւսն ընտրեալ և տարեալ ընդ իւր, անկաւ ի վերայ Տիւրրենացւոցն՝ որ կալեալ ունէին զքաղաքն. տիրեաց նմա, և զկէսս ի նոցանէ հալածէր վանէր, և զկէսս ի բեռան սրոյ մաշէր: Ապա բազում աւարօք դարձ արարեալ ի Հռոմ, եցոյց՝ եթէ հանճարեղք ուրեմն էն՝ որք ոչնչ զանգիտեալ ընդ խօթութիւն և ընդ ծերութիւն զօրավարին՝ որ քաջափորձ հմտութիւն և արուեստիւն քաջութեան յանձին բարձեալ բերիցէ, զնա առաւել կալցեն ի գլուխ՝ Թէպէտ և ակամայացեալ՝ Թէպէտ և խո-

Թացեալ ևս մարմնով լցէ, քան եթէ յե-
ւիտասարդաց զոք՝ որ փութոյ սնդուքէ
և պատուասիրաբար հետամուտք իշխանու-
թեան լցեն: Վասն որոյ և իբրև անդրէն
լուր գուժեաց, եթէ վատրանջեցին Տուա-
կուղեանք, հրաման տային Կամիլլեայ խա-
զալ ելանել ընդդէմ նոցա, ընտրեալ իւր
զմի ոք ի հնգից իշխանակցաց անտի իւրոց:
Իսկ Կամիլլոս՝ թէպէտ և առհասարակ նո-
քա դիմադրաւ զանձինս ի նեղըքս տային
յայն նահատակութիւն, թողեալ նա զայլսն՝
նախապատիւ ընտրեաց զՈւկիոս Փուրիոս,
որում և ոչ ոք արդեօք ակնկալեալ ճնայր:
Քանզի նա ինքն Լուկիոսն էր, որ հակա-
ռակ խորհրդոցն Կամիլլեայ՝ այն ինչ յան-
դգնաբար ի մարտն մտեալ և ձախողակ ե-
լից պատերազմին պատահեալ էր: Սակայն
քան զամենեսեան՝ զնա յառաջ ընծայե-
ցուցց. կամէր պատրուակ արկանել աղէտից
նորա՝ որպէս հաւանեալս եմ՝ և զամօթ
անարգանաց առն ի բաց սրբել ի նմանէ:

Իսկ Տուսկուղեանք քօղաձիգ զյան-
ցանսն առնելով խորագէտ խորհրդով իբ-
րև անդուստ գիմեալ խաղայր ի վերայ նո-
ցա Կամիլլոս, զզաշտագետինն առհասա-
րակ լցին մարդկամբք. և իբրև յանդորրա-
էտ խաղաղութեան յայնժամ կէսք մշա-
կէին զերկիրն, և կէսք յարօտս հանեալ ա-
րածէին խաշն. իսկ դրունք քաղաքին առ-
հասարակ ամենայն ուստեք բաց, և ման-
կունք նոցա հետևեալք ի վարժարանս՝
պարապէին յուսմունս. անդ էր տեսանել

զի և արուեստագէտք ժողովրդեան այր իւրաքանչիւր ՚ի գործարանան պարապէին ՚ի ձեռակերտս իւրեանց. և քաղաքացիք անդէն ՚ի հրապարակին դէգերեալք՝ արկեալ զանձամբ պատմուճանս, և իշխանաւորքն ՚ի նոսա աստ անդ վուխթային ձեպելին տալ պատրաստել օթեվանս և իջևանս հռոմայեցւոց. իբրու որ ոչինչ իմիք ՚ի չարեաց ակնկալեալք ճնասցեն, և որք խիղճ չար ՚ի միտս չունէին: Թէպէտ և զայս ամենայն արարին նոքա, ոչինչ դաւեցաւ Կամիլլոս ՚ի յանցանս վտարանդուԹենէ նոցա. սակայն ՚ի գուԹ մեծապէս շարժեցաւ ընդ զէղջ նոցա ՚ի վերայ յանցանացն. եւ հրաման յառնել երԹալ առ Սինկղիտոն, և ողբել զցաւուն բարկուԹեանն. և ինքն դարձեալ գործակից նպաստ լինէր ողբաւորացն, ներել քաղաքին զամենայն յանցանսն և առնուլ ընդունել զնոսա ՚ի հաւատար քաղաքացիս Հռովմայ: Եւ եղեն այսոքիկ՝ առ վեցերորդ տրիբունուԹեամբն՝ գեղեցիկ և հոյակապ նահատակուԹիւնքն Կամիլլեայ:

Այլ յետ այսորիկ իբրև աղմուկ անհնարին ամբոխից յուզեցաւ ՚ի քաղաքին ՚ի Լիկինիոսէ Ստոլոնէ, և խուժան ռամկին յարեաւ ընդդէմ ծերակուտին, և բուռն առնէր՝ զի հրնարուԹեան հիւպատոսացն՝ մին կացցէ ՚ի ժողովրդականացն դասէ, և մի երկոքին միանգամայն ՚ի պատրկացն, ընտրեցան կարգեցան յայնժամ տրիբունք ժողովրդեան. բայց ժողովուրդն խափա-

նէր զընտրութիւն հիւպատոսացն: Իբրև այսպէս յանիշխանութեան քաղաքն յար մուխս անհնարինս յուզեալ ծփայր, դար ձեալ միւսանգամ այս չորից անգամ ընտրեցաւ Կամիլլոս ՚ի ծերակուտէն իշխա նապետ յականայ կամս խուժանին: Սա կայն և ոչ ինքնին Կամիլլոս յօժարեալ ինչ էր ՚ի բանն, դարձեալ և ոչ կամէր ընդ դէմ ՚ի պայքար մտանել ընդ մարդկանն, որ ՚ի բազմաց և ՚ի մեծամեծ նահատակու թեանցն՝ ազատագէմ այնուհետև ժոէին ՚ի վէգ դալ ընդ նմա. իբրու որ նոցուն նկ զակակցութեամբ բազմագոյն ևս մրցանս մրցեցաւ ՚ի շահատակութիւնն մտաւոց, քան եթէ պատրկացն գործակցութեամբ ՚ի քաղաքական ՚ի կարգս: Ու այս և կա կածեցաւ՝ եթէ առ նախանձու պատրկացն ընտրեցաւ ՚ի նոցանէ իշխանապետ, որպէս զի կամ ինքն հզօրացեալ նկուն արասցէ զժողովուրդն, կամ ՚ի նոցանէն պարտեալ նկուն եղիցի ՚ի ժողովրդենէն:

Յայսր ամենայնի վերայ գուն գործեալ հնարս հայթայթանաց գտանել վասն որ յառաջոյ էրացն, ծանեաւ ճշդիւս զօրն յորում խորհէին տրիբունք ժողովրդեան օրինադիր լինել. փութացաւ կանխեաց հրաման եւս զօրաժողով լինել, և ապա զնուաժան ռամկին ՚ի նմին աւուր կարգայր ՚ի հրապարակէ քաղաքին ՚ի դաշտ անդր, մեծապէս աւգանս ապառնացեալ որ միանգամ անսասանեալ գոցի հրամանին: Բայց անգուստ և տրիբունք ժողովրդեան

միւսանգամ զդէմ դարձեալ սպառնալեօք և ՚ի դիան երդումն տուեալ՝ զի հնդից բիւրուց արծաթոյ տուգանեսցեն զնա, եթէ ոչ ՚ի բաց կացցէ նա զլանալ ժողովելոյ դեանն զերաւունս նոցա և զքուեայս նոցա: Ապա Կամիլլոս զանգիտեալ ՚ի միւսանգամ տարագրութենէն և ՚ի դատակնքոյն՝ անձահ արդեօք ծերութեան հասակին և բազմադէմ նահատակութեանցն, միանգամայն և կասկածեալ բաւել վանել զբռնութիւն խուժանին զանկռուելին և զանպարտելին, տեղի ետ մեկնեցաւ յայնժամ ՚ի տուն իւր. և ՚ի յետագայ աւուրսն պատճառեալ զհօթութիւն՝ ՚ի բաց հրաժարեցաւ յիշխանութենէն: Յայնժամ Սինկղետոսն զայլ ոք կացուցեալ իշխանապետ, սա ընտրեալ կարգէր անդէն զօրավար այրուձիոյն զնոյն ինքն զՍտողոնէն զառաջնորդ հերձուածոյն, և թոյլ տայր հաստատել կարգել օրէնս՝ ընդ որ մեծապէս ոխացան պատրիկք. քանզի հրամայէին օրէնքն՝ զի ամենևին ոք բաժին գետնոյ մի կալցէ առաւել քան զհինգ հարիւր լծավար: Եւ ականատես գոսա յայնժամ Ստողոնէն, որ ՚ի հաստատութիւն օրինացն այնոցիկ զօրացաւ տալ արկանել զքուեայսն: Այլ վայրիկ մի ապա ինքնին Ստողոն պատաւոր գոսա ՚ի սառնալ իւրում այնչափ ինչ՝ որչափ այլոցն արդելոյր, և ըստ իւրոց օրինացն ընկալաւ ինքն զդատաւճիռսն:

Մինչդեռ տակաւին վեգք և պայքարք

յուզէին յաղագս հիւպատոսացն ընտրու-
թեան, քանզի և այն իսկ էր սիրապէս
պատճառք անհնարին խռովութեան, և
տագնապ մեծապէս ի ներքս բերէր ծերա-
կուտին երկպառակեալ ի խուժանէն,
անդէն գուժկանք գային հասանէին՝ բօթ
զայս տային ատոյգ և յայտնի, եթէ կէղտք
անդրէն միւսանգամ ՅԱդրիական ծովէն
հորդան տուեալ բիւրաւորօք բազմօք դի-
մեալ խաղան գան ի վերայ Հռովմայ. ի
միասին ընդ գուժին և արդիւնք գործոց
պատերազմին ի միջն կային, քանզի ա-
պատակաւ յաւարի առեալ էր գաւառն,
և մարդիկն՝ որոց միանգամ հեշտին չէր
փախչել ապաւինել ի Հռոմ քաղաք, ցկր
և ցան վարատեալք գնային ընդ լերինս:
Յայնժամ արհաւիրք գուժին հանդար-
տեալ զկնի ցին զալմուկ խռովութեան, և
ի մի վայր եկեալ ժողովուրդք առհասա-
րակ և աւագանին, ընտրէին միաբան միով
խորհրդով այս հնդիցս անգամ խչխանա-
պետ զՔամիլլոս: Ա՛յլ նա ծերացեալ յոյժ
էր ի ժամուն, և գոգցես զուարթանամենիւք
ուրեմն էր. սակայն զմեծապէս զհարկն
յակն արկեալ և զվտանգն ահաւոր, ի
չքմեղս չէղև իբրև զառաջինն, և ոչ պատ-
ճառս պատրուակէր. այլ անդէն արագ
յանձին կալեալ զզօրավարութիւնն՝ ետ
հրաման զօրաժողով լինել ի մարտ պատե-
րազմի: Եւ քանզի գիտէր Ճշդիւս Քամիլլոս՝
եթէ մեծապէս այժ բարբարոսացն էր ի
պղծութիւնս նոցա, զոր անհետեւեթ ձըգ-

մամբ առանց Ճարտարութեան արուեստից լինելոյ՝ զգլուխս միանգամայն ուսովքն հանդերձ չեշտ ի բաց կորէին. ապա զբազմագոյնան ի զօրականէն իւրմէ առեալ վառէր ի գլխանոցս համակ երկաթի և արտաքոյ քաջողորկ փայլուն, որպէս զի կամ գծեալք և ոչինչ՝ ի բաց պոլովտիկքն սահէացին, կամ թէ հարեալք անդէն խորտակեսցին: Ա՛ւ այս՝ և շուրջանակի ասպարացն նոցա յարեաց յարմարեաց Թիլթղունս իմն պղնձիս. քանզի փայտն ինքնին ոչինչ հանդուրժէր հարուածոյն: Ուստի և զօրականին առհասարակ նիզակս երկայնս աղխեալ ի բուին և շարժեալ ճօճէլ, և սուսերացն Թշնամեաց ի նեղքոյ ձգել և ի նոսա զչեշտ հարուածոյն ընդունել:

Իբրև անդուստ խաղացին մօտ եկին կեղտք ի գետն Անինէ՝ բանակ զօրաց ծանրաբեռնիք և լի ամբաւ աւարօք, ած խաղացոյց արտաքս զզօրն Կամիլլոս, և կարգեաց եդ ընդ զառ ի վեր մի առ ի շեղ՝ յորում շատք էին փայտարք և անձաւք, որպէս զի և բազմութիւն զօրականին ծածկեցեալ յաչաց Թշնամեացն. և որք միանգամ յերևան կային՝ Թուէր իմն եթէ առ ահի երկիւղին նոքա ի բարձու անդ այնպէս ապաւինեալք ամփոփեալ կայցեն: Բայց և ի նոյն կարծիս հաստատել զբարբարոսն, ոչ յարձակեցաւ ինքնին Կամիլլոս ընկերակել ի բաց՝ և զորս առ լեռնոտամբն ասպատակաւորք հասեալ էին ի Թշնամեաց անտի. այլ զիւր զակիչն քաջա-

սէս ամրացուցեալ կայր ճնայր ՚ի նեղքս. անդուստ գէտակն կալեալ տեսանէր՝ զի կէսք ՚ի նոցանէն սփռեալք գնային աստ անդ ժողովել ամբար. և կէսք դարձեալ ՚ի բանակին անդ իւրեանց զամենայն ժամանակն յղփացեալք զեղևեալք՝ յօրանային ՚ի կերակուրս և ՚ի գինարբուս: Ապա գիշերի առեալ զԹեթևազէն զօրն յառաջ արձակեաց, հրաման տուեալ զի խոչընդոտան բարբարոսացն եղիցին՝ մի յարդարել ձակատ. և զի՝ աղմուկ և խռով ևս հարցեն ՚ի նոսա՝ անկեալ ՚ի վերայ նոցա յեղակարծումն ժամու: Իսկ ինքն կանուխ ընդ առաւօտն առեալ զսպառազէնան իջանէր ՚ի վայր ՚ի լեռնակէն, և կարգեալ ձակատեցուցանէր զնոսա և երկայնէր ձգէր ընդ եռեսս դաշտին. և երևեցան նոքա յայնժամ բանակ մեծ՝ մուտիւր նահատակեալ ՚ի հանդէս մարտին. ուչ որպէս բարբարոսքն կարծէին՝ եթէ նուազունք ոմանք իցեն և անարի վատասիրտք: Յայսմանէ առաջին անկաւ բեկաւ գոռոզութիւն կեղտացն, զի ոմանհարուածիւն անձանց համարեցան զգխմադրաբել հռովմայեցւոցն. առ այս՝ և Թեթևազէնք հռովմայեցւոց անդուստ նոցա ՚ի վերայ անկեալ, և մինչև ՚ի սովրական կարգ ձակատուն իւրեանց մուեալ բարբարոսացն և ՚ի խումբս խումբս բաժանեալ, դրդէին շարժէին և բուռն ևս առնէին նոցա՝ որպէս և զնարդ իցէ՝ անկարդ հրոսականն այնպէս մարտ եղեալ կռուել ընդ նոսա:

Իբրև զսպառազէնան Կամիլլոս ՚ի վերայ իսալացոյց Կելտացն, անդ Կելտք միա-գունդ ՚ի վեր առեալ զպողովատիկա՝ այնպէս հոլդան տուեալ դային մեծաւ շտապաւ: Սոքա երկայնաձիգ նիզակօքն զդէմ կալեալ, և առեալք զհարուածն յերկաթապատ յերկաթագամ գլխանոցն, վտեալ բթացուցանէին զչեղք սրոյն կակուղ և անօսր, որպէս զի և արագ արագ ինքնին թեքեալ կրկնէին պողովատիկքն. իսկ վահանք նոցա վարսեալ թափանցանց ՚ի նիզակաց անտի՝ ծանրանային նոցա յամփոփել անդրէն նիզակացն. վասն որոյ և ՚ի բաց այնուհետեւ զչէնս իբրեանց եդեալ Կելտք, գուն գործէին զհռովմայեցւոցն առնուլ վարել ՚ի պէտս, և զնիզակացն վարսելոց բուռն հարեալք՝ սաստկապէս յիւրեանս կորզէին զնոսա: Իբրև այնպէս մերկս և կապտեալ ՚ի զինուց տեսին զնոսա հռովմայեցիք, սուր ՚ի վերայ եդեալ՝ հարուածս անհնարինս հասուցանէին յառաջամարտիկ զօրուն նոցա, և զայլսն առհասարակ ընդ երեսս դաշտին ՚ի փախուստ դարձուցանէին. քանզի և զբլուրս և զկատարս բարձանց յառաջագոյն հասեալ կալեալ էր Կամիլլոս. որպէս զի և քաջ իսկ խելամուտ եղեն Կելտք՝ եթէ հեշտին այնուհետեւ հասեալ կալցեն նոքա և զբուն բանակ նոցա, որուամ և պատնէշս ածեալ չէր նոցա վասն անվեհեր համարձակութեանն: Եւ ասեն զայս մարտ պատերազմի հանդիպեալ երեքտասան ամաք յետ առմանն

Հռովմայ. և այնուհետև մեծապէս քաջալերեցան նոքա ընդդէմ կեղտացն, զի և սաստիկ ահաբեկեալ էին նոքա ի բարբարոսաց անտի. իբրու այն որ ոչ առ քաջութեան ինչ Հռովմայեցւոց ի պարտութիւն մատնեցան նոքա յառաջագոյն յայնժամ, այլ ի պատճառս ախտից մահաբեր և բազմազէտ արկածիցն՝ որ յանկարծակի ի վերայ հասին նոցա: Եւ սաստիկ յոյժ էր արհաւիրք երկիւղին նոցա ի կեղտացն անտի, որպէս զի և օրէնս սահմանեալ՝ զի ազատք լինիցին քահանայք ի զինուորութենէ, բայց ի ժամանակին՝ յորում ընդ Գաղատացւոցն էին մարտ պատերազմին: Արդ այս եղև վերջինն ի մրցանս նահատակութեան՝ յորս առաքինացաւ Կամիլլոս: Քանզի Վէլետրացւոց քաղաքին առումն իբրև հարևանցի գործ գործեցաւ յարշաւանս մարտիս այսորիկ, որք անմարտք և անկռիւք անձնատուր նմա եղեն:

Սակայն կայր մնայր նմա մեծ ևս և դժնդակ պայքար քաղաքական մարտի ընդդէմ խուժանին, որ յաղթ և հզօր դարձ արարեալ ի մրցանաց անտի յաղթութենն, կայր և պնդէր՝ զի ընդդէմ սահմանին օրէնս մի ոմն ի ժողովրդականաց անտի կացցէ հիւպատոս: Իբրև ընդդէմ դարձաւ ծերակոյան, ոչինչ թոյլ եւս Կամիլլոսի ի բաց կալ յիշխանապետութենէն, որպէս զի ի ձեռն մեծազօր և բուռն իշխանութեանն՝ լաւ ևս արդեօք մարտ եդեալ պայքարեացին նոքա ի վերայ աղնուապետու-

թեանն : Ընդ՝ իբրև բազմեալ կայր ինքնին Կամիլլոս և առեան դառաստանի եղեալ ՚ի հրապարակի, պատուիրակ մի առաքեալ ՚ի տրիբունից անտի ժողովրդեան, հրաման բերեր նմա յառնել երթալ զկնի իւր. առ այս՝ և ձեռն ևս միեաց ՚ի Կամիլլոս՝ իբրև առնուլ ՚ի բաց տանել զնա : Անդ էր տեսանել՝ զի ձայն աղաղակին սաստկապէս բարձրացաւ, և աղմուկ անհնարին չփոթից՝ որպիսի ոչ եղև երբէք՝ առհասարակ գրաւեաց զհրապարակն, այն ինչ ոչք շուրջ զԿամիլլոսիւն՝ ՚ի բաց վարեալ ընկրկէին ՚ի բեմէ անտի զպատուիրակ ժողովրդեանն, անդուստ և խուժան ժողովրդոց առհասարակ ձայն բարձեալ հրաման կարդային առնուլ ի՛ջուցանել զնա ՚ի վայր : ՚Ի տապնաստ մեծի տարակուսի վարանեցաւ Կամիլլոս. յիշեանուէնէն ինչ ոչ հրաժարեաց, այլ զծերակոյան առեալ յինքն՝ նոքօք հանդերձ հետևեր նա ՚ի Սինկղետոս անդր : Այլ մինչև մտեալ ՚ի ներքս՝ դարձաւ եկաց ՚ի կապետոլիոն կոյս, եկաց յապթիս առ դիւն, աղաչեաց զայն աղմուկ անհնարին հանդարտել ածել ՚ի գերեզիկ եւս վախճանի. խոստումն կուեաց Ցաճար Մխաբանութեան կանգնել՝ ՚ի հանդարտել խռովութեանն :

Իբրև վեգք և պայքարք մեծապէս ծփային յառեն Սինկղետոսին աստ և անտ ՚ի ներհակակիր խորհրդոց, հուսկ ապա յաղթեաց խորհուրդ խաղաղութեան, և տեղի տուեալ ժողովրդեանն՝ Թոյլ տայր զի

'ի հիւպատոսաց անտի մին կացցէ 'ի կարգ ռամկին: Իբրև զայս հաւանութիւն խորհրդոյ ծերակուտին անդուստ լինքնին իշխանապետն Կամիլլոս կարդաց 'ի լսելիս խուժանին, անդէն վաղվաղակի՝ որպէս և 'ի դէպ արդեօք՝ մեծապէս խնդացեալ ժողովուրդք առհասարակ 'ի հաշտութիւն գարձան ընդ ծերակուտին, և յուղարկաւորք հանդիսի 'ի կայթս և 'ի ծափս և 'ի ձայն մեծ բարբառոյ լինէին Կամիլլեայ մինչև 'ի տուն անդր նորա: Ապա յերկրորդ աւուր 'ի մի վայր խմբեալք ետուն վճիռ՝ կանգնել զՏաճարն Միաբանութեան, ըստ որում ուխտեացն Կամիլլոս վասն դեղեցիկ եղից իրացն՝ 'ի դիպան տեղւոջ 'ի վերոյ հրապարակին և առեալ խորհրդոյն: Ա՛ռ այս և 'ի Լատինական տօնսն օր մի ևս յաւելեալ կարգեցին, տօնախմբել աւուրս չորս. և վուխանակի երթալ զոհ կատարել և պատկս պատկս բարձեալ բերել առհասարակ ամենայն Հռովմայեցւոց: Յետ այնորիկ ընտրութիւն հիւպատոսացն հրամայեալ 'ի Կամիլլոսէ, ընտրեցան կացին հիւպատոսք Մարկոս Եմիլիոս 'ի պատերկաց անտի, և Լուկիոս Սեռտիոս առաջին 'ի ժողովրդականաց: Եւ այս եղև սահման և եզր նահատակութեան գործոցն քաջին Կամիլլեայ:

Իակ 'ի գալ ամին միւսոյ ախտ ժանտ ձարակեցաւ 'ի Հռոմ, և բաց 'ի խուժանէն՝ յորոց ամբաւք յայնժամ 'ի մահ վարեցան, բազումք ևս մեռան յիշխանաց ան-

ան, յորում ժամանակի մեռաւ և ինքնին Կամիլլոս: Ուրդ Թէպէտ և ի ծերութիւն յեցեալ էր այրն և կենօք պատարուն՝ որպէս և ոք յերկայնակեաց ի մարդկանէ, ի Թաղծութիւն մեծ առեալ պաշարեաց նա զհռովմայեցիս, որպէս և ոչ ամենեքին նոքա առհասարակ՝ որ ի ժամանակին յայնմիկ ըմբռնեալ մեռան յախտէն յայնմանէ 6:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Լ՚ա. և Իտ. Թարդ. Պլուտարքեայ դնեն՝ փաղխկեանց: Եւ ՚ի վայր անցեալ ինքնին և Պլուտարքոս դնէ փաղխկեանց. իսկ աստանօր՝ փաղերեանց:

2. ՚Ի վաղնջուց ժամանակաց Հրաբուղխ գոլով արդեօք Ալբանեան լիճ ՚ի խորոց անտի իւրոց, որ այժմ կոչի Lago di Castello, դիւրաւ ապա՚ի վեր դիզանայր ուռնոյր ջուրն ՚ի բնաւորական պատճառաց վերելից հրոյն: Որպէս և մեր իսկ ականատես եղեալ է վայրացս բազում անգամ ՚ի սահմանս Հռովմայ, և զննեալ մանր զայս լիճ ահաւոր և թխաջուր, պատեալ ողջոյն շուրջանակի՝ որպէս և Պլուտարքոս ասէ՝ բարձրաբերձ ծառախիտ լերամբք. և է լիճն յոյժ անդնդախոր, և հասեալ ՚ի միջակին՝ տագնապ է նաւակաց խորասոյզ քարշիլ ՚ի խորս առ ՚ի պտուտիցն: Եւ են այս ամենայն՝ նշանք հրաբուղխեան լճի: Նա՛ և որպէս պատմեցին մեզ գաւառականքն բնակեալք առ լճովն՝ երբէք աւանդումն ստոյգ ծերունեաց իւրեանց, եթէ ՚ի տեղի անդնդախոր լճիս կացեալ է երբեմն ՚ի ժամանակս յոյժ վաղեմիս՝ քաղաք մեծ և բազմամարդ՝ լի խառնակեցիկ և անօրէն բնակչօք. և յանկարծակի յեղակարծումն ժամու ՚ի միում գիշերի՝ աս-


տուածծասասատ բարկութեամբ անդնդասոյզ հետախաղաղ ծածկեալ էցէ. և փոխան այնորիկ ՚ի վեր յորդեալ սաստկութեամբ ջուր ՚ի խորոց՝ ձևանայ տակաւ այս լինճ ահաւոր ՚ի կողմանն յայնոսիկ: Եւ է ընդլապատ ձուաձև լճին՝ իբրև եօթին մղոնաց, և առաւել:

3. Այս ճառ Պղատառքեայ՝ մակագրեալ՝ Դպրոցական բնաւորական չաղափառութ, ըստ որում և ինքնին նա յառաջեալ ՚ի բանս իւր՝ անուանէ, չիք ուրեք այժմ ՚ի միջի:

4. Քանզի անուանեալ կոչէր տեղին այն. Տօլիօլա. իսկ Dolium. ՚ի Լա. է Տակառ:

5. Էր ՚ի ժամանակին յայնմիկ Կամիլլոս վաթսուն և վեց, կամ վաթսուն և եօթն ամաց, ըստ անշուշտ հաշուի պատմութեան ժամանակացն Հռովմայեցւոց:

6. Փափաքելի յոյժ էր արդեօք ունել ՚ի Պղատառքեայ և զերկուց զայսոցիկ աւազարանց զնահատակութեանց զկիւն: Այլ որպէս ՚ի Յառաջաբանին ակնարկեցաք յաղագս կորուսեալ Ջուգակցութեանցն Պղատառքեայ, մի է ՚ի նոցանէն՝ Թէմիստոկղեայն և Կամիլլոսին: Ուստի և որ յայլ Թարգմանութիւնս երևի այսօր՝ Ջուգակցութիւն սուտ, որպէս յԻտալ. Պոմպէիոն, չէ Պղատառքեայ՝ այլ նորոյ ուրուք մատենագրի Գաղղիացւոյ:



ՑՈՒՑԱԿ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՑՍ

ՈՒԼԵՐՁ 7
Վարք Պլուտարքեայ 11
Յառաջաբան 43

ԹԷՍԷՈՍ 3
ՀՌՈՄՈՒԼՈՍ 63
Զուգաձևութիւն 133
ԼԻԿՈՒՐԳՈՍ 147
ՆՈՒՄԱ 221
Զուգաձևութիւն 279
ՍՈԼՈՆ 295
ՊՈՊԼԻԿՈԼԱՍ 363
Զուգաձևութիւն 410
ԹԷՄԻՍՏՈԿԼԷՍ 423
ԿԱՄԻԼԼՈՍ 489